

Վ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ



Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԳՈՎԻ
ԿՅԱՆՔՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9155/
21-50
h2

Վ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ

**Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ
ԿՅԱՆՔՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(պատմագրություն-պատմություն)**

6075

**Նվիրվում է իրանահայերի՝ Արևելյան Հայաստան
ներգաղթի 190-ամյակին**

Երևան
2019

Հրատարակության և երաշխավորվել ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի 21.12.2017թ. գիտական խորհրդի որոշմամբ

Սյունյան Վ. Ռ.
Ս. Ս. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը (պատմագրություն-պատմություն)/ Վ. Ռ. Սյունյան.- Եր.: Հեղ. հրատ., 2019.- 480 էջ:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վահրամ Ռուբենի Սյունյանի «Ա.Ս. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը» (պատմություն-պատմագրություն) հետազոտության հիմքում ընկած է հեղինակի՝ «Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեությունն Այսրկովկասում» թեկնածուական ատենախոսությունը, որի գլուխները համալրված են դրանց վերաբերող մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային ժամանակավիուլերի պատմագրական և պատմագիտական ուսումնասիրություններով: Լիովին պատճառաբանված է մենագրության բոլոր գլուխները պատմագրական քննությամբ օժտելու հեղինակի որոշումը: Առանձին գլխով ներկայացված է Ա.Ս. Գրիբոյեդովի քաղաքական և մշակութային գործունեության քննությունը, որը ևս դուրս էր վերոհիշյալ ատենախոսության թեմայի շրջանակներից:

Իր բովանդակությամբ և կառուցվածքով հայ պատմագիտության մեջ վերոհիշյալ թեման առաջին համապարփակ հետազոտությունն է, որում ներկայացված են Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի հակասական դրսևվորումների, դիվանագիտական գործունեության, տնտեսագիտական հետաքրքրությունների, ինչպես նաև գրողի ողբերգական վախճանի հարցերը: Դրանք ուսումնասիրված են բազմակողմանիորեն և փոխկապակցված ամբողջության մեջ:

Քննությամբ վերանայվել ու վերաարժևորվել են Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագների, մասնավորապես՝ նրա ծննդյան թվականի, ուսումնառության, դեկաբրիստական շարժման հետ ունեցած կապերի, ռուս-պարսկական հարաբերությունների, նրա դիվանագիտական առաքելության, դրա ձախողման պատճառների, ճորտատիրության հանդեպ դրսևորած վերաբերմունքի, գրական գործունեությունը հեղափոխական շարժման հետ կապելու, Թեհրանյան ողբերգության և գրողի վախճանի հարցերի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ամրագրված և գերակայող տեսակետները:

Փորձ է արվել արժանահավատ և օբյեկտիվ քննությամբ հերքել խորհրդային պատմագիտության մեջ կարծրացած և ցայսօր գերիշխող տեսակետներն այն մասին, որ Ա.Ս. Գրիբոյեդովը սերտորեն առնչվել է դեկաբրիստական շարժմանը, ծանրակշիռ դերակատարություն է ու-

նեցել Թուրքմենչայի պայմանագրի կնքման, հատկապես հայանպաստ հողվածները դրանում ներառելու, պարսկահայերի ներգաղթի կազմակերպման, ինչպես նաև Անդրկովկասը տնտեսապես ծաղկուն երկրամաս դարձնելու և փայլուն տնտեսագետ լինելու հարցերում:

Մենագրությունն ունի աղբյուրագիտական խորը հենք և շարադրված է մասնագիտական գրականության պատշաճ օգտագործմամբ, ինչի մասին էլ վկայում է մատենագիտական ծանրակշիռ ցանկը՝ բաղկացած ինչպես հայերեն, այնպես էլ օտարալեզու աշխատություններից:

Առանջին անգամ շրջանառության մեջ են դրված մինչև այժմ չհրատարակված արխիվային և սկզբնաղբյուրային փաստաթղթեր, ինչը շահեկանորեն բարձրացնում է մենագրության գիտական արժեքը: Չնայած Ա.Ս. Գրիբոյեդովի կյանքի ու գործունեության հետ կապված առանձին հարցերում հեղինակի հետ ունեցած մեր տարակարծություններին, այնուամենայնիվ, հաշվի առնելով վերը թվարկած արժանիքները, և մենագրությանը ներկայացվող պահանջների բավարար լինելու հանգամանքը՝ գտնում ենք, որ Վահրամ Ռուբենի Միմոնյանի սույն հետազոտությունը արժանի է ներկայացվելու հանրությանը:

Վալերի Թունյան

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՌԱՋԱԲԱՆ

XIX դարի առաջին երեսնամյակը համաշխարհային պատմության ուշագրավ պատմափուլերից է: Աշխարհաքաղաքական մի շարք կարևորագույն իրադարձություններից, հատկապես Նապոլեոն Բոնապարտի դեմ տարած հաղթանակներից հետո Եվրոպայի քաղաքական կյանքում զգալիորեն մեծանում են Ռուսաստանի դերն ու քաղաքական կշիռը: Եվրոպայում առանց Ռուսաստանի հեղինակավոր մասնակցության ոչ մի լուրջ հարց այլևս չէր կարող լուծում ստանալ, ինչը հնարավորություն է տալիս ռուսական իշխանություններին վերանայելու երկրի արտաքին քաղաքականությունը միջերկրածովյան ավազանում, Մերձավոր Արևելքում և հատկապես Այսրկովկասում¹: XVI-XVIII դարերի ընթացքում Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի (Իրանի)² նվաճողական նկրտումների իրականացման համար Կովկասը (հատկապես Այսրկովկասը), եղել է բաղձալի աշխարհաքաղաքական տարածաշրջան և պատերազմների թատերաբեմ³:

Կովկասյան տարածաշրջանի հանդեպ շահագրգռություններ ունեցող Ռուսաստանի կողմից այստեղ հաստատվելու գործընթացը սկսվում է XVI դարի II կեսից, Իվան Ահեղի ժամանակներից⁴, և առավել ակտիվանում XVIII դարում, երբ գործընթացը նպատակաուղղված էր պարսից տիրապետությունից ռուսական ազդեցության ոլորտի մեջ վրացի, հայ և արևելակովկասյան թաթար ժողովուրդներին ներառելուն, ինչպես նաև թուրքական ծավալապաշտությունը կանխելուն: XVIII դարում Ռուսաստանը ձգտում էր Այսրկովկասում տարածել իր ազդեցությունը. «Պետականությունն ունեցող ժողովուրդներին պայմանագրերի միջոցով խոստում էր տրվում պահպանելու, իսկ չունեցող ժողովուրդներին՝

1 «Անդրկովկաս» կամ «Հարավային Կովկաս». ընդունված տեղանունների փոխարեն նպատակահարմար ենք գտել օգտագործել «Այսրկովկաս» ձևը, քանի որ հայերը հանդիսանում են Կովկասյան լեռնաշղթայից այս կողմում բնակվող ժողովուրդ: Ընդունված մյուս ձևերը պահպանել ենք այլ հեղինակներից կամ փաստաթղթերից կատարված մեջբերումներում:

2 Մինչև 1935թ. այդ երկիրը կոչվել է Պարսկաստան, հետո՝ Իրան, այժմ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Ջեմհուրիե Էլպամի Իրան): Սույն հետազոտության մեջ հարմար ենք գտել զուգահեռաբար օգտագործել և՛ Պարսկաստան, և՛ Իրան տեղանունները, քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ վավերագրերում և պաշտոնական փաստաթղթերում տրված է Պարսկաստան, իսկ ուսումնասիրողների մոտ՝ Իրան ձևով: Սույն հետազոտության մեջ բոլոր շեղատառ ընդգծումները և ռուսերենով հայտնի փաստաթղթերի վերնագրերի հայերեն թարգմանությունները մերն են՝ Վ.Ս.:

3 Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, հ. IV, գլ. II, էջ 81-107:

4 История России с древнейших времён до наших дней. Под ред. Сидорова А.В., Московский гос. университет им. М. Ломоносова, "Проект", Москва, 2007, с. 101-102; История России с древнейших времён до начала XXIIв., Под ред. член-корр. РАН А.Н. Сахарова, Инст-т Российской истории РАН, Москва, 2003, т. I, с. 375.

վերականգնելու պետականությունը»⁵: Վրացական պետության բռնակցումից հետո Ռուսաստանն անմիջական սահմանակից է դառնում Օսմանյան Թուրքիայի և շահական Պարսկաստանի հետ⁶: Այսրկովկասյան տարածաշրջանին տիրելու հերթական շրջափուլը սկսվում է XIX դարի սկզբից, որի հիմնական բովանդակությունը 1804-1813թթ. ռուս-պարսկական, 1806-1812 թթ. ռուս-թուրքական և 1817-1864թթ. Կովկասյան պատերազմներն էին, որոնց ընթացքում տեղի ունեցան նաև 1826-1828թթ. ռուս-պարսկական և 1828-1829թթ. ռուս-թուրքական երկրորդ, ինչպես նաև 1853-1856թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմները: Մրանց արդյունքը 1801-1810թթ. Վրաստանի, 1803-1813թթ. Արևելյան Կովկասի (ներկայիս Ադրբեջանի), 1805-1828թթ. Արևելյան Հայաստանի «կամավոր միացումը»⁷ կամ, այլ կերպ ասած, փաստացի բռնակցումն էր Ռուսաստանին:

XVIII դարի վերջերից կովկասյան տարածաշրջանում, Օսմանյան Թուրքիայում և Պարսկաստանում սկսում են ակտիվանալ նաև Անգլիայի և Ֆրանսիայի հետաքրքրությունները⁸:

Տեսական ժամանակի ընթացքում Ռուսական կայսրությունը հայ ժողովրդի նկատմամբ վարել է ռուսականացման, հետապնդումների և

ազգահավաք գաղութային քաղաքականություն, իսկ հայ-ռուսական հարաբերությունները մթազնվել կամ մեծապետական քաղաքականության թույնով են վարակվել բիրտ ու դաժան միջոցների գործադրմամբ:

Խորհրդային կարգերի հաստատումով, սակայն, պատմության գիրկը չանցան ռուսական նախկին կայսրության մեջ ապրող տարբեր ժողովուրդների միջև եղած ազգային, տարածքային, կրոնական և այլ հակամարտությունները, այլ, ինչպես ցույց տվեց հետագան, դրանք բորբոքվեցին նոր թափով, քանզի խորհրդային տարիներին ազգայնականության մեղադրանքով խեղդվել և խտրականության ճանապարհով ամեն կերպ նեղացվել էր ազգային հարցը:

ԽՍՀՄ փլուզման գործընթացում անկախացած Հայաստանի և Արցախի Հանրապետությունների գոյությունն ու հետագա ճակատագիրը, կովկասյան տարածաշրջանի հանդեպ ներկայիս Թուրքիայի, Իրանի, Արևմուտքի և Ռուսաստանի երբեք չթուլացող մրցակցությունն ու շահերի բախումը, միջազգային տարաբնույթ կազմակերպությունների գործունեության ակտիվացումը և ժամանակակից համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացի մարտահրավերները մեծացրեցին հետաքրքրությունն ազգային, էթնիկ մշակույթների և պատմության հանդեպ:

Հետխորհրդային նորանկախ պետությունների գոյակցության, ինչպես նաև ՀԱՊԿ և ԵՏՄ իրողության խորապատկերի վրա Արևմուտք-Ռուսաստան միջազգային հարաբերությունների բազմաբարդ խաչողիներում հայ ժողովրդի շահերը հաշվի առնելու և ստուգապես կողմնորոշվելու անհրաժեշտության ու հայկական պետության առջև ծառայած առաջնահերթություններին ներկայում և ապագայում արդյունավետ լուծում տալու հանգամանքները հրատապ ու արդիական են դարձնում անցյալի հայ-ռուսական մշակութային, տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունների պատմության տարաբնույթ հարցերի իրատեսական, անաչառ և համակողմանի խորքային հետազոտության ու վերախմաստավորման անհրաժեշտությունը⁹, ինչն ունի ոչ միայն գիտական արժեք, այլև քաղաքական հնչեղություն:

Այս առումով XIX դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբերությունների և Ռուսաստանի կայսրության վարած գաղութային

5 Չորսյան Պ. Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Խմբագիրներ Վ. Բ. Բարխուդյան, Պ. Ա. Մուրադյան, Մուրր Էլյուխանի - 2006, (560 էջ), էջ 12, տես նաև՝ Полное собрание законов Российской империи (այսուհետև՝ ПСЗРИ), Собрание первое, с. 1649 по 12 декабря 1825 года, С.Петербург, 1830, томъ XXVI, 1800-1801, док. 19.721, с. 502-505, նաև՝ Авалов З.Д., Присоединение Грузии к России, Москва, 2011, с. 1-288.

6 Դիլյան Վ. Ա., Արևելյան Հայաստանի XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 139-156:

7 Стрельцов А.Ф., "Кавказ в отечественной военной истории", "Безопасность России: в прошлом, настоящем и будущем", "Военно-исторический журнал", Москва, 2003, №3, с. 43-45, տես նաև՝ У. Գալտոնի անվան իհն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարան» (այսուհետև՝ Մատենադարան), Արխիվ Լազարյանների, րթր. 11, գործ 79, վավ. 1, մուսթեն ձեռագրի պատճեն, 4 էջ (1801թ. Խոմվարի 23-ի Պավի Է-ի հրովարտակը՝ հայերի բարրացականությունը շահելու և Հայաստանը խաղաղ կերպով նվաճելու մասին), Акты собрания Кавказского Археологического Комиссией (այսուհետև՝ АКАК), Издагыъ подъ ред. председателя комисии Ад. Берге, Тифлиси, 1868, томъ II, док. 5, с. 8.

8 Գլխորդյան Վեհան, Իրանի պատմություն, Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, էջ 408-410, տես նաև՝ История Ирана. Сост.-ли С.А. Шумов, А. Андреев, Киев-Москва, 2003, с. 58-61; ПСЗРИ, Собрание первое, с. 1649 по 12 декабря 1825 года, Санкт Петербург, 1830, томъ XXXII, 1812-1815, док. 25.466, с. 642-643; Внешняя политика России XIX и начала XX века (այսուհետև՝ ВПР), Документы российского министерства иностранных дел, Серия вторая, 1815-1830гг., Москва, 1974, т. первый (девятый) ноябрь 1815г. - сентябрь 1817г., док. 37, с. 122-126; АКАК, 1875, հ. VI, մաս II, փաստ. 408, էջ 221-223, փաստ. 262, էջ 119-120, փաստ. 267, էջ 122-127, փաստ. 341, էջ 177-178, փաստ. 342-345, էջ 178-182, փաստ. 351, էջ 183-184, Иоанисян А.Р., "Борьба Англии и Франции против присоединения Армении к России", Известия АН Арм. ССР. Общественные науки, Ереван, 1953, №3, с. 50-51, 55-59; A. General Sketch of the History of Persia, by Clements R. Markham, C.B.E.R.S. London, Longmans, Green, And CO. 1874, p. 532-536; Afschar Mahmoud, La politique européenne en Perse: quelques pages de l'histoire diplomatique, Librairie orientale "Iran schahr", Berlin, 1921, p. 9-10 (հեղինակն իրավացիորեն նշում է, որ ողջ XIX դարը հազեցած է Ռուսաստանի և Անգլիայի կողմից Պարսկաստանում ազդեցություն հաստատելու համար պայքարով), էջ 34-35 (Աֆշար Մահմուդը, չներկայացնելով ժամանակագրական շրջանակները, ինչպես նաև Պոլոտի վկայակցված «Կտակը», գտնում է, որ Հարավային Կովկասը հետոց պատկանել է Պարսկաստանին, իսկ Ռուսաստանը, համաձայն այդ «կտակի», ձգտել է տարածվել դեպի հարավ, մինևույն ժամանակ իրավացիորեն նշում է, որ Անգլիան ձգտել է թույլ չտալ, որ Ռուսաստանը շատ մոտենա Հնդկաստանին):

9 "Armenianstvo. Deportation of Armenians from the Caucasus" <http://karabakh-doc.azerall.info/>; Бабалян Давид: "Арцахская проблема и идеология пантюркизма", (часть 2), 22.12.2011; Тарасов Станислав: "Вашингтон, Анкара, Ереван и Тбилиси готовят политический сюрприз для Баку", <http://rus-arm.org/nagorny-karabakh/razdely-saita/nagorny-karabakh/stanislav-tarasov-vashington-ankara-ereva-n-i-tbilisi-gotovyat-politicheskiy-surpriz-dlia-baku>, 13.12.2011, նույնի՝ "Москва и Тегеран могут пойти на признание независимости Карабаха", http://rus-arm.livejournal.com/2012/07/01/tpost-rus_arm-65306_01.07.2012.

քաղաքականության համատեքստում կարևորվում է ռուս տաղանդավոր գրող և ռուսական իրապաշտական (ռեալիստական) թատերգության հիմնադիրներից մեկի՝ Ա. Գրիբոյեդովի գործունեության և հայ ժողովրդի՝ խնորո առարկա ժամանակահատվածի պատմության մեջ նրա տեղի ու դերի անաչառ վերաբերմունքի խնդիրը: 1818-1829թթ. Պարսկաստանում դիվանագիտական, ապա կովկասյան տարածաշրջանում շտաբային ծառայության, հետագայում էլ՝ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո, դարձյալ Պարսկաստանում նախարար-դեսպան եղած ժամանակաշրջանում Ա. Գրիբոյեդովը որոշակիորեն առնչվել է այդ պատմափուլի հայ-ռուսական և ռուս-իրանական հարաբերություններին:

Ուսումնասիրության նպատակն է Ռուսաստանի՝ XIX դարի առաջին երեսնամյակի նաև գաղութային քաղաքականության տեսանկյունից դիտարկել ու բազմակողմանի քննության ենթարկել հանիրավի կերպով զուտ գրական-մշակութային ոլորտից գերազանցապես այլ հարթություններում ներկայացված ռուս գրող Ա. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը:

«Ա. Ա. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը (պատմագրություն-պատմություն)» վերնագրով սույն հետազոտության մեջ **վերանայվում, վերլուծվում և վերաարժևորվում է հետևյալը.**

- **Ա. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական հայացքների, տնտեսական հետաքրքրությունների, մշակութային և դիվանագիտական գործունեության վերաբերյալ ցայսօր ստեղծված պատմագրականագիտական նյութը,**
- **Ա. Գրիբոյեդով-դեկաբրիստներ առնչությունների վերաբերյալ տեսակետները,**
- **Ա. Գրիբոյեդովի գրական-մշակութային գործունեության հարցերը,**
- **Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վաղ շրջանի և նրա աշխարհայացքային դրսևորումների խնդիրները,**
- **Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի հետ Ա. Գրիբոյեդովի փոխհարաբերությունների ու վերջինիս՝ Կարագիադինից-Թուրքմենչայ գործունեության հանգամանքները,**
- **Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում նրա խաղացած դերի հարցերը,**
- **Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովին նախարար-դեսպան նշանակելու հանգամանքները,**
- **Պարսկահայերի ներգաղթին Ա. Գրիբոյեդովի բովանդակային**

մասնակցության և այդ գործընթացն իրականացրած հայ գործիչների նկատմամբ գրողի դրսևորած վերաբերմունքի խնդիրները,

- **“Проект учреждения Российской Закавказской компании” («Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ» – Վ. Ա.) փաստաթղթի ստեղծման, իշխանությունների կողմից դրա մերժման պատճառների, ճորտատիրության և ապրանքադրամական հարաբերությունների հանդեպ Ա. Գրիբոյեդովի մոտեցումների հարցերը,**
- **Պարսկաստանում ռուսական դիվանագիտական առաքելության ձայնողման պատճառներն ու հանգամանքները:**

Սույն ուսումնասիրությունն իր բովանդակությամբ և կառուցվածքով **հայ պատմագիտության մեջ առաջին համապարփակ հետազոտությունն է, որում փորձ է արվում Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի հակասական դրսևորումները, դիվանագիտական գործունեությունն ու տնտեսագիտական հետաքրքրություններն ուսումնասիրել բազմակողմանիորեն և փոխկապակցված ամբողջության մեջ:** Տարաբնույթ (նաև չիրապարակված) արխիվային նյութերի¹⁰, սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների համադրական վերլուծության հիման վրա հետազոտության մեջ առաջին անգամ բազմակողմանի և նորովի լուսաբանվել են հայ-ռուսական հարաբերությունների, գրող, մշակութային գործիչ և դիվանագետ Ա. Գրիբոյեդովի՝ դիվանագիտական ծառայության հանդեպ դրսևորած զգացմունքային, երբեմն հակասական բնավորությամբ և աշխարհայացքային դրսևորումներով ուղեկցվող վերաբերմունքի, գեներալ Ա. Երմոլովի ազդեցության տակ կառավարական հրահանգներից շեղվելու, դիվանագիտական ծառայության վաղ փուլում Պարսկաստանից հեռանալու, Ա. Երմոլովի և գեներալ Ի. Պասկևիչի հանդեպ իր համար ստեղծված անելանելի և չկողմնորոշվող պահվածքի դրդապատճառների հարցերը:

Կապված գրողի աշխարհայացքի ձևավորման խնդիրների հետ ներկայացվել են նաև պատմագիտության մեջ ամրագրված գրականագիտական կարծրատիպերը, նորովի են վերլուծվել «Խելքից պատուհաս» պիեսի և մյուս մտահղացումների արարման վրա դեկաբրիստական գաղափարների ազդեցության չափի խնդիրները: Առաջ է քաշվել «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմ-

¹⁰ Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթ. 106, գործ 14, վավ. 58, 121, թղթ. 107, գործ 44, վավ. 370, թղթ. 111, գործ 36(32), վավ. 37, 64, գործ 79, վավ. 7, Արխիվ Ներսես Առաքյալիցու, թղթ. 164, վավ. 1319, թղթ. 166, վավ. 1061, 1082, 1083, 1084, 1086, թղթ. 167ա, վավ. 114, Հայաստանի ազգային արխիվ (այտոնետ)՝ ՀԱԱ, Արխիվ Լազարյանների, ֆոնդ 42, ցուց. 1, գործ 17, թերթ 3:

նադրման նախագիծ»-ը ոչ միայն պատմաքաղաքական, այլև իրավաբանական ու տնտեսագիտական վերլուծության ենթարկելու անհրաժեշտության հարցը և փորձ է արվել «Նախագիծ»-ը դիտարկել հիշյալ տեսանկյուններից:

Նոր մոտեցումներ են ցուցաբերվել հայ ժողովրդի նկատմամբ Ա. Երմուզովի, Ի. Պասկևիչի և Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի շրջանցված փաստերին կամ ոչ պատշաճ կատարված մեկնաբանություններին: Վերաարժևորվել են Թուրքմենչայի պայմանագրում հայանպաստ հողվածների ներառումը բացառապես Ա. Գրիբոյեդովին վերագրելու, ինչպես նաև վերջինիս՝ հայ և ընդհանրապես կովկասյան ժողովուրդների բարեկամ ու նրանց ցավերին վշտակից լինելու վերաբերյալ առկա տեսակետներն ու խնդիրները:

Վեր են հանվել Ա. Գրիբոյեդովի կողմից պարսկահայ ներգաղթյալների շահերը մահմեդական ցեղերին հանգստության մեջ պահելու խնդիրներին ստորադասելու շուրջ շրջանցված փաստերը: Թեհրանում ռուսական դեսպանական առաքելության տապալումն առաջին անգամ դիտարկվել է ռուսական և պարսկական պաշտոնական տեսակետներն ու փրկվածների վկայությունները, նաև քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրներն այլ ականատեսների վկայությունների հետ համեմատելու և հայտնի առանձին պատճառների հավաքական ամբողջության մեջ:

Ուսումնասիրվող թեման ընդգրկում է բազմիցս հետազոտված այն ուշագրավ պատմափուլը, որի ընթացքում հայ ժողովուրդն իր հայրենիքում առնչվել է ռուսական կայսրապետական քաղաքականության և այն իրականացնողների հետ: Թեև Ա. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունն ընդգրկում է 1795-1829թթ. ընկած ժամանակաշրջանը, սակայն մեր առջև դրված խնդիրներին հիմնովին և համընդգրկուն մոտեցում ցուցաբերելու նպատակով անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ նաև XVIII դարից մինչև XIX դարի առաջին երեսնամյակի պատմական զարգացումների համառոտ քննությանը:

Թեմայի մանրամասն ու արդյունավետ հետազոտումը պարտադրել է ոչ միայն չբավարարվել զուտ Ա. Գրիբոյեդովի գործունեությունը ներկայացնելով, այլև իրականացնել նրա քաղաքական ու սոցիալական հայացքների, տնտեսագիտական հետաքրքրությունների, մշակութային և դիվանագիտական գործունեության պատմության սկզբնաղբյուրային և պատմագրականագիտական քննությունը, իսկ ընթացիկ շարադրանքը չձանրաբեռնելու նկատառումով նպատակահարմար ենք համարել

այն ներկայացնել յուրաքանչյուր գլխում առանձին ենթաբաժնով:

Սույն ուսումնասիրությունը շարադրելիս առաջնորդվել ենք թեմայի հետ կապված հարցադրումների և տեսակետների մեկնության պատմաբնական և պատմահամեմատական մեթոդների զուգորդման անհրաժեշտությամբ, եզրահանգումները կատարել ենք արխիվային սկզբնաղբյուրների և հետազոտությունների համալիր վերլուծության հիման վրա: Նշենք, որ սույն թեման բովանդակող խնդիրները քննելիս և պատմագիտության մեջ դրանց տրված գնահատականները վերաարժևորելիս առաջնորդվել ենք ոչ թե վերջիններիս ամեն կերպ հակադրվելու և Ա. Գրիբոյեդովի գործունեությունը միմիայն գերազանահատելու կամ նվազեցնելու միտումով, այլ անաչառության և անկողմնակալության սկզբունքներով:

Հետազոտության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել XIX դարի առաջին կեսի ռուսական դիվանագիտության և տնտեսական քաղաքականության պատմության վերաբերյալ հատուկ դասընթացի մշակման նպատակով, իսկ օգտագործված արխիվային և փաստագրական տարատեսակ նյութերն օգտակար կլինեն քննված ժամանակաշրջանում հայ եկեղեցական-ազգային գործիչներին, ռուսական իշխանությունների գործունեությանը և տնտեսագիտական հարցերին վերաբերող դասախոսությունների և զանազան խնդիրների ուսումնասիրության համար:

Վահրամ Միմոնյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԳԼՈՒԽ Ա

Ա.Ս. Գրիբոյեդովի հասարակական- քաղաքական հայացքները և մշակութային գործունեությունը

1. Ա.Ս. Գրիբոյեդով-դեկաբրիստներ առնչությունների հիմնահարցերը պատմագրության գնահատմամբ

Ա.Ս. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը նվիրված պատմագրականագիտական զարգացման ընթացքը կարելի է բաժանել 3 փուլերի:

1. **XIX դարի 30-ական թվականներից մինչև XX դարի II տասնամյակը**, որն էլ իր հերթին կարելի է բաժանել երկու ենթափուլերի՝ **1830-1880թթ.** (պատմագիտության համար նյութերի կուտակման, իսկ գրականագիտության համար «Խելքից պատուհաս»-ի գրաքննադատության ձևավորման փուլ), ապա՝ **1880-ական թվականներից 20-րդ դարի երկրորդ տասնամյակ** (երբ պատմագիտական նյութի կուտակումն ուղեկցվում էր նաև վերլուծական առաջին հրապարակումներով, իսկ գրականագիտությունը հարստանում էր Ա. Գրիբոյեդովի կյանքի և ստեղծագործության շուրջ նոր վերլուծություններով):

2. **1917-1991թթ. են** կամ խորհրդային շրջանը, երբ վերջնականապես ձևավորվում է այսպես կոչված «գրիբոյեդովագիտությունը», և հրապարակ են իջնում գիտական լուրջ մենագրություններ:

3. **1990-ական թթ. մինչև մեր օրերը**, երբ սկսում են որոշակիորեն վերանայվել խորհրդային շրջանում ձևավորված կարծրատիպերը:

Ա. Գրիբոյեդովի մասին հուշագրությունը սկսվում է 1830-ական թվականներից¹: Առաջինն իր հուշերն է հրապարակում **Ֆ.Վ.**

1 Нечкина М., Гривоедов и декабристы, "Художественная литература", Москва, 1977, с. 6.

Բուլգարինը: Դա Ա. Գրիբոյեդովի մահից մեկ տարի անց, 1830թ. հրատարակած «Воспоминания о незабвенном Александре Сергеевиче Грибоедове» («Հիշողություններ անմոռանալի Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի մասին» – Վ.Ս.) վերտառությամբ հուշագրությունն է, որում, խուսափելով գրաքննությունից և թաքցնելով իր տեղեկացվածությունը, Ֆ. Բուլգարինը շրջանցում է ռուս հեղափոխական ղեկաբրիստների հետ Ա. Գրիբոյեդովի առնչությունների հարցերը, իսկ նրանց գործով ձերբակալված լինելու հանգամանքը մատնում է լռության՝ նշելով միայն հետևյալը. «1825թ. վերջին Ռուսաստանը տխրեցրած իրադարձությունները պահանջեցին նրա (Ա. Գրիբոյեդովի – Վ.Ս.) ներկայությունը Պետերբուրգում: Չէին ճանաչում Գրիբոյեդովին և ճանաչեցին նրան: Մտքերի ազնվածին կերպը, նրա բոլոր գործերի ու մտադրությունների անկեղծությունն ու մաքրությունը նրան արժանացրին միապետի ողորմած ուշադրությանը: Գրիբոյեդովը երջանկություն ունեցավ ներկայանալու ինքնակալ կայսրին և այդ թույլից հոգով սիրեց միապետին՝ որպես տիրակալի և որպես մարդու»²:

Ֆ. Բուլգարինից հետո՝ մինչև 1850թ. կեսերը, մեզ հետաքրքրող հարցերի շուրջ պատմագիտական նշանակության հրապարակումներ չեն լինում: Փոխարենն այս տարիներն առատ են Գրիբոյեդովի ստեղծագործություններին, հատկապես «Խելքից պատուհաս»-ին վերաբերող գրականագիտական և հրապարակախոսական նյութերը:

1850-ականների կեսերին Ռուսաստանում տեղի են ունենում բազում փոփոխություններ. վախճանված Նիկոլայ I-ին հաջորդում է Ալեքսանդր II-ը, 1861թ. վերացվում է ճորտատիրությունը, հասարակական-քաղաքական միտքն էլ թնակոխում է նոր փուլ: Դեկաբրիստներին ներում է շնորհվում, իսկ 1825թ. ղեկտեմբերյան իրադարձությունների մասին գրելու արգելքը զգալիորեն թուլանում է:

XIX դարի II կեսին և XX դարի սկզբին սկսվում են ռուսական մասոնականության (որին անդամակցել է նաև Ա. Գրիբոյեդովը) վերաբերյալ աղբյուրների և քիչ թե շատ գիտական հետազոտության նախադրյալներ ու տարրեր պարունակող աշխատանքների հրապարակումները: Այդպիսի հեղինակներից կարելի է նշել Մ.Ն. Լոնգինովին, Մ. Մ. Կովալսկույն, Ա.Ն. Պիպինին, Ե.Ա. Կուշելևին, Ե.Պ. Կառնովիչին, ոմն Ն.Լ.-ին, Դ. Բորգյակովսկույն, Յու.Ի. Հեսսենին, Տ.Օ. Սոկոլովսկայային,

Լ. Լվովիչին, Նիկ. Նիկեյին, Մ.Դ. Տոլին, Վ.Ի. Սեմևսկույն և այլոց³: Այս առումով բավական հետաքրքիր է մինչևտրիդային ժամանակներում լույս տեսած և 2002թ. վերահրատարակված աշխատությունը⁴: Վերը թվարկված հեղինակներից առավել ուշագրավ են **Ա.Ն. Պիպինի, Տ.Օ. Սոկոլովսկայայի, Մ.Ն. Լոնգինովի և Վ.Ի. Սեմևսկույն** աշխատությունները: Հատկապես հազեցած է Վ. Սեմևսկույն աշխատությունը, որում հեղինակն անդրադառնում է վերոհիշյալ հեղինակների և այլոց ուսումնասիրություններին ու դատողություններին և ներկայացնում ղեկաբրիստ գործիչներից ոմանց մատնական նախկին անցյալը, նրանցից շատերի ու մատնների միջև հարաբերությունների սառեցման պատճառները, մատնականությանն անդամակցած ղեկաբրիստների և նրանց օթյակների կոնկրետ թիվը: Նա տեղեկություններ է հաղորդում նաև ղեկաբրիստների գործով զբաղվող «Հետաքննող կոմիտեին» տված այն ցուցմունքներից, որոնք վերաբերում և ներկայացնում էին մատնականությանը: Ցավոք, Վ. Սեմևսկին չի կարողանում ամբողջական ներկայացնել մատնականության իրական նպատակները, ակնկալիքները և դրա կապը ղեկաբրիստական շարժման հետ: **Մասոնականության հանդեպ ղեկաբրիստների հարաբերությունների սառեցման «հիմնական պատճառը» Վ. Սեմևսկին համարում է այն, որ ղեկաբրիստները մասոնականության մեջ չեն գտել այն, ինչ փնտրում էին:** Իսկ թե ինչ էին փնտրում ղեկաբրիստները, վերոհիշյալ հեղինակների պես Վ. Սեմևսկին ևս չի մանրամասնում:

3 Ковалевский М.М., Массонство, "Русские ведомости", СПб, 1907, 21 октября, №241; Пыпин А.Н., "Библиейская секта двадцатых годов", "Вестник Европы", тип. М.М. Стасюлевича и комп., СПб, 1871, кн. 3, с. 248-282, նույնի՝ "Материалы для истории масонских лож", "Вестник Европы", СПб, 1872, №1, с. 174-214, №2, с. 561-603, նույնի՝ "Общественное движение в России при Александре I-ом", СПб, 1871, Изд. 4, СПб, 1908, Академический проект, СПб, 2001, с. 560; [Кушелев Е.А., Записки о масонских ложах] "Уничтожение масонских лож в России в 1822г.", "Русская старина", тип. В.С. Балашова, СПб, 1877, т. 18, с. 455-479, с. 641-659; Карнович Е.П., Замечательные и загадочные личности XVIII и XIX столетий, СПб, 1884, с. 464; Н.Л. "Франкомасонство как орудие английской внешней политики", Море и его жизнь, СПб, 1905, №33-34, с. 579-595; Н.Л., "Франкомасонство и государственная измена", СПб, 1897, 97 с.; Борзяковский Д., Франкомасонство и тайные общества древнего и нового мира, М., 1900, с. 186; Гессен Ю.И., Евреи в масонстве. Опыт исторического исследования, СПб, 1903, с. 60; Соколовская Т.О., "Из доносков на масонство", "Русская старина", СПб, 1908, т. 136, кн. 4, №12, с. 683-688; Львович Л., "Масоны": Сб. статей, помещённых в различных периодических изданиях, М., 1908, 94 с., նույնի՝ "Иезуиты, мартиности и масоны", "Земщина", М., 1911, 11 мая; Ник. Нике, "Преимущество о масонах", "Новое время", СПб, 1908, 28 ноября, (11 декабря), №11752; Толл С.Д., "Масонское действо: Исторический очерк о заговоре декабристов", СПб, 1914, Переиздание, Изд-во журнала "Москва", М.: 2000, 374 с.; Семеновский В.И., Декабристы-масоны, "Минувшие годы", тип. "Энергия", СПб, 1908, №2, с. 1-50, №3, с. 127-170, №5-6, с. 379-433; Лонгинов М.Н., "Иван Парфильевич Елагин", "Русская старина", СПб, 1870, кн. 2, с. 612-616.

4 История масонства. Великие цели. Мистические искания. Таинства обрядов, ЭКСМО-Пресс, М., 2002, 720 с. (Переиздание "Масонство в его прошлом и настоящем", в 2-х томах, М., 1914-1915. Таинства обрядов).

2 Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников, Ред-я и примеч. Зин. Давыдова, "Красная газета", Ленинград, 1929, с. 17.

XIX դարի վերջին և XX դարի սկզբին մասունականության հանդեպ գիտական և հասարակական հետաքրքրությունները, ցավոք, զարգացում չեն գտնում. վերոհիշյալ հեղինակների ուսումնասիրությունները սահմանափակվում են մասունականության ընդհանուր և առանձին գործիչների լուսավորական ու գրականագիտական գործերի նկարագրություններով: Այս ժամանակ է, որ իր գործունեությունն է սկսում **Մ.Բ. Սեմյովսկին**, որը հետագայում դառնում է հայտնի գիտնական և հրապարակախոս, ինչպես նաև “Русская старина” ամսագրի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը⁵:

Գրիբոյեդովների ընտանիքին էր վերաբերում Մ. Սեմյովսկու առաջին հրապարակումը, որը տպագրվում է 1856թ. խմբագրությանն ուղղված նամակի տեսքով⁶: Հրապարակման վերջում Մ. Սեմյովսկին մեջ է բերում Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. հունիսի սկզբին Ա.Բ. Օդոնսկուն գրած նամակը, սակայն, չնշելով նամակի հասցեատիրոջ անունը, այն վերնագրում է “*Письмо А.С. Грибоедова к какому-то несчастному его родственнику*” («**Ա.Ս. Գրիբոյեդովի նամակն իր ոմն դժբախտ ազգականին**» - **Վ.Ս.**): Հարկ է նշել, որ Մ. Սեմյովսկին այն ձեռք էր բերել այդ ժամանակ դեռևս ողջ Մ.Պ. Պոգոդինի արխիվից: Հետագայում Մ. Սեմյովսկին մեկ անգամ ևս անդրադառնում է Ա. Գրիբոյեդովի թեմային՝ “Отечественные записки” ամսագրում (1860, №№ 5, 6, 7) հրապարակելով **Ա.Ա. Բեստուժև-Մարլինսկու** նամակները⁸:

Նշենք, որ Ա.Ա. Բեստուժև-Մարլինսկու հուշերն առանձնապես լույս չեն սփռել Գրիբոյեդով-դեկաբրիստներ առնչությունների հարցերի վրա: Ինչ վերաբերում է Ա.Բ. Օդոնսկուն ուղղված նամակին, ապա Մ. Սեմյովսկու փաստաթուղթը 1858թ. կրկին հրապարակում է **Եվգրաֆ Սերչևսկին** իր “*Грибоедов и его сочинения*” («**Գրիբոյեդովը և նրա ստեղծագործությունները**» - **Վ.Ս.**) գրքում՝ բացահայտ նշելով, որ նամակը հասցեագրված է Ա.Բ. Օդոնսկուն, սակայն նա լռում է վերջինիս՝ դեկաբրիստ լինելու մասին⁹:

5 Семёвский Михаил Иванович, 1837-1892 [Некролог], “Несколько слов о фамилии Грибоедовых”, “Русская старина”, Тип. В.С. Балашова, СПб, 1892, №4, с. III-XXXVII.

6 Նույն տեղում էջ V, նույնի՝ “Несколько слов о фамилии Грибоедовых”, “Москвитяни”, Тип-я Л. Степановой, М., 1856, т. 3, XII, с. 309-323:

7 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 9:

8 Семёвский М.И. ... [Некролог], “Александр Александрович Бестужев (Марлинский) - письма его с предисловием, примечаниями М.И. Семёвского, 1797-1837гг.”, с. XXXIII.

9 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 9 (“Грибоедов и его сочинения”, “Письма А.С. Грибоедова к князю А.И. Одоевскому”):

Ա. Գրիբոյեդովին վերաբերող իր առաջին հրապարակումով 1859թ. հանդես է գալիս վերջինիս ազգական և նրա մասին ջանասիրաբար նյութեր հավաքող **Գ.Ա. Սմիռնովը**, որն իր մեկնաբանություններով “Русское слово” ամսագրում հրապարակում է “*Черновая тетрадь Грибоедова*” («**Գրիբոյեդովի սևագիր տետրը**» - **Վ.Ս.**) նյութը: Այս տետրում, ի թիվս այլ գրառումների, կար նաև «Ա.Օ.»-ին ուղղված մի բանաստեղծություն: Դ. Սմիռնովն այս տետրը հայտնաբերել էր Ստ.Ն. Բեգիչևի մոտ, որը Պարսկաստան մեկնելիս վերջինիս մոտ մոռացել էր Ա. Գրիբոյեդովը: Ստ. Բեգիչևը երկար ժամանակ չէր կարողացել հիշել, թե ով էր այդ «Ա.Օ.»-ն, և միայն վերջում էր մտաբերել, որ դա Ալեքսանդր Օդոնսկին էր: Դ. Սմիռնովն արդեն բացահայտ նշում է, որ Ա. Օդոնսկին 1825թ. դեկտեմբերի 14-ի դժբախտ իրադարձությունների զոհերից է: Նա ավստոսում է, որ Ա. Գրիբոյեդովն Ա.Ս. Պուշկինի պես չի թվագրել իր գրառումները, ինչը հնարավորություն կտար դատողություններ անելու գրողի գաղափարական հասունացման, իր ժամանակի ու հասարակական ոլորտների, նաև արտաքին աշխարհի գործընթացների հետ նրա մտորումների ու առնչությունների շուրջ կամ, այլ կերպ ասած, կարելի կլիներ նրան համարել «իր ժամանակի գավակը»¹⁰:

“Беседы в обществе любителей российской словесности” պարբերականի 1868թ. երկրորդ թողարկման մեջ Դ. Սմիռնովն ամբողջությամբ հրապարակում է Ա.Ա. Ժանդրին և Վ.Ս. Միկլաշևիչին ուղղված Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. սեպտեմբերի 17-ի և դեկտեմբերի 3-ի նամակները, որոնցում վերջինս խոսում էր իր ընկեր և բարեկամ Ա. Օդոնսկուն Ի.Ֆ. Պասկևիչի միջոցով օգնելու մասին (այս նամակն առաջին անգամ հատվածաբար հրապարակել էր Ֆ. Բուլգարինը 1830թ. - Վ.Ս.)¹¹:

1860թ. հրապարակվում են գեներալ **Գենիս Գավիղովի** հուշերը 1826 թվականի դեկտեմբերի մասին¹², որոնցում, ի թիվս այլ հարցերի, ակնարկվում է նաև այն, որ Ա.Պ. Երմոլովը Գրիբոյեդովին մի ծառայություն էր մատուցել, որը շատ կարևոր նշանակություն էր ունեցել վերջինիս համար: Հարցին քաջատեղյակների համար հասկանալի է, որ խոսքը դեկաբրիստների գործով Ա. Գրիբոյեդովի ձեռքակալման ժամանակ վերջինիս վարկաբեկող փաստաթղթերը ոչնչացնելու համար Ա.Պ.

10 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 9

11 Նույն տեղում էջ՝ 15-16:

12 Դ. Դավիղով, Ռազմական հուշեր, Հայպետհրատ, Երևան, 1942, էջ 521-523:

Երմոլովի ընձեռած հնարավորության մասին է: Հետագայում՝ 1863թ., Լոնդոնում **Պյոտր Գոլգորովովը** հրապարակում է Դ.Վ. Դավիդովի առավել ամբողջական հուշերը, որոնցում արդեն վերոհիշյալ իրադարձությունների մասին վերջինս արտահայտվում է բացեիքաց¹³:

1873թ. լույս են տեսնում **Ի.Պ. Լիպրանդիի** հուշերը, որոնցում հիշատակություն կա նաև Ա. Գրիբոյեդովի մասին: Ի. Լիպրանդին նույնպես ձեռք բերել էր ղեկավարի ստների գործով և մի քանի օր անց էր կացրել Գլխավոր շտաբի նույն սենյակում Ա. Գրիբոյեդովի և մի քանի այլ անձանց հետ¹⁴: Ի. Լիպրանդին մեկ անգամ ևս փաստում է, որ Ա. Գրիբոյեդովը ձեռք բերված է եղել 1825թ. դեկտեմբերի 14-ի գործով:

Պատմագիտության տեսանկյունից առավել հետաքրքիր տեղեկություններ է պարունակում 1874թ. հրապարակված **Տ.Ա. Սոսնովսկու** նյութը: Նա առաջին անգամ հրապարակում է ձեռք բերված ժամանակ Ա. Գրիբոյեդովի կողմից Ֆ. Բուլգարինին հասցեագրված երկտողերը, որոնցում բավականին հետաքրքիր տեղեկություններ կան հարցաքննությունների ընթացքի, ձեռք բերվածների կենցաղի և առօրյայի մասին: Տ. Սոսնովսկին խոսում է նաև ղեկավարի ստների, մասնավորապես Ա. Օդոնսկու և Վ. Կյուխելբեկերի հետ Ա. Գրիբոյեդովի ունեցած այլ կապերի, ինչպես նաև ձեռք բերված ժամանակ փաստաթղթերն այրելու մասին¹⁵:

1870-ական թվականներն ընդհանուր առմամբ բավականին բեղմնավոր էին «Գրիբոյեդով-ղեկավարի ստներ» առնչությունների շուրջ պատմագիտական նյութի կուտակման գործում: Հրապարակվում է Գրիբոյեդովի նամակը Վ. Կ. Կյուխելբեկերին¹⁶: 1875թ. հրապարակվում է **Յու.Վ. Կոսովայի** և **Մ.Վ. Կյուխելբեկերի** նյութը Վ. Կ. Կյուխելբեկերի մասին, որում տեղ էր գտել նաև **Ստ. Բեգիչևի** նամակը Վ. Կ. Կյուխելբեկերին՝ գրված մինչև 1825թ. դեկտեմբերի 14-ը¹⁷:

Հուտով լույս է տեսնում նաև **Վ.Կ. Կյուխելբեկերի օրագիրը**¹⁸: Նույն՝

1875թ., Ա. Գրիբոյեդովի ձեռք բերվածության մասին հրապարակվում են **Ն.Վ. Շիմանովսկու**¹⁹, իսկ 1879թ.՝ ղեկավարի ստ **Գ.Ի. Չավայիշինի** հուշերը գրողի մասին²⁰: Ա. Գրիբոյեդովի մահվան հիանալի տարեկիցին էր նվիրված **Օր. Ֆ. Միլլերի** հոդվածը²¹: Օր. Միլլերը 1879թ. ներկայացնում է մի նոր հրապարակում՝ բացի Ա. Գրիբոյեդովի նամակներից օգտագործելով նաև Դ.Ի. Չավայիշինի հուշերը²²:

Այսքանով ավարտվում է Գրիբոյեդով-ղեկավարի ստներ առնչությունների շուրջ նյութերի կուտակման առաջին փուլը: Ակնհայտ է, որ այս փուլում հրապարակված նյութերը հեռու են գիտական լինելուց: **Գրանք հիմնականում ղեկավարի ստների հետ Ա. Գրիբոյեդովի առնչությունների մասին հուշեր են կամ ակնարկներ:** Վերոհիշյալ հրապարակումներում նկատվում է նաև կառուցվածքային ընդհանրություն. **դրանք սկսվում են նրա ծննդյան թվականի հարցերով, շարունակվում ընտանիքում դաստիարակների հսկողության ներքո ստացած նախնական գիտելիքների, համալսարանական կրթության, զինվորական ծառայության, զրական առաջին փորձերի, ապա՝ Արևելք մեկնելու հանգամանքների, ղիվանագիտական ծառայության, «Խելքից պատուհաս»-ի արարման նկարագրություններով և ավարտվում են մահվան հանգամանքների ներկայացմամբ:** Այս ընդհանուր կառուցվածքում, անշուշտ, նկատվում են նաև որոշ առանձնահատկություններ. ոմանք առավել ուշադրություն են դարձնում «Խելքից պատուհաս»-ի վերլուծությանը՝ ընդհանրություններ փնտրելով Չացկու կերպարի և Ա. Գրիբոյեդովի միջև, ոմանք էլ առավելապես սևեռվում են նրա կրթության ու դաստիարակության հարցերի վրա:

Փաստենք, որ **1830-1870-ական թթ. հարուստ չէին ղեկավարի ստների հետ Ա. Գրիբոյեդովի կապերի մասին հրապարակումներով:** Սկզբնական շրջանում դա կարելի է վերագրել գրաքննությանը, հետագայում էլ նյութերի սակավությանը: Այս փուլի հրապարակումները հիմնականում հանրամատչելի են և իրենցում «Գրիբոյեդով-ղեկավարի ստներ» կապերի մասին լուրջ վերլուծություններ չեն պարունակում: Դրանցում բացա-

13 Нечкина М., Гривоедов и декабристы, 1977, изд. шжн., էջ 15 ("Записки Дениса Васильевича Давыдова, в России цензурою не пропущенные"), տևս նաև՝ Դ. Դավիդով, Ռազմական հուշեր, Երևան, 1942, էջ 521-523:

14 Нечкина М., Гривоедов и декабристы, 1977, изд. шжн., էջ 18:

15 Сосновский Т.А., "Александр Сергеевич Гривоедов, 1795-1829. Очерк жизни и неизданные его бумаги", "Русская старина", Тип. В.С. Балашова, СПб, 1874, т. 10, кн. №5, с. 152-170, №6, с. 275-309.

16 Письмо А.С. Гривоедова В.К. Кюхельбекеру, (այս նամակը տես՝ "А.С. Гривоедов, 1795-1829" հոդվածում, էջ 152-170), "Русская старина", СПб, 1874, т. 10, кн. №5, с. 168-170.

17 Косова Ю.В. и Кюхельбекер М.В., "Вильгельм Карлович Кюхельбекер", "Русская старина", СПб, 1875, №7, с. 333-382, հիմն.՝ Нечкина М., Гривоедов и декабристы, с. 21-22.

18 Кюхельбекер В.К., "Дневник", "Русская старина", СПб, 1883, №7, с. 101-112, 1891, №10, с. 61-112.

19 Шимановский Н.В., "Арест Гривоедова в 1825 году. Из воспоминаний", "Русский архив", тип. Грачёва, Москва, 1875, №7, с. 339-344.

20 Завалишин Д.И., "Воспоминание о Гривоедове", "Древняя и Новая Россия", ред. В.И. Грацианский, СПб, 1879, №4, с. 311-321.

21 Миллер Ор.Ф., "В память А.С. Гривоедова", "Древняя и Новая Россия", СПб, 1879, №4, с. 301-311.

22 Миллер Ор.Ф., "А.С. Гривоедов, жизнь и переписка", "Неделя", тип. А.М. Котомина, СПб, 1879, №15, с. 439-447, №16-17, с. 473-486.

կայում են ինչպես ժամանակաշրջանի վերլուծությունը, այնպես էլ այդ ժամանակաշրջանում Ա. Գրիբոյեդովի տեղի ու դերի բացահայտման խնդիրները:

Անդրադառնանք հատկապես «Խելքից պատուհաս»-ի շուրջ առկա գրաքննադատական նյութերին, քանի որ դրանցում արտահայտված տեսակետները մեծ ազդեցություն են ունեցել պատմագիտության վրա: «Խելքից պատուհաս»-ի առաջին վերլուծությունները կատարվել են նախքան 1825թ. դեկտեմբերի 14-ի հայտնի դեպքերը:

1825թ. սկզբին հատվածներ են հրապարակվում «Խելքից պատուհաս»-ի երկրորդ գործողության 7-10-րդ տեսարաններից և երրորդ գործողությունն ամբողջությամբ²³: Նշենք, որ այդ ժամանակվա նյութերում չէին արձարծվում «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» կապի մասին հարցերը, **քանի որ չկար «դեկաբրիստներ» հասկացությունը**: Սակայն այդ փուլի գրաքննադատական նյութը կարևոր է այնքանով, որ պիեսը պաշտպանող հոդվածներով հանդես են գալիս Ա. Գրիբոյեդովի ընկերները՝ ապագա դեկաբրիստներ **Ա.Ա. Բեստուժև-Մարիևսկին, Օ.Մ. Սոմովը, Վ.Ֆ. Օդոևսկին**²⁴: Դեկաբրիստների և առհասարակ այդ ժամանակվա Ռուսաստանի առաջադեմ համարվող խավերի կողմից «Խելքից պատուհաս»-ի բուռն ընդունելության փաստը հետագայում ժամանակի թելադրանքով խորհրդային պատմագիտության կողմից շահարկվել է որպես «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» կապի ապացույց: Այդպիսին է համարվում նաև այն «փաստը», որ «Խելքից պատուհաս»-ի քննարկման այդպիսի բուռն սկիզբը կտրուկ ընդհատվում է 1825թ. դեկտեմբերի 14-ի դեպքերից հետո և վերսկսվում է մի քանի տարի անց: Այս առիթով հետագայում նշվել է. «**Կարող է պատահել, որ որոշ փաստաթղթերից ավելի պերճախոս այդ լուրջությունը վկայում էր պիեսի և Սենատի հրապարակում տեղի ունեցածի միջև ներքին կապի մասին**»²⁵:

Նկատենք, որ 1830-ականներին «Խելքից պատուհաս»-ի շուրջ կրկին վերսկսված գրաքննադատական, ինչպես նաև այդ տարիների պատմահուշագրական նյութերում «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» կապի

վերաբերյալ խոսք անգամ չկար, ինչի պատճառների մասին արդեն նշել ենք: Այդ հրապարակումներից կարելի է հիշատակել **Վ.Ա. Ուշակովի**²⁶, **Ն.Բ. Նադեժդինի** հոդվածները²⁷, **Ի.Վ. Կիրենսկու** հրապարակումը²⁸ (վերջին երկու նյութերը նվիրված էին Մոսկվայի Մեծ թատրոնի բեմում «Խելքից պատուհաս»-ի առաջին բեմադրությանը – Վ.Ս.), **Կ.Ա. Պոլևոյի** հոդվածը (այս հրապարակումը նվիրված է գրաքննություն անցած «Խելքից պատուհաս»-ի առաջին հրատարակությանը): Նշենք, որ Կ. Պոլևոյն ինքը 1839թ. հրապարակում է «Խելքից պատուհաս»-ը, որն ունի նաև իր ձեռքով գրված լայնածավալ առաջաբան²⁹:

Թվարկվածների մեջ մեծ տեղ է հատկացված նաև Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ի վերլուծությանը: Ուրույն տեղ է զբաղեցնում **Ա.Ս. Պուշկինի** գնահատականը՝ տված «Խելքից պատուհաս»-ին: Բարձր գնահատելով Ա. Գրիբոյեդովի ստեղծագործությունը՝ Ա. Պուշկինը Չացկու կերպարի մասին գրում է հետևյալը. «*Բսկ գիտնն, թե ինչ է (что такое) Չացկին. վառվորուն, ազնիվ, բարի տղա է՝ որոշ ժամանակ անցկացրած խելացի մարդու (հենց՝ Ա. Գրիբոյեդովի) հետ և ներծծված նրա մտքերով, սրամտություններով և երգիծական դիտողություններով: Այն, ինչ նա ասում է, շատ խելացի է: Բայց ու՞մ է նա ասում դա... Խելացի մարդու առաջին նշանն առաջին հայացքից իմանալն է, թե ում հետ գործ ունես, և մարգարիտներ շաղ չտալն է Ռեպետիլովների և նրա նմանների առջև*»³⁰:

«Խելքից պատուհաս»-ին անդրադառնում և բարձր է գնահատում նաև **Ն.Վ. Գոգոլը**³¹, ում վերլուծություններում ևս բացակայում են «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» կապի մասին տեսակետները:

«Խելքից պատուհաս»-ի և Չացկու կերպարի շուրջ 1830-ական թթ. բավականին հետաքրքիր մեկնաբանություններ է կատարում **Վ.Գ. Բելիևսկին**, որն այս թեմային անդրադառնում է մի շարք

26 Ушаков В.А., "Московский бал. Третье действие из комедии "Торе от ума" (Бенефис г-жи Репиной)", "Московский телеграф", 1830, №XI, с. 383-393, №XII, с. 508-516.

27 Надеждин Н.И., ""Торе от ума" комедия в четырёх действиях А. Грибоедова", "Телескоп", Журнал современного просвещения, Изд-ий Николаем Надеждиным, Тип-я Н. Степанова, Москва, 1831, №20, с. 586-606.

28 Киреевский И.В., ""Торе от ума" на московском театре", "Европеец", Изд-е И.В. Киреевского, Москва, 1832, №1, с. 131-141.

29 Полевой К.А., ""Торе от ума" комедия в четырёх действиях, в стихах, сочинение А.С. Грибоедова", "Московский телеграф", тип-я Августа Семёна, Москва, 1833, № XVIII, с. 245-254, տես նաև՝ "А.С. Грибоедов в русской критике", с. XIV-XVII, с. 44-97, 364-368.

30 Пушкин А.С., Полн. собр. соч. в 13-ти томах, Изд. Академии наук СССР, М., 1937, т. 13, с. 138-139.

31 Гоголь Н.В., Полн. собр. соч. в 6 томах, Гослитиздат, Москва, 1953, т. 6, с. 171-175, с. 177, տես նաև՝ А.С. Грибоедов в русской критике, և՛ Վ. աշխ., "В чём же, наконец, существо русской поэзии и в чём её особенность", "Выбранные места из переписки с друзьями", с. 368.

23 А.С. Грибоедов в русской критике. Сборник статей, Изд. "Худ. литература", Москва, 1958, с. V (նշված հատվածները տպագրվել են "Русская Талия" հանդեսում):

24 Նրանք իրենց նյութերը հրապարակում էին Ն.Ա. Պոլևոյի կողմից այդ ժամանակ նոր հիմնած "Московский телеграф" ամսագրում, իսկ «Խելքից պատուհաս»-ը բացասական իմաստով քննադատող Մ.Ա. Դմիտրիև ու Ա.Բ. Պիսարևն իրենց տեսակետները հրապարակում էին "Вестник Европы" պարբերականում: Այս մասին տես "А.С. Грибоедов в русской критике", և՛ Վ. աշխ., և՛ VI-Х:

25 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, և՛ Վ. աշխ., էջ 6:

հրապարակումներում³², սակայն գրականագիտության մեջ առավել հայտնի և մեծ ազդեցություն է թողել «Խելքից պատուհաս»-ի երկրորդ հրատարակության առիթով 1840թ. նրա գրած աշխատանքը: Նշելով իր ժամանակի գրաքննադատության մեջ գերիշխող երկու մոտեցումները՝ Վ. Բելինսկին ներկայացնում է երկուսն էլ: Ըստ նրա՝ **առաջինը՝ ֆրանսիական քննադատությունն է**, որը ստեղծագործությունը **դիտարկում է պատմական տեսանկյունից**, այսինքն՝ բացատրում է պիեսը և այն գնահատում՝ վերլուծելով պիեսի վերաբերմունքը ժամանակակից հասարակության և հեղինակի անձնական կյանքի հետ: **Մյուսը գերմանականն է**, որը գեղարվեստական ստեղծագործությանը **նայում է որպես դրա պատճառը, արդարացումն ու գնահատականն ինքն իր մեջ կրող ինչ-որ անպայմանություն այնքանով, որքանով որ իրենով արտահայտում է ոգու ընդհանուր օրենքները, գիտակցության դրսևորումը և այն չափում է բանական մտքի չափանիշով**³³:

Երկուսն էլ համարելով ընդունելի՝ Վ. Բելինսկին ստեղծագործության գեղարվեստական լինելը որոշելու համար նախապատվությունը տալիս է գերմանական մոտեցմանը և դրա չափորոշիչներով վերլուծելով «Խելքից պատուհաս»-ը եզրակացնում է. «*Իր հիմնական գաղափարի բացակայության կամ, ավելի ճիշտ, հիմնական գաղափարի կեղծ լինելու պատճառով «Խելքից պատուհաս»-ը կատակերգություն չէ. այն ինքնանպատակության և ստեղծագործության համար անհրաժեշտ պայման հանդիսացող ամբողջականության, հետևաբար նաև օբյեկտիվության բացակայության պատճառով գեղարվեստական ստեղծագործություն չէ: «Խելքից պատուհաս»-ը երգիծանք է և ոչ թե կատակերգություն, իսկ երգիծանքը չի կարող լինել գեղարվեստական ստեղծագործություն*»³⁴:

Ինչ վերաբերում է «Խելքից պատուհաս»-ը պատմական տեսանկյունից դիտարկելուն, ապա այստեղ Վ. Բելինսկին ոչ մի խնդիր չի տեսնում՝ նշելով, որ պիեսը ժամանակի երիտասարդության շրջանում մեծ հաջողություն է ունեցել, որովհետև ծաղրել է նախորդ սերնդին: Գրողը նշում է նաև, որ երիտասարդությունը չէր էլ պատկերացնում «իր հանդեպ ավելի կատաղի, բայց նաև չկանխամտածված ծաղրանք»

32 А.С. Грибоедов в русской критике, бзл. шзл., «Литературные мечтания, элегия в прозе», О русской повести и повестях г. Гоголя («Арабески» и «Миргород»), «О жизни... Вальгера Скотта, сочинения Аллана Каннингама...», «Горе от ума» комедия в четырёх действиях, в стихах сочинение А.С. Грибоедова», с. 369-373.

33 Белинский В. Г., Полное собрание сочинений в 13-ти томах, изд-во Академии наук СССР, Москва, 1953, т. III, с. 473.

34 Նույն տեղում՝ էջ 485:

հանձին խելապակաս Չացկու»³⁵: Ընդհանրացնելով վերլուծությունը՝ Վ. Բելինսկին տալիս է «Խելքից պատուհաս»-ի իր գնահատականը. «*«Խելքից պատուհաս»-ը, չնայած որ բառիս գեղարվեստական իմաստով կատակերգություն չհանդիսացող և իր ամբողջականության մեջ թույլ ստեղծագործություն է, բայց մեծ է իր մասնավորություններով. այն հզոր տաղանդի ստեղծագործություն է, ժուսական գրականության թանկարժեք մարգարիտ*»³⁶:

Վերոհիշյալ հոդվածում Վ. Բելինսկին տալիս է նաև Ա. Գրիբոյեդովի բնութագիրը. «*Գրիբոյեդովը պատկանում է ժուսական ոգու ամենահզոր դրսևորումներին: «Խելքից պատուհաս»-ում նա հանդես է գալիս որպես կրակոտ, ուժեղ և խոր քաջություն խոստացող պատանի, երեխա, բայց դեռ օրորոցում հսկա օձեր խեղդող երեխա, երեխա, որից պետք է առաջանար (հայտնվեր) հրաշալի Հերակլեսը*»³⁷: Ա. Գրիբոյեդովին, Չացկուն և «Խելքից պատուհաս»-ին տված Վ. Բելինսկու այսպիսի գնահատականները մեր թեմայի համար կարևոր են այնքանով, որ մատնանշում են ստեղծագործության պատմական կապն իր ժամանակի հետ: Բացի այդ՝ Վ. Բելինսկին Ա. Պուշկինի նման Չացկուն նույնացնում է Ա. Գրիբոյեդովի հետ՝ նրա արտահայտած մտքերը համարելով Գրիբոյեդովինը: Նա գրում է. «*Չացկին ինչ-որ անդամ կերպար է, տեսիլք, ֆանտոմ, գոյություն չունեցող և անբնական ինչ-որ բան, բայց ոչ մի կերպ կատակերգության գեղարվեստականորեն ստեղծված դեմք, այլ իր՝ հեղինակի մտքերի և զգացմունքների արտահայտող*»³⁸:

Չետագայում էլ տարբեր առիթներով Վ. Բելինսկին անդրադառնում է Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ին: Այսպես, 1840թ. դեկտեմբերի 10-11-ին **Վ.Պ. Բոսկինին** ուղղված նամակում և մի շարք հրապարակումներում Վ. Բելինսկին մի փոքր վերանայում է «Խելքից պատուհաս»-ի վերաբերյալ իր տեսակետները³⁹, սակայն հետագայում ուսումնասիրողների վրա մեծ ազդեցություն է ունենում 1840թ. տպագրված վերոհիշյալ նյութը:

35 Белинский В.Г., Полное собрание сочинений, 1953, бзл. шзл., т. III, էջ 472:

36 Նույն տեղում՝ էջ 486:

37 Նույն տեղում՝ էջ 485:

38 Նույն տեղում՝ էջ 484:

39 Белинский В.Г., Полн. собр. соч., 1956, т. XI, с. 576-577, 1954, т. V, с. 60-62, с. 562-563; 1956, т. IX, с. 451-452; 1955, т. VII, с. 439-443, տես նաև՝ А.С. Грибоедов в русской критике, бзл. шзл., «Разделение поэзии на роды и виды», «Русская литература в 1841г.», «Мысли и записки о русской литературе», «Сочинения Александра Пушкина», с. 373-375.

Ա. Գրիբոյեդովի և «Խելքից պատուհաս»-ի թեման չեն շրջանցել նաև XIX դարի կեսերի ռուսական հասարակական-քաղաքական մտքի կարկառուն դեմքեր **Ա.Ի. Գերցենը, Ն.Պ. Օգարևը, Ն.Գ. Չեռնիշևսկին, Ն.Ա. Դոբրոլյուբովը, Գ.Ի. Պիսարևը**:

Ա.Ի. Գերցենը «Խելքից պատուհաս»-ի թեմային անդրադարձել է բազմիցս (սկսած իր վաղ շրջանի ստեղծագործություններից մինչև կյանքի վերջին տարիների հրապարակումները)⁴⁰: Բավական ուշագրավ է «Խելքից պատուհաս»-ի հանդեպ Ա. Գերցենի մոտեցումների զարգացումը: Եթե դրանցում նա Ա. Գրիբոյեդովին տեսնում է Ա. Պուշկինի կողքին, ապա Չացկուն դասում է դեկաբրիստների շարքին: Նա գրում է. «Եթե գրականության մեջ հարազատական գծերով թեկուզ մի քիչ, բայց թույլ արտահայտվել է դեկաբրիստի տեսակը, ապա դա Չացկու մեջ է»:

Զարգացնելով միտքը՝ Ա. Գերցենը շարունակում է. «Չացկին ուղիղ ճանապարհներով գնում էր տաժանակիր աշխատանքների»: Վերջում նա իր միտքն ավարտում է հետևյալ տողերով. «Եթե Չացկին վերապրեր դեկտեմբերի 14-ից հետո դուրս հորդած տեռորի հետևանքով վախի և դողի մեջ ստորացված ու ճնշված առաջին սերունդը, ապա նրանց միջով մեզ կմեկնեն ջերմ ձեռքը»⁴¹: «Խելքից պատուհաս»-ի հանդեպ ցուցաբերելով պատմական մոտեցում՝ Ա. Գերցենը Չացկուն դարձնում է դեկաբրիստ, սակայն չի ակնարկում Ա. Գրիբոյեդովի դեկաբրիստ լինել-չլինելու մասին: Ա. Պուշկինի և Վ. Բելինսկու նման Ա. Գերցենը Չացկու և Գրիբոյեդովի միջև նույնիսկ զուգահեռ չի անցկացնում, **ինչն էլ թույլ չի տալիս կարծել, թե Ա. Գերցենը, Չացկուն դեկաբրիստ համարելով, այդպիսին համարում էր նաև Ա. Գրիբոյեդովին**:

Ա. Գրիբոյեդովի և Չացկու մասին բավականին հետաքրքիր տեսակետներ է հայտնում նաև Ա. Գերցենի ընկեր և համախոհ **Ն.Պ. Օգարևը**⁴²: Նա համաձայն չէ այն քննադատների հետ, ովքեր Չացկուն համարում են անբնական կերպար, քայլող երգիծանք՝ գանելով, որ նա կենդանի կերպար է, և այդպիսի պահվածքը գալիս է նրա քաղաքացիական մտքերի կերպից, քաղաքական դիրքորոշումից, ու շարունակելով

իր միտքը՝ հարց է տալիս. «Եթե այդ դեմքը, ենթադրենք՝ Չացկին, ներկայացնում է Գրիբոյեդովի կեղծանունը, ապա ինչու՞ այդ ժամանակ Գրիբոյեդովին չէր կարելի լինել կենդանի դեմք, որի կյանքը ներծծված է քաղաքացիական ձգտումներով և իրերի ժամանակակից դրվածքի հանդեպ թշնամանքով»: Հետո նա ավելացնում է. «Բայց Չացկին միայն Գրիբոյեդովը չէ. Չացկին իր դարաշրջանի կենդանի մարդն է, և դրանից էլ նա առավել ևս կենդանի դեմք է»⁴³:

Բարձր գնահատելով Ա. Գրիբոյեդովի գրական գործունեությունը մինչև 1825 թվականը՝ Ն. Օգարևը բավականին հետաքրքիր տեսակետ է հայտնում նրա հետագա գործունեության վերաբերյալ. «Ազգակցական կապերի շնորհիվ փրկվելով աքսորից՝ Գրիբոյեդովը հարեց կառավարությանը և դիվանագիտական ասպարեզում դեմ առավ պատահական վախճանի: Բայց նրա տաղանդը առանց դրա էլ արդեն վախճանված էր. նա «Խելքից պատուհաս»-ում ասել էր այն ամենը, ինչ կար նրա սրտում, իսկ հետագայում նա ինքն իր մեջ ոչինչ չկարողացավ զարգացնել հենց այն պատճառով, որ հարեց կառավարությանը՝ ռուսական տաղանդների և ռուսական քաջության այդ դագաղին»⁴⁴:

Ա. Գրիբոյեդովին մոտավորապես նմանատիպ գնահատական է տալիս նաև **Ն.Գ. Չեռնիշևսկին**: Գրիբոյեդովին ու «Խելքից պատուհաս»-ին նա անդրադարձել է բազմիցս, սակայն առավել հայտնի են դրանցից երեքը⁴⁵: Առաջինում Ն. Չեռնիշևսկին համեմատում է Ֆոնվիզինի «Բրիգադիր» ստեղծագործությունն Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ի հետ՝ նշելով նրանցում եղած ընդհանրությունները: Առավել հետաքրքիր է երկրորդ հրապարակումը, որտեղ, խոսելով ռուս գրականության մեջ երգիծանքի ժանրի ձևավորման մասին, Ֆոնվիզինի, Կոլիլովի, Կանտեմիրի, Մումարոկովի անունների կողքին տալիս է նաև Ա. Գրիբոյեդովի անունը՝ նրա պիեսը գնահատելով հետևյալ կերպ. ««Խելքից պատուհաս»-ը գեղարվեստական առումով ունի թերություններ, բայց այժմ էլ մնում է ամենասիրված գրքերից մեկը, որովհետև մերթ մենախոսությունների, մերթ երկխոսությունների ձևով ներկայացնում է հոյակապ շարադրված երգիծանքի շարք»: Ն. Չեռնիշևսկին Ն. Գոգոլի «Ռևիզոր»-ի և Ա. Գրիբո-

40 Герцен А.И., Полн. собр. соч. в 30-ти томах, "Записки одного молодого человека", Изд-во АН СССР, Москва, 1954, т. I, с. 268-269, նույնի՝ "Новая фаза русской литературы" (Ֆրանսերենով տպագրված), 1959, т. XVIII, с. 180-181; նույնի՝ "Письма к будущему другу", с. 184; նույնի՝ "Ещё раз Базаров", Москва, 1960, т. XX, с. 342-343.

41 Նույն ժողովածու՝ "Ещё раз Базаров", էջ 342-343.

42 А. С. Грибоедов в русской критике, Сборник статей, ևշվ. աշխ., էջ 376-377:

43 А. С. Грибоедов в русской критике, Сборник статей, ևշվ. աշխ., էջ 211-213, տես նաև՝ Огарев Н.П., "Предисловие к сборнику: "Русская потаённая литература XIX столетия"", Вольная русская тип-я, Лондон, 1861, ч. I, с. 1-XVI.

44 А. С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., էջ 212:

45 Чернышевский Н.Г., Полн. собр. соч. в 15-ти томах, Гослитиздат, Москва, 1949, т. II, "О "Бригадире" Фонфинина", с. 798; т. III, "Очерки гоголевского периода русской литературы", с. 17-19; "Александр Сергеевич Пушкин, его жизнь и сочинения", с. 239-240, с. 316, տես նաև՝ А. С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., էջ 17-19:

յեղովի «Խելքից պատուհաս»-ի հանդեպ ցուցաբերած մոտեցումների համար քննադատում է Վ. Բելինսկուն: «Քննադատությունը, – գրում է Ն. Չեռնիշևսկին, – դարձյալ սահմանափակվում է բացարձակապես զեղարվեստական տեսանկյունից, գրեթե ոչ մի ուշադրություն չի դարձվել այն բանի վրա, թե ինչ ազդեցություն ունի «Ռևիզորը», և ինչ ազդեցություն է ունեցել «Խելքից պատուհաս»-ը կյանքի համար»⁴⁶:

Երրորդ անդրադարձում Ն. Չեռնիշևսկին Ա. Պուշկինին Ա. Գրիբո-յեղովից ավելի վեր է դասում, և դա հիմնավորում է այն փաստով, որ վերջինս «Խելքից պատուհաս»-ից հետո գրական ոչ մի լուրջ գործ չի ստեղծել⁴⁷: Ն. Չեռնիշևսկու մոտ ևս ոչ մի ակնարկ չկա «Գրիբոյեղով-դեկաբրիստներ» կապի մասին: Հեղինակը սահմանափակվում է միայն պիեսի գրաքննադատական վերլուծություններով:

«Գրիբոյեղով-դեկաբրիստներ» հարաբերությունների մասին ոչինչ չի վկայում նաև **Ն.Ա. Գորբուլյովը**: Իր հրապարակումներում⁴⁸ Ն. Դոբրոլյուբովն անդրադառնում է Ա. Գրիբոյեղովի «Խելքից պատուհաս»-ին, սակայն դրանք ևս զուտ գրաքննադատական անդրադարձեր են և դրանից այն կողմ չեն անցնում: Ն. Դոբրոլյուբովը մեզ հետաքրքրող թեմային չի անդրադառնում նաև 1858թ. տպագրված **Ե. Սերչևսկու** «*А.С. Грибоедов и его сочинения*» («**Ա.Ս. Գրիբոյեղովը և նրա ստեղծագործությունները**» - Վ.Ս.) գրքի համար գրած գրախոսականում⁴⁹:

Այլ է XIX դ. կեսերի ճանաչված մտածող **Գ.Ի. Պիսարևի** տեսակետը⁵⁰: **Նա ավելի մեծ տեղ է հատկացնում «Խելքից պատուհաս»-ի պատմական վերլուծությանը**: Իրեն և իր սերնդին համարելով Չացկու իրավահաջորդ Դ. Պիսարևը գրում է. «Բելյուովների, Չացկինների, Ռուդինների ժամանակը վաղուց անցել է..., բայց մենք՝ նորագույն իրապաշտներս (реаллисты), գգում ենք մեր արյունակից ազգակցությունն իր դարն ապրած այդ տիպի հետ... Մենք նրանում ճանաչում ենք մեր նախորդներին, մենք հարգում և նրանում սիրում ենք մեր ուսուցիչներին, հասկանում ենք, որ առանց նրանց չէինք կարող լինել և մենք»: Նույն պատմական տեսանկյունից է գնահատում Դ.

46 Чернышевский Н.Г., Полн. собр. соч., ևշվ. աշխ., հ. III, էջ 17-19:

47 Նույն տեղում էջ 316:

48 Добролюбов Н.А., Полн. собр. соч. в 6-ти томах, Москва, 1936, т. IV, "Несколько слов о цензуре в России", с. 453, Москва, 1934; т. I, "О Плате и его значения для изучения римской жизни", с. 546; "О степени участия народности в развитии русской литературы", с. 243; "Предубеждения, или не место красит человека, человек - место" комедия в двух картинах, Соч. Н. Львова", с. 392, տես նաև "А.С. Грибоедов в русской критике", ևշվ. աշխ., էջ 377-378:

49 А.С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., "А.С. Грибоедов и его сочинения", с. XXIV.

50 Писарев Д.И., Сочинения в 4-х томах, Гослитиздат, Москва, 1956, т. III, "Пушкин и Белинский", с. 337, с. 360, տես նաև "А.С. Грибоедов в русской критике", ևշվ. աշխ., էջ 378:

Պիսարևը Ա. Գրիբոյեղովի գործունեությունը: Նա գրում է. «Պատմական պատկերը նկարելու համար ոչ միայն ուշադիր դիտող, այլ, դրանից բացի, պետք է լինել նաև հոյակապ մտածող: Պետք է ձեզ շրջապատող դեմքերի խայտաբղետությունից, մտքերից, խոսքերից, ուրախություններից, վշտերից, հիմարություններից և ստորություններից ընտրել հենց այն, ինչն իր մեջ կենտրոնացնում է այդ դարաշրջանի իմաստը... Քսանական թվականների Ռուսաստանի համար, իսկապես, այդպիսի հսկայական աշխատանք կատարեց Գրիբոյեղովը»⁵¹: Այսպիսի գնահատականը խորհրդային պատմագիտությանը հետագայում **թույլ է տալիս ենթադրել, որ Գ. Պիսարևը ոչ անմիջական կերպով Ա. Գրիբոյեղովին դասում է դեկաբրիստների շարքին**:

«Խելքից պատուհաս»-ի հանդեպ նման մոտեցում է ցուցաբերվում 1862թ. **Ապոլլոն Գրիգորևի** կողմից հրապարակած հոդվածում: Դեռևս 1859թ. հրապարակած իր մի հոդվածում Ապ. Գրիգորևն արդեն անդրադարձել էր «Խելքից պատուհաս»-ին⁵²: 1862թ. հրապարակումը դրա ավելի ընդարձակ տարբերակն է, որտեղ, փորձելով հակադրվել Վ. Բելինսկուն, հեղինակն առաջ է քաշում երկու տեսակետ. «Գրիբոյեղովի կատակերգությունը մեր, այսպես կոչված, բարձրաշխարհիկ կենցաղը ներկայացնող զեղարվեստական ոլորտի միակ ստեղծագործությունն է, իսկ մյուս կողմից էլ Գրիբոյեղովի Չացկին հանդիսանում է մեր գրականության միակ իրական հերոսական դեմքը»⁵³:

Հոդվածի հետագա շարադրանքում Ապ. Գրիգորևը «հիմնավորում է» իր այս տեսակետները, սակայն նրա վերլուծություններում էլ ակնարկ չկա Ա. Գրիբոյեղովի դեկաբրիստ լինել-չլինելու մասին: Ամեն դեպքում սա չի խանգարել, որ **Ապ. Գրիգորևի տեսակետները թույլ տան խորհրդային ուսումնասիրողներին նրան ևս դասելու Ա. Գրիբոյեղովին դեկաբրիստ համարողների շարքին**:

«Խելքից պատուհաս»-ի հանդեպ պատմական մոտեցման հետևորդ է նաև **Ի.Ա. Գոնչարովը**: Նրա հոդվածը⁵⁴ մեծ ազդեցություն է թողնում և համարվում է գրաքննադատության լավագույն նմուշներից մեկը, որում հեղինակը մեծ վարպետությամբ վերլուծում է «Խելքից պատուհաս»-ը՝

51 Писарев Д.И., Сочинения..., ևշվ. աշխ., էջ 337, 360:
52 А.С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., "Взгляд на русскую литературу со смерти Пушкина", էջ XXV:
53 Григорьев А., "По поводу нового издания старой вещи", "Время", Изд-ий М. Достоевским, СПб, 1862, № VIII, с. 36.
54 Г.И. (Гончаров И.А. – Վ.Ս.), "Милльон терзаний! Горе от ума" Грибоедова, - Бенедикт г. Монахова", ноябрь, 1871г., "Вестник Европы", Тип-я М.М. Стасюлевича, 1872, №3, с. 438.

այն դիտարկելով պատմական տեսանկյունից: Ի. Գոնչարովը Չացկուն համարում է իր ժամանակի նորարար և Ա.Բ. Գերցենի ու Վ.Գ. Բելինսկու սերնդի նախորդը: Ի տարբերություն Օնեգինի և Պեչորինի՝ նա Չացկուն համարում է ավելի հասուն, հնի դեմ պայքարելու համար առավել պատրաստ կերպար: Ինչ վերաբերում է Չացկու սկսած պայքարի հետագա ընթացքին, ապա Ի. Գոնչարովը գրում է. «Ու՞մ կողմն է հաղթանակը: Կատակերգությունը Չացկուն տալիս է միայն «միլիոն տառապանք» և Ֆամուսովին ու նրա կարգի մարդկանց թողնում է այն նույն վիճակում, որում որ նրանք կային՝ ոչինչ չասելով պայքարի հետևանքների մասին: Հիմա մեզ հայտնի են այդ հետևանքները. դրանք դեռևս ձեռագիր կատակերգության տեսքով ի հայտ եկան հասարակության մեջ և, ինչպես համաճարակ, ընդգրկեցին ողջ Ռուսաստանը»: Ի. Գոնչարովի այսպիսի բնորոշումները հիմք ընդունելով՝ խորհրդային ուսումնասիրողները եզրակացրել են, որ նա ակնարկում է դեկաբրիստներին, իսկ այն, որ Ի. Գոնչարովն իր այդ հոդվածում նրանց անունն ընդհանրապես չի հիշատակում, բացատրել են գրաքննությունից խուսափելու միտումով⁵⁵:

Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ի թեմային անդրադարձել է **Մ.Ե. Սալտիկով-Շչեդրինը** 1874-1877թթ.⁵⁶: Իրեն հատուկ երգիծական ոճով նա շարունակում է Ա. Գրիբոյեդովի հերոսների հետագա ճակատագիրը: Այսպես, Չացկին տարի ու կես անցկացնում է բանտում, որից հետո հրաժարվում է իր ազատամտությունից և մահանում մոտ 70 տարեկանում: Հեղինակը դրանով և իր զարգացած կերպարի միջոցով փորձում է ցույց տալ Չացկու մղած պայքարի անելանելիությունն ու ապարդյունությունը:

XIX դարի 70-ական թվականներին հրապարակվում է **Ա.Ն. Վեսելովսկու** հոդվածը⁵⁷: Այն իր կառուցվածքով նման չէ մինչ այդ տպագրված հրապարակախոսական և գրաքննադատական նյութերին և իրենից ներկայացնում է պատմագիտական ու գրականագիտական նյութերի համադրում: Ի թիվս այլ աղբյուրների՝ Ա. Վեսելովսկին իր հոդվածում առաջին անգամ օգտագործում է Դ.Ա. Սմիռնովի մինչ այդ չհրապարակած նյութերը, որոնք վերջինիս այրու կողմից հետագայում

տրվել էին *“Общество любителей российской словесности”* («Ռուսական բանահյուսությունը սիրողների ընկերություն» - **Վ.Ս.**) կազմակերպությանը, իսկ այնուհետև՝ անհետացել: Ամեն դեպքում դրանք մեզ չեն հասել:

Ա. Վեսելովսկու հոդվածը կարելի է համարել «Խելքից պատուհաս»-ի ստեղծման պատմությունը նկարագրելու առաջին փորձ: Այս հարցում ևս ցուցաբերելով պատմական մոտեցում՝ հեղինակը տեղեկություններ է տալիս Ա. Գրիբոյեդովի կենսագրությունից և նշում այն ամենը, ինչը, իր կարծիքով, ազդել է գրողի աշխարհայացքի ձևավորման վրա՝ սկսած նրա ընտանիքից մինչև Պարսկաստանում դիվանագիտական աշխատանքը: Ինչ վերաբերում է «Խելքից պատուհաս»-ի մտահղացմանը, ապա Ա. Վեսելովսկին առավել հակված է դրա՝ 1812թ. ստեղծված լինելու տարբերակին: Նա գրում է. «Մենք նախապատվությունը կտանք Գրիբոյեդովի համալսարանական ընկերներից մեկի այլ վկայությանը, թե ինչպես դեռևս 1812թ. Գրիբոյեդովն իրեն և իր դաստիարակ Իոնին մի հատված է կարդացել իր կողմից գրված և արդեն «Խելքից պատուհաս» կոչված կատակերգությունից»:

Ա. Վեսելովսկու աշխատանքը կարևոր է նաև նրանով, որ Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման վրա ազդած գործոնների թվում նշվում է XIX դարի առաջին քառորդին Ռուսաստանում ստեղծված գաղտնի կազմակերպությունների, մասնավորապես՝ **ապագա դեկաբրիստական “Союз благоденствия”** («Բարօրության միություն» - **Վ.Ս.**) կազմակերպության հանգամանքը: Ըստ հեղինակի՝ դրանք կարևոր նշանակություն են ունեցել հատկապես հայրենասիրական դաստիարակության գործում: «Հայրենասիրությունը...» գրում է Ա. Վեսելովսկին, - վերջապես, դեկավարում էր «Բարօրության միությունը». երիտասարդությունը անդրադառնում էր պատմությանը, նրանում և հանդիպեց զսպարհի աշխարհի տարեգրություններում հայրենիքի հանդեպ իրական, անձնորոշ սիրո օրինակներ էր փնտրում՝ ներծծվելով ազատ Հունաստանի վերակենդանացած մեծագույն հայրենասերների ոգով⁵⁸:

Ա. Վեսելովսկու վերոհիշյալ մոտեցումը «Բարօրության միությանն» ու այդ ժամանակվա համանման կազմակերպություններին բավականին քիչ է ուսումնասիրված և արժանի է ավելի մեծ ուշադրության: Վերլուծելով «Խելքից պատուհաս»-ը՝ Ա. Վեսելովսկին նույնպես գտնում է, որ Ա.

55 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 16-17:

56 Салтыков-Щедрин М.Е., В среде умеренности и аккуратности, Собр. соч. в 20-ти томах, “Худож. литература”, М., 1971, т. XII, с. 7-292, с. 34-35, с. 45.

57 (Веселовский А. - Վ.Ս.), “Очерк первоначальной истории “Горе от ума””, “Русский архив”, Тип-я Грачёва и комп., Москва, 1874, №6, с. 1516-1517.

58 (Веселовский А. - Վ.Ս.), “Очерк первоначальной истории...”, նշվ. աշխ., էջ 1538:

Գրիբոյեդովն ու Չացկին նման են իրար: Նա գրում է. «Այո՛, Չացկին իսկապես Գրիբոյեդովի ճշգրիտ պատկերն է: Նրա խոսքերն ու ձգտումները հնարավոր չէ հասկանալ առանց բնօրինակի հետ մշտական համեմատության»⁵⁹: Ա. Վեսելովսկու աշխատանքը պատմական մտածելակերպի տեսանկյունից զերծ չէ թերություններից, քանի որ այդպես էլ պարզ չէ նրա տեսակետը, թե, այնուամենայնիվ, ի՞նչ առնչություն է ունեցել Ա. Գրիբոյեդովը ղեկաբրիստների հետ: Տեքստում զգացվում է նաև նրա կողմնակալ վերաբերմունքն Ա. Գրիբոյեդովի հանդեպ:

XIX դարի հեղինակ Ա.Գ. Գալախովը հին ու նոր աշխարհների բախումը քննարկելիս կատարում է մի փոքր ակնարկ՝ կապված պիեաի վրա ղեկաբրիստական շարժման ազդեցության հետ, սակայն այդ ակնարկում էլ բառացիորեն չի օգտագործված «հեղափոխական ղեկաբրիստներ» բնորոշիչը. վերջիններիս նա կոչում է մարդկանց «ոչ մեծաքանակ» խումբ և գրում է. «Ընթացիկ հարյուրամյակի առաջին քառորդում ձևավորվեց մարդկանց ոչ մեծաքանակ շրջանակ, որը մտավոր զարգացմամբ և բարոյական սկզբունքներով առանձնանում էր հասարակական մեծամասնությունից»⁶⁰:

Վերոհիշյալ ակնարկից և հետագա շարադրանքից երևում է հեղինակի դրական վերաբերմունքը ղեկաբրիստների հանդեպ, սակայն ենթադրաբար գրաքննությունից խուսափելով՝ հեղինակը չի զարգացնում իր միտքը: Ա. Գալախովն Ա. Գրիբոյեդովի կենսագրությունը ներկայացնելիս ոչինչ չի գրում նրա ղեկաբրիստ ընկերների մասին, իսկ 1826թ. նրա ձեռքակալված լինելու հանգամանքը ներկայացնում է հետևյալ կերպ. «1826թ. սկզբին, - գրում է նա, - Ա.Պ. Երմոլովի կողմից (Գրիբոյեդովը - Վ.Ս.) ծառայողական գործերով ուղարկվեց Սանկտ Պետերբուրգ»⁶¹: Այս պատճառաբանությունը բավականին նման է մեր կողմից արդեն հիշատակված Ֆ.Վ. Բուլգարինի ներկայացրած պատճառաբանությանը: Եթե Ֆ. Բուլգարինն իր հուշերը գրել է 1830թ., երբ ղեկաբրիստների հարցում գրաքննությունը շատ ավելի խիստ էր, ապա Ա. Գալախովի ժամանակաշրջանում այն բավականին թուլացել էր: Դժվար է ասել, թե ինչու է Ա. Գալախովը խուսափել «իրական փաստեր» ներկայացնելուց:

59 (Веселовский А. - Վ.Ս.), "Очерк первоначальной истории...", ևշվ. աշխ., էջ 1544:

60 Галахов А.Д., История русской словесности (Учебник для средних учебных заведений), в типографии Морского министерства, в Главном адмиралтействе, Санктпетербург, 1879, с. 191.

61 А.С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., էջ XXVII:

XIX դարի 80-ական թթ. Ռուսաստանը թևակոխում է զարգացման նոր փուլ: Նախորդ՝ այսպես կոչված «ռազմոչինական» շրջանին, հաջորդում է «սոցիալ-դեմոկրատականը»: Շատ հարցեր, այդ թվում նաև վերաբերմունքը ղեկաբրիստների հանդեպ, սկսում են վերանայվել: Բնականաբար, դա առնչվելու էր Ա. Գրիբոյեդովին ու «Խելքից պատուհաս»-ին: Այն իր առաջին դրսևորումներն է գտնում դարձյալ գրաքննադատության մեջ, և առաջինը, ով «Խելքից պատուհաս»-ի միջոցով սուր քննադատության է ենթարկում ղեկաբրիստներին և նրանց հաջորդներին, Ֆ.Ս. Դոստոևսկին էր:

1883թ. լույս են տեսնում Ֆ.Ս. Դոստոևսկու գրառումները⁶², որոնցում անդրադարձ կար «Խելքից պատուհաս»-ին և Չացկուն: Յոթ տարի անց լույս են տեսնում Ֆ. Դոստոևսկու "Бесы" («Գևեր» - Վ.Ս.) վեպի նախապատրաստական նյութերը, որոնցում հեղինակն էլ ավելի սուր բնորոշումներ է տալիս Չացկուն⁶³: Ֆ. Դոստոևսկին նրան համարում է ղեկաբրիստ: Նրա կարծիքով Չացկին Մոսկվայի ազնվական էր, ում համար, իր նմանների շրջապատից բացի, այլ միջավայր գոյություն չունեք: Նրանց հետ վիճելով՝ Չացկին, ըստ Դոստոևսկու, ոչ թե գնում է դեպի ժողովուրդը, այլ փախչում է Եվրոպա: Այնուհետև նա իր այս բնորոշումները տարածում է այդ ժամանակվա այսպես կոչված առաջադեմ մարդկանց վրա: Նա գրում է. «Չացկին չէր էլ հասկանում, թե որքան սահմանափակ հիմար է... Նա ազնվական ու կալվածատեր էր, և նրա համար, իր խմբակից բացի, էլ ոչինչ գոյություն չունեք: Եվ ահա. նա էլ մոսկովյան բարձրաշխարհիկ կյանքից այնպիսի հուսահատության է հասնում, կարծես Ռուսաստանում, այդ կյանքից բացի, ուրիշ ոչինչ չկա: Ինչպես մեր բոլոր առաջադեմ մարդիկ, նա ևս ռուս ժողովրդին բաց է թողել աչքից... Ռուս ժողովրդի նշանակության, նրա հավատի, սովորությունների, պատմության և հսկայական բազմաքանակության մասին նա մտածում էր (դիտում էր - Վ.Ս.) որպես բահրատու հողվածի: Նույն այդ կերպ էին մտածում և՛ ղեկաբրիստները, և՛ պոետները, և՛ պրոֆեսորները, և՛ լիբերալները, և՛ բոլոր բարեփոխիչները, ընդհուպ՝ ազատարար ցարը»⁶⁴:

Ինչպես տեսնում ենք, Չացկուն տված Ֆ. Դոստոևսկու գնահատականները առավելապես քաղաքական են, քան գրականագիտական:

62 А.С. Грибоедов в русской критике, ևշվ. աշխ., էջ XXIX:

63 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 23:

64 Достоевский Ф.М., Полн. собр. соч. в 30-ти томах, "Наука", Ленинград, 1974, т. 11, с. 86-87.

Նա պիեսի գլխավոր հերոսին դիտարկում է XIX դարի երկրորդ կեսին բնորոշ հասարակական-քաղաքական հոսանքների պրիզմայի միջով:

«Խելքից պատուհաս»-ը քաղաքական նպատակներին ծառայեցնելու մեկ այլ փորձ է **Ա.Ս. Սուվորինի** հողվածը⁶⁵, որն առաջաբանի տեսքով ներկայացվել է նրա հրատարակության մեջ: Ա. Սուվորինը համարվում է ժամանակի պահպանողական թևի ներկայացուցիչ: Նա Ա. Գրիբոյեդովի պիեսն օգտագործում է Վ.Գ. Բելինսկուն և նրա համախոհներին քննադատելու համար և դա կատարում է բավական ուշագրավ ձևով: Ա. Սուվորինն ամեն կերպ փառաբանում և բարձրացնում է Չացկուն՝ հակադրվելով Բելինսկու՝ մեր կողմից արդեն ներկայացրած բնորոշումներին:

Ըստ Ա. Սուվորինի՝ Չացկին ոչ թե դեկաբրիստ է կամ լիբերալ, այլ դրանք քննադատող սլավոնաֆիլ: Որպես իր տեսակետի ապացույց՝ նա ներկայացնում է Չացկու խոսքերը Բորդոյից ժամանած ֆրանսիացու, ռուսական տարազի, Չագորեցկու գաղտնի միության և գաղտնի կազմակերպությունների մասին: Նույն կերպ է նա վերաբերվում Գրիբոյեդովին՝ ընդգծելով, որ չնայած Չացկին ինքնուրույն կերպար է, բայցևայնպես Գրիբոյեդովը Չացկու շուրթերով հնչեցնում է իր սիրելի գաղափարները, հասարակության հանդեպ իր հայացքները, ու դա, ըստ նրա, անվիճելի է և առանց որևէ ցուցումների էլ բոլորին հասկանալի: Բացի այդ՝ *դրանից ոչ մի կերպ չի հետևում, որ Չացկին «20-ական թթ. ազատամտության հույսերի և ձեռնարկների լավագույն արտահայտողն է»:*

Ուշագրավ են նաև գաղափարական իր հակառակորդների դեմ Չացկու մղած պատերազմի վերաբերյալ սուվորինյան մեկնաբանությունները: Նա գտնում է, որ ոչ թե Չացկին է պատերազմ հայտարարել Ֆամուսովին և նրա շրջապատին, այլ վերջիններս էին հարձակվել Չացկու վրա, իսկ նա միայն պաշտպանվել էր: Նա գրում է. «Այսպիսով, *հասարակությանը Չացկին չէր պատերազմի կանչում. նա միայն պաշտպանվում էր, հակադարձում և տանջվելով ու տատակելով ցանկանում էր պաշտպանել իր սերը, իր նրջանկությունը*»⁶⁶: Ա. Սուվորինի տեսակետները միանգամից մեծ ուշադրության են արժանանում այդ ժամանակի պետական պաշտոնական

65 "Личность Чацкого, Гончарова, Незеленова и из предисловия к "Горю от ума", "Горю от ума" и его критики", Изд. Суворина, 1886г., в книге Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения, Сборник историко-литературных статей, Сост. Покровский В., Москва, 1911, с. 139.

66 Из Предисловия к изд. Суворина 1886г., "Проявление чувств и личности Чацкого к среде в которой он очутился", в книге А.С. Грибоедов. Его жизнь и сочинения, ևզվ. աշխ., էջ 142-147:

գաղափարախոսության ներկայացուցիչների կողմից, քանի որ մինչ այդ ազատամտի, նույնիսկ դեկաբրիստի համբավ վայելող Ա. Գրիբոյեդովի միջոցով խարազանում էր թե՛ ազատամիտներին, թե՛ դեկաբրիստներին: **Սուվորինի հրապարակումը նույնիսկ դասվում է Ի.Ա. Գոնչարովի «Мильон терзаний» գործին համարժեք ստեղծագործությունների թվին**⁶⁷:

Շուտով Ա. Սուվորինի հրապարակման դեմ և Վ. Բելինսկու պաշտպանությամբ հանդես է գալիս առաջադեմ համարվող **Ա.Ն. Պիպինը**, որը փորձ է անում ապացուցել, որ Ա. Սուվորինն ամբողջությամբ չի վերլուծել Վ. Բելինսկու 1840թ. վերոհիշյալ հողվածը և, հետևաբար, ճիշտ չի ներկայացրել նրանում տեղ գտած քննադատությունը: Ներկայացնելով Վ. Բելինսկու հետագա հրապարակումներում «Խելքից պատուհաս»-ի և Չացկու վերաբերյալ նրա վերանայած տեսակետները՝ Պիպինը նշում է, որ այդ ժամանակ Վ. Բելինսկին դեռ հանդես չէր գալիս քաղաքական սուր հողվածներով և չէր քննադատում սլավոնաֆիլներին: Նա նշում է. «Այսպիսով, *ստացվում է հետևյալ տարօրինակությունը. քանի դեռ Բելինսկին հեռու է ամեն տեսակ «ազատամտությունից», քանի դեռ նա հետևողականորեն խուսափում է միտումնավորությունից, քանի դեռ նա չի ներքաշվել սլավոնաֆիլության դեմ բանավեճի մեջ, և բուն վիճաբանությունն ու դրա առարկան էլ դեռ չկան, նա միայն «ազատամտորեն» է զայրանում Չացկու դեմ և «քաղաքական քարոզչություն է տանում նրա սլավոնաֆիլական» գաղափարների դեմ, իսկ երբ Վ. Բելինսկու քննադատության մեջ թափանցում է քաղաքական և հակասլավոնաֆիլական ջիղը, նա զենքերը վայր է դնում սլավոնաֆիլ Չացկու դեմ*»⁶⁸: 1890թ. Ա. Պիպինը մեկ անգամ ևս անդրադառնում և քննադատում է Ա. Սուվորինին⁶⁹, սակայն նրա տեսակետներն, այնուամենայնիվ, արձագանք չեն գտնում այդ ժամանակի գիտահանրամատչելի հրապարակումներում:

XIX դ. 80-90-ական թվականներին Ֆ.Ս. Դոստոևսկու, Ա.Ս. Սուվորինի, Ա.Ն. Պիպինի և այլոց հետագա հրապարակումներով **հիմք է դրվում Ա. Գրիբոյեդովի անձի և «Խելքից պատուհաս»-ի քաղաքականացման գործընթացին**: Ժամանակի հասարակական-քա-

67 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևզվ. աշխ., էջ 25 (որոշ տեղերում գրվում է "Суверин" ձևով – Վ.Ս.):

68 Пыпин А.Н., "Поход против Белинского, предпринятый под флагом "Горя от ума", "Вестник Европы", Тип-я М.М. Стасюлевича, СПб, 1886, т. III, №5, май, с. 432-436, с. 437.

69 Пыпин А.Н., "Исторические заметки о Грибоедове", "Вестник Европы", Тип-я М.М. Стасюлевича, СПб, 1890, т. I, кн. №1, с. 185-225.

դաքական հոսանքները փորձում էին «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարաբերությունների հարցն օգտագործել իրենց պայքարում: **Այդ հրապարակումներում Ա. Գրիբոյեդովին ու նրա պիետին անդրադառնում էին ոչ այնքան գիտական, որքան քաղաքական գնահատական տալու համար, ընդ որում՝ այդ գնահատականները տրվում էին ոչ թե XIX դարի առաջին քառորդին գոյություն ունեցող հասարակական-քաղաքական հոսանքների գաղափարների վերլուծության, այլ XIX դարի վերջին բնորոշ գաղափարական պայքարի տեսանկյունից:**

XIX դարի 80-90-ական թվականներին շարունակվում են քննարկվող հարցի շուրջ աղբյուրների հրապարակումները, որոնք հետագայում կարևոր դեր են խաղում պատմագիտական և գրականագիտական հրապարակումների համար: Նույն՝ 1886թ., լույս է տեսնում **Ն.Ի. Գրեչի** կենսագրական գիրքը⁷⁰ (որի հրատարակիչը նույն Մուվորինն էր), որտեղ հանգամանորեն խոսվում էր 1825թ. դեկտեմբերի 14-ի դեպքերին Վ. Կ. Կյուխելբեկերի մասնակցության մասին:

1886թ. լույս են տեսնում **Ա.Ս. Գանգբերովի** հուշերը, որոնցում տեղեկություններ կան նաև «Խելքից պատուհաս»-ի հանդեպ դեկաբրիստների վերաբերմունքի մասին⁷¹: 1887թ. **Ս.Վ. Մաքսիմովը** հրապարակում է «Печорский князь» («Պեչորյան իշխան» – Վ.Ս) գործը, որում իշխան Պալավանդովի հետ զրույցի ժամանակ հիշատակվում է նաև Ա. Գրիբոյեդովը, նրա մտերմությունը դեկաբրիստների հետ և ձերբակալությունը⁷²:

Ե.Պ. Սոկոլնիհան 1889թ. հրապարակում է Դ.Ն. Բեգիչևի մասին հուշերը⁷³, որոնցում անդրադարձ կա նաև Ա. Գրիբոյեդովին:

Նույն՝ 1889թ., հրապարակվում է **Վ.Ե. Յակուշկինի** հոդվածը, որում լույս են տեսնում Ա.Ա. Բեստուժնին և Վ.Կ. Կյուխելբեկերին ուղղված Ա. Գրիբոյեդովի նամակները⁷⁴: Դեկաբրիստ Վ.Դ. Վոլխովսկուն ուղղված Ա. Գրիբոյեդովի մեկ այլ նամակ հրապարակվում է 1891թ.⁷⁵:

70 Մենք օգտվել ենք նույն գրքի 1930թ. հրատարակությունից, Իրեչ Н.И., "Записки о моей жизни", "ACADEMIA", М.-Л., МСМXXX (1930 – Վ. Ս., 896 էջ):

71 Гангбелов А.С., "Как я попал в декабристы и что затем последовало", "Русский архив", Изд-ий Петром Барте-нивым в университетской тип-ии (М. Катков), Москва, 1886, №6, с. 249.

72 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 25:

73 Соколина Е., "Воспоминание о Д.Н. Бегичеве", "Исторический вестник", Изд-во А.С. Суворина, С.Петербург, 1889, №3, с. 661-673.

74 Якушкин В.Е., "К литературной и общественной истории 1820-1830гг.", "Русская старина", СПб, 1889, №2, с. 319-325.

75 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 25:

Օգտվելով Արտաքին գործերի նախարարության արխիվներից՝ **Ս. Բելոկուրովը** 1895թ. առաջին անգամ հրապարակում է Ա. Գրիբոյեդովի՝ Մոսկվայի համալսարանի ավարտական վկայականը (լատիներեն), զինվորական ծառայությունը թողնելուց հետո ստացած անձնագիրը, Արտաքին գործերի կոլեգիայում աշխատանքի անցնելու և Շերեմետև-Չավադովսկի մենամարտի մասին մի շարք փաստաթղթեր, ինչպես նաև Կովկասում ծառայության նշանակման, նրա երդման արարողության ու ծառայողական հետագա առաջխաղացման հետ կապված վավերագրեր⁷⁶:

1899թ. «Туманский и Мицкевич» («Թումանսկի և Միցկևիչ» – Վ.Ս.) հոդվածում հրապարակվում է Ա. Գրիբոյեդովի բնութագիրը տվող Ա.Ա. Բեստուժնի նամակը⁷⁷:

1890-ական թթ. շարունակվում է «Խելքից պատուհաս»-ի քաղաքականացման գործընթացը: Հրապարակումների համար հարմար առիթ է հանդիսանում Ա. Գրիբոյեդովի ծննդյան 100-ամյա տարելիցը: Այդ առումով սուվորինյան ուղղության հետևորդների հրապարակումներից կարելի է նշել **Վ.Ֆ. Բոցյանովսկու**⁷⁸ և **Ա.Ա. Անդրենսկու**⁷⁹ հոդվածները: Նշելով, որ «մարդասիրական հայացքներն ու կրթվածությունն Ա. Գրիբոյեդովին մոտեցնում էին դեկաբրիստների խմբակի հետե՛լ՝ Վ. Բոցյանովսկին, ընկնելով հակասության մեջ, գրում է. «Ընդհանուր առմամբ, այնուամենայնիվ, Գրիբոյեդովը բոլորովին էլ մտերիմ հարաբերությունների մեջ չէր դեկաբրիստների խմբակի հետ... հավանաբար ինքը՝ Գրիբոյեդովը, քիչ գիտեր խմբակը»⁸⁰: Վ. Բոցյանովսկին գովաբանում է Ա. Մուվորինի վերլուծությունը:

Ս. Անդրենսկին նույնպես չի զլանում գովաբանել Ա. Մուվորինի հրապարակումը և Ֆ.Ս. Դոստոևսկու նման Չացկուն մեղադրում է ազնվական լինելու մեջ, իսկ Ա. Գրիբոյեդովին համարում է ռուս առաջադեմ մարդ՝ չանդրադառնալով դեկաբրիստների հետ նրա հարաբերություններին:

76 Белокуров С., "Материалы для характеристики русских писателей, художников и общественных деятелей", А.С. Грибоедов (Новые документы к его биографии), "Русское обозрение", "Университетская типография", Москва, 1895, №3, с. 382-393.

77 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 25-26:

78 Бояновский В.Ф., "Александр Сергеевич Грибоедов" (по поводу 100-летия со дня его рождения), "Ежегодник императорских театров", Ред. А.Е. Молчанова, СПб, сезон 1893/94г., прилож. кн. III, с. 3-41.

79 Андреевский С.А., "К столетию Грибоедова", газета "Новое время", Изд-во Суворина А.С., СПб, 1895, 7 марта, № 6833, տես նաև՝ Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 27:

80 Бояновский В.Ф., "Александр Сергеевич Грибоедов", նշվ. պարբ., էջ 29-30:

Առավել հետաքրքիր է **Մ.Օ. Մենշիկովի** հրապարակումը⁸¹: Խորհրդային ուսումնասիրող **Մ. Նեչկինայի** կարծիքով **Մ. Մենշիկովն իր այս հրապարակումով հանդիսանում է «Խելքից պատուհաս»-ը արտապատմական տեսանկյունից մեկնաբանելու պետական-պաշտոնական տեսակետի հիմնադիրը**: Բանն այն է, որ Մ. Մենշիկովը **Չացկուն և Գրիբոյեդովին դիտարկում է այդ ժամանակվա հասարակական-քաղաքական հոսանքներից դուրս**⁸²:

Ուշագրավ են նաև **Վ.Վ. Ռոզանովի** տեսակետները: Նա գտնում է, որ «Խելքից պատուհաս»-ում երկու հակադիր ճամբարների պայքար ընդհանրապես չկա. և՛ Չացկին, և՛ Ֆամուսովը նույն ճամբարից են, և նրանց վեճը մանրուքների շուրջ է, ասենք՝ ինչ ոճով պետք է կահավորել տունը: **Վ. Ռոզանովն առաջիններից է, ով Մոլչալիճին համարում է «քաղնոչինական», իսկ Չացկու ծաղրանքը նրա հանդեպ՝ որպես ազնվականի ծաղրանք**: Ինչ վերաբերում է ղեկաբրիստներին, ապա, ըստ Ռոզանովի, եթե Ա. Գրիբոյեդովն այդ օրերին լիներ Պետերբուրգում, նա չէր հարի ո՛չ ղեկաբրիստներին, ո՛չ էլ նրանց հակառակորդներին. «Նա գրիչը ձեռքին կկազմեր նոր ստեղծագործությունների ծրագրեր»⁸³:

Առաջ անցնելով՝ նշենք, որ խորհրդային հեղինակ Մ. Նեչկինան հետագայում քննադատում է նաև Վ. Ռոզանովի տեսակետները՝ նշելով, որ նա հրաժարվել էր XIX դարի 60-70-ական թվականների հրապարակումների այն ժառանգությունից, որն Ա. Գրիբոյեդովին մերձեցնում էր ղեկաբրիստների հետ: Վերջում, մեկնաբանելով Վ. Ռոզանովի հրապարակումը, ակադեմիկոսը գրում է. «Չի կարելի չնշել, թե Գրիբոյեդովի հանդեպ ինչպիսի ցինիկ անփութությամբ է ստեղծված այս ֆելիետոնը. մեջբերումները բերված են մոտավորապես, հիշողությամբ, իսկ հիշողությունը դավաճանելու դեպքում դրանք անամոթաբար հորինված էին: Ռեակցիան (հետադիմությունը – Վ.Ս.) այսպես էր հաշվեհարդար տեսնում 60-70-ական թվականների առաջադեմ գաղափարախոսության ծիլերի հետ»:

XIX դարի 90-ականների վերջերին լույս տեսած գրականագիտական հրապարակումների թվին կարելի է դասել նաև **Վլ. Կալլաշի** աշխատանքը⁸⁴, որը նման չէ Ա. Մուվորինի տեսակետների դրսևորում-

81 Меньшиков М.О., Критические очерки, Тип-я М. Меркушева, С.Петербург, 1899, ("Оскорблённый гений"), с. 264-292.

82 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, 2շվ. աշխ., էջ 28:

83 Розанов В.В., "Литературные очерки", Сборник статей, Изд-е второе, Тип-я М. Меркушева, С.Петербург, 1902, с. 192-201.

84 Каллаш Вл., "Грибоедов и Чацкий" (к 75-летию смерти Грибоедова), "Русская мысль", Типо-лит Товарищи Кушнерев и К° пммен, Москва, 1904, №1, с. 65-72, 1904, №2, с. 178-191.

ների կարգի հրապարակումներին: Խոսելով ղեկաբրիստների հետ Ա. Գրիբոյեդովի հարաբերությունների մասին՝ Վլ. Կալլաշն արդեն չի կասկածում, որ նրանց մեջ սերտ կապ է եղել: Այդուհանդերձ, նա գրում է. «...Բայց նա իր բնույթով չի կարող լինել կուսակցության մարդ և միշտ մնում է ինքնուրույն, բարդապես անկախ... նա համակրում է ղեկաբրիստների գաղափարներին և (միևնույն ժամանակ – Վ.Ս.) գիտակցում դրանց ժամանակավրեպությունն ու անիրականանալիությունը»⁸⁵: Իր տեսակետն ապացուցելու համար Վլ. Կալլաշը մեջ է բերում խոովարար «հարյուր պրապորշիկներին, Ռեպետիլովի օրինակները և 1825թ. դեկտեմբերի 14-ից հետո Ա.Բ. Օդոևսկուն գրած նամակը: Ինչ վերաբերում է Չացկու կերպարին, ապա Վլ. Կալլաշը գտնում է, որ այն ընդհանուր գծեր ուներ Ա. Գրիբոյեդովի հետ, իսկ Չացկու արտահայտած գաղափարները հեռու են ժամանակի իրականությունից: «Գրքերում կարդացած նրա գաղափարները, - գրում է Վլ. Կալլաշը, - չափազանց հեռու են իրականությունից. դրանք ո՛չ կարող են փոխել այն, ո՛չ էլ հարմարվել նրան, և հենց դրան էլ հանգում է չացկիների վիճակի գլխավոր դրամատիզմը»:

Վլ. Կալլաշի կարծիքով, ղեկաբրիստների հետ համեմատած, Չացկու գաղափարները պարզունակ են: Դրա պատճառը, ըստ նրա, գրաքննությունն էր, որը թույլ չէր տալիս խորիմաստ մտքեր արտահայտել, իսկ Չացկու կերպարի վերլուծաբանները, ըստ Վլ. Կալլաշի, «պետք է վերցնեն այն, ինչ ստեղծել է հեղինակը, բայց ոչ թե այն, ինչ կարող էր ստեղծել»: Ավարտելով Չացկու կերպարի վերլուծությունը՝ **Վլ. Կալլաշը հանգում է այն եզրակացության, որ Չացկին «ավելորդ մարդկանց» նախատիպն է**⁸⁶: Չացկուն տված այսպիսի բնորոշումը նորություն չէր գրաքննադատության մեջ: Առավել հետաքրքիր են «Գրիբոյեդով-ղեկաբրիստներ» փոխհարաբերություններին տված Վլ. Կալլաշի գրնահատականները. **ըստ էության՝ նա մերժում է Ա. Գրիբոյեդովին կուսակցականացնելու գաղափարները՝ նրան վեր դասելով մեղ խմբակային շահերից**:

Ա. Գրիբոյեդովի ծննդյան 100-ամյակի առիթով հրապարակումներ են լինում նաև Ա. Մուվորինի տեսակետները չընդունողների ճամբարից: Դրանցից մեկը **Ա. Սկաբիչևսկու** գրքույկն է⁸⁷, մյուսը՝ **Բ. Իվա-**

85 Каллаш Вл., "Грибоедов и Чацкий" (к 75-летию смерти Грибоедова), "Русская мысль", Типо-лит Товарищи Кушнерев и К° пммен, Москва, 1904, №1, с. 65-72, 1904, №2, էջ 72:

86 Նույն տեղում՝ էջ 190-191:

87 Скабичевский А.М., А.С. Грибоедов. Его жизнь и деятельность, Биограф. очерк, Тип-я Высочайшее утвержд-ое "Тов-во Общественная польза", С.Петербург, 1893, 234 с.

նույի հողվածը⁸⁸, որում չի նշվում ղեկաբրիստների անունը, սակայն անընդհատ խոսվում է այդ ժամանակի առաջադեմ մարդկանց մասին, ինչից կարելի է հասկանալ, որ խոսքը նաև ղեկաբրիստների մասին է: Ի. Բվանովը հիշատակում է նաև Ա. Գրիբոյեդովին տված Ա.Ա. Բեստուժնի գնահատականը: Անդրադառնալով Ա. Գրիբոյեդովի և Չացկու նույնությանը՝ նա գտնում է. «Չացկին և Գրիբոյեդովը հոգով հարազատ եղբայրներ են»⁸⁹: Չարգացնելով այդ միտքը՝ հեղինակը գտնում է, որ Ա. Գրիբոյեդովն իր հերոսին օժտել է այնպիսի հատկանիշներով, որոնք ինքը չուներ և դրա ապացույցն է համարում Չացկու հանդուգն պահվածքը պիեսի ողջ ընթացքում: Ըստ նրա՝ Ա. Գրիբոյեդովն իրեն այդպես չէր պահի հասարակության մեջ, իսկ Չացկու պահվածքը գալիս է ծավալվող գործողությունների հանգամանքներից: Նա գրում է. «Ըստ էության՝ Չացկու աշխարհայացքն ու բնավորությունը պատկանում են իրեն՝ հեղինակին, բայց մուտք գործած հանգամանքների ազդեցության տակ դրանք «խստության» և «հանդգնության» հզոր խթան են ստանում»⁹⁰:

XIX դարի 90-ական թթ. վերջին և XX դարի սկզբին «Գրիբոյեդով-ղեկաբրիստներ» հարաբերությունների լուսաբանման գործում կատարվում է որոշակի առաջընթաց: Հրապարակվում են իրենցում գիտահետազոտական տարրեր պարունակող աշխատանքներ: **Եթե մինչ այդ հանդիպելս պատմագիտական նշանակություն ունեցող աշխատանքներն ընդհանուր կենսագրական բնույթի էին, որոնցում ժամանակ առ ժամանակ տեղ էին գտնում նոր աղբյուրների հրապարակումներ, ապա այժմ ընդհանուր թեմայից սկսում են անջատվել առանձին թեմաներ**, և հեղինակները նոր աղբյուրներ հրապարակելիս փորձում են տեղավորվել կոնկրետ տվյալ նեղ թեմայի շրջանակներում: Նրանք այլևս չեն ներկայացնում Ա. Գրիբոյեդովի ողջ կյանքն ու գործունեությունը: Այսպիսի նյութերից կարելի է համարել **Ե.Գ. Վեյդենբաումի** աշխատանքը⁹¹:

Օգտվելով Կովկասի քաղաքացիական կառավարչության արխիվներից Ե. Վեյդենբաումը “Кавказ” թերթում առաջին անգամ հրապարակում է Ա. Գրիբոյեդովի ձերբակալության, նրա ուղերթի խուզարկությո-

88 Иванов Ив., “Годовщина великого автора и великого произведения”, “Мир Божий”, Изд-во М. Куперина-Давыдова, СПб, 1894, № XII, с. 11-46.

89 Նույն տեղում՝ էջ 31:

90 Նույն տեղում՝ էջ 33:

91 Вейденбаум Е.Г., “Арест Грибоедова”, в книге “Вейденбаум Е.Г., Кавказские этюды”, Изд-во Центральной книжной торговли в Тифлисе, Тифлис, 1901г., с. 261-267.

յան և Սանկտ Պետերբուրգ ուղարկելու վերաբերյալ փաստաթղթերը: Նա հատկապես մանրամասնում է գրողի փաստաթղթերի ոչնչացման դրվագը: Ինչ վերաբերում է **գաղտնի կազմակերպություններին Ա. Գրիբոյեդովի անդամակցությանը, ապա այս հարցին նա տալիս է բացասական պատասխան**: Ե. Վեյդենբաումի աշխատանքը, ճիշտ է, չի ներառում «Գրիբոյեդով-ղեկաբրիստներ» թեմային վերաբերող բոլոր հարցերը և ներկայացնում է ընդամենը մեկ դրվագ, բայց նայնպես կարևոր է այդ թեմայի ընդհանուր ուսումնասիրության համար:

«Գրիբոյեդով-ղեկաբրիստներ» հարցի մեկ այլ դրվագի է վերաբերում **Ա.Վ. Բեզռոդնո (Ն.Վ. Շարոմիաով)** հոդվածը⁹²: Հրապարակման հիմքում ընկած է արդեն կալանավայրից Վ. Կյուխելբեկերի գրած նամակն Ա. Գրիբոյեդովին, որն անհաջող կերպով նա փորձել էր փոխանցել ուն **Ս.Ս. Օրդենսկու** միջոցով: Փաստաթղթի առաջին հրապարակման մեջ հեղինակն այն ուղեկցում է փոքր մեկնաբանություններով: Նյութը լույս է սփռում «Գրիբոյեդով-ղեկաբրիստներ» հարաբերությունների ևս մեկ դրվագի վրա. նամակը փաստում է Վ. Կյուխելբեկերի և Ա. Գրիբոյեդովի մտերմության մասին: Վ. Կյուխելբեկերը գրում է. «Ես երկար տատանվում էի՝ գրե՞լ արդյոք քեզ: Բայց կարող է պատահել, որ կյանքում ինձ համար այլևս առիթ չլինի տեղեկացնել քեզ, որ ես դեռ չեմ մահացել, որ առաջվա նման սիրում եմ քեզ, և արդյո՞ք դու չես եղել իմ լավագույն ընկերը...»⁹³:

XX դարի սկզբի պատմագիտական հրապարակումների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում **Պ.Ե. Շչեգոլևի** աշխատությունը, որում հեղինակն **առաջին անգամ հրապարակում է ղեկաբրիստների գործով Ա. Գրիբոյեդովի ձերբակալության հետաքննչական գործը**: Հետազայում՝ 1905թ., Պ. Շչեգոլևն արդեն լրացումներով վերահրատարակում է իր աշխատությունը⁹⁴՝ որպես հավելված կցելով նաև **Ա. Գրիբոյեդովի քրեական գործի պատճեն (Ֆաբսիմիլը)**: Դրանում Պ. Շչեգոլևը սահմանափակվում է միայն Ա. Գրիբոյեդովի քննչական գործի շրջանակներով: Առաջ անցնելով՝ նշենք, որ 1926թ. Պ. Շչեգոլևը տպագրում է մեկ այլ աշխատություն ևս, որում հավաքված են ղեկաբրիստական շարժման մասին իր բոլոր ուսումնասիրությունները: **Այս աշխատությո-**

92 Безродный А.В., “В.К. Кюхельбекер и А.С. Грибоедов”, “Исторический вестник”, Тип-я А.С. Суверина, С.Петербург, 1902, V, с. 596-600.

93 Նույն տեղում՝ էջ 599:

94 Шеголев П.Е., “Грибоедов и декабристы”, по архивным материалам, с приложением факсимиле дела о Грибоедове, хранящегося в Государственном архиве, Изд-е А.С. Суворина, С.Петербург, 1905, 91 с.

յան կարևորությունն այն է, որ հետագայում Ա. Գրիբոյեդովի ձեռքակալությանն անդրադարձող հեղինակները հիմնականում օգտվել են դրանից⁹⁵:

XX դարասկզբին շարունակվում են քննարկվող հարցին վերաբերող աղբյուրների հրապարակումները: 1904թ. որոշ լրացումներից հետո հրապարակվում են **Գ.Ի. Զավալիշինի հուշերը**⁹⁶: 1909թ. **Ն.Վ. Շալոմիտովը (Ա.Վ. Բեզռոդինն)** հրապարակում է մի հոդված⁹⁷, որում, ի թիվս այլ նյութերի, առաջին անգամ ներկայացնում է Ա. Գրիբոյեդովի՝ դեկաբրիստներին հարել-չհարելու շուրջ Գ.Ա. Սմիռնովի գրույցն Ա. Ժանգրիի հետ:

XX դարի երկրորդ տասնամյակում հրապարակվում են Ա.Ա. Դոբրինսկուն, Ա.Վ. Վսեվոլոժսկուն, Յու.Ն. Տոլստոյին և այլոց ուղղված Ա. Գրիբոյեդովի նամակները, որոնցում հիշատակված են նաև ապագա դեկաբրիստների անուններ⁹⁸:

XX դարի սկզբին հանդես է գալիս հետազոտող **Ն.Կ. Պիկսանովը, ով գրականագիտության մեջ հիմք է դնում, այսպես կոչված, «գրիբոյեդովագիտությանը»**: Նրա հետազոտությունների հիման վրա են ձևավորվում Ա. Գրիբոյեդովի կյանքին ու ստեղծագործական գործունեությանը նվիրված այն թեմաներն ու հիմնահարցերը, որոնք **նախանշում են ապագա հետազոտությունների և գիտական բանավեճերի թեմաներն ու ուղղվածությունը**:

Ա. Գրիբոյեդովի և Ա. Բեստուժևի մասին Ն. Պիկսանովի աշխատանքը (1906թ.) մինչ այդ եղած հրապարակումներից տարբերվում է նրանով, որ **առավել լուրջ գիտական հետազոտություն է**: Հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրում և համեմատություններ է անում Ա. Գրիբոյեդովի և Ա.Ա. Բեստուժևի աշխարհայացքների միջև՝ նշելով ընդհանրություններն ու տարբերությունները: Սա դժվար գործ էր, քանի որ Ա.Ա. Բեստուժևին վերաբերող շատ փաստաթղթեր դեռևս չէին շրջանառվում: Նախկին հրապարակումներից Ն. Պիկսանովի այս գործը, նաև ըստ Մ. Նեչկինայի, տարբերվում է նաև նրանով, որ չի հիմնվում առաջին անգամ հրապարակվող մեկ փաստաթղթի վրա, ինչն ակնառու էր Ե.

95 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, с. 634-635:

96 Նույն տեղում էջ 26:

97 Шаломытов Н.В., "К биографии А.С. Грибоедова" (Из неизданных материалов Д.А. Смирнова), "Исторический вестник", Тип-я А. Суверина, С.Петербург, 1909, №3, с. 1031-1035.

98 Грибоедов А.С., Сочинения в двух томах, т. 2, Библ. "Огонёк", Изд-во "Правда", Москва, 1971, с. 265-266, с. 191-192, տես նաև՝ Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, с. 26:

Վեյդենբաումի, Պ. Շչեգոլևի և Ն. Շալոմիտովի հրապարակումների պարագայում⁹⁹: Այստեղ արժե նշել մեկ կարևոր հանգամանք նա. Ն. Պիկսանովի արխիվում պահպանվել է 28 էջից բաղկացած մի ձեռագիր տետր, որը վերնագրված է "Комедия "Горе от ума" и ее историко-литературное значение" («Խելքից պատուհաս» կատակերգությունը և դրա պատմագրականագիտական նշանակությունը» - Վ.Ս.)՝ թվագրված 1895 թվականով¹⁰⁰: Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող Ն. Պիկսանովի հայացքների ձևավորումը սկսվում է XX դարի առաջին քառորդին:

Այդ տարիներին հրապարակված նյութերից հիշատակության է արժանի **Գ.Ն. Օվսյաննիկո-Կուլիկովսկու** խմբագրությամբ 1908թ. լույս տեսած հետազոտությունը¹⁰¹, որում գետեղված են Ն. Պիկսանովի աշխատությունները:

Հետագայում լույս են տեսնում Ն. Պիկսանովի մյուս աշխատությունները¹⁰²: Այս գործերում, վերլուծելով Ա. Գրիբոյեդովի գրական գործունեությունն ու հայացքները, Ն. Պիկսանովը կատարում է մի շարք հետևություններ, որոնք ցայսօր չեն կորցրել արդիականությունը և որպես գիտական վարկածներ՝ շարունակում են մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Վերլուծելով Ա. Գրիբոյեդովի գրական ժառանգությունը՝ **Ն. Պիկսանովը հանգում է այն եզրակացության, որ Ա. Գրիբոյեդովը միայն թատերագիր է և ստեղծել է գրական լուրջ արժեք ներկայացնող մեկ գործ: Նա գրում է. «Եվ այսպես, Գրիբոյեդովի ժառանգությունում չկա ոչ էպոս, ոչ լիրիկա: Նա ծնվել էր որպես թատերագիր և միայն թատերագիր: Մակայն չի կարելի խոսել Գրիբոյեդովի «թատրոնի» մասին, ինչպես խոսում են Շեքսպիրի կամ Մոլիերի թատրոնների մասին: Նրա փառքը դարերով կապված է միայն մեկ ստեղծագործության հետ... Իր ստեղծագործական գործունեության բոլոր լավագույն երազանքները, բոլոր խիզախ ձգտումները**

99 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, с. 26, էջ 32:

100 Краснов П.С., "Из неопубликованного наследия Пиксанова Н.К.", в книге "А.С. Грибоедов, Творчество, Биография, Традиции", Ред. С.А. Фомичев, Изд-во "Наука" АН СССР, Ленинград, 1977, с. 263.

101 Пиксанов Н.К., "А.С. Грибоедов", в книге "История русской литературы. XIX век", под ред. Д.Н. Овсяннико-Куликовского, Изд-ое Товарищество "Мир", Москва, 1908, т. I, с. 195-222, տես նաև՝ Пиксанов Н., "К характеристике Грибоедова. Поэт и ссыльные декабристы", газ. "Русские ведомости", Тип-я "Русских ведомостей" Б. Никитинская, Москва, 1911, 15-ое ноября.

102 Пиксанов Н., "Душевная драма Грибоедова", "Современник", Тип-я "Улей", СПб, 1912, кн. XI, с. 224-243, նույնի՝ "Горе от ума" в парадоксах русской критики", газ. "Русские ведомости", Москва, 1913, 8-ое августа, տես նաև՝ Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, с. 26, էջ 35:

Գրիբոյեդովը ներդրել է «Խելքից պատուհաս»-ում և հետո որևէ արժեքավոր (էլ չեմ խոսում՝ արդեն փառարանված կատակերգությանը համարժեք) ոչինչ չի ստեղծել: Ա.Ս. Գրիբոյեդովը եղել է գրական միամիտք (едуходум)՝ *homo unius libri*¹⁰³: Ն. Պիկսանովն այս ամենի պատճառ է համարում Ա. Գրիբոյեդովի՝ ընդհուպ գիտնականի մակարդակի բազմակողմանի զարգացած լինելը: Այս հանգամանքն է, ըստ նրա, որ հակասության մեջ է մտել ազատ ստեղծագործողի տաղանդի հետ և թույլ չի տվել ստեղծել առավել արժեքավոր գործեր: Նա գրում է. «Այսպիսով, տեսականորեն էլ Գրիբոյեդովը գրական բազմագիտական պաշտպան էր և իր ստեղծագործություններում ի հայտ էր բերում պոետ-բազմագիտակի հատկանիշներ: Դժվար է մինչև վերջ բացատրել գրողի անհատականության առանձնահատկությունը: Էլ ավելի դժվար է նրանով, որ նրա մեջ այն հանդես էր գալիս ազատ ստեղծագործության հիանալի պոռթկումներով... (Նա – Վ.Ս.) կապկպված հանճար էր. միաժամանակ և՛ Մոցարտ, և՛ Սալլերի: Նա պետք է, որ ուժգին տառապեր այդ երկատվածությունից: Այն ծանրացնում էր Գրիբոյեդովի արվեստը: Պոետը չստեղծեց և չէր էլ կարող ստեղծել նոր և խոշոր գեղարվեստական ստեղծագործություն»¹⁰⁴:

Ինչ վերաբերում է «Գրիբոյեդով-դեկլարիստներ» փոխհարաբերություններին, նշենք, որ հենց այս տարիներին էլ Ն. Պիկսանովի մոտ սկսում է ձևավորվել այն համոզմունքը, որ Ա. Գրիբոյեդովը դեկլարիստ չէր և նույնիսկ չէր էլ հարում նրանց, քանի որ 1818-1823թթ. գտնվում էր Կովկասում և չէր կարող մասնակից լինել դեկլարիստական շարժման ձևավորմանը, իսկ 1823-1824թթ., ավարտելով «Խելքից պատուհաս»-ը, գտնվում էր հոգեկան ճգնաժամի մեջ և տառապում էր հոռետեսությամբ ու թերահավատությամբ: Պնդելով իր տեսակետը՝ Ն. Պիկսանովը հերքում է այն հեղինակների արտահայտած կարծիքը, թե Ա. Գրիբոյեդովի մոտ հոգեկան ճգնաժամը սկսվել է 1825թ. դեկտեմբերի 14-ի ելույթի անհաջողության պատճառով: Ըստ Պիկսանովի՝ Ա. Գրիբոյեդովի ապրած հիասթափությունն ավելի ուժեղ կլիներ, եթե դրան նախորդեին հավատն ու խանդավառությունը: «Այդպես էլ եղավ,- գրում է նա,- օրինակ, դեկարիզմին հավատացող և 1826թ. նրա կործանումը զգացած մարդկանց հետ: Սակայն Ա. Գրիբոյեդովը չէր պատկանում քաղաքական խանդավառների թվին: Ընդհակառակը: Հոգեկան դժվարությունները (նրա

մոտ – Վ.Ս.) առաջացան դեկտեմբերի 14-ից առաջ և քաղաքական ոգևորությունների և հույսերի հանդեպ Գրիբոյեդովին խուլ դարձրին»¹⁰⁵:

«Խելքից պատուհաս»-ի գնահատականների պիկսանովյան ձևակերպումը մեծ ազդեցություն է թողնում հետագա ուսումնասիրողների աշխատանքների վրա: Նա կատակերգությունն անվանում է «ազնվականական պիես», իսկ Չացկու բողոքն ուղղված է համարում ոչ թե ճորտատիրական կարգերի, այլ դրանցում տեղ գտած չարաշահումների դեմ:

1826թ. Պարսկաստան ուղարկված Ա. Մենշիկովի դեսպանության կազմում ընդգրկված գնդապետ **Օ. Բարտոլոմեյը** հետագայում հրքայարակված իր օրագրում¹⁰⁶, **բացի Ա. Երմոլովից, նշում է նաև դեկարիստների հետ կապերի մեջ կասկածվող Ա. Գրիբոյեդովի մասին տեղեկություններ հավաքելու վերաբերյալ կայսեր գաղտնի հրահանգի մասին:**

Այսքանով կարելի է ավարտել Ա. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական հայացքներին ու գործունեությանը վերաբերող պատմագիտական և գրականագիտական նյութերի հրապարակման **առաջին փուլի երկրորդ ենթափուլը:**

Ընդհանրացնելով այն՝ նշենք, որ XIX դարի 80-ական թվականներից մինչև XX դարի երկրորդ տասնամյակը լուրջ առաջընթաց է կատարվում հատկապես գիտական հրապարակումների գործում: Գրեթե ավարտվում է մեզ հետաքրքրող հարցի շուրջ աղբյուրների հրապարակումը, սակայն այս ամենի հետ մեկտեղ ի հայտ են գալիս նաև բացասական միտումներ. կատարվում են Ա. Գրիբոյեդովի կյանքի, ստեղծագործությունների և նախագծերի քաղաքականացման փորձեր, ինչը չէր կարող չանդրադառնալ Ա. Գրիբոյեդովի գործունեության շուրջ խորհրդային տարիներին վերջնականապես ձևավորված տեսակետների վրա: Ռուսաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Նախկին կայսրության ծայրամասերում ապրող ազգային փոքրամասնությունները, սկզբում անջատվելով, ստեղծում են անկախ պետություններ, այնուհետև, «միավորվելով» Ռուսաստանի հետ, ստեղծում են Խորհրդային Միությունը: Այսպիսի մեծամասշտաբ

103 Пиксанов Н., "Душевная драма Грибоедова", 1912, кн. XI, №24, 224, էջ 228:

104 Նույն տեղում՝ էջ 231:

105 Пиксанов Н., "Душевная драма Грибоедова", 1912, кн. XI, №24, 224, էջ 235 («դեկարիզմ» տերմինը Ն. Պիկսանովին է):

106 Бартоломей О.О., "Секретная инструкция, данная Императоромъ Николаемъ I относительно Грибоедова и допесение полковника Бартоломей", "Русская старина", СПб, 1910, май, с. 423-434.

իրադարձություններն ուղեկցվում էին գաղափարախոսական լուրջ փոփոխություններով, որոնք առնչվում էին կյանքի բոլոր, այդ թվում նաև գիտության և արվեստի բնագավառներին:

Գասակարգային պայքարի դիրքերից հանդես եկող խորհրդային գաղափարախոսության մեջ արվեստն ու գիտությունը ևս պետք է լինեին դասակարգային, իսկ արվեստագետներն ու գիտնականները՝ դասակարգային պայքարի առաջամարտիկներ: Ռուս գրականության դասականները, այդ թվում նաև Ա. Գրիբոյեդովը, ժամանակի ընթացքում ներկայացվում են հենց այդ տեսանկյունից. **նրանք հերոսացվում ու բացարձականացվում են հեղափոխականների և խորհրդային երկրի առաջնորդների նման:** Այս ընթացքում՝ հատկապես 1920-ական թթ., տեղ են գտնում նաև **ծայրահեղ դրսևորումներ, ինչպես, օրինակ, գռեհիկ (վուզգար) սոցիոլոգիան,** որն իր դրսևորումներն է գտնում նաև Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության հետ կապված հարցերում:

Արժե ներկայացնել Ն. Պիկսանովի մեկ աշխատանք ևս¹⁰⁷, որում տեղ գտած տեսակետները նրա վերանշյալ որոշ տեսակետների հետ միասին օգտագործվում են գռեհիկ սոցիոլոգների կողմից, ինչն էլ իր հերթին, խորհրդային որոշ հեղինակների (հատկապես **Մ. Նեչկինային**) **թույլ է տալիս Ն. Պիկսանովին մեղադրել գռեհիկ սոցիոլոգիային տուրք տալու մեջ:** Դեռևս 1914թ. **Մ.Օ. Գերշենզոնն** իր աշխատության¹⁰⁸ մեջ, ներկայացնելով Ռիմսկի-Կորսակովների, հատկապես՝ **Մարիա Իվանովնա Ռիմսկի-Կորսակովայի** նամակագրությունը, պատկերել էր Ա. Գրիբոյեդովի ժամանակաշրջանի մոսկովյան ազնվականության կենցաղը: Հարկ է փաստել, որ նրա ներկայացրած մոսկովյան ազնվականությունը զգալիորեն տարբերվում է Ա. Գրիբոյեդովի պատկերած ազնվականությունից:

Մ. Գերշենզոնի պատկերացմամբ նրանք հաճելի, իրենց հոգսերով ապրող, ընտանիքին նվիրված մարդիկ էին (հատկապես Մարիա Իվանովնան): Մ. Գերշենզոնը ներկայացնում է մոսկովյան ազնվականության ձևաչափն ու կյանքը: Եվ ահա Ն. Պիկսանովն իր գրքում, կարծես շարունակում է Մ. Գերշենզոնի գործը. ձեռքի տակ ունենալով Գրիբոյեդովների ընտանիքի հեռավոր ազգական **Վ.Բ. Լիկոշինի** և նրա քույր **Ա.Բ. Կոլեչիցկայայի** ձեռագիր հուշերը, ինչպես նաև Գրիբոյեդովների

107 Пиксанов Н.К., "Грибоедов и старое барство", По неизданным материалам, Кооп. изд.-во писателей "Никитинские субботники", Москва, 1926, с. 1-77.

108 Гершензон М.О., "Грибоедовская Москва", Изд.-во М. и С. Сабашниковых, М., 1914, с. 1-120.

Խմելիտայի կալվածքի արխիվի նյութերը՝ ներկայացնում է մոսկովյան ազնվականության ամառային, այսպես կոչված, կալվածքային կյանքը: Քանի որ Լիկոշիններն ու Ա. Գրիբոյեդովը մանկուց մտերիմ են եղել և ստացել են նույն դաստիարակությունը, նույնիսկ Մոսկվայի համալսարանում ծանոթ են եղել ապագա շատ դեկաբրիստների հետ, հետևաբար, ըստ Ն. Պիկսանովի, նրանց մեջ գաղափարական մեծ տարբերություն չէր կարող լինել: Ե՛վ Ա. Գրիբոյեդովը, և՛ Լիկոշիններն ազնվականներ էին: Տարբերությունն այն էր, որ Լիկոշինները մեծահարուստ ու հին տոհմ էին, իսկ Գրիբոյեդովները՝ ոչ այնքան ունևոր ընտանիք և պայքարում էին իրենց դիրքն ամրապնդելու համար: Ն. Պիկսանովի կարծիքով այս ամենը վերաբերում է նաև «Խելքից պատուհաս»-ին ու Չացկուն: Նա գրում է. «*«Խելքից պատուհաս»-ը կալվածատիրական պիես է, ռուսական ողջ խաղացանկի ամենակալվածատիրական պիեսը... Չացկին նույնպես ազնվական է, բայց այլ խառնվածքի, այլ մակարդակի, այլ ազնվական խմբի»*¹⁰⁹:

Ն. Պիկսանովի այս տեսակետը, ինչպես արդեն նշեցինք, օգտագործվում է գռեհիկ սոցիոլոգների կողմից: Այդ աշխատանքներից է **Վ. Վագրիսովի** հոդվածը¹¹⁰, որի վերաբերյալ ակադեմիկոս Մ. Նեչկինան նշում է. «*...Լույս աշխարհ եկավ գռեհիկ սոցիոլոգիայի մեթոդի ճնշողներից ամենաանճոռնին...*»¹¹¹:

Ըստ Վ. Վագրիսովի՝ Չացկին ազնվական է, իսկ նրան հակադրվում է նոր զարգացող բյուրոկրատիան՝ հանձինս Ֆամուսովի, Մուլչայիևի, Սկալոզուբի և այլոց: Վ. Վագրիսովի կարծիքով զարգացող առևտրաարդյունաբերական կապիտալիզմի պայմաններում վերջիններս ավելի առաջադիմական էին, **քան ազնվական Չացկին:** Վ. Վագրիսովը ոչ մի խոսքով **չի հիշատակում դեկաբրիստների մասին:** Մ. Նեչկինան Վ. Վագրիսովի այսպիսի տեսակետը համարում է արհեստածին, որը ոչ մի լուրջ հիմնավորում չունի¹¹²:

Ամփոփելով գռեհիկ սոցիոլոգիայի թեման՝ նշենք, որ այն որպես ուղղություն վերջնականապես հաստատվում է 1920-ական թվականներին և գիտական առումով ոչ մի նոր գաղափար չէր պարունակում: Մ. Նեչկինան

109 Пиксанов Н.К., "Грибоедов и старое барство", նշվ. աշխ., էջ 70-71:

110 Вагрисов В., Социальный генезис образа Чацкого, в кн. "Родной язык в школе", Научно-педагогические сборники, Под ред. А.М. Лебедева, П.И. Майкура, В.Ф. Переверзева, Изд.-во "Работник просвещения", Москва, 1927, кн. IV, с. 25-33, տես նաև Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 38:

111 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 38:

112 Նույն տեղում՝ էջ 38-39:

այս առումով գրում է. «Այն (գռեհիկ սոցիոլոգիան – Վ.Ս.) ամբողջովին անակգրունը համատեղում էր. Չացկու ազնվական և կալվածատեր լինելու հանգամանքը փոխ էր առնված Դոստոևսկուց, Չացկուն «դեմոկրատիկ» հարևու համար հանդիմանելը՝ 1890-ականների “Новое время”-ական ֆելիետոնիստ Անդրեևսկուց, Չացկու ծրագրի վերլուծությունը կառուցված էր Գոնչարովի տեքստի միտումնավոր ադապտացիայի վրա, Մոլչալինին, ըստ Ռոզանովի, դարձրին ազնվական Չացկու կողմից ներդրվող ռազմաֆիլիանական, «ավելորդ մարդու» գաղափարը վերցրին Գերցենից՝ չբացելով գերցենյան հասկացությունը, իսկ դեկաբրիստների մասին պատկերացումներն առաջին փուլում փոխ առան Ա.Ն. Պիպինից, իսկ հետո հեշտությամբ փոխեցին Մ.Ն. Պոկրովսկու և նույնիսկ Մ.Ս. Օլմինսկու հասկացություններով»¹¹³:

Այս ամենի հետ մեկտեղ գռեհիկ սոցիոլոգների հրապարակումները կրում էին ժամանակի գաղափարախոսության ազդեցությունները: Օրինակ, **Պ. Լեպեշինսկին** հասնում է նրան, որ գուգահեռներ է անցկացնում և ընդհանրություններ գտնում Մոլչալինի կերպարի և մենշևիկների ու Երկրորդ ինտերնացիոնալի անդամների միջև: Պ. Լեպեշինսկին գրում է. «Փորձեր միացնել մանր բուրժուայի մարքսիստորեն զարգացած միտքը գրիբոյեդովյան Մոլչալինի անմահ ոգու հետ, և դուք կստանաք հենց այն բանի էությունը, որը կոչվում է Երկրորդ Ինտերնացիոնալ»¹¹⁴:

Բացի գռեհիկ սոցիոլոգիայի տեսակետներից՝ մեր կողմից քննարկվող հարցերի շուրջ 1920-ական թթ. ի հայտ են գալիս նաև այլ տեսակետներ: Այս առումով ուշագրավ է **Ա.Վ. Լունաչարսկու** տեսակետը: Ժամանակի ոգով գրված հրապարակման մեջ նա, այնուամենայնիվ, Ա. Գրիբոյեդովին համարում է կալվածատեր, որը պատկանում է նրանց աղքատացած և կիսով չափ ապադասակարգայնացած առաջադեմ խավին: Ինչ վերաբերում է Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքին, ապա Ա. Լունաչարսկին **նրան դատում է սլավոնաֆիլների հանդեպ համակրություն ունեցող եվրոպամետների թվին** և դեկաբրիստների հետ նրա հարաբերությունների հարցի շուրջ գրում է. «Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական իդեալները հետո են բոլորովին պարզ լինելուց: Այնուամենայնիվ, մենք վստահաբար կարող ենք ասել, որ եթե նա երբևէ ուղղակի չի հարել դեկաբրիստներին և նույնիսկ հեզմանքով էր վերաբերվում նրանց խոսակցություններին ու խոսվություններին, նրանցից ոչ մի լավ բան չէր

113 Нечкина М., Трибодов и декабристы, 1977, кн. 2, с. 44:

114 Лепешинский П., “Молния гнева”, По поводу столетия со дня смерти Трибодова, газ. “Очерк”, “Огонёк”, Москва, 1929, №6 (306), 10 февраля.

սպասում, բայց նայնպես նրա ու դեկաբրիստների միջև կապ ու համակրանք անկասկած կային»¹¹⁵:

Ա. Լունաչարսկու այս տեսակետները կարելի է համարել որպես ժամանակի պաշտոնական մոտեցում:

XX դարի 20-ականների վերջին և 30-ականների սկզբին գիտական գործունեությունն է շարունակում **Ն. Պիկսանովը**: Այս տարիներին լույս են տեսնում նրա երկու աշխատությունները¹¹⁶, որոնցում ամփոփված էին մինչ այդ տարբեր աշխատություններում տեղ գտած նրա հետազոտությունների արդյունքները:

Ամփոփելով քննարկվող հարցերի վերաբերյալ Ն. Պիկսանովի մոտեցումները՝ նշենք, որ **նա որպես հետազոտող ձևավորվել է մարքս-լենինյան գաղափարախոսության հաստատումից առաջ: Այդ իսկ պատճառով էլ նրա գիտական ժառանգությունն առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար**: Հանուն արդարության պետք է նշել, որ Ն. Պիկսանովի դատողություններում ևս քաղաքական դրսևորումներ կան: Այսպես, պաշտպանելով Ֆ. Դոստոևսկու արտահայտած տեսակետը, թե Չացկին ազնվական էր, Ն. Պիկսանովը դրան ավելացնում է նաև Ա. Գրիբոյեդովի կալվածատեր և ազնվական լինելու հանգամանքը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Սա նշանակում է, որ Ֆ. Դոստոևսկու և այլոց նման Ն. Պիկսանովը ևս Ա. Գրիբոյեդովին ու նրա հերոսին դիտարկում է իր ժամանակի հասարակական-քաղաքական հոսանքներին համապատասխան: **Հետագայում, ցավոք, Ն. Պիկսանովը մարքս-լենինյան գաղափարախոսության ճնշման տակ զգալիորեն նահանջում է նախկին գիրքերից և արդեն «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարցերում չի պնդում նախկինում արտահայտած իր տեսակետները**¹¹⁷:

1920-ական թթ. լույս տեսած աշխատանքների ցանկում արժե հիշատակել նաև **Յու. Տինյանովի** վեպը¹¹⁸: Չնայած այն գեղարվեստական ստեղծագործություն է, սակայն լայնորեն քննարկվում է **խորհրդային «գրիբոյեդովագիտության»** կողմից: Որպես ճանաչված գրականագետ և գրականության պատմության մասնագետ՝ Յու. Տինյանովը կերտում

115 Луначарский А.В., “А.С. Трибодов”, газета “Красная панорама”, Изд-во “Красная газета”, Ленинград, 1929, №6.

116 Пиксанов Н.К., “Творческая история “Горя от ума””, Госиздат, М.-Л., 1928 (մենք օգտվել ենք այս գրքի երկրորդ՝ 1971թ. հրատարակությունից, Մոսկվա, 400 էջ), նույնի՝ “Трибодов. Исследования и характеристики”, Изд-во Писателей в Ленинграде, Ленинград, 1934, 335 с.

117 Пиксанов Н.К., “Великий русский писатель”, “Правда”, Гос. изд-во “Правда” ЦК КПСС, Москва, 1945, 11 января.

118 Тынников Ю., Смерть Вазир-Мухтара, Госиздат, Изд-е 6-е, Л., 1937, 470 с.

է Ա. Գրիբոյեդովի գեղարվեստական մի կերպար, և նրա աշխատանքը հետազոտողների շրջանում սկսում է դիտարկվել **որպես գիտական հետազոտություն**: Ըստ խորհրդային հեղինակ **Ս.Ա. Ֆոմիչևի**՝ «այդ ստեղծագործությունը հայտարարվեց վեպ-հետազոտություն»¹¹⁹:

Մեր խնդիրը չէ վերլուծել Յու. Տինյանովի կերտած Ա. Գրիբոյեդովի կերպարը. դա զուտ գրականագիտական խնդիր է և իրական Գրիբոյեդովի հետ ընդհանրացնելն անիմաստ է: Մեր նպատակը չէ նաև պարզել, թե տինյանովական Գրիբոյեդովը որքանով է համապատասխանում իր նախատիպին: **Պարզապես պետք է հստակ տարանջատել գեղարվեստական ստեղծագործությունը գիտական հետազոտությունից** և ընդունել, որ գեղարվեստական գրականության մեջ, ի տարբերություն գիտականի, **կարող են լինել իրարից տարբեր Գրիբոյեդովներ**: Հենց այսպես էլ պետք է հասկանալ գիտական գրականության մեջ լայնորեն օգտագործվող **Մ. Գորկու** դիպուկ բնորոշումը՝ տրված Յու. Տինյանովի գրքին: «Գրիբոյեդովը, – գրում է նա, – հրաշալի է, չնայած ես չէի սպասում հանդիպել նրան որպես այդպիսին: Բայց Դուք (Յու. Տինյանովը – Վ.Ս.) ցույց տվեցիք նրան այնքան համոզիչ, որ, հավանաբար, նա այդպիսին էլ եղել է: Իսկ եթե չի եղել, հիմա կլինի»¹²⁰:

1925 թվականից տպագրվող «Восстание декабристов» («Դեկաբրիստների ապստամբությունը» – Վ.Ս.) բազմահատորյակում հրապարակվում են դեկաբրիստների հետաքննչական գործերը, որոնցում նաև Ա. Գրիբոյեդովի մասին առկա են հիշատակություններ¹²¹: Ա. Գրիբոյեդովի մահվան 100-ամյակի առիթով լույս տեսած աշխատություններից արժեքավոր են **Ն. Պիկասնովի**¹²² և **Ջին. Գավիդովի**¹²³ խմբագրությամբ հրապարակված ժողովածուները, որոնցում զետեղված են նրա ժամանակակիցների հուշերն ու այլ աղբյուրներ: 1931թ. առաջին անգամ լույս են տեսնում **Քեստուժնների** հուշերը, որոնցում հիշատակվում է Ա. Գրիբոյեդովը¹²⁴:

119 Фомичев С.А., "Автор "Горя от ума" и читатели комедии" в книге Грибоедов А.С., Творчество. Биография. Традиция. Акад. Наук СССР, Ленинград, 1977, с. 2.

120 Литературное наследство. Горький и советские писатели, Изд-во АН СССР, Москва, 1963, т. 70, с. 458 (Յու. Տինյանովի կերտած «Смерть Вазира Мухтара»-ի հերոս Վազիր Մուվսաթարի և իրական Ա. Գրիբոյեդովի կերպարների վերլուծությունների համեմատությունների մասին մանրամասն տես Ա. Լևրեդի «Грибоедов, факты и гипотезы», Москва, 1980, աշխատության մեջ, էջ 290).

121 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 26-27:

122 А.С. Грибоедов в воспоминаниях современников, Ред-ор Пиксанов Н.К., Изд-во "Федерация", М., 1929, 344 с.

123 А.С. Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников, նշվ. աշխ., 351 էջ:

124 Воспоминания Бестужевых, Ред-я, статьи и комментарии Азадовского М.К., Изд-во АН СССР, М.-Л., 1951, 892 с. (մենք օգտվել ենք այս թվականի վերահրատարակությունից).

XX դարի 30-ական թվականներից սկսում է գերիշխել մարքս-լենինյան պատմագիտական դպրոցը: **Հետազոտողներից շատերի համար առաջին տեղում գաղափարախոսությունն էր, որին պետք էր հարմարեցնել գիտությունը**: Հարկ է նշել այն հանգամանքը, որ մասունականության և դեկաբրիստական շարժման հարաբերությունների հարցերի նկատմամբ գիտական ու հասարակական հետաքրքրությունները զարգացում չեն գտնում նաև խորհրդային պատմագիտության մեջ: Պատմագիտության համար դա ոչ պաշտոնապես համարվել է երկրորդական թեմա ու չի ենթարկվել գիտական լուրջ ուսումնասիրության. հրապարակված նյութերն առնչվում են առանձին թեմաների կամ անձանց: Օտարերկրյա, ռուս և խորհրդային շրջանի հեղինակներից **Վ.Ֆ. Իվանովը, Վ.Ի. Ստարցը, Ն. Յակիմենկոն, Ա. Վիկսբերգը, Լ.Ն. Օհանյանը, Մ.Ա. Օսորգինը, Մ.Գ. Ռաբինովիչը, Է. Հենրին, Յա. Գորդինը** և մյուսները¹²⁵ դարձյալ խորամուխ չեն լինում մասունականություն-դեկաբրիստներ առնչությունների հարցերում:

Այս փուլում Ա. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը հետևողականորեն սկսում են հարմարեցվել ժամանակի ոգուն ու պահանջներին: **XX դարի 30-40-ական թվականները կարելի է համարել գրողի անձի և գործունեության արդեն քաղաքականացված հարցերի գիտական հիմնավորման փուլ. այժմ Ա. Գրիբոյեդովը հռչակվում է որպես ժամանակի իշխող կարգերի զոհ**: **Վ. Օռլովը** գրում է. «Ինչպես հին աշխարհի հրաշալի ռուս մարդկանց բացարձակ մեծամասնությունը, Գրիբոյեդովը ևս զոհն է ռուս ժողովրդի առաջադրած ամենալավը, հրաշալին և առաջադիմականը խեղդող և հաշմանդամ դարձնող միապետաճորտատիրական կարգերի»¹²⁶:

Ա. Գրիբոյեդովին որպես զոհ ներկայացնելը «տրամաբանական» էր, քանի որ այդպիսի զոհեր էին ներկայացվում նաև դեկաբրիստները:

125 Иванов В.Ф., От Петра I до наших дней. Русская интеллигенция и масонство, Харбин, 1934, 614 с.; Осоргин М.А., "Пушкин вольный каменщик". "Последние новости", Париж, 1937, 10 февраля, № 5801; Рабинович М.Д., "Новые данные по истории Оренбургского тайного общества", "Вестник" АН СССР, М., 1958, №7, с. 106-113; Огнян Л.Н., "Один из предполагаемых саратинских Кишиневских декабристов", "Известия" АН СССР, Сер. общественных наук, М., 1979, с. 33-41; Генри Э., Эволюция международного масонства: Новые заметки по истории современности, Наука, М., 1976, с. 290-297; Старцев В.И., Масонство в России. За кулисами видимой власти, "Молодая гвардия", М., 1984, с. 51-140, նույնի "Российские масоны XX века", "Вопросы истории", М., 1989, №6, с. 33-50; Якименко Н., "В лабиринтах масонства", "Литературная газета", Москва, 1984, 4-ое апреля; Висксберг А., "Масон, зять масона", "Литературная газета", Москва, 1990, 26 декабря; Гордун Я.А., "Донос на всю Россию" или "Миф о масонском заговоре", "Звезда", Л., 1990, №5, с. 143-153; №6, с. 119-136.

126 Орлов В.Л., "Заметки о творчестве Грибоедова", "Литературная учёба", Тип-о изд-во "Крестьянская газета", Москва, 1939, №1, с. 13-14.

Նրանց հանդեպ այդպիսի մտեցման հիմքը դրել էր **Վ.Ի. Լենինը**, ինչի ապացույցն է այս թեմային վերաբերող և խորհրդային պատմագիտության մեջ հաճախ մատնանշվող նրա՝ «**Գերցենի հիշատակին**» հոդվածը¹²⁷, որտեղ «պրոլետարիատի առաջնորդը» մեջ է բերում դեկաբրիստներին տված գերցենյան բնութագիրը և համաձայնելով դրա հետ՝ գրում է. «...Դրանք ինչ-որ դյուցազուններ էին, որոնք ոտքից մինչև գլուխ կռած ու կոփված էին զուտ պողպատից, սլրակից-ռազմիկներ, որոնք գիտակցաբար դիմում էին դեպի անհայտ մահ, որպեսզի նոր կյանքի համար արթնացնեն երիտասարդ սերունդը և մարրեն դահճության ու ստորաքարշության միջավայրում ծնված երեխաներին»¹²⁸: Հոդվածի վերջում, տալով Ռուսաստանում հեղափոխական շարժման երեք փուլերի (ազնվականական, ռազմաչինական, պրոլետարական) հայտնի բաժանումը, Վ. Լենինը ներկայացնում է նաև դեկաբրիստներին տրված իր բնորոշումը. «...Սկզբում՝ ազնվականներն ու կալվածատերերը, դեկաբրիստներն ու Գերցենը: Նեղ է այդ հեղափոխական շրջանը: Շատ հեռու են նրանք ժողովրդից: Բայց նրանց գործն ապարդյուն չանցավ»¹²⁹:

Ռուսական իրականության մեջ դեկաբրիստներին վերագրված այսպիսի բնորոշումը նորություն չէր (հիշենք Ֆ.Մ. Դոստոևսկուն). կարևորն այստեղ այն է, որ բացարձականացվում էր երևույթը: Խորհրդային «գրիբոյեդովագիտության» նպատակն է դառնում **Ա. Գրիբոյեդովին ներկայացնել որպես իր ժամանակի հեղափոխական շարժման ներկայացուցիչ և նույնիսկ գաղափարախոս: Դա անելն այնքան էլ դժվար չէր՝ հաշվի առնելով Ա. Գրիբոյեդովի անձնական մտերմիկ կապերը դեկաբրիստներից ոմանց հետ և նրանց գործով ձեռքակալված լինելու հանգամանքը: XX դարի 30-40-ական թվականներին Ա. Գրիբոյեդովի կյանքի ու գործունեության հանդեպ պատմական մոտեցումը վերածվում է պատմաքաղաքականի:** Այսպիսի մտեցման ներկայացուցիչն է **Մ.Վ. Նեչկինան**, որի “Грибоедов и декабристы” («Գրիբոյեդովը և դեկաբրիստները» – Վ.Ս) հիմնարար աշխատությունն առաջին անգամ լույս է տեսնում 1947թ. և հետագայում ունենում ևս երկու հրատարակություններ 1951 և 1977թթ.՝ որոշ լրացումներով և ձևափոխումներով: Հարգարժան ակադեմիկոսը կարծիք է հայտ-

նում, թե **Ա. Գրիբոյեդովը չէր ընդունում դեկաբրիստների որդեգրած զինվորական «հեղափոխության» ճանապարհը, քանի որ նրանում հասարակ ժողովրդի համար տեղ չէր հատկացված, իսկ իր հեղափոխական գաղափարներով նա մեկ քայլ առաջ էր անցել նրանցից (դեկաբրիստներից - Վ.Ս) և մտածում էր հեղափոխական շարժումներում ժողովրդի դերի մասին**¹³⁰: Այս տեսակետը, անշուշտ, հակասում էր **դեկաբրիստներին տված լենինյան վերոհիշյալ բնորոշմանը:** Բանն այն է, որ, ըստ Վ. Լենինի, լինելով դեկաբրիստների ընկերը, համախոհն ու նրանց գաղափարախոսության գեղարվեստական արտացոլողը, որևէ մեկը (տվյալ դեպքում՝ Ա. Գրիբոյեդովը) չէր կարող նրանցից մեկ քայլ առաջ լինել: Դա էլ անմիջապես հիմք է ծառայում **Ն. Գրուծինինի** համար, որ Մ. Նեչկինայի գրքի շուրջ գրած գրախոսականում քննադատի նրան: Նա գրում է. «Եթե Գրիբոյեդովը հանդիսանում էր դեկաբրիստական սերնդի ներկայացուցիչը, նրա հեղափոխական հայացքների գեղարվեստական արտացոլողը, ապա նա չէր կարող չլիսել մեր ազատագրական շարժման առաջին փուլին բնորոշ առանձնահատկությունները... Ա.Ս. Գրիբոյեդովը... կիսում էր Գաղտնի ընկերության հիմնական ձգտումները, բայց նմանապես ժխտում էր նաև (ինչպես – Վ.Ս.) «100 պրապորշչիկների» զինված ապրտամբությունը, այնպես էլ ժողովրդական զինված ապստամբության հեռանկարները... Խնդրի այս զգալի կողմը, դժբախտաբար, դուրս է մնացել Մ.Վ. Նեչկինայի մենագրությունից»¹³¹: Չնայած այս քննադատությանը Մ. Նեչկինայի տեսակետներն արագորեն դառնում են գերիշխող ու շատ դեպքերում արտացոլվում այլոց աշխատություններում ու ուսումնական ձեռնարկներում: Այդպիսի հեղինակներից են **Վլ. Օռլովը**¹³², **Ս.Մ. Պետրովը**¹³³ և այլք, որոնց աշխատությունները, որպես ուսումնական ձեռնարկներ երաշխավորվում են մասնագիտական բուհերի ուսանողների համար: Սակայն ժամանակ առ ժամանակ լինում էին նոր հրապարակումներ, որոնց հեղինակները չէին համաձայնում Մ. Նեչկինայի տեսակետներին: Նրանցից մեկը **Ֆ. Բիրյուկովն** է, որը

130 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 470-471, 552:

131 Дружинин Н.П., “Проф. М.В. Нечкина, А.С. Грибоедов и декабристы”, Инст-т Истории Академии наук СССР, “Вопросы истории”, Москва, 1947, №12, с. 103.

132 Орлов В.Л., Грибоедов. Очерк жизни и творчества, Гос. изд-во “Художественной литературы”, Москва, 1954, с. 3-275, նույնի՝ Грибоедов, Изд-во “Просвещение” Ленинградское отд., Ленинград, 1967, с. 5-113.

133 Петров С.М., Александр Сергеевич Грибоедов, “Искусство”, Москва, 1948, с. 3-19, նույնի՝ А.С. Грибоедов, критико-биографический очерк, Издание второе, переработанное, Гос. Изд. Худ. Литературы, Москва, 1954, с. 3-118.

127 Լենին Վ.Ի., Երկերի լիակատար ժողովածու, Թարգմանված է ռուսերեն հիմնգրքից հրատարակությունից, «Հայաստան» հրատ., Երևան, 1979, հ. 21, էջ 315-323 (տեքստում տրված է «կոփած» ձևով):

128 Նույն տեղում՝ էջ 315-316:

129 Նույն տեղում՝ էջ 323:

դեմ է Մ. Նեչկինայի այն տեսակետին, թե «Խելքից պատուհաս»-ում արտացոլված է վաղ շրջանի դեկաբրիստական կազմակերպություններին («Փրկության միության», «Բարօրության միության») բնորոշ մարտավարությունը:

Դժգոհելով, որ Մ. Նեչկինայի տեսակետները դարձել են գերիշխող և տեղ են գտել դպրոցական ու բուհական ուսումնական ձեռնարկներում՝ Ֆ. Բիրյուկովը գրում է. «Առաջին հերթին բանը «Խելքից պատուհաս»-ի՝ որպես պատկերագրողված նյութի, հանդեպ այդքան հեշտացված մոտեցման մեջ է, որը մեխանիկորեն ամրագրում է Գրիբոյեդովի կողմից դեկաբրիստների մարտավարության այս կամ այն ընկալումը: Տվյալ դեպքում արվեստի գործում հաշվի չի առնվում իրականության կերպարային արտացոլման յուրահատկությունը: Հսկայական ընդհանրացնող ուժով (կերտված – Վ.Ս.) գեղարվեստական կերպարը, որն իր մեջ է ներառում երկար ժամանակի ընթացքում որոշված մի ամբողջ սերնդի տիպիկ գծերը, այնքան է աղքատացված ու նեղացված, ժամանակի մեջ սահմանափակված, որ կարելի է միայն որոշ (և այն էլ բացասական) պատկերացում կազմել վաղ դեկաբրիզմի մարտավարության մասին:

Դեկաբրիստների մարտավարությունը, անկասկած, փոփոխվում էր: **Սակայն Ա. Գրիբոյեդովն իր առաջ խնդիր չէր դրել հետևել այդ փոփոխություններին և դրանք արտացոլել իր ստեղծագործությունում:** Նա ձգտում էր ցույց տալ հասարակական կյանքի առավել հիմնավոր (կայուն – Վ.Ս.) երևույթները, պատկերել արակչեճյան վարչակարգի պաշտպանների դեմ հակասության մեջ գտնվող դարաշրջանի առաջադեմ գործչին, ցույց տալ քաղաքական նոր աշխարհայացքի առաջացումը և փոխանցել կերպարի հոգեբանական էությունը: Կատակերգության մեջ փորձելով գտնել «Բարօրության միության» մարտավարությունը բնութագրող պատկերագրողում՝ Մ. Նեչկինան փորձում է հենվել «կատակերգության ներքին օրինաչափության», գործողության զարգացման և խարդավանքի (ինտրիգի – Վ.Ս.) ավարտի վրա, բայց դրա հետ միասին հաշվի չի նստում ո՛չ Չացկու վարքագծի այն պատճառաբանության հետ, որը համոզիչ տրված է կատակերգությունում, ո՛չ էլ բեմական պայմանականության անխուսափելիության հետ»¹³⁴:

Նշենք, որ եթե Չացկու պահվածքի հիմնավորման և բեմական

պայմանականության հետ կապված Ֆ. Բիրյուկովի վերջին դիտողությունը կարելի է համարել տեղին, ապա հանուն արդարության պետք է նշել, որ, **վաղ շրջանի դեկաբրիստական կազմակերպությունների մարտավարության առումով Մ. Նեչկինային ուղղած քննադատության մեջ Ֆ. Բիրյուկովն ավելի մեծ սխալ է թույլ տալիս՝ «Խելքից պատուհաս»-ը և Չացկուն համարելով նախքան 1825թ. ավելի մեծ ժամանակաշրջանն ընդհանրացնող ստեղծագործություն և կերպար:**

Դեկաբրիստների ազդեցության լինել-չլինելու հարցը ժամանակին մատնանշում էր նաև Ն. Պիկսանովը:

Խորհրդային շրջանում ստեղծված գիտական տեսակետներում, չնայած Մ. Նեչկինայի և նրա հետևորդների ջանքերին, այդպես էլ վերջնական լուծում չի ստանում «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարաբերություններին վերաբերող մի շատ կարևոր հարց ևս. **խոսքը դեկաբրիստական գաղտնի կազմակերպություններին Ա. Գրիբոյեդովի «անդամակցության» մասին է:**

Խորհրդային հեղինակ **Վ.Ի. Լևինը**, նշելով երկու կողմերի փաստարկները, գրում է. «Այնուամենայնիվ, ստիպված ենք խոստովանել, որ չնայած հեղափոխական պայքարի հաջողության նկատմամբ իր անհավատությանը և դեկաբրիստների իդեալների հանդեպ լրիվ համակրանքին՝ **Գրիբոյեդովը Գաղտնի ընկերությանը չէր պատկանում**»¹³⁵:

Ուշագրավն այն է, որ Մ. Նեչկինայի հիմնարար աշխատությունից հետո պատմաբանները **գրեթե չեն անդրադառնում «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարցերին** և Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունից դուրս վերջինիս կյանքին ու գործունեությանը վերաբերող հարցերը (այդ թվում նաև դեկաբրիստների հետ շփումների հարցերը) **մեծամասամբ քննարկվում են գրականագետների կողմից:**

Մ. Նեչկինան, անկասկած, անուրանալի և հսկայական գործ է կատարել «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» խնդրի լուսաբանման գործում: Մենք սույն աշխատության մեջ բազմիցս օգտվել ենք նրա աշխատություններից, սակայն **իր որոշ հետևություններում Մ. Նեչկինան մեր կարծիքով սխալվել կամ կատարել է ակնհայտ պատմաշինություն**, ինչը պայմանավորված էր ինչպես գաղափարական կաշկանդող հանգամանքների, այնպես էլ անհրաժեշտ փաստաթղթերի և աղբյուրների

134 Бирюков Ф., "Некоторые замечания по поводу "Горя от ума", "Вопросы литературы", Гос. изд-во "Художественной литературы", Москва, 1959, №2, с. 95 (այստեղ «դեկաբրիզմ» տերմինը Ֆ. Բիրյուկովինն է).

135 Левин В.И., "Грибоедов и Чацкий", "Известия АН СССР", Изд-во АН СССР, Трибуна, Серия литературы и языка, Москва, 1970, вып. 1, январь-февраль, т. XXIX, с. 36, с. 33-54.

պակասի հետ: **Գեկաբրիստների հետ Ա. Գրիբոյեդովի առնչությունների վերաբերյալ որպես «հիմնական աղբյուր» են հանդես եկել նրա գրական գործերը, որոնք, սակայն, պատմագիտության համար բավարար հիմք չեն կարող հանդիսանալ: Հիմնական այս պատճառներն են ստիպել ուսումնասիրողներին խուսափել Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող ամբողջական գիտական աշխատանքներ հրատարակել, քանի որ քաղաքական պարտադրանքի պայմաններում շատ քիչ բան էր հնարավոր փաստացի ապացուցել:**

Խորհրդային պատմագիտության մեջ համընդհանուր այն տեսակետն էր իշխում, թե Ա. Գրիբոյեդովը դեկաբրիստների գաղափարական համախոհն էր, ու եթե տարաձայնություններ էլ եղել են, ապա դրանք վերաբերել են միայն մարտավարության հարցերին, և քանի որ դեկաբրիստներն էլ մարտավարության հարցերում բազմակարծիք են եղել, ապա դա չի խանգարել Ա. Գրիբոյեդովին ևս դասել դեկաբրիստների շարքին: Այս պարագայում արդեն կարևոր չէր, թե նա Գաղտնի կազմակերպության անդամ եղե՞լ է, թե՞ ոչ, կատարե՞լ է արդյոք ինչ-ինչ հանձնարարություններ:

Ընդունված տեսակետ է՝ Ա. Գրիբոյեդովը դեկաբրիստների ընկերն ու համախոհն էր և քանի որ դեկաբրիստները հեղափոխականներ էին, հետևաբար Ա. Գրիբոյեդովը ևս դիտվել է որպես հեղափոխական, իսկ դիվանագիտական ծառայության մեջ կարիերա ստեղծելու պարագան խորհրդային ուսումնասիրողներն ամեն կերպ փորձել են շղարշել արդարացնող հանգամանքներով:

Նախքան խորհրդային վերջին շրջանի հեղինակներին անդրադառնալը նշենք մի ժողովածուի¹³⁶ մասին ևս, որում գետեղված են 1825 թվականից մինչև 1940-ական թվականները «Խելքից պատուհաս»-ին ու Ա. Գրիբոյեդովին վերաբերող գրեթե բոլոր հրատարակումներն ու հիշատակությունները: Ժողովածուի մեջ տեղ է գտել նաև հավաքված նյութերի և հեղինակների վերաբերյալ գիրքը կազմող **Ա.Մ. Գորոզինի** ներածականը¹³⁷: Ժողովածուն շատ հետաքրքիր և կարևոր նյութեր է պարունակում մեր ուսումնասիրության համար և լայնորեն օգտագործվել է խորհրդային հեղինակների կողմից: **Այս ամենով հանդերձ՝ ժողովածուն ունի լուրջ թերություն. դրանում բացակայում**

են Ա. Գրիբոյեդովի և «Խելքից պատուհաս»-ի մասին արտահայտված այն հեղինակների գործերը, որոնք չէին տեղավորվում խորհրդային «գրիբոյեդովագիտության» գաղափարական շրջանակներում: Դրանում չկան նույնիսկ ռուս գրականության դասականներ Ֆ.Մ. Դոստոևսկու, Ա. Մուվրինի և մյուսների՝ խնդրո առարկա թեմային վերաբերող աշխատությունները: Չնայած Ա. Գորոզինը նրանցից ոմանց հիշատակում է իր ներածականում, սակայն դա բավարար չէ այդ հեղինակների տեսակետների մասին ամբողջական կարծիք կազմելու համար, քանի որ տրված են **խորհրդային գրականագիտության մեջ արմատավորված տեսակետների հետևորդ հետազոտողի մեկնաբանություններով:**

Խորհրդային վերջին շրջանի հեղինակներից հիշատակության է արժանի **Վ.Պ. Մեշչերյակովը**¹³⁸, որին ևս կարելի է համարել Մ. Նեչկինայի տեսակետների հետևորդ:

Իր առաջին գրքում Վ. Մեշչերյակովը փորձում է վեր հանել «Խելքից պատուհաս»-ում տեղ գտած գաղափարները և Ա. Գրիբոյեդովի կերպարը, իսկ երկրորդ աշխատությունը գեղարվեստորեն է ներկայացնում Ա. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը, ինչը թուլացնում է գրքի՝ որպես գիտական լուրջ աշխատության, հավակնությունը: Այն ավելի շատ հանրամատչելի է, քան գիտական, ուստի ճիշտ կլինի անդրադառնալ նրա գիտական հոդվածներին:

Վ. Մեշչերյակովը Ն.Մ. Նեչկինայի պես կարծում է, որ հատկապես դեկաբրիստների պարտությունից հետո է Ա. Գրիբոյեդովը հասկացել հեղափոխություններում ժողովրդի դերի կարևորությունը: Նա դրա ապացույցն է համարում ձերբակալությունից և ազատ արձակվելուց հետո Ա. Գրիբոյեդովի հրատարակած “Загородная поездка” (“Ուղևորություն քաղաքից դուրս” – Վ.Ս.) հոդվածը¹³⁹, որում Պետերբուրգից դուրս զբոսանքի ժամանակ հեղինակը՝ որպես ակնատես, նկարագրում է գյուղական մի տոնակատարություն: Հոդվածում գովերգվում է ռուս ժողովուրդը, որին հակադրվում է «կիսաավրոպացի» ազնվականությունը: **Վ. Մեշչերյակովն Ա. Գրիբոյեդովի այս ակնարկում տեսնում է դեկաբրիստական շարժանը տված նրա գնահատականը: Նա**

138 Мещеряков В.П., Грибоедов: литературное окружение и восприятие (XIX - нач. XXв), “Наука”, Л., 1983, նույնի՝ “Жизнь и деяния А.С. Грибоедова”, “Наука”, М.-Л., 1989.

139 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, նշվ. աշխ., հ. 2, էջ 80-82, տես նաև՝ А. Грибоедов “Загородная поездка (Отрывки из письма южного жителя)”, газ. “Северная пчела”, Тип-я Н. Греча, С.Петербург, 1826, 2-ое января, №76.

136 А.С. Грибоедов в русской критике, նշվ. աշխ., էջ III-XXVI:

137 Նույն տեղում՝ էջ III-XXVI:

գրում է. «Դա ոչ այլ ինչ է, քան ղեկաբրիստների գործունեության գիտական և նրանց «աստեղային ժամի» զնահատական: Նրանց «մտքի թռիչքը», ըստ Գրիբոյեդովի, ունի զլորալ մասշտաբներ և համայն մարդկությունից վեր է բարձրացնում նրանց»¹⁴⁰:

Հատվածաբար վերլուծելով Ա. Գրիբոյեդովի վերոհիշյալ ակնարկը՝ Վ. Մեշչերյակովը գտնում է, որ առաջին հերթին այն ուղղված է Պետրոպավլովյան ամրոցում իրենց ճակատագրին սպասող նրա ընկերներին, և նրանց մատնացույց էր անում իրենց սխալները: Սրանից հետո Վ. Մեշչերյակովը եզրակացնում է. «Գրիբոյեդովը գուցե առաջինն էր նրանցից, ով, վերապրելով ղեկտեմբերի 14-ը, հասկացավ, որ հնարավոր չէ հեղափոխություն անել առանց ժողովրդի»: Շարունակելով միտքը՝ հեղինակը կատարում է հետևյալ վերապահումը. «Այլ բան է, թե նա ընդունում էր այդպիսի հեղափոխությունը, որտեղ ժողովրդին հատկացվում էր վճռորոշ դեր»: Մեշչերյակով Վ.Ն. Օռլովի տեսակետը՝ Վ. Մեշչերյակովը գրում է. «Պուշկինի նման Գրիբոյեդովն այնուամենայնիվ մնաց լուսավորյալ ազնվականության գաղափարների շրջանակում՝ չկիսելով ժողովրդական հեղափոխության անհրաժեշտության մասին մտքերը...»¹⁴¹:

Այսպիսի տեսակետները նորություն չէին խորհրդային շրջանում: Վ. Մեշչերյակովը պարզապես փորձում էր նոր «հիմնավորումներ փնտրել, ինչն անելը շատ դժվար էր, քանի որ դրանցից ոչ մեկն այդ տեսակետն ապացուցող փաստարկ չէր հանդիսանում: Վ. Մեշչերյակովն ինքն էլ, երևի հասկանալով դա, փորձում է իր տեսակետի «ճշմարտացիությունը» սվաղել «բայց ափսոս, որ...» տիպի արդարացնող պատճառներով: Այսպես, Պետրոպավլովյան ամրոցում փակված իր ընկերներին (նրանք թերթեր և ամսագրեր չէին ստանում – Վ.Ս.) «իբր հասցեագրված» Ա. Գրիբոյեդովի “Загородная поездка” ակնարկի մասին հետազոտողը գրում է. «Նրանց կողմից, ում առաջին հերթին ուղղված էր Գրիբոյեդովի կրթոտ դիմումը, այդպես էլ (այն – Վ.Ս.) մնաց չընթերցված»: **Հավելենք, սակայն, որ չկա մի ապացույց, թե վերոհիշյալ ակնարկն ուղղված էր հանդիպման բանաված «ընկերներին»:**

Ա. Գրիբոյեդովի «դիմումի» մեջ ակնարկ չկա հեղափոխության մասին: Այնտեղ խոսվում է միայն ժողովրդի և ազնվականության դարավոր պառակտվածության մասին: Այնուհետև Վ. Մեշչերյակովը

140 Мещеряков В.П., “Новое о Грибоедове”, “Русская литература”, “Наука”, Ленинградское отд., Л., 1985, №1, с. 201.
141 Նույն տեղում էջ 204:

բերում է իր տեսակետը կասկածի տակ դնող երկրորդ պնդումը. «...Իսկ հետագայում, – գրում է նա, – “Загородная поездка”-ն սկսեց դիտարկվել լոկ որպես ազգային և ժողովրդական պորբյեմների մասին «Խելքից պատուհաս»-ի հեղինակի մտորումներ»¹⁴²: Պատճառների մասին հեղինակը չի ծավալվում: Ասվածին ավելացնենք նաև այն, որ Ա. Գրիբոյեդովն իր «դիմումը», չգիտես ինչու, չէր ստորագրել, այլ, որպես ենթավերնագիր, միայն նշել էր “Отрывки из письма южного жителя” («Հատվածներ հարավային բնակչի նամակից» – Վ.Ս.): **Ի դեպ, Վ. Մեշչերյակովն առանց որևէ հղման հիշատակում է խորհրդային պատմագիտության մեջ շրջանառվող «հարավի բնակիչ» արտահայտության վերաբերյալ իբր գոյություն ունեցող այն տեսակետը, ըստ որի Ա. Գրիբոյեդովն այդպես է գրել, որ հատուկ ակնարկի, թե իբր ինքը հանդիսանում է ղեկաբրիստների «Հարավային ընկերության» ավելի արմատական դիրքորոշման, այսինքն՝ հանրապետական կարգերի հաստատման կողմնակից՝ ի տարբերություն «Հյուսիսային ընկերության», որը ցանկանում էր հաստատել սահմանադրական միապետություն:** Այս տեսակետն «ապացուցող» փաստարկը, ըստ նրա, այն է, որ եթե Ա. Գրիբոյեդովը ցանկանար շեշտել աշխարհագրական վայրը, կգրեր «Կովկասի» կամ «Արևելքի բնակիչ» և, որ XIX դարի սկզբին Ռուսաստանում Հարավ ասելով, հասկանում էին Նովոռոսիյսկ գավառը կամ Ղրիմը¹⁴³: **Այնուհայտ է, որ վերոհիշյալը անհիմն ու հորինված «տեսակետ» է:**

Վ. Մեշչերյակովի և մյուսների կողմից Ա. Գրիբոյեդովին որպես ղեկաբրիստ և հեղափոխական ներկայացնելու փորձերը հետապնդում էին գրողին խորհրդային ժամանակի իրականությանը և գաղափարախոսությանը ծառայեցնելու նպատակ:

Ս.Ա. Ֆոմիչևը¹⁴⁴ նույնպես Մ. Նեչկինայի հետևորդներից է: Նա Ա. Գրիբոյեդովի կապը ղեկաբրիստների հետ համարում է ապացուցված և գրում է. «Դեկաբրիստների հեղափոխական ձգտումների հետ Գրիբոյեդովի գաղափարների արյունակցական հարազատությունը, ղեկաբրիստական գաղտնի ընկերությունների հետ նրա մտերմությունն այժմ՝ հատկապես ակադեմիկոս Մ.Վ. Նեչկինայի հետազոտություններից հետո, նույնպես

142 Мещеряков В.П., “Новое о Грибоедове”, նշվ. աշխ., էջ 204:

143 Նույն տեղում:

144 Фомичев С.А., Грибоедов в Петербурге, Лениздат, 1982, с. 3-56, նույնի “Исследования и интерпретации” (Обзор юбилейной грибоедовской литературы 1969-1970), “Русская литература”, “Наука”, Лениздат, Л., 1971, №2, с. 165-172, նույնի “Автор “Горя от ума” и читатели комедии” в книге “А.С. Грибоедов, Творчество. Биография. Традиции”, նշվ. աշխ., էջ 5-27, նույնի “Личность Грибоедова” в книге “А.С. Грибоедов в воспоминаниях современников”, Под ред. Вацура В.Э., Изд-во “Художественная литература”, Москва, 1980, с. 5-20.

կասկած չեն հարուցում»¹⁴⁵:

«Գրիբոյեդով-դեկաբրիստներ» սերտ հարաբերությունների շուրջ Ս. Ֆոմիչևն իր կարծիքն արտահայտում է բացարձակ համոզվածությամբ: Դա այնքան ակնառու է, որ նույնիսկ նրա աշխատության վերաբերյալ գրված առաջաբանում կարծիքի հեղինակ **Ա. Ջորինը** հատուկ ընդգծում է դա՝ քննադատելով Ս. Ֆոմիչևին: Ա. Ջորինը գրում է. «*Հանձինս Պ.Ե. Շչեգոլևի և Մ.Վ. Նեչկինայի՝ Ս. Ֆոմիչևր հարում է դեկաբրիստական շարժմանը Գրիբոյեդովի անվերապահորեն մասնակից լինելը հաստատողների ավանդույթին*»:

Ա. Ջորինը հարկ է համարում մի փոքր մանրամասնել «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարցերը՝ **դրանցից առանձնացնելով երեքը. 1) տեղեկացված էր արդյոք Գրիբոյեդովը նրանց ծրագրերին, 2) նա փաստացի ընդունվե՞լ էր արդյոք գաղտնի կազմակերպության շարքերը, 3) նա կատարե՞լ է արդյոք նրանց հանձնարարությունները: Ծավալվելով այս երեք հարցերի «փաստացի ապացուցված լինելու» մասին՝ Ա. Ջորինը գրեթե ապացուցված է համարում միայն առաջինը, երկրորդի հավանականությունը ընդունում, սակայն ընդգծում է, որ դրա շուրջ կան կասկածներ, իսկ երրորդը համարում է ենթադրություն՝ ընդգծելով, որ այն միանշանակ ապացուցող փաստեր չկան: Այս ամենից կարծիքի հեղինակը եզրակացնում է. «*Խոսելով ճշմարտանման և նույնիսկ որպես անկասկած ապացուցված, բայց վարկածային և վիճելի ենթադրությունների մասին՝ Ս. Ֆոմիչևը մեր կարծիքով ժամանակ առ ժամանակ բաց է թողնում անհրաժեշտ սահմանափակումները*»¹⁴⁶:**

XX դարի 80-ական թվականներին խորհրդային գաղափարախոսության լճացման պայմաններում գիտության մեջ ավելի հաճախ են սկսում հնչել Մ. Նեչկինայի և նրա հետևորդների՝ **արդեն հաստատված և քարացած տեսակետների քննադատություններ**: Այդպիսի հեղինակներից է **Ա.Ա. Լեբեդևը**, որի աշխատությունը¹⁴⁷ լայն արձագանք է ունենում: Ա. Գրիբոյեդովի կյանքի ու գործունեության շատ դրվագների վերաբերյալ Ա. Լեբեդևի տեսակետներն իրենցում թարմություն են պարունակում և յուրօրինակ են: Նրա աշխատանքը կարելի է համարել մինչև այդ Ա. Գրիբոյեդովի կյանքին ու դիվանագիտական

ծառայությունից դուրս նրա գործունեությանը վերաբերող՝ հատկապես խորհրդային հեղինակների չիրապարակված, բայց իրենցից գիտական արժեք ներկայացնող աշխատանքների վերլուծություն:

Դրանց վերլուծությունն Ա. Լեբեդևը կատարում է **փաստերը վարկածներից առանձնացնելով**, ապա ներկայացնում է Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության շատ դրվագների վերաբերյալ իր տեսակետները: Ուշագրավ է «գիտական վարկած» հասկացության լեբեդևյան բացատրությունը: «*Վարկածը, — գրում է Ա. Լեբեդևը, — ճշմարտության աշխատանքային մոդելն է և միևնույն ժամանակ գիտական հետազոտության գործիք... Վարկածը տեղաբաշխված է ճշմարտության և մոլորության սահմանին: Դա (վարկածը — Վ.Ա.) էլ հենց այդ սահմանն է... Վարկածը լավ է հենց նրանով, որ խլում է առարկայի շարժունակությունն ու պայմանականությունը... Վարկածը խոստանում է, և դա ձգում է դեպի իրեն: Խոստման մեջ միշտ հուսադրող ինչ-որ բան կա*»¹⁴⁸:

Վերոհիշյալ բացատրությանը նախորդում է «**դասականի՝ որպես «օրինակելիի», հասկացության բացատրությունը, որի նպատակն է ցույց տալ խորհրդային գրականագիտության մեջ տեղ գտած դասականների «գեղեցկացնելու» ձգտումը, ինչը վերաբերում է նաև «Գրիբոյեդով-դասականին»**»¹⁴⁹: Բանն այն է, որ խորհրդային հետազոտողներն **Ա. Գրիբոյեդովին և մյուս դասականներին ներկայացնում էին որպես անհատականությունից զուրկ մարդ-դարաշրջան և այդ դարաշրջանին էին վերագրում նրանց բնավորությանն ու գործունեությանը վերաբերող բոլոր տարօրինակությունները, ինչը, ըստ նրանց, ստվեր էր զգում դասականների հեղինակության վրա** (օրինակ՝ Ա. Գրիբոյեդովի մտերմությունը Ֆ. Բուլգարինի հետ կամ դիվանագիտական ծառայությունը, որը դիտարկվում էր որպես ցարիզմի հետ «դեկաբրիստ» Ա. Գրիբոյեդովի համագործակցություն կամ, այլ կերպ ասած, դավաճանություն իր ընկերներին և գաղափարներին):

Ա. Լեբեդևը գտնում է, որ ամենևին էլ պետք չէ Ա. Գրիբոյեդովին համարել XIX դարի 20-ականների կամ 30-ականների մարդ ու դրանով նրան զրկել անհատականությունից: Ըստ Ա. Լեբեդևի վարկածի՝ Ա. Գրիբոյեդովը գիտեր, թե ինչ էր անում, և գիտեր դրանց հետևանքները: Յարիզմի հետ նրա համագործակցությունը մի փորձ էր (էքսպերիմենտ),

145 Фомичев С.А., "Личность Грибоедова"... ևշվ. աշխ., էջ 13:

146 Зорин Андрей, "С.А. Фомичев "Грибоедов в Петербурге"" Ленинград, Л., 1982, "Литературное обозрение", Изд-во ЦК КПСС, "Правда", Москва, 1984, №7, с. 86.

147 Лебедев А., Грибоедов, факты и гипотезы, "Искусство", Москва, 1980, с. 5-304.

148 Лебедев А., Грибоедов, факты и гипотезы, "Искусство", Москва, 1980, էջ 77-78:

149 Նույն տեղում՝ էջ 76-77:

որ Ա. Գրիբոյեդովը, որպես պարտություն կրած դեկաբրիստական գաղափարներին այլընտրանք, կատարեց իր վրա, և դրանով կարելի է բացատրել նրա անձին վերագրվող բոլոր հակասական դրսևորումները: Ա. Լեբեդևը գրում է. «Գրիբոյեդովին պետք էր կամ հասնել իր ծրագրի իրականացմանը, կամ ապացուցել դրա ուտոպիականությունը: Եվ այն, և՛ մյուս դեպքում նրանից պահանջվում էին ոչ թե խոսքեր, այլ արարքներ, ոչ թե կոչեր, այլ գործեր: Եվ նա գործում էր արարքներ ու անում էր իր գործը»¹⁵⁰:

Ի դեպ, Ա. Լեբեդևն Ա. Գրիբոյեդովի ընտրած այս ճանապարհին այլընտրանք է համարում Չացկուն՝ նույնպես գտնելով, որ նրա ստեղծագործության մեջ տարբեր հետազոտողների կողմից նշվող թերություններն ու անհամապատասխանությունները գալիս են նրանից, որ **դրանք չեն տեղավորվում նրանց կողմից առաջ քաշված վարկածներում**: Իրականում Ա. Գրիբոյեդովը գիտեր, թե ինչ էր գրում:

Հետազոտողների կողմից որպես թերություն նշվող «Խելքից պատուհաս»-ի՝ մի տեսակ անավարտ լինելու հանգամանքն Ա. Լեբեդևը բացատրում է հետևյալ կերպ. «Այդպես, իր կյանքով Գրիբոյեդովն ավարտին հասցրեց «Խելքից պատուհաս»-ը: Այդպես նա ինքն իրեն այլընտրանք գտավ իր Չացկուն: Այլընտրանքը ողբերգական դուրս եկավ, բայց դա իրական հերոսության ողբերգություն էր»¹⁵¹:

Ինչ վերաբերում է Ա. Գրիբոյեդովի բացառիկությանը և նրան, որ շատ հետազոտողներ, շեղվելով նրա իրական կերպարից, փորձել են արդարացնել Ա. Գրիբոյեդովին, Ա. Լեբեդևը, զուգահեռներ անցկացնելով Յու. Տինյանովի «Смерть Вазир-Мухтара» («Վազիր-Մուխթարի մահը» – Վ.Ս.) գրքում կերտված Ա. Գրիբոյեդովի կերպարի և իրական Ա. Գրիբոյեդովի միջև, գրում է. «Գրիբոյեդովը, ինչպես Վազիր-Մուխթարը, կարիք չունի պատմական համաներման. Գրիբոյեդովը Վազիր-Մուխթար չէ: Պետք չէ Գրիբոյեդովին նմանեցնել ինչ-որ մեկին: Նա բացառիկ է (ֆենոմենալ), նման չէ ոչ որպես հանճարեղ կատակերգության արարողի, ոչ որպես պայմանականորեն ուտոպիական նախագծի հեղինակի»¹⁵²:

Ներկայացնենք այն կարծիքները, որոնք Ա. Լեբեդևի աշխատության վերաբերյալ հրապարակվում են գիտական մամուլում: 1981թ. միանգամից երեք կարծիք է հրապարակվում այդ առնչությամբ: Առաջինի

հեղինակը **Լ. Պոլիկովսկայան է**¹⁵³, որը վերապատմելով և ընդհանուր առմամբ **դրական գնահատելով Ա. Լեբեդևի աշխատանքը**, եզրակացնում է. «Ա. Լեբեդևի «Գրիբոյեդով»-ը գիտական աշխատանք չէ, որտեղ հետևությունները, որոնց հանգում է հետազոտողը, դառնում են համընդհանուր սեփականություն: Այն խիստ անձնական գիրք է՝ անկասկած թելադրված հեղինակի անձնական մտորումներով այն մասին, թե ինչ է իրական քաղաքացիական խիզախությունը: Եվ մենք չենք պարտավորվում դատել, թե նրա կենսագրությունը ուսումնասիրելուց հետո, արդյո՞ք հեղինակը գնահատել է Գրիբոյեդովի սոցիալ-քաղաքական դիրքորոշումը, թե՛ հակառակը: Ա. Լեբեդևի կողմից Ա. Գրիբոյեդովն ընտրվել է որպես նախօրոք ձևավորված հայեցակարգը հաստատող կերպար: Հավանաբար եղել է թե՛ մեկը, թե՛ մյուսը»¹⁵⁴: Լ. Պոլիկովսկայան գտնում է, որ Ա. Լեբեդևի աշխատությունն ուղղված է Յու. Տինյանովի գրքի դեմ, ինչը երևում է նրա հոդվածի վերնագրից: **Սակայն այս դեպքում հետազոտողն անտեսում է այն, որ Ա. Լեբեդևը, բացի Յու. Տինյանովից, անդրադառնում է նաև խորհրդային գրիբոյեդովագիտության մեջ զգալի հետք թողած Ն.Կ. Պրիսանովի, Մ.Վ. Նեչկինայի, Վ.Լ. Օռլովի և այլոց տեսակետներին**:

Առավել հետաքրքիր է երկրորդ կարծիքը, որի հեղինակ **Ա. Ջորին**¹⁵⁵ ավելի քննադատաբար է մոտենում Ա. Լեբեդևի աշխատանքին, հատկապես նրա աշխատանքին ու տեսակետներին: Ա. Ջորինի կարծիքով Ա. Լեբեդևի գրքում չափազանց շատ են մեջբերումները, և դրանք շատ հաճախ ոչ թե սկզբնաղբյուրներից են արված, այլ կատարված են, այսպես ասած, «երկրորդ ձեռքից»: Ա. Ջորինը սա համարում է Ա. Լեբեդևի աշխատանք, իսկ ինչ վերաբերում է նրա տեսակետներին, ապա Ա. Ջորինը, քննադատելով դրանք, գտնում է, որ **նա Ա. Գրիբոյեդովին դուրս է դնում պատմական գործընթացներից**: Ըստ նրա՝ Ա. Լեբեդևը դեկաբրիստներին և Ա. Գրիբոյեդովին դիտարկում է պատմական իրականությունից դուրս, ինչի հետևանքով նրանք դառնում են գեղարվեստական կերպարներ, իսկ Չացկու և Մուլչալինի կերպարները վերլուծվում են գեղարվեստական ստեղծագործությունից դուրս՝ դառնալով պատմական դեմքեր¹⁵⁶:

Ա. Ջորինը գրում է. «Լեբեդևի գրքի նորությունն այն է, որ, ինչպես արդեն

150 Лебедев А., Грибоедов, факты и гипотезы, "Искусство", Москва, 1980, էջ 276:

151 Նույն տեղում՝ էջ 275:

152 Նույն տեղում՝ էջ 289:

153 Поликовская Л., "Грибоедов против Вазир-Мухтара", Обсуждаем книгу А. Лебедева "Грибоедов" ("Искусство", М., 1980), "Литературное обозрение", Изд-во ЦК КПСС, "Правда", Москва, 1981, №8, с. 41-43.

154 Նույն տեղում՝ էջ 43:

155 Зорин Андрей, "Прихотливый путь самопознания", "Литературное обозрение", Москва, 1981, №8, с. 45.

156 Նույն տեղում՝ էջ 45-46:

ասվել է, հիմնականում բաղկացած է այն բանի հանդեպ վերաբերմունքից, ինչի մասին նա գրում է... Պատմության ճանաչման տեղն այստեղ գրադեցնում է ինքնաճանաչումը, և դրանում դատապարտելի ոչինչ չկա: Ա. Լեբեդևն ասելու բան ունի ընթերցողին, և նա, անկասկած, իրավունք ունի հավակնելու, որ նրա խոստովանությունը լավի»¹⁵⁷: Ա. Ջորինը գտնում է նաև, որ Ա. Լեբեդևը վերոհիշյալ հարցում չափն անցնում է՝ ինքնաճանաչումն ու խոստովանությունը շփոթելով այլ բաների հետ: Նրա կարծիքով Ա. Լեբեդևի գիրքն ավելի կշահեր, եթե լիներ ազատ մտորումների ոճում և չհավակններ լինել որպես գիտական վարկած: **Սակայն Ա. Գրիբոյեդովին իր ժամանակից դուրս դնելու և դրանով նրան ներկա ժամանակներ տեղափոխելու հարցում մեղադրելով Ա. Լեբեդևին՝ ծայրահեղության մեջ է ընկնում ինքը՝ Ա. Ջորինը. Ա. Լեբեդևն Ա. Գրիբոյեդովին ամենևին էլ իր ժամանակից դուրս չի դիտարկում, այլ ընդամենը գտնում է, որ նրան ու ժամանակաշրջանը չպետք է ընդհանրացնել, և անհրաժեշտ է հաշվի առնել նրա բացատրությունը: Ա. Ջորինն ու Լ. Պոլիկովսկայան սխալվում են՝ Ա. Լեբեդևի աշխատանքները գիտական չհամարելով:**

Ասվածի վրա ուշադրություն են հրավիրում նույն ամսագրում լույս տեսած երրորդ կարծիքի հեղինակներ **Ն. Մինևան և Վ. Օսկոցկին**¹⁵⁸, որոնք իրենց հոդվածը սկսում են հետևյալ դիտողությամբ. «...Լեբեդևի գրախոսվող գիրքը ոչ բարոզ է, ոչ էլ խոստովանություն, այլ ամենից առաջ քննադատի, գրականագետի, գրականության պատմության մասնագետի լուրջ գիտական աշխատանք»¹⁵⁹: Ն. Մինևան և Վ. Օսկոցկին, անդրադառնալով Ա. Լեբեդևի առաջ քաշած «դեկաբրիստ էր արդյոք Գրիբոյեդովը և առնչվում էր արդյոք դեկաբրիզմի հետե հիմնական հարցերին, նախ տալիս են հարցի նախապատմությունը՝ անդրադառնալով Մ.Վ. Նեչկինայի, Ն.Ս. Դրուժինինի, Ս.Ս. Պետրովի տեսակետներին, ապա **հիմնավորում են Ա. Լեբեդևի աշխատանքի անհրաժեշտությունը**, որի նպատակն է վերջ տալ ակնհայտ փաստերը չնկատելուն, պատմության բարեշինման ձգտմանը և դասականներին գունազարդելուն:

Ընդհանուր առմամբ Ն. Մինևան և Վ. Օսկոցկին համամիտ են Ն. Պիկասնովի և Ա. Լեբեդևի ձևակերպումներին և այդպիսի մտացումը համարում են «հակառակ գռեհիկ սոցիոլոգիա»¹⁶⁰: Նրանց հոդվածում

157 Зорин Андрей, "Прихотливый путь самопознания", ևշվ. հոդվ., էջ 45-46:

158 Минаева Н., Оскоцкий В., "Преимущества гипотезы", "Литературное обозрение", Изд-во ЦК КПСС, Москва, 1981, №8, с. 46.

159 Նույն տեղում՝ էջ 46:

160 Նույն տեղում՝ էջ 49 («դեկաբրիզմ» տերմինը հեղինակներին է - Վ.Ս.):

զգալի տեղ է հատկացված Լ. Պոլիկովսկայայի, հատկապես Ա. Ջորինի նյութերի քննադատությանը: Անդրադառնալով «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարցին՝ **հեղինակները գտնում են, որ Ա. Գրիբոյեդովն ավելի շատ հարում էր XIX դարի առաջին քառորդի լուսավորյալների շարժմանը, որն ավելի ընդգրկում ու լայն էր և ավելի երկար կյանք ունեցավ, քան դեկաբրիստական շարժումը:**

Ն. Մինևան և Վ. Օսկոցկին ևս համաձայն են Ա. Լեբեդևի այն տեսակետին, թե Ա. Գրիբոյեդովի պետական ծառայությունը **ոչ թե բարոյական, այլ ավելի շուտ քաղաքական փոխզիջում (կոմպրոմիս) էր**, և այն փորձը (էքսպերիմենտը), որ կատարեց Ա. Գրիբոյեդովն իր հետ, չէր կարող հաջողություն ունենալ և, ի վերջո, **հանգեցրեց նրա վախճանին**: Ն. Մինևան և Վ. Օսկոցկին, անդրադառնալով Յու. Տինյանովի կերտած Ա. Գրիբոյեդովի կերպարի շուրջ Ա. Լեբեդևի քննադատությանն ուղղված Ա. Ջորինի հակադարձումներին, ճիշտ են համարում վերջինիս այն տեսակետը, թե Յու. Տինյանովի գիրքը գեղարվեստական գործ է, և դրան պետք է վերաբերվել հենց այդպես՝ ելնելով իր ժանրի օրենքներից, ու չշփոթել գիտական վարկածի հետ, ինչը երկու հոդվածների հեղինակների կարծիքով կատարել էր Ա. Լեբեդևը¹⁶¹:

Մեր կարծիքով այս տեսակետի հետ հարկ է չհամաձայնել, քանի որ Ա. Լեբեդևը քննադատում է Յու. Տինյանովի կերտած «Վազիր-Մուխթար-Գրիբոյեդովին» այն բանի համար, որ, լինելով գեղարվեստական կերպար, նրա գրքի միջոցով անդրադարձել է նաև գիտական հետազոտվածների ձևավորման վրա: Ա. Լեբեդևն իր գրքում նշում է հենց այս հանգամանքը և ոչ թե գիտական չափանիշներով վերլուծում գեղարվեստական կերպարը: Ն. Մինևան և Վ. Օսկոցկին իրենց գրախոսությունն ավարտում են Ա. Լեբեդևի աշխատանքին տրված մի բնորոշմամբ, ինչը կարելի է խորհրդանշական համարել «Ա. Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարաբերությունների հարցում: Նրանք գտնում են. «Այստեղից չի հետևում, որ ցանկացած այլ Գրիբոյեդով արդեն չունի գոյության հնարավորություն. Ա. Լեբեդևն ամբողջությամբ դա ապացուցեց իր գրքով՝ նշելով փիլիսոփայական, սոցիալական, բարոյական, էսթետիկական մեծ և բարդ հարցերը, որոնք կարծես թե իրենցում թաքցնում են այսպիսի մի պարզ հարց՝ դեկաբրիստ էր, արդյոք, Գրիբոյեդովը»¹⁶²:

161 Минаева Н., Оскоцкий В., "Преимущества гипотезы", ևշվ. հոդվ., էջ 49:

162 Նույն տեղում:

Ա. Լեբեդևի տեսակետների քննարկմամբ կարելի է ավարտել Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքների ուսումնասիրման խորհրդային փուլի հեղինակների աշխատությունների վերլուծությունը: **Պատկերն ամբողջական դարձնելու համար նշենք, որ Ա. Գրիբոյեդովի գործունեության ուսումնասիրման ասպարեզում զգալի ավանդ ունեցող այսրկովկասյան հանրապետությունների հեղինակները չեն զբաղվել Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքներին ու գործունեությանը վերաբերող խնդիրներով և հիմնականում հպանցիկ կրկնել են խորհրդային մյուս հետազոտողների՝ կարծրատիպ դարձած տեսակետները:** Խորհրդային պատմաբան **Վ.Ա. Պարսամյանը**, խոսելով Երևանում «Խելքից պատուհաս»-ի առաջին բեմադրության մասին, որին ակտիվ մասնակցություն են ունեցել Կովկաս արքայազնի ղեկավարները, գրում է. «Գրիբոյեդովի բարյացակամ վերաբերմունքը մանավանդ Կովկաս արքայազնի և Պասկևիչի բանակում գտնվող ղեկավարների նկատմամբ, որոնց հետ նա զաղափարական և անձնական կապեր ուներ, Պետերբուրգում բանտ էր նստել (Ա. Գորբինսկի) և այլն՝ հայտնի էր...»¹⁶³: Չնայած մեծավաստակ պատմաբանի վերոհիշյալ մտքերից արված մեջբերման մեջ ձևակերպումն այնքան էլ հստակ չէ հայերենի առումով, բայց իմաստը, կարծում ենք, հասկանալի է:

Մեկ այլ հեղինակ՝ **Ի. Ենիկոլոպովը**, արտահայտվելով Ա. Գրիբոյեդովի ձեռքարկության հետաքննչական գործի մասին և **հղում կատարելով ակադեմիկոս Մ. Նեչկինայի աշխատությանը՝ ըստ էության համաձայնում է վերջինիս տեսակետներին, ըստ որոնց Կ. Ռիլենն Ա. Գրիբոյեդովին ընդունել էր Գաղտնի կազմակերպության շարքերը, բայց «պայմանական, ոչ կատարյալ ձևով»¹⁶⁴:**

Ղեկավարիստական շարժման հետ մասոնականության առնչությունների շուրջ նյութերի հայտնաբերման գործում, ծանոթանալով հետխորհրդային շրջանի մի շարք հեղինակների գործերին, կարելի է փաստել, որ **մասոնականության հանդեպ հետաքրքրությունը կրկին աճում է ԽՍՀՄ փլուզումից հետո**: Հետխորհրդային շրջանում Ռուսաստանում առավել անկաշկանդ են ուսումնասիրվում նախկինում արգելանքի տակ եղած շատ փաստաթղթեր, ոստիկանական և գաղտնի ծառայությունների արխիվներում եղած նյութեր, ինչի արդյունքում

¹⁶³ Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ՀՍՄՌ ԳԱ հրատ., 1947, էջ 66:

¹⁶⁴ Ениколопов И., "Грибоедов и Восток", Айпетрат, Ереван, 1954, с. 50.

տպագրվում են ոչ միայն մասոնական գրականություն, այլև **ռուսական մասոնականությանը վերաբերող աշխատանքներ, հոդվածներ, ակնարկներ**:

Հետխորհրդային առաջին շրջանում մասոնականությանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ՝ ստեղծելով բավականին ուշագրավ և արժեքավոր ուսումնասիրություններ¹⁶⁵: Մակայն այս փուլի ամենաարժեքավոր աշխատությունները պատկանում են **Գ.Գ. Լոթարևայի** և **Ս. Կարպաչովի** գրչին: Դ. Լոթարևայի աշխատանքներից, թերևս ամենահաջողվածը **Տ.Օ. Սոկոլովսկայայի** առավել հայտնի աշխատանքների՝ մեկ գրքով հրապարակած գործն է¹⁶⁶, իսկ Ս. Կարպաչովի ուսումնասիրություններից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ևս երեք կարևոր աշխատություն¹⁶⁷: Մակայն, ինչպես վերը հիշատակած հեղինակների գործերում, այնպես էլ հրատարակված առանձին ժողովածուներում և բրոշյուրներում¹⁶⁸ կա՛մ չեն բարձրացվում մեզ հուզող հարցադրումները, կա՛մ էլ ղեկավարիստական շարժման հետ մասոնականության կապերը դարձյալ ներկայացվում են մշուշապատ, թեթև ակնարկներով, եզրակացությունները ընթերցողին թողնելու միտումով:

«Գրիբոյեդով-ղեկավարիստներ» հարաբերություններին վերաբերող հարցերն այլ զարգացում են ունենում **հետխորհրդային ռուսական պատմագիտության մեջ**: Մեծամասամբ վերանայվում են խորհրդային զաղափարախոսության կաղապարների մեջ ձևավորված

¹⁶⁵ Аржанухин С.В., Философские взгляды русского масонства: По материалам журнала "Магазин свободномасонства", УРГУ, Екатеринбург, 1995, 224 с.; Багдасарян В.Э., Теория заговора в отечественной историографии второй половины XIX-XXвв., Изд. МПУ Сигнал, М., 1999, 516 с.; Большаков В., "Масоны", Ч 1-3, "Правда", Москва, 1992, 7, 13, 16 мая; Новиков В.И., "Масонство и русская культура", "Искусство", М., 1998, 495 с.; Лебедева Е., "Каменщики вне политики", "Московские новости", М., 1995, №56, 20-27 августа, с. 29; Холл М.П., Энциклопедическое изложение масонской, герметической, каббалистической и розенкрейцеровской символической философии, ВО Наука, Сибирская издательская фирма, Новосибирск, 1993, 2-е изд., испр., 794 с.; Серков А.И., 250 лет масонства в России, Российская государственная библиотека, М., 1993, 88 с.; Колаш-ников В., "Вольные каменщики" строят единую Европу. Усилия ордена поддержки в администрации российского президента (Интервью с Великим мастером Объединённых Великих лож Германии Альфредом Коска), "Независимая газета", Москва, 2001, 5 октября; Платонов О.А., "Россия под властью масонов", "Русский вестник", М., 2000, 110 с.

¹⁶⁶ Лотарева Д., "Соколовская Т., "Тайные архивы русских масонов", "Вече", Москва, 2007, 478 с.

¹⁶⁷ Карпачев С., Масонская интеллигенция России конца XIX - начало XX века, Научное издание, Центр гуманитарного образования, М., 1998, 231 с., նույնի՝ "Масонство и масоны России XVIII - первой половины XIXвв.". Краткий очерк истории (Вопросы отечеств. истории: Межвуз. сб. научн. тр., отв. ред. А.В. Ушаков), МГОПУ, М., 1996, с. 11-27, նույնի՝ "Российское масонство XVIII - XX веков", Ред.-издательский центр "Альфа", М., 2000, 70 с.

¹⁶⁸ Масоны в России: Вчера... Сегодня... Завтра?... Сб. научных тр., Ред. А.А. Королёв, Институт молодёжи, М., 1999, 158 с.; Российское масонство. 1800-1861, АКД, МГУ, М., 1991, 18 с.

կարծրատիպերը. **Ա. Գրիբոյեդովն այլևս չի ներկայացվում որպես հեղափոխական դեկաբրիստ:** Ռուսաստանի պատմության մի շարք արդի դասագրքերում՝ նախատեսված բուհերի համար, Ա. Գրիբոյեդովը հիշատակվում է միայն «Մշակույթ» բաժնի՝ XIX դարի առաջին կեսի «Գրականություն» կամ «Թատրոն» ենթաբաժիններում:

Վ. Տյուկավկինի խմբագրությամբ լույս տեսած դասագրքում¹⁶⁹ հետագոտող **Ն.Ա. Պրոսկուրյակովան** գրում է. «XIX դարի առաջին քառորդում սկսվում է ռուսական վոդևիլի պատմությունը, որը զարգանում էր՝ սկսած ֆրանսիական նմուշների ձևափոխումներից ու նմանակումներից դեպի յուրօրինակ ու վառ ստեղծագործությունների արարումը: Այդ ժանրի հանրահայտ լինելու մասին է վկայում առավել հայտնի վոդևիլային հեղինակների շրջանակը (Խմելնիցկի, Շախտսկի, Գրիբոյեդով, Վյազենսկի)»: **Ուշագրավ է, բայց Ա. Գրիբոյեդովի անունը չի հիշատակվում աշխատության «Գրականություն» ենթաբաժնում, «Խելքից պատուհաս»-ի մասին ոչ մի խոսք չկա ոչ «Գրականություն» և ոչ էլ «Թատրոն» ենթաբաժիններում:**

Մեկ այլ հեղինակ՝ **Ա.Ա. Գանիլովը**, խոսելով դեկաբրիստական շարժման մասին, Ա. Գրիբոյեդովին հիշատակում է միայն հետևյալ դրվագում. «Նշանակալից է նաև նրանց (դեկաբրիստների – Վ.Ս.) ավանդյալ առաջավոր ռուսական մշակույթի զարգացման մեջ՝ դրսևորված մասնավորապես Ա.Ս. Պուշկինի, Ա.Ս. Գրիբոյեդովի, Պ.Ա. Վյազենսկու և այլոց ստեղծագործություններում»¹⁷⁰: XIX դարի I-ին կեսի ռուսական մշակույթի մասին խոսելիս Ա. Դանիլովն Ա. Գրիբոյեդովին հիշատակում է հետևյալ կերպ. «...Դրամատուրգներից առավել ժողովրդականություն էին վայելում Ալեքսանդր Սերգենիչ Գրիբոյեդովը (1790-1829 թթ.) (ծննդյան թիվը տալիս է 1790-ով – Վ.Ս.), Ն.Վ. Գոգոլը և սկսնակ Ա.Ն. Օստրովսկին, ովքեր թատերական արվեստում հաստատեցին ռեալիստական ավանդույթները...»¹⁷¹:

Հետխորհրդային ժամանակակից ռուսական «գրիբոյեդովագիտության» վերանայված տեսակետների նոր մոտեցում կարելի է համարել **Ն. Զուբկովի հողվածը**¹⁷²: Այն նվիրված է Ա. Գրիբոյեդովին և «Խելքից

պատուհաս»-ին: Անդրադառնալով «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» հարցին և նշելով նրա ձեռքարկության և արդարացման հանգամանքները՝ Ն. Զուբկովը գրում է. «Նրա դեմ, իսկապես, լուրջ փաստեր չկային: Հիմա էլ վավերագրական փաստեր չկան, թե գրողն ինչ-որ կերպ մասնակցել է գաղտնի ընկերությունների գործունեությանը: Ընդհակառակը, նրան են վերագրում խոտվության նկատմամբ արհամարհական բնութագիրը, թե «հարյուր պրապորշչիկներ ցանկանում են շոտ տալ Ռուսաստանը»: Բայց հնարավոր է, որ այդպիսի ամբողջական արդարացման համար նա պարտական է իր բարեկամ և Նիկոլայ I-ի սիրելի գեներալ Ի.Ֆ. Պասկևիչի միջամտությանը»¹⁷³:

Ն. Զուբկովը հետաքրքիր մոտեցումներ ունի նաև Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող մի շարք վիճելի դրվագների հարցում: Այսպես, նրա ծննդյան թիվը նշվում է 1790 կամ 1795 թթ., իսկ Մոսկվայի համալսարանում ուսանելու վերաբերյալ Ն. Զուբկովը գրում է. «...Վավերագրերով չի ապացուցվել լայնորեն տարածված այն վարկածը, ըստ որի Գրիբոյեդովն ավարտել է Մոսկվայի համալսարանի միանգամից երեք ֆակուլտետ և դոկտորի աստիճան չի ստացել միայն 1812թ. պատերազմի պատճառով»¹⁷⁴:

Հետխորհրդային հեղինակներ **Ն.Լ. Կլիմենկոն, Վ.Գ. Կոչկիդկոն, Ս.Վ. Պրոնկինը, Ա.Վ. Սիդորովը, Կ.Ա. Սոլովյովն** իրենց հեղինակած բուհական դասագրքում¹⁷⁵, խոսելով ռուսական գրականության մեջ քննադատական ռեալիզմի մասին, գրում են. «Աստիճանաբար որպես հիմնական (ուղղություն – Վ.Ս.) 1830-40-ական թթ. հաստատվում է քննադատական ռեալիզմի հոսանքը, որի հետ են կապված գրական բարձունքների Ոսկեդարի գագաթները: Այս հոսանքի ծաղկումը կապված է Ա.Ս. Գրիբոյեդովի, Ա.Ս. Պուշկինի, Մ.Յու. Լերմոնտովի, Ն.Վ. Գոգոլի, Ն.Ա. Նեկրասովի... նման հզոր անունների հետ...»¹⁷⁶: Այս աշխատության մեջ ևս հիշատակություն չկա դեկաբրիստական շարժման Ա. Գրիբոյեդովի մասնակցության մասին:

Նման մոտեցում է ցուցաբերված նաև **Ս.Ֆ. Պլատոնովի** հեղինակած աշխատության մեջ¹⁷⁷:

Արդի ռուս հետազոտողների մեկ այլ խումբ՝ **Ա.Ս. Օռլովը,**

169 История России. XIX век, В двух частях, ч. 1. Под ред. В.Г. Тюкавкина, Гуманитарный изд-ий центр Владос, М., 2001, с. 215.

170 Данилов А.А., История России с древнейших времён до наших дней в вопросах и ответах, "Проспект", М., 2004, с. 115.

171 Նույն տեղում՝ էջ 140:

172 Энциклопедия для детей (Русская литература), От былины и летописей до классики XIX века, Аванта, Москва, 2004, том 9, Часть первая, с. 430-441.

173 Энциклопедия для детей (Русская литература), От былины и летописей до классики XIX века, էջ 441:

174 Նույն տեղում՝ էջ 439:

175 История России с древнейших времён до наших дней, "Проект", Под ред. Сидорова А.В., М., 2007, с. 280.

176 Նույն տեղում՝ էջ 178-181:

177 Платонов С.Ф., Полный курс лекций по русской истории, ООО, "Фирма СТД", Москва, 2005, с. 734-743.

Վ.Ա. Գեորգիևը, Ն.Գ. Գեորգիևան և Տ.Ա. Միվոյսիան իրենց հետազոտության¹⁷⁸ մեջ **ևս անդրադարձ կամ ակնարկ չեն կատարում դեկաբրիստական շարժմանը Ա. Գրիբոյեդովի մասնակցության մասին:** Խոսելով Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկերներ Ֆ. Բուլգարինի և Ն.Ա. Գրեչի «պաշտոնական ժողովրդայնության» և այլ գաղափարների մասին՝ Ն. Գեորգիևան և Վ. Գեորգիևը հիշատակություն չեն կատարում նաև Ա. Գրիբոյեդովի գաղափարների և հայացքների մասին: Հիշյալ հեղինակները, դրա հետ մեկտեղ, չեն մեկնաբանում, թե առաջադեմ հայացքների տեր Ա. Գրիբոյեդովն ի՞նչ ընդհանուր գաղափարներ կարող էր ունենալ պահպանողական Բուլգարինի և Գրեչի հետ:

Դեկաբրիստների հետ գաղափարական ընդհանրությունների և նրանց շարժմանը Ա. Գրիբոյեդովի մասնակցության մասին ակնարկ չեն կատարում հիշյալ Վ.Գ. Տյուկավկինը¹⁷⁹ և **Օ.Ա. Ֆրանցուզովան**¹⁸⁰: «Ռուսական դրամատուրգիայի դասականը,- գրում է Օ. Ֆրանցուզովան,- դարձավ Ա. Գրիբոյեդովը: Նրա «Խելքից պատուհաս» կոմեդիան ճանաչում բերեց նրան, բայց 1822-1823թթ. այն արգելվեց գրաքննության կողմից: Այդ ստեղծագործությունը ռեալիզմի առաջին օրինակներից մեկը դարձավ ռուսական դրամատուրգիայի մեջ...»¹⁸¹:

Մեզ հետարբերող հարցի շուրջ հետխորհրդային ռուսական պաշտոնական պատմագիտության խտացված մոտեցումը փորձենք ցույց տալ և ավարտել հետազոտող **Լ.Մ. Լյաշենկոյի** արտահայտած բավականին դիպուկ հետևյալ բնորոշմամբ. «Ալեքսանդր Ի-ի հանդեպ կրթված հասարակության հիասթափությունը և հատկապես նիկոլայևյան վարչակարգի չուզումն ծանրությունը հասցնում են նրան, որ երկրի մշակույթը սկսում է զարգանալ Ֆ.Մ. Դոստոևսկու խոսքերով ասած՝ «Նա իսկական պոետ է և սիրում է Ռուսաստանը, բայց նաև ժխտում է նրան լիովին» կարգախոսով: «Միրոց ծնված ժխտումը» սովորաբար կապում են Ռուսաստանում «իրապաշտականության» (ռեալիզմի – Վ.Ս.) իշխող դառնալու հետ: Այն իր վրա է վերցնում կյանքի հանդեպ պատասխանատվությունը՝ պարտավորվելով բացահայտել նրա երկվությունը (դուալիզմը – Վ.Ս.): Իրապաշտի համար բարդությունն այն է, որ «իրապաշտականությունը» հաճախ հանդես է գալիս

178 История России, Орлов А.С., Георгиев В.А., Георгиева Н.Г., Сивохина Т.А., Изд-е третье, переработанное и дополненное, МГУ им. М. Ломоносова, "Проспект", Москва, 2006, с. 224-236.

179 История России. XIX век, Изд. центр Владос, Под ред. Токавкина В.Г., 2-й изд., 2003, էջ 80-93:

180 Французова О.А., Ф. 84, История России в вопросах и ответах: учебное пособие, ТК Велби, Кно Рус, М., 2005, с. 116-119.

181 Նույն տեղում՝ էջ 129:

իր ճշմարտությամբ ("unicat" -ով), ինչպես հավերժություն կամ հոգևոր արժեք, ինչպես «մարմնեղեն» իրականություն կամ «մարտը» մտքերի և զգացմունքների իրականություն... «Իրապաշտականությունն» ըստ երևույթին անհատնում է, բայց այն դաժանորեն վրեժ է լուծում նրանցից, ովքեր փորձում են մշակույթը ծառայեցնել անհատին, խավին կամ դասակարգին: Միրելի հայրենիքի, ավելի ճիշտ՝ նրա կարգերի ժխտումը սկսվեց Ա.Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ով, շարունակվեց Ն.Վ. Գոգոլի «Ռևիզոր»-ով և «Մեռած հոգիներ»-ով... Այս և ընդհանրապես բոլոր կանոններից բացառություն է Ա.Ս. Պուշկինը, որը երիտասարդ հասակում կոպում էր ցարի հետ, հասուն տարիքում միապետի վրա նայում էր ինչպես հավասարին: Դրա պատճառը ոչ թե իր մեծության շուրջ մոլուցքն էր, այլ, պարզապես, պոետն ու երկիրը դարձել էին մի ամբողջություն»¹⁸²:

Այսպիսին են հրապարակված աշխատություններում Ա. Գրիբոյեդովի մասին հիշատակումները, ինչից կարելի է եզրակացնել, որ **հետխորհրդային ռուսական պատմագիտության մեջ նա մեծամասամբ ձեռքբազատվել է խորհրդային տարիներին արհեստականորեն ձևավորված դեկաբրիստ-հեղափոխականի կարծրատիպից՝ իր տեղը գտնելով XIX դարի առաջին կեսի ռուս գրականության դասականների, ավելի ստույգ՝ ռուսական թատերգության մեջ որպես իրապաշտական (ռեալիստական) ուղղության հիմնադիրներից մեկը:**

Ասվածը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

1. **Մինչխորհրդային գրականագիտական և պատմագիտական նյութերի կուտակման և վերլուծությունների փուլում դեկաբրիստների հետ Ա. Գրիբոյեդովի կապին թեև տրվել է դրական գնահատական, սակայն նրա կյանքի ու ստեղծագործության մեջ այդ կապն առաջնային չի դիտվել: Ա. Գրիբոյեդովի հանդեպ այս փուլում վերաբերմունքն ավելի շատ գրողի էր, քան հասարակական-քաղաքական գործչի:**
2. **Նույնիսկ նրանք, ովքեր Ա. Գրիբոյեդովի և իր հերոսի միջև նմանություններ են տեսել՝ Չացկուն դեկաբրիստ համարելով, զերծ են մնացել հեղինակին նույնպես այդպիսին համարելուց: Դրա պատճառն այն է, որ ուսումնասիրողների կարծիքով XIX դարի առաջին քառորդի ռուս հասարակությունը չէր բաժանվում միայն դեկաբրիստների և նրանց հակառակորդների. այն ավելի**

182 История России с древнейших времён до конца XX века, "Высшее образование", "Дрофа", М., 2001, с. 220-221.

լայն ընդգրկում ունենալու և բազմաշերտ էր: Նրանց համար գրողն ավելի բարձր էր, քան նեղ խմբային կամ կուսակցական գործիչը և Չացկուն դեկաբրիստ դարձնելով, նրանց մտքով չէր էլ անցնում այդպիսին դարձնել նաև Գրիբոյեդովին, քանի որ դրանից կտուժեր հենց վերջինս, առավել ևս, որ դա ապացուցող փաստեր չեն եղել նրանց տրամադրության տակ:

3. Ա. Գրիբոյեդովին ու «Խելքից պատուհաս»-ը պատմական տեսանկյունից դիտարկողների համար ամենևին էլ կարևոր չի եղել, թե Գրիբոյեդովը դեկաբրիստ էր, թե՛ ոչ, քանի որ նրանց ժամանակաշրջանի պատկերացումներն առաջադեմ մարդկանց մասին ամենևին էլ չէին սահմանափակվում դեկաբրիստական շարժմամբ: Հակառակ դեպքում՝ անհրաժեշտություն կառաջանար դեկաբրիստ համարել նաև Ա. Գրիբոյեդովի ժամանակակից առաջադեմ շատ այլ գրողների ևս, որոնց կողքին հիշատակվում է նրա անունը:
4. Ե. Վեյդենբաումի, Պ. Նչեգոլևի և հանդիպելու Ն. Պիկսանովի հրապարակումներում տեղ գտած պատմագիտական, գրականագիտական նյութերի համադրման և վերլուծության շնորհիվ է հետագայում ձևավորվել «գրիբոյեդովագիտություն» արհեստածին ուղղությունը. ընդհանուր թեմայից անջատվել և մանրամասն վերլուծվել են առանձին ենթաթեմաներ, կատարվել են Ա. Գրիբոյեդովի ստեղծագործությունների քաղաքականացման փորձեր:
5. Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության ուսումնասիրման խորհրդային փուլն աչքի է ընկնում կարևոր առանձնահատկությամբ. նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ այս փուլում են ձևավորվել նախկինում հիմք դրված քաղաքականացման «գիտական հիմնավորումները»: Այս ժամանակաշրջանի մարքս-լենինյան գաղափարախոսությունը չէր կարող բավարարվել նրանով, որ ռուս գրականության դասականները հանդես գան միայն որպես իրենց ժամանակի առաջադեմ մտածողներ. այժմ նրանք անպայմանորեն պետք է ներկայացվեին որպես իշխող կարգերի հետ հակասության և, որն ամենակարևորն է, դրանց դեմ պայքարի մեջ եղած առաջամարտիկներ: Դա հնարավորություն է տվել դասակար-

գային պայքարի «տրամաբանական» շրջանակներում նրանց դարձնել համախոհներ, յուրայիններ:

6. Երբեմն հանդես են եկել այս ամենի դեմ բողոքող հետազոտողներ, սակայն համընդհանուր պարտադրված միակարծիքության պայմաններում նրանք արժանացել են լուրջ քննադատության, ընդհուպ՝ հանիրավի պիտակավորումների: Իրավիճակը սկըսում է շտկվել խորհրդային կարգերի փլուզումից հետո. Ա. Գրիբոյեդովի անունն այլևս չի կապվում դեկաբրիստական շարժման անդամակցելու հարցերի հետ:

2. Հասարակական-քաղաքական հոսանքները Ռուսաստանում XIX դարի առաջին քառորդին և դրանց նպատակներն ու գործունեությունը

Նախքան Ա. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական հայացքների քննարկումը, հարկ է ներկայացնել քաղաքական այն միջավայրը, որում ձևավորվել է նրա աշխարհայացքը: Կփորձենք որոշակիորեն ծավալվել հատկապես մասոնական և դեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների վերաբերյալ հայտնի փաստերի շուրջ, որպեսզի կարելի լինի առավել հնարավորինս վերաարժեքել «Գրիբոյեդով-դեկաբրիստներ» առնչությունների հարցերը:

Ռուսաստանում հասարակական-քաղաքական հոսանքների առաջացման համար կային որոշ նախապայմաններ. XVIII դարում Եվրոպայում առաջացել էին ուսմունքներ, որոնք, *ելնելով մարդու բնական իրավունքի տեսության դրույթներից, նպատակ էին դրել հասնել նոր աշխարհակարգի հաստատմանը և, հենվելով նոր առաջացող բուրժուական (ապրանքադրամական) տնտեսական հարաբերությունների վրա, ապացուցում էին քաղաքական կառավարման բացարձակ միապետական ձևի հնացած լինելը*: XIX դարի առաջին քառորդին այս ուսմունքներից շատերը տարածում են գտնում Ռուսաստանում և, ըստ էության, հասարակական-քաղաքական հոսանքների առաջացման հիմք հանդիսանում: *XIX դարի առաջին քառորդին Ռուսաստանում հասարակության բոլոր խավերը զգում էին փոփոխությունների կարիք*:

Համառոտ անդրադառնանք Ռուսաստանում առաջացած մասոնական կազմակերպություններին: XIX առաջին քառորդին դրանք երկրում գրեթե ազատ գործելու հնարավորություն էին ստացել, և այդ ժամանակաշրջանի *ռուս պետական, հասարակական-քաղաքական ու մշակութային շատ գործիչներ, այդ թվում նաև Ա. Գրիբոյեդովը, անդամակցել են դրանց*: Մասոններն իրենց ակունքները հասցնում էին մինչև աստվածաշնչյան Ադամ, որին համարում էին առաջին մասոն-

որմնադիր՝ նկատի ունենալով այն, որ նա է եղել երկրի վրա առաջին շինարարը¹:

Արժե նաև խիստ համառոտ ներկայացնել ռուսական մասոնության նախապատմությունը, քանի որ մասոնական կազմակերպություններն իրենց գործունեությունը սկսել են նախքան հասարակական-քաղաքական հոսանքների առաջացումը:

Ըստ ավանդության՝ ռուսական մասոնության մեջ, որպես այդպիսին առաջինը համարվել է *Պյոտր Մեծը (1682-1725թթ)*, որը մասոնականությանն իբր անդամակցել է XVII դարի վերջին, Մեծ դեսպանության հետ միասին Եվրոպայում գտնվելու ընթացքում (— Վ.Ս.): Հետագայում Եվրոպական երկրների նման Ռուսաստանում մասոնական կարգ (Орден) է հիմնել *Լեֆորտը*՝ որպես Մեծարգո վարպետ: Պնդում է արվել, թե այդ օթյակի Առաջին վերակացուն (Первый надзираетель) եղել է *Գորդոնը*, իսկ Պյոտր Մեծն իբր բավարարվել է միայն Երկրորդ վերակացուի կոչումով²: Ասվածը, սակայն, չի հաստատվում գրավոր աղբյուրներով: Վավերագրերով ամրագրված՝ ռուսական մասոնականության պատմությունը սկսվում է 1731 թվականից, իսկ 1747թ. տեղի է ունեցել կառավարական մակարդակով առաջին հետաքննությունը, որի ժամանակ *Ելիզավետա Պետրովնա* կայսրուհու (1741-1761) հրամանով *Ա.Ի. Շուվալովը* հարցաքննել է արտասահմանից

1 Карпачев Сергей, Тайны масонских орденов, Ритуалы Вольных Каменщиков, "Яуза-пресс", Москва, 2007, с. 9, տես նաև նույնի՝ Масыны. Словарь. Великое искусство каменщиков, АСТ. Олимп, Москва, 2008, էջ 254-258, որոնցում հեղինակը մասոնության նախապատմությունը բացատրում է հետևյալ կերպ. որպես երկրի վրա առաջին որմնադիր (քարագործ) շինարար՝ մասոնները համարում են Ադամին: Իրենց սկիզբը նրանք կապում են եգիպտական բուրգերի շինարարության, եգիպտական քրմերի գաղտնի խորհուրդների, Սողոմոնի տաճարի կառուցման, աստվածաշնչյան վարպետ Խիրամի, Թավոտի և Կարալայի ուսմունքների, հնագույն մոզոյան, միջնադարյան ալքիմիայի և այլ երևույթների հետ: Համառոտ է պահպանվում է լեյզենը «Ազատ որմնադիրների եղբայրության» և Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկի կողմից 1314թ. որջակիված միջնադարյան ասպետական Տաճարական միաբանության (Տամալիերների) մազիստրոս ժակ դե Մոլեի պատգամների և այդ միաբանության հետ սերտորեն կապված լինելու մասին: Իրականում մասոնության արմատները հասնում են մինչև XVII դարի միջնադարյան արհեստավոր-շինարարների եղբայրությունները և եվրոպական ամենագլուխների (ինտելեկտուալների) գաղափարական որոնումները: XIV դարի անգլիական վավերագրերում հայտնվում է «Ֆրանկմասոն» (ազատ որմնադիր) տերմինը, որն ավանդությունը կապում է փափուկ հանքանյութ հանդիսացող «ազատ» քարերի (օրինակ՝ մարմարի, կրաքարի) հետ, որոնք, ի տարբերություն մնացած քարերի, օգտագործվում էին ավելի նուրբ և գեղարվեստական աշխատանքների համար: Այս տերմինը սկզբնապես մասոնանշում էր առավել որակավորված աշխատողներին, իսկ ֆրանսիական ավանդությունը «ազատ» («вольный», «свободный») հասկացությունը կապում է ֆեոդալական Եվրոպայով մեկ շինարար-արհեստավորների ազատ տեղաշարժվելու հնարավորության հետ: Մասոնության մեջ խիստ ամուր է պահպանվել միջնադարյան շինարարական եղբայրությունների ծեսերը, որոնք արտահայտվում են Միաբանության որոշակի գաղտնիության մեջ: Միաբանության (Օրդենի) սկզբնական կառուցվածքային միավորը օթյակն է, որը ղեկավարում են Ավագ վարպետը և երկու վերակացուները:

2 Карпачев С., Тайны масонских орденов, նշվ. աշխ., էջ 29.

վերադարձած կոմս **Նիկոլայ Գոլովինին**³ պարզելու համար, թե ինչ են իրենցից ներկայացնում մասոնական կանոնադրությունները, և ովքեր են Ռուսաստանում մասոնական միաբանության անդամներ³:

XVIII դ. ռուսական պետական գործիչներից որպես մասոններ հիշատակվում են **Ն. Գոլովինը, Չախար և Իվան Չեռնիշև եղբայրները, Մ. Օլտուֆնը, Ռ.Ի. Վորոնցովը, Ա.Պ. Սումարոկովը, իշխաններ Գոլիցկիները, Մ. Գաշկովը, Մ. Շչերբատովը, Ս. Տրոբեցկոյը, Ս. Մեչերսկին** (Միխայիլ Օլտուֆնից սկսած բոլոր թվարկվածները նույն մասոնական օթյակի անդամներ էին), **Ի.Ի. Շուվալովը, Ա.Վ. Սուվորովը, Ա.Բ. Կուրակինը** և այլք: XVIII դ. առավել հայտնի մասոն գործիչներից, ովքեր նաև Ռուսաստանում մասոնականության տարածողներ են եղել, կարելի է հիշատակել **Թեոդոր-Հենրիխ Չուդիին, Մելիսինոյին, Ի.Պ. Ելագինին, բարոն Պ.Բ. Ռեյխելին, Ն.Պ. Տուրգենին, Ն.Ի. Նովիկովին, Ի.Վ. Լոպուխինին, Ի.Պ. Տուրգենին, Շվարցին** և այլոց:

Ռուսական մասոնական օթյակների առաջին միությունները սկըսել են ձևավորվել XVIII դարի 70-ական թվականներից: Դրանցից էին, այսպես կոչված, *“Первый Елагинский союз”* («**Ելագինյան առաջին միություն**» - **Վ.Ս.**), *“Рейхельский союз”* («**Ռեյխելյան միություն**» - **Վ.Ս.**) օթյակները, որոնք 1776թ. միավորվել էին գերմանա-շվեդական միստիկական հիմունքներով: Այն գոյատևել է մինչև 1780թ. և ինքնալուծարվել: 1786թ. Ի.Պ. Ելագինը հիմնել է *“Второй Елагинский союз”* («**Ելագինյան երկրորդ միություն**» - **Վ.Ս.**) օթյակը:

Ֆրանսիական մասոնականության ներթափանցումը Ռուսաստան սկսվել է **XVIII դարի 50-ական թվականներից և կապված է եղել Թեոդոր-Հենրիխ Չուդիի անվան հետ**: Ռուսաստանում շվեդական ասպետական մասոնության հիմնադիրն ու տարածողը եղել է իշխան **Ա.Բ. Կուրակինը**: Այսպիսով, XVIII դարում Ռուսաստան են մուտք գործել Եվրոպայում գոյություն ունեցող մասոնականության բոլոր հիմնական՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական, շվեդական, շոտլանդական, ուղղությունները: Ըստ ժամանակակից հետազոտությունների՝ մասոնականության սոցիալական կազմը հետևյալն էր. նրանց կեսից ավելին զինվորականներ էին (պորուչիկից մինչև գեներալ-պորուչիկ), մի մասը՝ քաղաքացիական պաշտոնյաներ (արձանագրողներից մինչև սենատոր),

3 Лотарева Д., “Соколовская Т. Тайные архивы русских масонов”, ևշվ. աշխ., էջ 11 (Ս. Կարպաչովը նշում է Գոլովինի ազգանունը - էջ 29).

մյուս մասն էլ պալատականներ էին (կամեր-յունկերից մինչև ավագ արարողապետ): Նրանք կազմում էին եղբայրների մեկ քառորդը, իսկ մեկ քառորդն էլ, այսպես կոչված, ազատ մասնագիտության տեր մարդիկ էին՝ նկարիչներ, երաժիշտներ, ուսուցիչներ և այլն:

Ռուսական մասոնական օթյակներում արտասահմանցիներ գրեթե չկային. նրանք միավորված էին իրենց հիմնական օթյակներում: Օրինակ, Մոսկվայում գործում էր **Օտարերկրացիների Միությունը**, որի կեսից ավելին ֆրանսիացիներ էին, մեկ քառորդը՝ գերմանացիներ, մնացածը՝ շվեդներ, շվեցարացիներ, հոլանդացիներ, անգլիացիներ և այլն: Մրանց 60%-ը առևտրականներ ու արդյունաբերողներ էին, մնացածը՝ զինվորականներ, դաստիարակներ, ուսուցիչներ, նկարիչներ և պաշտոնյաներ: XVIII դարում միայն Մոսկվայում հայտնի էր մասոնական 27 օթյակների գործունեության մասին:

Ռուսական իշխանությունների վերաբերմունքը մասոնության հանդեպ ունեցել է հետևյալ դրսևորումները. **Ելիզավետա Պետրովնա կայսրուհու օրոք մոտեցումը զգուշավոր էր ու հետաքրքրասիրական (նա վերահսկում, բայց չէր խառնվում նրանց գործունեությանը)**, Պյոտր III-ի ժամանակ (1761-1762թթ.)՝ **դրական էր, քանի որ, ամենայն հավանականությամբ, նա ինքն էլ մասոն էր**: Եկատերինա II Մեծի (1762-1796թթ.) **օրոք վերաբերմունքը սկզբում բարյացակամ, հետո ծաղրական էր (նա նույնիսկ մի քանի երգիծական, հակամասոնական ստեղծագործություններ է գրել)**, իսկ **կատարման վերջին շրջանում վերաբերմունքը խիստ բացասական էր**: **Եկատերինա II-ը, 1792թ. ջախջախելով ռոզենկրեյցերների մասոնական օթյակը, արգելում է մասոնական օթյակների գործունեությունը Ռուսաստանում**⁴: Ըստ ռուսական պատմագիտության՝ դրա հիմնական պատճառը Եկատերինա II-ի դժգոհությունն էր գահաժառանգ Պավելի հանդեպ մասոնների, մասնավորապես **Ն.Ի. Նովիկովի** գլխավորած օթյակի ցուցաբերած հետաքրքրությունների ու Պավելի հետ կապեր հաստատելու ձգտման համար⁵:

4 Карпачев Сергей, Массоны, Словарь, ևշվ. աշխ., էջ 356 (Ռոզենկրեյցերականությունը միստիկական դատողության միաբանություն է, որն առաջացել է XIV-XV դդ.: Համաձայն վարկածներից մեկի՝ այն հիմնադրել է գերմանացի քափառող ապստո Քրիստիան Ռոզենկրեյցերը, որը 1378թ. այցելել է Շոկատասն և իբր տեղի գիտնականներից իմացել փիլիսոփայական բարի և կյանքի կլիստիկ գաղտնիքները: Ըստ մյուս վարկածի՝ միաբանությունը XVII դարում հիմնել է Հովհան Վալենտին Անդրեան, ով էլ հորինել է վերոհիշյալ լեգենդը: Միաբանությունը (նաև Ռուսաստանում) գոյություն ունի ցայսօր, ունի 10 աստիճան, իսկ վարդի և խաչի համադրումը (ռոզենկրեյցեր) խորհրդանշում է մարդ-Աստծուն, որն իբր գոյություն ունի յուրաքանչյուր մարդու մեջ:)

5 Карпачев Сергей, Тайны масонских орденов, ևշվ. աշխ., էջ 29-43:

Կայսր Պավել I-ը (1796-1801) իր կառավարման առաջին շրջանում, ի հեճուկս մորը՝ Եկատերինա II-ի, **խիստ բարյացակամ էր մասոնականության հանդեպ** և նույնիսկ ցանկացել էր թույլատրել նրանց գործունեությունը, սակայն **չպարզված պատճառներով 1799թ. ստորագրել է մասոնական կազմակերպությունների գործունեությունն արգելող հրամանագիրը**: Այսպիսի հակասականությունը բնորոշ էր **Պավել I-ի բռնկուն, անհավասարակշիռ բնավորությանը**⁶:

Մասոնականությունը Ռուսաստանում բավականին հետաքրքիր զարգացումներ է ունեցել XIXդ. I քառորդում: **Ալեքսանդր I-ը (1801-1825)** բավական երկար ժամանակ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել մասոնության հանդեպ: Դա թույլ է տվել մասոնական որոշ գրքերում, օրինակ, ֆրանսիացի մասոն **Թորիի՝ Փարիզում հրատարակած «Acta Latomorum» («Քարագործների գործողությունների օրագիր» (հաշվետվություն – Վ.Ս.))** երկհատորյակում Ալեքսանդր I-ին համարել մասոն, սակայն ցայսօր դա փաստացի ապացուցված չէ⁷: Փաստերով ապացուցված է, որ նրա եղբայր, **Մեծ իշխան Կոնստանտինը եղել է մասոնական «Соединёные друзья» («Միացյալ բարեկամներ» – Վ.Ս.)** և **«Александр к военной верности» («Ալեքսանդրը զինվորական հավատարմության հանդեպ» – Վ.Ս.) օթյակների անդամ**⁸: Ճիշտ է, Ալեքսանդր I-ը մասոնական օթյակների գործունեությունը թույլատրող ուղղակի հրամանագիր չի ստորագրել, սակայն նրա բարյացակամ վերաբերմունքն էլ բավական էր, որ նրա կառավարման տարիներին նրանց գործունեությունը զգալիորեն ակտիվանար Ռուսաստանում: Պետությունը նույնիսկ փորձել էր օգտվել և վերահսկողություն սահմանել մասոնական օթյակների գործունեության վրա՝ ցանկանալով վերահսկել հասարակական-քաղաքական միտքը և կանխել անցանկալի գաղափարների տարածումը երկրում: Այդ նպատակով **1810թ. ռուսիկանության գերատեսչության ղեկավար Ա. Բալաշովն իր մոտ է հրավիրում մասոնական չորս օթյակների բարձրաստիճան կառավարիչներին և ցարի անունից առաջարկում կամ անցնել պետության հովանու ներքո, կամ հաշվետու լինել պետությանը: Մասոններն ընդունում են երկրորդ տարբերակը: Մինևույն ժամանակ նրանց առաջարկվում է օթյակների կանոնադրությունների պետական նախագիծ, որին**

6 Лотарева Д., "Соколовская Т", ևշվ. աշխ., էջ 13-14:

7 Семевский В.И., Декабристы-масоны, "Минувшие годы", ևշվ. աշխ., էջ 15:

8 Карпачев Сергей, Масоны, Словарь, ևշվ. աշխ., էջ 222:

պետք է համապատասխանեցվեին բոլոր մասոնական կազմակերպությունների կանոնադրությունները⁹: **Նրանց առաջարկվում է նաև կանոնակարգել նոր մարդկանց անդամագրումը և խստագույնս զաղտնի պահել իրենց կապերը կառավարության հետ**: Այս վիճակը ձեռնառու էր երկու կողմերին. պետությունը որոշակի վերահսկողություն էր սահմանում մասոնական կազմակերպությունների գործունեության վրա, իսկ մասոնները քիչ թե շատ ազատ գործելու հնարավորություն էին ստանում: XIX դարի երկրորդ տասնամյակում որոշակի փոփոխություններ են տեղի ունենում նաև ռուսական մասոնության ներքին հարաբերություններում. **«Пётр к умному» («Պյոտրը ճշմարտության հանդեպ» – Վ.Ս.) օթյակի ղեկավար Ե.Ե. Լյլիզենը** հրաժարվում է ճանաչել մասոնության բարձր աստիճանները՝ որպես նպատակ հոչակելով ոչ թե կրոնը կամ բարոյականությունը (այսինքն՝ բարոյական լինելը կարևոր չէր – Վ.Ս.), այլ **դատողությունը**: Նրանք հրաժարվում են միստիցիզմից և վերադառնում անգլիական հին համակարգին: Վեճը հասնում է այնտեղ, որ հայտնի մասոն **կոմս Մուսին-Պուշկին-Բրյուսը և Բեբերը** դիմում են կառավարությանը, որ թույլատրվի օթյակները բաժանել 2 մասի. մեկը՝ Մուսին-Պուշկինի գլխավորությամբ չէր ճանաչելու բարձրագույն աստիճանները օթյակներում, իսկ մյուսը Բեբերի գլխավորությամբ շարունակելու էր ընդունել և ճանաչել բարձրագույն աստիճանները և միստիցիզմը¹⁰:

Շուտով Լյլիզենին և Մուսին-Պուշկինին միանում են «Нертуи» («Նեպտուն» – Վ.Ս.), «Изида» («Իսիդա» – Վ.Ս.) ու «Палестина» («Պաղեստին» – Վ.Ս.) օթյակները և 1815թ. հիմնում «Союз Астреи» («Աստրեայի միություն» – Վ.Ս.) Մեծ օթյակը (անունը վերցված է հունական դիցաբանության արդարության աստվածուհու անունից – Վ.Ս.): 1816թ. նրան են միանում «Соединённые друзья» («Միացյալ բարեկամներ» – Վ.Ս.) և «Три добродетели» («Երեք առաքինություններ» – Վ.Ս.) օթյակները, որոնց անդամ էին Պ.Յա. Չաադանը, Ա.Ս. Գրիբոյեդովը և ապագա շատ ղեկավարիատներ: 1822թ. «Աստրեայի միություն» օթյակի ենթակայության տակ (որը ղեկավարում էր վերոհիշյալ կոմս Մուսին-Պուշկին-Բրյուսը) գործում էր 20 օթյակ՝ 1403 անդամներով: Մասոնական մյուս միությունը ձևավորվում է **«Великая Провинциальная ложа»**

9 Семевский В.И., Декабристы-масоны, 1908, №2, ևշվ. աշխ., էջ 18-19:

10 Նույն տեղում՝ էջ 25:

«**Գավառական Մեծ օթյակ**» – **Վ.Ա.**)-ի շուրջ, որը նույնպես ղեկավարում էր հայտնի մասուն, **գեներալ-մայոր Ա. Ժերեբցովը**: 1822թ. տվյալներով այն իր հովանու տակ ուներ 7 արհեստանոց՝ 230 անդամներով¹¹: Գոյություն ունեին նաև վերոհիշյալ երկու միությունների կազմի մեջ չմտնող այլ օթյակներ (դրանք հիմնականում գործում էին Լեհաստանում և Մերձբալթիկայում):

Տարբեր ժամանակահատվածներում ղեկաբրիստական շարժման շատ ղեկավարներ ու մասնակիցներ եղել են մասոնական օթյակների անդամներ: Դրանց թիվը պատմագիտության տվյալներով հաշվվում է մոտ 50 մարդ: Նրանցից էին **Պ.Ի. Պեստելը (1812-1817թթ.)**, **Ա.Ն. Մուրավյովը (1811-1818թթ.)**, **նրա եղբայրներ Սատվեյն ու Իվանը (1816-1820թթ.)**, **Սերգեյ և Իվան Մուրավյով-Ապոստոլները (1817-1818թթ.)**, **Ն.Մ. Մուրավյովը (1817-1818թթ.)**, **Ս.Պ. Տրուբեցկոյը (1816-1819թթ.)**, **իշխան Ֆ.Պ. Շախովսկոյը (1817-ից)**, **Մ.Ֆ. Միտկովը (1816-1821թթ.)**, **Մ.Ա. Ֆոն-Վիգինը (1820թ.)**, **իշխան Ս.Գ. Վոլկոնսկին (1812-ից)**, **Մ.Ս. Լունինը և Ն. Բեստուժևը (1818-ից)**, **Վ. Կյուխելբեկեր և Մ. Կյուխելբեկեր եղբայրները (1818-22թթ.)**, **Գ.Ս. Բաաենկովը (1818-ից)**, **Ֆոն-դեր-Բրիգենը (1817թ-ից)**, **Ն.Ի. Տուրգենևը (1814-1817)**, **Կ.Ֆ. Ռիլենը (1820-1821թթ.)**, **Լորերը, Պ.Յա. Չաադանը (1816-1821թթ.)**, **իշխան Ի.Ա. Գոլգորուկին (1814-181թթ.)**, **Մ.Ն. Նովիկովը (1816-1819 թթ.)**, **Ֆ.Ն. Գլինկան (1816-ից)**, **իշխան Պ.Պ. Լոպուխինը (1817-ից)**, **կոմս Ֆ.Պ. Տոլստոյը (1818-ից)**, **գեներալ Պ.Ս. Պոլշինը (1818-ից)**, **Վ. Գլինկան (1818-ից)**, **Վ.Ֆ. Ռասսկին (1818-ից)**, **իշխան Պ. Տրուբեցկոյը (1818-ից) և այլք**¹²: Հետաքրքիր է, որ ղեկաբրիստ մասոնների զգալի մասն անդամակցել է երկու օթյակի: «**Միացյալ բարեկամներ**» օթյակի անդամներ են եղել **Պ. Պեստելը, Պ. Չաադանը, Ֆ. Շախովսկոյը, Մ. Միտկովը, Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլը, իշխան Ի. Գոլգորուկին և այլք**: Այդ նույն օթյակի անդամ են եղել նաև **Ա. Գրիբոյեդովը և ժանդարմների ապագա ղեկավար գեներալ-մայոր Ա. Բենկենդորֆը**¹³: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ մասոնական օթյակների անդամների կազմը բավական խայտաբղետ էր և ընդգրկում էր տարբեր հայացքների տեր ու տարբեր սոցիալական խավերի պատկանող մարդկանց:

«**Երեք առաքինություններ**» օթյակի անդամ են եղել **Ա.Ն. Մուրավ-**

11 Карпачев Сергей, Тайны масонских орденов..., նշվ. աշխ., էջ 47:
12 Семеновский В.И., Декабристы-масоны, նշվ. աշխ., 1908, № 5-6, էջ 379-380:
13 Նույն տեղում՝ 1908, № 3, էջ 137:

յովը, Ս.Ի. Մուրավյով Ապոստոլը, Ն.Մ. Մուրավյովը, Ս.Պ. Տրուբեցկոյը, Պ.Պ. Լոպուխինը (որը հետագայում գլխավորեց այս օթյակը), իշխան Ս. Գ. Վոլկոնսկին: Հետագայում այս օթյակին անդամակցում են նաև «Միացյալ բարեկամներ» օթյակի անդամներ Պ. Պեստելը, Ֆ. Շախովսկոյը, Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլը, իշխան Ի. Գոլգորուկին: «Երեք առաքինություններ» օթյակը հիմնադրվում է մոտավորապես ղեկաբրիստական առաջին՝ «Союз спасения» («Փրկության միություն» – Վ.Ա.) կազմակերպության հիմնադրման ժամանակ: Վերջինիս հիմնադիրներից շատերն այդ նույն ժամանակաշրջանում փաստորեն եղել են մասոններ: Այս հանգամանքը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ «Փրկության միության», հետագայում նաև՝ «Союз благоденствия» («Բարօրության միություն» – Վ.Ա.) կազմակերպության գործունեության վրա: Հայտնի է, որ վերը թվարկված անձինք այս «Միությունների» կառուցվածքում և ծրագրային որոշ դրույթներում ձգտել են ներմուծել և կիրառել մասոնության փորձը¹⁴: Այս հարցին դեռ կանդրադառնանք:

Մասոնության և ղեկաբրիստական կազմակերպությունների կապը կամ մասոնության ազդեցությունը դրանց վրա դեռ լուրջ ու բազմակողմանի հետազոտության կարիք ունի: Այս հարցը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից, և մեր անդրադարձը մասոնությանը նպատակ ունի հնարավորինս ներկայացնելու Ռուսաստանի XIXդ. I կեսի հասարակական-քաղաքական կյանքը, և ուսումնասիրության գլխավոր դեմքի՝ Ա. Գրիբոյեդովի անդամակցությունն այս օթյակներին, ինչպես նաև ղեկաբրիստական կազմակերպությունների հետ նրա հարաբերությունները: Հարկ է նշել նաև, որ իլյումինատ մասոնների և ղեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների նպատակների, դրանց հասնելու ձևերի ու միջոցների ընդհանրության վերաբերյալ ես լուրջ ուսումնասիրությունների կարիք կա:

1822թ. Ալեքսանդր I-ն արգելում է ընդհանրապես բոլոր տեսակի գաղտնի կազմակերպությունների, այդ թվում նաև մասոնական օթյակների գործունեությունը Ռուսաստանի ողջ տարածքում: Մակայն մինչ այդ պատմագիտությանը հայտնի են տարբեր մարդկանց անուններ, ովքեր կայսրից պահանջել են արգելել մասոնական օթյակների գործունեությունը՝ դրանք համարելով այլախոհության և

14 Семеновский В.И., Декабристы-масоны, նշվ. աշխ., 1908, № 3, էջ 137-146:

անհավատարմության տարածման օջախներ: Նախևառաջ դա պահանջել են ոչ մասոնները: Նրանցից մեկը, օրինակ, **գնդապետ բարոն Գիրիչն էր՝ Գլխավոր շտաբի պետ Ի. Գիրիչի եղբայրը**, որը 1816թ. փետրվարին Մեյսենից իր եղբորն ու **գեներալ-ֆելդմարշալ Բարկլայ-դե-Տոլլիին** հասցեագրված գաղտնի գրություններում ձգտում էր նրանց համոզել մասոնականության վտանգավորության մեջ:

Բարոն Գիրիչը չէր խրախուսում պետության կողմից գաղտնի ընկերությունների հանդեպ ցուցաբերած հանդուրժողականությունը. ընդհակառակը, փաստում էր, թե ինչպես են **Ֆրանսիայում, Վարշավայում, Պետերբուրգում գաղտնի ընկերությունների մեջ հավաքագրում ռուս սպաներին:** Նա անհարիր էր համարում ռուսական բանակի սպաների շրջանում այն ոգու և գաղափարների տարածումը, ինչն **առկա էր պրուսական արքունական գվարդիայի սպաների շրջանում:** Վերջիններս, ըստ նրա, բացեիքաց հայտարարում էին, որ թագավորներ հարկավոր չեն, իսկ համաշխարհային լուսավորությունը համառոտ են պահանջում է հանրապետական կարգերի հաստատում:

Գիրիչի վկայությամբ նմանատիպ հայտարարություններ նա լսել էր նաև **Բարկլայ-դե-Տոլլիի շրախմբի սպաների շրջանում**, ինչպես նաև նշում էր այն փաստը, որ գաղտնի միությունների անդամները ձգտում էին **իրենց շոշափուկները տարածել նաև կայսերական գվարդիայի ու գեներալական շտաբների մեջ:**

Առավել ուշագրավ է այն, որ մասոնականության վտանգների մասին կառավարությանը տեղեկացնում և **հալածական (ռեպրեսիվ) քայլերի էին դրդում** նաև ոչ միայն նախկին, այլև գործող մասոններից ոմանք: Նրանցից մեկը հայտնի մասոն, **“Умираюуаиъ Сфинкс” («Մեռնող Աֆինքս» – Վ.Ս.)** օթյակի ղեկավար **Ա.Ֆ. Լաբզինն էր**, որը 1816թ. մայիսի 28-ին լուսավորության գերատեսչության ղեկավար Ա.Ն. Գոլիցինին հասցեագրված նամակում դժգոհություն էր հայտնում մասոնական ավելացող օթյակների կապակցությամբ և առաջարկում էր խստացնել դրանց բացման գործընթացները, որպեսզի **դրանք չդառնան աթեիզմի բներ և չայլասերեն երիտասարդությանը:** Իր՝ 1821թ. մայիսի 12-24-ը հղած գեկուցագրերում Լեհական թագավորության տարածքում մասոնների գործունեությունը դադարեցնել էր առաջարկում նաև **Ն. Նովոսիլցը:** Արդյունքում՝ 1821թ. սեպտեմբերի 25-ին **մասոնականությունն արգելվում է Լեհաստանում:**

Ուշադրության են արժանի բարձրաստիճան մասոն, «Աստրեայի միություն» օթյակի Մեծ վարպետ, **գեներալ-լեյտենանտ և սենատոր Կուշելևի՝** ցարին հասցեագրած երկու նամակները, որոնցում նա Ալեքսանդր I-ին առաջարկում էր կամ վճռական միջոցներով մասոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորել կառավարության կողմից առաջարկված կանոնադրության նախագծով, կամ էլ աստիճանաբար դադարեցնել դրանց գործունեությունը: Հետաքրքիր է, որ **Կուշելևն իր նամակները ցարին փորձել է հանձնել անձամբ՝ վախենալով, որ դրանք կարող են բացվել Ալեքսանդրի շրջապատում եղած որևէ մասոնի կողմից, և նամակները ոչ միայն տեղ չէին հասնի, այլև, որպես երդմնազանցի, իր հետ կարող էին հաշվեհարդար տեսնել¹⁵:**

Գաղտնի կազմակերպություններն արգելելու մասին Ալեքսանդր I-ի հայտնի հրամանագրի հրապարակման գործում կարևոր դեր է խաղացել **Յուրևյան մենաստանի վանահայր Փոտիոսը (Փոտսն):**

Թե՛ Եվրոպայում և թե՛ Ռուսաստանում գործող մասոնական կազմակերպությունները XVIII դարում և XIXդ. առաջին քառորդին առաջնորդվում էին հայտնի մասոն, **քահանա և աստվածաբանության դոկտոր Ջեյմս Անդերսոնի կողմից 1721թ. կազմված և 1723թ. հրատարակված “Книга уставов” («Կանոնադրությունների գրքեր» – Վ.Ս.) աշխատությունով¹⁶:** Այս աշխատությունը բավականին հետաքրքիր է, քանի որ ցայսօր վայելում է մասոնների համակրանքը: Դրանում տեղ գտած շատ դրույթներ XVIII դարի Եվրոպայի համար բավականին առաջադիմական գաղափարներ էին պարունակում:

XVIII դարի վերջին և XIX դարի առաջին քառորդին Ռուսաստանում տարածված էր նաև **հերցոգ Ֆերդինանդ Բրաունշվեյգցու գլխավորությամբ 1782թ. Վիրլեյմսբադում տեղի ունեցած մասոնների կոնվենտի (ժողովի) հաստատած “Устав Вольных Каменщиков” («Ազատ Որմնադիրների Կանոնադրություն» – Վ.Ս.) ձեռնարկը**, որը, ռուսական մի ձեռագրի համաձայն, **1787թ. հաստատվել է Սանկտ-Պետերբուրգում¹⁷:** Գոյություն են ունեցել մասոնների գործունեությունը կարգավորող այլ կանոնադրություններ ևս:

Ուշագրավ են մասոնների հետապնդած գաղափարները: Այդ

15 Семевский В.И., Декабристы-масоны, ևշվ. աշխ., 1908, №2, էջ 26-50: Երդմնագրության դեկրետ մասունները կատարում էին հաշվեհարդար: Այս մասին տես նաև՝ Карпачев Сергей, Масоны, Словарь, ևշվ. աշխ., էջ 214:

16 Карпачев Сергей, Тайны масонских орденов..., ևշվ. աշխ., էջ 11:

17 Семевский В.И., Декабристы-масоны, ևշվ. աշխ., 1908, №2, էջ 7:

կանոնադրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ մասոնները կոսմոպոլիտներ էին, այսինքն՝ նրանց հայրենիքը ողջ տիեզերքն էր: Մասոնի համար բոլոր ռասսաներն ու ազգերը հավասար էին: Նրանք չպետք է ազգայնական կամ ռասսայական նախապաշարումներ ունենային: Ամեն ինչ հիմնված էր մերձավորի հանդեպ սիրո պատվիրանի վրա: Մասոնը պետք է ամեն քայլի դիմեր, որ հավասարություն լիներ օրենքի առաջ: Մասոնական օթյակներում սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող մարդիկ շփվում էին հավասարը հավասարի հետ, և գլխավորը ոչ թե պաշտոնն ու ծագումն էր, այլ եղբայրությունը: Մասոնությունը քարոզում էր նաև կրոնական հանդուրժողականություն կամ խղճի ազատություն: Մասոնական օթյակի անդամ կարող էր լինել նաև այլ դավանանքի տեր մարդը, չնայած որ դրա գաղափարախոսությունը հենվում էր քրիստոնեության վրա: Մասոնները կողմ էին նաև խոսքի ազատությանը՝ գտնելով, որ յուրաքանչյուր մարդ իր մտքերն ազատ արտահայտելու իրավունք ունի: Կազմակերպության ներսում արգելվում էին կրոնական, ազգայնական և այլ կարգի վեճերը, իսկ երբեմն առաջացող բոլոր կարգի վիճարանությունները լուծվում էին կազմակերպության ներսում, հատուկ սահմանված օրենքներով, և բոլորը պետք է ենթարկվեին ընդունված որոշմանը, քանի որ միանման երդում էին տվել մասոնական օթյակին անդամակցելիս¹⁸:

Հետաքրքիր է նաև իշխանությունների հանդեպ մասոնական կանոնադրություններում արտահայտված վերաբերմունքը. *մասոնի համար առաջին ու բարձր աստիճանին Աստվածն էր ու նրան տված երդումը: Հաջորդ աստիճանին միապետն էր՝ որպես Աստծո օրենքները երկրի վրա պահպանող և իրագործող: Այս առումով մասոնները պետք է հավատարիմ լինեին միապետին, ենթարկվեին նրա կամքին և չքննարկեին նրա կայացրած որոշումները:* Ցարի հանդեպ հավատարմության շուրջ պնդումները հատկապես երևում են XVIII դարի վերջի և XIX դարի առաջին քառորդի ռուսական մասոնների հրապարակումներում: *Այսպես, դրանցում կայսրերի կողմից մասոնության գործունեությունն արգելող հրամանների առնչությամբ մասոններն արգելքը բացատրում էին նրանով, որ տիրակալներին զցել էին թյուրիմացության մեջ:* Ռուսական մասոնների պահպանողականու-

18 Лотарева Д., "Соколовская Т.", ևշվ. աշխ., էջ 21-125:
82

թյունն առավել ցայտուն է արտահայտված «Աստրեայի միություն» օթյակի կանոնադրության մեջ, որում ասված է, որ *այն եղբայրը, որը իշխանությունների դեմ որևէ գործողության կամ դավադրության մասնակից դառնար, պետք է անհապաղ զրկվեր մասոնական բոլոր կոչումներից ու արտոնություններից և վտարվեր նրանց շարքերից* (տվյալ դեպքում խոսքը երդմնագանցության մասին է, որի դեպքում, հնարավոր է, որ տվյալ մարդը պետք է մահապատժի ենթարկվեր): *Սա հակասում էր անգլիական որմնադիր-քարագործների հին կանոնադրություններին, որոնցում ասվում էր, որ նման դեպքերում եղբայրը չպետք է վտարվեր կազմակերպությունից, այլ, ընդհակառակը, մյուս եղբայրները բոլոր ջանքերը պետք է գործադրեին, որ նրան համոզեին ու դարձի բերեին¹⁹:*

Ռուսաստանում մասոնների ծավալած գործունեությունը, համաձայն նրանց գաղափարների և *ըստ առկա փաստերի, հիմնականում հասարակական-քարեգործական էր:* Ռուսաստանում մասոնական օթյակների ծավալած հասարակական գործունեությունն առավել ակտիվ է եղել և մեծ չափերի հասել XVIII դարի երկրորդ կեսին: Այդ ժամանակաշրջանում նրանց շնորհիվ Ռուսաստանում բացվել են նոր հիվանդանոցներ, դեղատներ: Մոսկվայի մասոնների օգնությամբ բացվել է մանկավարժական ճեմարան, որտեղ ռազմաչինական ծագում ունեցող (արհեստավորների, առևտրականների, քաղթենիների) երեխաներից պատրաստում էին ուսուցիչներ: **Չ.Գ. Չեռնիշևի** նախաձեռնությամբ դարձյալ Մոսկվայում մասոնները բացել են առաջին հանրային գրադարանը, Մոսկվայի համալսարանում *նովիկովյան մասոնների* շնորհիվ 1771թ. հիմնվել է *“Вольное российское собрание”* («Ռուսաստանյան ազատ ժողով» – Վ.Ս.) առաջին գիտական ընկերությունը, իսկ 1781թ. Նվարցի ջանքերով ստեղծվել է *“Собрание университетских педомцев”* («Համալսարանական սաների ժողով» – Վ.Ս.) առաջին ուսանողական խմբակը:

1799 թվականին սկսվել և լայն չափերի է հասել սովյակներին տրվող օգնությունը: *Ռուսական մարտինիստ²⁰ մասոնների* գործունեության զազաթնակետ կարելի է համարել նրանց հիմնած տպարանը,

19 Семевский В.И., Декабристы - масоны, ևշվ. աշխ., 1908, №5-6, էջ 381-383:

20 Карпачев Сергей, Масоны, Словарь, ևշվ. աշխ., էջ 251 (Մարտինիզմը XVIII դարի ֆրանսիացի միտոսիկ Սեն-Մարտենի աստվածասիրական (теософская) համակարգ է, որի հետևորդների, մասնավորապես՝ Գոյուսի կողմից XIX դարի վերջում հիմնված մարտինիստների միաբանությունը Ֆրանսիայում գործում է ցայսօր: Այն հարաբերություններ ունի ոչ մշտական մասոնական ունկնդրությունների հետ):

որի գոյության ութ տարիների ընթացքում տպագրվել են 554 անուն գրքեր (դրանց մեծ մասը կրոնական-միստիկական բովանդակություն ունենին), այդ թվում նաև **ռուսական ողբերգություններ մասոններին թշնամի համարվող XVIII դարի Լուսավորականության գազաթներ Վոլտերի, Գիդրոյի, Ռուսսոյի աշխատությունները**²¹:

Չնայած այն հանգամանքին, որ XIX դարի առաջին քառորդին ռուսական մասոնական օթյակների թիվը աճում է, սակայն նրանց գործունեության մեջ ակտիվություն չի նկատվում:

Այսպիսով, ելնելով նրանց կանոնադրություններում արծարծված գաղափարներից, **եթե բնորոշելու լինենք մասոնականությունը, ապա այն ընդհանուր գծերով կարելի է համարել փիլիսոփայական-էթիկական և սոցիալ-հոգեբանական երևույթ, որն ընդգրկում կերպով գործում էր կրոնական-հասարակական ոլորտում, ուներ կազմակերպված բնույթ և իր անդամներին որոշակի բարոյա-էթիկական պահանջներ էր ներկայացնում**: Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող մասոնական փաստաթղթերում միշտ նշվում է, որ **նրանք չպետք է զբաղվեն քաղաքականությամբ և չպետք է հետապնդեն քաղաքական նպատակներ**: Սակայն այս վերջին հանգամանքը ցայսօր վիճարկվում է պատմագիտության մեջ: Մի փոքր շեղվելով՝ փաստենք, որ այդպիսի բանավեճ առաջացրած խնդիրներից արժե նշել համաշխարհային մեծ նշանակություն ունեցած 1789-1794թթ. Ֆրանսիական Մեծ հեղափոխությանը մասոնների հետագա մասնակցության և խաղացած դերի վերաբերյալ հարցը²²: Հայտնի է, որ **աբբատներ Լեֆրանկը և Բարրյուելն առաջինն էին, որ բարձրացրին ֆրանսիական հեղափոխության մեջ «ազատ որմնադիրների» խաղացած դերի հարցը, և որ նրանց գործերն էին հիմք դարձել հակամասոնական ուղղության ներկայացուցիչների և դրանց դեմ հանդես եկող «դասական» պատմագիտության ներկայացուցիչներ Ժ. Մունյեյի, Ա. Մատյեզի, Գ. Լիգույի և այլոց աշխատությունների հանդես գալու համար**²³: Վկայակոչելով ռուսական ազատամիտ (լիբերալ) պատմագիտության պատրիարքներից **Ն.Ի. Կիրենի տեսակետները՝ Ա. Չուդինովը** փաստում է, որ Ֆրանսիայում երրորդ հանրապետության տարիներին, երբ 1789

թվականի սկզբունքները դարձել էին պետական գաղափարախոսության անքակտելի մաս, **ֆրանսիական մասոնները պաշտոնապես իրենց հայտարարեցին XVIII դ. հեղափոխության նախածոնողներ, հոգևոր ոգեշնչողներ և ղեկավարներ**²⁴: Հայտնի մասոն Լ. Ամյարլը Ֆրանսիական 1789թ. հեղափոխության 100-ամյակի կապակցությամբ Փարիզում 1889թ. կայացած մասոնների Համաշխարհային վեհաժողովում հայտարարում է, որ **XVIII դարում ֆրանսիական ֆրանկմասոններն (ազատ որմնադիրները) են իրականացրել հեղափոխությունը**, և նրանց սկզբունքներն ամենին էլ հանկարծաստեղծագործություններ (իմպրովիզացիա) չէին: Համարյա նույն տեսակետներն է հայտնում մեկ այլ հայտնի մասոն **Ժ. Կոլֆավրյուն**²⁵:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ երկու հարյուր տարի ֆրանսիական հեղափոխության մեջ իրենց դերը կտրականապես ժխտող մասոնները ներկայումս փորձում են բացել իրենց խաղաքարտերը և ցույց տալ, որ իրենք դերակատարում են ունեցել այդ հեղափոխության մեջ: Ռուսաստանի պատմության համար այդպիսի վիճահարույց թեմաներից է մասոնության խաղացած դերը ղեկաբրիստական շարժման և ռուսական մյուս հեղափոխությունների մեջ:

Հասարակական հոսանքների առաջացման գործում Ռուսաստանում կարևոր դեր է խաղացել նաև **1812-1815թթ. Նապոլեոնի դեմ մղված պատերազմը**, ինչի հետևանքով **ռուս ազնվական սպաներն ու զինվորներն ականատես են եղել հասարակական-քաղաքական և տնտեսական ոլորտում եվրոպական երկրների ու ժողովուրդների նվաճումներին**: Ռուսաստանում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքները, կրելով եվրոպական և հատկապես ֆրանսիական լուսավորիչների հասարակական-քաղաքական մտքի ազդեցությունը, ունենին նաև առանձնահատկություններ: **Նախ՝ Ռուսաստանում չկային այն հիմքերը, որոնք Եվրոպայում ապահովում էին տարբեր հոսանքների գործունեությունն ու զարգացումը: Ռուսաստանը չունեւ ո՛չ ընտրովի քաղաքական մարմին (սորհրդարան), ո՛չ էլ ազատ խոսքի իրավունքը երաշխավորող օրենքներ: Երկրորդ՝ արգելված էր նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունների ստեղծումը: Այս վերջին հանգամանքը հաճախ հանգեցնում էր նրան, որ տարբեր**

21 Карпачев Сергей, Тайны масонских орденов..., նշվ. աշխ., էջ 42:

22 Чудинов А.В., "Масоны и французская революция XVIIIв.: Дискуссия длиною в два столетия", "Новая и новейшая история", Изд-во РАН, Москва, 1999, №1, с. 45-69.

23 Նույն տեղում՝ էջ 47:

24 Чудинов А.В., "Масоны и французская революция XVIIIв...", նշվ. աշխ., էջ 53:

25 Նույն տեղում:

հայացքների տեր մարդիկ ակամա հայտնվում էին մինևույն միավորման մեջ (գրական խմբակներ, սպայական ընկերություններ, մասոնական օթյակներ և այլն):

XIX դարի առաջին քառորդին Ռուսաստանում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքները բաժանվում էին երեք ուղղությունների՝ *պահպանողականներ, ազատամտականներ (լիբերալներ) և արմատականներ*²⁶:

Պահպանողականների գաղափարներն առավել արտահայտչներկայացնում է ռուս անվանի գրող և պատմաբան **Ն.Մ. Կարամզինը**: Լինելով ֆրանսիական հեղափոխության առաջին օրերի ակնատես՝ նա ընդհանուր առմամբ դրական է վերաբերվում դրան, սակայն դեպքերի հետագա ընթացքը նրան ստիպում են այլ մոտեցումներ ցուցաբերել: Ն. Կարամզինը գտնում է, որ մարդու և ժողովուրդների զարգացման պատմությունը բաժանվում է *ֆիզիկական և հոգևոր մասերի*: Եթե ֆիզիկական զարգացման դեպքում հնարավոր են շեղումներ և վայրէջքներ, ապա հոգևոր զարգացումը, ըստ նրա, դանդաղ, բայց միշտ վերելք ապրող գործընթաց էր, և դրանում էր պատմական առավել բարենպաստությունը (օպտիմալությունը): Ն. Կարամզինը գտնում է, որ կառավարման հանրապետական ձևը քաղաքացիներից պահանջում է առավելագույն հոգևոր ու բարոյական զարգացածություն, ուստի, քանի դեռ ժողովուրդը չի հասել այդ մակարդակին, պետական կառավարման լավագույն ձևը միապետությունն է: Մինևույն ժամանակ Ն. Կարամզինը *միապետներին ներկայացնում է երկու պահանջ. նախ՝ կառավարման ընթացքում միապետը պետք է ձգտի լուսավորել իր հպատակներին, երկրորդ՝ օրենքներով ու որոշումներով աստիճանաբար սահմանափակի իր բացարձակ իշխանությունը*: Այս ամենը ցույց է տալիս, որ Ն. Կարամզինը, *լինելով հանրապետական*, մինևույն ժամանակ գտնում էր, որ *միապետությունը պետք էր պահպանել* որպես *հանրապետական կարգերին անցնելու անցումային փուլ*: Ն. Կարամզինի տեսակետները հետագայում իրենց զարգացումն են գտնում սլավոնաֆիլների, ինչպես նաև՝ Ֆ.Մ. Դոստոևսկու և Լ.Ն. Տոլստոյի մոտ: Ն. Կարամզինից մի փոքր ուշ պահպանողականների ճամբարում որպես գաղափարախոսներ հանդես են գալիս **Ա.Ս. Ծիշկովն ու Մ.Պ. Պոգոդինը**, որոնց կարծիքով միապետն է հանդիսանում ազգի միակ և հավերժ առաջնորդը: Ըստ

նրանց՝ միապետությունն այդպիսին էր դարձել իր անփոխարինելի ու սովորություններին հավատարիմ լինելու շնորհիվ, ուստի ցանկացած փոփոխություն կարող էր առաջ բերել ռուսական կյանքի հիմքերի տատանումներ և հանգեցնել հասարակական ցնցումների և ոչ թե առաջընթացի: XIX դարի առաջին կեսերից մինչև դարավերջը Ռուսաստանում այդպես էլ *պահպանողականները չեն ստեղծում ոչ մի կազմակերպություն և ոչ էլ որևէ քաղաքական ավարտուն տեսություն (դոկտրին), քանի որ վախենում էին իրենց գործողություններով խախտել ռուսական պետության բնականոն կյանքը*: Եթե ընդհանրացնելու լինենք պահպանողականների գաղափարները, ապա դա կձևակերպվի հետևյալ կերպ.

ա) կրոնով սրբագործված միապետական կարգերի անքակտելիությունը՝ որպես պետական կառավարման համաշխարհային միակ ձև,

բ) մարդու բնության անկատարության ճանաչում, որը կարելի է հաղթահարել՝ միայն եկեղեցու գրկում լինելով և ենթարկվելով միապետի հայրական իշխանությանը,

գ) միապետի հովանու ներքո տարբեր դասերի ու խավերի գոյության ու զարգացման անհրաժեշտության ճանաչում՝ որպես հիմք ընդունելով մարդկանց ֆիզիկական, սոցիալական և մտավոր անհավասարությունը,

դ) պետական կառավարման գործում արիստոկրատիայի մասնակցության պարտադիր անհրաժեշտություն²⁷:

Ազատամտական հոսանքի գաղափարախոսությունը հիմնականում ձևավորվում է *Ֆրանսիական լուսավորչական փիլիսոփայության դրույթների վրա, որոնց ավելանում է, այսպես կոչված, ազնվականական ազատասիրությունը*: Լինելով ավելի շուտ բարոյաեզրանական վիճակ՝ լիբերալ հոսանքը XIX դարի առաջին կեսին լայն տարածում է գտնում ազնվականության մի մասի շրջանում: Դրա անբաժանելի մասն էին կազմում *անկախ մտածելակերպը, ինքնուրույն վարքը և ազնվականական արժանապատվության բարձր զգացումը որպես պատմագոյացման պայման*: Այսպիսի մարդիկ իրենց *դենդիստական և դոնժուանական* վարքով, հագուկապով առանձնանում էին հասարակությունից՝ լայն խավերի համար դառնալով նմանակելու առարկա:

Ազատասեր ազնվականությունը ձգտում էր հաստատել իր ինք-

26 История России, Орлов А.С., Георгиев В.А., Георгиева Н.Г., 1924. 122-123, 223-224: 86

27 История России, XIX век, В двух частях, Под ред. проф. Тюкавкина В.Г., 1, 124. 125, 223-224: 87

նուրույնությունը, ազատ ապրելու իրավունքը, և նրա կենցաղն ու ապրելակերպը հաճախ հակասության մեջ էին մտնում ընդունված չափանիշների հետ: Այս մարդկանց բնորոշ էր նաև հայրենասիրության բարձր զգացումը: Իրենց ազատությունների համար պայքարը նրանք տեսնում էին երկրի ընդհանուր առաջընթացի և զարգացման մեջ, ինչը, ի վերջո, հանգեցնում է այն մտքին, որ հասարակությունը պետք է մասնակցի տեղական ինքնակառավարման ու պետական հարցերի վճռման գործին: Այս ամենին ավելանում են հետևյալ հանգամանքները. *նախ՝ Նապոլեոնի դեմ պատերազմից հետո ազնվականության այդ մասը հնարավորություն է ստանում լայնորեն ծանոթանալ և վերլուծել արևմտաեվրոպական երկրների փորձը, երկրորդ՝ նրանք սկսում են տարանջատել «հայրենիք» և «միապետ» հասկացությունները՝ գտնելով, որ առաջնայինը «հայրենիքն» է, երրորդ՝ այլ կերպ է սկսում ընկալվել նաև ճորտատիրությունը. ճորտական վիճակը սկսում է դիտվել ոչ միայն ամոթալի, այլև անշահութաբեր²⁸: Փորձեցինք սեղմ ներկայացնել առաջադեմ ազնվականի տիպը, քանզի մեր ուսումնասիրության թեմայի կենտրոնական դեմքը՝ Ա. Գրիբոյեդովը, համարվել է նրանցից մեկը: Ինչ վերաբերում է լիբերալների քաղաքական հայացքներին, ապա դրանք գրեթե նույնն էին, ինչ XIX դարի առաջին կեսի երրորդ քաղաքական հոսանքի ներկայացուցիչների՝ «արմատականների» հայացքները:*

Ռուսաստանի պատմության մեջ *արմատականներն այլ կերպ անվանվում են «դեկաբրիստներ»՝ 1825թ. դեկտեմբերի 14-ին ձեռնարկած զինված ապստամբության միջոցով իշխանությունը զավթելու անհաջող փորձի ամսվա անունով:* Սույն ուսումնասիրության մեջ մենք ևս հարկ ենք համարել օգտագործել ընդունված *հենց այդ հավաքական անվանումը:* Ե՛վ ազատամիտների, և՛ դեկաբրիստների նպատակների գաղափարական հիմքում ընկած էր երկու խնդիր. բացարձակ միապետության սահմանափակում ու ճորտատիրության վերացում: *Նրանց հիմնական տարբերությունն այս նպատակներին հասնելու ուղիների մեջ էր: Ազատամիտները գտնում էին, որ իրենց նպատակներին կարելի է հասնել խաղաղ ճանապարհով, ժողովրդին ու հասարակությանը լուսավորելու և բարեփոխումների միջոցով, իսկ արմատական-դեկաբրիստները՝ զինվորական հեղաշրջման միջոցով:*

Դեկաբրիստական շարժման հանդես գալու վրա ազդել են մի շարք

գործոններ, որոնցից *կարևորը, ինչպես նշվեց, եվրոպական քաղաքակրթության և XVIII դարի լուսավորչական արժեքների ներմուծումն էր*, ինչը հանգեցնում էր Ռուսաստանում կրթված ազատամիտ ազնվականական խավի ձևավորմանը: Այս գործում իրենց դերն են խաղում *Ալեքսանդր I-ի՝ նաև լուսավորության ասպարեզում ձեռնարկած թեկուզև անկատար բարեփոխումները:*

XIX դարի սկզբին դեկաբրիստների շարքերում քիչ չէին Մոսկվայի համալսարանում, Ցարսկոյե Սելոյի լիցեյում և նոր հիմնված այլ ուսումնական հաստատություններում կրթություն ստացած մարդիկ:

Մյուս գործոնը XVIII դարի վերջի Ֆրանսիական Մեծ հեղափոխության և դրան հաջորդած երկարամյա պատերազմների (մոտ քառորդ դար) թողած ազդեցությունն էր: Ռուսական հասարակության մեջ հետաքրքրություն է առաջանում համաշխարհային մեծ իրադարձությունների հանդեպ: Դեկաբրիստներն իրենց համարում էին «1812 թվականի զավակներ»: Օտար նվաճողի (Նապոլեոն Բոնապարտի) դեմ պայքարը Ռուսաստանում *առաջ է բերում հայրենասիրության բուռն վերելք և միավորում, այսպես կոչված, «վերններին» ու «ներքններին»,* ինչի հետևանքով Հայրենական պատերազմից և արտասահմանյան արշավանքներից հետո առաջադեմ շատ ազնվականներ հնարավոր չեն համարում վերադարձը նախկին կյանքին: Արտասահմանյան արշավանքները երիտասարդ ռուս սպաներին հնարավորություն են տալիս ծանոթանալու արևմտյան երկրների առավել բարեկարգ կենցաղին ու ապրելակերպին և նրանց ստիպում մտածել Ռուսաստանի ներսում ընթացող գործընթացների մասին:

Պակաս դեր չի խաղում նաև *մյուս գործոնը. դա հիասթափությունն էր Ալեքսանդր I-ի վարած ներքին քաղաքականությունից:* Սկզբում նրա ներքաղաքական քայլերը հույսեր էին ներշնչում, որ Ռուսաստանում տեղի կունենան լուրջ փոփոխություններ, *սակայն վերջում նա որդեգրում է պահպանողական և նույնիսկ հետադիմական վարքագիծ ու քաղաքականություն:* Գաղտնի ընկերությունների մեջ ներգրավված ռուս սպաների վրա իրենց ազդեցությունն են թողել նաև արտաքին աշխարհում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները (հեղափոխությունները՝ Իսպանիայում և իտալական մի շարք պետություններում, ապստամբությունները՝ Հունաստանում և Լատինական

28 История России. XIX век, В двух частях, Под ред. проф. Тюкавкина В.Г., т. 1, кн. 2, ш. 79-80.

Ամերիկայի երկրներում), որոնցում կարևոր և ղեկավար դեր էին խաղում երիտասարդ սպաները²⁹:

1812թ. հետո ազատամիտների և արմատականների հոսանքների գործունեության մեջ նկատվում է մի կարևոր առանձնահատկություն. *կթն մինչ այդ դարեղար գերիշխում էր հայրենիքի շահը, իսկ անձի (եթե դա ինքնակալը չէր) ինքնագնահատումը մղված էր երկրորդական պլան, ապա ղեկաբրիստական և ազատամտական առաջին խմբակներում նախապատվությունը, մնացած ամեն ինչից վեր դասվելով, աստիճանաբար սկսում է տրվել մարդու անձին, նրա քաղաքական և տնտեսական ազատություններին*³⁰:

Ղեկաբրիստական առաջին կազմակերպությունների պատմությունը կարելի է սկսել 1810-1811 թվականներից, երբ գվարդիական գրնդերում սկսում են ստեղծվել սպայական առաջին ընկերությունները՝ արտելները: Դրանք ոչ մի կապ չունեին հակակառավարական ընդդիմության ու քաղաքականության հետ և ավելի շատ հակադրվում էին ձևավորված ապրելակերպին ու մտածողությանը: Արտելների մեջ մտնելն ավելի էր հեշտացնում բնակվարձերի վճարումը, թերթերի ու ամսագրերի ձեռքբերումը, բացի այդ՝ կողքին միշտ կարելի էր ունենալ հետաքրքիր գրուցակից³¹: Հետագայում՝ արտասահմանյան արշավանքների ժամանակ, երիտասարդ *ռուս սպաները Ֆրանսիայում շփվում են ֆրանկ-մասոնական կազմակերպությունների հետ, որոնք շատ արագ մեծ ազդեցություն են թողնում ռուսների վրա*: Ռուսաստանում արդեն 1820-ական թթ. սկզբներին հաշվվում էին 220 մասոնական օթյակներ, որոնց անդամակցում էին 3 հազար ազնվական և մտավորական (վերջիններիս գրեթե կեսը Ռուսաստանում ծառայող օտարերկրացիներ էին)³²:

1811-1812թթ. գործող և յոթ անդամներից բաղկացած *“Чока”* («Չոկա» - Վ.Ս.) խմբակի ղեկավարն է դառնում Ն.Ն. Մուրավյովը: Հայրենասիրական գաղափարների պոռթկման պայմաններում նրանք երազում էին հանրապետություն հիմնել Սախալինում³³:

Նախաղեկաբրիստական առաջին կազմակերպությունները ստեղծ-

վում են 1814թ.: Դրանք դեռևս ծրագիր ու կանոնադրություն չունեին, և դրանց անդամներն ընդամենը ցանկանում էին վերափոխել երկիրը: Դրանցից կարելի է նշել *“Орден русских рыцарей”* («Ռուս սպաների օրդեն» - Վ.Ս.) կազմակերպությունը, որը ղեկավարում էին Ն.Ա. Գմիտրի Մամոնովը և Մ.Ֆ. Օռլովը, *“Священная артель”* («Սրբազան արտել» - Վ.Ս.) ընկերությունը, որը գլխավորում էին Մուրավյով երկու եղբայրները և կազմված էր Գլխավոր շտաբի սպաներից, *“Семёновская артель”* («Սեմյոնովյան արտել» - Վ.Ս.) ընկերությունը, որտեղ աչքի էին ընկնում Ս.Պ. Տրուբեցկոյն ու Ս.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Վ.Ֆ. Ռանսկու խմբակը, որը միավորում էր բանակի ցածրաստիճան սպայական կազմը: Այս կազմակերպությունները գործում են բացահայտ կամ կիսաբացահայտ կերպով, քանի որ սպայական ընկերություններ ստեղծելը դեռ թույլատրվում էր³⁴:

Գեկաբրիստական առաջին յուրջ կազմակերպությունը ստեղծվում է 1816թ. փետրվարին, երբ «Սեմյոնովյան» և «Սրբազան» ընկերությունների մի խումբ սպաներ հիմնում են պատմության մեջ հայտնի *“Союз спасения”* («Փրկության միություն» - Վ.Ս.) ընկերությունը: Նրա հիմնադիր կազմում ընդգրկվում են Ա.Ն. Մուրավյովը, Ն.Ս. Մուրավյովը, Ս.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Ս.Պ. Տրուբեցկոյը, Ի.Գ. Յակուշկինը և այլք: Կազմակերպությունը վերջնականապես ձևավորվում է մեկ տարի անց, երբ նրանց է միանում 1816թ. վերջին Պետերբուրգ ժամանած Պ.Ի. Պեստելը: 1817թ. փետրվարին կազմակերպությունը ընդունում է *“Статус”* («Կանոնադրություն» - Վ.Ս.) և պաշտոնապես անվանվում *“Общество истинных и верных сынов отечества”* («Հայրենիքի ճշմարիտ և հավատարիմ որդիների միություն» - Վ.Ս.): Պ. Պեստելի ջանքերով «Կազմակերպությունը» նմանվելու էր իրական կարբոնարների (իտալական խռովարարների) և մասոնական ընկերության նպատակների մասին տեղյակ գաղտնի օթյակներին: Ենթադրվում էր, որ նրա անդամները, ըստ տեղեկացվածության աստիճանի, բաժանվելու էին մի քանի կարգի. բուրգի վերևում գտնվելու էին իրական իշխանություն ունեցող ղեկավարները՝ «բոյարները», նրանցից հետո՝ «մուժերը», իսկ ամենաներքևում՝ շարքային անդամները կամ «եղբայրները»³⁵: Կազմակերպության

29 История России с древнейших времён до наших дней, Под ред. д.и.н. проф. Сидорова А.В., 1924, 1-2 т., էջ 178:

30 Данилов А.А., Д 18, История России с древнейших времён до наших дней..., 1924, 1-2 т., էջ 108:

31 История России с древнейших времён до конца XX века, Третье издание, 1924, 1-2 т., էջ 163:

32 Данилов А.А., История России в вопросах и ответах..., 1924, 1-2 т., էջ 109:

33 История России, 2006, 1-2 т., 1-2 т., էջ 225:

34 История России, XIX век, 2001, 1, 1-2 т., 1-2 т., էջ 82:

35 История России с древнейших времён до наших дней, 2007, 1-2 т., 1-2 т., էջ 179:

նպատակներ են հռչակվում բացարձակ միապետական իշխանության սահմանափակումն ու ճորտատիրության վերացումը:

Կազմակերպության ներսում հիմնական տարաձայնությունները վերաբերում էին այդ նպատակներին հասնելու ուղիներին: **Անդամների մի մասը գտնում էր, որ պետք է ձևավորել հասարակական կարծիք, և դրա ճնշման տակ կառավարությանը ստիպել կատարել բարեփոխումներ: Անդամների մյուս մասը գտնում էր, որ ցարերի փոփոխությունների ժամանակ պետք է ոտքի հանել Գվարդիան և երդում չտալ՝ ճնշում գործադրելով նոր ցարի վրա այնքան ժամանակ, մինչև նա չստորագրի սահմանադրություն մտցնելու և ճորտատիրությունը վերացնելու մասին հրամանագիր:** Ի վերջո հաղթում են առաջին տեսակետի կողմնակիցները: **Այս կազմակերպությունը բնույթով դավադրական էր և գործում էր գաղտնի:** Անդամների ընդունելությունը կատարվում էր խստագույն ընտրությամբ: Իր գործունեության վերջում մեծ մասամբ գվարդիական սպաներից կազմված այդ ընկերության անդամների թիվը հասնում է 30-ի³⁶: «Փրկության միության» մեջ ընդգրկվում էին տարբեր հայացքների տեր մարդիկ. այստեղ **կային ինչպես հեղափոխական բռնի մեթոդները չընդունող ազատամիտ-լուսավորչականներ, այնպես էլ քիչ չէին միապետության պահպանման կողմնակիցները**, ովքեր ձգտում էին միայն սահմանադրությամբ սահմանափակել միապետի իշխանությունը: **Կային նաև բանակի միջոցով հեղաշրջում իրականացնելու կողմնակիցներ:** Հավելենք, որ հայացքների այսպիսի խայտաբղետությունը բնորոշ էր ղեկաբրիստական շարժման ողջ ընթացքին: **Այս հանգամանքը, ինչպես նաև Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքներն արտացոլող փաստաթղթերի պակասը, մինևույն ժամանակ նրա բարեկամական կապերը ղեկաբրիստներից ոմանց հետ, ուսումնասիրողներից շատերին հետագայում թույլ է տվել Ա. Գրիբոյեդովին ևս դասել ղեկաբրիստների շարքին:**

1817թ. օգոստոսին ցարը և Գվարդիան տեղափոխվում են Մոսկվա՝ նախապատրաստվելու Նապոլեոնի դեմ տարած հաղթանակի հնգամյա տարելիցի տոնակատարությանը: Այս առիթով այստեղ են հայտնվում «Փրկության միության» շատ անդամներ: Վերջիններիս գործունեության արդյունքում **1818թ. հունվարին Մոսկվայում ստեղծվում է մի նոր՝**

³⁶ История СССР, XIX - нач. XX века. Изд-е второе, перераб., Под ред. акад. АПН СССР И.А. Федосова, Изд-во "Высшая школа", М., 1987, с. 77-78.

“Союз благоденствия” («Բարօրության միություն» - Վ.Ս.) գաղտնի կազմակերպությունը: Մոտ 200 անդամ ունեցող այս «Միության» հիմնադիրներից էին **Ա.Ն. Մուրավյովը, Ն.Մ. Մուրավյովը, Ա.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Պ.Ի. Պեստելը, Ի.Գ. Յակովչիևը, Մ.Ս. Լունինը և այլք:** «Միությունը» ստեղծում է հատուկ կառուցվածք և որդեգրում մարտավարություն: Կազմակերպության ընդհանուր ղեկավար օրգանը բաղկացած էր **“Коренная управа”-ից** («Արմատական ուպրավա» - Վ.Ս.) և գործադիր օրգանը հանդիսացող **“Дума”-ից** («Լտորհուրդ» - Վ.Ս.): Տեղերում գործունեությունն իրականացնում էին տեղական ուպրավաները: Կազմակերպության եռամյա գործունեության ընթացքում ուպրավաներ են ստեղծվում **Պետերբուրգում, Տամբովում, Նիժնի Նովգորոդում:**

«Բարօրության միությունն» ընդունում է նաև իր ծրագիրն ու կանոնադրությունը, որը կազմի գույնի պատճառով կոչվում է **“Зелёная книга” («Կանաչ գիրք» - Վ.Ս.): Մարտավարության առումով «Գիրքը» բաղկացած էր երկու՝ բացահայտ (լեզայ) և գաղտնի մասերից:** Առաջինը նախատեսված էր բոլոր անդամների համար, երկրորդ մասը, որտեղ խոսվում է ինքնակալության տապալման մասին, հասու էր **հատուկ տեղեկացվածներին:** Մա պայմանավորված էր **կազմակերպության խռովարար մարտավարությամբ և ղեկավարների գաղտնի, դավադիր գործունեությամբ:** Բոլորի համար նախատեսված ծրագրային մասը վերաբերում էր իրականացվելիք լուսավորական գործունեությանը: Ծրագրի գաղտնի (անլեզայ) մասը վերաբերում էր սահմանադրության ընդունմանը, ճորտատիրության վերացմանը և դրանց հասնելու դավադրական-խռովարարական մարտավարությանը³⁷:

«Բարօրության միության» ծրագրում դարձյալ մեծ տեղ էր հատկացվում լուսավորական գործունեությանը: Դրա շնորհիվ պետք է հասարակական կարծիք ձևավորվեր բարեփոխումների իրականացման շուրջ: Հարկ է նշել, որ **երկրի կառավարման համար անհրաժեշտ հասարակական կարծիքի տեսությունը դեռևս XVIII դարում առաջ էր քաշվել ֆրանսիական լուսավորիչների կողմից և լայն տարածում գտել XIX դարում, այլ երկրների հեղափոխական շարժումներում:** Դեկաբրիստները ենթադրում էին, որ առաջադեմ կարծիք ձևավորելու համար կպահանջվեր մոտ 20 տարի, որից հետո հնարավոր կդառնար

³⁷ История России, 2006, кн. 2, с. 226:

հեղափոխական ճանապարհով (մոտ 1839թ.) փոխել իշխանությունը՝ խուսափելով լուրջ ցնցումներից³⁸:

Լուսավորական գործունեություն իրականացնելու համար, բացի գաղտնի միություններից, կիրառվում են նաև թույլատրված ձևեր. ստեղծվում են փոխադարձ ուսուցման զինվորական («լանկաստերյան») դպրոցներ, բացվում են գրական խմբակներ, «Միության» անդամներն ակտիվորեն մասնակցում են տարբեր պարբերականների լույս ընծայման աշխատանքներին, օրինակ են ծառայում այլոց համար՝ ազատ արձակելով իրենց ճորտերին, փրկագնով ճորտությունից ազատում են առավել տաղանդավոր ճորտերին, օգնություն են ցույց տալիս սովյալ գյուղացիներին, իսկ նրանցից ոմանք էլ (**Վ.Ֆ. Ռանսկի, Մ.Ֆ. Օռլով**) քարոզչություն են տանում նաև գործերի մեջ³⁹:

«Բարօրության միության» ծրագրային շատ դրույթներ, **ըստ էության, համապատասխանում էին Ալեքսանդր I-ի կառավարության իրականացրած քայլերին, և դժվար կլինեք նրանց մեղադրանքներ ներկայացնել**: Կազմակերպությանն անդամակցում են ոչ միայն արմատականներ, այլև ազատամիտներ:

Այս ժամանակ է, որ կայսերը հայտնի է դառնում ազնվականական գաղտնի ընկերությունների գոյության մասին: Լրտեսների միջոցով ստացված զեկույցներում տեղեկացվում է, որ կազմակերպությունը կայսեր դեմ մահափորձ կատարելու դավադրական հատուկ նպատակներ է հետապնդում: Այս հանգամանքն Ալեքսանդր I-ին ստիպում է միշտ ուշադրության կենտրոնում պահել նրանց գործունեությունը՝ աչքի առաջ ունենալով XVIII դարում իրար հաջորդած պալատական հեղաշրջումներն ու Պավել I-ի վախճանը: Ինչ վերաբերում է նրան, թե ինչու Ալեքսանդր I-ն ու ղեկաբրիստները նպատակների համապատասխանության պարագայում չեն համագործակցել իրար հետ, ապա, մեր կարծիքով, պատճառն այն է, որ կայսրը նրանց մեջ իր համար հենարան չէր տեսել: Սա օրինաչափ է, քանի որ 200 միջին և բարձրաստիճան սպաներ ու ծառայողներ մեծ ազդեցություն չունեին հասարակության վրա և չէին կարող իրենց ետևից տանել նրան⁴⁰:

«Բարօրության միության» նպատակների և դրանց հասնելու ձևե-

38 История СССР, XIX - нач. XX века, 1987, кн. 1, с. 78:

39 История России, XIX век, 2001, т. 1, кн. 1, с. 82: Փաստներ, որ ոչ մի վկայություն չկա, որ Ա. Գրիբոյենկովը երբևիցե հանդես եկած լինի իր սնոր ճորտերին թեկուզ փրկագնով ազատելու վերաբերյալ - Վ.Ս.:

40 История России с древнейших времён до конца XX века, 2001, кн. 1, с. 165:

րի վերջնական ձևավորման վրա զգալի ազդեցություն են ունենում մի շարք արտաքին և ներքին գործունեք: **1820-1821թթ. հեղափոխություններն Իսպանիայում, Պորտուգալիայում, Նեապոլում, Պլեմոնտում, ապստամբությունները ռուսական բանակում և զինվորական բնակավայրերում, ինչպես նաև գյուղացիական հուզումները տարբեր գավառներում, ապագա ղեկաբրիստներին համառորեն ստիպում են ավելի ակտիվացնել գործունեությունը**: Այդ տարիները ղեկաբրիստական շարժման մեջ կարևոր սահմանաբաժան են դառնում: 1820թ. հունվարին տեղի է ունենում «Բարօրության միության» արմատական ուպրավայի խորհրդակցությունը, որի բոլոր մասնակիցները **համաձայնում են Պ. Պեստելի փաստարկներին և կողմ են քվեարկում հանրապետական կարգերի հաստատման օգտին⁴¹: Այս խորհրդակցության ժամանակ Պ. Պեստելին և Ն. Մուրավյովին հանձնարարվում է կազմել «Միության» ծրագրային փաստաթղթերը**: Խաղաղ քարոզչության և դավադիր-խռովարարական ակտիվ գործելակերպի կողմնակիցների միջև աճող տարաձայնությունները, ինչպես նաև պետական լրտեսներից և պատահական մարդկանցից ազատվելու ցանկությունը հանգեցնում են նրան, որ **1821թ. հունվարին կազմակերպությունը ինքնալուծարվում է**:

Չնայած այն բանին, որ «Բարօրության միության» կազմում ևս կային տարբեր հայացքների տեր մարդիկ, այնուամենայնիվ, նրա գործունեության արդյունքում հատկապես արմատականները զգալիորեն ճշգրտում են իրենց նպատակներին հասնելու մարտավարական հարցերը: **Իսպանական հեղափոխությունը, Պետերբուրգում Սեմյոնովյան զնդի ապստամբությունը ստիպում են նրանց ավելի մեծ ուշադրություն դարձնել ապագա հեղափոխության հիմնական կատարող ուժին՝ բանակին**: Դրան նպաստում է նաև այն, որ նրանց մեծ մասը նախկին կամ գործող զինվորականներ էին և քաջ գիտակցելով զինվորների վիճակն ու իմանալով նրանց տրամադրությունները գտնում էին, որ կարող են ոտքի հանել ու իրենց ետևից տանել վերջիններիս: **Բացի այդ՝ «զինվորական հեղափոխությունը» նրանց (ապագա ղեկաբրիստներին) հնարավորություն կտար ձեռքազատվելու գյուղացիության և քաղաքային բնակչության օգնությանը դիմելու անհրաժեշտությունից**: Նշենք, որ ղեկաբրիստները գյուղացիությանը համարում էին անվստահելի և անցանկալի դաշնակից: **Միապետութ-**

41 История СССР, XIX - нач. XX века, 1987, кн. 1, с. 79:

յան հանդեպ անգրագետ գյուղացու հավատարմությունն ու նվիրվածությունը (ցարիստական տրամադրությունները), ըստ դեկաբրիստների, նրան դարձնում էին հետադիմականների հենարան: Ազնվական հեղափոխականները վախենում էին նաև, որ *գյուղացիական խռովության անկառավարելիությունը կարող է հանգեցնել քառսի*, ինչը կարող էր վտանգել նաև երկրի մշակութային արժեքները⁴²:

Նշենք մի հանգամանք ևս. թե՛ «Փրկության միության», թե՛ «Քարօրության միության» անդամները, նույնիսկ զինված հեղափոխության կողմնակիցները հասկանում և ընդունում էին, որ *նչ ռուս հասարակ ժողովուրդը, ո՛չ էլ հասարակությունը պատրաստ չէին կտրուկ բարեփոխումների: Գրա համար ժամանակ էր պետք: Օրինակ, «Քարօրության միության» անդամները գտնում էին, որ կարելի է հեղափոխություն կատարել 20 տարի հետո: Նույնիսկ Ալեքսանդր I-ն իր ձեռնարկած ու անավարտ թողած բարեփոխումները պատրաստվում էր անցկացնել ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, տարիների ընթացքում, ինչով ռուս հասարակությանը կարելի կլիներ նախապատրաստելու դրանց անհրաժեշտության ու անխուսափելիության գաղափարներին: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ արմատական և կտրուկ բարեփոխումներին Ռուսաստանի պատրաստ չլինելու շուրջ մտայնությունն այս փուլում գերիշխում էր ռուսական առաջադեմ հասարակայնության լայն շրջաններում: Մեր կարծիքով Ա. Գրիբոյեդովը, լինելով նրանցից մեկը, ևս այդպես էր մտածում, ուստի կարծում ենք, որ նաև դրանով է պայմանավորված եղել դեկաբրիստական շարժմանը նրա չանդամակցելը: Հայտնի է, որ դեկաբրիստները վերջիվերջո որդեգրում են արմատական և կտրուկ գործողությունների մարտավարությունը:*

«Քարօրության միության» ինքնալուծարումից հետո, ինչպես և կանխատեսելի էր, ավելի ակտիվանում են արմատականները, որոնք էլ 1821-1822թթ հիմնում են գաղտնի երկու նոր կազմակերպություններ՝ «Южное общество» և «Северное общество» («Հարավային» և «Հյուսիսային» ընկերությունները – Վ.Ս.):

Ուկրաինայում տեղակայված Երկրորդ բանակում Պ. Պեստելի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Հարավային ընկերությունը»: Համոզված հանրապետական, բայց դիկտատորական նկրտումների տեր Պ.

42 История России. XIX век, 2001, т. 1, кн. 1, с. 83: 96

Պեստելը դառնում է կազմակերպության ղեկավարը: Հիմնադիրներից են դառնում նաև Ա.Պ. Յուշնևսկին, Ն.Վ. Բասարգինը, Վ.Պ. Իվաշևը, Ա.Պ. Բարյատինսկին և այլք⁴³:

1823թ. «Հարավային ընկերության» կազմում գործում էր երեք կազմակերպություն՝ *Տուչինյան, Վասիլկովյան և Կամենկայի* ուսրավաները: *Տուչինյոյ ուսրավան* համարվում էր արմատական, և այն գլխավորում էին Պ. Պեստելն ու Ա. Յուշնևսկին, որոնք էլ ընտրվում են ողջ կազմակերպության դիրեկտորներ (դիրեկտորիայի երրորդ անդամը «Հյուսիսային ընկերության» ղեկավար Ն.Մ. Մուրավյովն էր): *Վասիլկովյան ուսրավան* ղեկավարում էին Ս.Բ. Մուրավյով-Ապոստոլը և Մ.Պ. Բեստուժն-Ույումինը, իսկ *Կամենկայինը՝ Վ.Լ. Դավիդովն ու Ս.Գ. Վոլկոնսկին*: Սկսած 1822թ. հունվարից՝ կազմակերպչական և ծրագրային հարցերը քննարկելու համար ամեն տարի հրավիրվում է ղեկավարների ժողով, որը տեղի է ունենում Կիևում Պայմանագրային տոնավաճառի ժամանակ⁴⁴:

«Հյուսիսային ընկերությունը» ձևավորվում է 1822թ. Պետերբուրգում Ն.Մ. Մուրավյովի ղեկավարությամբ: Կազմակերպությունը գլխավորող Դումայի կազմում ընդգրկվում են Ն.Մ. Մուրավյովը, Ս.Պ. Տրոբեցկոյը և Ե.Պ. Օբոլենսկին⁴⁵: «Հյուսիսային ընկերությունը» Մոսկվայի և Պետերբուրգի գվարդիական զնդերում ևս ստեղծում է ուսրավաներ: 1823թ. Ի.Ի. Պուշչինի կողմից կազմակերպության անդամ է ընդունվում Կ.Ֆ. Ռիլենը, որը հետագայում դառնում է դեկաբրիստական շարժման առաջնորդներից մեկը, և «Հյուսիսային ընկերության» մեջ նույնիսկ հիմնում է իր «Թիմը», որը կազմված էր բանակի և ռազմածովային ուժերի իր կողմից ընդունված երիտասարդ սպաներից⁴⁶:

Վերոհիշյալ նորաստեղծ երկու կազմակերպություններն էլ փորձում են գործել համաձայնեցված ու միասին, և մինչև 1825թ. նրանց հիմնական աշխատանքը սահմանադրությունների նախագծերի մշակումն ու զինվորական ապստամբության ծրագրերի կազմումն էր: Այս «Ընկերությունները» ժամանակի խոշոր կազմակերպություններն էին և ստեղծում էին բավական լուրջ ծրագրային փաստաթղթեր: Դրանցից մեկը Պ. Պեստելի «Русская правда»-ն («Ռուսական պրավդա») էր,

43 История России, 2006, кн. 1, с. 227:

44 Данилов А.А., История России в вопросах и ответах..., 2004, кн. 1, с. 110:

45 История СССР, XIX - нач. XX века, 1987, кн. 1, с. 80:

46 История России, XIX век, 2001, т. 1, кн. 1, с. 85:

մյուսը՝ Ն. Մուրավյովի «Конституция»-ն («Սահմանադրություն»)՝:

«Ռուսսկայա պրավդայում» պետության ապագան Պ. Պետելը տեսնում էր հանրապետական կառավարման ձևի մեջ, սակայն հեղափոխությունից հետո՝ մինչև հանրապետական կարգերի հաստատումը, երկիրը պետք է անցներ անցումային շրջան (մինչև 10 տարի)՝ հիմնական բարեփոխումները կատարելու և հակահեղափոխական ելույթները ճնշելու համար: Այդ ընթացքում իշխանությունը պատկանելու էր դիկտատորական լիազորություններով օժտված, չորս հոգուց բաղկացած ժամանակավոր կառավարությանը: «Ռուսսկայա պրավդան» էլ հանդիսանալու էր այդ կառավարությանն ուղղորդող փաստաթուղթը: Նախատեսվող կառավարման ձևը հաստատելու հետ զուգընթաց՝ պետք է անցկացվեին մի շարք բարեփոխումներ⁴⁸:

Ըստ Պ. Պետելի՝ երկիրը վարչականորեն բաժանվելու էր երկրամասերի, նահանգների, գավառների ու շրջանների: Գերագույն օրենսդիր մարմինը լինելու էր 5 տարով ընտրված «Народное вече»-ն («Ժողովրդական վեչե» - Վ.Ս.), որը կազմվելու էր 500 ընտրյալներից: Գործադիր իշխանությունն իրականացնելու էր «Державная дума»-ն («Տերունական դումա» - Վ.Ս.), որի կազմն ընտրելու էր Ժողովրդական վեչեն, և կազմված էր լինելու հինգ մարդուց: Բարձրագույն ժողովը (Верховный собор) կազմվելու էր ցմահ ընտրված 120 մարդուց⁴⁹: Պ. Պետելի նախագծով վերացվելու էին դասային բոլոր արտոնությունները, բոլորն ունենալու էին քաղաքացիական նույնպիսի իրավունքներ և հավասար էին լինելու օրենքի առջև: Դատարանն ընդհանուր էր լինելու բոլորի համար, իսկ դատական նիստերը պետք է տեղի ունենային հրապարակային ձևով, և մեղադրյալները ստանալու էին պաշտպանվելու իրավունք: Պ. Պետելը գտնում էր, որ Ռուսաստանը պետք է լիներ միացյալ, ուժեղ պետություն՝ կենտրոնացված ամուր իշխանությամբ: Նրա կարծիքով դաշնային համակարգը (ֆեդերացիան) նպաստելու էր անջատողականության տարածմանը և պետության թուլացմանը:

Վարչականորեն Պետելը երկիրը բաժանում էր 10 երկրամասերի և երեք տիրույթների (удел)՝ Մայրաքաղաքային, Գոնի, Ուրալի: Երկրամասային, նահանգային և գավառային ժողովների ղեկավարներ էին դառնալու ընտրովի պոսադնիկները, իսկ շրջանային ժողովի ղե-

կավարները՝ շրջանային առաջնորդները: Տեղական իշխանություններն ընտրվելու էին մեկ տարով, առանց ընտրական գույքային ցեղով: Պ. Պետելը բոլոր ազգերի համար հռչակում էր հավասարություն, սակայն նրանց համար ինքնորոշման իրավունք չէր նախատեսում՝ գտնելով, որ բոլոր ազգերը կտարրալուծվեին մեկ՝ ռուս ազգի մեջ: Բացառություն էր դառնալու Լեհաստանը, այն էլ այն պայմանով, որ նա դաշինքի մեջ էր մտնելու հեղափոխական Ռուսաստանի հետ:

Շեղափոխության հաջողության համար Պ. Պետելն առաջարկում է Ռուսաստանին միացնել Անդրկովկասը, Հեռավոր Արևելքը և մի շարք այլ տարածքներ⁵⁰: Պ. Պետելի նախագծում կար մի առաջարկ ևս. արգելվում էր ամեն տեսակ ընկերությունների գործունեությունը, և գրքերի հրատարակիչներին ու հեղինակներին կարող էին դատի տալ՝ տպագրված ստեղծագործությունների մեջ բարոյական նորմերը խախտելու համար⁵¹:

«Ռուսսկայա պրավդան» ճորտատիրության վերացման հարցում արտահայտում էր դեկաբրիստների արմատական թևի հայացքները. այն նախատեսում էր վերացնել ճորտատիրությունը: Երկրի հողային ողջ ֆոնդը Պետելը բաժանում է հանրային և մասնավոր սեփական մասերի: Հանրային հողերը ձևավորվելու էին պետական, կալվածատիրական և վանքապատկան հողերից, ինչպես նաև խոշոր կալվածատերերից բռնագրավված հողերից: Հանրային հողատարածքներից բոլոր գյուղացիներին հող էր հատկացվելու այնքան, որ երկրում չձևավորվեր առանց հողերի և անտուն չքավորական դաս: Հանրային հողը տնօրինելու էին շրջանային իշխանությունները:

Ի տարբերություն մասնավոր սեփական հողատարածքների՝ հանրային հողերի վաճառքը կամ գրավադրումն արգելվում էր: Հանրային հողատարածքները, փաստորեն, բավարարելու էին բնակչության մինիմում պահանջները, իսկ մասնավոր հողատարածքների առկայությունը նպաստելու էր երկրում շուկայական (ապրանքադրամական) հարաբերությունների ու տնտեսության զարգացմանը⁵²:

Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը» զգալիորեն տարբերվում է Պ. Պետելի «Ռուսսկայա պրավդայից»: Ն. Մուրավյովի նախագծով

50 Данилов А.А., История России в вопросах и ответах..., 2004, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

51 История России, XIX век, 2001, т. 1, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

52 История России, XIX век, 2001, т. 1, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 27

պահպանվելու էր միապետությունը, սակայն միապետի իշխանությունը սահմանափակվելու էր «սահմանադրությամբ»: **Երկիրը հռչակվելու էր դաշնային պետություն՝ կազմված 14 տերություններից (департаменты) և 2 մարզերից**, որոնք իրենց հերթին բաժանվելու էին 569 գավառներով: Գավառները բաժանվելու էին շրջանների (волость): **Գաշնության մայրաքաղաք էր դառնալու Նիժնի Նովգորոդը, որը վերանվանվելու էր Սլավյանսկ:** Տերություններում դարձյալ օրենսդիր մարմիններ էին դառնալու երկպալատյա տերունական վեչեները, որոնց **Վերին պալատները կոչվելու էին Տերունական դումաներ, իսկ ստորինները՝ Ընտրյալների պալատներ:** Վերջինները բաղկացած էին լինելու մինչև 350 պատգամավորներից (յուրաքանչյուր 10 հազար արական սեռի բնակչությունից ընտրված մեկ ներկայացուցիչ): **Յուրաքանչյուր տերունական վեչե ընտրվելու էր 4 տարով, և ամեն տարի նրա կազմի քառորդ մասը վերընտրվելու էր:** **Գաշնային պետության մեջ, ըստ Ն. Մուրավյովի, գլխավոր գործադիր իշխանությունը պատկանելու էր կայսրին: Վերջինս հանդիսանալու էր նաև բանակի գլխավոր հրամանատարը, իրավունք էր ունենալու բանակցություններ վարելու այլ երկրների հետ, Գերագույն դումայի համաձայնությամբ կարող էր ղեկավարել, հյուպատոսներ, նախարարներ և բարձրաստիճան դատավորներ նշանակել:**

Կայսրն իրավասու էր լինելու կասեցնել և հետաձգել գործողության մեջ օրենքների մտնելը՝ այն վերադարձնելով ժողովրդական վեչե կրկին քննարկելու համար: **Գահակալության սկզբում կայսրը երդվելու էր հավատարիմ մնալ ու պահպանել սահմանադրությունը: Ըստ էության՝ նա դառնալու էր երկրի առաջին պաշտոնյան՝ բավականին բարձր (տարեկան՝ 8 միլիոն ռուբլի) աշխատավարձով**, որով կարող էր պալատականներ պահել (վերջիններս գրկվելու էին ընտրելու և պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքից): Կայսրն իրավունք չէր ունենալու դուրս գալու երկրի սահմաններից: Յուրաքանչյուր «տերության» գործադիր իշխանությունն իրականացնելու էին «տերության» կառավարիչը, նրա տեղապահը և խորհուրդը, որոնց 3 տարով նշանակվելու էր ժողովրդական վեչեն:

Գավառներից յուրաքանչյուրում կարգադրիչ և գործադիր իշխանությունը ներկայացնելու էր **ընտրովի հազարապետը:** Ն. Մուրավյովի

նախագծով վերափոխվելու էր նաև դատական համակարգը: Գործելու էին կոդեքսի **հրապարակային մրցակցային հնարավորություններով** օժտված դատապաշտպաններ, դատավորներ և ստենակալներ: Մտցրվելու էր դատավորների ընտրության և անփոփոխելիության սկզբունքը: Դաշնության **դատական գլխավոր օրգան** էր հռչակվելու **Գերագույն դատարանը:** «Տերություններում» և գավառներում ստեղծվելու էին տեղական դատարաններ, իսկ շրջաններում՝ **Խղճի շրջանային դատարանները:** Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը» ևս մերժում էր բանակի համալրման **ռեկրուտային համակարգը՝ առաջարկելով ներմուծել համընդհանուր զինապարտության օրենքը:** Վերացվելու էին դասային արտոնությունները, **հռչակվելու էր օրենքի առջև բոլորի հավասարություն, անձի և ունեցվածքի անձեռնմխելիություն, խղճի, մամուլի ազատություն, ժողովների, աշխատանքի ընտրության և ազատ տեղաշարժի իրավունք:**

Ի տարբերություն Պ. Պեստելի նախագծի՝ Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը» քաղաքացիների համար նախատեսում էր ընտրական ցենզ: Ընտրելու իրավունք էին ունենալու 21 տարին լրացած, մշտական բնակություն ունեցող, հարկային պարտականությունները կատարող և այլոց մոտ չճառայող մարդիկ, որոնք ունենալու էին մշտական ունեցվածք՝ 500 ռուբլու անշարժ գույքի տեսքով կամ շարժական գույք՝ 1000 ռուբլի արծաթ գումարի չափով: Բարձրագույն պետական պաշտոններ զբաղեցնելու համար տվյալ մարդը պետք է ունենար 30 հազար արծաթ ռուբլու չափով անշարժ կամ 60 հազար ռուբլու շարժական գույք: Այսպիսի սահմանափակումները բնակչության մի մասին զրկելու էր երկրի ներքին կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու հնարավորությունից⁵³:

Ն. Մուրավյովն առաջ էր քաշում գյուղացիական հարցի լուծման հետևյալ տարբերակը: Ըստ նրա՝ **վերացվելու էր ճորտատիրությունը, սակայն կալվածատերերի հողը մնալու էր կալվածատերերին: Գյուղացիական ամեն ընտանիք ստանալու էր երկու տասնորդական հող:** Հողը թողնելով կալվածատերերին՝ Ն. Մուրավյովը փորձում էր սիրաշահել նրանց, իսկ գյուղացիներին քիչ հող հատկացնելով՝ **հնարավորություն էր ընձեռում, որ կալվածատերերը գյուղացիներին օգտագործեն որպես**

53 История СССР, XIX - нач. XX века, 1987, №2, ш.2, էջ 82-84:

ազատ աշխատուժ⁵⁴:

Դժվար է ասել, թե դեկաբրիստների ծրագրային վերոհիշյալ երկու փաստաթղթերի կիրառման դեպքում դրանցից որը կարող էր լինել ավելի իրատեսական: Երկուսն էլ ունեին ուժեղ և թույլ կողմեր, սակայն երկուսի մոտ էլ առկա էր մեկ ընդհանուր գլխավոր թերություն. **դրանցում (հեղափոխության իրականացման գործում) անտեսված էր ժողովրդի դերը: Դեկաբրիստները սխալմամբ կարծում էին, որ իրենք ավելի լավ գիտեին, թե ինչ է հարկավոր ժողովրդին: Ժողովրդի հենց այդպիսի «բռնի երջանկացման» մեջ էր թաքնված նրանց ծրագրերի ուտոպիականությունը**⁵⁵:

Դեկաբրիստական երկու կազմակերպությունները 1821-1825թթ. հիմնականում զբաղվում էին կազմակերպչական, մարտավարական և ծրագրային հարցերի ճշգրտմամբ: Այս հարցերի հետ կապված աշխատանքները հատկապես ակտիվանում են 1824-1825թթ.: Նպատակահարմար է փոքր-ինչ կանց առնել դրանց վրա, քանի որ **1823-1825թթ. Ա. Գրիբոյեդովը գտնվում էր Մոսկվայում ու Պետերբուրգում և մըտերմիկ հարաբերությունների մեջ էր դեկաբրիստներից ոմանց հետ: 1823-1824թթ. նա ավարտում է իր գլուխգործոց «Խելքից պատուհաս»-ը, որը խանդավառությամբ է ընդունվում դեկաբրիստների կողմից: Այս և դեկաբրիստների գործի հետաքննության ժամանակ Ա. Գրիբոյեդովի՝ դատավարական նույն գործով անցնելու հանգամանքը ևս շատերին թույլ է տվել նրան դասելու դեկաբրիստների շարքը, ինչին կանդորադառնանք ուսումնասիրության մեջ:**

1824-1825թթ. կազմակերպչական հարցերում դեկաբրիստների ունեցած հաջողություններից կարելի է նշել երկուսը. նախ՝ 1825թ. «Հարավային ընկերության» ղեկավարների և լեհ հայրենասերների հիմնած ընկերությունների միջև կայացած բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձևավորվել, որ լեհերը դեկաբրիստների էլույթի ժամանակ կաջակցեն նրանց, և մյուսը՝ նույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ ամառային ճամբարային հավաքների ժամանակ, ժիտովիտի մոտ գտնվող Լեչչինո բնակավայրում «Հարավային ընկերության» կազմի մեջ է մտնում «*Общество соединённых славян*» («Միավորված սլավոնների ընկերություն» – Վ.Ս.) կազմակերպութ-

յունը՝ կազմավորելով հատուկ Սլավոնական ուպրավա: 52 հոգանոց այս «Ընկերության» նպատակն էր ստեղծել հանրապետական դաշնություն՝ բաղկացած **10 սլավոնական պետություններից (Ռուսաստան, Լեհաստան, Դալմաթիա, Խորվաթիա, Հունգարիա, Մոլդավիա, Վալախիա և այլն)**⁵⁶:

«Հյուսիսային» և «Հարավային» ընկերությունների միջև 1824-1825թթ. ակտիվ բանակցություններ են ընթանում միավորվելու և համատեղ գործողությունների ծրագրեր մշակելու համար: 1824թ. զարնանը Պետերբուրգ ժամանած Պ. Պետտելը ցանկություն է հայտնում, որ երկու «Ընկերությունները» միավորվեն՝ **որպես ծրագրային փաստաթուղթ ընդունելով իր «Ռուսակայա պրավդան»,** սակայն «Հյուսիսային ընկերության» ղեկավարները **վիճարկում են անցումային շրջանում Պետտելի ծրագրով ժամանակավոր հեղափոխական կառավարությանը դիկտատորական լիազորություններով օժտելու հանգամանքը** և ազդարային հարցի լուծման նրա տարբերակի (հողերի բաժանում և այլն) հետ կապված հարցերը:

Ծրագրային հարցերում **վերջնական համաձայնություն ձեռք չի բերվում, սակայն համաձայնություն է կայանում համատեղ զինված էլույթի շուրջ ծրագիր մշակելու մասին**⁵⁷: Պ. Պետտելի «Պրավդան» որպես կոնկրետ գործողությունների ծրագիր **ընդունվում է «Հարավային ընկերության» կողմից,** իսկ Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը», թեև դրվում է քննարկման, բայց «Հյուսիսային ընկերության» կողմից **վերջնականապես չի ընդունվում**⁵⁸: Երկու «Ընկերությունների» միջև **վերջնական համաձայնություն չի կայանում նաև զինված էլույթի կոնկրետ ծրագրի վերաբերյալ. ընդամենը որոշվում է այն սկսել 1826թ. ամռանը:**

Զինված էլույթի վերաբերյալ հիմնական տեսակետն այն էր, որ դա պետք է **սկսվեր Պետերբուրգում,** քանզի այստեղ էին գտնվում պետական գլխավոր հաստատությունները: Նախատեսվում էր, որ **կապտամբենի Գվարդիան և նավատորմը, երկրից, բացի կայսրից, կվտարվեր վերջինիս ողջ ընտանիքը: Հրավիրված Սենատի միջոցով կտեղեկացվեր երկրում նոր կարգերի հաստատման մասին, իսկ գավառներում բողոքված զինված էլույթները պետք է գորակցեին նոր կարգերին:** Բացի

54 История России, XIX век, 2001, т. 1, кн. 1, с. 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000.

55 История России, XIX век, 2001, т. 1, кн. 1, с. 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000.

56 История СССР, XIX - нач. XX века, 1987, кн. 1, с. 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703,

նշվածից՝ շրջանառվում էր նա մեկ կարծիք: Այսպես, 1824թ. վերջին հարավ է մեկնում «Հյուսիսային ընկերության» ղեկավարներից **Ս.Պ. Տրուբեցկոյը**, որը *զինված ելույթի կոնկրետ ծրագրի շուրջ բանակցություններ է սկսում Վասիլկովյան ու պրավայի ղեկավար Ս.Ի. Մուրավյով-Ապոստոլի հետ: Բանն այն է, որ Վասիլկովյան ու պրավայի անդամները գտնում էին, որ զինված ելույթները հարկավոր է սկսել գավառներում, և առաջարկում էին կայսեր սպանության գործողությունների իրենց տարբերակը: Հայտնի է, որ Վասիլկովյան ու պրավայի անդամներն արդեն երեք անգամ՝ 1823թ. Բոբրոյսկում, 1824 և 1825 թվականներին Բելոյե Յերկովում, գորատեսների ժամանակ փորձել էին իրականացնել դավադրական արքայասպան իրենց ծրագիրը, սակայն Պ. Պետսելի պնդմամբ ետ էին կանգնել այդ ոճիրից:* Ամեն դեպքում զինված ելույթի այս ծրագիրը նա չի իրականանում. Ալեքսանդր I-ի անսպասելի մահն ու գահաժառանգության շուրջ ստեղծված անորոշությունը **ղեկաբրիստներին ստիպում է որդեգրել այլ ճանապարհ:**

Մենք չենք անդրադառնա 1825թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգի Սենատի հրապարակում ծավալված իրադարձություններին: Նշենք միայն, որ **Ալեքսանդր I-ին հաջորդած Նիկոլայ I-ը (1825-1855թթ.)**, զերծ մնալով վաղամեռիկ իր եղբորը հատուկ «ազատամտությունից» ու անվճարականությունից, դաժան դատաստան է տեսնում կայսերական իշխանության և գոյություն ունեցող կարգերի դեմ ընդվզած խռովարարների հետ: Ապստամբությունը ճնշելուց հետո ստեղծվում է հատուկ Հետաքննող կոմիտե, որում ընդգրկվում են **Մեծ իշխան Միխայիլ Պավլովիչը** և բարձրաստիճան այլ անձինք (նրանց մեջ էր նաև նախկին բարեփոխիչ **Մ.Մ. Սպերանսկին**):

Դեկաբրիստների դատական գործով հարցաքննության է ենթարկվում 545 մարդ, որոնցից մեղավոր են ճանաչվում 289-ը: Նրանցից հինգը (**Պ. Պետսել, Կ. Ռիլեն, Ս. Մուրավյով-Ապոստոլ, Մ. Բեստուժև-Ռյումին, Պ. Կախովսկի**) մահվան են դատապարտվում քառատման միջոցով, ինչը հետո մեծահոգաբար փոխարինվում է ավելի «քաղաքակիրթ» մահապատժով՝ կախաղանով⁵⁹:

Մնացած հեղափոխականներն ու դավադիրները, ըստ մեղավորության աստիճանի, բաժանվում են 11 կարգի և դատապարտվում տարբեր պատիժների: Շատերի մահապատիժը հետագայում փոխա-

59 История России, 2006, кн. 2, т. 230 (2.5. Գրիգորյանը, հետաքննության ենթարկվածների թիվը նշում է 579, «Դասախոսություններ ՍՍԶՄ պատմության» (1801-1861 թթ.), «Լույս» հրատ., Երևան, 1975, էջ 144): 104

րինվում է սիբիրյան տաժանակրությանը՝ ընդհուպ մինչև ոստիկանության հսկողությանը հանձնելը⁶⁰: Նիկոլայ I-ի հրամանով 120 մեղադրյալ առանց դատի պահվում են Պետրոպավլովյան ամրոցում, այնուհետև, աստիճանագրկվելով մինչև շարքայինի աստիճանի, ուղարկվում են Կովկաս՝ արյունով քավելու կայսեր և պետության հանդեպ գործած մեղքերը: Պատժվում են նաև զինված ելույթին մասնակցած զինվորները, երկաթյա ձողերով ձեռքի է ենթարկվում 178 զինվոր, 23 հոգու ձեռքում են փայտով ու ճիպոտով, իսկ մնացածներից կազմվում է 4000-անոց հատուկ գունդ և դարձյալ ուղարկվում Կովկաս⁶¹:

Գեկաբրիստների ելույթը դաժանորեն ճնշվում է, սակայն Ռուսաստանում առկա կնճռոտ խնդիրները լուծում չեն ստանում: Դա գիտակցում էր նաև Նիկոլայ I-ը. մի կողմից նա պետք է միջոցներ ձեռնարկեր, որ նման ելույթներ այլևս տեղի չունենան, մյուս կողմից պետք է զգուշորեն նախապատրաստեր փոփոխություններ: **Նրա առաջին քայլն այն էր, որ 1826թ. բոլոր բարձրաստիճան զինվորականներից և ծառայողներից ստորագրություն է վերցվում առ այն, որ նրանք չեն հանդիսանում որևէ գաղտնի կազմակերպության անդամ: Նույն թվականին ցարի գրասենյակին կից ստեղծվում է Երրորդ բաժանմունքը**, որը պայքարելու էր հեղափոխական շարժումների դեմ և վերահսկելու էր հասարակական մտքի ընթացքը: 1826թ. հունիսին ընդունվում է նոր, բավական դաժան գրաքննական կանոնադրություն, և հետադիմական ձեռնարկումներ են կատարվում լուսավորության բնագավառում⁶²: Նիկոլայ I-ի այս և հետագա մյուս ձեռնարկումներով էլ ավելի է ամրապնդվում քաղաքական ռեակցիան: Դա չէր կարող չանդրադառնալ Ռուսաստանում հասարակական-քաղաքական առաջադեմ մտքի դրսևորումների ընթացքի վրա:

Այսպիսով՝

1. Ռուսաստանում որոշ միապետների կողմից մասոնականության հանդեպ ինչ-որ չափով դրսևորված դրական կամ բարյացակամ վերաբերմունքը ամենայն հավանականությամբ պայմանավորված էր նրանով, որ մասոնական «կանոնադրություններում» բարձրաձայնվել

60 Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթ. 109, գործ 28, վավ. 31 (ռուսերեն), Նիկոլայ I-ի՝ 1826թ. հուլիսի 10-ի հրամանագիրը ղեկտեմբերի 14-ի իրադարձությունների մասնակիցներից ոմանց նկատմամբ սահմանված պատժաչափը մեղմելու մասին, որը բաղկացած է 13 հոդվածներից:

61 История России, XIX век, 2001, т. 1, кн. 2, т. 2, էջ 92:

62 Данилов А.А., История России в вопросах и ответах..., 2004, кн. 2, т. 2, էջ 114:

է միապետին անվերապահ ենթարկվելու և նրա վճիռներն ու կամքը չվիճարկելու մասին դրույթը: Իսկ այն, որ ժամանակ առ ժամանակ կայսրուհիներն ու կայսրերն արգելել են մասոնական օթյակների գործունեությունը կամ պահել են ոստիկանական հսկողության ներքո, կարելի է բացատրել նրանով, որ, աչքի առաջ ունենալով եվրոպական հեղափոխական խմորումների փորձը և դրանցում տեսնելով նաև մասոնների դերակատարումները ռուսական մասոնների գործունեության մեջ, ըստ երևույթին, կռահել են քողարկված և հեռահար նպատակներ: Դրա վկայությունն են նախկինում մասոնական օթյակներին անդամակցած կամ գործող բարձրաստիճան շատ գործիչների հեռանալը նրանցից և մասոնությունը Ռուսաստանում արգելելու մասին կայսրին համոզելու շուրջ վկայությունները:

2. Ալեքսանդր I-ի կառավարման շրջանում առաջացած հասարակական-քաղաքական հոսանքների, հատկապես դեկաբրիստների ու կայսեր ռազմավարական նպատակները մեծամասամբ համընկնում էին (սահմանադրության ընդունում, ճորտատիրության վերացում), սակայն ո՛չ կայսրը, ո՛չ էլ արմատական-դեկաբրիստները չկարողացան իրականացնել դրանք: Ավելին, լինելով «համախոհներ»՝ նրանք հանդես եկան որպես թշնամիներ:

3. Ալեքսանդր I-ի գահակալության շրջանում առաջացած հասարակական-քաղաքական առաջին հոսանքներն ունեցել են որոշակի զաղափարական հենք, իսկ դրանցից որոշներն էլ, ունենալով ծրագիր, Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ նույնիսկ կազմակերպչական տեսք են ստացել և իշխանությունը զավթելու փորձ կատարել:

4. Հաղթելով Նապոլեոնին՝ ռուսական պետական կառավարման ձևն ապացուցել էր իր կենսունակությունը, ուստի արմատականների որդեգրած մարտավարությունը չէր կարող հաջողություն ունենալ: Ասվածին ավելացնենք, որ աշխարհում հացի ու գյուղմթերքների զների աճը Ռուսաստանին ապահովել էին կայուն տնտեսություն, և այդ փուլում արմատական փոփոխությունների կարիք չէր զգացվում: Դեկաբրիստական շարժումը հաջողության չէր կարող հասնել նաև իր փոքրամասշտաբ լինելու և իրենց մեծ մտադրություններն իրականացնելու համար բուն ժողովրդի մեջ հեռարան չունենալու պատճառով:

5. Դեկաբրիստական շարժման պատմությունը վերաարժևորելու կարիք ունի, քանզի լուսաբանված չեն մասոնություն-դեկաբրիստներ կապերի ու փոխհարաբերությունների բազմաթիվ խնդիրներ: Չնայած դեռ չի անցել 230 տարի, սակայն չի բացառվում, որ Ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխության օրինակով նորօրյա մասոնները դարձյալ խոստովանեն, որ Ռուսաստանում հեղափոխական շարժման «ազնվականական փուլի» սկզբի՝ 1825թ. դեկտեմբերի 14-ի ապրստամբության այդ անգամվա անհաջող փորձը ևս իրենք են նախաձեռնել այլ կազմակերպությունների անվան տակ:

3. Ա.Ս. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորումն ու դրսևորումները

Ա.Ս. Գրիբոյեդովի՝ Պարսկաստանում ծավալած գործունեության լուսաբանումը թերի կլինի, եթե չներկայացվեն նախքան կովկասյան տարիները նրա կյանքի այն դրվագները, որոնցով պայմանավորվել է նրա հետագա ճակատագիրը: Խորհրդային հետազոտող Ա. Լեբեդևն իր աշխատության ներածականում նշում է, որ *Գրիբոյեդովի մասին հնարավոր չէ գրել համակարգված աշխատություն, և դրա մեղավորն ինքը՝ Գրիբոյեդովն է՝*

Ժամանակին այս հարցին անդրադառնալով՝ Ա.Ս. Պուշկինը գրել է. «Նրա կենսագրությունը գրելը պետք է նրա ընկերների գործը լիներ, բայց հրաշալի մարդիկ մեզ մոտ անհետանում են՝ իրենց մասին ոչ մի հետք չթողնելով: Մենք ծույլ ենք և անհետաքրքրասեր»²:

Ա. Գրիբոյեդովին վերաբերող *վիճահարույց հարցերը սկսվում են նրա ծննդյան տարեթվի լուսաբանումից*: Նրա ծննդյան ընդունված տարեթիվը համարվում է 1795թ. հունվարի 4-ը: Մակայն գոյություն ունեն տեսակետներ՝ ըստ որի Գրիբոյեդովը ծնվել է 1790-1795թթ. միջակայքում: Նրա ծննդյան տարեթվին վերաբերող աղբյուրներն ու վկայությունները կարելի է բաժանել երեք խմբի.

1) *Պաշտոնական աղբյուրներ*, որոնցից են եկեղեցական ծխական համայնքների տեղեկագրքերը, ռազմական արխիվներում պահպանված փաստաթղթերը, Արտաքին գործոց կոլեգիայի փաստաթղթերը,

2) *Ա. Գրիբոյեդովի ձեռքով գրված վավերագրերը,*

3) *Ժամանակակիցների կողմից թողած հուշերն ու ընտանեկան աղբյուրները:*

Նրա՝ 1790թ. ծնված լինելու մասին է վկայում Արտաքին գործերի նախարարությունում պահպանված ծառայողական ցուցակը, որում 1829թ. Ա. Գրիբոյեդովի տարիքը նշված է 39 տարեկան³: Այս հանգամանքը բացատրելիս խորհրդային շրջանում առաջ է քաշվել մի վարկած, ըստ

որի՝ 1818թ., ռուսական դեսպանության կազմում Պարսկաստան մեկնելուց առաջ Ա. Գրիբոյեդովն *Արտաքին գործերի գերատեսչությանն առաջարկել է իր պաշտոնը կոլեգիական քարտուղարից բարձրացնել կոլեգիական ասեստրի աստիճանի, և որպեսզի տարիքը համապատասխանի պաշտոնին, ու բարձրացվի աշխատավարձը, որպես ծնրնդյան տարեթիվ նշել է 1790 թվականը*: Դրանից հետո, ինքնաբերաբար, բոլոր ծառայողական ցուցակներում նրա տարիքը համապատասխանում է 1790թ. ծնված լինելուն⁴: Ա. Գրիբոյեդովն այս նույն տարեթիվն է նշել նաև դեկաբրիստների գործով ձերբակալված ժամանակ Հետաքրքրնոդ կոմիտեին տրված պատասխաններում⁵: *Ջին. Գավիդովի* խըմբագրած աշխատության մեջ Ա. Գրիբոյեդովի կողմից քննչական գործում նշած տարեթիվ է ներկայացվում *1796-ը*⁶: Հետագայում խորհրդային ուսումնասիրողներից ոմանք 1790թ. նրա ծնված լինելն ապացուցելու համար որպես փաստարկ են բերել Ա. Գրիբոյեդովի՝ 1825թ. հունվարի 4-ին Ստ.Ն. Բեգիչևին ուղղած մի նամակ, որում ասվում է. «Այսօր իմ ծննդյան օրն է. ինչ եմ ես: Իմ կյանքի կես ճանապարհին եմ, շուտով ծեր ու հիմար կլինեմ, ինչպես իմ բոլոր ազնվածին ժամանակակիցները»⁷: Ըստ մեկ այլ վարկածի՝ «կյանքի ճանապարհի կես» արտահայտությունը վերցված է *Դանթեի* «Աստվածային կատակերգություն»-ից⁸: Քանի որ *Դանթեն կյանքի կես ճանապարհը համարել է 35 տարին, ապա, դրանից ելնելով, ստացվում է, որ Գրիբոյեդովը ծնվել է 1790թ.:*

Մակայն այս փաստարկը հերքվել է՝ պատճառաբանելով, որ Ա. Գրիբոյեդովը ծանոթ չի եղել Դանթեի ստեղծագործությանը, քանի որ այն դեռ թարգմանված չէր Պ.Ա. Կատենինի կողմից: Պ. Կատենինն այն սկսել է թարգմանել 1828թ., այսինքն՝ Ա. Գրիբոյեդովի գրած նամակից 3 տարի անց, երբ Ա. Գրիբոյեդովի հետ արդեն նամակագրական կապ չկար: Միևնույն ժամանակ բազմաթիվ փաստերով փորձ է արվել ապացուցել, որ ռուսական մշակույթի մեջ «կյանքի ճանապարհի կես» ասելով նկատի է առնվել 30 տարին (Մ. Ստրոգանովի աշխատության խմբագիր Մ. Ֆոմիչևը, հղում կատարելով *Դանթեին և Հերոդոտոսին*,

4 Строганов М.В. Год рождения Грибоедова или "Полпути жизни", в книге Грибоедова А.С., Материалы к биографии, сборник научных документов, Отв. Ред. Фомичев С.А., Изд-во "Наука", Ленинград, 1989, с. 15-16.

5 А.С. Грибоедов в воспоминаниях современников, Եզվ. աշխ., էջ 282:

6 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., Եզվ. աշխ., թիվ 3 ծանոթագրություն:

7 Грибоедов А.С., Сочинения в двух томах, Է. 2, Եզվ. աշխ., էջ 237:

8 Кожин В.В., Легенды и факты (Заметки о Грибоедове, Баратынском, Есенине), "Русская литература", "Наука", Л., 1975, №2, с. 145-148.

1 Лебедев А., Грибоедов, факты и гипотезы, Եզվ. աշխ., էջ 9:

2 Пушкин А.С., Собрание сочинений, В 10-ти томах, Изд-во АН СССР, М.-Л., 1949, т. 8, кн. 1, с. 462.

3 А.С. Грибоедов в воспоминаниях современников, Под ред. Вацура В.Э., Եզվ. աշխ., էջ 266:

ինչպես նաև Աստվածաշնչի 89-րդ սաղմոսին, նշում է 35 տարին – Վ.Ս.), ուստի Գրիբոյեդովն իր նամակում «կյանքի կես ճանապարհը» նշելիս նկատի էր ունեցել իր 30 տարեկան լինելը⁹:

1792-1793թթ. Ա. Գրիբոյեդովի ծնված լինելու մասին տեղեկություններ են տալիս նրա մտերիմ ընկերները: Նրանցից **Ֆ.Վ. Բուլգարինը** գրում է. «Գրիբոյեդովը ծնվել է մոտավորապես 1793թ.»¹⁰: Մատնանշվել է, որ **Օ.Բ. Սենկովսկին** ևս նշում է 1793 թվականը, իսկ **Ն. Գրեչը** որպես Ա. Գրիբոյեդովի ծննդյան տարեթիվ է նշում 1792 թվականը¹¹:

Որոշ հետազոտողներ, վկայակոչելով **Մոսկվայի եկեղեցական համայնքների ծնունդների գրանցման գրքերը**, հերքում են 1792-1793 թվականներին Ա. Գրիբոյեդովի ծնված լինելու փաստը, քանի որ 1792թ. հուլիսի 4-ին է կնքվել նրա քույր **Մարիա Սերգեևնա Գրիբոյեդովան**, իսկ մեկ այլ գրառմամբ՝ «1795թ. հունվարի 13-ին օրիորդ Պրասկովյա Իվանովնա Շուշրինայի տանը բնակվող սեկունդ-մայոր Սերգեյ Իվանովիչ Գրիբոյեդովին (գրողի հորը – Վ.Ս.) ծնվել է որդի Պավելը, կնքվել է նույն ամսի 18-ին: Կնքահայրը եղել է գեներալ-մայոր Նիկոլայ Յակովլևիչ Տինկովը»¹²:

Այլ հետազոտողների կարծիքով վերոհիշյալ **գրառման մեջ կան անճշտություններ**. նախ՝ **չկա կնքամոր անունը**, բացի այդ՝ նույն գրքում ժամանակին եղել է մի բացթողում, որը պարզվել է 48 տարի անց: Այս ամենը թույլ է տվել եզրակացնել. «Գրությունը դպիրի կողմից կատարվել է անփութորեն և դրան վստահել չի կարելի: Գրանում բացակայում է նաև 1795թ. կնքված մեկ այլ անձ... Այս ամենը մեզ իրավունք է տալիս հաստատելու, որ 1795թ. Գրիբոյեդով Պավելի ծնված լինելու գրառումն իրականում վերաբերում է ապագայում անմահ կատակերգության հեղինակ Ալեքսանդր Գրիբոյեդովի ծննդյանը»¹³:

Ի դեմս վերոհիշյալ տեսակետների՝ բավարար հիմք չի համարվել այդ անճշտությունը, և նշվել է, որ կատարված գրանցման մեջ, այնուամենայնիվ, մնացած բոլոր մարդկանց անունները ճիշտ են գրված և պնդվել է հակառակը, թե. «...Պրա համար էլ Ս.Բ. Գրիբոյեդովի Պավել որդու ծննդյան գրառումը 1795թ. հունվարի 13-ին՝ ամենաձանր հերքումն է

հանդիսանում ընտանեկան այն ավանդության, թե իբր Ալեքսանդր Գրիբոյեդովը ծնվել է 1795թ.: Հետևաբար մենք կարող ենք հավատալ մեծահասակ Գրիբոյեդովին, որը գտնում էր, որ ինքը ծնվել է 1790 թվականին»¹⁴: «Ընտանեկան ավանդույթ» ասելով՝ ժողովածուի խմբագիր Ս. Ֆոմիչևը նրկատի ունի Գրիբոյեդովի մոր և քրոջ կարծիքները, որոնց հետևել է վերջինիս կինը՝ **Նինո (Նինա) Ճավճավաձեն**՝ երկար ջանքերից հետո Գրիբոյեդովի տապանաքարին նրա ծննդյան տարեթիվը նշելով 1795-ը¹⁵: 1795թ. ծնված լինելու օգտին է արտահայտվել նաև Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկեր **Սա. Բեգիչևը**¹⁶:

1813թ. ծառայողական ցուցակում Ա. Գրիբոյեդովի տարիքը նշված է 18 տարեկան: Համաձայն **Մոսկվայի «Ինը տառայալների» եկեղեցու** խոստովանագրքի գրառումների՝ 1805թ. Ա. Գրիբոյեդովի տարիքը նշված է 10, 1807թ.՝ 15 տարեկան¹⁷: Ա. Գրիբոյեդովի՝ 1794թ. ծնված լինելու օգտին են վկայում տարեկան 2 անգամ (հունվարի 1-ին և հուլիսի 1-ին) Ռազմական կոլեգիայի տեսչական բաժին ներկայացված «Список о службѣ и достоинстве имаѣ и о дер офуцеров Иркутского полка» («Ցուցակ Իրկուտսկյան զնդի շտաբային և ավագ սպաների ծառայության և արժանիքների» - Վ.Ս.) փաստաթղթում նշված տվյալները, որտեղ Ա. Գրիբոյեդովի տարիքը 1814թ. հունվարի 1-ին նշված է 20 տարեկան, 1814թ. հուլիսի 1-ին՝ 20 տարեկան, 1815թ. հունվարի 1-ին՝ 21 տարեկան: Մրա հիման վրա **1816թ. մայիսի 8-ին զինվորական ծառայությունը թողնելու առիթով Ա. Գրիբոյեդովին տված «անձնագրում» նրա տարիքը նշված է 22 տարեկան**¹⁸:

Արդի հետազոտող **Ա. Խաչատրյանը**, ընկնելով ծայրահեղության մեջ, երկվորյակներ **Ա. Գրիբոյեդովին և նրա քույր Մարիային ներկայացնում է արտամուսնական (իմա՝ ապօրինի) կապերի ծնունդ**, որպես Ա. Գրիբոյեդովի ծննդյան թվական նշվում է 1792-ը¹⁹, իսկ նրա ծնողների ամուսնության տարին՝ 1793 թվականը: Մրա պատճառ է համարվում առողջական վիճակի պատճառով ծառայությունից պաշտոնաթողութ-

9 Струганов М.В., նշվ. աշխ., էջ 10-18, տես նաև՝ Данте А., Малые произведения, "Наука", М., 1968, с. 253, с. 254-255, 2երդրոտու, պատմություն ինը գրքից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 16, Кюхельбекер Вильгельм

Карлович, Путешествие, Дневник, Статьи, "Наука", Ленинград, 1979, с. 140.

10 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 9:

11 Струганов М.В., Год рождения Грибоедова..., նշվ. աշխ., էջ 17 (Ս. Ֆոմիչևի մեկնաբանությունները):

12 Նույն տեղում՝ էջ 18 (Ա. Ռեվիլյակի տեսակետը):

13 Краснов П.С., "Ещё раз о дате рождения Грибоедова", Русская литература, "Наука", Л., 1975, №4, с. 153-154.

14 Струганов М.В., Год рождения Грибоедова..., նշվ. աշխ., էջ 19 (խմբագիր Ս. Ֆոմիչևի մեկնաբանությունները):

15 Նույն տեղում՝ էջ 16:

16 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 36:

17 Струганов М.В., Год рождения Грибоедова..., նշվ. աշխ., էջ 16-17 (խմբագիր Ս. Ֆոմիչևի մեկնաբանությունները Ստրոգանովի հաղվածի շուրջ):

18 Նույն տեղում՝ էջ 17:

19 Хачатрян А.С. (Артемис), "А.С. Грибоедов как явление истории и культуры", Составитель и ред-ор сборника, Изд-во "Менеджер", Москва, 2009, с. 139-141.

14 Струганов М.В., Год рождения Грибоедова..., նշվ. աշխ., էջ 19 (խմբագիր Ս. Ֆոմիչևի մեկնաբանությունները):

15 Նույն տեղում՝ էջ 16:

16 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 36:

17 Струганов М.В., Год рождения Грибоедова..., նշվ. աշխ., էջ 16-17 (խմբագիր Ս. Ֆոմիչևի մեկնաբանությունները Ստրոգանովի հաղվածի շուրջ):

18 Նույն տեղում՝ էջ 17:

19 Хачатрян А.С. (Артемис), "А.С. Грибоедов как явление истории и культуры", Составитель и ред-ор сборника,

Изд-во "Менеджер", Москва, 2009, с. 139-141.

յան արդյունքում գրողի հոր համար ստեղծված նյութական վատ վիճակը, ինչը խանգարել է **գրողի մայր Նաստասյա Ֆեոդորովնայի** հետ նրա օրինական ամուսնությանը, և որ երկվորյակները ծնվել են նախքան 1793թ. նրանց ամուսնությունը: **Այս ամենն էլ, իբր, ստիպել է Նաստասյա Ֆեոդորովնայի ծնողներին ճարահատյալ համաձայնել այդ «անշահավետ» ամուսնությանը: Մա ապացույց չունի:** 1792թ. Ա. Գրիբոյեդովի ծնված լինելու հանգամանքը կապվում է Էստերեյիսի նկարած գրողի հանրահայտ դիմանկարից **Ն. Ուտկինի** կատարած պատճենի տակ արված թվականի առկայության հետ՝ ենթադրաբար նշելով, որ 1792 թվականը նկարի տակ դնելու խնդիրն Ուտկինը իբր լուծել է Նաստասյա Ֆեոդորովնայի հետ խորհրդակցելուց հետո: **Այս ենթադրությունը ևս ապացույց չունի: Անգամ փորձ չի արվել բարձրացնել այն հարցը, թե այդ դեպքում ինչու՞ է Ա. Գրիբոյեդովի մայրը որդու վախճանից հետո Ուտկինին հուշել 1792-ին ծնված լինելու թվականը, իսկ այրիացած իր հարսին ներկայացել 1795 թվականը:**

Հետազոտողների տրամադրության տակ եղած տվյալներով Ա. Գրիբոյեդովի ծննդյան տարեթիվը ճշգրիտ որոշելը բավականին դժվար է: Նրա ծննդյան հավանական տարեթիվ կարելի է համարել ինչպես 1790, այնպես էլ՝ 1794 և 1795 թվականները: 1792 և 1793 թթ. օգոստին առկա փաստաթղթերը և վկայությունները համոզիչ չեն: Կարծում ենք՝ առավել իրատեսական է Ա. Գրիբոյեդովի ծննդյան հավանական տարեթիվ ընդունել արդեն հաստատված 1795թ. հունվարի 4-ը: Խորհրդային հետազոտողները շրջանցել են այն հարցը, թե Ա. Գրիբոյեդովի մորից ու քույր Մարիայից ավելի ստույգ նրա ո՞ր մի ընկերը կարող էր վկայել կամ փաստել նրա ծննդյան ճշգրիտ թվականը: Ա. Գրիբոյեդովի ծննդյան տարեթիվի շուրջ խառնաշփոթի հիմնական պատճառը հենց ինքն է, քանզի, հանուն ծառայողական առաջընթացի, նա փոփոխել է այն: Փաստենք, որ մինչև խորհրդային պատմագիտությունն այնքան էլ խորամուխ չի եղել այս հարցում: Իսկ թե ինչու է այս հարցը բուռն քննարկումների նյութ դարձել խորհրդային պատմագիտության համար, պատասխանը, մեր կարծիքով, այն է, որ Ա. Գրիբոյեդովի տարիքը 5 տարով մեծացնելու դեպքում (1790) խորհրդային հետազոտողները ստիպված պետք է լուրջ դժվարությունների հանդիպեին նրա գաղափարական հասունացման, գրական գործունեության գնահատման և բացարձականացման հարցերում: Այս հարցին դեռ կանդրադառնանք:

Ա. Գրիբոյեդովի ուսանողական տարիների վերաբերյալ վկայություններում նշվում է, թե 1803թ. նա սովորել է Մոսկվայի համալսարանի ազնվատոհմիկ պանսիոնում, 1806-1808թթ.՝ Մոսկվայի համալսարանի լեզվաբանության ֆակուլտետի լեզվաբանության բաժնում, իսկ 1808թ. ստացել է լեզվաբանության թեկնածուի աստիճան: 1808-1810թթ. նա ուսանել է էթիկա-քաղաքական ֆակուլտետի իրավաբանության բաժնում և ստացել իրավունքի թեկնածուի աստիճան, իսկ 1810-1812թթ. սովորել է ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում: 1812թ. Ա. Գրիբոյեդովը պատրաստվել է քննություն հանձնել իրավաբանության դոկտորի աստիճան ստանալու համար: Այս դեպքում էլ կասկածի են ենթարկվել նաև Ա. Գրիբոյեդովի ուսման հետ կապված հարցերը²⁰, առաջ են քաշվել ու փորձել փաստերով հիմնավորել հետևյալը.

1. Ա. Գրիբոյեդովը Մոսկվայի համալսարանի ազնվատոհմիկ պանսիոնում սովորել է ոչ թե 1803-1806թթ. և համալսարան ընդունվել պանսիոնի նստարանից, այլ պանսիոնում սովորել է մինչև 1803թ. և համալսարան ընդունվել դաստիարակների օգնությամբ՝ տանը պարապելով ու պատրաստվելով:

2. Ա. Գրիբոյեդովն իրավաբանության բաժնում սովորել է ոչ թե 1808-1810թթ., այլ 1808-1812 թթ.: Այլ կերպ ասած՝ մաթեմատիկայի բաժնում նա չի սովորել:

3. Ա. Գրիբոյեդովն իրավունքի թեկնածուի աստիճան չի ունեցել. նա դա հորինել է՝ հետագայում բարձր պաշտոն ստանալու ակնկալիքով:

Պանսիոնում Ա. Գրիբոյեդովի անցկացրած տարիների մասին որպես ապացույց է բերվել ամեն տարվա վերջում **“Московские ведомости” հանդեսում** տպագրվող պանսիոնի հաշվետվությունները, որոնցում Ա. Գրիբոյեդովը որպես մրցանակակիր հիշատակվում է ընդամենը մեկ անգամ՝ 1803թ. դեկտեմբերի 22-ի համարում²¹: Հետագա տարիների հաշվետվություններում նրա անունը չի հիշատակվում: Ավելին, Ա. Գրիբոյեդովի անունը վկայված չէ նաև պանսիոնի՝ 1805թ.

20 Дубшан Л.С., “Из московских лет Грибоедова”, в книге “Грибоедов А.С. Материалы к биографии”, Ред. Фомичев С.А., “Наука”, Ленинград, 1989, с. 19-48 (Ա. Գրիբոյեդովի ուսման, զինվորական ծառայության, Վ. Շերեմետև – Ա. Ջավադովսկի մենամարտի, ինչպես նաև Արտաքին գործերի նախարարությունում աշխատանքի անցնելու և ծառայողական աստիճանով վեր բարձրանալու շուրջ փաստաթղթերի մասին ավելի մանրամասն տե՛ս Белокуров С., “Материалы для характеристики русских писателей, художников, общественных деятелей: А.С. Грибоедов”, “Русское обозрение”, Университетская типография, Москва, 1895, № 3, с. 382-392).

21 Дубшан Л.С., Из московских лет Грибоедова..., նշվ. աշխ., էջ 19-20:

տպագրված այն աշակերտների ցուցակում, որոնք միանգամից դարձել են համալսարանի ուսանող:

Ֆ. Բուլգարինը, խոսելով Ա. Գրիբոյեդովի ուսումնառության տարիների մասին, ընդհանրապես չի հիշատակում պանսիոնում նրա ուսանած լինելու հանգամանքը²²: **Ա. Գրիբոյեդովին քաջածանոթ Ֆ. Բուլգարինը դժվար թե տեղյակ չլիներ պանսիոնում Ա. Գրիբոյեդովի ուսումնառության մասին:** Ինչ վերաբերում է 1810թ. Ա. Գրիբոյեդովի կողմից Մոսկվայի համալսարանի էթիկա-քաղաքական ֆակուլտետի իրավաբանության բաժինն ավարտելուն և իրավունքի թեկնածուի աստիճան ստանալուն, իսկ այնուհետև՝ 1810-1812թթ., ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում սովորելուն, ապա վկայակոչելով 1939թ. Մոսկվայի համալսարանի 1810-1811 և 1811-1812 ուսումնական տարիների ուսանողների գրանցման վերաբերյալ հայտնաբերված գրքերը²³, ցույց է տրվել, որ դրանցում առկա են Ա. Գրիբոյեդովի կողմից կատարված երկու գրանցում: **Ըստ դրանցից մեկի՝ Ա. Գրիբոյեդովը, նշելով թե ում դասախոսությունները կկամենար ունկրդրել 1811/12 ուս. տարում, թվարկել է միայն այն դասախոսների անունները (Ռեյնգարդ, Շտեյգեր, Շլեյգեր, Սանդրոնով), ովքեր դասավանդում էին էթիկա-քաղաքական ֆակուլտետում: Բնականաբար հարց է ծագում. ի՞նչ կարիք կար հաճախել այն ֆակուլտետի դասախոսություններին, որն Ա. Գրիբոյեդովն արդեն ավարտել էր:**

Գրանցման մեջ չկան նաև այնպիսի դասախոսների անուններ, ովքեր դասավանդած լինեին ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում: Այնուհետև **վերոհիշյալ տեղեկությանն ավելացվել է նա երկու փաստարկ, որոնցից երևում է, որ 1810թ. Ա. Գրիբոյեդովը չի ավարտել էթիկա-քաղաքական բաժինը և չի ստացել իրավունքի թեկնածուի աստիճան: Բացի այդ՝ 1812թ. պատերազմից առաջ նա չի պարապել մաթեմատիկայի բաժնում, այլ շարունակել է սովորել էթիկա-քաղաքական ֆակուլտետում:** Նախ՝ 1810թ. Ա. Գրիբոյեդովի անունը չկա ո՛չ “Московские ведомости”-ում, ո՛չ էլ՝ “Периодическое сочинение об успехах народного просвещения” ամսագրում ամեն տարի հրապարակվող այն անձանց ցուցակում, ովքեր ստացել էին թեկնածուի աստիճան: Այնուհետև նշվել է, որ Ա. Գրիբոյեդովն

ինքն էլ պաշտոնական փաստաթղթերում (ինչպես նաև վերոհիշյալ ժողովածուներում) **երբեք չի նշել իր՝ կրկնակի թեկնածու լինելու հանգամանքը, այլ միշտ հիշատակել է լեզվաբանության (ստացած 1808թ.) կամ իրավունքի թեկնածու լինելու հանգամանքը (բայց ամեն անգամ նշել է դրանցից միայն մեկը – Վ. Ս.):** Բացի այդ՝ նշվել է, որ 1803-1812թթ. Մոսկվայի համալսարանի 750 ուսանողների մասին մեզ հասած տեղեկություններում կրկնակի թեկնածու լինելու ընդամենը մեկ դեպք է եղել (**ոմն Սեմյոն Լյուբիմով**), և եթե Ա. Գրիբոյեդովը կրկնակի թեկնածու եղած լիներ, ապա դա պետք է որ հերթական արտառոց դեպքը եղած լիներ և անպայման ինչ-որ տեղ հրապարակված լիներ²⁴:

Ինչ վերաբերում է Ա. Գրիբոյեդովի իրավունքի թեկնածու լինելու հանգամանքին, ապա այս կապակցությամբ ներկայացվել է երկու փաստաթուղթ, որոնցում **Ա. Գրիբոյեդովն ինքն էր իր ձեռքով նշել իրավունքի թեկնածու լինելու հանգամանքը: Գրանցից առաջինը** 1815թ. դեկտեմբերի 20-ի թվագրությամբ զինվորական ծառայությունից նրա հրաժարականն է (ըստ Լ. Դուբշանի՝ դրա պատճենը պահպանված է Ն.Կ. Պիկասնովի արխիվում), որում առաջին անգամ Ա. Գրիբոյեդովը որպես իր ունեցած գիտական աստիճան նշել է իրավունքի թեկնածուի հանգամանքը՝ ստացած իբր 1810թ. հունիսի 15-ին, ինչպես նաև այն, որ 1812թ. նա իբր պատրաստվել էր քննություն հնձնել իրավունքի դոկտորի աստիճանի համար: **Հրաժարականում Ա. Գրիբոյեդովը թափանցիկ ակնարկում էր, որ, ի տարբերություն ուսումը շարունակել նախընտրող իր «հասակակիցներից շատերի», ինքն արձագանքել էր հայրենիքը պաշտպանելու կայսերական կոչին և շատ բան էր կորցրել քաղաքացիական ծառայության մեջ վերելքի հասնելու համար, ուստի համապատասխան, բայց ոչ անմիջական փոխհատուցում էր պահանջում այն բանի համար, որ ինքը նախընտրել էր ռազմական ծառայության շահերին զոհաբերել ուսման մեջ ունեցած հաջողությունները:**

Ա. Գրիբոյեդովը խնդրել էր, որ իրեն որպես քաղաքացիական պաշտոն տրվեր **կոլեգիական ասեստորի աստիճան, ինչը 3 աստիճան թոփչք էր այդ պահին նրա զինվորական կոչմանը համապատասխանող քաղաքացիական պաշտոնից** (նրա զինվորական կոչումը կոռնետ էր, իսկ քաղաքացիական կյանքում դա համապատասխանում էր նախանգային քարտուղարի պաշտոնին – Վ.Ս.): Նշենք, որ Ա. Գրիբոյեդովի այդ

24 Дубшан Л.С., Из московских лет..., նշվ. աշխ., էջ 36:

22 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 10:

23 Дубшан Л.С., Из московских лет..., նշվ. աշխ., էջ 35. տես նաև՝ Сорокин В., “Новые сведения о студенческих годах Грибоедова А.С.”, Московский университет, Изд-во Московского университета, Москва, 1939, 26 июля, № 49, с. 4.

խնդրանքը բավարարում չէր ստացել, և նա բանակից հեռացել էր 12-րդ դասի պաշտոնյայի (չինովնիկի) պաշտոնով²⁵: Հետագայում, սակայն, նրա բոլոր պաշտոնական փաստաթղթերում շարունակել է նշվել «իրավունքի թեկնածու» լինելու հանգամանքը:

Երկրորդ փաստաթուղթը Արտաքին գործերի կոլեգիային ներկայացրած գրությունն էր այն բանից հետո, երբ բավարարվել էր նրա պաշտոնը կրկնակի բարձրացնելու խնդրանքը: Այստեղ, արդեն, Ա. Գրիբոյեդովը, այն ժամանակ գործող կանոնակարգի համաձայն, **պետք է ներկայացնեք գիտական աստիճան ունենալու մասին գրավոր ապացույց**: Նա իր գրությանը կցել էր **լեզվաբանության կամ, ինչպես գրված էր փաստաթղթում, «ազատ արվեստների թեկնածուի»** վկայական, իսկ բուն գրության մեջ, այս հանգամանքը շրջանցելով, **ուղղակի նշել էր միայն 12-րդ դասի թեկնածու լինելու չեզոք ձևակերպումը**: «Ազատ արվեստների թեկնածուի» կոչումը նա ստացել էր 1808թ., բայց քանի որ 1809թ. օգոստոսի 6-ի հաստիկ հրամանագրով կոլեգիական ասեստր կարող էին դառնալ նրանք, ովքեր կներկայացնեին քաղաքացիական ծառայության մեջ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ ունենալու մասին տեղեկանք, **ուստի այդ նպատակով էլ իր՝ «իրավունքի թեկնածու» «դատնալը» նա նշել է 1810 թվականով, այսինքն՝ փորձել է «հիմնավորել», թե իրր այդ աստիճանն ինքը ստացել է 1809թ. հրամանագրից հետո**²⁶:

Անդրադառնանք Ա. Գրիբոյեդովի զինվորական ծառայությանը: Երբ նա պոլեոնյան բանակը 1812թ. հունիսին ներխուժում է Ռուսաստան, Ա. Գրիբոյեդովը շատերի նման հուլիսի 26-ին կամավոր մեկնում է բանակ որպես նոր ձևավորվող Մոսկովյան հուսարական գնդի կոռնետ²⁷: Մակայն դեռ չձևավորված՝ այդ գունդը հրամանատար **կոմս Պ.Ի. Սալտիկովի մահից հետո** միավորվում է Իրկուտսկի հուսարական գնդին: Ա. Գրիբոյեդովը հայտնվում է **Իրկուտսկի հուսարական գնդում, որը ներառված էր պահեստային (ռեզերվային) բանակների հեծյալ պահեստագործի կազմում**: Հեծյալ պահեստագործի հրամանատարն էր գեներալ **Ա. Կոլոգրիվովը**: Ա. Գրիբոյեդովի գունդն այդպես էլ չի մասնակցում ռազմական գործողություններին, սակայն զինվորական **ծառայությունը** նրա կյանքում կարևոր նշանակություն է ունենում. դա

հարազատներից և տանից հեռու նրա ինքնուրույն կյանքի առաջին փորձն էր:

Պատմագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ Ա. Գրիբոյեդովը եղել է գեներալ Ա. Կոլոգրիվովի համհարզը: **Այս վարկածի համար հիմք է ծառայել Ա. Կոլոգրիվովի և Ա. Գրիբոյեդովի զեկուցագրերում վերջինիս՝ որպես համհարզ ներկայացվելու հանգամանքը**: **Դրանցում խնդրանք կար գորացրվելուց հետո Ա. Գրիբոյեդովին պարզևատրել կոլեգիական ասեստրի աստիճանով**:

Խորհրդային հեղինակ Ս. Սվերդլիևան, վկայակոչելով «История Иркутского полка» («Իրկուտսկյան գնդի պատմություն» – Վ.Ս.) գրքի հեղինակ **Ե. Ալբովսկու** կտրուկ ասված տողերը, թե. **«Ա. Գրիբոյեդովը գտնվում էր գրեթե համհարզի պաշտոնում»**²⁸, կասկածի տակ է առնում պաշտոնապես ընդունված կարծիքը և որպես ապացույց ներկայացնում է գեներալ Կոլոգրիվովի 1813թ. հուլիսի 21-ի հրամանագիրը, որում ասված է. **«Իրկուտսկի հուսարական գնդի կոռնետ Ա. Գրիբոյեդովը նշանակվում է ինձ մոտ գրավոր գործերը վարելու համար»**²⁹:

Ակնհայտ է, որ համհարզի պաշտոնի մասին ոչ մի խոսք չկա և լինել չէր էլ կարող, քանի որ գեներալ Կոլոգրիվովը արդեն ուներ **գրասենյակային գործերի կառավարիչ, որը Ն. Բեգիչևն էր, և ուներ «արշավախմբի կառավարիչ» (այսինքն՝ գործավարության կառավարիչ), որն Ա.Կ. Ամբուրգերն էր**: **Ս. Սվերդլիևան** նշում է, որ չի հաջողվել համապատասխան արխիվներում հայտնաբերել նաև Ա. Գրիբոյեդովի ձեռագրով գրված փաստաթղթեր, **«այսինքն՝ նա չէր կատարում գրագրի պարտականություններն այդ բանի բուն իմաստով»**³⁰:

Ըստ հետազոտող Ն. Պիկսանովի՝ գեներալի շտաբում ծառայության անցնելու հանգամանքը բացատրվել է Ա. Գրիբոյեդովի մոր՝ **Նաստասյա Ֆեոդորովնայի մոսկովյան կապերով**³¹: Ասվածին ավելացվել է նաև ծառայության ժամանակ Ա. Գրիբոյեդովի և Ա. Կոլոգրիվովի համհարզ Ստ. Բեգիչևի միջև հաստատված մտերիմ և ընկերական հարաբերությունների փաստը: **Ստ. Բեգիչևը բարեխոսել էր Ա. Գրիբոյեդովի համար, քանի որ, բացի համհարզ լինելուց, նա նաև Ա. Կոլոգրիվովի**

28 Свердлов С.В., «В военные годы» в книге «Трибодов А.С. Материалы к биографии», Сборник научных документов, Отв. ред. Фомичев С.А., Изд-во «Наука», Ленинград, 1989, с. 63.

29 Նույն տեղում՝ էջ 64:

30 Նույն տեղում՝ էջ 64:

31 Трибодов А.С., «Биографический очерк», Поли. собр. сочинений, В трёх томах, Изд-во Императорской Академии наук, под ред. Пиксанова Н.К., С.Петербург, 1911, т. 1, с. XVIII.

25 Дубшан Л.С., Из московских лет..., նշվ. աշխ., էջ 42-45:

26 Նույն տեղում՝ էջ 44-48:

27 Нечкина М., Грибодов и декабристы. 1977, նշվ. աշխ., էջ 130:

ազգականն էր³²:

Վերը ներկայացվածից եզրակացվել է. «Հատկապես Ստ. Բեգիչևը նպաստեց Գրիբոյեդովին չգոհացնող շարային ծառայությունից նրան ազատելուն և, անորոշ ձևակերպված պաշտոնի շնորհիվ, «գրավոր գործերի վարույթի համար» անվան տակ նրան հնարավորություն տվեց անդրադառնալ գրական աշխատանքին»³³: Մի փոքր շեղվելով՝ նշենք, որ Ստ. Բեգիչևը հետագայում դառնում է Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկերներից մեկը: Իր հուշերում Ֆ.Վ. Բուլգարինը գրում է. «Այդ ժամանակ Գրիբոյեդովը ծանոթացավ և ընկերացավ Ստեփան Նիկիտիչ Բեգիչևի հետ, որն այդ ժամանակ գեներալ Ա.Ս. Կոլոգրիվովի համհարզն էր, և հանձին նրա՝ գտավ իրական ընկերոջ ու խորհրդատուի... Գրիբոյեդովին սիրում էին շատերը, բայց, հարազատներից գատ, նրան ավելի մտերիմ էին Ստ.Ն. Բեգիչևը, Անդրեյ Անդրեևիչ Ժանդրը և ես... բայց Գրիբոյեդովի հետ ընկերություն անելու առաջնայնության իրավունք ուներ Բեգիչևը»³⁴:

Ի դեպ, զինվորական ծառայության ժամանակ Ա. Գրիբոյեդովը ծանոթացել էր նաև դրամատուրգ **Ա.Ա. Շախտվսկու (Շախտվսկոյի) հետ**³⁵, որը կարևոր դեր էր խաղացել Ա. Գրիբոյեդովի վաղ շրջանի գրական գործունեության մեջ:

Այսպիսով, Ա. Գրիբոյեդովը գեներալ Ա. Կոլոգրիվովի համհարզ է «ձևակերպվել»՝ **ա) զինվորական ծառայությունից իր հրաժարականում, բ) Ա. Կոլոգրիվովի կողմից ներկայացրած գրության մեջ, ինչը վկայում է Գրիբոյեդովի և գեներալի նախօրոք պայմանավորվածության մասին: Ա. Գրիբոյեդովի՝ գեներալ Կոլոգրիվովի համհարզը չհանդիսանալու, այլ նրա «անձնական քարտուղարը» եղած լինելու**³⁶ վարկածն առավել համոզիչ է:

Քանի որ Ա. Գրիբոյեդովի պաշտոնի անորոշ ձևակերպման շնորհիվ նա բավականին ազատ ժամանակ է ունեցել «գրական» գործունեությամբ զբաղվելու. **“Вестник Европы” պարբերականում** 1814թ. հրապարակվում են նրա երկու հոդվածները, որոնցից **մեկը նվիրված էր սպայական տոնի նկարագրությանը, իսկ երկրորդում խոսվում էր գործող բանակի համար հեծյալ պահեստազորի ձևավորման մասին**³⁷:

32 Мещеряков В.П., Прибоедов А.С., Литературное окружение и восприятие, նշվ. աշխ., էջ 5:

33 Свердлина С.В., “В военные годы”..., նշվ. աշխ., էջ 66:

34 А.С. Прибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 11-12:

35 Նույն տեղում՝ էջ 12:

36 Свердлина С.В., “В военные годы”..., նշվ. աշխ., էջ 64:

37 Орлов В.Л., Прибоедов, Очерк жизни и творчества, նշվ. աշխ., էջ 25-26:

Բանակում Ա. Գրիբոյեդովի գրական հակումների դրսևորման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ դեռևս 1815թ. ամռանը, լինելով զինվորական ծառայության մեջ, **նա արձակուրդ էր ստացել՝ առողջությունը վերականգնելու համար պետերբուրգյան բժիշկների հետ տեսակցելու պաշտոնական ձևակերպմամբ** (դրանից մի քանի ամիս առաջ նա ընկել էր ձիուց և վնասել կուրծքը)³⁸: Սակայն արձակուրդ վերցնելու իրական նպատակն իր ստեղծագործությունները պետերբուրգյան հասարակությանը ներկայացնելն էր:

Չաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա. Գրիբոյեդովը՝ որպես Մոսկովյան հուսարական գնդի կոռնետ, կամավոր էր մեկնել բանակ, իսկ հրամանատարի վերահաս մահվան պատճառով այդպես էլ չձևավորված գունդը միավորվել է հեծյալ պահեստի Իրկուտսկի հուսարական գնդին, **կարելի է փաստել, որ զինվորական ծառայության առաջին տարվա զգալի մասն Ա. Գրիբոյեդովն անց է կացրել առանց այդ ժամանակվա պատերազմական իրավիճակի ողջ ծանրությունն իր վրա զգալու:**

1815-1818թթ. պետերբուրգյան տարիներին է Ա. Գրիբոյեդովը դրամատուրգիայի ասպարեզում կատարել գրական առաջին փորձերը: **1814 կամ 1815թթ. են գրվել “Молодые супруги” («Երիտասարդ ամուսիններ» - Վ.Ս.), 1817թ.՝ “Студент” («Ուսանողը» - Վ.Ս.), 1817թ.՝ “Своя семья или замужняя невеста” («Իր ընտանիքը կամ ամուսնացած հարսնացուն» - Վ.Ս.), 1817-1818 թթ.՝ “Притворная неверность” («Ծիծեռու անհավատարմություն» - Վ.Ս.) կատակերգությունները**³⁹: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ ստեղծագործություններն ընդամենը համահեղինակային թարգմանություններ են օտարերկրյա հեղինակներից: Այսպես, **“Молодые супруги”-ն ֆրանսիացի դրամատուրգ Բոնգե դե Լեսսերի ստեղծագործություններից մեկի ազատ վերամշակված թարգմանությունն է, “Студент”-ի համահեղինակը Պ. Կատենինն է, “Своя семья или замужняя невеста” գործի համահեղինակները մեծ մասամբ Ա. Շախտվսկին ու Ն.Ի. Խմելնիցկին են, իսկ “Притворная неверность”-ը XVIII դ. ֆրանսիացի դրամատուրգ Բարթի ստեղծագործության թարգմանությունն է՝ Ա. Ժանդրի համահեղինակությամբ**⁴⁰:

38 Фомичев С.А., Прибоедов в Петербурге, նշվ. աշխ., էջ 9:

39 Прибоедов А.С., Сочинения в двух томах, Москва, 1971, т. 1, с. 164-316.

40 Петров С., А.С. Прибоедов. Критико-биографический очерк, նշվ. աշխ., էջ 18:

Խնդիր չունենալով անդրադառնալ վերոհիշյալ ստեղծագործությունների վերլուծությանը՝ նշենք միայն, որ *նույնիսկ խորհրդային բժախրնդիր հեղինակները դրանք գրական լուրջ գործեր չեն համարել և նշել են*. «Այդ պիեսներում դեռ չկան ո՛չ կենդանի կրթեր, ո՛չ էլ՝ ինքնատիպ բնավորություններ»⁴¹: **Հավելենք նաև, որ հայտնի չէ, թե թվարկված գործերից որ մեկից ինչքանն է թարգմանել Ա. Գրիբոյեդովը:**

1810-1820-ական թվականներին Ռուսաստանում գրական միտքը ներկայացնում էր բավականին խայտաբղետ պատկեր. միմյանց դեմ պայքարում էին գրական մի քանի հոսանքներ: Դեռևս **1811թ. ստեղծվել էր կլասիցիզմի (դասականության) հետևորդների գաղափարները ներկայացնող “Бесѣда любителей русскаго слова” («Ռուսական խոսքը (բանահյուսությունը) սիրողների գրույց» - Վ.Ս.) կազմակերպությունը:**

1815թ. ստեղծվում է “Арзамас” («Արզամաս» - Վ.Ս.) ընկերությունը, որի կարկառուն ղեմերից էին **Ն.Մ. Կարամզինը և Վ.Ա. Ժուկովսկին:** Այս ընկերությունը հիմնականում կազմված էր առաջադեմ ազնվականներից, որոնք, հակադրվելով կլասիցիզմի հետևորդներին, նոր ժանրեր էին փնտրում գրականության մեջ՝ ձգտելով գրական ռուսերենը մոտեցնել խոսակցական ռուսերենին: Այն ավելի արևմտամետ էր և նույնիսկ ուներ վերագգային (կոսմոպոլիտ) դրսևորումներ:

1816թ. ստեղծվում է **“Вольное общество любителей руссической словесности” («Ռուսաստանյան բանահյուսության սիրահարների ազատ ընկերություն» - Վ.Ս.)** կազմակերպությունը, որում հետագայում կարևոր դեր են խաղում ապագա ղեկավարիստներ **Կ. Ռիլենը, Վ. Կյուխելյեկերը, Ա. Բեստուժևը:** 1824թ. այս կազմակերպության անդամ է դառնում նաև Ա. Գրիբոյեդովը: Հիշյալ գրողները գտնում էին, որ գրականությունը պետք է ծառայի բարոյական դաստիարակության նպատակներին՝ կյանքը պատկերելով իրական գույներով: Նրանք ձրգտում էին ազատվել օտարերկրյա ազդեցություններից և ստեղծել ռուսական ազգային գրականություն: 1819թ. ստեղծվում է նաև **“Зелёная лампа” («Կանաչ լապտեր» - Վ.Ս.) ընկերությունը, որին անդամակցել է նաև Ա.Ս. Պուշկինը:**

Ռուսաստանում այս տարիներին առաջին քայլերն էր անում նաև

իրապաշտական (ոեալիստական) գրականությունը՝ ի դեմս **Ի.Ա. Կոխլովի և Վ.Տ. Նարեժնոյի:** Այս փուլում Պետերբուրգում գործում էր նաև **“Младшая архаисты” («Կրտսեր հնամենիներ» - Վ.Ս.) գրական խմբակը, որին անդամակցել են Պ. Կատենինը և Վ. Կյուխելյեկերը: Խմբակին սկզբում հարել է նաև Ա. Գրիբոյեդովը**⁴²: Ազատասիրական ու քաղաքացիական բարձր իդեալների գեղարվեստական մարմնավորման համար այս խմբակը ռուս գրականության մեջ նոր ժանրեր և ոճեր փնտրելու գործում շեղվում էր դեպի հնամենի (արխայիկ) ռուսական, եկեղեցական և աստվածաշնչային հանդիսավոր խանդավառ (պաթետիկ) արտահայտչաձևերը⁴³:

Ա. Գրիբոյեդովը ևս գերծ չէր նման թեքումներից: Դրանց ազդեցության ապացույց կարելի է համարել 1823-1824թթ. գրած **“Давид” («Դավիթ» - Վ.Ս.)** բանաստեղծությունը⁴⁴, ինչպես նաև ղեկավարիստական ապստամբության գործով Հետաքննող կոմիտեին տված պատասխանի շուրջ Ա. Բեստուժևի հետևյալ մեկնաբանությունը. **«Նա (Գրիբոյեդովը - Վ.Ս.)՝ որպես պոետ, ցանկանում էր դա (Ռուսաստանի ապագա վերակառուցումը - Վ.Ս.) գրահրատարակչության և ռուսական տարազի ազատության համար...»**⁴⁵: Նույն՝ Հետաքննող կոմիտեի հարցերին պատասխանելիս Ա. Գրիբոյեդովը ռուսական տարազին վերաբերող մասը մեկնաբանել է այսպես. **«Ռուսական տարազը ևս ցանկանում էի, որովհետև այն գեղեցիկ ու հանգիստ էր ֆրակներից և համազգեստներից, իսկ դրա հետ մեկտեղ ենթադրում էի, որ այն նորից մեզ կմոտեցնի իմ սրտին չափազանց հաճելի հայրենական բարբերի պարզությանը»**⁴⁶:

1810-1820-ական թթ. Ռուսաստանում հայրենասիրական գաղափարները մեծ վերելք են ապրում, և Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման վրա դրանք չէին կարող չանդրադառնալ: Ա. Գրիբոյեդովի հայացքների դրսևորումները վերլուծելիս մինչխորհրդային որոշ հեղինակների կողմից բավականին հետաքրքիր կարծիք է հայտնվել. **գուգահեռներ անցկացնելով ամենայն ռուսականի հանդեպ Ա. Գրիբոյեդովի դրսևորած սիրո գաղափարների, օտարների և հանկապես գերմանացիների հանդեպ նրա տաժած առեղության դրսևորումների, մյուս**

42 Այս մասին ավելի մանրամասն տես Петров С., А.С. Грибоедов. Критико-биографический очерк, ևշվ. աշխ., էջ 14-15:

43 Նույն տեղում՝ էջ 15:

44 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 8:

45 А.С. Грибоедов в воспоминаниях современников, ևշվ. աշխ., էջ 275:

46 Նույն տեղում՝ էջ 284:

41 Ерѣмин М.П., “Грибоедов А.С. Очерк творчества”, в книге Грибоедов А.С., Сочинения в двух томах, т. 1, ևշվ. աշխ., էջ 6:

կողմից էլ հետագայում առաջացած արևմտական և սլավոնաֆիլական ուղղությունների գաղափարների միջև՝ նշվել է. «Մենք գերադասում ենք Գրիբոյեդովի վերը շարադրված հայացքներն ու հակումները բնութագրել այլ տերմինով՝ ազգայնականություն»⁴⁷:

Ազգայնական դրսևորումներ ունեին նաև դեկաբրիստները: Այսպես, Պ.Բ. Պետտելը և Նիկիտա Մուրավյովն իրենց ծրագրերում փորձում էին ուսերենն ընդհանրապես մաքրել օտար տերմիններից⁴⁸:

Հայտնի է, որ դեկաբրիստական շարժումն առաջացել է նաև բարձրացող հայրենասիրական պիլիի ուժով, ուստի նրանում **ազգայնականության դրսևորումները ոչ միայն տարօրինակ ու դատապարտելի չեն, այլ նույնիսկ ինչ-որ տեղ օրինաչափ են, եթե միայն չեն վերածում ազգայնամոլության և այլազգիների նկատմամբ ատելության**: Ազգայնականության դրսևորումներն օրինաչափ էին նաև Ա. Գրիբոյեդովի հայացքներում, քանզի նա ևս կրել է իր ժամանակի ազդեցությունը: **Սակայն Ա. Գրիբոյեդովի՝ մեծապետական երանգավորմամբ դրսևորած ազգայնականության մասին փաստելը կարևոր է նրանով, որ Կովկասում և Պարսկաստանում նրա գործունեությունը ներկայացնելիս հնարավոր դառնա իրատեսորեն վերաարժևորել և ներկայացնել խորհրդային շրջանում որպես «ինտերնացիոնալիստ», «մեծ դիվանագետ», «կովկասյան ժողովուրդների մեծ բարեկամ ու փրկիչ» ներկայացված Ա. Գրիբոյեդովի գործունեությունը**:

Ա. Գրիբոյեդովի հայացքների և բնավորության ձևավորման վաղ շրջանի պատկերն ամբողջացնելու համար հարկ է նաև հիշատակել 1815-1818 թվականներն ընդգրկող նրա՝ պետերբուրգյան մշտապատկյանքի առանձին դրվագներ: Հետագոտող **Օր. Միլլերը** գրում է. «Երիտասարդ թատերասերը (Ա. Գրիբոյեդովը – Վ.Ս.) ժամանակը ծախսում էր տարբեր անդրկուլիսյան և բարձրաշխարհիկ արկածների վրա»⁴⁹: Դա են վկայում նաև Ա. Գրիբոյեդովի գրած նամակները: 1817թ. սեպտեմբերի 4-ին Ստ. Բեգիչևին հղած նամակում, գրելով իր և ունի Պոլիվանովի վարած օրգիայի (կամ չգիտես, թե ուրիշ ինչի) մասին, Ա. Գրիբոյեդովը

գրում է. «...Ինչպե՞ն չհիշել սաղմոսասացին. «Երանելի է այրն այն, որ չի գնա անպատիվ մարդկանց խորհրդին...»», իսկ հաջորդ տողերում Բեգիչևին համոզում է եղբորը չթողնել, որ ներկայանա գունդ՝ ասելով. «Նրա աչքի առաջ, թվում է, իմ օրինակն է: Ես այդ դրուժինայում եղա ընդամենը չորս ամիս, իսկ հիմա չորրորդ տարին է, ինչ չեմ կարողանում կանգնել ճշմարիտ ուղու վրա»⁵⁰:

Փորձենք զուգահեռներ անցկացնել **11 տարի անց՝ 1827թ., Ա. Գրիբոյեդովի գրած “Характер моего друга” («Իմ մորեղբոր բնավորությունը» - Վ.Ս.) մտորումների և իր վարքագծի միջև**: Իր մորեղբոր մասին նա գրում է. «...Այն ժամանակ արդեն շատերը մենամարտում էին, բայց ամեն տղամարդ՝ կանանց հանդեպ տաժած սիրո մեջ, տղամարդկանց հետ՝ խաղաքարտերի միջոցով (կամ այլ կերպ) խաբելու մեջ անհաղթահարելի կրքով էր վառված... Ամեն մեկի հոգում՝ անազնվություն, և լեզվի վրա կեղծիք կար: Թվում է, թե այդ ամենն այժմ չկա: Գուցեև կա, բայց իմ մորեղբայրը պատկանում էր այն դարաշրջանին. նա Սուվորովի մոտ առյուծի պես կռվում էր թուրքերի դեմ, հետո Պետերբուրգում գեռունի պես պատահական մարդկանց ընդունարաններում էր, իսկ պաշտոնաթողությունից հետո ապրում էր բամբասանքներով: Նրա բարոյախոսության օրինակը՝ «Շենց նս եմ, եղբայր...»⁵¹»:

1816թ. Ա. Գրիբոյեդովը, ինչպես նշել ենք, դառնում է “Соединённые друзья” (“Des amis reunis”, «Միացյալ բարեկամներ» – Վ.Ս.) մասունական օթյակի անդամ: Մասունական օթյակներն անտեսանելի կերպով պետք է համագործակցեին գաղտնի ուստիկանության հետ, ինչը պետք է խոչընդոտեր պետության համար վտանգավոր դարձած գաղտնի այլ կազմակերպությունների ստեղծմանը: Այդ օթյակը նպատակ էր հրոչալում **պայքարը մոլեռանդության, ազգային ատելության դեմ (ինչը չէր համապատասխանում Ա. Գրիբոյեդովի ընդգծված օտարառյացությանը) քարոզում էր բնական կրոն ու հիշեցնում էր “Soleil, Science, Sagesse” («Արև, Գիտելիք, Իմաստություն» – Վ.Ս.) եռմիասնական գաղափարը: 1817թ. այս օթյակը պառակտվում է, ձևավորվում է “Добро” (“Du Bien”, «Բարիք» - Վ.Ս.) անունով նոր օթյակ, որի հիմնադրման արձանագրության ստորագրողներից մեկն էլ դառնում է Ա. Գրիբոյեդովը: Ուշագրավ է, որ «Միացյալ բարեկամներ» օթյակի**

47 Павлов, Смирнов А., Писканов, “Грибоедов как человек”, в книге Александр Сергеевич Грибоедов, Его жизнь и сочинения, Сборник историко-литературных статей, Сост. Покровский В., Изд-е 3-е, дополненное, Москва, 1911, с. 248.

48 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, бзվ. աշխ., էջ 393, տես նաև՝ Павлов, Смирнов А., Писканов, “Грибоедов как человек”, бзվ. աշխ., էջ 248:

49 Миллер О., “Жизнь и личность Грибоедова по его переписке”, в книге “Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения”, Сборник историко-литературных статей, бзվ. աշխ., էջ 192:

50 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, հ. 2, նշվ. աշխ., էջ 180-181:

51 Նույն տեղում՝ էջ 89:

անդամներ են եղել ոստիկանության նախարար Ա. Բալաշովը, ապագա դեկաբրիստներ Պ. Պետտերը, Ս. Վոլկոնսկին, Ի. Գոլոբորովը, Մ.Ի. Մուրավյով-Ապոստոլը և շատ ուրիշներ: Ուսումնասիրող Ս. Ֆոմիչևը ներկայացնում է այդ օբյեկտի անդամներից մեկի՝ իր ընկերներից շատերին տված բնութագիրը. «Ակնհայտորեն ոչ առանց հիմքի՝ «Եղբայրներից» մեկը նրանց բնութագրում է որպես «իրենց շրջապատող ամեն ինչի վրա ծիծաղող», «խնջույքների ժամանակ սանձարձակության տրվող», խորհրդավոր ծեսերի վրա զվարճացող և այդ ծեսերը «մեծ երեխաների խաղեր» կոչող մարդիկ»⁵²:

Այդպիսի կյանքը երկար շարունակվել չէր կարող. 1817թ. վերջերին տեղի է ունենում մի իրադարձություն, որը կարևոր դեր է խաղում Ա. Գրիբոյեդովի հետագա ճակատագրում: Խոսքը 1817թ. նոյեմբերի 12-ին Վ.Վ. Շերեմետևի և Ա.Պ. Զավաղովսկու միջև տեղի ունեցած մենամարտի մասին է, որը Շերեմետևի համար ողբերգական ավարտ է ունենում: Այս մենամարտի մեջ կարևոր դերակատարում է ունեցել Ա. Գրիբոյեդովը: Վ. Շերեմետևի և նրա սիրուհի Ա. Իստոմինայի միջև վեճ էր եղել: Ցանկանալով «պարզել» վեճի մանրամասները՝ թատերական ներկայացումից հետո Ա. Գրիբոյեդովն Իստոմինային տանում է իր ընկեր Զավաղովսկու բնակարան, որտեղ ինքն այդ ժամանակ ապրում էր: Տուն գալով և իր բնակարանում տեսնելով Իստոմինային՝ փոքր ինչ հարբած Ա. Զավաղովսկին սկսում է վերջինիս «սեր խոստովանել»: Այնուհետև Ա. Գրիբոյեդովը Իստոմինային տանում է նրա ընկերուհու տուն: Մի քանի օր անց Իստոմինան և Վ. Շերեմետևը հաշտվում են, և վերջինս, տեղեկանալով Ա. Զավաղովսկու պահվածքի մասին, նրան մենամարտի է հրավիրում: Բացի այն, որ հենց սկզբից անհասկանալի է ընկերուհու տուն ուղեկցելու փոխարեն Իստոմինային Ա. Զավաղովսկու տուն տանելու հանգամանքը, նշենք նաև, որ Ա. Գրիբոյեդովը չի փորձել կարգի հրավիրել Ա. Զավաղովսկուն: Ավելին, նա դարձել է վերջինիս մարտավան ընդդեմ իր մյուս ընկեր Վ. Շերեմետևի:

Մենամարտի պայմանները քննարկելիս վիճարանում են նաև Ա. Զավաղովսկու մարտավան Ա. Գրիբոյեդովն ու Վ. Շերեմետևի մարտավան Ա.Ի. Յակուբովիչը: Արդյունքում վեճը երկուսից վերաճում է «չորս անձանց միջև մենամարտի», ինչն այդ ժամանակվա պետերբուրգյան բարձրաշխարհիկ հասարակության մեջ մեծ աղմուկ է հանում: Վ. Շերեմետևի սպանությունից հետո սկսված հետաքննության

52 Фомичев С.А., Грибоедов в Петербурге, 1977, 29-30:
124

ժամանակ Ա. Գրիբոյեդովը հերքում է իր մասնակցությունն այդ մենամարտին (ինչի համար հետո Պետերբուրգում նրան մեղադրում են վախկոտության մեջ), իսկ ամեն ինչ խոստովանած Ա. Յակուբովիչին գվարդիական զննից տեղափոխում են սովորական զորամաս և ուղարկում ծառայելու Կովկասում: Ա. Գրիբոյեդովի և Ա. Յակուբովիչի միջև մենամարտը, այնուամենայնիվ, կայանում է արդեն 1818թ. հոկտեմբերի 23-ին կովկասյան Կուլի գյուղի մոտ, որի ժամանակ Գրիբոյեդովը վիրավորվում է ձեռքից⁵³: Ա. Զավաղովսկուն առաջարկում են լքել Ռուսաստանը, և նա վերադառնում է Անգլիա⁵⁴: Ա. Յակուբովիչն ու Ա. Զավաղովսկին (որի մարտավան էր Ա. Գրիբոյեդովը) տեղի ունեցածի մեղքը բարդում են Ա. Գրիբոյեդովի վրա: Վերջինիս հեղինակությունը պետերբուրգյան բարձրաշխարհիկ հասարակության շրջանում խիստ ընկնում է⁵⁵:

Ըստ որոշ հեղինակների՝ Ա. Գրիբոյեդովին խիստ պատժից փրկել է Ի.Ֆ. Պասկևիչը, որը նոր էր ամուսնացել Ա. Գրիբոյեդովի ազգականուհու հետ: Ի. Պասկևիչը մեծ իշխան Միխայիլ Պավլովիչի մշտական ուղեկիցն ու խորհրդատուն էր և 1818թ. գարնանը մեծ իշխանի հետ մեկնում է արտասահման: Նախքան մեկնելը, Ի. Պասկևիչին հավանաբար հաջողվել է «հարթել մենամարտի գործը և հեռացնել կնոջ ազգականի վրա կախված որոշը»⁵⁶:

Ա. Գրիբոյեդովը ևս բավական ծանր է տանում այս ամբողջ պատմությունն ու իր «ընկեր» Վ. Շերեմետևի մահը: Հիշատակելով իրեն ուղղված Ա. Գրիբոյեդովի նամակը՝ Ստ. Բեգիչևը գրում է. «Ես բացակայում էի, և Գրիբոյեդովը Մոսկվա (ուղղած նամակում – Վ.Ս.) ինձ գրում էր, որ իրեն ձանձրույթն է պատել. ինքն անընդհատ աչքերի առաջ տեսնում է մահացող Շերեմետևին, և Պետերբուրգում մնալն իր համար դարձել էր անտանելի»⁵⁷: Հավանաբար Ա.Ս. Պուշկինն այս իրադարձություններն է

53 Ա.Պ. Զավաղովսկու ճակատագրի և մենամարտի մասին նրա պատմաձևերի վերաբերյալ մանրամասները տես նաև «Беглые очерки. Воспоминания О.А. Пржецлавскаго», "Русская старина", Тип-я В.С. Балашова, С.-Петербург, 1883, август, с. 383-386.

54 «Записки Н.Н. Муравьева (Тифлиси, октябрь 1818)», "Русский архив", Изд-ий Петромъ Бартевевымъ, Въ университетской типографіи, Москва, 1886, кн. третья, с. 331-335 (Ն. Մուրավյովը նշում է, որ Ա. Յակուբովիչին Կովկաս էին արտրել այն բանի համար, որ էրբ Վ. Շերեմետևի մահից հետո Ա. Գրիբոյեդովն ու Ա. Զավաղովսկին հրաժարվել են մենամարտել նրա հետ, վրդովված Ա. Յակուբովիչը կրակել ու ծակել էր Ա. Զավաղովսկու գլխարկը):

55 Фомичев С.А., Грибоедов в Петербурге, 1977, 29-30:

56 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, 197, 201, 202, 203:

57 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, 1977, 201, 202, 203:

նկատի ունեցել, երբ իր նոթերում Ա. Գրիբոյեդովի մասին գրել է. «*Բուռն կրքերի և հզոր հանգամանքների հետևանքով Գրիբոյեդովի կյանքը մթազնրվել է որոշ ամպերով: Նա անհրաժեշտություն զգաց մեկընդմիջտ մաքրվել իր նրիտասարդությունից և կտրուկ շուտ տալ իր կյանքը*»⁵⁸:

Պետերբուրգը թողնելու առիթը շուտով ներկայանում է: Զինվորական ծառայությունից հրաժարվելուց հետո Ա. Գրիբոյեդովը 1816թ. աշխատանքի էր անցել Արտաքին գործերի կոլեգիայում, և ահա **նա ծառայության բերումով նշանակում է ստանում Պարսկաստանում**:

Ա. Գրիբոյեդովի՝ Պարսկաստան մեկնելու գործում մեծ դերակատարում է ունեցել նրա մայր Նաստասյա Ֆեոդորովնան: **Վերջինիս դուր չէին գալիս ոչ որդու վարած պետերբուրգյան կյանքը, ոչ էլ նրա նկրտումները գրականության ասպարեզում**: Այս կապակցությամբ Ա. Գրիբոյեդովը 1818թ. սեպտեմբերի 18-ին Ստ. Բեգիչևին հղած նամակում խոստովանում է՝ ասելով, որ մի օր՝ **ընթրիքի ժամանակ, հենց իր մայրն է իրեն հանդիմանել՝ մեղադրելով մանր գրչակներին հատուկ նախանձ ունենալու մեջ և առելությամբ է արտահայտվել նրա «բանաստեղծական պարայմունքների» կապակցությամբ**⁵⁹: Վերոգրյալը թույլ է տալիս միանշանակ չընկալել նրա մեկ այլ ընկեր Ֆ. Բուլգարինի վկայությունն առ այն, որ «**Գրիբոյեդովը հատուկ հաճույք էր զգում կրթված երիտասարդ մարդկանց շրջանում, որոնք չէին «ապականվել» արկածներով և բարձրաշխարհիկ վայելչության մեջ**»⁶⁰, **քանի որ փաստված չեն Գրիբոյեդովի գրականագիտական կամ փիլիսոփայական մտավարժանքների հանգամանքներն ընդհանրապես ցածր խավերի շրջանում (բացի, երբեմն՝ իր կաթնեղբայր և ծառա Ալեքսաշա Գրիբովից, որին ժամանակ առ ժամանակ նաև ձաղկում էր «դաստիարակչական» նպատակներով)**:

Պետերբուրգյան «**ոսկե երիտասարդության**» ներկայացուցիչ Ա. Գրիբոյեդովը Պետերբուրգից Կովկաս է մեկնում 1818թ. օգոստոսի 28-ին⁶¹:

Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման հասուն շրջանը ևս կարելի է բաժանել փուլերի.

ա) 1818թ. հոկտեմբերի 21-ից մինչև 1819թ. հունվարի 28-ը (Վրաս-

տանում անցկացրած ամիսներ),

բ) 1819թ. փետրվար-սեպտեմբեր (Պարսկաստանում անցկացրած ամիսներ),

գ) 1819թ. հոկտեմբերի 3-ից մինչև 1820թ. հունվարի 10-ը (դարձյալ վրաստանյան շրջան),

դ) 1820թ. հունվարից մինչև 1821թ. նոյեմբեր, մոտ 2 տարի (պարսկական շրջան),

ե) 1821թ. նոյեմբերից մինչև 1823թ. մարտ (Վրաստանում անցկացրած տարիներ՝ մոտ մեկ տարի և 4 ամիս),

զ) 1823թ. ապրիլից մինչև 1825թ. մայիս (մոսկովյան և պետերբուրգյան շրջան)⁶²:

Այս ժամանակահատվածում Ա. Գրիբոյեդովի հայացքների և բնավորության ձևավորման վրա ազդել են՝ ա) **արևելյան միջավայրը**՝ ռուսական դիվանագիտական առաքելության կազմում անցկացրած ժամանակաշրջանում, բ) Վրաստանում անցկացրած ժամանակաշրջանում «**Իբերիայի պրոկոնսուլը**»⁶³ (**Գրիբոյեդովը հաճախ այդպես էր բնորոշում Ա.Պ. Երմոլովին – Վ.Ս.**) և նրա շրջապատը, գ) **առաջադեմ մարդկանց միջավայրը**՝ Մոսկվայում և Պետերբուրգում անցկացրած տարիներին:

Բավականին ազատ ժամանակ ունենալով Պարսկաստանում՝ Ա. Գրիբոյեդովն այն տրամադրում է գիտելիքների մակարդակը բարձրացնելուն: Իրականանում է արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսելրոդի կանխատեսումը. դեռ 1818թ. Գրիբոյեդովի հետ հանդիպման ժամանակ նա ասել էր. «**Դուք առանձնության մեջ կկատարելագործեք Ձեր ընդունակությունները**»⁶⁴:

Առաջ անցնելով նշենք, որ 1825թ. դեկտեմբերի 14-ի դեպքերից հետո ձերբակալված որոշ դեկաբրիստներ Հետաքննող կոմիտեի հարցերին պատասխանելիս, նշել են, որ Ա.Պ. Երմոլովի՝ Կովկասի կառավարչապետ եղած ժամանակ Կովկասում եղել է գաղտնի ընկերություն: Պ. Պեստելը տեղյակ էր, որ կային ևս երկու մարդ, ովքեր եղել են դրա անդամներ. մեկն Ա. Երմոլովի երրորդ համհարզ **Ն.Պ. Վոյեյկովն էր, մյուսը՝ Վ.Ֆ. Տիմկովսկին**: Դեկաբրիստ **Ս.Գ. Վոլկոնսկին**, խոսելով Կովկասում գործող գաղտնի ընկերության մասին, նույնպես նշում է, որ ինքը դա իմացել

58 Пушкин А.С., "Путешествие въ Арзрум, во время похода 1829 года", "Современник", Литературный журналъ, Изд-іи Александром Пушкинымъ, Санктпетербургъ, 1836, томъ первый, с. 48.

59 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, кн. 2, гл. 1, с. 188.

60 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, 1924, гл. 1, с. 19.

61 Фомичев С.А., Грибоедов в Петербурге..., 1924, гл. 1, с. 55.

126

62 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, гл. 1, с. 220.

63 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, кн. 2, гл. 1, с. 190.

64 Նույն տեղում՝ էջ 184:

է ոչ միայն Ա. Յակոբովիչից, այլև Վ. Տիմկովսկուց: Այդ ժամանակվա Կովկասը բավականին հետաքրքիր և անկեղծորեն էր բնորոշել Ալեքսանդր I-ը՝ անվանելով այն «տաք Սիբիր»⁶⁵:

Հայտնվելով այսպիսի միջավայրում՝ Ա. Գրիբոյեդովն ինչ-որ չափով կրում է նաև ապագա հեղափոխականների հայացքների ազդեցությունը: **Ընդունված է համարել, որ այս միջավայրում է ավարտվել Ա. Գրիբոյեդովի փիլիսոփայական, հասարակական և գեղարվեստական աշխարհայացքի ձևավորումը**⁶⁶: Այսքանով հանդերձ՝ հարկ է նշել, որ բոլոր ուսումնասիրողները փաստում են, որ չի պահպանվել գեթ մեկ փաստաթուղթ, որում Ա. Գրիբոյեդովը շարադրած լիներ քաղաքական իր հայացքները կամ Կովկասում կապված լիներ վերոհիշյալ գաղտնի ընկերության հետ: **Դա է պատճառը, որ Ա. Գրիբոյեդովի «հեղափոխական» հայացքների «դրսեորումները» նրանք դարձյալ փորձել են պեղել նրա գրական գործերում, հատկապես՝ «Խելքից պատուհաս»-ում**: Ներկայացնենք «Խելքից պատուհաս»-ի մտահղացման տեղի ու ժամանակի պատմության հետ կապված Ն. Պիկսանովի և Մ. Նեչկինայի գիտական բանավեճը և այն ծնող հինգ վկայությունները կամ վարկածները: Այսպես՝

1) «Խելքից պատուհաս»-ի մտահղացման և իրագործման ամենավաղ ժամկետը թվագրված է 1812 թվականով: Այդ վարկածի հեղինակն ապագա ակադեմիկոս, իսկ այն ժամանակ դեռ ուսանող, **Լ.Ն. Մայկովն է**: Նա «Сборник студентов Петербургского уни-верситета»-ի 1860թ. II համարում **“Заметки об А.С. Грибоедове” («Գրառումներ Ա.Ս. Գրիբոյեդովի մասին» - Վ.Ս.)** անարկում հրապարակում է Ա. Գրիբոյեդովի այն ժամանակվա մտերիմ ծանոթներից մեկի՝ իրեն պատմած հուշերը, որոնցում ասված է. «**«Խելքից պատուհաս»-ի ապագա հեղինակի գրական փորձերը սկսվել են դեռևս համալսարանում: Հաճախ նա ընկերներին կարդում էր իր շարադրած բանաստեղծությունները, որոնք մեծամասամբ երգիծանք և էպիգրամներ էին: Մի անգամ՝ 1812թ. սկզբին, Իռնին և պ-ն N-ին (պարոն N-ը Գրիբոյեդովի ծանոթ, Պետերբուրգի համալսարանի ապագա պրոֆեսոր Վ. Շենդերն էր - Վ.Ս.) կարդաց իր կողմից մտահղացած կատակերգությունից մի հատված: Դա «Խելքից պատուհաս»-ի սկիզբն էր»⁶⁷:**

2) Ա. Գրիբոյեդովի ընկեր Ստ. Բեգիչևն իր հուշերում գրում է. «Գրի-

բոյեդովը երբեք ինձ չի պատմել Պարսկաստանում տեսած երազի մասին... Ինձ հայտնի է, որ այդ կատակերգության («Խելքից պատուհաս»-ի - Վ.Ս.) նախագիծը կազմվել է Պետերբուրգում դեռևս 1816թ., և նույնիսկ գրված են եղել մի քանի տեսարաններ, բայց չգիտեմ՝ Պարսկաստանում, թե՛ Վրաստանում: Գրիբոյեդովը մեծ մասամբ փոխել է դրանք և որոշ գործող անձանց. իմիջիայլոց, ոչնչացրել է նաև Ֆամուսովի կնոջ՝ զգացմունքային ու նորաձևներ մոսկովյան արիստոկրատուհու կերպարները (այդ ժամանակ կեղծ զգացմունքայնությունը դեռ հարգի էր մոսկովյան տիկնանց մոտ): Դրանց հետ մեկտեղ դեն էին նետվել արդեն գրված տեսարանները»⁶⁸:

3) Ա. Գրիբոյեդովի ծանոթներից **Գ.Օ. Բեհրուսովը**, նկարագրելով իր ծանոթությունը և 1819թ. նոյեմբեր-դեկտեմբերին Մոզդոկից Թիֆլիս իր ճանապարհորդությունն Ա. Գրիբոյեդովի հետ, իր հուշերում գրում է. «Մոզդոկից Թիֆլիս մենք գնացինք միասին և կարճ միջոցում լավ ծանոթացանք: Նա ինձ համար կարդաց իր բանաստեղծություններից շատերը, այդ թվում, իմիջիայլոց, նաև «Խելքից պատուհաս»-ից, որն այն ժամանակ նրա մոտ դեռ նախագծում էր»⁶⁹:

4) Ֆ. Բուլգարինն իր հուշերում գրում է. «Ահա թե ինչ կերպ ծնվեց այդ կատակերգությունը: Լինելով Պարսկաստանում՝ 1821թ. Գրիբոյեդովը երազում էր Պետերբուրգի, Մոսկվայի, իր ընկերների, հարազատների, ծանոթների, դերասանների և թատրոնի մասին (որը նա կրքոտ կերպով սիրում էր): Նա սիրելի հայրենիքը (իր սրտին հաճելի այն ամենով, ինչ մնացել էր այնտեղ) ներկայացնող երազ տեսավ: Երազում նա ընկերներին պատմում էր իբրև թե իր կողմից գրված կատակերգության նախագծի մասին և նույնիսկ որոշ դրվագներ էր կարդում դրանից: Արթնանալով՝ Գրիբոյեդովը վերցնում է մատիտը, վազում այգի և հենց այդ գիշեր գծում է «Խելքից պատուհաս»-ի նախագիծը և հնարում առաջին գործողության մի քանի տեսարաններ: Այս կատակերգությունը զբաղեցրեց նրա ողջ ազատ ժամանակը, և նա այն ավարտեց Թիֆլիսում 1822թ.»⁷⁰: Բուլգարինի այս տողերի ապացույցն է համարվում 1820թ. նոյեմբերի 17-ին գրած Ա. Գրիբոյեդովի նամակը⁷¹:

5) Այս տարբերակը ներկայացնող **Նովոսիցևան**⁷² գրում է. «Մոսկվայի

68 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, ևշվ. աշխ., էջ 40:

69 Пиксанов Н.К., Творческое история "Торя от ума", ևշվ. աշխ., էջ 80 (Դ. Բեհրուսովի հուշերը տպագրվել են "Кавказский сборник" հանդեսի 1902թ., № 23-ում՝ էջ 51-52):

70 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, ևշվ. աշխ., էջ 14:

71 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 212-213 («Անհայտ անձին» գրած Ա. Գրիբոյեդովի նամակը):

72 Пиксанов Н.К., Творческое история "Торя от ума", ևշվ. աշխ., էջ 93-94 (այս վարկածը հետազոտող Նովոսիցևան ներկայացնում է "Русская старина" հանդեսի 1873թ. III համարում (էջ 546) տպված հոդվածում):

65 Орлов В.Л., Грибоедов, Очерк жизни и творчества, ևշվ. աշխ., էջ 34:

66 Նույն տեղում:

67 Пиксанов Н.К., Творческое история "Торя от ума", ևշվ. աշխ., էջ 77:

հնարնակները հավանաբար հիշում են անգլիացի Ֆոմա Յակովլևիչ Էվանսին, որը քառասուն տարի ապրեց Ռուսաստանում և այնտեղ թողեց շատ ընկերներ: Մեր հասարակությունը սիրում և հարգում էր նրան: Իմիջիայրոց, նա ընկերական հարաբերությունների մեջ էր Ա. Գրիբոյեդովի հետ, և մենք նրա խոսքերից մեջբերում ենք հետևյալը. «Մոսկվայում հանկարծ լուրեր տարածվեցին, որ Գրիբոյեդովը խելագարվել է: Դրանից մի փոքր առաջ նրան հանդիպած և նրա մոտ խելագարության ոչ մի նշան չնկատած Էվանսը շատ անհանգստացավ այդ լուրերից և շտապեց այցելել նրան»: Նովոսիլցևայի հաղորդմամբ Էվանսի հայտնվելուն պես Գրիբոյեդովը կարճ բանավեճից հետո հայտարարել է, որ հասարակության «դեմքին կշարտի» կատակերգություն:

Հարկ ենք համարում մի փոքր մանրամասնել գիտական այս բանավեճը, քանի որ այն կարևոր է Ա. Գրիբոյեդովի՝ դեկաբրիստ լինել-չլինելու վերաբերյալ տեսակետների վերաարժեքման գործում: Այսպես, Ն. Պիկսանովը պաշտպանել է Ֆ. Բուլգարինի ներկայացրած Ա. Գրիբոյեդովի երազի տարբերակը, իսկ Մ. Նեչկինան՝ Ստ. Բեգիչևի տարբերակը: Մյուս երեք տարբերակները կողմերը հերքել կամ օգտագործել են իրենց պաշտպանած վարկածն ապացուցելու համար:

Նշենք, որ «Խելքից պատուհաս»-ի՝ մինչև 1812թ. պատերազմը ծնված լինելու պատմական անհնարինության մասին Մ. Նեչկինայի փաստարկը ոչ թե հերքում, այլ լրացնում է Ն. Պիկսանովի փաստարկները: Ն. Պիկսանովը, Մ. Նեչկինան և նույնիսկ Մայկովը պնդում են մինևույն բանը, այն է՝ Շնեյդերի պատմածը (1-ին վարկած) չի կարելի «Խելքից պատուհաս»-ի ստեղծագործական պատմության սկզբի համար որպես հիմք ընդունել: Վերջին հաշվով Շնեյդերը ոչ հուշերի ձևով, ոչ էլ այլ կերպ հետագայում չի անդրադարձել իր կյանքի այս դրվագին⁷³:

Ն. Պիկսանովը որոշակիորեն կարևորում է Ստ. Բեգիչևի տեղեկությունները (2-րդ վարկած), քանի որ վերջինս, բացի «Խելքից պատուհաս»-ի հատվածների հիշատակումից, դրանց մասին տալիս է նաև կոնկրետ տեղեկություններ՝ նշելով Ֆամուսովի կնոջ կերպարի գոյությունը, որը հետագայում Ա. Գրիբոյեդովը հանել էր իր ստեղծագործությունից: Ն. Պիկսանովը Ստ. Բեգիչևի տեղեկությունները վերլուծելիս տրամաբանորեն պնդում է, որ 1816թ. Ա. Գրիբոյեդովն անկասկած ուներ ինչ-որ «կատակերգության նախագիծ» և գրել էր մի

քանի տեսարան, բայց ամբողջ հարցը նրանում է, թե որքանով էին մոտ այդ նախագիծն ու տեսարաններն ապագա «Խելքից պատուհաս»-ին: 1823թ. դրությամբ Ա. Գրիբոյեդովը դեռ տատանվում էր, և գրելով *“Горе ума”* («Խելքին պատուհաս» - Վ.Ս.)՝ հետո այն ուղղել էր *“Горе от ума”* («Խելքից պատուհաս» - Վ.Ս.) ձևով, այսինքն՝ դեռ անվանումը չկար, այլ կար միայն նախագիծը, որը Ստ. Բեգիչևի խոստովանությամբ Ա. Գրիբոյեդովը «շատ բաներում փոխել էր» այնպես, որ ստիպված էր եղել դուրս նետել մի քանի գործող անձանց ու արդեն գրված տեսարաններ, ապա առաջանում են նույն կասկածները, ինչ-որ Շնեյդերի պարագայում. այն է՝ արդյո՞ք Ստ. Բեգիչևը «Խելքից պատուհաս»-ին չէր վերագրում այլ կատակերգության նախագիծն ու տեսարանները, թեկուզև շատ մոտիկ «Խելքից պատուհաս»-ին: Այնուհետև նա ներկայացնում է 1838թ. Ա.Ա. Ժանդրին Ստ. Բեգիչևի գրած և չհրատարակված նամակը, որում խոսվում է Ա.Ա. Պլուշարի *“Энциклопедический лексикон”*-ում տպագրված Ա. Գրիբոյեդովի կենսագրականի մեջ առկա անճշտությունների մասին: Ն. Պիկսանովը գրում է. «Ինքը՝ Բեգիչևը, Գրիբոյեդովի մասին անսպասելի հայտարարում է. ««Խելքից պատուհաս»-ը սկսել է Պարսկաստանում, միայն երկու գործողությունները գրել է Վրաստանում, իսկ մնացած գործողությունները՝ Եֆրեմովյան իմ կալվածքում՝ Դմիտրովսկ գյուղում»: Նա կրկին հարց է բարձրացնում. «Եթե Գրիբոյեդովը սկսել է գրել Պարսկաստանում, իսկ Վրաստանում ավարտել էր առաջին երկու գործողությունները, ապա ինչպե՞ս դա համաձայնեցնել 1816թ. տեղեկության հետ»: Սրանից ելնելով էլ Ստ. Բեգիչևի վարկածի վերաբերյալ Ն. Պիկսանովը եզրակացնում է. «Ճշմարտացի կլիներ այստեղ ևս ընդունել, որ խոսքը ոչ թե բուն իմաստով «Խելքից պատուհաս»-ի, այլ պոեմով, կերպարներով, ընդհանուր տիպով կատակերգությանը մոտ, բայց «Խելքից պատուհաս»-ի առաջին խմբագրությունը չներկայացնող ինչ-որ էտյուդների մասին»⁷⁴:

Չհամաձայնելով վերոհիշյալ եզրակացության հետ՝ Մ. Նեչկինան գրում է. «Ժանդրին ուղղած նամակում նա (Բեգիչևը - Վ.Ս.) թռուցիկ է խոսում հեղինակի (Գրիբոյեդովի - Վ.Ս.) կողմից կատակերգության հիմնական բովանդակության մեջ ներառված և առաջին անգամ մեզ հասած որոշակի ձեռագրի մասին, իսկ Գրիբոյեդովի մասին իր հուշերում նա մանրամասնորեն պատմում է հենց «Խելքից պատուհաս»-ի մտահղացման, մեզ չհասած ու հե-

73 Пиксанов Н.К., Творческое история "Горя от ума", ևշվ. աշխ., էջ 78: 130

74 Пиксанов Н.К., Творческое история "Горя от ума", ևշվ. աշխ., էջ 78-90:

դիմակի կողմից մերժված սկզբնական տեքստերի պատմությունը»: Այնուհետև, ի տարբերություն Ն. Պիկսանովի, նախապատվությունը տալով Ստ. Բեգիչևի հուշերում տեղ գտած տեղեկություններին, եզրակացնում է. «Գրիբոյեդովի ամենամտերիմ ընկերոջ՝ Ստ. Բեգիչևի հավաստի տեղեկության համաձայն՝ Գրիբոյեդովը «Խելքից պատուհաս»-ը մտահղացել և նրա առաջին տեքստերը ստեղծել է 1816թ»⁷⁵:

Ամենին չկասկածելով Դ. Բեհրոյեդովի բարեխղճությանը՝ Ն. Պիկսանովը, այնուամենայնիվ, կասկած է հայտնում նրա տեղեկության վերաբերյալ: Նա գրում է, որ Ա. Յակուբովիչի հետ մենամարտի համար Ա. Գրիբոյեդովը գնացել է Նիժեգորոդյան գունդ, մինչդեռ մենամարտը տեղի չի ունեցել գնդի տեղաբաշխման վայրում: Բացի այդ, Դ. Բեհրոյեդովն իր հուշերը գրել է 1861թ., այսինքն՝ Ա. Գրիբոյեդովի հետ Մոզգոկում հանդիպելուց քառասուներկու տարի անց, և Ն. Պիկսանովի կարծիքով նա «շատ բան արդեն մոռացել կամ շփոթել էր»: Քանի որ Դ. Բեհրոյեդովն իր հուշերում խոսում է ոչ թե կոնկրետ ստեղծագործության, այլ ընդամենը պատմում է նախագծի մասին, ապա դա նրան թույլ է տվել եզրակացնել, որ «Բեհրոյեդովի վկայություններն առաջին երկուսից ավելի հավաստի ու ճշգրիտ չեն, և ավելի բնական կլիներ հասկանալ նույն կերպ, ինչպես և դրանք, այսինքն՝ ուրվագծերի, էությունների, նախագծի իմաստով՝ առանց որոշակի պիեսի կարգի դասելու»⁷⁶:

Հակադարձելով վերոհիշյալ եզրակացությանը՝ Մ. Նեչկինան գրում է. «Դա (եզրակացությունը – Վ.Ս.) չի կարելի դուրս բերել ոչ նրանից, որ Գրիբոյեդովը մենամարտի համար չի գնացել Նիժեգորոդյան գունդ, ոչ նրանից, որ Բեհրոյեդովը ճշգրիտ չէ պատմության առանձին հատվածներում, ոչ նրանից, որ նա ուշ է գրել իր հուշերը և ոչ էլ այն բանից, որ Գրիբոյեդովը նրան կարդացել է կատակերգության ոչ ամբողջական տեքստը»⁷⁷:

Այնհայտ է, որ այստեղ ևս անտեսվում են Ն. Պիկսանովի նշած հակասությունները, և դրանք մերժվում են նույն կերպ, ինչպես Ֆ. Բուլգարինի «վերապատմած գրիբոյեդովյան երազի» պարագայում: Ինչպես ցույց կտանք, հարկ եղած դեպքում փաստարկները համոզիչ դարձնելու համար Մ. Նեչկինան կառուցում է նույնիսկ գոյություն չունեցած ստորակետերից:

Խոսելով «Խելքից պատուհաս»-ի հետ կապված և Ստ. Բեգիչևի

հուշերում տեղ գտած մեկ այլ դրվագի շուրջ (որտեղ խոսվում է 1823թ. գարնանն Ա. Գրիբոյեդովի՝ Մոսկվա գալու և իր հետ «Խելքից պատուհաս»-ի առաջին երկու գործողությունները բերելու մասին)⁷⁸՝ Ն. Պիկսանովը նշում է. «Այդ մասին Բեգիչևի կողմից պատմությունը տարվում է այն ոգով, որ պիեսը նրա համար մեծ նորություն էր: Դա դժվար է կապվում 1816թ. տեղեկության հետ»: Այնուհետև նա մեջ է բերում 1824թ. հունվարի 26-ին և փետրվարի 17-ին Ն. Բախտինին ուղղած Պ. Կատենինի երկու նամակները: Առաջինում Պ. Կատենինը գրում է. «Մեզ մոտ նորություններից ամենահետաքրքիրը Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունն է՝ չորս գործողությամբ և ազատ բանաստեղծական հանգերով: Նրա մի մասը տպագրված է Բուլգարինի “Русская талия” արվանսիսում: Ինձ մոտ կա ամբողջը. այն Գրիբոյեդովն ինձ ուղարկել է ձեռագիր տեսքով, քանի որ ոչ խաղալ, ոչ տպագրել չի թույլատրվում»⁷⁹: Երկրորդ նամակում Պ. Կատենինը, կարծես ինքն իրեն հաշվետվություն տալով, մանրամասնորեն պատմում է պիեսի բովանդակությունը: Ելնելով այս երկու նամակներից, ինչպես նաև 1825թ. հունվարին այս անգամ Ա. Գրիբոյեդովին Պ. Կատենինի գրած ու մեզ չհասած նամակից և դրան էլ Ա. Գրիբոյեդովի՝ 1825թ. հունվար-փետրվարին գրած պատասխանից⁸⁰՝ Ն. Պիկսանովը կատարում է հետևյալ հետևությունը. «Կատենինը դա անում էր միայն նրա համար, որ այն իր համար լրիվ նորություն էր, մինչդեռ նա 1817 թվականից քաջ ծանոթ էր Գրիբոյեդովին: Գրիբոյեդովը մշտապես «կիսվում էր» նրա հետ իր պոետիկ մտահղացումներով և նույնիսկ համագործակցել էր “Студент” պիեսի հարցում: Բողոքովին անհավանական է, որ Պ. Կատենինը չիմանար իր ընկերոջ նոր, խոշոր ստեղծագործության մասին, մինչդեռ նա ոչ մի խոսքով չի հիշատակում, որ 1824թ. «Խելքից պատուհաս»-ը նրա համար նորություն չէ, այլ, ընդհակառակը, և՛ Բախտինին, և՛ Գրիբոյեդովին ուղղած այդ նամակներում (1825թ. հունվար) նա նորօրյա իրադարձության պես է խոսում պիեսի մասին»: Այս փաստարկներից Ն. Պիկսանովը մեկ անգամ ևս եզրակացնում է. «Եվ Շնեյդերը, և՛ Բեգիչևը, և՛ Բեհրոյեդովը խոսում են ոչ թե «Խելքից պատուհաս»-ի նախնական խմբագրության, այլ ինչ-որ ուրիշ, թեկուզև՝ կատակերգությանը մոտիկից հիշեցնող ինչ-որ բանի մասին»⁸¹:

Մ. Նեչկինան նշում է, որ ընդհանրապես դժվար է դրամատուրգ

75 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, 1921, 2-й изд., с. 42:

76 Пиксанов Н.К., Творческое история “Горя от ума”, 1921, 2-й изд., с. 80-81:

80 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, 1-й изд., с. 81:

81 Пиксанов Н.К., Творческое история “Горя от ума”, 1921, 2-й изд., с. 81:

75 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, 1-й изд., с. 201-202:
76 Пиксанов Н.К., Творческое история “Горя от ума”, 1921, 2-й изд., с. 80:
77 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, 1-й изд., с. 203:
132

գրողների մոտ հանդիպել ինչ-որ ճեպագրերի, էտյուդների և նախագրծերի, որոնք որոշակիորեն ինչ-որ ստեղծագործության մաս չեն, և որ ցանկացած մտահղացում նրանց մոտ մտնում է ամբողջական գաղափարի մեջ: Ինչ վերաբերում է Գրիբոյեդովին, ապա Մ. Նեչկինան գրում է. «Գրիբոյեդովի ժառանգության մեջ ընդհանրապես բացակայում են որոշակի մտահղացմանը վերագրվող դրամատուրգիական ինչ-որ հատվածներ»: Ն. Պիկասնովի վարկածը համարելով «ֆանտաստիկ»՝ նա գրում է. «Այսպիսով, մենք գալիս ենք եզրակացության. վերևում ամբողջ շարադրվածի հիման վրա կարելի է հաստատել, որ «Խելքից պատուհաս»-ը, հենց որպես ամբողջություն, Գրիբոյեդովը մտահղացել է 1816թ.»⁸²:

Մ. Նեչկինան, Ստ. Բեգիչևի, Դ. Բեհբուրովի և Ա. Գրիբոյեդովի երազի մասին տեղեկությունները կապելով իրար, կառուցում է ժամանակագրական իր հենքը, ըստ որի՝ Ա. Գրիբոյեդովը «Խելքից պատուհաս»-ը մտահղացել է 1816թ. և նույնիսկ գրել է մի քանի տեսարան, որոնցում եղել է նաև Ֆամուսովի կնոջ կերպարը: Հետագայում Գրիբոյեդովն իր աշխատանքները շարունակել է Կովկասում և Պրսկաստանում, 1819թ. սկզբներին ունեցել է ստեղծագործական վերելք, ինչի մասին վկայում են Ա. Գրիբոյեդովի «Ճանապարհորդական նոթերում» 1819թ. փետրվարի 10-13-ին Ստ. Բեգիչևին հասցեագրված հետևյալ տողերը. «Շարունակ կշտամբում ես, որ փորձողի եմ: Այլևս չես կշտամբի: Վստան եմ: Արդեն մուսաներին վատ չեմ ծառայում: Գրում եմ, բարեկանս, գրում, գրում: Ահա՛նս, մարդ չկա, որի համար կարդամ»⁸³:

Ըստ Մ. Նեչկինայի՝ 1819թ. նոյեմբեր-դեկտեմբերին Մոզոկում հանդիպելով Դ. Բեհբուրովին՝ նրա համար, ի թիվս այլ ստեղծագործությունների, կարդացել է նաև «Խելքից պատուհաս»-ից արդեն գրած հատվածներ: Սակայն 1820թ. սկզբներին Ա. Գրիբոյեդովը ստեղծագործական ճգնաժամ է ապրել, ինչի վկայությունն են 1820թ. փետրվարին Պ. Կատենինին գրած նամակի հետևյալ տողերը. «Ուրախությունը կորել է, բանաստեղծություններ (բայց ոչ պիեսներ – Վ.Ս.) չեմ գրում, կարող է՝ արարվելին, բայց չկա մեկը, որի համար կարդամ. աշխատակիցներս ռուս չեն (նկատենք, որ Դ. Բեհբուրովն էլ ռուս չէր – Վ.Ս.)»⁸⁴:

Ա. Գրիբոյեդովի ստեղծագործական վերելքը սկսվում է Թավրիզում

82 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 203-204:

83 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր. Կովկաս-Պրսկաստան», Թարգմ. Հ.Կ. Ենիկոլպովի, Հայկտիքատ, Երևան, 1945, էջ 33:

84 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 202:

1820թ. նոյեմբերից, որի համար, ըստ Մ. Նեչկինայի, խթան է հանդիսացել Ա. Գրիբոյեդովի տեսած երազը: Դրանից հետո արդեն գրված շատ բաներ չեն բավարարում, մերժվում են, փոփոխվում և ստեղծվում է մեզ հայտնի «Խելքից պատուհաս»-ի տարբերակը⁸⁵: Այս ամենը համոզիչ դարձնելու համար **ակադեմիկոսը «երազի» վարկածը տեղադրում է այնպես, որ այն հանդես գա ընդամենը նախկինում արդեն ստեղծված, սակայն ստեղծագործական ճգնաժամի հետևանքով կասեցված աշխատանքը վերսկսելու խթանիչ հանգամանք:**

Չնայած առաջին հայացքից Մ. Նեչկինայի կառուցած «ժամանակագրական հենքը» թվում է համոզիչ, սակայն լուրջ թերությունների պատճառով մնում է սոսկ որպես թույլ վարկած: Ստ. Բեգիչևի տեղեկություններին նախապատվություն տալու Մ. Նեչկինայի տեսակետի գլխավոր կռիվներն ունենում են Ստ. Բեգիչևի հիշատակած Ֆամուսովի կրկնող կերպարի գոյության փաստն է, ինչպես նաև այն, որ Ա. Գրիբոյեդովի մոտ չեն հայտնաբերվել այլ մտահղացումներից կամ ստեղծագործություններից մնացած ինչ-որ հատվածներ, էտյուդներ: Սակայն այս կռիվներն ի վիճակի չեն ամբողջությամբ հերքել Ն. Պիկասնովի վարկածը: Մ. Նեչկինան ընդհանրապես չի մեկնաբանում Ն. Պիկասնովի վերջին երկու փաստարկները: Եթե որպես հիմք ընդունենք Ստ. Բեգիչևի հուշերը և մի կողմ թողնենք Ժանդրին գրած նրա նամակը, ապա 1816 թվականի հիշատակումից հետո, խոսելով Կովկասից Ա. Գրիբոյեդովի վերադառնալու և իր հետ «Խելքից պատուհաս»-ի առաջին երկու գործողությունը բերելու մասին, Ստ.Բեգիչևը ոչինչ չի նշում դրանց ծանոթ լինելու վերաբերյալ: Ընդհակառակը, ինչպես նշում է Ն. Պիկասնովը, պիեսը նրա համար մեծ նորություն էր: Փաստենք, որ 1816թ. մասին հիշատակության մեջ կարևոր են Ստ. Բեգիչևի կողմից նախքան այդ գրված հետևյալ տողերը. «Գրիբոյեդովն ինձ երբեք չի ասել Պրսկաստանում տեսած իր երազի մասին, որի արդյունքում նա գրել է «Խելքից պատուհաս»-ը»⁸⁶: Այս խոսքերից կարելի է եզրակացնել, որ Ստ. Բեգիչևի կողմից «Խելքից պատուհաս»-ի մտահղացման պատմությանն անդրադառնալու հիմնական առիթը հանդիսացել է մեր կողմից արդեն հիշատակած Ֆ. Բուլգարինի երազի տարբերակը: Սակայն իր վկայությունը գրելիս Ստ. Բեգիչևը չգիտեր

85 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 203-205:

86 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, ևշվ. աշխ., էջ 40:

Ֆ. Բուլգարինի տեղեկությունը հաստատող Ա. Գրիբոյեդովի նամակի մասին: Մինչդեռ Ստ. Բեգիչևի վարկածը հաստատող հիշատակություն չկա ո՛չ Գրիբոյեդովի, ո՛չ էլ նրա հետ այդ ժամանակ մտերիմ եղած մարդկանց կողմից (ասենք՝ Ա. Շախովսկուց, ում, ըստ Մ. Նեչկինայի ենթադրության, իբր հասցեագրված է եղել «անհայտ ընկերոջն» ուղղված Ա. Գրիբոյեդովի նամակը, հետևաբար և զրուցակիցը, ով գիտեր Ա. Գրիբոյեդովի ծրագրերի մասին, դարձյալ ըստ Մ. Նեչկինայի՝ հենց նա էր – Վ.Ս.)⁸⁷: **Տենց այս անտեսված փաստի վրա է ուշադրություն հրավիրվում՝ հիշատակելով Պ. Կատենինի նամակները Ն. Բախտինին և Ա. Գրիբոյեդովին: Մ. Նեչկինայի կողմից Ն. Պիկսանովի այս երկու փաստարկների անտեսումը թուլացնում է նրա վերլուծության համոզչությունը և գոյության իրավունք տալիս Ն. Պիկսանովի տեսակետին:**

Վերլուծելով Թավրիզից 1820թ. նոյեմբերի 17-ին «Անհայտ բարեկամին» գրած Ա. Գրիբոյեդովի նամակը՝ Ն. Պիկսանովը նշում է, որ Ա. Գրիբոյեդովը ոչ Արևելքում անցկացրած երկու տարիներին՝ 1818թ. վերջից մինչև 1820թ. նոյեմբեր, ո՛չ էլ մինչ այդ իր ստեղծագործական կյանքի վաղ շրջանում, ոչ մի լուրջ գործ չէր ստեղծել: Նա գրում է. «Գրիբոյեդովի պորտֆելում «Խելքից պատուհաս»-ի նախագծի և նրանից տեսարանների առկայության դեպքում, ինչպիսիք նա, Բեգիչևի վկայությամբ, արդեն գրել էր 1816թ., խոսակցությունը կրնթանար այլ կերպ: Սակայն ակնհայտ է, որ Պարսկաստանում Գրիբոյեդովը փայփայում էր խոշոր ստեղծագործության արարման միտքը»: **Երազում նոր ստեղծագործություն գրելու ընկերոջը տված խոստումը, ըստ Ն. Պիկսանովի, պետք է հասկանալ հենց այս համատեքստում:** Ա. Գրիբոյեդովի երազի հետ կապված վերլուծությունը Ն. Պիկսանովն ավարտում է այսպիսի եզրակացությամբ. «Գրիբոյեդովը սնահավատ էր, հավատում էր երազներին: Այդ տեսիլքի մեջ են դրվել նաև նրա այնքան (շատ – Վ.Ս.) երազները, որ այստեղ իրականությունն ինչ-որ անընկալելի կերպով միախառնվել է երազի հետ: Դա շրջադարձային կետ է, և, մասնավորապես, հենց դրանից պետք է վարել «Խելքից պատուհաս»-ի տարեգրությունը»⁸⁸:

Ն. Պիկսանովի տեսակետը համարելով սխալ և համեմատելով Ֆ. Բուլգարինի գրառումն Ա. Գրիբոյեդովի նամակի հետ՝ Մ Նեչկինան հետազոտողի տեքստում նշում է հետևյալ անճշտությունները.

1) Ֆ. Բուլգարինը նշում է, որ Գրիբոյեդովը երազում «ընկերների շրջապատում պատմում էր իբրև թե իր կողմից գրված կատակերգության նախագծի մասին և նույնիսկ որոշ դրվագներ էր կարդում դրանից»: Մ. Նեչկինան պնդում է, որ Ա. Գրիբոյեդովի նամակում այսպիսի բան չկա. նա ընկերներին չի պատմում կատակերգության մասին և ոչ էլ դրանցից հատվածներ է կարդում:

2) Ա. Գրիբոյեդովի նամակի այն բառերը, թե՛ «նստում եմ գրելու», վերագրում է ոչ թե «Խելքից պատուհաս»-ի նախագծին, այլ հենց նոր տեսած երազին: Նա դրա սպացույցն է համարում նամակում նշված ժամը, ինչը, սովորաբար, բացակայում է Գրիբոյեդովի մյուս նամակներում:

3) Ֆ. Բուլգարինը երազը վերագրում է 1821թ., իսկ Ա. Գրիբոյեդովն իր նամակը թվագրել է 1820թ. նոյեմբերի 17-ով:

4) Բուլգարինը ճիշտ չի նշում «Խելքից պատուհաս»-ի ավարտման վայրն ու ժամկետը («... նա ավարտեց այն 1822թ. Թիֆլիսում...»), մինչդեռ Ա. Գրիբոյեդովն այն ավարտել է 1824-1825 թթ. Պետերբուրգում:

Մ. Նեչկինան Ֆ. Բուլգարինի ամենագլխավոր անճշտությունը համարում է այն, որ դատելով Ա. Գրիբոյեդովի նամակում տեղ գտած երկխոսությունից՝ խոսքը գնում է ոչ թե նոր ծնված ստեղծագործության, այլ երկուսին արդեն հայտնի մեկ այլ ստեղծագործության գաղափարի մասին, որն Ա. Գրիբոյեդովը երգվում է ավարտել մեկ տարի անց: Նա գրում է, որ Ա. Գրիբոյեդովի տվյալ նամակում խոսքը գնում է ոչ թե ինչ-որ նոր ծնված, այլ զրուցակցին հայտնի ավելի վաղ մտահղացման մասին: Այս հակասություններից էլնելով՝ Մ. Նեչկինան գտնում է, որ Ա. Գրիբոյեդովի նամակի առկայության դեպքում Ֆ. Բուլգարինի գրառումը կարևոր չէ, քանի որ «երազի» մասին Ֆ. Բուլգարինին կարող էր պատմել միայն ինքը՝ Ա. Գրիբոյեդովը: **Քանի որ նրանք ծանոթացել են 1824թ. հունիսին, իսկ Ֆ. Բուլգարինն իր հուշերը գրել է 1830թ., ապա նա տարիների ընթացքում կարող էր մոռանալ շատ բան, ուստի, ըստ ուսումնասիրողի, այս դեպքում Ֆ. Բուլգարինի գրառումն ընդհանրապես աղբյուրի նշանակություն չունի,** և պետք է հաշվի առնել միայն Ա. Գրիբոյեդովի պատմածը (այս մասին արդեն մանրամասնել ենք), սակայն, **էլնելով «գիտական նպատակահարմարության» տեսանկյունից** և հակադրվելով Ն. Պիկսանովին, ուսումնասիրողը **1824-1830թթ.**

87 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 195:

88 Пиксанов Н.К., Творческое история "Горя от ума", кн. 2, с. 81-84:

(6-7 տարի) ժամանակաշրջանը համարում է այնքան մեծ շրջան, որ **Ֆ. Բուլգարինը** կարող էր «շատ բան մոռացած լինել», և դա՛ այն դեպքում, երբ 1819թ. նոյեմբեր-դեկտեմբերին Մոզդոկից Թիֆլիս ճանապարհին Ա. Գրիբոյեդովի և Գ. Բեհբուրովի ծանոթությունից մինչև վերջինիս կողմից 1861 թվականին հուշերի տպագրումն անցած 42 տարիների վերաբերյալ չի ընդունում Ն. Պիկասանովի եզրակացությունն առ այն, որ Գ. Բեհբուրովը, իրո՞ք, շատ բան կարող էր «շփոթած» կամ «մոռացած» լինել:

Ա. Գրիբոյեդովի նամակին տալով «երդման մասին երազ» պայմանական անվանումը (Ն. Պիկասանովն այն անվանել է «մարգարեական երազ»)՝ Մ. Նեչկինան վերը նշվածից եզրակացնում է. «Դա ավելի վաղ մտահղացած ստեղծագործության վերակենդանացմանը խթանող ինչ-որ ներքին, մեծ ազդակի տարերթիվ է: Դա առավել ջանասիրական և աշխույժ աշխատանքի սկզբի պահ էր այն հիմքի վրա, որը թեկուզև մտահղացվել էր ավելի վաղ, բայց դանդաղ էր առաջ գնում և ժամանակ առ ժամանակ կանգ էր առնում (մահանում էր)»: Ն. Պիկասանովի դիրքորոշման վերաբերյալ նա գրում է. «Պիկասանովի եզրակացությունը, թե հատկապես 1820 թվականից «պետք է վարել «Խելքից պատուհաս»-ի ժամանակային հաշվարկը», իմ կարծիքով, ոչ միայն ամբողջովին հիմնավորված չէ, այլև առաջացել է փաստացի սխալի հիման վրա: Գրիբոյեդովյան տեքստը չի խոսում ոչ միայն մտահղացման առաջացման, այլ նաև կատակերգության վրա աշխատանքի սկզբի մասին: Ն. Պիկասանովի եզրակացությունը հիմնված է այս դեպքում ոչ մի նշանակություն չունեցող բուլգարինյան սխալ վարկածի վրա»⁸⁹:

Մեր կարծիքով փաստացի սխալ է թույլ տալիս Մ. Նեչկինան՝ հաշվի չառնելով Ֆ. Բուլգարինի գրառումը: Մենք համամիտ ենք, որ, Ա. Գրիբոյեդովի նամակի հետ համեմատած, գրառումն ունի անճշտություններ՝ բացառությամբ մեկի, որը Մ. Նեչկինայի կարծիքով գլխավորն է: Ա. Գրիբոյեդովի տեքստից միանշանակ չի կարելի եզրակացնել, որ խոսքն ավելի վաղ մտահղացած այլ ստեղծագործության մասին է: Պետք է ընդունել, որ Ֆ. Բուլգարինի անճշտությունները գալիս են Ա. Գրիբոյեդովից, քանի որ միայն վերջինս կարող էր պատմել իր երազի մասին: Եթե նույնիսկ ընդունենք, որ Ա. Գրիբոյեդովն իր երազը Ֆ. Բուլգարինին պատմել է 1824թ., իսկ Ֆ. Բուլգարինն իր հուշերը տպագրել է 1830թ., ապա վեց տարին այնքան էլ մեծ ժամկետ չէ այնտեղ

տեղ գտած անճշտությունները հատկապես դրան վերագրելու և հուշերը որպես աղբյուր բացառելու համար:

Եթե Մ. Նեչկինան իր եզրակացության համար Սա. Բեգիչևի և Գ. Բեհբուրովի՝ 42 տարի անց գրած հուշերն ընդունում է որպես հիմք, ապա Ֆ. Բուլգարինի գրառումների հավաստիությունը միտումնավոր ժխտելու պատճառ մենք էլ չենք տեսնում: Որպես աղբյուր բացառելով Ֆ. Բուլգարինի գրառումները՝ Մ. Նեչկինան ակամայից կասկածի է ենթարկում նաև Ա. Գրիբոյեդովի նամակի կարևորությունը: Կարծում ենք՝ այս երկու փաստաթղթերը հաստատում և լրացնում են միմյանց. առանց Ֆ. Բուլգարինի գրառման՝ Ա. Գրիբոյեդովի նամակը կարելի է դիտարկել սոսկ մի փաստաթուղթ, որում ընդամենը խոսվում է ինչ-որ ստեղծագործության մասին: Այս դեպքում այն դժվար կլինի կապել «Խելքից պատուհաս»-ի հետ: Կարող է հարց ծագել, թե ինչու՞ է Մ. Նեչկինան մերժել Ն. Պիկասանովի տեսակետը և պնդել, թե «Խելքից պատուհաս»-ի մտահղացման պատմությունը պետք է հաշվել 1816 թվականից: Պատասխանը մեկն է. փորձ է արվել այս հարցն էլ կապել դեկաբրիստական «հեղափոխական» շարժման հետ⁹⁰ և շեշտել Ա. Գրիբոյեդովի՝ քաղաքականապես բավականին վաղ հասունացած լինելու հանգամանքը (զուգահեռներ տանենք նրա ծննդյան թվականի՝ 5 տարի տարբերության շուրջ վարկածների վերլուծությունների հետ):

Ն. Պիկասանովն ու Մ. Նեչկինան իրենց տեսակետներին են հարմարեցրել նաև հետագոտող Նովոսիլցևայի տեղեկությունը (5-րդ վարկած – Վ.Ս.): Ըստ Ն. Պիկասանովի՝ նրա պատմածն Ա. Գրիբոյեդովի ընկերներից և ոչ մեկը չի հաստատում: Նովոսիլցևան Ֆ. Էվանսի նկարագրած դեպքը գրի առնելիս գեղարվեստականացրել է այն: Ն. Պիկասանովն «անեկդոտային չափազանցություն» է համարում նաև այն, որ ողջ Մոսկվայով կարող էր լուր տարածվել Գրիբոյեդովի խելագարության մասին: Նա գտնում է, որ դրանում ճշմարտության ինչ-որ հատիկ վերաբերում է Ա. Գրիբոյեդովի՝ ընդամենը «նյարդային, զայրացկոտ» բնավորության գծերի նկարագրությանը, ինչը, ըստ ուսումնասիրողի, հաստատում են գրողի ընկերները: Օրինակ, Ա. Ա. Բեստուժևը գրում է. «Նա չէր կարող և չէր ցանկանում թաքցնել ծաղրանքը չարախոսության և ինքնագոհ հիմարության հանդեպ, ոչ ատելությունը ստոր բժնության հանդեպ, ոչ էլ զայրույթը երջանիկ արատ (այլանդակություն) տեսնելիս... Մրտի արյունը միշտ խաղում էր նրա

89 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 198-199: 138

90 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 207-219: 139

դեմքին... Ոմանց «կատոնյան» դաժանություն և նույնիսկ հանդգնություն կթվար այն հաստատակամությունը, որով նա, չնայելով տվյալ անձի անվանի լինելուն, մերկացնում էր արատավոր սովորությունները...»⁹¹:

Քանի որ Նովոսիլցևայի մոտ բացակայում է պատահարի ժամանակային պատկանելությունը, Ն.Պիկսանովը «խելագարության» այդ դեպքի հավանական ժամանակ է համարում 1818 կամ 1823 թվականները՝ նախապատվությունը տալով վերջինին: Դա հիմնավորելու համար նա դարձյալ վկայակոչում է Ստ. Բեգիչևին (ով վկայում էր միայն մոսկովյան հասարակությունում պոետի դիտարկումների մասին) և հատկապես Ֆ. Բուլգարինին: Վերջինս գրում էր. «1823թ. մարտին նա (Ա. Գրիբոյեդովը – Վ. Ս.) չորսամսյա արձակուրդ ստացավ՝ մեկնելու Մոսկվա և Պետերբուրգ: Գալով Մոսկվա՝ Ա. Գրիբոյեդովը մտավ հասարակություն, զգաց իր կատակերգության թերություններն ու սկսեց այն ձևավոխել: Ամեն անգամ բարձրաշխարհիկ հասարակություն մտնելը նրան նյութ էր տալիս իր աշխատանքի կատարելագործման համար, և հաճախ էր պատահում, որ նա, ուշ վերադառնալով տուն, գիշերները մի շնչով ամբողջ տեսարաններ էր գրում»⁹²:

Ն. Պիկսանովն այլ կերպ չէր էլ կարող վարվել, քանի որ Էվանսի պատմածը վերագրելով 1818թ. **կասկածի տակ կղեր իր վարկածը**: Մ. Նեչկինան, ընդհակառակը, Էվանսի պատմած դեպքը վերագրում է 1818թ. աշնանը: Ընդունելով, որ Նովոսիլցևան Էվանսի պատմածը ներկայացնելիս գեղարվեստականացրել է և նույնիսկ այն արտահայտությունը, թե՛ «հաջորդ օրն իսկ նա մտահղանում է գրել «Խելքից պատուհաս»-ը, Մ. Նեչկինան համարում է պարզամտություն, քանի որ հակասում է դրանից առաջ հնչած այն մտքին, թե՛ «ամբողջ նախագիծն արդեն գլխումս է»: Մ. Նեչկինան ևս, հիմք ընդունելով միայն դեպքը որպես այդպիսին, բայց առանց Նովոսիլցևայի «պատկերազարդման», ի տարբերություն Ն. Պիկսանովի, այն վերագրում է 1818թ. և որպես իր տեսակետի հիմնավորում բերում է հետևյալ փաստարկները. «Ենթադրում եմ, որ ավելի ճշմարտանման է այս դրվագը վերագրել 1818թ.. Արևելքից 1823թ. վերադառնալիս հասուն, ձևավորված, ավելի զսպված դիվանագետը, ինչպիսին էր Գրիբոյեդովը քսանութ տարեկանում, ակնհայտորեն ավելի քիչ էր հակված պարահանդեսներում բռն վեճերի բռնվելու, քան անհա-

վասարակչի և ավելի բռնկուն քսաներեքամյա երիտասարդը... Իսկ 1818թ. աղբյուրները հենց այդպիսին են նկարագրում Գրիբոյեդովին»:

Ինչպես տեսնում ենք, դարձյալ նույն չարաբաստիկ հինգ տարվա պատմությունն է: Մ. Նեչկինայի այս փաստարկը համոզիչ չէ, քանզի հակասում է հենց Ա. Գրիբոյեդովի՝ 1827թ. (արդեն 32 տարեկանում – Վ.Ս.) գրած և մեր կողմից վերևում հիշատակված խոստովանությանը («Իմ մորեղբոր բնավորությունը»), ինչպես նաև Գրիբոյեդովի ժամանակակիցներից շատերի վկայություններին: Ոչ մի օրինակ չբերելով իր նշած «աղբյուրներից, որոնք հենց այդպիսին են ներկայացնում Գրիբոյեդովին 1818թ.»⁹³, Մ. Նեչկինան իր տեսակետի «ապացույց» է համարում 1818թ. սեպտեմբերի 18-ին Վորոնեժից Ստ. Բեգիչևին գրած, սակայն իրականում ոչինչ չապացուցող Ա. Գրիբոյեդովի նամակը, որում ընդամենն ասվում է. «...Մոսկվայում ոչինչ ինձ համար չէ: Պարապությունը, ճոխությունը, ոչ մի զգացմունքով ինչ-որ լավ բանի կապված չլինելը...»⁹⁴:

Ն. Պիկսանովի տեսակետը հաստատում են նաև մի քանի ոչ անմիջական փաստաթղթեր, օրինակ՝ 1820թ. նոյեմբերին «Անհայտ անձին» Ա. Գրիբոյեդովի գրած ևս մեկ նամակը⁹⁵, որը գրված է ֆրանսերենով և իր ձևով հրաժարական է հիշեցնում, ինչը վկայում է այն մասին, որ նամակի հավանական հասցեատերն Արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Կ.Վ. Նեսսելրոդեն է, և, որ ամենակարևորն է, նամակը գրված է այն թղթի հակառակ երեսին, որի վրա գրվել է «երազը պատմող նամակը»⁹⁶: Սա վկայում է, որ երազն Ա. Գրիբոյեդովի վրա այն աստիճան ցնցող տպավորություն է թողել, որ նա որոշել է հեռանալ պետական ծառայությունից:

Ա. Գրիբոյեդովի վաղ շրջանի հայացքները քննարկելիս արդեն ներկայացրել ենք նրա հայրենասիրական գաղափարներում ազգայնական դրսևորումների փաստերը: Դրանք առկա են նաև հասուն շրջանի դրսևորումներում, ինչը վկայվում է «Խելքից պատուհաս»-ի երրորդ գործողության քսաներկուերորդ տեսիլում, Բորդոյից ժամանած ֆրանսիացու մասին **Չացկու «բերանով» արտահայտած արգահատուլից կարծիքով, որը դուրս է գալիս կոնկրետ մեկ դեպքի շրջանակներից և վեր է ածվում Ա. Գրիբոյեդովի ազգայնական գաղափարներն ընդ-**

93 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 205-207:

94 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, кн. 2, с. 188:

95 Նույն տեղում՝ էջ 213-214:

96 Пиксанов Н.К., Творческая история "Горя от ума", кн. 2, с. 83:

91 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, кн. 2, с. 52-53:

92 Նույն տեղում՝ էջ 14:

հանրացնող ծրագրային ելույթի, մասնավորապես մեր կողմից արդեն նշված ազգային տարազի և լեզվի մասին⁹⁷:

Ինչ վերաբերում է «Խելքից պատուհաս»-ում Ա. Գրիբոյեդովի հեղափոխական գաղափարների արտացոլմանը, ապա այստեղ ևս ամեն ինչ միանշանակ չէ, ինչպես ներկայացվել է խորհրդային պատմագիտության կողմից: Փորձենք ցույց տալ, թե Ա. Գրիբոյեդովի վրա որպես հասարակական-քաղաքական երևույթ ինչ ազդեցություն է ունեցել դեկաբրիստական շարժումը, և արդյո՞ք այն իր արտացոլումն է գտել «Խելքից պատուհաս»-ում: Արդեն նշել ենք, որ «Խելքից պատուհաս»-ի առաջին երկու գործողություններն Ա. Գրիբոյեդովը գրել է Թիֆլիսում: **Նույնիսկ «Խելքից պատուհաս»-ի մտահղացումը 1816թ. կատարված լինելու հանգամանքն ընդունելու դեպքում, հաշվի առնելով նոր ծնունդ առնող առաջին կազմակերպություններին Ա. Գրիբոյեդովի ունեցած առնչությունները, քաղաքական գործընթացներով չհետաքրքրվելը, և այդ տարիներին նրա վարած ցուփ կյանքն ու գրական գործունեությունը, պարզ կդառնա, որ դեկաբրիստական շարժման ազդեցությունը պիեսի վրա չնչին է, քանի որ 1818-1823թթ. Ա. Գրիբոյեդովը Կովկասում էր ու «Խելքից պատուհաս»-ի նախագիծը կազմելիս ու առաջին երկու գործողությունները գրելիս չէր կարող կրել Մոսկվայում և Պետերբուրգում գործող հասարակական-քաղաքական հոսանքների կամ դեկաբրիստական կազմակերպությունների ազդեցությունը: Թերևս կարելի կլիներ հաշվի առնել միայն այն հանգամանքը, որ Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկեր Ստ. Բեգիչևը մի կարճ ժամանակ եղել է դեկաբրիստական «Բարորության միության» անդամ և Պետերբուրգում, Ա. Գրիբոյեդովի հետ միևնույն բնակարանում բնակվելիս կարող էր նրան ծանոթացնել «Միության» կանոնադրության և ծրագրերի հետ: Սակայն դժվար թե նա հասցներ «ազդվել» հեղափոխական գաղափարներից, քանի որ Ստ. Բեգիչևը Պետերբուրգ էր եկել 1818թ. օգոստոսի 12-ին, երբ Ա. Գրիբոյեդովն արդեն պատրաստվում էր մեկնել Արևելք, և նրանք միասին անց են կացրել ընդամենը 16 օր⁹⁸:**

Ինչ վերաբերում է երրորդ և չորրորդ գործողություններին, ապա այստեղ ևս քիչ հավանական է դեկաբրիստական գաղափարների ազդեցությունը, քանի որ Ա. Գրիբոյեդովը դարձյալ Մոսկվա էր մեկնել

97 Գրիբոյեդով Ա.Ս., «Խելքից պատուհաս», նշվ. աշխ., էջ 132:

98 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 160-161: 142

1823թ. մարտի վերջին, իսկ այդ երկու գործողությունները գրվել են նույն թվականի ամռանը Ստ. Բեգիչևի կալվածքում: **Փաստացի վկայված չէ, որ հեղափոխական գաղափարներին նա կարող էր ծանոթացած լինել ծառայության բերումով Կովկասում գտնվող դեկաբրիստ սպաներից: Քանի որ մեզ հայտնի չէ նաև հետագա գաղտնի կազմակերպությունների ծրագրերին Ստ. Բեգիչևի տեղեկացվածության չափը (նա վաղուց էր հեռացել նրանցից) և այն, թե արդյո՞ք Ա. Գրիբոյեդովի հետ նա ծավալվել է այդ հարցերի շուրջ, ուստի դժվար է պնդել, թե նա կարող էր երեք ամսում գաղտնի կազմակերպության ծրագրերին ծանոթանալ և նախօրոք մտահղացած պիեսի նախագիծը փոփոխել դրանց գաղափարական ազդեցության հետևանքով: Կարծում ենք, որ դեկաբրիստական գաղտնի ծրագրերին և գաղափարներին նա ավելի շատ ծանոթանալու հնարավորություն է ունեցել 1824-1825թթ.:**

«Խելքից պատուհաս»-ում Ա. Գրիբոյեդովի «հեղափոխական գաղափարների արտացոլման» կամ, ավելի ճիշտ է ասել, դրանց հանդեպ նրա վերաբերմունքի արտահայտություն են համարվել պիեսում գործող անձինք չհանդիսացող, բայց պիեսի հերոս Ռեպետիլովի կողմից հիշատակվող **գաղտնի կազմակերպության անդամ իր ընկերների կերպարների ծաղրական բնութագիրը⁹⁹:**

Չնայած Ռեպետիլովի կերպարի բացասական լինելուն և նրա արտաբերած մտքերին՝ **դեկաբրիստներն**, ըստ ուսումնասիրողների, «Խելքից պատուհաս»-ն ընդունել են մեծ խանդավառությամբ և արտագրել ու տարածել են այն: Սակայն բնական հարց է առաջանում, **ինչպե՞ս կարող էին դեկաբրիստներն իրենց ծաղրող այդպիսի ստեղծագործության հանդեպ խանդավառ վերաբերմունք ունենալ:** Խորհրդային հետազոտողները, կառչելով այս թվացյալ անմեղ հակասությունից, գտնում են, որ Ա. Գրիբոյեդովը նկատի չի ունեցել 1823-1825թթ. գործող դեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների անդամներին, այլ ծաղրել է ավելի վաղ եղած կազմակերպությունների այն անդամներին, ովքեր միայն խոսում էին Ռուսաստանի պետական կարգերում անհրաժեշտ փոփոխությունների մասին ու պատրաստ չէին լուրջ գործողությունների և այդ պատճառով էլ 1820-ական թվականների սկզբին դուրս էին մնացել ավելի ուշ գործող դեկաբրիստական կազմակերպությունների շարքերից:

99 Գրիբոյեդով Ա.Ս., «Խելքից պատուհաս», նշվ. աշխ., էջ 143:

Մ. Նեչկինան, օրինակ, գրում է. «Պիեսում, որն այդքան սերտորեն կապված է գաղտնի կազմակերպության գաղափարների հետ, ինչու՞ է հեղինակը մտքով հենց գաղտնի կազմակերպության անդամի ծաղրական պատկերումը. որովհետև այդ պատկերումը լիովին համապատասխանում էր գաղտնի կազմակերպության գաղափարների զարգացման (էվոլյուցիայի) նոր փուլին և արտացոլում էր նրանց պայքարն անհուսալի և անկայուն անդամների դեմ: Դեկաբրիստների ընկեր Գրիբոյեդովն ինչու՞ ստեղծեց գաղտնի կազմակերպության անդամի ծաղրական պատկերը. հենց նրա համար, որ զարգացման նոր փուլում էլ նա մնաց որպես դեկաբրիստների ընկեր և, ըստ էության, հարում էր նրանց համար թանկ գաղափարների հիմնական ամբողջությանը: Ինչպե՞ս մեկնաբանել դեկաբրիստների կողմից այդպիսի պիեսի տարածման փաստը, որն իբր թե իր մեջ ծաղրանք էր ներառում նրանց հանդեպ. Գրիբոյեդովի պիեսը չէր ներառում դեկաբրիստների հանդեպ անգամ փոքրագույն ծաղրանք, այլ արտացոլում էր նրանց գաղափարախոսության հասունացումը, մասնավորապես ռեպեթիվության ողջ դրվագը հեղինակի տեսանկյունից ամբողջությամբ դեկաբրիստական էր, ուստի դեկաբրիստները պիեսը ճանաչեցին «իրենցը» և տարածում էին այն, ինչպես կտարածեին իրենց գաղափարախոսության քարոզչական փաստաթուղթը»¹⁰⁰:

Կարծում ենք, որ «Խելքից պատուհաս»-ը դեկաբրիստական շարժման հետ կապելու վերոհիշյալ տեսանկյունն արհեստական և ենթադրական է: Վերևում արդեն նշել ենք, որ այդ պիեսի մտահղացումը չի կարելի բացատրել դեկաբրիստական շարժման ազդեցությամբ, իսկ գաղափարների համընկնումը գալիս է նրանից, որ Ա. Գրիբոյեդովը և դեկաբրիստները որպես անհատներ ձևավորվել են միևնույն միջավայրում և, բնականաբար, հայացքների հարցերում կարող էին ունենալ շատ ընդհանրություններ: Ա. Գրիբոյեդովը Ռեպեթիվովի դրվագում դուրզն իսկ ակնարկ չի անում, թե կոնկրետ ում է ծաղրել. հի՛ն, թե՛ նոր փուլի դեկաբրիստներին (նույն հաջողությամբ կարելի է ենթադրել, որ նա նկատի է ունեցել մասուններին, որոնց ժամանակին ինքն էլ էր անդամակցել):

Ա. Գրիբոյեդովը պիեսի ստեղծման գործընթացում բազմիցս կրքճատումներ, ավելացումներ է կատարել, այսինքն՝ հեղինակի նման պիեսն էլ է ապրել «գաղափարական զարգացում», բայց ռեպեթիվության ծաղրական բնութագրումների մեջ հին ու նոր դեկաբրիստների գա-

ղափարական զարգացման և նույնիսկ հեղափոխական գաղափարների ու պահանջների մասին փոքր-ինչ ակնարկ չկա: Ա. Գրիբոյեդովի և դեկաբրիստների միջև ամենամեծ տարբերությունը նպատակներին հասնելու մեթոդների մեջ էր. Ա. Գրիբոյեդովը չէր ընդունում դեկաբրիստների զինված հեղաշրջման կամ, որն ավելի ճիշտ է, բռնի ճանապարհով իրենց քաղաքական նպատակներին հասնելու մեթոդները (որին դեռ կանդրադատնանք):

Ինչ վերաբերում է Ռեպեթիվովի կերպարին, ապա այստեղ հարկ է ընդունել, որ դրանով Ա. Գրիբոյեդովը ծաղրել է որևէ լուրջ գործի անընդունակ, բայց իրենց առաջադեմ և նույնիսկ արմատական (ռադիկալ) համարող մարդկանց: Դեկաբրիստներից ոչ մեկը, բնականաբար, չէր կարող իրեն համարել այդպիսին, առավել ևս, որ մեզ հայտնի չէ, թե ով է հանդիսացել Ռեպեթիվովի կերպարի նախատիպը, ինչը որոշ, բայց առավել հստակ պարզաբանում կմտցներ այս հարցի շուրջ: Ամեն գնով Ա. Գրիբոյեդովին գրական ոլորտից քաղաքական գործունեության հարթություն փոխադրելու ժամանակի հրամայականը խորհրդային հետազոտողներին ստիպել է շրջանցել Ա. Գրիբոյեդովի ժամանակակից, դեկաբրիստ Դ. Ջավալիշինի շատ դիպուկ և հետևյալ պարզ մեկնաբանությունը. «...«Խելքից պատուհաս»-ն այն ժամանակ բոլորովին այլ կերպ է ընկալվել: Դա այն ժամանակ ժողովրդականություն էր վայելում այնպես, ինչպես որ ցանկացած ուրիշ ծաղրանք իրերի այս կամ այն դրության նկատմամբ (Ջավալիշինը սա դիտում է իբրև անպատասխանատու մարդկանց կողմից ուրիշի գրած տողերով այլոց խոցելու միջոց, եթե իրենք վճռականություն չունեին դա անելու – Վ.Ս.)»¹⁰¹:

Անտեսվել են նաև Դ. Ջավալիշինի հետևյալ տողերը. «...Այն դառաշրջանում Գրիբոյեդովի և Պուշկինի ժամանակակիցների համար նրանք այն մարդիկ չէին, ինչ դարձան հետագա սերունդների համար, որովհետև հետագա սերունդները նրանց սկսեցին դիտել իրենց ստեղծագործությունների հետևողական բացահայտման պրիզմայի միջով, հետևաբար՝ նրանց մասին սկսեցին դատել ավելի ուշ շրջանի գործերից...»¹⁰²: Այս դատողություններին ևս դեռ կանդրադատնանք:

Ամփոփելով ուսումնասիրության այս ենթաբաժինը՝ եզրակացնենք հետևյալը.

101 А.С. Прибедов. Его жизнь и гибель, ևշվ. աշխ., էջ 94:

102 Նույն տեղում՝ էջ 94:

100 Нечкина М., Грибоедов и декабристы. 1977, ևշվ. աշխ., էջ 436:

1. Ա. Գրիբոյեդովի կյանքն ու հայացքները ուսումնասիրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի անբավարար քանակության պատճառներից օբյեկտիվն այն է, որ շատ փաստաթղթեր պարբերաբար ոչընչացվել են Ա. Գրիբոյեդովին 1826թ. ձերբակալելիս, իսկ մյուս մասն այրվել է նրա կենսագիր Գ.Ա. Սմիռնովի տանը բռնկված հրդեհի ժամանակ¹⁰³: Սուբյեկտիվ պատճառն այն է, որ Ա. Գրիբոյեդովն անփույթ է վերաբերվել իր կյանքին ու գործունեությանը վերաբերող հարցերին, ինչն էլ հետագայում հիմք է ծառայել բանավեճերի, իրարամերժ վարկածների առաջացման:

2. Խորհրդային հետազոտողների կողմից, ծառայողական վերելքի հասնելու նպատակով կենսագրական որոշ փաստերը դիտավորյալ փոփոխելու հարցում Ա. Գրիբոյեդովին մեղադրելը դիտվել է որպես մարքսիստական մեթոդաբանությունից շեղում, ուստի շրջանցվել են գրողի ծննդյան տարեթվի և ուսումնառության հետ կապված որոշ մանրամասներ: Շրջանցվել է նաև այս հարցում արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսելրոդեի և Ա. Գրիբոյեդովի ընկերական կապերի հանգամանքը, և վերլուծության չի ենթարկվել այն հարցը, թե Արտաքին գործերի գերատեսչության «ամենատես աչքից» ինչպես է վրիպել Ա. Գրիբոյեդովի «իրավունքի թեկնածու» չհանդիսանալու շատ կարևոր խնդիրը:

3. Ա. Գրիբոյեդովը եղել է ոչ թե գեներալ Ա. Կոլոգրիվովի համհարզը, այլ անձնական քարտուղարը, և պաշտոնական գրության մեջ նրա պաշտոնի անորոշ ձևակերպումը թույլ է ավել, որ նա ունենա բավական ազատ ժամանակ՝ գրական գործունեությամբ զբաղվելու համար:

4. Ազգային-հայրենասիրական գաղափարների դրսևորումներն Ա. Գրիբոյեդովի մոտ ավելի հաճախ կրել են ազգայնական երանգներ, ինչն արտահայտվել է ամենայն ռուսականի հանդեպ նրա՝ գործնականում չապացուցված սիրո և ցանկացած օտարերկրայինի հանդեպ ընդգծված արհամարանքով:

5. 1815-1818թթ. Ա. Գրիբոյեդովի պետերբուրգյան կյանքի մասին պատկերը ներկայացնենք դարձյալ նրա ժամանակակից Գ. Զավալիշինի խոսքերով, որոնք ևս զգուշությամբ շրջանցել են խորհրդային հետազոտողները: Նա գրում է. «...Հասարակության մեջ իր դիրքին համապատասխան մարդկանց հենց՝ իր շրջապատում, 1824-1825թթ.

(այսինքն՝ ոչինչ չէր փոխվել 6-7 տարի անց – Վ. Ս.) Գրիբոյեդովը նրանց համար այն մարդն էր, ով զինվորական կյանքից իր հետ բերել էր «հանդուգն թեթևամտի» համբավ. նրա հիմնարկությունները բազում անեկդոտների թեմա էին... Հանգուցյալ Կախովսկին նրան ապացուցում էր նաև, որ, քննադատելով կեղծ լիբերալների խոսքի ու գործի հակասությունները, ինքը զերծ չէր դրանցից, և կարելի էր տեսնել, թե ինչպես էր Գրիբոյեդովը զգում, որ իրեն ամենացավոտ տեղը խոցեցին»¹⁰⁴:

6. Արևելքում Ա. Գրիբոյեդովի դեգերումների ընթացքում է ավարտվել նրա փիլիսոփայական, հասարակական և գեղարվեստական աշխարհայացքի ձևավորումը:

7. «Խելքից պատուհաս»-ի արարման տեղի ու ժամանակի շուրջ ծավալված բանավեճում առավել հիմնավորված են Ն. Պիկասնովի փաստարկները, իսկ Մ. Նեչկինայի եզրահանգումները կատարվել են «քաղաքական նպատակահարմարության» սկզբունքից ելնելով:

8. «Խելքից պատուհաս»-ը դեկաբրիստական շարժման հետ կապելու տեսանկյունն արհեստածին է և ենթադրական: Գ-ա նեղացնում է կատակերգության գաղափարական նշանակությունը. Ա. Գրիբոյեդովն ու նրա պիեսն ապրել են գաղափարական զարգացում (էվոլյուցիա), և պիեսում ներկայացված է ժամանակի արատավոր բարքերի քննադատությունը, ինչի դեմ բողոքում էին ոչ միայն փոքրաբանակ դեկաբրիստները, այլև ռուսական ողջ առաջադեմ հասարակությունը:

103 Лебедев А., Грибоедов, факты и гипотезы, ևշվ. աշխ., էջ 10-11: 146

104 А.С. Грибоедов. Его жизнь и гибель, ևշվ. աշխ., էջ 94:

4. Ա.Ս. Գրիբոյեդովի առնչությունները դեկաբրիստական շարժմանը

Ա.Ս. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական գործունեության առումով կարևոր է նրա կյանքի 1824-1825թթ. պետերբուրգյան ժամանակաշրջանը, քանի որ հենց այս տարիներին է առավելապես ակտիվացել դեկաբրիստների Հյուսիսային ընկերության գործունեությունը, իսկ այդ Ընկերության անդամներից շատերի հետ ծանոթ, ոմանց հետ էլ դեռևս ուսանողական տարիներից մտերիմ հարաբերությունների մեջ էր Ա. Գրիբոյեդովը: Հետագայում նրա ձեռքակալությունն ուղղակի կապված էր այդ տարիներին Պետերբուրգում անցկացրած ժամանակաշրջանի հետ: Ա. Գրիբոյեդովի կենսագիրներից շատերն այդ տարիները չեն առանձնացնում և դրանց միշտ անդրադառնում են կա՛մ նրա ձեռքակալության հետ կապված հարցերը քննարկելիս, կա՛մ նախատակվելուց հետո նրա քաղաքական հայացքները, ստեղծագործական կյանքը և բնավորության գծերը վերլուծելիս: Ժամանակին հայտնվել է այսպիսի կարծիք. «Այնուամենայնիվ, գրիբոյեդովյան նույնիսկ առավել մանրամասն կենսագրություններում պետերբուրգյան երկրորդ ժամանակաշրջանի պատմության մեջ չկա այդ տվյալների հետևողական շարադրանք...»¹:

Ա. Գրիբոյեդովը Պետերբուրգ է ժամանում 1824թ. հունիսի 1-ին և անմիջապես ձեռնամուխ է լինում իր նախկին ծանոթությունների վերականգնմանն ու նորերի հաստատմանը²:

Պետերբուրգում անցկացրած ժամանակահատվածում Ա. Գրիբոյեդովի հին ծանոթներից և բարեկամներից այդ ժամանակ այստեղ էին և իրար հանդիպում էին Ս.Պ. Տրուբեցկոյը, Նիկիտա Մուրավյովը, Ա.Ի. Օդոևսկին, Վ.Ս. Լանսկոյը, Ն.Ն. Օրժիցկին, Մուրավյովները, Պ.Գ. Կախովսկին, Վ.Կ. Կյուլսելբերգերը և այլք: Ա. Գրիբոյեդովի նոր ծանոթների շարքում էին Ֆ.Ն. Գլինկան, Բեստուժն եղբայրները, Կ.Ֆ. Ռիլենը, Ե.Պ. Օրոլենսկին,

1 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 441:

2 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, кн. 2, с. 224-225 (1824թ. հունիսի 10-ի նամակը Ստ. Բեգիչևին):

Օ.Մ. Սոմովը, Ա.Օ. Կոռնիլովիչը, Ա.Ֆ. Բրիգենը, Դ.Ի. Չավայիշինը, Մ.Ի. Պուշինը³:

Նախքան այս ենթաբաժնի գլխավոր հարցին պատասխանելը, այն է՝ ինչ կապեր է ունեցել Ա. Գրիբոյեդովը դեկաբրիստների հետ, առաջին հերթին քննարկենք այն հարցերը, թե արդո՞ք նա տեղյակ էր դեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների գոյությանը, և եթե այո, ապա որքա՞ն էր դրանց ծրագրերին նրա տեղեկացվածության չափը: Եթե առաջնորդվենք Ա. Գրիբոյեդովի քրեական գործում եղած տեղեկություններով, ապա եզրակացությունը կլինի միանշանակ՝ ոչ, տեղյակ չէր: Սակայն հաշվի առնելով հարցաքննությունների ժամանակ նրա բռնած դիրքը, թե «ոչինչ չգիտեմ և ոչնչից տեղյակ չեմ», ապա պարզ կդառնա, որ նրա քրեական գործում եղած տեղեկությունները բավարար չեն ճիշտ եզրակացության համար: Մեջ բերենք նախքան 1825թ. դեկաբրիստների ապստամբությունը նրանց մասին Ա. Գրիբոյեդովի արած երկու արտահայտությունները: **Գրանցից առաջինում նա ասել է, որ «հարյուր պրապորշիկներ ցանկանում են փոխել Ռուսաստանի ողջ պետական կերպը», իսկ երկրորդում՝ «...ես ասում էի նրանց, որ նրանք հիմարներ են»⁴:** Այսպիսի արտահայտություններ կարող էր անել միայն գաղտնի կազմակերպությանը և նրա ծրագրերին գո՞նե մոտավորապես տեղյակ մարդը: Սրան ավելացնելով նաև դեկաբրիստներ Կ.Ֆ. Ռիլենի՝ «Գրիբոյեդովի հետ ես մի քանի ընդհանուր խոսակցություններ եմ ունեցել Ռուսաստանի վիճակի վերաբերյալ և ակնարկել եմ նրան Ընկերության մասին... Նա իմ ակնարկներից կարող էր իմանալ Ընկերության մասին»⁵ և Ա. Բեստուժնի՝ «Գրիբոյեդովի՝ որպես ազատ մտածող մարդու հետ, ես հաճախ երազում էի Ռուսաստանի վերակառուցման մասին: Ասում էի նույնիսկ, որ կան մարդիկ, ովքեր ձգտում էին դրան: Իսկ Ընկերության և նրա միջոցների մասին չեմ հիշում, որ հիշատակած լինեմ...»⁶ հարցաքննության ժամանակ ասված տողերը, ապա կարելի է եզրակացնել, որ Ա. Գրիբոյեդովը եթե գիտեր, որ կան այդպիսի մարդիկ, ապա դժվար չէր հասկանալ, որ նրանք գործում էին ոչ թե անջատ, այլ միավորված պետք է լինեին մի ինչ-որ գաղտնի միության մեջ (չէ՞ որ ինքն էլ էր ժամանակին անդամակցել մասոնական կազմակերպություններին):

3 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 442-449:

4 Նույն տեղում՝ էջ 456, տե՛ս նաև՝ Шеголев П.Е., Грибоедов и декабристы, кн. 2, с. 91 էջ:

5 А.С. Грибоедов в воспоминаниях современников, кн. 2, с. 274:

6 Նույն տեղում՝ էջ 275:

Ինչ վերաբերում է ղեկաբրիստների ծրագրերին տեղյակ լինելուն՝ նշենք, որ Ա. Գրիբոյեդովը գիտեր դրանց մասին, իսկ արդեն 1825թ. դրությամբ՝ գուցե բավական մանրամասն: Այս առումով հիշատակենք նրա՝ 1825թ. նոյեմբերի 22-ին Ա. Բեստուժևին ուղղված նամակը, որի վերջում, հիշատակելով Ղրիմում Ն. Օրժիցկու հետ իր հանդիպումը, գրում է. «Հիշեցինք քեզ և Ռիլենին, որին իմ փոխարեն գրկիր անկեղծորեն, հանրապետական ձևով»⁷: Սա կարող է վկայել, որ Ա. Գրիբոյեդովը ղեկաբրիստների ծրագրերի մասին տեղյակ էր ոչ թե ընդհանուր գծերով, այլ գիտեր, թե նրանց որ թեև ինչ հայացքներ ունեւ: Դեկաբրիստների ծրագրերին տեղեկացվածությունը կարող է վկայել նաև Ա. Գրիբոյեդովին վստահելու չափի մասին: Եթե ասվածին ավելացնենք, որ Կ. Ռիլենը Ա. Գրիբոյեդովի մասին ասում էր՝ «նա մերն է»⁸, ապա կարող է պարզվել, որ Ա. Գրիբոյեդովի հանդեպ ղեկաբրիստների վստահությունը բավական մեծ էր: Առաջ անցնելով՝ նշենք, որ հետագայում Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության շարքերը չընդունելու փաստն Ա. Բեստուժևն ու Մ. Բեստուժև-Ռյումինը բացատրում են ոչ գաղափարական տարածայնություններով: Ա. Բեստուժևը նշում է. «Առաջին հերթին նա ինձանից մեծ էր և ավելի խելացի, երկրորդ՝ որ ավստում էի վտանգի ենթարկել այդպիսի տաղանդը, ինչի հետ համաձայն էր նաև Ռիլենը»⁹:

Մ. Բեստուժև-Ռյումինը ևս բերում է երկու պատճառ. «Ծառայելով Երմոլովի մոտ՝ նա (Գրիբոյեդովը – Վ.Ս.) մեր Ընկերությանը օգտակար լինել չէր կարող» և «...Չիմանալով Գրիբոյեդովի մտքերի իրական ընթացքը և բնավորությունը՝ վտանգավոր էր նրան ընդունել մեր Ընկերության մեջ, որ այդտեղ նա «պարտիա չաներ» Երմոլովի համար, ում հանդեպ մեր Ընկերությունը վստահություն չուներ»¹⁰:

Գաղտնի կազմակերպությանն Ա. Գրիբոյեդովի անդամակցելու հարցին այս կամ այլ կերպ անդրադարձել են նրա ժամանակակիցներից 16 մարդ. նրանցից վեցը Ա. Գրիբոյեդովի անդամակցության հարցին տվել են ժխտական, վեցը՝ հաստատական պատասխաններ, մյուս չորսը ձեռնպահ են մնացել՝ պատճառաբանելով գործին իրենց անտեղյակությունը: Գաղտնի կազմակերպության մասին Ա. Գրիբոյեդովի

7 Грибоедов А.С., Сочинения двух томах, 1971, т. 2, изд. 2-е, с. 253:

8 А.С. Грибоедов в воспоминаниях современников, изд. 2-е, с. 275:

9 Նույն տեղում՝ էջ 275:

10 Նույն տեղում՝ էջ 277:

տեղյակ լինելը հերքել են Ա. Օդոևսկին, Կ. Ռիլենը, Ա. Բեստուժևը, Մ. Բեստուժև-Ռյումինը, Ս. Մուրավյով-Ապոստոլը, Ա. Մուրավյովը: Անդամակցությունը մասնակիորեն հաստատել են Ս. Տրուբեցկոյը, Ե. Օբլենսկին, Ա. Բրիգենը, Ն. Օրժիցկին, Ա. Ժանդրը և Գ. Չավալիշինը: Ձեռնպահ են եղել Ս. Վոլկոնսկին, Ա. Բարյատինսկին, Վ. Դավիդովը և Պ. Պեստելը: Այս բաժանումը կատարել է ակադեմիկոս Մ. Նեչկինան¹¹: Մենք ևս կհետևենք բաժանման այդ տարբերակին, սակայն նշենք, որ շատ հարցերում չենք կարող համակարծիք լինել հարգարժան գիտնականի փաստարկումներին ու պնդումներին:

Վերլուծությունը սկսենք Ա. Ժանդրի թողած հուշերից, որոնք հետագայում գրառել ու հրատարակել է Ա. Գրիբոյեդովի ազգական և կենսագիր Գ.Ա. Սմիռնովը: Ա. Ժանդրը համարվում է Ա. Գրիբոյեդովի անդամակցությունը հաստատող անձ, և որպես ապացույց հիմք են ընդունվել նրա հետևյալ խոսքերը. «...Իսկ այս գործից նա պատենչվեց իսկապես հիանալի և ինքնատիպ ձևով, որը ցույց է տալիս, թե ինչպես էին նրան սիրում և հարգում: Ա. Երմոլովի կողմից նրա ձերբակալության պատմությունը Դուք արդեն գիտեք, Գրոզնի ամրոցից նրա թողթերի և դրանց ճակատագրի մասին՝ նույնպես, բայց Դուք հավանաբար չգիտեք սահ թե ինչ. խոտվության պետերը կամ կենտրոնների ղեկավարները (կենտրոնները, որոնք կոչվում էին դումաներ, երբևէ էին՝ Բիշնում, որը ղեկավարում էր Պեստելը, Կիևում՝ Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը և Պեստերբուրգում՝ Ռիլենը) իրենց եղբայրակից խոտվարների հանդեպ վարվում էին շատ ազնիվ և շրջահայաց կերպով, այսինքն՝ մարդը, անդամակցելով խոտվությանը, ստորագրում և մտածում էր, որ միմիայն իր ստորագրությամբ արդեն կապված է, բայց գործնականում դա բոլորովին էլ այդպես չէր: Նա կարող էր այդպես մտածել, որովհետև ոչինչ չգիտեր: Նրա ստորագրությունն անմիջապես ոչնչացվում էր: Այնպես որ իրականում նա կապված էր միայն խոսքով»¹²:

Չափազանց կարևորելով Ա. Ժանդրի հուշերը՝ նշվել է, որ միայն նա և Ստ. Բեգիչևն են առավել ճշգրիտ տեղեկություններ հաղորդել այս հարցի վերաբերյալ, տեղեկացված լինելով ,հավանաբար հենց Գրիբոյեդովի կողմից»¹³ (՝՝՝ – Վ.Ս.)՝ որպես ապացույց բերելով այն հանգամանքը, որ Ա. Ժանդրը ճշգրիտ թվարկել է այն անձանց (Մ. Բեստուժև-Ռյումին, Ա. Մուրավյով-Ապոստոլ, Կ. Ռիլեն և Ալ. Բեստուժև), ովքեր ցուցմունք էին

11 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, изд. 2-е, с. 464:

12 А.С. Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников..., изд. 2-е, с. 281:

13 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, изд. 2-е, с. 465:

տվել Ա. Գրիբոյեդովի վերաբերյալ: **Այստեղ, սակայն, չի նշվում այն, որ Ա. Ժանդրը Մ. Բեստուժև-Ռյումինին դասում է այն մարդկանց թվին, ում ցուցմունքով ձերբակալվել է Ա. Գրիբոյեդովը:** Ա. Ժանդրի խոսքերն են. «Դեկտեմբերի 14-ին, երբ բռնկվեց խռովությունը, խռովարարներին վերցրին (ձերբակալեցին – Վ.Ս.), որոնց թվում, անհասկանալի պատճառներով, Բեստուժև-Ռյումինը մատնացույց արեց Ա. Գրիբոյեդովին՝ առավելապես հենվելով այն բանի վրա, որ Ա. Գրիբոյեդովը և Մերգել Մուրավյով-Ապոստոլը մանկուց ապրում էին հոգեպես կապված... Միայն այդ դիպվածով էլ Գրիբոյեդովին վերցրին...»¹⁴: Վերևում, սակայն, նշեցինք, որ **Մ. Բեստուժև-Ռյումինը համարվում է Գաղտնի կազմակերպությանը Ա. Գրիբոյեդովի անդամ հանդիսացած լինելը հերքող անձ: Քաջատեղյակ Ա. Ժանդրը դժվար թե չիմանար այդ մասին, ուստի ստացվում է, որ նա կամ շփոթել, կամ էլ ճիշտ տեղեկացված չի եղել:** Վերլուծելով Պ. Պեստելի՝ քիշնևյան խմբի ղեկավարը լինելու և Գաղտնի կազմակերպության անդամների անուններն ամրագրած ինչ-որ «Դեղին գրքի» մասին Ա. Ժանդրի պատմածները՝ **Մ. Նեչկինան դրանք համարում է ոչ ճիշտ՝ բացատրելով, որ «միզուց գրի առնելիս ինչ-որ բան շփոթել է ինքը՝ Դ. Սմիռնովը, միզուց մոռացել է Ա. Ժանդրը... Բայց հազիվ, թե Գրիբոյեդովի հարցաքննության իրական հանգամանքները Ժանդրն իմանար ուրիշ մեկից: Այդպիսի փաստերը նրան կարող էր պատմել միայն ինքը՝ Գրիբոյեդովը»**¹⁵:

Փաստենք, որ **Ա. Ժանդրը, Ա. Գրիբոյեդովին համարելով Գաղտնի կազմակերպության անդամ, չի հիշատակում ո՛չ վայրը, որտեղ նա կարող էր ընդունված լինել, ո՛չ էլ այն մարդկանց, ովքեր նրան ընդունել էին: Միանշանակ հարկ է ընդունել, որ անձամբ Ա. Գրիբոյեդովից տեղեկացված մարդու համար դա դժվար չէր անել:** Մինչդեռ Ա. Ժանդրին Դ. Սմիռնովի տված հարցին, թե. «Հետաքրքիր է իմանալ դեկտեմբերի 14-ի խռովությանը Ա. Գրիբոյեդովի մասնակցության իրական, իսկական աստիճանը», Ա. Ժանդրը պատասխանել է. «Դե ի՞նչ աստիճան: Լրիվ»: Այսբանից հետո Ա. Գրիբոյեդովին Մ. Բեստուժև-Ռյումինի ցուցմունքով ձերբակալության հարցում տարակուսող **Ա. Ժանդրը չի բացատրել, թե ինչ նկատի ունի ասելով՝ «լրիվ»**¹⁶: Փաստորեն ստացվում է, որ **Ա. Ժանդրի տեղեկություններն այնքան էլ «ճշգրիտ» չեն:**

Հաջորդ անձը, ով իր հուշերում անդրադարձել է այս հարցին և

14 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 282:

15 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 465:

16 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 280:

հաստատական կարծիք է արտահայտել Գաղտնի կազմակերպության Ա. Գրիբոյեդովի անդամակցելուն՝ **դեկաբրիստ Գ. Զավալիշինն է:** Նա Ա. Գրիբոյեդովին ճանաչել է մինչև 1825թ. դեկտեմբերի 14-ի խռովությունը, բացի այդ՝ ձերբակալված ժամանակ Ա. Գրիբոյեդովի հետ պահվել է Գլխավոր շտաբի նույն սենյակում: Դ. Զավալիշինի «հաստատական» կարծիքի ապացույց են համարվել նրա հետևյալ խոսքերը. «...Փրկվեցին և ուրիշ անդամներ, նույնիսկ այնպիսիները, ովքեր ավելի ուժեղ էին խառնված, քան Գրիբոյեդովը»¹⁷: Այս խոսքերից Մ. Նեչկինան եզրակացնում է. «... Հավանաբար Զավալիշինի մոտ ինչ-որ տեղեկություններ կային այդ հարցի մասին, որոնք ամբողջությամբ նա չի բացահայտել իր հուշերում»¹⁸: Նախ՝ Դ. Զավալիշինի վկայության մասին: Ինչպես տեսնում ենք, **նա ուղղակիորեն չի պնդում**, թե Ա. Գրիբոյեդովը եղել է Գաղտնի կազմակերպության անդամ, այլ ընդամենը նշում է, որ **նա էլ է խառնված եղել գործին**, սակայն **չի նշում «նրա խառնված լինելը» աստիճանը:** Հետաքրքիր է նաև մեջբերման երկրորդ մասը, ինչից հասկանալի է դառնում, որ Դ. Զավալիշինի համոզմամբ եղել են շատերը, ովքեր Ա. Գրիբոյեդովից ավելի շատ են խառնված եղել գործին, բայց փրկվել են:

Եթե Ա. Գրիբոյեդովը եղել է Գաղտնի կազմակերպության անդամ, ապա, բուն խռովությանը մասնակցելու հանգամանքը հանած, դժվար է պատկերացնել, թե նա դրանից ավելի ինչպես և որքան պետք է խառնված լիներ գործին: Իսկ եթե այդ «ավելին» վերաբերում է դեկտեմբերի 14-ի խռովությանը մասնակցի լինելուն, ապա հայտնի է, որ զինված խռովության մասնակիցներից ոչ մեկին չի հաջողվել խուսափել պատժից: Ինչ վերաբերում է Դ. Զավալիշինի խոսքերից կատարված եզրակացությանը, նշենք, որ, **դատելով հետազոտողի «հավանաբար» բառից, համոզվածություն չի կարող լինել Գ. Զավալիշինի հայտնած հաստատական կարծիքի իսկության հարցում: Գ. Զավալիշինի «ինչ-որ» տեղեկություններ ունենալը և դրանք չհայտնելն անապացույց ենթադրություն է, քանի որ Գ. Զավալիշինն ինքն էլ իր հուշերում այդ մասին ո՛չ ուղղակի, ո՛չ էլ անուղղակի ձևով ոչինչ չի հայտնում:**

Անդրադառնանք այս հարցի վերաբերյալ դեկաբրիստների Հյուսիսային ընկերության անդամների տված ցուցմունքներին: Ա. Գրիբոյեդովի մասին առաջին ցուցմունքը 1825թ. դեկտեմբերի 23-ին տվել

17 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 95:

18 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 465:

է **Ս. Տրուբեցկոյը**: Յուցմունքում ասված է. «Ես միայն Ռիլենի բառերից գիտեմ, որ նա անդամ է ընդունել Գրիբոյեդովին, որը ծառայում էր գեներալ Երմոլովի մոտ: Նա ամռանը եղել էր Կիևում, բայց այնտեղ իրեն որպես անդամ չէր ներկայացրել: Ես դա իմացա այստեղ գալու ժամանակ»¹⁹: Վերլուծելով Ս. Տրուբեցկոյի այս խոսքերը՝ Մ. Նեչկինան եզրակացնում է. «Տրուբեցկոյի և Ռիլենի խոսակցությունը Ընկերության երկու շարքային անդամների պատահական գրույց չէր: Դա Ընկերության երկու ղեկավարների միջև կազմակերպության գործերի վիճակի մասին գործնական քննարկում էր»²⁰: Ըստ հետազոտողի՝ Ս. Տրուբեցկոյը երկար ժամանակ բացակայել էր քաղաքից, և Կ. Ռիլենը նրան ծանոթացրել էր կազմակերպությունում տեղի ունեցած վերջին նորությունների հետ, **ուստի ասելով, թե Ա. Գրիբոյեդովին ինքն է ընդունել Գաղտնի կազմակերպության շարքերը, Կ. Ռիլենը չէր կարող սխալվել կամ շփոթել**:

Վերոհիշյալ եզրակացությունը բավականին տրամաբանական է, սակայն հետագայում՝ **Կ. Ռիլենի և մյուս ղեկաբերիստների ցուցմունքները վերլուծելիս և Ս. Տրուբեցկոյի վերոհիշյալ ցուցմունքի հետ համեմատելիս, համոզվում ենք, որ չի կարելի այդ եզրակացությունը ևս ընդունել որպես ճշմարտություն**:

Ս. Տրուբեցկոյի տված ցուցմունքի հաջորդ օրը՝ 1825թ. դեկտեմբերի 24-ին, Ա. Գրիբոյեդովի վերաբերյալ հարցաքննվել է **Կ. Ռիլենը**: Այն հարցին, թե երբ և որտեղ է Կ. Ռիլենը որպես անդամ ընդունել Ա. Գրիբոյեդովին, նա պատասխանել է. «Գրիբոյեդովին ևս Ընկերության մեջ չեմ ընդունել: Ես փորձեցի նրան և գտա, որ նա չի հավատում կառավարությունը վերափոխելու հնարավորությանը, ուստի հանգիստ թողեցի նրան: Եթե նա Ընկերության անդամ է, ապա նրան կարող էին ընդունած լինել **իշխան Օդոնսկին**, որի հետ նա ապրում էր, կամ էլ ինչ-որ մեկը հարավում, երբ նա այնտեղ էր»²¹: Հետագայում՝ 1826թ. փետրվարի 14-ին, Կ. Ռիլենն Ա. Գրիբոյեդովի վերաբերյալ հարցաքննվել է ևս մեկ անգամ և ասել հետևյալը. «Գրիբոյեդովի հետ ևս մի քանի ընդհանուր խոսակցություններ եմ ունեցել Ռուսաստանի վիճակի վերաբերյալ և ակնարկել եմ Ընկերության գոյության մասին, որի նպատակն էր փոխել Ռուսաստանում կառավարության ձևը, բայց ինչպես ինքն էր կարծում, Ռուսաստանը դեռ պատրաստ չէր դրան, և, բացի այդ, նա դժկամությամբ էր քննարկման մեջ մտնում: Ոչ մի

հանձնարարություն չի տրվել նրան, բայց նայնպես իմ ակնարկներից նա կարող էր իմանալ Ընկերության գոյության մասին: Սակայն իմ կողմից ընդունված չլինելով ամբողջովին դրամայի վստահության իրավունքը չունեք»²²:

Վերլուծելով Կ. Ռիլենի 1825թ. դեկտեմբերի 24-ի և 1826թ. փետրվարի 14-ի տված ցուցմունքները՝ **առաջին և երկրորդ մասերի մեջ հակասություն է հայտնաբերվել**: Բանն այն է, որ Կ. Ռիլենն Ա. Գրիբոյեդովին չէր ընդունել Կազմակերպության շարքերը, որովհետև վերջինս չէր հավատում կառավարության փոփոխման ձևին, մինևույն ժամանակ նշել էր, որ Ա. Գրիբոյեդովին կարող էին ընդունել ուրիշներն այլ վայրում: Այս հակասության առումով Մ. Նեչկինան գրում է. «Բայց մի՞թե այդ վայրերում կառավարությունը վերափոխելու հնարավորության մասին նրա կարծիքը փոխվել էր»: Մրանից հետազոտողը եզրակացնում է. «Ռիլենը բացահայտորեն ուզում է՝ որպես այս գործի վկա իրեն հեռացնել. դրանում է նրա հակասական ցուցմունքի իմաստը: Դրա համար էլ միայն Ռիլենի վկայություններով չի կարելի եզրահանգել, որ Գրիբոյեդովը Գաղտնի կազմակերպության անդամ չէր»²³:

Կ. Ռիլենի 1826թ. փետրվարի 14-ի ցուցմունքի վերաբերյալ ակադեմիկոսը եզրակացնում է, որ **նախ**՝ այն զգալիորեն տարբերվում է առաջինից, որովհետև **Ա. Գրիբոյեդովը Կ. Ռիլենի կողմից արդեն տեղեկացված է եղել Գաղտնի կազմակերպության գոյության մասին և երկրորդ՝ քերականական վերլուծության ենթարկելով ցուցմունքի «... Իմ կողմից ընդունված չլինելով ամբողջովին» բառերից հետո ստորակետի բացակայությունը՝ պնդում է հետևյալը**. «Ստացվում է, որ Գրիբոյեդովը ընդունվել է, բայց ինչ-որ անկատար, դեռ չավարտված ձևով»²⁴:

Անդրադառնանք **Ա.Բ. Օդոնսկու** ցուցմունքներին, քանի որ Ա. Օդոնսկին՝ որպես այն անձը, ով կարող էր Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունած լինել, հիշատակվում է Կ. Ռիլենի ցուցմունքում: Ա. Օդոնսկին ևս հարցաքննվել է 1826թ. փետրվարի 14-ին, և Հետաքննող կոմիտեում հարցը ձևակերպվել է այսպես. «Կոլեգիական ասեստոր Գրիբոյեդովը երբ և ու՞մ կողմից է ընդունվել Գաղտնի ընկերության մեջ: Անդամներից ու՞մ հետ էր հատուկ հարաբերությունների մեջ: Նրան ի՞նչ էր հայտնի Ընկերության մտադրությունների և գործողությունների վերաբերյալ, և այդ մասին ի՞նչ տեսակի դատողություններ էր ունեցել նրա հետ»: Ա.

19 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №24, 124, 125, էջ 466:

20 Նույն տեղում՝ էջ 466:

21 Նույն տեղում՝ էջ 466-467:

154

22 А.С. Грибоедов в воспоминаниях современников, №21, 124, էջ 273-274:

23 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №24, 124, էջ 466-467:

24 Նույն տեղում՝ էջ 469:

Օդոնսկին պատասխանել է այսպես. «Քանի որ ես քիչ գիտեմ պարոն Գրիբոյեդովին, ապա նրա մասին պատիվ ունեմ հայտնելու միանգամայն դրականը. նա ոչ մի ընկերության չի պատկանում»²⁵:

Ինչպես տեսնում ենք, Ա. Օդոնսկին ևս բացառում է Ա. Գրիբոյեդովի անդամակցությունն Ընկերությանը, սակայն, մինևույն ժամանակ խուսափում է պատասխանել երկրորդ և երրորդ հարցերին: Համամիտ լինելով այն տեսակետին, ըստ որի՝ Ա. Օդոնսկին, լինելով Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկերը և ազգականը, կարող էր և ցանկություն ուներ հեռու պահելու նրան անախորժություններից, հավելելնք, սակայն, որ **Հետաքրքրող կոմիտեին հետաքրքրում էր հանդիպելու առաջին հարցը, իսկ երկրորդ և երրորդ հարցերը նրանց համար այդքան էլ կարևոր չէին. հակառակ դեպքում այդ և հաջորդ օրերի հարցաքննությունների ժամանակ հարցերը կկրկնվեին: Ուսումնասիրողների կողմից այս դիտարկումն ուշադրության չի արժանացել կամ շրջանցվել է:**

Ա. Օդոնսկու ժխտական ցուցմունքում կա մի կարևոր հանգամանք ևս, ինչի վրա յուրովի, բայց այս դեպքում ուշադրություն դարձվել է. **Ա. Օդոնսկին այդ ժամանակ ընդհանրապես ժխտել է նաև Գաղտնի կազմակերպությանն իր անդամակցության ու հարաբերվելու փաստը և դրան անդամակցելու իրողությունը խոստովանել է միայն 1826թ. ապրիլին՝ Ա. Բեստուժևի հետ առերեսման ժամանակ:** Ելնելով դրանից՝ Մ. Նեչկինան եզրակացնում է. «...Չէ՞ որ իմանալով, որ ուրիշ մեկը Գաղտնի կազմակերպության անդամ է, նշանակում է իմանալ Գաղտնի ընկերության մասին: Դրա համար էլ Օդոնսկու երկու ցուցմունքներն էլ սերտորեն կապված են մեկը մյուսի հետ և բխում են մեկը մյուսից... Դա ավելի է ուժեղացնում կասկածը նրա պատասխանի ճշգրտության հանդեպ... Այսպիսով, Օդոնսկու կարծիքի վրա չի կարելի հիմնավորել Գրիբոյեդովի անդամակցության մասին բացասական կարծիքը»:

Անդրադառնանք **Ալեքսանդր Բեստուժև-Մարլինսկու** ցուցմունքին: Նա ասել է. «Ես նրան (Ա. Գրիբոյեդովին – Վ.Ս.) անդամ չեմ ընդունել: Նախ՝ նա ինձանից տարիքով է և խելացի, երկրորդ՝ ափսոսում էի վտանգի ենթարկել այդպիսի տաղանդը, ինչում Ռիլենն էլ էր ինձ հետ համաձայն... Ընդ որում՝ 1825թ. ձմռանը, երբ ես ծանոթ էի նրա հետ, մեր միջև ոչ մի դրական բան չի եղել: Նա մեկնել է Մոսկվայում իմ եղած ժամանակ՝ մայիսի սկզբին, և նրա մասին խոսելիս Ռիլենը ոչ մի հանձնարարության մասին չի հիշատակել»:

Ինչպես տեսնում ենք, Ա. Բեստուժև-Մարլինսկին էլ է հերքել Գաղտնի կազմակերպությանն Ա. Գրիբոյեդովի անդամակցության փաստը: Սակայն այստեղ ևս փորձ է արվում այդ վկայությանը հակադրվելու «փաստարկներ» ներկայացնել:

Տվյալ դեպքում որպես այդպիսիք Մ. Նեչկինան վկայակոչում է Ա. Գրիբոյեդովի մասին Ալ. Բեստուժև-Մարլինսկու հուշերը և **նշում, որ նրա մոտ վարագուրված են Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքներին ու գործունեությանը վերաբերող մասերը, և որ Ա. Գրիբոյեդովի մասին պատմությունները ընդհատվում են՝ համապատասխան տեղերում դրված բազմակետերով:** Ասվածից Մ. Նեչկինան եզրակացնում է. «...Ուրեմն Բեստուժևը, երբ գրում էր հուշերը, ինչ-որ բանի մասին հնարավոր չի համարել խոսել: Բայց ինչու՞ չհրապարակել Գրիբոյեդովի՝ Գաղտնի կազմակերպության անդամ չլինելու փաստը: Այնհայտ է, որ խոսքն ինչ-որ ուրիշ, հակառակ փաստի մասին էր»²⁶: Այնուհետև, զուգահեռներ անցկացնելով Կ. Ռիլենի և Ա. Բեստուժև-Մարլինսկու ցուցմունքների միջև, Կ. Ռիլենի կողմից Ա. Գրիբոյեդովի անդամակցության փաստը հերքելու հանգամանքը նա բացատրում է նաև Ալ. Բեստուժև-Մարլինսկու այն վկայությամբ, թե. «Ափսոսում էի վտանգի ենթարկել այդպիսի տաղանդը, ինչում Ռիլենն էլ էր ինձ հետ համաձայն»: **Մեր կարծիքով այս տողերն ապացուցում են ոչ թե այն, որ Կ. Ռիլենը ցուցմունք տալիս ստել է Ա. Գրիբոյեդովին փրկելու համար, այլ այն, որ Ա. Բեստուժև-Մարլինսկին ու Կ. Ռիլենը, քննարկելով Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելու հարցը և հաշվի առնելով կառավարության փոփոխության հարցերի շուրջ նրա դժկամությունն ու նման խոսակցություններից խույս տալը, եկել են բացասական եզրակացության, որպեսզի իզուր վտանգի չենթարկեն իրենց տաղանդավոր ընկերոջը: Ավելացնենք նաև, որ Ա. Բեստուժև-Մարլինսկին ցուցմունք տալիս՝ չգիտեր Կ. Ռիլենի ցուցմունքի մասին, և այսպիսի համընկնումը նշանակում է, որ երկուսն էլ Ա. Գրիբոյեդովի անդամակցության մասին ցուցմունք տալիս անկեղծ են եղել:**

«Ստորակետերից ու բազմակետերից կառչելով և համեմատելով Կ. Ռիլենի ու Ա. Բեստուժև-Մարլինսկու ցուցմունքները՝ հետազոտող Մ. Նեչկինան դրանցում ևս նշում է ներքին հակասություն. Կ. Ռիլենն ասում էր, որ Ա. Գրիբոյեդովը «դժկամությամբ էր քննարկման մեջ մտնում

25 А.С. Грибоедов в воспоминаниях современников, ևշվ. աշխ., էջ 273: 156

26 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 469-470:

այս առարկայի շուրջ», իսկ Ալ. Բեստուժն-Մարլինսկին, ընդհակառակը, նշում է, որ. «Գրիբոյեդովի՝ որպես ազատ մտածող մարդու հետ, ես հաճախ երագում էի Ռուսաստանի վերակառուցման մասին (նա չի նշում, թե կոնկրետ ինչպիսի վերակառուցման – Վ.Ս.)»²⁷: Այս տողերից Մ. Նեչկինան հանգում է հետևյալին. «Ճշմարտությունը Բեստուժնի կողմն է. չէ՞ որ նա անհիմն կերպով չէր ամբաստանի իր ընկերոջը»²⁸: Անհամապատասխանություն է դիտվել նաև Ա. Բեստուժն-Մարլինսկու ցուցմունքում, որտեղ ասված է. «1825թ. ձմռանը, երբ ես ծանոթ էի նրա հետ, մեր միջև ոչ մի դրական բան չի եղել»²⁹:

Ուսումնասիրողի կարծիքով Ա. Բեստուժն-Մարլինսկին հենց այդ ժամանակ է տվել իր համաձայնությունը ցարի սպանության վերաբերյալ, որից հետո Ա. Յակուբովիչը հանդես է եկել ցարին սպանելու ծրագրով, իսկ Կ. Ռիլենը ծրագրել էր ցարին սպանել 1825թ. ամռանը՝ հուլիսի 1-ի Պետերբուրգի տոնին: Ա. Բեստուժն-Մարլինսկու ցուցմունքի վերաբերյալ միաժամանակ նշվում է, թե. «Նոր անդամ կարելի էր ընդունել մասնավորապես այն պատճառով, որ աշխատանքներն արգելափակվել էին, և պետք էր դրանք վերակենդանացնել»:

Փաստենք, որ Ա. Բեստուժն-Մարլինսկին իր հուշերում չի անդրադառնում Գաղտնի կազմակերպությանն Ա. Գրիբոյեդովի անդամակցության հարցին և հետաքննության ժամանակ տված իր ցուցմունքները չի հաստատել ոչ թե այն պատճառով, որ չի ցանկացել հրապարակել իրեն հայտնի ինչ-ինչ տեղեկություններ, այլ այն պատճառով, որ այս հարցի շուրջ նա ոչ մի նոր բան չի ունեցել ավելացնելու: Եթե Ա. Բեստուժն-Մարլինսկին խոստովաներ, որ Ա. Գրիբոյեդովը եղել է Գաղտնի կազմակերպության անդամ, իսկ հետաքննության ժամանակ ինքը ստել էր ընկերոջը փրկելու համար, ապա դա շահեկան կլիներ և՛ իր, և՛ Ա. Գրիբոյեդովի համար: Երկուսի հեղինակությունն այդ ժամանակվա ռուս մտավորականության աչքում էլ ավելի կբարձրանար. Բեստուժնինը, որ չէր մատնել ընկերոջը, իսկ Գրիբոյեդովինը, որ, ժամանակի ճանաչված գրող և առաջադեմ մտավորական լինելուց բացի, եղել էր նաև առաջադեմ հայացքների համար պայքարող առաջամարտիկ, իսկ գրաքննությունը հետագայում չէր կարող արգելք հանդիսանալ դրան: Գաղտնի կազմակերպության գործերի

ընթացքի վերաբերյալ 1825թ. ձմռանն Ա. Բեստուժնի տված ցուցմունքում նշած անհամապատասխանության և կատարած վերապահման մեջ, թե. «Նոր անդամ կարելի էր ընդունել մասնավորապես այն պատճառով, որ աշխատանքները արգելափակվել էին, և պետք էր դրանք վերակենդանացնել»³⁰, ուշադրության չարժանացած հակասություն կա. եթե 1825թ. ձմռանը Գաղտնի ընկերության գործերը բոլորն ընթացք ունեին, և աշխատանքների արգելակման մասին խոսք անգամ լինել չէր կարող, ապա էլ ի՞նչ կարիք կար դրանք վերակենդանացնելու համար և միայն այդ պատճառով, նոր անդամ ընդունել իրենց շարքերը:

Անդրադառնանք Հյուսիսային ընկերության այն անդամների ցուցմունքներին, ովքեր Գաղտնի կազմակերպությանն Ա. Գրիբոյեդովի անդամակցության հարցին տվել են «հաստատական պատասխան»: Դրանցից արժեքավոր են 1826թ. հունվարի 21-ին **Ե.Պ. Օբոլենսկու** տված ցուցմունքները: Նախքան Կ. Ռիլենի, Ա. Բեստուժնի և Մ. Տրուբեցկոյի ցուցմունքներ տալը, Ե. Օբոլենսկին, որը, լինելով «աշխույժ, տպավորիչ ու ջերմ մարդ, ճնշվելով բանտային միջավայրից և անհանգստանալով ջերմորեն սիրելի 70-ամյա ծեր հոր համար, Նիկոլայ I-ի կողմից ենթարկվել է հոգեբանական խոր ներգործության»³¹: Ե. Օբոլենսկին նախ խոստովանել և հաղորդություն է ստացել քահանայից, այնուհետև կայսեր թույլտրվությամբ նրան մի նամակ են հանձնել հորից, որից ցնցված՝ **նա նամակ է գրել Նիկոլայ I-ին՝ դրան կցելով նաև իրեն հայտնի բոլոր դեկաբրիստների անունների ցուցակը:** Ե. Օբոլենսկին ցուցակը բաժանել է երեք մասի. 1) Ընկերության կազմում եղած, բայց մինչև դրա առաջին քայքայումը դուրս մնացած անդամներ, 2) Ընկերության ներկա անդամներ, 3) Հարավային ընկերության իրեն հայտնի անդամներ: Ա. Գրիբոյեդովի անունը նա ներկայացրել է երրորդ բաժնում, ում մասին գրել է. «Գեներալ Երմոլովի մոտ ծառայող Գրիբոյեդովն ընդունվել է դեկտեմբերի 14-ից երկու կամ երեք ամիս առաջ և շուտով հեռացել: Այսպիսով, նրա կողմից ընկերությունում գործողություններ չեն կատարվել»³²:

Հետագայում՝ 1826թ. փետրվարի 25-ին, **նա տվել է ավելի «ճշգրիտ»** ցուցմունքներ, որոնցում, փոխելով Ա. Գրիբոյեդովին անդամ ընդունելու ժամկետը և նշելով, թե ումից է դա իմացել, ասել է. «Գրիբոյեդովին որպես ընկերության անդամ ընդունելու մասին ես լսել եմ նրան ընդունած Ռիլենից

27 А.С. Грибоедов в воспоминаниях современников, նշվ. աշխ., էջ 275:

28 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 470:

29 А.С. Грибоедов в воспоминаниях современников, նշվ. աշխ., էջ 275:

30 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 471:

31 Նույն տեղում էջ 471:

32 А.С. Грибоедов в воспоминаниях современников, նշվ. աշխ., էջ 285:

և նրան ընդունելու մասին ոչ մի այլ մանրամասներ չեն լսել ու տեղեկացնել չեն կարող, թե նրան ընդունելու ժամանակ ով է վկա եղել: Իսկ նրա ընդունման ժամկետի մասին, իրոք, ճշգրիտը ասել չեն կարող, բայց, որքան հիշում եմ, նրա այստեղից մեկնելուց մեկ կամ երկու ամիս առաջ էր: Ահա այն ամբողջը, ինչը կարող եմ ասել Գրիբոյեդովին որպես անդամ ընդունելու մասին՝ ի հաստատումն իմ նախկին ցուցմունքի: Ի դեպ, նրա ընդունման մանրամասներն ինձ հայտնի չեն, ինքս Գրիբոյեդովին ընդունելուց հետո, որքան դա հիշում եմ, անձամբ նրան չեմ հանդիպել»³³:

Հարկ է նշել, որ Ե. Օբոլենսկու հայտնած ցուցակում տեղ գտած 61 մարդուց միայն երկուսին՝ Ա. Գրիբոյեդովին և լեյբ-գվարդիական Իզմայիլովյան գնդի պորուչիկ Լվովին են արդարացրել (վերջինիս օգտին ցուցմունք էր տվել իր ընկեր, մատնիչ Յակով Ա-ոստովցեր): Այս հանգամանքը Մ. Նեչկինային թույլ է տվել եզրակացնել, որ ցուցակը բարձր ճշգրտություն, հետևաբար՝ հավաստիություն ունի: Դրանով հանդերձ՝ Ե. Օբոլենսկու ցուցմունքներում էլ են որոշ «թերություններ» հայտնաբերվել. «Ինչու է նա Գրիբոյեդովին տեղավորել Հարավային ընկերության ցուցակում, եթե դրա և Հյուսիսային ընկերության միջև միջնորդն Օբոլենսկին էր», ինչն էլ թույլ է տվել պնդել, որ եթե Ե. Օբոլենսկին իր խոստովանություններում ինչ-որ բան թաքցրել է, ուրեմն նրան հայտնի է եղել Ա. Գրիբոյեդովի՝ Կին այցելելու մասին: Այնուհետև Մ. Նեչկինան հարց է բարձրացնում. «Նա (Ե. Օբոլենսկին – Վ.Ս.) ինչու՞ է հետո Հարավային միությունը փոխել Հյուսիսայինով: Ցուցմունքներում դրա մասին նա ոչ մի խոսք չի ասել»³⁴:

Հարկ է անդրադառնալ ևս երկու անձանց վկայություններին, որոնք Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելու հարցում ևս տվել են «հաստատական» ցուցմունք: Առաջինն Ա.Ֆ. Բրիգենն է, որը վկայում է. «Ինչպես հայտնի է իմ ցուցմունքներից, Ընկերության վերջին խորհրդակցությունը, որին ես ներկա եմ եղել, կայացել է 1823թ. Պուշկինի մոտ: Դրանից հետո Ընկերության ոչ մի խորհրդակցության ես չեմ մասնակցել: Ընկերությունը, որքան ինձ հայտնի է, լրիվ անգործության մեջ էր որոշ անդամների՝ Տուրգենևի, Միտկովի, իշխան Տրուբեցկոյի, Պուշկինի և այլոց մեկնելու պատճառով: 1825թ. հունիսի վերջին՝ իմ մեկնելուց առաջ, ամբողջ Ընկերությունը կազմված էր Նիկիտա Մուրավյովից, Ռիլենից,

33 А.С. Грибоедов в воспоминаниях современников, ևշվ. աշխ., էջ 285:

34 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 472-473:

Բեստուժևից, իշխան Օդոնսկուց, իշխան Օբոլենսկուց, Սոմովից և, կարծես թե, Գրիբոյեդովից»³⁵:

Չնայած այն հանգամանքներին, որ՝ ա) Ա. Բրիգենը չի նշում, թե ումից և ինչ ճանապարհով է իմացել Ա. Գրիբոյեդովի անդամակցության մասին, բ) Ա. Գրիբոյեդովի մասով Ա. Բրիգենի ցուցմունքները բացարձակորեն չեն հետաքրքրել Հետաքննող կոմիտեին (որը նույնիսկ հետագայում չի փորձել վերջինից ճշտել Ա. Գրիբոյեդովի անդամակցության մասին տված ցուցմունքները), գ) այն, որ Ա. Բրիգենը, լինելով վաղ շրջանի ղեկաբրիստական կազմակերպության անդամ, չի մտել Հյուսիսային ընկերության մեջ, այնուամենայնիվ անհասկանալի ձևով խիստ կարևորվել են վերջինիս ցուցմունքները:

Հաջորդ անձը, ով քննարկվող հարցի վերաբերյալ ևս տվել է «հաստատական» ցուցմունք, Ն.Ն. Օրժիցկին է: 1826թ. հունվարի 10-ին տված իր ցուցմունքում նա մասնավորապես նշում է. «Իրենց իսկ խոսքերից ինձ հայտնի անդամներ են եղել Ալեքսանդր Բեստուժևը, Ռիլենը, իշխան Օդոնսկին և Օբոլենսկին, հավանաբար, չգիտեմ, ճշգրիտը չգիտեմ, բայց ենթադրում եմ, որ (բացի նրանցից, ովքեր իրենց գործողություններով պարզվեցին դեկտեմբերի 14-ին և հայտնի դարձան գրեթե ողջ քաղաքին) համանդամներ են եղել Բեստուժև եղբայրները, Սոմովը, Գրիբոյեդովը, Կյուխելբեկերը, Պուշկինը, Կախովսկին, Կոռնիլովիչը, Մալյուտինը, Չավայիշինը, երկու եղբայր Մուխանովները, Բուլգարինը, Գրեչը և Սաբուրովը (որը կոմս Վորոնցովի մոտ է ծառայում): Վերջին երկուսին ևս տեսել եմ երկու անգամից ոչ ավելի, իսկ Գելվիզին տեսել եմ միայն Բեստուժևի մոտ»³⁶: Ակնհայտ է, որ Ա. Գրիբոյեդովի մասով Հետաքննող կոմիտեն Ն. Օրժիցկու ցուցմունքի հանդեպ ևս հետաքրքրություն չի ցուցաբերել, որովհետև այն համարել է անհավանական, ինչպես Ֆ. Բուլգարինի և Ն. Գրեչի ցուցմունքների դեպքերում:

Անդրադառնանք ղեկաբրիստների Հյուսիսային ընկերության անդամների ցուցմունքների համեմատության շուրջ արված մեկնաբանություններին: Առաջին եզրակացությունը վերաբերում է Ս. Տրուբեցկոյի և Ե. Օբոլենսկու ցուցմունքներին: Մ. Նեչկինան նշում է. «Ս.Պ. Տրուբեցկոյի և Ե.Պ. Օբոլենսկու տված ցուցմունքները տանում են դեպի Ռիլենը, և կասկած չկա, որ Գրիբոյեդովի մասին այս անդամների հետ Ռիլենի խոսակ-

35 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 471:

36 Նույն տեղում՝ էջ 473:

ցություններն իսկապես տեղի են ունեցել, հակառակ դեպքում անհնար է բացատրել ցուցմունքների համընկնումը»³⁷:

Մենք ևս համոզված ենք, որ Ս. Տրուբեցկոյի, Ե. Օբոլենսկու և Կ. Ռիլենի միջև Ա. Գրիբոյեդովի անդամակցության շուրջ խոսակցություն եղել է, **սակայն նրանք դրա մասին ոչ մի մանրամասնություն չեն հաղորդում**: Անդրադառնալով այն ձևին, թե ինչպես է Կ. Ռիլենը Ս. Տրուբեցկոյին և Ե. Օբոլենսկուն տեղեկացրել Ա. Գրիբոյեդովին որպես անդամ ընդունելու մասին՝ հետազոտողը հիշատակում է Ս. Տրուբեցկոյի այն արտահայտությունը, ըստ որի՝ Կ. Ռիլենը նրան ասել է, թե՝ «Գրիբոյեդովը մերն է»: Կառչելով այս արտահայտությունից՝ նա համեմատություններ է անցկացնում տարբեր ղեկավարիստների համանման արտահայտությունների միջև և եզրակացնում. «Համադրելով այս խոսքերը մի շարք այլ ցուցմունքների հետ՝ համոզվում ենք, որ «նա մերն է» արտահայտությունը ղեկավարիստների մոտ խոսակցությունների պատահական արտահայտություն չէր, այլ անդամ հանդիսանալու բանաձև (համարյա՝ նշանաբան – Վ.Ս.)»: **Ապացուցված համարելով Գաղտնի կազմակերպությանն անդամակցելու շուրջ Ա. Գրիբոյեդովին արված առաջարկի փաստը՝ հետազոտողը նշում է.** «Կարելի է ենթադրել, որ Գրիբոյեդովի մասին սկզբում նախնական քննարկում են ունեցել դումայում, իսկ հետո, արդեն, առաջարկ են արել նրան»³⁸: Այսուհանդերձ, Ա. Գրիբոյեդովի թեկնածության քննարկման մասին, **բացի վերոհիշյալ ենթադրությունից, ոչ մի մանրամասնություն չի վկայակոչվում**:

Շարունակելով Ս. Տրուբեցկոյի և Ե. Օբոլենսկու ցուցմունքների համեմատությունը, և դրանց ավելացնելով **Ա. Բրիգենի** ցուցմունքը՝ Մ. Նեչկինան եզրակացնում է. «Այսպիսով, ստացվում է 1825թ. զարնանային, ամառային, աշնանային թվագրությունների շղթա, երբ տարբեր ղեկավարիստներ հաստատ ենթադրում էին (բայց չէին պնդում – Վ.Ս.), որ Գրիբոյեդովը Գաղտնի կազմակերպության անդամ է»³⁹:

Չենք կարծում, որ ակադեմիկոսը պնդման հաստատ լինելը ենթադրությունից չէր կարողանում տարանջատել: Ինչևէ, բայց, ինչպես նշեցինք վերևում, այդ, այսպես կոչված, «հաստատ ենթադրություններն» ամեննին էլ հաստատ չեն. **Ս. Տրուբեցկոյը նշում է, որ Ա. Գրիբոյեդովը Կիևում եղած ժամանակ «իրեն որպես անդամ չէր ներկայացնում», Ա.**

Բրիգենը, թվարկելով 1825թ. Գաղտնի կազմակերպության անդամների անունները, Ա. Գրիբոյեդովի անունը տալուց առաջ նրա անդամակցության մասին խոսելիս օգտագործում է «կարծես» բառը, իսկ Ե. Օբոլենսկու ցուցմունքները լի են «ճշգրիտը չգիտեմ», «ընդունման մանրամասները ինձ հայտնի չեն» արտահայտություններով:

Դատելով Ե. Օբոլենսկու ցուցմունքներից՝ Ա. Գրիբոյեդովի անդամ դառնալու մասին նա տեղեկացել է մոտավորապես 1825թ. ապրիլի վերջին: Ա. Գրիբոյեդովը Պետերբուրգից մեկնել է նույն թվականի «մայիսի վերջին»: **Այսբանից հետո Ե. Օբոլենսկին, մտերմիկ հարաբերությունների մեջ լինելով Ա. Գրիբոյեդովի հետ, մեկ ամսվա ընթացքում չի հանդիպել ու չի փորձել «շնորհավորել» ընկերոջն ու անձամբ նրանից իմանալ նրա անդամակցության մանրամասները: Անհասկանալի կերպով սա ևս շրջանցվել է:**

Ուշագրավ է Կ. Ռիլենի ցուցմունքների հետ կապված ընդհանրացնող եզրակացությունը: Մեկ անգամ ևս նշելով, որ Կ. Ռիլենը միանշանակ չի ժխտում Ա. Գրիբոյեդովի անդամակցության փաստը՝ **Մ. Նեչկինան հնարավոր է համարում, որ դա կարող էին անել ուրիշները:** Կ. Ռիլենի ցուցմունքները, թե. «Բայցևայնպես իմ ակնարկներից նա կարող էր իմանալ ընկերության գոյության մասին, բայց իմ կողմից ընդունված չլինելով ամբողջովին դումայի վստահության իրավունքը չուներ», նա համարում է «թերի և շատ յուրօրինակ» ու եզրակացնում. «Այլ կերպ ասած՝ Գրիբոյեդովն ընդունվել է ինչ-որ անկատար, անավարտ ձևով»⁴⁰ (Ռիլենի վերոհիշյալ տողերին դեռ կանդրադառնանք – Վ.Ս.): Այդ «անկատար, անավարտ» ձևով ընդունման պատճառ է համարվել Ա. Բեստուժև-Մարլինսկու արած վկայությունը, թե Կ. Ռիլենն էլ էր նրա հետ համաձայն, որ «այդպիսի տաղանդը վտանգի չենթարկեն»: **Գրանից ելնելով էլ՝ Ա. Գրիբոյեդովից իբր «գրություն» չի վերցվել, ինչն արվում էր Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելիս, և նրա հանդեպ կիրառվել է «Նա մերն է» հատուկ բանաձևը:**

Անդրադառնանք Ա. Գրիբոյեդովին անդամ ընդունելու շուրջ արված «թերի և շատ յուրօրինակ» արտահայտությանը: Նախ՝ **ինչ է նշանակում կազմակերպության անդամ ընդունել թերի (կիսատ) ձևով: Մարդը կամ կազմակերպության անդամ է, կամ էլ ոչ:** Այս առումով հետաքրքիր են Գաղտնի կազմակերպության փաստացի անդամ

37 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, 124, 125, էջ 473:

38 Նույն տեղում՝ էջ 474:

39 Նույն տեղում՝ էջ 475:

չհանդիսացող, բայց դեկաբրիստական շարժմանը ակտիվորեն մասնակցած Ա. Յակուբովիչի, Օռլովի, Եչեպին-Ռոստովսկու մասին հիշատակությունները: **Եթե նույնիսկ նշված անձանց չէին անդամագրել Գաղտնի կազմակերպությանը, ապա ինչու՞ պետք է անդամագրելին պատսիվ և դեկաբրիստների կողմից կառավարությունն ու պետական կարգերը փոփոխելու գաղափարներին չհավատացող և քամահրանքով նրանց «հիմարներ» համարող Ա. Գրիբոյեդովին:**

Փորձենք անդրադառնալ Ա. Գրիբոյեդովին վերաբերող **Հարավային ընկերության անդամ դեկաբրիստների ցուցմունքների շուրջ կատարված մեկնաբանություններին:** Նախապես արժե նշել, որ համակարծիք ենք այն հետազոտողների տեսակետներին, ըստ որոնց Ա. Գրիբոյեդովը Կին է ժամանել ոչ թե 1825թ. մայիսի վերջին, այլ հունիսի սկզբներին: Դրա ապացույցը 1825թ. հունիսի 4-ին Ստ. Բեգիչևիին ուղղված Ա. Գրիբոյեդովի նամակն է, որում ասված է. «Ընկեր և եղբայր, թեզ Կինը նկարագրելու կարիք չկա, քանի որ դու այստեղ եղել ես: Մյուսներին Պետերբուրգ եմ ուղարկել իմ՝ այստեղ գալու առաջին տպավորությունները: Քեզ տեղեկացնում եմ, որ ես այստեղ եմ և մի քանի օրից կալանամ ավելի հարավ»⁴¹:

Ինչ վերաբերում է մայիսի վերջին Ա. Գրիբոյեդովի՝ Կին հասնելու տեսակետին, ապա տեղին է հիշատակել 1825թ. մայիսի 18-ին Ա. Գրիբոյեդովի՝ դարձյալ Ստ. Բեգիչևիին հղած նամակը, որից պարզ է դառնում, որ **Ստոլիպինի (ում հետ նա պետք է մեկներ Պետերբուրգից) մահվան պատճառով ինքը ստիպված է եղել մի քանի օր հետաձգել իր մեկնումը**⁴²: Ըստ Ս. Նեչկինայի կատարած հաշվարկի՝ «Եթե նամակը գրելուց հետո մեկնելու ձգձգվելուն հատկացնենք 2-3 օր (° – Վ.Ս.), 2 օր՝ ճանապարհի նախապատրաստությանը, 3-4 օր՝ Պետերբուրգից Մոսկվա մեկնելուն (ամառային տեղաշարժերը ձմեռայինից դանդաղ են), գոնե 2-3 օր՝ Մոսկվայում մնալուն (որտեղ հույս ուներ Արևելք մեկնելուց առաջ տեսակցել հարազատներին), ապա գումարում մենք կստանանք 12-14 օր և գրեթե անփոփոխ կզանք հունիսի առաջին օրերին»⁴³:

Քննարկելով Ա. Գրիբոյեդովի կիևյան ուղևորությունը՝ հետազոտողը բերում է մի շարք օրինակներ, **թե ինչպիսի աշխույժ քննարկումներ**

էին լինում Հյուսիսային և Հարավային ընկերությունների միջև, որի համար Պետերբուրգից Կին էին գործուղվում տարբեր մարդիկ, նույնիսկ այնպիսիները, ովքեր այդ գաղտնի կազմակերպությունների անդամներ չէին: Ա. Բրիգենի օրինակով Ս. Նեչկինան նշում է. «Ձևակառույցն Ընկերության անդամ չհանդիսացող դեկաբրիստ Ա.Ֆ. Բրիգենը Ռիլենի կողմից ուղարկվել էր Կին՝ Տրուբեցկոյի մոտ...»⁴⁴: Դրանից էլ նա եզրակացնում է. «Հաշվի առնելով հենց նոր ողջ ասվածը՝ կարելի է ենթադրել, որ Կիևում դեկաբրիստների հետ Գրիբոյեդովի հանդիպումը սովորական պատահականություն չէր»: Սրան ևս դեռ կանդրադառնանք:

Ըստ ուսումնասիրողների՝ Գրիբոյեդովի հետաքննչական գործում կիևյան հանդիպումների մասին նշվում է երկու վարկած. **մեկը պատկանում է Գրիբոյեդովին, քանի որ հասկանալի պատճառներով դեկաբրիստների հետ հանդիպումները հենց ինքն է համարում զուտ պատահական, մյուսն այն է, որ դեկաբրիստներից ոմանք այլ բացատրություն են տալիս՝ մատնանշելով, որ խոսքը Գրիբոյեդովին ընկերության անդամ դարձնելու մասին է:** Նշենք, որ երկու վարկածներն էլ խիստ կասկածելի են: Փորձենք քննարկել երկրորդ վարկածը, և որպեսզի ավելի հասկանալի դառնա մեր ասելիքը, սկզբում վկայակոչենք **Հարավային ընկերության այն անդամների ցուցմունքները**, որոնք կարևոր են տվյալ հարցը քննարկելիս:

Ս. Տրուբեցկոյի ցուցմունքներից հիշեցնենք միայն այն հատվածը, որը վերաբերում է Ա. Գրիբոյեդովի կիևյան հանդիպումներին. «Նա (Գրիբոյեդովը – Վ.Ս.) ամռանը եղել էր Կիևում, բայց այնտեղ իրեն որպես անդամ չէր ներկայացնում: Ես դա իմացա այստեղ գալու ժամանակ»:

Մ.Պ. Բեստուժև-Ռյումինին 1826թ. հունվարի 27-ին Հետաքննող կոմիտեում հարցրել են. «Ինչու՞մ էր այն հույժ անհրաժեշտ կարիքը, որի համար Սերգեյ Մուրավյովին Դուր խնդրում էիք Ձեզ մոտ լինել գոնե մի քանի ժամով, այն դեպքում, երբ Ձեզ մոտ էր Արտամոն Մուրավյովը ոմն Ա.Ս. Գրիբոյեդովի հետ: Ո՞վ էր այդ վերջինը, և ինչու՞մ էր կայանում Ս. Մուրավյովի՝ Ձեր կողմից պահանջվող ժամադրությունը նրանց հետ»: Ս. Բեստուժև-Ռյումինը պատասխանել է. «Որպեսզի նա տեսներ Արտամոնին և նրա ընկեր Գրիբոյեդովին, ովքեր չէին կարող երկար մնալ Կիևում: Ա.Ս. Գրիբոյեդովը ծառայում էր Երմոլովի մոտ»: Երկու օր անց՝ հունվարի 29-ին **Արտամոն-Մուրավյովին** Կոմիտեում հարցրել են. «Ո՞վ էր այն Գրիբոյեդովը, ում հետ

41 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, №2, а.з.л., № 244:

42 Նույն տեղում՝ էջ 242 (նամակում Ա. Գրիբոյեդովն իր մեկնումի ձգձգման մասին պատմում է, որ չէր կարողանում թողնել իր ընկեր Ստոլիպինի այրուն՝ հրեշտակատիպ այդ բաղեղին, և ստիպված էր մեկնումը հետաձգել վերջինիս խորապես միտիթարելու պատճառով):

43 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, а.з.л., № 518:

44 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, №2, а.з.л., № 520:

գայով Բեստուժնի մոտ՝ Գուր ցանկանում էիք տեսակցել Ս. Մուրավյովի հետ, ում նույնից Բեստուժներ սուրհանդակ էր ուղարկել: Որո՞նք էին թե՛ պահանջվող ժամադրության առարկան, թե՛ Ձեր փոխադարձ խոսակցությունները»: Արտամոն Մուրավյովը պատասխանել է. «Գրիբոյեդովը, ում ցանկանում էի ծանոթացնել Մուրավյովի հետ, հենց նա է, ով ծառայում է հրետանու գեներալ Երմոլովի մոտ: Այն ժամանակ Սերգեյ Մուրավյովին տեսնելու իմ ցանկությունը, իրո՞ք, բարեկամական էր և ընկերական՝ Գրիբոյեդովի վերաբերյալ, իսկ խոսելով իմ եղբոր՝ որպես խելացի մարդու մասին և իմանալով, որ Ա. Գրիբոյեդովը նախատեսում է մնալ Կիևում՝ ցանկանում էի դրանով հաճույք պատճառել: Մուրավյով Սերգեյի հետ ես այն ժամանակ կարճ տեսակցեցի, քանի որ նա եկավ կեսօրին և հաջորդ օրը վաղ մեկնեց: Նրա ներկայության այդ մի քանի ժամերի ընթացքում եկավ իմ կինը, ում 6 ամիս չէի տեսել: Իմ ներկայությամբ նրանց խոսակցությունը, որին մասնակցում էի հատվածաբար, ընդհանուր էր և ընկերությանը չէր վերաբերում»:

Արտամոն Մուրավյովից հետո՝ 1826թ. հունվարի 31-ին, հարցաքննվել է Հարավային ընկերության Վասիլկովյան ուպրավայի ղեկավար **Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը**: Հետաքննող կոմիտեում հարցրել են. «Կոմիտեին հայտնի է, որ Արտամոն Մուրավյովը Գրիբոյեդովի հետ եկել էր պողպորուչիկ Բեստուժնի մոտ, և վերջինս սուրհանդակին Ձեզ մոտ է ուղարկել գրությունով, որով պահանջվում էր Ձեր գալուստն իր մոտ գոնե մի քանի ժամով, տեսակցության ծայրահեղ անհրաժեշտ կարիքի պատճառով: Պարզաբանեք, թե որն էր այդ անհրաժեշտ կարիքը, որի համար Բեստուժնը Ձեզ ժամադրության էր կանչում Մուրավյովի և Գրիբոյեդովի հետ: Ո՞վ էր այս վերջինը և որտե՞ղ է հիմա գտնվում»: Մուրավյով-Ապոստոլը տվել է հետևյալ պատասխանը. «1825թ. հունիսին կամ հուլիսին, երբ Բեստուժնը Պոլտավյան գնդի գումարտակի հետ պարեկապահակային ծառայության մեջ էր գտնվում Կիևում, այդ ժամանակ Արտամոն Մուրավյովը եկել էր Կիև ոչ թե Ա. Բեստուժնին, այլ Պետերբուրգից եկող կնոջը հանդիպելու: Բեստուժնը, իրոք, գրություն էր ուղարկել և հրավիրում էր ինձ՝ տեսակցելու Արտամոն Մուրավյովի հետ, ում ես չէի տեսել Պետերբուրգից իմ մեկնելուց հետո. ինձ մոտ լինելու ցանկությամբ հանդերձ՝ նա չէր կարող այդ ուղևորության համար թողնել կնոջը: Ընդ որում՝ Բեստուժնը գրության մեջ ինձ խնդրում էր մի քանի ժամով գալ ոչ այնքան տեսակցության ծայրահեղ անհրաժեշտության պատճառով, որքան որ գիտեր, որ ես չեմ սիրում բացակայել գնդից, որտեղ, ի դեպ, զբաղմունք ունեի: Գրիբոյեդովը, իրոք, այդ ժամանակ գտնվում էր

Կիևում, ուր նա եկել էր ոչ Մուրավյովի հետ, քանի որ, եթե չեմ սխալվում, նա Մոսկվայից Վրաստան էր մեկնում, որտեղ ինչ-որ պաշտոն էր վարում: Ես նրա հետ այստեղ ծանոթացա այնքանով, որքանով որ նա իմացավ, որ ես Մուրավյովն եմ, իսկ ես՝ որ նա Գրիբոյեդովն է: Ընկերության մասին էլ մեր միջև ոչ մի խոսք չի ասվել, և նա էլ մեր անդամը չէ»:

Վերլուծելով Հարավային ընկերության վերոհիշյալ անդամների տրված ցուցմունքները՝ **Մ. Նեչկինան դրանցում ևս մատնանշում է մի շարք հակասություններ**: Այսպես, Արտամոն Մուրավյովն իր ցուցմունքում նշում է, որ Ա. Գրիբոյեդովը պատրաստվում էր մնալ Կիևում, **ինչը ճիշտ չի համարում**, և որ դա քաջ հայտնի էր Ա. Մուրավյովին ու նրա ընկերներին: Մրանից ելնելով՝ ուսումնասիրողը պնդում է, որ **բացահայտ անճշտությունը ցուցմունք է խցկվել, որպեսզի հիմնավորվի, թե ուղևորության ժամանակ ինչու էր պետք եղել օտար քաղաքում կանգ առած մարդուն ծանոթացնել մեկին, և վերջինիս էլ այլ քաղաքից կանչել միայն այն քանի համար, ինչ է թե այդ մարդը խելացի է**:

Արտամոն Մուրավյովի ցուցմունքում հայտնաբերվել է **մի անճշտություն ևս**. որպես հանդիպման վայր Արտամոնը նշել է Մ. Բեստուժնի բնակարանը, որտեղ իրականում Գրիբոյեդովը չի եղել: Նշվել է, որ **Գաղտնի ընկերության մասին վերջին վերապահումը թեման հեռացնում է խոսակցությունից**. պարզապես հանդիպել էին երկու խելացի մարդ և մեկ օրվա կեսից մինչև հաջորդ օրվա առավոտն ընկած ժամանակահատվածում խոսել ընդհանուր թեմաներով:

Մ. Նեչկինայի կողմից հակասություն է հայտնաբերվել նաև Մ. Բեստուժն-Ռյումինի և Արտամոն Մուրավյովի ցուցմունքների միջև: Մ. Բեստուժն-Ռյումինը նշում է, որ ինքը Ս. Մուրավյով-Ապոստոլին կանչել էր, որպեսզի **իբրև խելացի մարդ՝** ծանոթացներ Ա. Գրիբոյեդովի հետ, որը Կիևում չէր մնալու: Արտամոն Մուրավյովը, ընդհակառակը, նշում է, որ Մ. Բեստուժն-Ռյումինը Մուրավյով-Ապոստոլին կանչում էր, որ տեսակցեր իր հետ, քանի որ եղբորը վաղուց չէր հանդիպել, իսկ Ա. Գրիբոյեդովն էլ մի որոշ ժամանակ պետք է մնար Կիևում: Այս հակասություններից ելնելով՝ հետազոտողը եզրակացնում է. «Մուրավյովի հատուկ կանչն ընդգծում էր տեսակցության կարևորությունը, դրանում մատնանշում ինչ-որ անհետաձգելի կարիք և Հարավային ընկերության Վասիլկովյան ուպրավայի գլխավոր (ղեկավար – Վ.Ս.) Սերգեյ Մուրավյով-Ապոստոլի հատուկ մասնակցությունը տեսակցությանը»: **Ինչ վերաբերում**

է Ս. Մուրավյով-Ապոստոլի ցուցմունքներին, ապա նա կարծիք է հայտնում, որ դրանք լույս չեն սփռում վերոհիշյալ հակասությունները պարզաբանելու գործի վրա. **ընդհակառակը, ավելի են խճճում:** Ս. Մուրավյով-Ապոստոլի կողմից Ա. Գրիբոյեդովի հետ **հանդիպման հանգամանքը երկրորդ պլան մղելն** ու Արտամոն-Մուրավյովի հետ ընկերական, բարեկամական հանդիպումը կարևորելը նա համարում է միտումնավոր և նշում. «Գրիբոյեդովին, որպես հանդիպման պատճառ, ընդհանրապես հանել և ծանոթությունը նրա հետ դարձնել իմիջիայոց, պատահական. սա էր Մուրավյով-Ապոստոլի նպատակը»:

Ա. Գրիբոյեդովի կիևյան հանդիպումների վերաբերյալ Ս. Տրուբեցկոյի ցուցմունքներում նույնպես որոշակի միտումներ են «գրանցվել»: Ս. Տրուբեցկոյի պահվածքը բացատրելիս կարևոր է հիշատակել Կ. Ռիլենի կողմից 1826թ. փետրվարի 14-ին տված ցուցմունքներից մի հատված նա: Հետաքննող կոմիտեում վերջինիս հարցրել են, թե արդյո՞ք նրան հանձնարարություն չի տրվել Հարավային ընկերության անդամներից որևէ մեկի հետ ժամադրության, **ինչպես նաև գեներալ Երմոլովի կորպուսում նրանց անդամների շրջանում դրանք տարածելու մասին**, և Կ. Ռիլենը նրանից արդյոք տեղեկություններ չի՞ ստացել իր գործողությունների հաջողության մասին: Կ. Ռիլենը պատասխանել է. «Ես լսել եմ Տրուբեցկոյից, որ անցած տարի՝ Կիևում Գրիբոյեդովի գտնվելու ժամանակ, Հարավային ընկերության որոշ անդամներ նույնպես ջանացին նրան ընդունել դրա (Ընկերության – Վ.Ս.) մեջ, բայց նույն պատճառներով հաջողություն չունեցան, ինչի համար էլ ես ստիպված եղա թողնել նրան»:

Այդ նույն օրը նույն թեմայով հարցաքննվող Ս. Տրուբեցկոյը խուստովանել է, որ Կ. Ռիլենին պատմել է Ա. Գրիբոյեդովի կիևյան հանդիպումների մասին, և **որ Հարավային ընկերության որոշ անդամներ «փորձել են» նրան, բայց նա տեղի չի տվել և ավելացրել է.** «Ես դա լսել եմ Պոլտավյան հետևակային գնդի պորուչիկ Բեստուժնից, որը, կարծես, Արտամոն-Մուրավյովի հետ նպատակ ուներ Գրիբոյեդովի առաջ բացահայտել իրենց ընկերության գոյությունը և ընդունել նրան, բայց դա հետաձգել էին, որովհետև նրա մոտ չէին գտել իրենց համար ցանկալի մտքերի կերպը: Դրա մասին Ռիլենն ինձ ոչինչ չպատասխանեց, և ես մնացի իմ կարծիքին, որ նա է ընդունել Գրիբոյեդովին»: Ս. Տրուբեցկոյի այս և վերևում հիշատակած ցուցմունքներից Ս. Նեչկինան եզրակացնում է, որ **Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելու հարցը Ս. Տրուբեցկոյը**

դարձնում է նրա կիևյան հանդիպումների պատճառ և ցույց է տալիս, որ ինքը ոչ մի կապ չի ունեցել դրանց հետ:

Հետագոտողը հավանական չի համարում, որ **այնպիսի փոքր հարց, ինչպիսին Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելն էր**, Ս. Տրուբեցկոյին ստիպեր ամեն կերպ խուսափել դրանում իր ունեցած մասնակցությունից, և եզրակացնում է. «Այնհայտ է, որ գործն ամենին էլ Գրիբոյեդովին կազմակերպության անդամ ընդունելու մեջ չէ, այլ ինչ-որ ուրիշ բանում. դա հաստատվում է նաև այն ենթադրությամբ, որ նոր անդամ ընդունելու համար կարիք չկար շարժման մեջ դնել որչ **Վասիլկովյան ուպրավան...** Գործը (այստեղ – Վ.Ս.) Հարավային ընկերության և Կովկասյան կորպուսի հրամանատար Երմոլովի հետ էր կապված»:

Ս. Նեչկինան փորձում է վերոհիշյալ «եզրակացությունը» հաստատել նաև Ս. Բեստուժն-Ռյումինի՝ 1826թ. փետրվարի 19-ին Հետաքննող կոմիտեի հետևյալ հարցերին տված պատասխանով. «Ճիշտ է, որ Ձեր կամ ինչ-որ մեկի կողմից ընկերության անդամ է ընդունվել կոլեգիական ասեստոր Ա.Ս. Գրիբոյեդովը և հատկապես երբ: Ընդ որում՝ բացատրեք. ի՞նչ առիթով է նա Ձեզ մոտ եղել և տեսակցել Սերգեյ Մուրավյովի հետ: Ընկերության մտադրությունների մասին նրան ի՞նչ է այդ ժամանակ հաղորդվել: Նա ի՞նչ կարծիքի էր դրանց մասին և ի՞նչ խոստումներ է տվել ընկերության նպատակներին սատարելու ու վրացական կորպուսում դրանք տարածելու վերաբերյալ»:

Ս. Բեստուժն-Ռյումինը պատասխանել է. «Գրիբոյեդովն ընկերության անդամ չի դարձել երկու պատճառով՝ 1) Երմոլովի մոտ ծառայելով՝ նա մեր ընկերությանը օգտակար լինել չէր կարող, 2) չիմասնայով Գրիբոյեդովի մտքերի իրական կերպը, ոչ էլ նրա բնավորությունը՝ վտանգավոր էր նրան ընդունել մեր ընկերություն, որպեսզի դրա մեջ նա մեր ընկերության վստահությունը չվայելող Ա.Պ. Երմոլովի համար «պարտիա չաներ»: Մեր ընկերությունն իմ կարծիքին համաձայնեց և Գրիբոյեդովին առաջարկ չարեց: Նա եղել էր ոչ թե ինձ մոտ, այլ Արտամոն Մուրավյովի հետ անցնում էր Կիևով, և նրան ես տեսել եմ միայն երկու անգամ Տրուբեցկոյի մոտ: Այն ժամանակ ես Սերգեյ Մուրավյովին խնդրեցի գալ Կիև, որպեսզի վերոհիշյալ կարծիքը հայտնեն նրան: Վերջինս փորձեց Գրիբոյեդովին»:

Այնհայտ է, որ վերոհիշյալ եզրակացությունը դարձյալ ենթադրական է, որովհետև Ս. Նեչկինան փորձ չի անում կամ խուսափում է բացահայտել Հարավային ընկերության ծրագրերին Ա. Երմոլովի տեղե-

կացվածության ու համաձայնության հանգամանքները կամ ներկայացնել, թե ինչու՞մ էր Ընկերության անվտանգության պատճառն Ա. Երմոլովի նկատմամբ, ում համար պետք չէր, որ Ա. Գրիբոյեդովը «պարտիա աներ»: Փաստենք, որ Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքները լուսաբանող խորհրդային մյուս հետազոտողները, հետևելով վերոհիշյալ եզրահանգումներին, նույնպես շրջանցել են այն հանգամանքը, որ Մ. Բեստուժն-Ռյումինը չի վկայել, թե Ա. Գրիբոյեդովն իրո՞ք հաստատ ցանկացել էր Ա. Երմոլովի համար այդ բանն անել: Եթե նրան անձանոթ էին Ա. Գրիբոյեդովի մտքերի ընթացքն ու բնավորությունը, ապա նա ինչպե՞ս կարող էր իմանալ Ա. Երմոլովի համար Ա. Գրիբոյեդովի հնարավոր ջանքերի մասին:

Կիևյան հանդիպումների մասին բավականին ուշագրավ են փետրվարի 24-ին Ա. Գրիբոյեդովի տված բացատրությունները. «Մուրավյովներին և Բեստուժն-Ռյումինին տեսել եմ պատահականորեն, հպանցիկ: Ոչ միայն կառավարության համար վնասակար, այլև այնպիսի խոսակցություններ, որոնցում գոնև մի քիչ վստահություն է պահանջվում, նրանց հետ չեմ ունեցել, որովհետև, չհասցնելով կարգին ծանոթանալ, մեկնեցի առանց հրաժեշտ տալու»: 1826թ. մարտի 15-ին երկրորդ անգամ այս թեմայի շուրջ հարցաքննվելիս նա տվել է հետևյալ բացատրությունը. «Կիևում իմ շատ կարճ մնալու ժամանակ Մուրավյովներից մեկն այնտեղ եկավ կնոջ հետ հանդիպելու, ում հետ երկու-երեք օր կամ ավելի քիչ նույն պանդոկում մնաց ինձ հետ, հետո նրանք մեկնեցին: Մյուսին ես տեսել եմ Տրուբեցկոյի մոտ: Այդ ամենը տեղի էր ունենում տիկնանց ներկայությամբ, և մենք իրար, կարելի է ասել, հրաժեշտ տվեցինք՝ հազիվ ծանոթ դառնալով»:

Ասվածից Մ. Նեչկինան եզրակացնում է, որ Ա. Գրիբոյեդովի այս խոսքերից նախ երևում է, որ հանդիպումները տեղի են ունեցել Մ. Տրուբեցկոյի բնակարանում (ինչը նշում էր նաև Մ. Բեստուժն-Ռյումինը), երկրորդ՝ Մ. Տրուբեցկոյը, ամեն կերպ խուսափելով այս փաստից և չցանկանալով բացատրություններ տալ Ա. Գրիբոյեդովի հետ իրենց հանդիպումների մասին, **ցանկություն է ունեցել թաքցնել շատ ավելին, քան Ա. Գրիբոյեդովին Գաղտնի կազմակերպության անդամ ընդունելու փաստն էր:**

Ա. Գրիբոյեդովի հետ հանդիպումները բացասական արդյունք են տվել: Լինելով ժամանակի նիստուկացին և բարձրին հետևող մարդ՝ **ամեն դեպքում Ա. Գրիբոյեդովը մեկնել էր առանց հրաժեշտ տալու:** Ի

դեպ, Ա. Գրիբոյեդովի և Մ. Մուրավյով-Ապոստոլի ցուցմունքներն իրենց ծանոթանալու ձևի մասին համընկնում են. մեկն ասում էր, որ իրենք ծանոթ էին այնքանով, որքանով որ գիտեին միմյանց անունները, մյուսը նշում էր, որ իրենք հրաժեշտ էին տվել իրար՝ հազիվ ծանոթանալով: Վերը շարադրվածը հաշվի առնելով՝ **Մ. Նեչկինան հետաքննող կոմիտեի կողմից «գլուխ չհանած», «չբանդած» և դեռ նետած «կծիկը քանդելու» հաստատականությամբ** Ա. Գրիբոյեդովի կիևյան հանդիպումների մասին **կատարում է հերթական անապացույց պնդումը.** «Այնհայտ է, որ կիևյան հանդիպումների նպատակը Գրիբոյեդովին ընկերության անդամ ընդունելը չէր... Խոսքը, ակնհայտորեն, Վասիլկովյան ուպրավայի համար կարևոր և շտապ հանձնարարության, անհետաձգելի գործի մասին էր, որում պետք է մասնակցություն ունենար Գրիբոյեդովը: Այդ գործը բացահայտորեն կապված էր Երմոլովի հետ: Բանակցությունները կտրուկ ընդհատվել էին. Գրիբոյեդովն առանց հրաժեշտ տալու մեկնել էր»: Դարձյալ ենթադրաբար ներկայացված այդ «անհետաձգելի գործը» Հարավային ընկերության՝ **Վասիլկովյան ուպրավայի կողմից կազմված «Բելոցերկովյան ծրագիրն» էր, իսկ դրանում՝ Ա. Երմոլովին հատկացվող դերը: Ի՞նչ ծրագիր էր դա:**

Ըստ «Բելոցերկովյան ծրագրի» հեղինակների՝ 1825թ. ամռան վերջին և աշնան սկզբին՝ **կայսեր կողմից Երրորդ կորպուսի գորատեսի ժամանակ, երբ կայսրը կանգ առնեք կոմսուսի Բարանիցկայայի բելոցերկովյան կալվածքում, նախատեսվում էր սպանել նրան և նույն կորպուսի ուժերով շարժվել դեպի Կիև ու Մոսկվա:** Ըստ հեղինակների՝ ճանապարհին նրանց պետք է միանային կառավարությունից դժգոհ ուժերը: **Միաժամանակ հյուսիսում՝ Պետերբուրգում, պետք է ապստամբեին Գվարդիան ու նավաստիները, որոնք երկրից դուրս պետք է հանեին ցարական ընտանիքի անդամներին: Այս ծրագրի իրագործման մեջ խիստ կարևոր դերակատարում կարող էր ունենալ Ա. Երմոլովի Կովկասյան կորպուսը:**

Մ. Նեչկինան կարծիք է հայտնել, որ հատկապես Ա. Երմոլովի կորպուսը, **հավատարիմ մնալով ցարական կառավարությանը, կարող էր թևից ջախջախիչ հարված հասցնել Մոսկվայի ուղղությամբ ընթացող ամբողջ շարժմանը և խոչընդոտել «հարավային» ու «հյուսիսային» զորքերի միավորմանը:** Իսկ եթե Ա. Երմոլովն անցնեք հեղափոխական զորքերի կողմը, «հաջողությունը զգալիորեն ապահովված կլինեք. ամ-

բողջ հարավը կրոնկներ շարժմամբ»⁴⁵: Այս տեսակետի համար հիմք է հանդիսացել ժամանակին վտարանդի գրող **Պ.Վ. Գոլգորուկովի՝ անուղղակի ձևով ներկայացրած մի ենթադրություն. Բատենկովի** մահախոսականում, անդրադառնալով Ա. Երմոլովին, Պ. Դոլգորուկովն անապացույց կերպով **վերջինիս համարում է Կազմակերպության գաղտնի անդամ, իսկ Ա. Գրիբոյեդովին՝ միջնորդ**: Պ. Դոլգորուկովը նշում է. «...Բացի իրար օժանդակելու մասին ստորագրություն տված և ժողովների մասնակցող հայտնի անդամներից՝ Ընկերությունն ուներ նաև գաղտնի անդամներ, ովքեր ստորագրություն չէին տվել, ժողովներին երբեք չէին ներկայանում, և որոնց անուններն այն ժամանակ անդամների ամենամեծ մասին հայտնի չէին: Այդ գաղտնի համախոհները Ընկերության հետ հարաբերվում էին մեկ կամ մի քանի անդամների միջնորդությամբ... Գաղտնի համախոհների մեջ էին Պետական խորհրդի քաղաքացիական և կրոնական գործերի ղեկարտամենտի նախագահ **Նիկոլայ Մեմոլովիչ Մորդովինովը**, այն ժամանակ Կովկասը կառավարող **Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովը**, **Սպերանսկին** և Մոսկվայի **արքեպիսկոպոս Ֆիլարետը** (այժմյան միտրոպոլիտը): Սպերանսկին Ընկերության հետ հարաբերվում էր Բատենկովի միջնորդությամբ, Մորդովինովը՝ Ռիլենի, Երմոլովը՝ Գրիբոյեդովի, Միխայիլ Ֆոն-Վիզինի և էլի մի զնդապետի միջոցով...»⁴⁶: **Սա ևս անապացույց պնդում է:**

Ա. Գրիբոյեդովի կիևյան հանդիպումները քննարկելիս շատ կարելի է հիշատակել **Հարավային ընկերության ղեկավար Պ.Ի. Պետտելի ցուցմունքը: Վերջինս դեմ է եղել «Բելոցերկովյան ծրագրին» և բավական լարված հարաբերություններ է ունեցել Վասիլկովյան ուպրավայի անդամների հետ: Ցուցմունքի մեջ նա վկայում է. «Կոլեզիական ասեստոր Ա.Ս. Գրիբոյեդովի՝ գաղտնի կազմակերպությանը պատկանելու մասին ես երբեք և ոչ մեկից չեմ լսել»⁴⁷:**

Մեր համոզմամբ ղեկաբրիստների Հյուսիսային և Հարավային ընկերությունների կողմից Ա. Գրիբոյեդովին իրենց անդամը դարձնելու ջանքերի ձախողման թերևս ամենագլխավոր պատճառը նրանց ծրա-

45 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 532 (այս և Մ. Նեչկինայի ուսումնասիրությունից կատարած վերահիշյալ մեջբերումները տես էջ 520-532, տես նաև՝ "Следственное дело А.С. Грибоедова", М., 1982, էջ 32-71):

46 Долгоруков П.В., Петербургские очерки, Панфлеты эмигранта 1860-1870, Собрал и пригготовил к печати П.Е. Щеголев, Дополнил и снабдил введением и примеч. С.В. Бахрушин, Кооперативное изд. "Север", Москва, 1934г., с. 360.

47 А.С. Грибоедов в воспоминаниях современников, кн. 2, с. 280: 172

գրերի հետ Ա. Գրիբոյեդովի անհամաձայնությունն էր: Ի դեպ, այս առիթով Մ. Նեչկինան նշում է. «**Ես (Գրիբոյեդովը – Վ.Ս.) ասում էի նրանց, որ իրենք հիմարներ են**» (արտահայտությունը – Վ.Ս.) դուրս է պրծել ինչ-որ տաք ու կրքոտ քննարկումներից: Կարելի է ենթադրել, որ այս աֆորիզմը կիևյան տեսակցության բեկորն է: Ա. Գրիբոյեդովը ռազմահեղափոխական, բելոցերկովյան ծրագրի հակառակորդ դուրս եկավ: Նա արդարացիորեն կարծում էր, որ «հարյուր պրապորշիկներ չեն կարող փոխել Ռուսաստանի ողջ պետական կերպը»: Իհարկե, ընդունելի է այն ենթադրությունը, ըստ որի՝ այդ ռեպլիկը գուցե եղել է ավելի վաղ, իսկ միգուցե ասվել է ինչպես Պետերբուրգում, այնպես էլ Մոսկվայում»⁴⁸:

Կարծում ենք՝ այս պարագայում էականն այն չէ, թե Ա. Գրիբոյեդովը երբ է նման մտքեր արտահայտել. ասվածից բխում է, որ, համաձայն չլինելով ղեկաբրիստների ծրագրերին, Ա. Գրիբոյեդովը ղեկաբրիստ հեղափոխականների համախոհը չի եղել և պարզապես չի ցանկացել դառնալ «հիմար պրապորշիկներից» մեկը:

Անդրադառնանք Գրիբոյեդովի ձեռքակալության հետ կապված հարցերին:

Ղեկաբրիստ **Ն.Վ. Շիմանովսկին**, ոչ մի հղում չկատարելով, հերքում է ղեկաբրիստների հետ կապերի մեջ կասկածվող Ա. Գրիբոյեդովի ձեռքակալման մասին թերթերում տպագրված նյութերը՝ դրանք համարելով վերապատմվածքներ: Ըստ նրա՝ երբ Կովկասում գեներալ Ա. Երմոլովին հասցրել են Ա. Գրիբոյեդովի ձեռքակալման մասին Գլխավոր շտաբի պետ **Ի. Գիրիչի** հրամանը, **ներկա են եղել ինքը և Տալիզինը:** Սկզբում Ա. Գրիբոյեդովը Երմոլովի մոտից դուրս է եկել, ապա վերադարձել է շատ հանգիստ՝ 1825թ. ղեկաբրիստական ղեկաբրիստ մասին պատմությունները լսելու⁴⁹: Հետո Ա. Գրիբոյեդովը չափազանց հանգիստ է պահել իրեն նաև այն ժամանակ, երբ **զնդապետ Միչչենկոն** Տալիզինի և **Ուկոնսկու** հետ մտել են իր սենյակը՝ իրերը խուզարկելու և նրան ձեռքակալելու: Ն. Շիմանովսկին վկայում է **ուրյադնիկ Ռասսվետանի** կողմից **Ա. Գրիբոյեդովի ուղերևի «մաքրազարդման» և վերջինիս ծառա (կարճեղբայր – Վ.Ս.) Ալեքսաշա Գրիբովի ջանքերով Կոզլովսկու խոհանոցում բոլոր թղթերի հրկիզման մասին**⁵⁰: Նա հավաստում է, որ

48 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 533:

49 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 69-79, տես նաև՝ Нечкина М.В., Следственное дело А.С. Грибоедова, М., 1982, էջ 36-37 (այստեղ ևս խոսվում է Ն. Շիմանովսկու վկայությունների մասին):

50 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 75:

Եթե այդ թղթերն այրված չլինեին, **Ա. Գրիբոյեդովը մեկնելիս այդպես հանգիստ չէր լինի և չէր ասի, որ մնացողները չկտարվեն, որ ինքը շուտով նրանց հետ կտեսնվի**⁵¹: Այս դրվագը սրանից ավել չի լուսաբանվել:

Ա. Գրիբոյեդովի ազգական և նրա վերաբերյալ նյութեր հավաքող վերոհիշյալ Դ. Սմիռնովը, վկայակոչելով իր գրույցն Ա. Գրիբոյեդովի մտերիմ ընկեր **Ա. Ժանդրի** հետ, Ա. Գրիբոյեդովի ձեռքակալման և թղթերը ոչնչացնելու մասին Ստ. Բեգիչևի վկայությունների շուրջ գրում է, թե Ա. Ժանդրն իրեն պատմել է, որ **Ա. Գրիբոյեդովի ոչ բոլոր թղթերն են ոչնչացվել, իբր դրանց մի մասը պահվել է Գրոզնի ամրոցում (ճիշտը՝ Վլադիկավկազում – Վ.Ս.), և Ա. Երմոլովի կարգադրությամբ դրանք փաթեթավորվել, կնքվել և սուրհանդակի ու Ա. Գրիբոյեդովի հետ միասին ուղարկվել են Պետերբուրգ**: Ա. Գրիբոյեդովին Պետերբուրգ բերելուց մի քանի օր անց Ա. Ժանդրի մոտ է եկել ումն **Մ.Ա. Ալեքսեն** և այդ փաթեթը հանձնել է նրան: Դ. Սմիռնովն Ա. Ժանդրի այս պատմածին ավելացնում է, որ ինքը Ստ. Բեգիչևից է իմացել, թե ինչպես են այդ թղթերը հայտնվել ազատված Ալեքսենի ձեռքում: Երբ սուրհանդակն Ա. Գրիբոյեդովին իր թղթերի փաթեթով հանդերձ հանձնել է հերթապահ **սպա Սենյավինին, վերջինս փաթեթը դրել է սեղանին: Գրիբոյեդովը գողացել է այն, «հինգ րոպեում հմայել» Ալեքսենին, որը, ազատ արձակվելուց հետո, նրա խնդրանքով փաթեթը հանձնել է Ա. Ժանդրին՝ խնդրելով ոչնչացնել դա**: Վերջինս չի ոչնչացրել թղթերը, և երբ Ա. Գրիբոյեդովն ազատ է արձակվել, միասին են բացել փաթեթը, **սակայն Վ.Կ. Կյուխելբեկերի մի քանի նամակներից բացի՝ ոչ մի կարևոր թուղթ չի եղել այնտեղ**⁵²: **Գ. Սմիռնովը չի հիշատակում, թե Ա. Ժանդրին ինչու չի հարցրել փաթեթը չբացելու մասին. այստեղ կարող էին լինել նույն Ա. Ժանդրին և ձեռքակալությունից խույս տված այլոց ևս վարկաբեկող թղթեր ու նամակներ: Բացի այդ, եթե փաթեթում «ոչ մի կարևոր թուղթ» չի եղել, այդ դեպքում ինչու՞ էր Ա. Գրիբոյեդովը գողանում դա և ինչու՞ չի խնդրել, որ փաթեթը ոչնչացնի «հմայված» Ալեքսենը:**

Ջին. Դավիդովը նշում է, որ **վերոհիշյալ հերթապահ սպան Սենյավինը լինել չէր կարող, որովհետև նա ձեռքակալված էր**⁵³, իսկ հետո, հղում կատարելով ուսումնասիրող **Պ.Ե. Շչեգոլևի** աշխատությանը, գրում է, որ **ոչ մի փաթեթի մասին ինքը ոչ մի վկայության չի հանդիպել**

51 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 75:

52 Նույն տեղում՝ էջ 249-251:

53 Նույն տեղում՝ էջ 250:

Հետաքննող հանձնաժողովի ընդունման-հանձնման մատյաններում և կասկածի տակ է առնում Ա. Գրիբոյեդովի կողմից փաթեթը թոցնելու մասին վկայությունը⁵⁴: Դ. Սմիռնովը չի փորձել Ա. Ժանդրից ճշտել նաև մի շատ կարևոր հանգամանք. **Ինչպե՞ս է եղել, որ, արհամարհելով վտանգը, Ա. Գրիբոյեդովի թղթերի մեծ մասը ոչնչացնել տվող Ա. Երմոլովը չէր հասկացել, որ դրանք ամբողջությամբ ոչնչացնել չտալով՝ իրեն, Ա. Գրիբոյեդովին և մյուսներին էլ էր վտանգի տակ դրել: Մի՞թե նա չէր կարող իրեն հավատարիմ մարդիկ ուղարկել՝ դրանք ևս ոչնչացնելու: Որտեղից է, ուրեմն, այդքան մանրամասն վկայություններ տալիս Ստ. Բեգիչևը, որն Ա. Գրիբոյեդովի հետ չէր եղել Գրոզնիում և չէր կարող Ն. Շիմանովսկուց, Տալիզինից, Ս. Երմոլովից, մետաքսագործ Ռեբրովից և մյուսներից ավելի ստույգ իրազեկված լինել:**

Եթե, ըստ Ն. Շիմանովսկու, Ա. Գրիբոյեդովը իրեն հանգիստ է պահել և նրա մոտ ոչինչ չի հայտնաբերվել, ապա իշխանությունները որտեղից կարող էին իմանալ, որ Վլադիկավկազում էլ թղթեր կային մնացած: Գ. Սմիռնովի և Ա. Ժանդրի վկայությունները հիմնականում հիմնվում են Ստ. Բեգիչևի պատմածների վրա, ուստի հավատ չեն ներշնչում, որովհետև համեմատելով այլ վկայությունների հետ՝ քննություն չեն բռնում: Հետագայում՝ 1826թ. սեպտեմբերին, Ն. Շիմանովսկին Կովկասյան գծի վրա հանդիպել է ձեռքակալությունից հետո գնեռալ Դենիս Դավիդովի հետ Մոսկվայից վերադարձող Ա. Գրիբոյեդովին. նրանք երկար գրուցել են (չի նշում, թե ինչի մասին – Վ.Ս.), բայց, ինչպես հին ասացվածքն է ասում, «նրան խելքի չեն բերել»⁵⁵:

Շրջանցվել է այն փաստը, որ ծառայողական գաղտնիքները ոչ մի տեղ չհրապարակելու կապակցությամբ երդում տված Ա. Գրիբոյեդովը⁵⁶, որը համարյա բոլոր նամակներում կամ գրույցներում մտերիմներին պատմել է իր դիվանագիտական գործունեության շատ մանրամասներ⁵⁷, ոչ մի տեղ չի հիշատակվում վերոհիշյալ գրույցի կամ էլ իր ձեռքակալման հանգամանքների և դրան հաջորդող իրադարձությունների մասին:

Գ. Զավալիշինն իր հուշերում գրում է, որ Ա. Գրիբոյեդովի մահվան 50-ամյա տարեկիցին (1879թ. – Վ.Ս.) բոլորը սկսել են խոսել ու գրել

54 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 334:

55 Նույն տեղում՝ էջ 76:

56 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, Изд. во Социально-экономической литературы, Москва, 1960, с. 26.

57 Грибоедов А.С., Сочинения в двух томах, 1971, т. 2, ևշվ. աշխ., ("Н.А. Каховскому", էջ 204-206, "А.А. Добринскому", էջ 256-266, "Ст. Бегичеву", էջ 266-268, "П.Н. Ахвердовой", էջ 272-274 և այլն):

նրա մասին, և որ *դրանց մեծ մասը չի համապատասխանում այն ամենին, ինչը հայտնի է իրեն*⁵⁸: Դ. Չավալիշինն Ա. Գրիբոյեդովի հետ ծանոթ է եղել շատ կարճ ժամանակ, բայց դա հենց այն «*ծայրահեղ դրժվար ժամանակաշրջան է եղել, երբ նա առավելագույնս ենթարկվել է փորձությունների*»: Դ. Չավալիշինը պնդում է, որ վկա է եղել Ա. Գրիբոյեդովի և դեկաբրիստական Գաղտնի ընկերության անդամների հետ նրա առնչություններին և *եղել է այն միակ մարդը, ում հետ Գլխավոր շտաբի շենքում ձերբակալված ժամանակ Ա. Գրիբոյեդովը կարող էր կիսվել վերջին դեպքերի և դրանցում մասնակցած դեմքերի հետ իր հարաբերությունների մասին*⁵⁹: Ժամանակին նրանց ծանոթացրել է Ա. Գրիբոյեդովի երկրպագուներից *Օրեսա Սոմովը*, իսկ ավելի հաճախ իրենք հանդիպել են Ա.Բ. Օդոնսկու մոտ: **Ա. Օդոնսկին և Ա. Գրիբոյեդովն ազգականներ էին**⁶⁰: Անդրադառնալով նրանց հարաբերություններին և Ա. Գրիբոյեդովի ճակատագրում Ա. Օդոնսկու ունեցած դերին՝ **Գ. Չավալիշինը հերքում է տարածված այն կարծիքը, թե Ա. Օդոնսկին կարող էր «ամեն տեսակ շեղումներից ետ պահել կրքոտ և պոռթկուն Ա. Գրիբոյեդովին»**⁶¹, ինչը բացատրում է երկու պատճառներով. *նախ՝ Ա. Օդոնսկու նման անվերջ հրապուրվող մարդիկ քիչ կային: Հազվադեպ մարդիկ կային, ովքեր կարող էին հիացական զարմանքից այդքան արագ անցնել ամենակաշուն դատափետման, բարեկամությունից՝ թըշնամության և հակառակը ու շատ հաճախ՝ առանց որևէ հիմքի: Իրենց «կազմատապին ընկերության» (խոսքը բանտարկված ընկերների մասին է – Վ.Ս.) մեջ հազիվ թե գտնվեին 3-4 մարդ, որոնց իր ծաղրական քառատողերով չէր վիրավորել Ա. Օդոնսկին: Ըստ Դ. Չավալիշինի՝ *զաղափարների և մարդկանց նկատմամբ հարաբերություններում անհաստատ մարդն ավելի էր ընդունակ հրապուրանքների մեջ ընկել և չէր կարող ուրիշներին զերծ պահել դրանից: Ըստ երկրորդ պատճառի՝ Ա. Օդոնսկին չէր կարող Պետերբուրգում Ա. Գրիբոյեդովի պահապանը լինել, որովհետև 1824թ. դրությամբ վերջինս «առնվազն արդեն տղամարդ էր», իսկ Ա. Օդոնսկին՝ յունկերից կոռնետի (զինվորական աստիճաններ են – Վ.Ս.) աստիճանի նոր բարձրացած պատանի*⁶²: Այնու-*

հետև Դ. Չավալիշինը կատարում է մի վերապահում. նա նշում է, որ Ա. Օդոնսկին, թեկուզ ուրիշ խորհրդով (չի նշում, թե ում – Վ.Ս.) **իրոք բարի ծառայություն է մատուցել Ա. Գրիբոյեդովին՝ նրան ետ պահելով մի բավական կարևոր բանից, ինչը կարող էր ճակատագրական հետևանքներ ունենալ**⁶³:

Այդ առումով Դ. Չավալիշինը գրում է. «Բանն այն է, որ Պետերբուրգից Ա. Գրիբոյեդովի ութամյա բացակայության ընթացքում առավել քան դրանից առաջ այնտեղ ընդարձակվել էր Գաղտնի ընկերությունը, և նրանում նշանակություն էին ստացել Ա. Գրիբոյեդովին քիչ հայտնի և անզամ անհայտ մարդիկ: Հետևաբար հասկանալի է, որ, լինելով հրապուրվող և արտահայտություններում ծայրահեղ անզգույշ, Ա. Գրիբոյեդովը կարող էր ավելորդ անկեղծության տրվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր առիթի դեպքում կարող էին մատնել նրան, ինչպես մատնեցին ուրիշներին: Իր մատնացույց արած այդպիսի մարդկանց հետ չափից դուրս մտերմիկ հարաբերություններից և քաղաքական խոսակցություններից Ա. Օդոնսկին ետ էր պահում Ա. Գրիբոյեդովին, որը հավատում էր նրան՝ հասկանալով նրա կապվածությունն իրեն, ուստի չէր վիրավորվում նրա խորհուրդներից, ինչպես որ, եսասիրությունից դրդված, կվիրավորվեր, եթե այդ խորհուրդները տար մեկ ուրիշը:

Հատկապես կարևոր էր Ա. Գրիբոյեդովին զգուշացնել, ետ պահել Գաղտնի ընկերության այն անդամների հետ չափից դուրս անկեղծ քաղաքական դատողություններից, ովքեր աչքի չէին ընկնում ոչ համեստությամբ, ոչ էլ բնավորության ամբողջամբ... Դա էլ, իրոք, հետագայում փրկեց Ա. Գրիբոյեդովին, որովհետև նրա մտերմ հարաբերություններն այնպիսի մարդկանց հետ էին, ովքեր ոչ մի խոսքով չվարկարեկեցին ոչ նրան, ոչ էլ ուրիշներին, անզամ՝ այնպիսիներին, որոնց վրա, թեպետ չապացուցված, այլ անդամներ արդեն ցուցմունք էին տվել...»⁶⁴:

Այս մեջբերման և իր բերած վերոհիշյալ երկու պատճառներում էլ **Գ. Չավալիշինը հակասում է ինրն իրեն, քանի որ անհաստատ բնավորության տեր և ծայրահեղությունների մեջ ընկնելու ընդունակ Ա. Օդոնսկին, ամեն դեպքում, այնքան ուժեղ տրամաբանություն է ունեցել, որ թեկուզ ուրիշ խորհրդով կարողացել է լավը գտել վատից և ճիշտ է հասկացել, թե ում մոտ ինչպես և ինչ կարելի է խոսել: Երկրորդ պատճառի մեկնաբանությունն իմաստագրվում է նրանով, որ «պատանի» (բայց**

58 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 1, с. 21, с. 8-9 (Մ. Նեչկինան նույնպես վկայակոչում է դա Семёвский М.И., "Несколько слов о фамилии Грибоедовых", "Москвитянин", М., 1856, XII, с. 309-323 և այլ հեղինակների վկայություններով):

59 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 1, с. 78:

60 Նույն տեղում՝ էջ 80:

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում՝ էջ 81:

63 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 1, с. 81:

64 Նույն տեղում՝ էջ 81-82:

արդեն հեղափոխական – Վ.Ս.) Ա. Օդոևսկին կարողացել է «ճակատագրական վտանգից» ետ պահել «առնվազն արդեն տղամարդ» Ա. Գրիբոյեդովին՝ կռահելով, թե ովքեր են դատարկախոսներ ու մատնիչներ:

Դ. Ջավալիշինը ներկայացնում է որոշ հրապարակումներում առկա կտրուկ հակասությունները, թե իբր Ա. Գրիբոյեդովը Գլխավոր շտաբում տված իր «պատասխանում ուղղակիորեն գրել էր, որ գիտեր, թե ինչ է կատարվում, ծանոթ էր այս կամ այն անձնավորությանը» և այն, որ Կոմիտեում, իբր ինչ-որ կարևոր անձի կողմից տրված խորհրդով, ամեն ինչից հետո ինքը հրաժարվել էր, հերքել ամեն ինչ և գրել էր. «Ոչինչ չգիտեմ, ամեն ինչից անտեղյակ եմ»⁶⁵: Այս երկու տարբեր պատմությունների հիմքում, սակայն, Դ. Ջավալիշինը անորոշ կերպով դնում է «ինչ-ինչ եղած բաներ», որոնք կատարվել են «ոչ այնտեղ, որտեղ կատարվել են» և «վերաբերում են ոչ այն անձին, ով փորձել է ազդել Ա. Գրիբոյեդովի վրա, որպեսզի վերջինս փոխի իր սկզբնական ցուցմունքը»: Իր հուշերում Դ. Ջավալիշինը չի նշում, թե այդ ո՞ր տեղն է, որն «այն տեղը չէ» և Կոմիտեի այդ ո՞ր անձն է, որն «այն անձը չէ» (նա որպես իր իմացած անձ է համարում ձերբակալված գնդապետ Լյուբիմովին – Վ.Ս.):

Դ. Ջավալիշինի վկայությամբ Գլխավոր շտաբում ձերբակալվածներին տեղավորել են Առաջին գործող բանակի շտաբի պետ Տոլլի սենյակում և ննջարանում: Ինքը, Տարուսինյան գնդի հրամանատար զրնդապետ Լյուբիմովը, Ա. Գրիբոյեդովը և այլք նա գտնվել են այդ նրնջարանում: Նրանց վրա հսկիչ է կարգված եղել բանակային սպա Ժուկովսկին: Դ. Ջավալիշինը հերքում է այն կարծիքը, թե իբր Ժուկովսկին մեղմություն է հանդես բերել Ա. Գրիբոյեդովի նկատմամբ՝ ելնելով նրա ստեղծագործությունների հանդեպ ունեցած հարգանքից⁶⁶, և պնդում է, որ սպա Ժուկովսկին սկզբում անխտիր նեղել էր բոլորին և վերջինիս կարողացել են «ձեռնասուն» դարձնել գնդապետ Լյուբիմովի կողմից նրան կաշառելու շնորհիվ: Կարճ միջոցում նա դարձել է ձերբակալվածների կամակատարը:

Դ. Ջավալիշինը փորձում է ապացուցել, որ «վերևից» ոչ մի ճնշում չի գործադրվել, ոչ ոք խորհուրդներ չի տվել և ոչ մեկն առանձին մեղմություն չի ցուցաբերել. պարզապես Ժուկովսկին ձերբակալվածներից իբր «ազնիվ խոսք է վերցրել» չփախչելու, գաղտնի գրագրություն չունենա-

լու և այլնի մասին: Դ. Ջավալիշինի վկայությամբ ձերբակալվածները ժամապահներին կարողացել են ուղարկել սննդի, գնումների, գրքեր բերելու: Դ. Ջավալիշինի վկայությունները «ազնիվ խոսք վերցնող», բայց կաշառակեր սպայի վերաբերյալ բավականին տարօրինակ են:

Ստացվում է, որ եթե Ժուկովսկուն կաշառել է գնդապետ Լյուբիմովը, ապա հնարավոր էր նաև կաշառել հասարակ ժամապահին և նրա միջոցով ձերբակալվածներին տեղյակ պահել դրսի «անցուղարձին», հրահանգներ ապսպրել նրանց պահվածքի և ցանկալի ցուցմունքների շուրջ: Այդ դեպքում ինչպես է, որ Գ. Ջավալիշինը տեղյակ չի եղել, թե ինչ էին խոսել գնդապետ Լյուբիմովն ու Ա. Գրիբոյեդովը, և դրա մասին ինքն իմացել է միայն Լյուբիմովի պատմածից⁶⁷: Եթե համարյա նույն մեղադրանքով ձերբակալվածները միևնույն տեղում էին, ազատ ելումուտի հնարավորություն ունեին⁶⁸, ներսից կարող էին դուռը կողպել, ծրարով իրենց ուղարկված հարցաքննության հարցերի կետերին հանգիստ, անշտապ և ընկերակիցների խորհուրդներով թելադրված «ամենահարմար» պատասխանները գրել ու նույն ճանապարհով ետ ուղարկել Հետաքննող կոմիտե, ապա ո՞րն է եղել կալանքի իմաստը: Փաստորեն, հետաքննության ժամանակ հարցաքննվողը խաչաձև հարցերից չի շփոթվել և «հնարել է» իրեն ցանկալի պատասխաններ:

Դ. Ջավալիշինի վկայությամբ գնդապետ Լյուբիմովը մոտեցել է Կոմիտեից եկած ծրարի հարցերին պատասխան գրող Ա. Գրիբոյեդովին և նրա թույլտվությամբ ծանոթացել է դրանց: Հետևելով Ռիլեն եղբայրների այն հորդորներին, որ ամեն ինչ անկեղծորեն խոստովանելու դեպքում բոլոր մեղավորները կներվեն⁶⁹, Ա. Գրիբոյեդովն արդեն սկսել է «անկեղծորեն» գրել: Հենց այստեղ էլ գնդապետ Լյուբիմովը Գրիբոյեդովին նրբանկատորեն ակնարկել է, թե ինքը նկատել է, որ «ուրիշի ազդեցության տակ գտնվելով՝ Գրիբոյեդովը պատրաստ է ամեն ինչի, միայն թե ազատվի այդ հոգնեցնող ձանձրությունից»⁷⁰: Լյուբիմովը հայտնել է, որ տեղի խոսակցություններից ինքը գիտի, որ իրենցից յուրաքանչյուրի հանդեպ Կոմիտեի գործողություններն իրականացվում են անձնական ու քաղաքական մոտիվներից ելնելով, ու նա ցանկացել է պարզել, թե այդ երկուսից որից է կառչում Ա. Գրիբոյեդովը, և համոզել

67 А. С. Прибодов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 91:

68 Նույն տեղում՝ էջ 85-86:

69 Նույն տեղում՝ էջ 85-90:

70 Նույն տեղում՝ էջ 90:

65 А. С. Прибодов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 84:

66 Նույն տեղում՝ էջ 85:

է, որ հենց նրա օգտին կլինի, եթե ինքը ծանոթանա նրա սևագիր պատասխաններին, քանզի առաջին ցուցմունքները կարևոր են⁷¹:

Ծանոթանալով Ա. Գրիբոյեդովի՝ արդեն սևագրած պատասխաններին՝ Լյուբիմովը բացականչել է. «Այդ ի՞նչ է. Դուք այդպես կխճճեք և՛ Ձեզ և՛ ուրիշներին»⁷²: Ապա նա սկսել է համոզել և խորհուրդ է տվել «իրեն պահել զինվորավարի՝ չհանձնվելով առաջին իսկ գրոհի ժամանակ» ու տալ սովորական ռուսական պատասխան, այսինքն՝ «ոչինչ չգիտեմ և անտեղյակ եմ», և ասել է, որ դատավորներն իրենք էլ քաջ գիտեն, որ մարդն ամեն միջոց գտնում է, որ փրկվի՝ ավելացնելով, որ չլինի ապացույց՝ ջանքերին էլ վերջ կլինի: Լյուբիմովը օրինակ է բերել հսկիչ Ժուկովսկուն կաշառելու միջոցով կալանքի տակ գտնվող իր պորտֆելում եղած ծրարը ստանալու և ոչնչացնելու դիպվածը: **Միայն այսքանից հետո է Ա. Գրիբոյեդովը պատռել գրածը:**

Այս ամենը վկայում է Դ. Զավալիշինը, որը, գտնվելով նույն սենյակում, այդ ամենն իմացել է զնդապետ Լյուբիմովից: Հարց է ծագում. այդ դեպքում նա ինչպե՞ս կարող էր համոզված պնդել, որ գրասենյակային չինովնիկ Իվանովսկին կամ Բրուսիչը չէին կարող օգնել կամ ինչ-ինչ հարցերում ապահովագրել Ա. Գրիբոյեդովին, երբ նրան կանչում էին Կոմիտե: Եթե Դ. Զավալիշինը հերքում է ինչ-որ մեկի կողմից Կոմիտեի վրա ճնշում գործադրելու կամ օգնելու, հովանավորելու, մեղմություն ցուցաբերելու երևույթները, մի՞թե դրանով անապացույց կերպով ակամա չի «հաստատում», որ Կոմիտեի անդամներն ում ցանկանում, «կոծկում» էին, «գրում» կամ՝ հակառակը, եթե նույնիսկ դա հետաքննության համար «հույժ» կարևոր լիներ⁷³: Նա վկայում է, որ Ա. Գրիբոյեդովի նկատմամբ վերջնական որոշում կայացնելու հարցում Կոմիտեի անդամների և անգամ ավելի վերևում կանգնածների վրա, թեկուզ գաղտնի, մեծ ներգործություն է ունեցել Բ.Ֆ. Պասկևիչը, որի կինը Գրիբոյեդովներից էր:

Գատելով նրանից, որ նախորդների ցուցմունքները պահանջվածից ավել չէին բացում հաջորդ հարցաքննվողների առաջ, Ա. Գրիբոյեդովը, իհարկե, չէր կարող իմանալ, թե ինչ ցուցմունք են տվել Կ. Ռիլենը, Ս. Տրուբեցկոյը, Մ. Բեստուժև-Ռյումինը, բայց այն, որ ինքը հաստատ գիտեր, որ նրանք ձերբակալված են, և իրեն էլ տրված հարցերում

չէին կարող չոչնչով նրանց անունները, չէր կարող չհասկանալ իր «անկեղծության» կործանարար հետևանքները:

Դ. Զավալիշինի վկայությամբ Ա. Օդոևսկու կողմից Ա. Գրիբոյեդովին անվստահելի մարդկանցից հեռու պահելը փրկել է նրան, իսկ այն մարդիկ, ում հետ նրա խորհրդով մտերիմ է եղել Ա. Գրիբոյեդովը, «ոչ մի խոսքով չեն վարկաբեկել ո՛չ նրան, ո՛չ էլ ուրիշներին»: Դ. Զավալիշինը **հինգ պատճառ է բերում՝ հերքելու այն «սխալ» կարծիքը, թե իբր Ա. Գրիբոյեդովին ընկերները և բարձրագույն դեմքերը փորձում էին փրկել որպես «հիանալի պոետի և Ռուսաստանի ապագա հույսի»⁷⁴:** Ըստ նրա՝ 1) Ա. Գրիբոյեդովի և Ա. Պուշկինի ժամանակակիցների համար նրանք այդ դարաշրջանում այն մարդիկ չէին, ինչ դարձան հետագա սերունդների համար, որովհետև սերունդները նրանց սկսեցին դիտել իրենց ստեղծագործությունների հետևողական բացահայտման պրիզմայի միջով, հետևաբար նրանց մասին սկսեցին դատել ավելի ուշ շրջանի գործերից (սրա մասին վերևում նշել ենք – Վ.Ս.), 2) Մեր կողմից արդեն հիշատակված այն տեսակետը, թե 1824-1825թթ. հասարակության մեջ իր դիրքին համապատասխան մարդկանց շրջապատում **Ա. Գրիբոյեդովն այն մարդն էր, որը զինվորական կյանքից իր հետ բերել էր «հանդուգն թեթևամտի» համբավ,** 3) «Խելքից պատուհաս»-ն այն ժամանակ բոլորովին այլ կերպ է ընկալվել: **Դա այն ժամանակ ժողովրդականություն էր վայելում այնպես, ինչպես որ ցանկացած ուրիշ ծաղրանք՝ իրերի այս կամ այն դրության նկատմամբ,** 4) Ընկերների կողմից Ա. Գրիբոյեդովին չմասնելու մեջ ոչ մի արտասովոր բան չկար, քանզի եղել է հանրնդիանուր պայմանավորվածություն՝ չխճճել ոչ մեկին: **Ա. Գրիբոյեդովը ոչինչ չէր խոստովանում, որովհետև խոստովանել՝ կնշանակեր մատնել հենց իրեն,** 5) Բացի Բ.Ֆ. Պասկևիչի հովանավորությունից՝ **Ա. Գրիբոյեդովին փրկել է նաև այն հանգամանքը, որ 1825թ. վերջին նա Պետերբուրգում չէր, և որ ամենակարևորն էր, Ա.Պ. Երմոլովը ժամանակին նրան հնարավորություն էր տվել ոչնչացնելու իրեն վարկաբեկող թղթերը և նույնիսկ գրած գործերը, որոնց մասին մյուսներին բազմիցս (? Վ.Ս.) պատմել է Ա. Գրիբոյեդովը⁷⁵:**

Չնայած Դ. Զավալիշինի վկայություններում եղած հակասություններին՝ նրա թվարկած վերոհիշյալ հինգ պատճառներից չորսում (բա-

71 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 90:

72 Նույն տեղում՝ էջ 91:

73 Նույն տեղում՝ էջ 91:

74 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 93:

75 Նույն տեղում՝ էջ 94:

ցի չորրորդ՝ անապացույց պատճառից) տրամաբանությունն առկա է, սակայն մինչխորհրդային ուսումնասիրողները շրջանցել են դրանք: **Չորրորդ պատճառն անընդունելի է այն պատճառով, որ Ա. Գրիբոյեդովին չեն մատնել, որովհետև մատնելու բան չի եղել. ոչ մի կոնկրետ փաստ և վկայություն չի եղել նրա՝ ղեկաբրիստական Գաղտնի կազմակերպության անդամ հանդիսանալու մասին:**

Ն. Շխանովսկին, Դ. Սմիռնովը և Գ. Գավիդովը գրեթե նույն բանն են վկայում Ա. Գրիբոյեդովի ձերբակալման, ուղեբեռը «մաքրագարդելու»⁷⁶, թղթերը ոչնչացնելու⁷⁷ և Ա. Գրիբոյեդովի հանգիստ պահվածքի մասին, ինչը դրանց իսկությանը չվստահելու հիմքեր չի տալիս:

Ինչպես նշել ենք, ըստ **Ստ. Բեգիչևի՝ Ա. Գրիբոյեդովը ղեկաբրիստներին համարել է «հիմարներ»:** Իսկ Ա. Գրիբոյեդովի արտահայտած՝ «պրապորշիկներից 100 մարդ փորձում են փոխել Ռուսաստանի կառավարական կացությունը» միտքն Ա. Ժանդրը փորձել է մեկնաբանել այնպես, թե իբր **Ա. Գրիբոյեդովը չի ընդունել կառավարական կացությունը փոխելու ձևը**, բայց գործի անհրաժեշտության և արդարության մեջ չի կասկածել⁷⁸: **Այդ դեպքում ո՞րն է եղել քաղաքական կացությունը փոխելու գրիբոյեդովական ձևը, և ինչու՞ շարժմանն Ա. Գրիբոյեդովի մասնակցության աստիճանը «լրիվ» համարող Ա. Ժանդրը դա չի ներկայացրել: Ո՞չ Գ. Սմիռնովը, ո՞չ էլ Ա. Ժանդրը չեն վկայել Ռուսաստանի ապագա վերակազմության վերաբերյալ Գրիբոյեդովի գաղափարների մասին:**

Ա. Գրիբոյեդովի մասին հրապարակումների առիթով Դ. Զավալիշինի բացատրությունների հարցում, ամեն դեպքում, չպետք է անտեսել այն հանգամանքը, որ **չնայած անցել էր 50 տարի, Գ. Զավալիշինը չէր տառապում զառամախտով. հակառակ դեպքում նա ի՞նչ շահ ուներ կեղծելու կամ նենգափոխելու դիպվածը: Կարծում ենք, որ պարզապես Գ. Զավալիշինը ցանկացել է իրադարձությունների կենտրոնում իր դերն էլ կարևորել. դրա համար էլ, չնայած երբեմն հնչեցրած տրամաբանական մտքերի, նրա վկայությունները հաճախ հակասում են իրար, կամ դրանց մեկնաբանությունները միակողմանի են: Գ. Զավալիշինը ևս չի**

76 Դավիդով Դ., Ռազմական հուշեր, ևշվ. աշխ., էջ 523:

77 Щеголев П.Е., А.С. Грибоедов и декабристы, ևշվ. աշխ., էջ 24 (այստեղ արժև հիշատակել ռազմական նախարար Տատիշչևի կողմից տրված այն խստիվ հրահանգի մասին, որ Ա. Գրիբոյեդովին ձերբակալելիս ուշադիր լինեն, որ նա ոչինչ չհասցնի ոչնչացնել: Փաստորեն՝ Ա.Պ. Երմոլովը չի կատարել ոչ միայն Գլխավոր շտաբի պետ Բ. Գիրբիչի, այլև ռազմական նախարար Տատիշչևի հրամանը – Վ.Ս.)

78 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., ("Рассказы о Грибоедове", Смирнов Д.), ևշվ. աշխ., էջ 231-232, 280-281: 182

նշում ղեկաբրիստական շարժմանն Ա. Գրիբոյեդովի «մասնակցության» աստիճանը:

Ձերբակալված ժամանակ իրեն Պետերբուրգ տանելու ճանապարհին մտքը՝ **Նաստասյա Ֆեոդորովնային՝ այդ «թունդ ճորտատիրուհուն»**, Ա. Գրիբոյեդովը լուրեր է ուղարկել, որ **նա ոտքի հանի իր «միլիոնավոր ծանոթներին»⁷⁹: Ի դեպ, ինչպես նշել ենք, Ֆ. Բուլգարինի վկայություններում⁸⁰, Պ. Կատենինին⁸¹, Ի. Պասկևիչին ուղղած Ա. Գրիբոյեդովի նամակներում⁸² կարելի է հանդիպել Ա. Գրիբոյեդովի կողմից դըրսևորած տիրասիրության, միապետության համոզված կողմնակցի և «ցարիստական տրամադրությունների» մասին բազում վկայությունների⁸³:**

Ա. Գրիբոյեդովի շփումները ղեկաբրիստներից ունաց հետ շարունակվել են նաև կալանքից ազատվելուց և Կովկաս վերադառնալուց հետո: Այդ մասին վկայող փաստաթղթերը կարելի է բաժանել երկու խմբի՝ **Ա. Գրիբոյեդովի նամակները և ղեկաբրիստների հուշերը:** Առաջիններից մենք տեղեկանում ենք, որ նա Ա. Երմոլովի մոտ միջնորդել է իր մըտերիմ, ղեկաբրիստ **Ա.Ա. Դորրինսկու** համար, ում հետ 1826թ. մայիսի 19-ից մինչև մայիսի 24-ը կալանավորված է եղել Գլխավոր շտաբի շենքում⁸⁴: 1826թ. նոյեմբերի 9-ին Ա. Դորրինսկուն ուղղված նամակում Ա. Գրիբոյեդովը գրում է. «Բանտարկության սիրելի՛ ընկեր, մի՛ մտածեք, որ ես Ձեր մասին մոռացել եմ... Դեռ վերջերս, երբ ես ուղեկցում էի նրան (Ա. Երմոլովին – Վ.Ս.) Սերտիչայի, նա նորից կրկնեց՝ հավաստիացնելով, որ ես Ձեր հարցում կարող եմ լիովին հանգիստ լինել, որ ինքը Ձեր գունդը փոխելու համար մեծ արգելքներ չի կանխատեսում...»⁸⁵:

Չայտնի է, որ Կովկաս արքայազմ ղեկաբրիստները ձգտում էին ծառայության անցնել այնպիսի գնդերում, որոնք մասնակցում էին ռազմական գործողություններին. դա **նրանց հնարավորություն կտար արագ արդարացվելու (ռեաբիլիտացվելու)** և նույնիսկ ծառայողական

79 Нечкина М.В., Следственное дело..., ևշվ. աշխ., էջ 22:

80 А.С. Прибоедов. Его жизнь и гибель..., ևշվ. աշխ., էջ 17:

81 Прибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 22:

82 Նույն տեղում՝ էջ 264:

83 Այս մասին տես նաև՝ Վ. Միմոնյան, «Ա. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից» (Չակասական Գրիբոյեդովը) մեր հոդվածը, Կանթեղ, Գիտ. հոդվածների ժողովածու, 4(29) Աստղիկ հրատ., Երևան, 2006, էջ 186-187:

84 Нечкина М., Прибоедов и декабристы, 1977, ևշվ. աշխ., էջ 601:

85 Прибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 265:

աստիճանով վեր բարձրանալու: Ա. Դոբրինսկուն հենց այդպիսի մի գնդում տեղավորելու համար էլ միջնորդում էր Ա. Գրիբոյեդովը:

Առավել հետաքրքիր են Ա. Գրիբոյեդովի այն նամակները, որոնցից երևում է, թե ինչպես է նա **փորձել օգնել իր ընկեր և ազգական Ա. Օդոնսկուն**: Մեզ է հասել երկու նամակ, որոնցից մեկն ուղղված է Ի.Ֆ. Պասկևիչին, մյուսը՝ Ա. Գրիբոյեդովի բարեկամու-հի Վ.Ս. Միկլաշևիչին: 1828թ. դեկտեմբերի 3-ին գեներալ Պասկևիչին ուղղած նամակի վերջում «Գլխավորը» վերտառությամբ հատվածում Ա. Գրիբոյեդովը գրում է. «Իմ անգին բարերար, հիմա առանց երկար նախարանի պարզապես նետվում եմ Ձեր ոտքերի տակ և եթե Ձեզ հետ լինեի, կանեի դա ու Ձեր ձեռքերը կողողեի արցունքներով: Հիշե՛ք իմ մեկնելուց առաջ Թուրքմենշայի գիշերը: Օգնե՛ք փրկել դժբախտ Ալեքսանդր Օդոնսկուն: Հիշե՛ք թե ինչ բարձր աստիճանի վրա է Ձեզ դրել տեր Աստված: Իհարկե, Դուք վաստակել էք դա: Բայց ո՞վ է Ձեզ միջոցներ տվել այդպիսի վաստակի համար. նույն Ինքը, ում համար վախճանվող դժբախտի փրկությունը շատ ավելի կարևոր է հաղթանակի որոտից, գրոհներից և մեր ողջ մարդկային անհանգստություններից»⁸⁶:

Վերևում ներկայացրել ենք Ա. Օդոնսկու հետ Ա. Գրիբոյեդովի հարաբերությունների հարցը, ուստի նրան օգնելու ցանկությունն ամենին էլ պատահական չէր: Վ. Միկլաշևիչին հղած նամակը նույնպես լի է Ա. Օդոնսկու հանդեպ Ա. Գրիբոյեդովի զգացմունքային դրսևորումներով: Նա գրում է. «Ո՞վ կհավատա՝ Ալեքսանդրն այս պահին բրբրում է հոգիս... Հիմա գրում եմ Ի.Ֆ. Պասկևիչին: Եթե նա հիմա էլ նրան չօգնի, գետնի տակն անցնեն նրա բոլոր պարզները, փառքն ու հաղթանակների որոտները. այդ ամենը չարժեն մի դժբախտի և ու՛մ մահից փրկելուն: Աստված իմ, քո ճանապարհներն անհիմանայի են...»⁸⁷: Ակնհայտ է, որ Վ. Միկլաշևիչին հասցեագրված տողերը՝ ուղղված Ա. Օդոնսկուն, գրեթե համընկնում են Ի. Պասկևիչին հղած նամակի բովանդակությանը:

Կովկաս արքայական իր ընկերների հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի պայացույցներից են **Պյոտր Բեստուժնի «Памятные записки» («Հիշարժան գրառումներ» - Վ.Ս.)** վերնագրով հուշերը, որոնցում առանձին տեղ է հատկացված նաև Ա. Գրիբոյեդովին⁸⁸:

Կովկասում Ա. Գրիբոյեդովը **փորձել է օգնել իր հետ մտերիմ ղեկաբերիստներին** և դժվար թե նա ի վիճակի լիներ օգնելու այստեղ

86 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 1, с. 331:

87 Նույն տեղում էջ 318:

88 Воспоминания Бестужевых, кн. 1, с. 363:

արքայական մյուսներին, որոնցից շատ-շատերին նա նույնիսկ չէր էլ ճանաչում (**նույն Պ. Բեստուժնի վերոհիշյալ վկայության մեջ նշվում է, որ Ա. Գրիբոյեդովը «ձգտում էր եղբայրաբար մտերմանալ» իր հետ և «ծանոթանալ հալածվածների հետ»**): **Պ. Բեստուժնը կոնկրետ չի նշում, թե որքան էր «հալածվածների» համար Ա. Գրիբոյեդովի օգնության չափն ու ձևը, նաև օգնության արդյունքները: Կովկասում նա շարունակել է կապեր պահել իր հին ծանոթ-բարեկամների հետ (Մ. Պուշչին, Ն. Օրժիցկի, Գ. Գավիդով, Ե. Լաչինով և այլք): Գեներալ Գեների Գավիդովն իր հուշերում ոչ մի այլ օրինակ չի նշում: Ավելին, նա չի ձգտել սերտ հարաբերություններ ունենալ բոլոր ղեկաբերիստների հետ: Այս առումով ուշագրավ են վրացի պատմաբան Վանո Շադուրիի փաստարկները, որոնց համաձայն՝ Կովկաս արքայական ղեկաբերիստները խմբակներ էին ստեղծում իրար հետ շփվելու համար, սակայն տեղեկություններ չկան Վրաստանում ղեկաբերիստական այդ նորաստեղծ խմբակների հետ Ա. Գրիբոյեդովի կապերի մասին»⁸⁹:**

Ներկայացնելով այն հարցերը, թե տեղյա՞կ էր արդյոք Ա. Գրիբոյեդովը գաղտնի կազմակերպությունների գոյությանը, որքա՞ն էր նրա տեղեկացվածությունը դրանց ծրագրերին, եղե՞լ է արդյոք գաղտնի կազմակերպության անդամ և կատարե՞լ է արդյոք նրանց հանձնարարությունները, ամփոփենք վերը ներկայացված վերլուծությունները և եզրակացնենք հետևյալը.

1. Գատելով ձերբակալված վերոհիշյալ ղեկաբերիստների ցուցմունքների վերլուծությունից՝ Ա. Գրիբոյեդովը տեղյակ է եղել գաղտնի կազմակերպությունների գոյությանը և մասամբ՝ ծրագրերին:

2. Գաղտնի կազմակերպությունների ծրագրերին և մարտավարությանը տեղեկացված լինելու չափը թույլ է տվել Ա. Գրիբոյեդովին չհամաձայնել և չընդունել դրանք: Այս հանգամանքներից ելնելով՝ նա չէր կարող անդամակցել այդ կազմակերպություններին ու, առավել ևս, կատարել նրանց հանձնարարությունները:

3. Ա. Գրիբոյեդովի դատողություններում չտեսնելով իրենց համախոհ մեկին՝ ղեկաբերիստական շարժման ղեկավարները ո՛չ «կատարյալ», ո՛չ էլ «անկատար» կամ «թերի» ձևերով նրան չեն ընդգրկել իրենց շարքերում: Նրանք խուսափել են դրանից՝ ելնելով նաև իրենց տաղանդավոր ընկերոջը գուր տեղը վտանգի չենթարկելու հանգամանքից:

89 Шадури В., Грибоедов и грузинская культура, кн. 1, с. 10:

4. Ա. Գրիբոյեդովը միջնորդ չի եղել դեկաբրիստների և Ա. Երմոլովի միջև. բացի նրանից, որ վերջինս ազատախոհ էր, հաճախ էր «վոլտերյան ոգով» քննադատել տիրող կարգերը⁹⁰, այլ ապացույցներ չկան, թե նա լայն կապերի մեջ է եղել դեկաբրիստների հետ և Ա. Յակուբովիչի հետ էլ իբր խորացած է եղել նրանց գաղափարների մեջ: Կիևի «Վասիլկովյան ուպրավայից» Ա. Գրիբոյեդովի շտապ, առանց հրաժեշտի հեռանալը (ավելի ճիշտ՝ փախուստը) ոչ միայն վկայում է «Բելոցերկովյան» արքայասպան ծրագրին նրա անհամաձայնության մասին, այլ, հաշվի առնելով վկայությունների և ապացույցների բացակայությունը, ցույց է տալիս ապստամբների և Ա. Երմոլովի միջև Ա. Գրիբոյեդովի՝ որպես միջնորդ հանդիսանալու շուրջ արհեստականորեն ձևավորված վարկածի սնանկությունը:

5. Գեներալ Ա. Երմոլովի և դեկաբրիստների հետ հարաբերությունների հարցի շուրջ նշենք երկու կարևոր հանգամանք. նախ՝ դեկաբրիստների և Ա. Երմոլովի՝ կազմակերպականորեն կամ գործնականորեն կապված լինելու մասին «վկայությունները» խոսակցությունների վրա հիմնված ենթադրություններ են, երկրորդ՝ դատելով Ա. Երմոլովի մասին տարբեր դեկաբրիստներին տրված հարցերից ու պատասխաններից, գիտենալով «Կովկասի պրոկոնսուլի» (Երմոլովի) հանդեպ կայսր Նիկոլայ I-ի անբարյացակամությունը (իսկ դա նշանակում է՝ ունենալով նաև վերջինիս ոչ պաշտոնական հավանությունը)՝ Հետաքննող կոմիտեն ամեն գնով կջանար «հայտնաբերել» Ա. Երմոլովի կապերը դեկաբրիստների հետ: Գրանից հետո պարզ է, որ գեներալը միայն պաշտոնանկ լինելով չէ, որ կազատվեր: Այդ դեպքում չէր փրկվի նաև Ա. Գրիբոյեդովը, եթե նույնիսկ վերջինիս խնդրանքով նրա մայրը ոտքի հաներ իր «միլիոնավոր ծանոթներին» և նույնիսկ՝ ամենագոր Ի. Պասկևիչին:

5. Ա.Ա. Գրիբոյեդովի մշակութային գործունեությունն Այսրկովկասում

1818թ. հոկտեմբերից մինչև 1823թ. մայիսը Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի և գրական-մշակութային գործունեության վրա, ինչպես նշվել է, ազդել են արևելյան միջավայրը ռուսական դիվանագիտական առաքելության կազմում, Վրաստանում՝ Ա. Երմոլովը և նրա շրջապատը, իսկ 1823-1825թթ. որոշակիորեն՝ նաև դեկաբրիստական միջավայրը Մոսկվայում ու Պետերբուրգում: 1818-1821թթ. են վերաբերում նրա գործունեության շուրջ պատկերացում տվող ճանապարհորդական գրառումները («Նոթերը» - Վ.Ս.): 1821թ. նոյեմբերին՝ Ա. Երմոլովի շտաբում ծառայության անցնելուց հետո¹, Ա. Գրիբոյեդովը բնակվում է **Ալեքսանդր Օրբելիանիի**՝ Էկզարքի հրապարակում գտնվող տան մոտ: Նրա հարևաններն են եղել վրաց հանգուցյալ արքա **Տերակլ II-ի դուստր Թերլե Բագրատինը**՝ **Վախթանգ Օրբելիանիի կինն իր Ալեքսանդր, Դմիտրի և Վախթանգ որդիների հետ**²:

Թիֆլիսում Ա. Գրիբոյեդովը հաճախել է քաղաքի լավագույն «ընտանեկան խմբակները», հաճախակի և ցանկալի հյուր եղել **Վ. Մադաթովի, Ռ.Ս. Խովենի** տներում: Վերջինիս հիմնած հատուկ մի հանձնաժողով ձեռնարկել է ֆեոդալական Վրաստանի՝ **“Уложения царя Вахтанга”** («Վախթանգ թագավորի կանոնները» - Վ.Ս.) օրենսդրության ռուսերեն թարգմանությունը, և կարծիք կա, որ դրա աշխատանքների հանդեպ չէր կարող հետաքրքրություն ցուցաբերած չլինել Գրիբոյեդովը³, **ինչը, սակայն, փաստացի չի ապացուցվում**:

Թիֆլիսում նա հաճախակի հյուր է եղել նաև **Հախվերդովներին. Պ.Ն. Հախվերդովան նրա ապագա կնոջ՝ Նինա (Նինո) Ճավճավաձեի դաստիարակն էր**: Նինայի եղբայր **Դավիթ Ճավճավաձեն իր դուստր Թամար Գրուզինսկայային** պատմել է, որ Ա. Գրիբոյեդովը հաճախ է

90 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, кн. 2, с. 71: 186

1 Орлов Вл., Грибоедов. Очерк жизни и творчества, кн. 2, с. 32, տես նաև՝ АКАК, հ. VI, մաս II, 1875, փաստ. 471, էջ 255-256:

2 Ениколопов И., Грибоедов и Восток, кн. 2, с. 41:

3 Ениколопов И.К., А.С. Грибоедов в Грузии и Персии, Историко-биографический очерк, Закинига, Тифлис, МСМХХІХ (1929), сс. 30-31.

այցելել **Ա. Ճավճավաձեի** կալվածք՝ Ծինանդալ, որտեղ, հիանալով չըբնաղ բնությանը, գրել է բանաստեղծության սևագիր ուրվագիծ⁴, մտերիմ է եղել գրողներ **Գ. Օրբելիանիի**, **Գ. Էրիսթավիի** հետ: Ճավճավաձեների տանը սովորական էին և ընդունված ռուսերենն ու ֆրանսերենը, դաշնամուրի և մոդայիկ պարերի ուսուցումը, հետաքրքրությունը թատրոնի և գրականության հանդեպ: Այսպիսի միջավայրը, բնականաբար, հոգեհարազատ էր Գրիբոյեդովին: **Ֆ. Բուլգարինի**, **գրականագետ Կ. Պոլևոյի**, **Վ. Բեկինսկու** տեղեկություններից էլնելով՝ կարծիք է հայտնվել, որ «Խելքից պատուհաս» կատակերգական պիեսն Ա. Գրիբոյեդովը ստեղծել է 1821-1822 թթ.՝ Կովկասում (Թիֆլիսում - Վ.Ս.)⁵:

Բացի վրացի գործիչներից՝ Ա. Գրիբոյեդովը շփումներ է ունեցել նաև հայ գործիչների հետ: Ներսիսյան դպրոցի վերնահարկում տեղավորված «Ազնուականաց կլուբում» (ակումբում) և Ռեստորացիայում (ճաշարանում) իր հաճախակի այցելությունների ժամանակ պոետը հանդիպումներ է ունեցել հայ հոգևոր, աշխարհիկ և զինվորական գործիչների հետ: Ներսիսյան դպրոցում նա դասեր է լսել և ծանոթացել ուսուցիչների, տեսուչների և աշակերտների հետ: Ա. Գրիբոյեդովն առնչություններ է ունեցել *դպրոցի տեսուչ, հայերենի, ռուսերենի և վալեյզագրության ուսուցիչ, հայ նշանավոր բանաստեղծ ու հայ նոր գրականության սաղմնավորողներից մեկի՝ Տարություն Ալամդարյանի (1796-1834) և Փարիզից հրավիրված ֆրանսերենի ուսուցիչ, նշանավոր հայագետ, բազմաթիվ լեզուների տիրապետող, եվրոպական քաղաքակրթությանը քաջածանոթ Տակոբ Շահան-Ջրպետյանի (1772-1828) ու Ներսես Աշտարակեցու հետ*⁶:

Ա. Երմուլովի մոտ Ա. Գրիբոյեդովը ծառայել է մեկուկես տարի: Կովկասյան Առանձին կորպուսը բավականին խայտաբղետ կազմ ուներ: Բացի 1812թ. Հայրենական պատերազմի վետերաններից՝ այստեղ ծառայում էին նաև տարբեր հանցանքների համար Կովկաս արքայական մարդիկ, ինչպես նաև *նրանք, ովքեր այս կամ այն կերպ առնչվել էին դեկաբրիստական շարժմանը*: Ա. Գրիբոյեդովը Կովկասում ծանոթացել և մտերմացել է առաջադեմ հայացքների տեր զինվորական, իշխան **Գ.Օ. Բեհրուջովի (հայագգի գեներալ Վ.Օ. Բեհրուջովի եղբոր**

- **Վ.Ս.)** հետ: Ինչպես ասվել է, հենց այդ թափառումների տարիներին է վերջնականապես ձևավորվել **Ա. Գրիբոյեդովի փիլիսոփայական, հասարակական և գեղարվեստական աշխարհայացքը**⁷: Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության մտահղացումն ու արարումը, հետագայում նաև առաջին բեմադրությունը նույնպես սերտորեն կապվում են Պարսկաստանում և Այսրկովկասում նրա անցկացրած տարիների հետ⁸:

Հայտնի է, որ 1824-1825թթ. գրաքննության արգելքի պատճառով Պետերբուրգում Ա. Գրիբոյեդովին չի հաջողվում հրատարակել և բեմադրել իր պիեսը: Ըստ Ա. Վեսելովսկու⁹ և Դ. Ջուբարևի¹⁰ վկայությունների՝ 1827թ. դեկտեմբերին գեներալ Ա. Կրասովսկու 20-րդ դիվիզիայի սպաները Երևանի բերդում՝ նախկին սարդարի պալատի հայելապատ դահլիճում, *առաջին անգամ բեմադրել են «Խելքից պատուհաս»-ը, որին միայն մեկ անգամ ներկա է եղել նաև Ա. Գրիբոյեդովը*: Նույնն է վկայում նաև *Միքայել Ղամազյանը*, հիշատակելով 1831թ. Թիֆլիսում Ռոման Բագրատիոնի տանն իր կողմից կազմակերպած թատերական ներկայացման մասին¹¹:

Ա. Գրիբոյեդովի ստեղծագործական կյանքում *“1812 zod” (“1812 թըվական” - Վ.Ս.), “Радамист и Зенобия” (“Հռադամիստ և Չենոբիա” - Վ.Ս.) և “Грузинская ночь” (“Արացական գիշեր” - Վ.Ս.)* պիեսների մտահղացումները նորություն էին լինելու: Եթե մինչ այդ Ա. Գրիբոյեդովը գրել է կատակերգություն, էպիգրամներ և բանաստեղծություններ, ապա վերոհիշյալ մտահղացումները ողբերգությունների նախագծեր էին, ինչը վկայում է *նրա աշխարհայացքում տեղի ունեցած փոփոխությունների մասին*: Ասվածի վկայություն կարելի է համարել Ա. Գրիբոյեդովի հետ 1828թ. կայացած մի գրույցի մասին Ստ. Բեգիչևի հուշերը, ըստ

7 Орлов Вл., Грибоедов, Очерк жизни..., ևշվ. աշխ., էջ 34, տես նաև՝ Пиксанов Н., “К характеристике Грибоедова. Поэт и смыльные декабристы”, ևշվ. հոդվ., նշխմերի 15:

8 Пиксанов Н.К., Творческая история “Торя от ума”, ևշվ. աշխ., էջ 77:

9 Веселовский А.Н., “Очерк первоначальной истории “Торя от ума”, “Русский архив”, Москва, 1874, №6, с. 1514-1575.

10 Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., էջ 68 (Դ. Ջուբարևը, “Пустынный Горегиубанский” կեղծանվան տակ, «Խելքից պատուհաս»-ի առաջին բեմադրության մասին (որում նա խաղացել է Չագլու դերը) հոդված է տպագրել 1832թ. “Тифлиссские ведомости” №3-ում՝ էջ 72), տես նաև՝ Тунян В.Г., Пристрастие Азербайджана к истории Армении: Мифы и реалии, Ер., Институт истории, 2013, с. 230-236.

11 М.Г. (Միքայել Ղամազյան - Վ.Ս.), “Первая представления комедии Торя от ума” 1827-1832, Из воспоминаний участника М.Г., “Вестник Европы”, Санкт Петербург, 1875, Десятый годъ - книга 7-я, томъ IV, с. 319-332, տես նաև՝ Оվչինիկով Ս., «Գրիբոյեդովը Երևանում», «Գրական թերթ», 1945, №2:

4 Ениколопов И., Грибоедов и Восток, ևշվ. աշխ., էջ 44-45, տես նաև նույնի՝ Грибоедов в Грузии, При участии М. Заверина, Под ред. О. Поповой, Изд-во “Заря Востока”, Тбилиси, 1954, сс. 15-16.

5 Ениколопов И., Грибоедов и Восток, ևշվ. աշխ., էջ 46-47:

6 Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., էջ 34: 188

որոնց՝ պոետն ասել է, որ կատակերգություններ այլևս չի գրի և գրել է ողբերգություն (խոսքը «Тружинская ночь»-ի մասին է – Վ.Ս.)¹², որից էլ անգիր հատվածներ է կարդացել իրեն: Որքան էլ Ստ. Բեգիչևը համոզել է նրան, որ կարդա ամբողջ ողբերգությունը, նա ոչ մի կերպ չի համաձայնել:

Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես ասվել է, պայմանավորված էին այն ժամանակվա առաջադեմ հասարակության շրջանում «Խելքից պատուհաս»-ի ունեցած հաջողության, իշխանությունների կողմից դրա բեմադրության ու սպագրության արգելքի, ինչպես նաև 1825թ. դեկտեմբերի 14-ի իշխանափոխության անհաջող փորձից հետո սկսված հետաքննության, դատավարության ու պատիժների, այդ թվում՝ Ա. Գրիբոյեդովի մի քանի մտերիմների մահապատժի, ոմանց էլ քսոթելու հանգամանքներով:

Գիտական բանավեճ առաջացրած հարցերից է «*Радомство и Зенобия*» ողբերգության նախագծի ստեղծման շուրջ առաջացած խնդիրը: Ըստ հետազոտող Վ. Պարսամյանի՝ որոշ ուսումնասիրողներ ենթադրել են, որ այդ պիեսի մտահղացման նյութն Ա. Գրիբոյեդովը վերցրել է ֆրանսիացի դրամատուրգ Քրեբիլեոնի համանուն պիեսից, որը 1810թ. թարգմանվել է ռուսերեն և խաղացվել ռուսական բեմերում: Ոմանք էլ նշել են, որ պոետը նյութը քաղել է հռոմեացի պատմիչ Տակիտոսի «*Annales*»-ից («Տարեգրություններ» – Վ.Ս.) և Մովսես Խորենացու «Տայոց պատմություն»-ից¹³: Սակայն ամենից ուշագրավն այն է, որ նույնանուն ձեռագիր մի պիես էլ թողել է Հարություն Ալամդարյանը՝ «Հրամիզդ յեվ Ջենոբիա, եղերգութիւն յարարս երիս, 1833, ի ս. Խաչ վանքն Նոր Նախիջևանայ, աշխատասիրութեամբ Յարութիւն Ալամդարեանց» վերնագրով¹⁴:

Երզնկյանների ընտանեկան արխիվում պահվող Հ. Ալամդարյանի այդ ձեռագիրը հետագայում չի գտնվել, իսկ հետազոտող Վ. Պարսամյանը հարց է բարձրացրել, թե արդյո՞ք դա Ա. Գրիբոյեդովի նույնանուն ողբերգության նախագծի փոխադրությունը չէր, ինչով կասկածի է ենթարկել մեծանուն հայ բանաստեղծի կողմից պիեսի՝ ինքնուրույն

գրած լինելու արժանահավատությունը: Ճիշտ է, նա հավանական ենթադրություն է կատարել, թե Հ. Ալամդարյանի պիեսը միգուցե ինքնուրույն գործ է, բայց միաժամանակ էլ անապացույց կերպով պնդել է, թե. «Այն հաստատ գրվել է Գրիբոյեդովի անմիջական ազդեցության տակ»¹⁵:

Այդ թվացյալ հավանականությունը մեծավաստակ գիտնականը կապել է այն հանգամանքի հետ, որ Ա. Գրիբոյեդովի՝ Թիֆլիսում եղած տարիներին տեղի առաջադեմ հայ մտավորականության, մասնավորապես Ներսիսյան դպրոցի շուրջ համախմբված առաջադեմ գործիչների մեջ մեծ է եղել հետաքրքրությունը թատրոնի հանդեպ¹⁶: Վկայակոչելով հրապարակված մի տեղեկություն՝ Վ. Պարսամյանը գրում է, որ 1824-1828թթ. Ներսիսյան դպրոցի դահլիճում ուսուցիչների և աշակերտների ջանքերով ներկայացումներ են կատարվել¹⁷:

Հասկանալի է, որ 1820-ական թվականներին թատրոնի հանդեպ ցուցաբերած հայերի հետաքրքրությունը հեղինակը կապել է «Խելքից պատուհաս»-ի հեղինակի և առհասարակ ռուս դասական դրամատուրգիայի բարերար ազդեցության հետ, սակայն, ցավոք, նա անտեսել է մի քանի կարևոր հանգամանք. նախ՝ ինչի՞ց ելնելով չպնդել, որ Ա. Գրիբոյեդովն իր ողբերգության նախագիծը ստեղծել է իտալացի Մեթասթազիոյի կամ ֆրանսիացի Քրեբիլեոնի նույնանուն ստեղծագործությունների ազդեցության տակ. Ռուսաստանում վերջիններս ճանաչում գտած և թարգմանված հեղինակներ էին, ինչը չի կարելի հաստատապես պնդել Այսրկովկասում նրանց ստեղծագործությունների տարածման հանգամանքների առումով: Բացի այդ, տիրապետելով ֆրանսերենին՝ Ա. Գրիբոյեդովը Պետերբուրգում կարող էր այդ գործերին ծանոթ լինել հենց ֆրանսերեն բնագրերից (վերևում նշել ենք, որ նա կատարել է օտար հեղինակների թարգմանություններ): Երկրորդ՝ եթե ուշադրություն դարձնենք Հ. Ալամդարյանի գրած պիեսի վերնագրին, ապա այնտեղ գրված են «աշխատասիրութեամբ Յարութիւն Ալամդարեանց» և ոչ թե՛ «թարգմանութեամբ» բառերը: Հ. Ալամդարյանին ճանաչող և սերտ շփումներ ունեցող անձանց կողմից փաստված չէ, թե նա կարող էր այլոց մաքերն ու ստեղծա-

12 Прибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 45:

13 Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 36:

14 Ե. Մուրեկ, «Ռուսահայ բեմի յեվ դրամատուրգիայի արձանները», «Հայաստան», Ընկ. Ալ. Մարտունի-Մյասնիկյանի անվ. Հայ արվեստագետների ստու. «Գոմուկիստ»-ի խմբագրություն, Բագու, 1925, №1, հունիս, էջ 53-72, տես նաև Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 36:

15 Պարսամյան Վ., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 36-37:

16 Նույն տեղում՝ էջ 37:

17 Նույն տեղում՝ էջ 37 (Վ. Պարսամյանը դա վկայակոչում է Միքայել Պատկանյանի արխիվից հայտնաբերած նյութերի հիման վրա Արամ Երեմյանի՝ 1933թ. Վենետիկում հրատարակած «Ռուսահայ թատրոնի պատմություն» գրքից):

գործությունների մտահղացումները որպես իրենք ներկայացրած լինել: Երրորդ՝ ուշադրության չի արժանացել նաև այն հանգամանքը, որ Հ. Ալամդարյանի վերոհիշյալ ձեռագիրը, ըստ Ե. Սուրենի (Երզնկյան), եղել է ավարտուն պիես, իսկ Ա. Գրիբոյեդովի գրածն ավարտուն տեսքով մեզ չի հասել և լույս հայտնի է որպես մտահղացում-նախագիծ: Վերջին հաշվով ինչից էլ նկատվում է, որ Հ. Ալամդարյանն իր «Հրամիզդ յեվ Չեռնոբիա...» ստեղծագործությունն արարել է հանդիպելով Ա. Գրիբոյեդովի համաճարտական նախագծի գաղափարական ազդեցությունից ներշնչված, եթե հայտնի չէ որևէ փաստ կամ վկայություն, թե Ա. Գրիբոյեդովն ու Հ. Ալամդարյանը երբևիցե քննարկել են պատմական այդ թեման: Այսպես, Ա. Գրիբոյեդովն իր պիեսի նախագիծը ստեղծել է 1826-1828թթ. միջակայքում, իսկ Հ. Ալամդարյանի՝ մեզ չհասած ձեռագիր պիեսի ստեղծման հայտնի տարեթիվը, ըստ նույն Ե. Սուրենի, 1833 թվականն է: Բացառվում է, որ Ա. Գրիբոյեդովի նախագծի ստեղծման ժամանակից 5-7 տարի անց Հ. Ալամդարյանն իր ձեռքի տակ ունենար մտահղացած պիեսի ձեռագիր նախագիծը և ներշնչվեր դրանից, քանի որ փաստացի հայտնի է, որ Ա. Գրիբոյեդովի ստեղծագործությունների նախագծերը գրված են եղել նրա “Черновая тетрадь” նոթատետրում, որը նա 1828թ.՝ Պարսկաստան մեկնելուց առաջ, թողել էր Ռուսաստանում՝ Ստ. Բեգիչևի մոտ (իր հուշերում Ստ. Բեգիչևը ևս չի նշում, որ այդ «Տետրում» եղել է պիեսի նախագծի ամբողջական տեքստը): Ստ. Բեգիչևի միջոցով էլ այն դարձել է պոետի կենսագիր և ազգական Գ. Սմիռնովի սեփականությունը: Գ. Սմիռնովի մեկնաբանություններով ուղեկցվող Ա. Գրիբոյեդովի “Черновая тетрадь”-ի հրատարակումից հետո, ինչպես նշել ենք, այդ ձեռագիրն անհետ կորել է, այսինքն՝ մեզ չի հասել¹⁸, իսկ Գ. Սմիռնովը նույնպես չի նշում ողբերգության ամբողջական տեքստի մասին: Փաստերով ամրագրված չէ, որ Ա. Գրիբոյեդովի վերոհիշյալ պիեսը շրջանառվել է Այսրկովկասում, և որ դրան ծանոթ է եղել Հ. Ալամդարյանը:

Նշել ենք, որ “1812 год”, “Грузинская ночь” ու “Радамист и Зено-

18 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., №163 ծանոթագրության մեջ (էջ 332) խմբագիր Զին. Դավիդովը նշում է, որ Գ. Սմիռնովը «Գրիբոյեդովի սևագիր տետրը» նյութը տպագրել է “Русское слово”, 1859, № 4, № 6-ում, իսկ հետո նրա այրին այդ նյութը հանձնել է “Беседы общества Русской словесности”, 1868г. Вып. II, отд. 2, պարբերականին (էջ 3-30), որտեղ տպվել է “А.С. Грибоедов” վերնագրով, բայց այդ նյութերն անհետացել են: Տես նաև Միմոնյան Վ.Ռ., “Գրվագներ Ա. Գրիբոյեդովի կովկասյան գրական-մշակութային գործունեությունից”, ԵՃԾՊՀ գիտական աշխատությունների ժողովածու, 2013, հ. II(49), էջ 98-99, տես նաև Шаломытов Н.В., “К биографии А.С. Грибоедова” (Из неизданных материалов Д.А. Смирнова), նշվ. աշխ., էջ 1031-1039:

дня” նախագծերում գիտական բանավեճ առաջացրած հարցերից է ճորտատիրության հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի խնդիրը, բայց քանի որ դրանք մեզ չեն հասել, ապա այս դեպքում հարկ է կարևորել միայն այն հանգամանքը, որ Ա. Գրիբոյեդովի ողբերգությունների նախագծերը ստեղծվել են Այսրկովկասում և կրել են արևելյան միջավայրի ազդեցությունը:

Ա. Գրիբոյեդովի՝ արևելյան թեմաներով գրված աստեղծագործություններից հարկ է նշել 1820թ. արարված “Путник” («Ճամփորդը» - Վ.Ս.) պոեմը, որը “Кальяичи” («Ղալյանչի» - Վ.Ս.) վերնագրով մեզ է հասել հատվածաբար: Վ. Կյուխելբերկերի վկայությամբ պոեմում «հիանալիորեն պատկերված է Պարսկաստանը»¹⁹:

Ա. Գրիբոյեդովի գրական ժառանգության մեջ մեծ ուշադրության է արժանացել “О Гилану” («Գիլանի մասին» - Վ.Ս.) գրությունը²⁰: Մակայն այս դեպքում էլ վիճահարույց խնդիր է դարձել այդ «Գրության» ստեղծման թվականի հարցը: Դրա ստեղծման տարեթիվը ոմանք (Ա. Գրիբոյեդովի կենսագիր Գ. Սմիռնով, պրոֆեսոր Ի. Շլյապկին, Ի. Ենիկոլոպով) համարել են 1822-1823 թվականները, իսկ ոմանք էլ՝ 1827 թվականը (Ն. Պիկասնով): Մեր կարծիքով այս խնդրի շուրջ առկա տեսակետներին հարկ չկա ավելացնել ևս մի նոր վարկած, քանի որ դա հատկապես գրողի գաղափարական հասունացման խնդիրների հարցում էապես ոչինչ չի փոխելու:

1825թ. սեպտեմբերի վերջերին գտնվելով Կարբադայի և Անդրկուբանի լեռնեցի ապստամբների դեմ Ա. Երմոլովի ուղարկած գեներալ Ա. Վելյամինովի պատժիչ ջոկատի կազմում՝ Ա. Գրիբոյեդովը, խիստ տպավորվելով մի շարք արյունոտ ընդհարումներից ու գնդակահարություններից, գրել է “Хуапуки на Чегеме” («Գիշատիչները Չեգեմի վրա» - Վ.Ս.) բանաստեղծությունը: Բացի վերոհիշյալ արյունոտ իրադարձությունների ճնշող տպավորության և Ա. Երմոլովի դաժան հաշվեհարդարների մասին իր ընկերների պատմող նամակներից՝ ոչ մի այլ վկայություն չկա, որ Ա. Գրիբոյեդովը փորձած լիներ ընդդիմանալ Ա. Վելյամինովի և Ա. Երմոլովի ձեռնարկած դաժանություններին

19 Грибоедов А.С., Сочинения..., 1971, т. 2, էջ 20-23 (“Кальяичи” բանաստեղծությունը), տես նաև Ենիկոլոպով Ի.Կ., Грибоедов и Восток. Второе, переработанное издание, Изд-во “Айтастан”, Ереван, 1974, 28:

20 Грибоедов А.С., Сочинения..., 1971, т. 2, նշվ. աշխ., էջ 87-89 (տրված է Գիլանի հարուստ երկրամասի վերաբերյալ խմբությունը, աշխարհագրական, տնտեսական, ժողովրդագրական առանձնահատկությունները, պատմական փաստերը, քաղաքական գործիչների գործունեության գնահատականները):

կամ էլ հանդես եկած լինել լեռնական կաթարդացիների, չեչենների, ակուշինցիների իրավունքների պաշտպանությամբ: Վ. Կյուխելբեկերին գրած մի նամակում Ա. Գրիբոյեդովը ցավով միայն ափսոսանք է հայտնում վերոհիշյալ պատերազմական գործողությունների ժամանակ քաջարի լեռնեցի իշխան **Ջամբուտի (Ջամբուլատի)** արյունոտ հաշվեհարդարի կապակցությամբ²¹:

Գրանից վեց տարի առաջ գրած իր մեկ այլ նամակում Ա. Գրիբոյեդովը հիացմունքով է արտահայտվում Ա. Երմոլովի մասին, թե ինչպես է նա ծնկի բերել «գիշատիչ չեչեններին ու ակուշինցիներին», և ավելացնում. «Այդ երկրամասում երբեք մեր թագավորի տերունական իշխանությունն այդքան հուսալիորեն չէր հենվել ժողովուրդների հնազանդության վրա, ինչպես հիմա»²²:

Մեկ այլ առիթով Ա. Երմոլովի մասին նա ասում է. «Դեռ պետք են դրանց նման գործեր ու սխրանքներ, որոնք արվել են այստեղի գլխավոր պետի կողմից այն ժամանակվանից, երբ նա սկսեց կառավարել իրեն վստահված հողերն ու ժողովուրդներին... Եվ լեռնեցիների անսանձելիությունը կմնա անցյալի մասին պատմվածքներում»²³:

Իր «Նոթեր»-ում Ա. Գրիբոյեդովը գրում է. «Պետք է տեսնել ու լսել, թե ինչպես է նա (Երմոլովը – Վ.Ա.) հավաքում Կովկասից այն կողմի կաթարդիկյան և այլ իշխաններին, վարժ թագմանների միջոցով, ովքեր չեն համարձակվում բաց թողնել նրա մի բառն անգամ, ինչպես է ահաբեկում ունկնդիրների երևակայությունը մահակով, կախադանով, ամեն տեսակ մահապատիժներով, հրդեհներով. սա՛ խոսքով ասած, իսկ գործով նմանապես հնազանդեցնում է անհնազանդներին. զենքի դիմելով կախում, հրկիզում է նրանց գյուղերը. ի՛նչ արած»²⁴:

Կովկասյան ժողովուրդներին սանձելու և հնազանդեցնելու մասին վկայությունները հակասության մեջ են մտնում վերոհիշյալ «О Гиляни» գրության շուրջ կատարված այն պնդման հետ, թե **Ա. Գրիբոյեդովը հատուկ վերաբերմունք է ունեցել փոքր ժողովուրդների իրավունքների**

հանդեպ: Որպես փաստարկ է բերվել «Գրության» վերջում պոետի գրած առաջարկը, թե. «Գիլանում, եթե հաստատվի մեր տիրապետությունը, անհրաժեշտ է կառավարել նրանց տեղական սովորույթներով՝ անկախ մեր մինիստրություններից»²⁵:

“Хиацики на Чеземе” բանաստեղծության, վերոհիշյալ նամակների և “О Гиляни” գրության համեմատական քննությունից պարզվում է, որ Ա. Գրիբոյեդովի համոզմամբ պետք էր տարբեր մոտեցումներ ցուցաբերել Հյուսիսային Կովկասում և Գիլանում ապրող ժողովուրդների նկատմամբ. եթե առաջինի պարագայում Ա. Գրիբոյեդովը հակված էր արդարացնելու կովկասցիների նկատմամբ ցարական իշխանությունների բռնությունները, ավելին՝ խրախուսում էր դրանք, ապա Գիլանի հնարավոր նվաճման դեպքում առաջարկում էր ցարիզմի քաղաքականությունը պայմանավորել և կառուցել՝ տեղացիների ազգային իրավունքները և մահմեդական սովորույթները հաշվի առնելով: Չի բացառվում, որ Ա. Գրիբոյեդովը, տվյալ փուլում հաշվի առնելով կայսրության շահերը, որպես դիվանագետ գիտակցում էր միջազգային տարանցիկ ճանապարհների խաչմերուկում գտնվող Գիլանի ռազմաքաղաքական և տնտեսական կարևորությունը:

Այսրկովկասում (Հարավային Կովկասում) Ա. Գրիբոյեդովի մշակութային գործունեությանն է վերագրվել **Թիֆլիսում հանրային գրքարարանի և “Тифлисские ведомости” թերթի հիմնադրումը, սակայն դրանք հաստատող ուղղակի փաստեր և վկայություններ չեն պահպանվել: Գրանց մասին հավանական ենթադրությունները դարձյալ պոետի գործունեության օգտին չեն: Հակառակ ենթադրությունների՝ փաստված է, որ լուսավորության գերատեսչությանը հղած դիմումի մեջ վերոհիշյալ թերթի հրատարակության անհրաժեշտության մասին մի շարք համոզիչ փաստարկներ է ներկայացրել Ի.Ֆ. Պասկևիչը, որի առաջարկն ընդունվել է, և թերթը լույս է տեսել այդ նպատակով ստեղծված հատուկ կոմիտեի և Թիֆլիսի զինվորական նահանգապետի հսկողության ներքո»²⁶:**

Ինչ վերաբերում է հանրային գրադարան հիմնելու նախաձեռնությանը, ապա հայտնի է միայն, որ **այն հավանության է արժանացել լու-**

21 Грибоедов А.С., Сочинения..., 1971, т. 2, №24, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255 (1825թ. նոյեմբերի 25-ի նամակը), տես նաև Ениколопов И.К., А.С. Грибоедов в Грузии и Персии, №24, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

22 Грибоедов А.С., Сочинения..., 1971, т. 2, №24, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255 (1819թ. հունվարի 21-ի նամակը “Сын отечества”-ի խմբագրին):

23 Նույն տեղում՝ էջ 51:

24 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», №24, 224, 225, էջ 11 (հմմտ. «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագիծ» և ԱՄՆ-ի միջև համեմատությունների շուրջ մեկնաբանություններում լեռնական ժողովուրդներին «սանձելու» մասին դրվագը):

25 Ениколопов И., Грибоедов в Грузии, №24, 224, 225, էջ 31 (հմմտ. Նախիջևանի մահմեդական ցեղերի իրավունքների պաշտպանության և ներգաղթյալ հայերին հարկադրաբար Դարալագյազ (Վայք) տեղափոխելու վերաբերյալ վկայությունների հետ (АКАК, т. VII, փաստ. 623, էջ 647-649)):

26 Նույն տեղում՝ էջ 56-58, տես նաև Шадური Вано, Грибоедов и грузинская культура, №24, 224, 225, էջ 28:

սավորության գերատեսչության ղեկավարի տեղակալ (ապագայում՝ ներքին գործերի նախարար) **Գ. Քյուրովի** կողմից, սակայն վերջինս *մերժել է այդ գործին դրամ հատկացնելու խնդրանքը*²⁷՝ առաջարկելով դրանում ներգրավել հասարակությանը: Այդ գաղափարն այդպես էլ մեծ արձագանք չի ստացել և 6 տարում հավաքվել է ընդամենը 80 ուրվի: Արդյունքում Թիֆլիսում հանրային գրադարան ստեղծելու փորձը ձախողվել է²⁷:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

1. Գրական արժեքներ կայացնող գործերն Ա. Գրիբոյեդովը մտահղացել ու ստեղծել է Պարսկաստանում և Այսրկովկասում անցկացրած տարիներին: Նրա՝ որպես անհատի, վերջնական ձևավորումը տեղի է ունեցել նշված ժամանակաշրջանում: «Խելքից պատուհաս» կատակերգության մտահղացումն ու արարումը և առաջին բեմադրությունը ևս կապված են եղել Պարսկաստանում և Այսրկովկասում գրողի անցկացրած տարիների հետ:

2. Պարսկաստանում և Այսրկովկասում Ա. Գրիբոյեդովը սերտ կապեր է ունեցել վրացի և հայ մտավորականների, հոգևոր, գինվորական և հասարակական գործիչների հետ, սակայն վկայություններ չեն պահպանվել վրացի, հայ և այլազգի հասարակ ժողովրդի հետ նրա բարեկամական, սրտացավ հարաբերությունների մասին: Նրա հետաքրքրությունները կովկասյան և պարսից ժողովուրդների նկատմամբ²⁸ դրսևորվել են նաև առանձին գրական գործերում, մասնավորապես՝ «Օ Դուլան» գրության մեջ, «Радамист и Зенобия», «Грузинская ночь» և վերոհիշյալ ողբերգությունների նախագծերում:

3. Այլազգիների և կովկասյան ազատատենչ ազգային փոքրամասնությունների ճակատագրի հանդեպ Ա. Գրիբոյեդովի «մտահոգությունների» մասին գերազանհատված տեսակետները չի կարելի ընդունել միանշանակ. փաստերն ավելի շուտ վկայում են պետական շահի գիտակցման, նրա հայացքներում հաճախ հանդիպող մեծապետականության (շովինիզմի) գերակայության հանգամանքների օգտին: Դրանցում բացակայում են նաև ճորտական կախման մեջ գտնվող տեղական ժողովուրդների՝ ճորտությունից ազատագրելու ջատագով եղած լինելու մասին փաստերը:

4. Անընդունելի է այն տեսակետը, թե Հարություն Ալամդարյանն իր «Հրամիզը և Ջենոբիա...» ստեղծագործությունն արարել է հատկապես Ա. Գրիբոյեդովի և նրա նույնանուն պիեսի նախագծի գաղափարական ազդեցության տակ, քանզի փաստված չէ ժամանակակիցների վկայություններով: Վկայություններ չկան նաև, որ հայ մտավորականների հետ շփումների ընթացքում Ա. Գրիբոյեդովը Թիֆլիսում կամ որևիցե այլ վայրում ներկայացրած լիներ իր մտահղացումները: Դրա փոխարեն, դատելով Ստ. Բեգիչևի հետ «Грузинская ночь» մտահղացումն ուրվագծի շուրջ գրույցի մասին վերոհիշյալ վկայությունից, հայտնի է, որ նույնիսկ շատ մտերիմ մարդկանց մոտ Ա. Գրիբոյեդովը դժկամությամբ է ծավալվել դեռ չավարտած իր ստեղծագործությունների մասին, ինչպես նաև հայտնի չէ, որ այդ ամենը նա ներկայացրած լիներ օտարներին:

5. «1812 год», «Радамист и Зенобия» և «Грузинская ночь» ստեղծագործությունների նախագծերը՝ որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական հայացքների վկայություններ, ներկայացվող պնդումների համար չեն կարող հիմնավոր ապացույց հանդիսանալ. դրանք մեզ չեն հասել ամբողջությամբ, և դրանց գաղափարական կառուցվածքի շուրջ դատողությունները հանդես են բերելու նոր ենթադրություններ ու վարկածներ:

6. Ա. Գրիբոյեդովն ակտիվ մասնակցություն է ունեցել Այսրկովկասի հասարակական-մշակութային կյանքին, սակայն այս ասպարեզում ևս սեփական նախաձեռնություններ չի ցուցաբերել. նա դրանց առնչվել է կամ իր վերադասների հանձնարարականները կատարելիս, կամ միացել է այլոց նախաձեռնություններին:

Մենագրության սույն բաժնում հնարավորինս աշխատել ենք պարզաբանել Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքներին ու գործունեությանը վերաբերող հարցերը՝ փորձելով գերծ մնալ տարբեր ժամանակներում դրանց քաղաքականացման կամ այլևայլ գաղափարախոսությունների ազդեցություններից: Գտնում ենք, որ առանց այստեղ արծարծված խնդիրների թերի կլինի Կովկասում և Պարսկաստանում Գրիբոյեդով-դիվանագետի ծավալված գործունեության լուսաբանումը: Ընդհանրացնելով մենագրության այս գլուխը՝ փաստենք հետևյալը.

1. Ա. Գրիբոյեդովը ժամանակի կրթված մարդկանցից մեկն էր, որի քաղաքական հայացքները սկսել են ձևավորվել Ալեքսանդր Առաջինի

27 Ениколопов И.К., А.С. Грибоедов в Грузии и Персии, ևշվ. աշխ., էջ 55-61:

28 Грибоедов А.С., Сочинения..., 1971, т. 2, ևշվ. աշխ., էջ 87-89, Միանկյան Վ.Ռ., «Դրվագներ Ա. Գրիբոյեդովի կովկասյան գրական-մշակութային գործունեությունից», ևշվ. հոդված., էջ 91-101:

գահակալության (1801-1825թթ.) առաջին փուլում, երբ եվրոպական լուսավորիչների գաղափարների և ազդեցության ներքո ռուսական հասարակությունը կայսրից ակնկալում էր պետական համակարգի լուրջ բարեփոխումներ: Ժամանակակիցների նման Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման գործում մեծ ազդեցություն է թողել 1812թ. Հայրենական պատերազմը: Դրա հետևանքը կարելի է համարել նրա առաջադիմական հայացքներին ուղեկցող ազգայնական դրսևորումները, ինչը խորթ չէր նաև դեկաբրիստներին, և ինչը խորհրդային պատմագիտության կողմից ներկայացվել է որպես հայրենասիրություն: Այս փուլում է սաղմնավորվել Ա. Գրիբոյեդովի, այսպես կոչված, պետական մտածելակերպը, ինչը վերջնականապես ձևավորվել է նրա դիվանագիտական ծառայության ժամանակ:

2. Այն պնդումը, թե Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքները ձևավորվել են հենց դեկաբրիստների ազդեցության ներքո, ապացուցված չէ: Այն ճիշտ չէ նաև այն պատճառով, որ Ա. Գրիբոյեդովի հայացքների ձևավորման ժամանակ դեկաբրիստական շարժումը դեռ նոր էր թափ հավաքում, իսկ երբ այն ավելի կազմակերպված բնույթ է ստանում և որոշակի ազդեցություն ձեռք բերում ռուսական հասարակության առանձին շերտերի վրա, Ա. Գրիբոյեդովը գտնվում էր Այսրկովկասում և Պարսկաստանում, ուստի չէր կարող ազդվել դրանցից: Պետերբուրգ վերադառնալիս նա արդեն ձևավորված անհատ էր և կյանքի շատ հարցերի վերաբերյալ ուներ իր մտեցումները, որոնք այդ փուլի առաջադեմ մարդկանց աշխարհայացքային դրսևորումների նման տարբերվում էին դեկաբրիստների մտեցումներից ու պատկերացումներից: Դա հատկապես վերաբերում է իրենց նպատակին հասնելու համար դեկաբրիստների որդեգրած խռովարարական մարտավարությանը կամ «հեղափոխական ճանապարհին», ինչն անընդունելի էր պետական մտածելակերպի տեր և Ռուսաստանի պետական շահերն ամեն ինչից վեր դասող Ա. Գրիբոյեդովի համար: Մտերիմ լինելով դեկաբրիստներից շատերի հետ, տեղյակ լինելով նրանց ծրագրերին, նաև դեկաբրիստական գաղտնի կազմակերպությունների գոյությանը՝ Ա. Գրիբոյեդովը, այնուամենայնիվ, դեկաբրիստ-հեղափոխական չէր:

3. Մեզ չի հասել Ա. Գրիբոյեդովի ձեռքով գրված գոնե մեկ գրավոր լուրջ փաստաթուղթ, որում հստակ ձևակերպված լինեին նրա քաղաքական կողմնորոշումն ու հայացքները, իսկ դատել դրանց մասին՝ ելնելով նրա թողած գրական ժառանգությունից (առավել ևս, եթե այն ընդամենը մեկ լուրջ գործ է), բավարար չէ: Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքների

մասին կարելի է խոսել ընդհանուր դրույթներով. իր ժամանակի համար որոշ հարցերում նա ուներ առաջադիմական հայացքներ, այլ իրադրություններում պահպանողական էր և նույնիսկ ազգայնական, իսկ որոշ խնդիրների իրականացման գործում ազատամիտ մտեցումների հետևորդ էր: Մա երևում է նրա հակասական բնավորության վերլուծություններից²⁹: Ելնելով խորհրդային շրջանի գաղափարական հրամայականից՝ Ա. Գրիբոյեդովի «քաղաքական գործունեության» հարցում խորհրդային հետազոտողներն ամեն գնով փորձել են առաջադիմական որոշ հայացքների տեր գրողին արհեստականորեն ներկայացնել որպես ցարական ինքնակալության դեմ պայքարի առաջամարտիկ ու հեղափոխական, որպիսին, դատելով վերը լուսաբանված հարցերից, նա չի հանդիսացել:

4. Հարցի նկատմամբ դասակարգային մտեցման հետևանքով միտումնավոր շրջանցվել է այն հանգամանքը, որ ամեն դեպքում Ա. Գրիբոյեդովը հանդիսացել է ռուսական ազնվականության և «ոսկե երիտասարդության» ներկայացուցիչ, ինչպես նաև XIX դարի առաջին երեսնամյակի Ռուսաստանի ներքին և արտաքին գաղութային ծավալապաշտական քաղաքականությունն իրականացնող պաշտոնյա:

5. Հայ մշակութային գործիչներից ոմանց հետ Ա. Գրիբոյեդովի առնչությունները հիմք են հանդիսացել, որ նրանցից մեկի՝ Հ. Ալամդարյանի «Հրամիզդ և Ձենոբիա» ստեղծագործության արարումը կապվի Ա. Գրիբոյեդովի գաղափարական ազդեցության հետ, ինչը, սակայն, չի ապացուցվում: Ինչպես «Խելքից պատուհաս» պիեսում, այնպես էլ մյուս ստեղծագործությունների մտահղացումներից հայտնի գաղափարներում արտահայտված չեն գրողի հակաճորտատիրական հայացքներն ու համոզմունքները: Ժամանակի առաջադեմ շատ գործիչների պես գրական իր գործերում նա փորձել է խարազանել ճորտատիրական կարգերի առավել այլանդակ դրսևորումները, սակայն, այդքանով հանդերձ, այդ երևույթի դեմ պայքարի կողմնակից չի հանդիսացել:

29 Սիմոնյան Վ., «Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից» (Հակասական Ա.Ս. Գրիբոյեդովը), «Կանթեթ» գիտ. հոդվածների ժողովածու, Երևան, 2006, 4(29), էջ 182-192:

ԳԼՈՒԽ Բ

Ա.Ս. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրությունները և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը

1. Ա.Ս. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների ու տնտեսագիտական հետաքրքրությունների խնդիրը պատմագրության զնահատմամբ

Ա.Ս. Գրիբոյեդովի սոցիալ-տնտեսագիտական հետաքրքրությունների շուրջ պատմագիտական տեսակետներին անդրադառնալիս հարկ է նշել մի կարևոր հանգամանք. այս **հարցի շուրջ երբեք և ցայսօր առանձին ուսումնասիրություններ չեն ստեղծվել**: Նրա տնտեսագիտական հետաքրքրությունների խնդիրը միշտ եղել է Ա. Գրիբոյեդովի կյանքին, գրական կամ դիվանագիտական գործունեությանը վերաբերող աշխատությունների **ենթաթեմաներից մեկը**: Առաջին հերթին այս ամենը դարձյալ պայմանավորված է աղբյուրների սակավությամբ: Հարցի շուրջ հիմնական աղբյուր է հանդիսանում «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»¹ ուրվագիծը, որի բուն տեքստը մեզ չի հասել: Հասել են միայն դրա «Вступление к проекту устава Российской Закавказской компании» («Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծի ներածություն» - Վ.Ս.) և, դրան կից «Записка об учреждении Российской Закавказской компании» («Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման մասին գրություն» - Վ.Ս.) մասերը:

«Устав Российской Закавказской компании» («Ռուսական-անդր-

¹ Ուսումնասիրության մեջ «Նախագիծ» վերնագիրը տվել ենք թարգմանված ձևով, որի ճիշտ տարբերակը մեր կարծիքով «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ» ձևն է: Հայերեն թարգմանված ձևով ենք ներկայացրել նաև «Նախագիծ» առանձին մասերի վերնագրերը - Վ.Ս.:

կովկասյան ընկերության կանոնադրության» - Վ.Ս.) փաստաթղթի բովանդակության մասին պատկերացում է տալիս միայն **գեներալ-համբարակ (ինտենդանտ) Մ.Ս. Ժուկովսկու** մեզ հասած «**Գիտողությունների**» տեքստը: Բացի «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծից՝ Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրություններն ուսումնասիրելու համար իբրև աղբյուր են հանդիսացել ընկերներին ուղղված նրա մի քանի, մասնավորապես **1823թ. հոկտեմբերի 8-ին Ա.Վ. Վսեվոլոժսկուն և 1827թ. ապրիլի 16-ին Ֆ.Վ. Բուլգարինին** ուղղված նամակները, նրա հեղինակած «*Заниска о лучших способах вновь построить город Тифлис*» («**Թիֆլիս քաղաքը կըրկին կառուցելու լավագույն ձևերի մասին գրություն**» - Վ.Ս.) նյութը:

Հարցի ուսումնասիրման համար որպես աղբյուր են հանդիսանում նաև ժամանակակիցների, հատկապես **Ն. Մուրավյով-Կարսկու հուշերը**, ինչպես նաև Թիֆլիսի, Մոսկվայի և Մանկտ Պետերբուրգի **արխիվներում պահպանված որոշ փաստաթղթեր**:

Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հայացքների «փայլուն» դրսևորում համարվող վերոհիշյալ «Նախագծի» շուրջ խորհրդային պատմագիտության մեջ առկա մեկնաբանությունները ժամանակագրորեն կարելի է բաժանել երկու փուլի. առաջինը 1917-1951 թվականներն են, մյուսը՝ դրանից հետո ընկած ժամանակաշրջանը, երբ **Օ.Պ. Մարկովան** հրապարակում է պահպանողական Մ.Ս. Ժուկովսկու «Գրությունը»:

Քանի դեռ **Ա.Պ. Մալչինսկու** հրապարակած նյութերը վերագրվում էին դեկաբրիստ **Ի.Գ. Բուրցովին (որոշ տեղերում գրվում է Բուրցև ձևով - Վ.Ս.)**, խորհրդային մասնագետները **զգույշ էին «Նախագծի» մասին դրական կարծիք հայտնելու հարցերում**: Խորհրդային պատմաբան **Վ.Տ. Պաշուտոն** գրում է. «Գրիբոյեդովի նախագիծն առաջադիմական բուրժուական ուղղվածության՝ ռուսական տնտեսագիտական մտքի ակունավոր նվաճում էր»²:

Մակայն գոյություն ունեն նաև «**Նախագծին» տրված բացասական գնահատականներ**: Այսպես, Ն.Կ. Պիկսանովը գրում է. «Անդրկովկասյան ընկերության նախագծում Գրիբոյեդովը՝ որպես անհրազործելի ծրագրեր կազմող ընչաքաղց, արագ ու շուտ հարստանալ երազող իմպերիալիստ-նվաճող, Պասկևիչին նոր նվաճումների գայթակղող (օրինակ՝ «Ընկերության

համար» անհրաժեշտ Բաթում նավահանգիստը թորքերից խլել) և, վերջապես, որպես պլանտատոր, ձգտում էր օգտագործել վերաբնակեցված հայերի անօգնական դրությունը և գյուղացիներ գնելով Ռուսաստանում, «Ընկերության» մալարիաշատ պլանտացիաներում օգտագործելով՝ ստրկացնել թե՛ մեկին, թե՛ մյուսին»³:

Ամեն ինչ փոխվում է Օ.Պ. Մարկովայի կողմից գեներալ Մ.Ս. Ժուկովսկու «Գրության» հրապարակումից հետո, և պարզվում է, որ Ա. Մալչինսկու հրապարակած և դեկաբրիստ Ի.Գ. Բուրցովին վերագրվող **քննադատություններն իրականում պատկանում էին պահպանողական Մ. Ժուկովսկուն**: Ամեն ինչ վերջապես իր տեղն է ընկնում. **դեկաբրիստ Ի. Բուրցովը, ըստ խորհրդային գաղափարախոսության, չէր կարող քննադատել «դեկաբրիստ» կամ նրանց համակրող Ա. Գրիբոյեդովի կազմած տնտեսագիտական նախագիծը, իսկ ցարիզմի և ճորտատիրական կարգերի կողմնակից Մ. Ժուկովսկին կարող էր դա անել**:

Ներկայացնենք քննարկվող հարցերի շուրջ XIX դարում հրապարակված առավել հիշարժան նյութերը:

Դրանցից առաջինը՝ ստորագրություն և ամսաթիվ չունեցող «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման կանոնադրության նախագծի ներածությունը», **1831թ.** հրապարակվում է «*Тифлисские ведомости*» պարբերականում⁴: Այս հրապարակումը կարևոր է նրանով, որ հանրությունն առաջին անգամ ծանոթացավ Ա. Գրիբոյեդովի և **Պ. Զավիլեյսկու** կողմից կազմված «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության» գաղափարին: Այսօր դժվար է ասել, **թե արդյո՞ք հրապարակված նյութը հենց բնօրինակի արտատպումն էր, թե՛ դրա համար որպես հիմք էր ծառայել այլ աղբյուր**: Այնուամենայնիվ, բոլոր հետազոտողների կողմից ցայսօր **այն ընդունվում է որպես բնօրինակ, քանզի «Ներածության» ոչ մի այլ տարբերակ հայտնաբերված չէ**:

Այս հրապարակումից հետո Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» մասին երկար ժամանակ ոչ մի այլ անդրադարձ չի լինում: Նույնիսկ նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող հրապարակումներում հեղինակները ո՛չ նրա տնտեսագիտական հետաքրքրություններին և ո՛չ էլ «Ռուսական-անդրկովկասյան ընկերությանը» վերաբերող հարցերին չեն անդրադառնում: Դրա հիմնական պատճառը փաս-

2 Пашуто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова. "Исторические записки", "Наука", Москва, 1947, т. 24, с. 135.

3 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, изд. ш2ю., էջ 148:

4 Маркова О.П., "Новые материалы о проекте Российской Закавказской компании А.С. Грибоедова и П.Д. Зави-лейского", "Исторический архив", Изд-во АН СССР, Москва, 1951, т. VI, с. 325.

տաթղթերի բացակայությունն էր: Այս հարցերի վերաբերյալ զգալի առաջընթաց է տեղի ունենում 1891թ., երբ Ա. Մալշինսկին հրապարակում է Ի.Ֆ. Պասկևիչին ուղղված «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության ներածությանը» կից «Գրությունը»⁵:

Ըստ Օ. Մարկովայի ենթադրության՝ «Ա.Պ. Մալշինսկու հրապարակած «Գրություն»-ն անկասկած նրա մոտ է հայտնվել «Մորազան դրուժինայի» անդամ իշխան Ա.Պ. Շչերբատովի արխիվից»⁶: Բացի «Գրությունից»՝ Ա. Մալշինսկին «Կանոնադրության» տեքստից հրապարակում է նաև Ի. Պասկևիչի և Ի. Բուրցովի դիտողություններով հատվածները: Դժբախտաբար նա չի նշում այն աղբյուրը, որտեղից իրեն հաջողվել էր ձեռք բերել հրապարակած նյութերը: Տեքստի բովանդակությունից հասկանալի չէ նաև, թե Ա. Մալշինսկու ձեռքի տակ արդյո՞ք «Կանոնադրության» բնօրինակն է եղել, թե՞ նա օգտվել է միայն «դիտողություններով» ուղեկցվող տեքստից: Ավելի հավանական է երկրորդ տարբերակը, քանի որ, ինչպես նշում է հետազոտող Մ.Վ. Նեչկինան, Ա. Մալշինսկին «Նախագծի» տեքստը ոչ մի տեղ մեջ չի բերում և «իր խոսքերով» սահմանափակվում է դրա որոշ կետերը ներկայացնելով⁷:

Ինչ վերաբերում է Ի. Բուրցովին վերագրվող մեկնաբանություններին, ապա, ինչպես հետագայում պարզվում է Օ. Մարկովայի հրապարակումից, դրանց՝ Ի. Բուրցովին պատկանելը ևս խիստ կասկածելի է. ամենայն հավանականությամբ Ա. Մալշինսկու ձեռքի տակ եղել է «Կանոնադրության» ոչ ամբողջական տարբերակի շուրջ Մ. Ժուկովսկու և Ի. Պասկևիչի դիտողություններով տեքստի տարբերակը: «Նախագծի» մասին հիշատակում է նաև Ի. Պասկևիչի կենսագիր Ա.Պ. Շչերբատովը՝ նշելով, որ «Նախագիծը» ճանաչվել է «հասարակության համար անօգուտ»⁸:

Մ. Նեչկինայի աշխատության մեջ հիշատակվում է նաև Ե.Գ. Վեյդենբաումի անունը, ով հավանաբար ծանոթ է եղել «Նախագծի» բնագրին, քանի որ իր հրապարակումներում նշել է 1828թ. հուլիսի

17-ի թվագրությամբ «Նախագծի» ներածության կազմման և 1828թ. սեպտեմբերի 7-ի թվագրությամբ՝ դրան կից «Գրությունն» Ի. Պասկևիչին ներկայացնելու ամսաթվերը⁹:

Այսբանով ավարտվում են Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրություններին և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» նվիրված XIX դարի հրապարակումները:

Հարցի շուրջ պատմագիտության զարգացումը հասկանալու համար հարկ է անդրադառնալ Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքներին կամ XIX դարի հրապարակումներում հանդիպող ճորտատիրական կարգերի հանդեպ նրա վերաբերմունքի հարցերին, ինչը կարևոր է նաև «Նախագիծ»-ը վերլուծելու համար, որովհետև այն ևս ներկայացվել է որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական հայացքների փայլուն դրսևորում: Քանի որ մինչև XIXդ. 50-60-ական թվականները դեկաբրիստական շարժման և ճորտատիրական կարգերի քննադատության շուրջ թեմաները գրաքննության կողմից արգելված էին, ապա այդ ժամանակաշրջանի հրապարակումներում անդրադարձ էր կարող լինել ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերին: Սակայն ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ դրանց հեղինակները համաձայն էին Ա. Գրիբոյեդովի՝ ճորտատիրական կարգերին դեմ լինելու տեսակետին, քանի որ Ա. Գրիբոյեդովը համարվում էր ժամանակի առաջադեմ մարդկանցից մեկը, իսկ առաջադեմ լինելը ենթադրում էր նաև ճորտատիրության հանդեպ ունեցած բացասական վերաբերմունքի դրսևորում:

XIXդ. 60-80-ական թվականների հրապարակումների հեղինակները ևս չեն արձարծել ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերը, քանի որ, ինչպես նշել ենք, նրանց համար Ա. Գրիբոյեդովը նախևառաջ գրող էր, ապա միայն՝ դիվանագետ կամ «քաղաքական-տնտեսական» գործիչ: Նույնիսկ նրա ժամանակակիցներից շատերն են իրենց հուշերում հաճախ խուսափել Ա. Գրիբոյեդովի քաղաքական և սոցիալական հայացքներին անդրադառնալուց: Շատ քիչ հեղինակներ են պատասխանատվություն ստանձնել անդրադառնալու դրանց: Այդպիսի հեղինակներից է Վ.Ի. Սեմևսկին, որը, արդեն 1880-ական թվականներին, իր աշխատության մեջ անդրադառնալով Ա. Գրիբոյեդովին, նշում է, որ վերջինս իր

5 Мальшинский А.П., "Неизданная записка А.С. Грибоедова", "Русский вестник", Тип-я "Общественная польза", С-Петербург, 1891, сентябрь, том двести шестнадцатый, с. 3-17.

6 Маркова О.П., "Новые материалы ...", նշվ. աշխ., էջ 330:

7 Нечкина М.В., А.С. Грибоедов и декабристы, Изд-во Академии Наук СССР, Москва, 1951, с. 538.

8 Тушан В.Г., А.С. Грибоедов и Армения, Спонсоры изд-я Институт "Открытое общество" (Фонд Джорджа Сороса), Тип-я "Амарас", Ереван, 1995, с. 55, տես նաև՝ Шербаатов А.П., Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, Типо-литография Р. Голике, С.Петербург, 1891, т. III, с прилож., с. 333.

ստեղծագործություններում եռանդուն կերպով խարազանել է ճորտատիրական կարգերը¹⁰:

Ա. Գրիբոյեդովի՝ ճորտատիրական կարգի քննադատություն պարունակող ստեղծագործությունների թվարկումը Վ. Սեմևսկին սկսում է նրա վաղ շրջանի «Стыдотом» («Ուսանողը» - Վ.Ս.) կատակերգությունից, որի հարուստ և ազդեցիկ հերոսներից *Չվեզդովը*, առանց հաշվի առնելու, որ հյուսն Ֆոմկայի որդուն հավաքագրել էին բանակում ծառայելու, պահանջում էր նրանից գանձել 25 ռուբլու բահրան, ասելով՝ «*Ձորակոչիկը ցարի համար է, իսկ բահրան՝ տիրոջ*»¹¹: Շարունակելով զարգացնել միտքը՝ Վ. Սեմևսկին հիշատակում է Ա. Գրիբոյեդովի դեկաբրիստ ընկերներին և անդրադառնում «*Խելքից պատուհաս*»-ին, որում, ըստ նրա, բազմաթիվ են ճորտատիրական կարգերի դեմ բողոքները: Այսուհանդերձ, բացի Ա. Գրիբոյեդովի գրական գործերից՝ Վ. Սեմևսկին չի հիշատակում նրա ձեռքով գրված գեթ մեկ վավերագիր, որում վերջինս իր բողոքն արտահայտած լինեք ճորտատիրական կարգերի դեմ: Կարևոր է նաև այն, որ Վ. Սեմևսկին Ա. Գրիբոյեդովին դասում է ճորտատիրական կարգերի դեմ բողոքող գրողների, այլ ոչ թե պետական կամ հասարակական գործիչների շարքին:

Ինչպես նշվեց, XIX դարի 80-90-ական թվականների հրապարակումներում փորձեր են արվում քաղաքականացնել գրողի անձը: Արդեն հիշատակված Ա.Ս. Սուվորինի, Ս.Ա. Անդրեևսկու, Մ.Օ. Մենշիկովի, Վ.Վ. Ռոզանովի և այլոց հրապարակումներում փորձ է արվում Ա. Գրիբոյեդովի «*Խելքից պատուհաս*» պիեսի հերոս Չացկուն զետեղել դեկաբրիստների հակառակորդների ճամբարում: Ճիշտ է, դրանցում չի քննարկվում ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցը, բայց նայնպես նրանց կողմից Չացկուն հակադեկաբրիստ ներկայացնելը ենթադրում էր, որ նրա կերպարն արարող հեղինակը նույնպես դեկաբրիստների հակառակորդն էր և, բնականաբար, դեմ չէր ճորտատիրությանը կամ գոնե չեզոք դիրքորոշում ուներ դրա հանդեպ:

XX դարի սկզբին գիտական ասպարեզ էլած Ն.Կ. Պիկսանովը, ծանոթ լինելով ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի շուրջ թե՛ սուվորինյան, թե՛ նրանց հակառակորդների

հրապարակումներին, արտահայտած իր կարծիքներով, ինչպես արդեն նշել ենք, կարևոր ազդեցություն է ունենում խորհրդային տարիների գիտական շրջանակներում լայն տարածում ստացած գրեհիկ սոցիոլոգիայի հետևորդների տեսակետների վրա:

Ն. Պիկսանովը «*Խելքից պատուհաս*»-ի հերոս Չացկու ելույթը համարում է ոչ թե ճորտատիրական կարգերի, այլ դրանց առանձին դրսևորումների դեմ բողոք: Ճիշտ է, այս հրապարակումներում Ն. Պիկսանովը չի անդրադառնում ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքին, նրա տնտեսագիտական հետաքրքրություններին, ինչպես նաև «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» վերաբերող հարցերին, բայց նայնպես դեկաբրիստական շարժման հանդեպ Ա. Գրիբոյեդովի առնչությանը տրված նրա գնահատականից, թե. «...Գրիբոյեդովը շարժման խանդավառներից չէր»¹², կարելի է եզրակացնել, որ Ա. Գրիբոյեդովը նաև ճորտատիրական կարգերի վերացման խանդավառներից չէր:

Այսքանով կարելի է ավարտել մեր կողմից քննարկվող հարցի վերաբերյալ պատմագիտության մինչխորհրդային փուլը:

Ինչպես Ա. Գրիբոյեդովի քաղաքական հայացքների, այնպես էլ տնտեսական և սոցիալական խնդիրների հանդեպ նրա վերաբերմունքի հարցերը սկսում են քաղաքականացվել և օգտագործվել նաև 1920-ական թվականների քաղաքական հոսանքների պայքարում:

Արդեն հիշատակված գրեհիկ սոցիոլոգիայի ուղղության հետևորդները, օգտվելով XIX դ. վերջի և XX դարի սկզբի հեղինակների հրապարակումներում հնչած որոշ տեսակետներից, սկսում են զարգացնել այն միտքը, թե. «*Չացկին բողոքում էր ոչ թե ճորտատիրական կարգերի, այլ դրանց դրսևորումների դեմ*»: Դրա մասին է արտահայտվում Մ. Նեչկինան Վ. Վագրիստովի վերոհիշյալ հոդվածը քննադատելիս¹³: Պ. Լեպեշինսկին գրում է. «*Չի կարելի ժխտել այն փաստը, որ նա (Չացկին - Վ.Ս.) կալվածատեր էր, արիստոկրատ, ճորտատիրության՝ նախառեֆորմային Ռուսաստանի այդ հիմնական խոցի դեմ ոչ այնքան ջերմորեն բողոքող*»¹⁴:

Այս մեկնաբանություններն իրենց արտացոլումն են գտնում նաև պաշտոնական տեսակետներում: Այսպես, Ա.Վ. Լունաչարսկին, գու-

12 Грибоедов А.С., Полное собрание сочинений. Под ред. и с примеч. Н.К. Пиксанова и И.А. Шляпкина, Издание разряда изящной словесности Императорской Академии наук, С.Петербург, 1911, т. 1, с. СХХ.

13 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1977, кн.2, ш.2, с. 38:

14 Лепешинский П., "Молния гнева", кн.2, հոդված:

10 Семевский В.И., Крестьянский вопрос в России в XVIII - первой половины XIX века, Тип-я Товарищества "Общественная польза", С.Петербург, 1888, т. 1, с. 424.

11 Նույն տեղում՝ էջ 424-425:

գահեռներ անցկացնելով Ա.Ս. Պուշկինի և Ա.Ս. Գրիբոյեդովի միջև, գրում է. «Պետք է ասել, որ Պուշկինը շատ մտա էր Գրիբոյեդովի աշխարհայացքին ինչպես դրական (այսինքն՝ նրա ունեցած գրեթե հեղափոխական ատելությունն այն ժամանակվա բարձրաշխարհիկ հասարակության և նրա ընդհանուր ճղճիմության հանդեպ), այնպես էլ բացասական իմաստով (այսինքն՝ նա, ինչպես և Գրիբոյեդովը, այնքան էլ հստակ չէր դնում ճորտատիրական իրավունքի հանդեպ վերաբերմունքի հարցը): Գրիբոյեդովը, օրինակ, ընդհանրապես այն բաց է թողել իր կատակերգության մեջ կամ էլ Չացկու ճառերում ցուցաբերել է իր տեսակով ժողովրդապահպանողական հնամտածողության դրույթներ»¹⁵:

Ա. Գրիբոյեդովի մահվան հարյուրամյակի առիթով 1928-1929թթ. հրապարակված վերոհիշյալ աշխատանքներում ևս անդրադարձ է կատարվում նրա սոցիալական հայացքներին:

Չին. Դավիդովի խմբագրությամբ այս փուլում հրապարակված **Ն. Մուրավյով-Կարսկու հուշերում անդրադարձ կա «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին»**: Նրան են պատկանում «Նախագիծը» **Սանկտ-Պետերբուրգում գրված լինելու**, դրանում Պ. Չավիլեյսկուն վերագրված **գրագրի երկրորդական դերի**, «Նախագիծ»-ն անգլիական **«Արևելահնդկական ընկերության» հետ համեմատելու**, Ի. Պասկևիչի կողմից **«Նախագծի» մերժման մասին** վկայությունները, որոնք հետագայում լայնորեն քննարկվում են խորհրդային պատմագիտության մեջ: **Գեներալ Ն. Մուրավյով-Կարսկու հուշերից երևում է, որ նա, մեղմ ասած, այնքան էլ բարյացակամ չի վերաբերվել Ա. Գրիբոյեդովին, ուստի նրա կարծիքներին հարկ է վերաբերվել վերապահորեն՝ դրանք համադրելով այլ աղբյուրների հետ:**

Այստեղ ևս արժե առավել մանրամասն ներկայացնել Ն. Պիկսանովի և Մ. Նեչկինայի տեսակետները, քանի որ դրանք խոր հետք են թողել պատմագիտության մեջ:

1934թ., ինչպես նշվեց, Ն. Պիկսանովի խմբագրությամբ լույս է տեսնում հոդվածների մի ժողովածու, որում ամփոփված են Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող նախկինում արտահայտած պիկսանովյան տեսակետները: Դրանցում զգալի տեղ է հատկացված նաև **Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքներին և տնտեսագիտական հետաքրքրություններին**¹⁶:

15 Луначарский А.В., "А.С. Грибоедов", "Красная панорама", ևշվ. հոդված:

16 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, "Социология "Торя от ума"" (էջ 18-50), ևշվ. աշխ., էջ 48:

Ամփոփելով Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորման վրա ազդած գործոնները՝ Ն. Պիկսանովը գրում է. «Հասուն Գրիբոյեդովի աշխարհայացքը բնութագրվում է երեք գլխավոր գծերով՝ լիբերալություն, հոռետեսություն, ազգայնականություն»¹⁷: Ըստ նրա՝ այս ամենն Ա. Գրիբոյեդովին մոտեցնում էին ղեկաբրիստների չափավոր թեկն: Անդրադառնալով ճորտատիրության հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքին՝ նույն հոդվածում Ն. Պիկսանովը գրում է. «Գրիբոյեդովի կենսագրության մեջ կան փաստեր, որոնք մեզ ստիպում են զգույշ լինել. ավելի ճիշտ է համարել, որ Ա. Գրիբոյեդովը քսան-երեսնական թվականների շատ լիբերալների, այդ թվում նաև շատ ղեկաբրիստների նման գյուղացիների ազատագրության հարցում չափավոր էր և ազատ չէր ազնվական շահասիրությունից»¹⁸:

Ա. Գրիբոյեդովի կենսագրության վերոհիշյալ փաստերին Ն. Պիկսանովն անդրադառնում է նույն ժողովածուի մեջ գետեղված մեկ այլ հոդվածում¹⁹: Այն բաղկացած է նախաբանից և երկու գլուխներից: Առաջինը՝ **“Волнения крестьян костромской вотчины Грибоедовых (1816-1819гг.)”** («Գրիբոյեդովների կոստրոմյան հայրենակալվածքի գյուղացիների հուզումները» - Վ.Ս.) վերնագրով, մյուսը՝ **“Грибоедов и крепостное право”** («Գրիբոյեդովը և ճորտատիրական իրավունքը» - Վ.Ս.): Առաջինում ներկայացվում է Կոստրոմայի գավառում **Ա. Գրիբոյեդովի մայր Նաստասյա Ֆեոդորովնային** պատկանող կալվածքի ճորտերի՝ 1816-1819թթ. հուզումների հետ կապված դատական գործը: Ն. Պիկսանովն **Ա. Գրիբոյեդովին պատասխանատու է համարում ճորտերի հանդեպ մոր վարած քաղաքականության դեմ չբողոքելու, չընդվզելու համար**: «Գրիբոյեդովը,- գրում է նա,- միայն ենթարկվում էր դեպքերի ընթացքին. նրա պատասխանատվությունը միայն նրանում է, որ նա չէր բողոքում տիրակալուհի մոր գործողությունների դեմ, որոնք մոր բռնակալությանն էին ենթարկում նաև անձամբ իրեն: Նա միայն ստանում և ծախսում էր կալվածքից ուղարկված փողերը, ճորտերի դեմ (մղած - Վ.Ս.) պայքարում ակտիվ չէր: Ընդ որում՝ նա դեռ նրիտասարդ էր, ընդամենը քսանմեկ-քսաներեք տարեկան»²⁰:

Նաստասյա Ֆեոդորովնայի ճորտ գյուղացիների էլույթի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը համարելով ճորտատիրական

17 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, "Социология "Торя от ума"" (էջ 18-50), ևշվ. աշխ., էջ 48: 18 Նույն տեղում:

19 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, "Грибоедов и крепостные рабы (по неизвестным документам)", ևշվ. աշխ., էջ 81-158:

20 Նույն տեղում էջ 146:

կարգերի հանդեպ վերջինիս հայացքների և գործունեության *վաղ շրջանի դրսևորում՝ Ն. Պիկսանովն անդրադառնում է «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին»՝ այն ներկայացնելով որպես ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի հասուն շրջանի հայացքների ու գործունեության դրսևորում:* Զուգահեռներ անցկացնելով Ա. Գրիբոյեդովի մոր ճորտերի էլույթի և վերոհիշյալ «Ընկերության նախագծի» միջև՝ Ն. Պիկսանովը գրում է. «Այդ ձեռնարկման մեջ Գրիբոյեդովը 1828թ. գործում էր մտածված և ակտիվ: Այժմ արդեն չի կարելի ասել, թե նրա դերը պատահական էր, ինչպես պասսիվ էր տաս տարի առաջ և այլն: Այժմ արդեն Ա. Գրիբոյեդովը ոչ միայն պարզապես ստանում էր ո՛չ իր ձեռքերով և ո՛չ իր նախաձեռնությամբ ճորտերից կորզված փողերը, այլ գիտակցաբար նա ձգտում էր մահարեր եղանակային պայմաններով պլանտացիաներում ռուսաստանյան գյուղացիներին դնել նեգրերի և հանցագործների վիճակի մեջ»²¹:

Ավարտելով այդ երկու պատմական փաստերի վերլուծությունն ու համադրումը՝ ճորտատիրության հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքն ավելի ամբողջական ներկայացնելու համար Ն. Պիկսանովը ևս անդրադառնում է նրա գրական այն ստեղծագործություններին, որոնցում, ըստ ուսումնասիրողների, արտահայտված է այդ վերաբերմունքը: Ն. Պիկսանովը թվարկում է “Студент” կատակերգությունը, մեզ չհասած վերոհիշյալ “1812 год”, “Грузинская ночь” ողբերգությունների նախագծերը և, իհարկե, «Խելքից պատուհաս» պիեսը:

“Студент”-ում այդպիսի հատված է համարվել մեծահարուստ Զվեգդովի և ճորտ հյուսն Ֆոմկայի վերոհիշյալ դրվագը, այն է. «Զորակոչիկը ցարի համար է, իսկ բահրան՝ տիրոջ»²²: Քանի որ պիեսը գրվել էր առաջադեմ հայացքների տեր **Պ.Ա. Կատենինի** հետ համատեղ, ապա Ն. Պիկսանովը **կասկածի տակ է դնում Զվեգդովի ռեպլիկի հատվածը Ա. Գրիբոյեդովի կողմից գրված լինելու հանգամանքը և դա վերագրում է համահեղինակ Պ. Կատենինի նախաձեռնությանը, քանի որ, բացի այդ մի ռեպլիկից, նման այլ տողեր այլևս չեն հանդիպում պիեսում: Պիեսն ամբողջովին կատակերգություն է՝ գերծ սոցիալական թեմաներից**²³:

21 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, “Грибоедов и крепостные рабы (по неизданным документам)”, նշվ. աշխ., էջ 149:
 22 Ինչպես վերևում նշել ենք՝ այս դրվագին անդրադարձել է նաև Վ. Սեմսկին իր “Крестьянский вопрос в России...” նշված աշխատության մեջ:
 23 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., նշվ. աշխ., էջ 151:
 24

ճորտատիրության հարցն արտահայտված է նաև “1812 год” և “Грузинская ночь” ողբերգությունների ուրվագծերում: Առաջինում 1812թ. Հայրենական պատերազմի հերոս ճորտ գյուղացու՝ կալվածատիրոջ մահակի տակ վերադառնալու և ինքնասպանության թեման է: Ն. Պիկսանովը գրում է. «Պիեսում ճորտ աշխարհագորայինի թեման կենտրոնական չի հանդիսանում. այն ենթարկված է այլ՝ պատմահայրենասիրական խնդրին: Ճիշտ է, ակնհայտորեն ընդգծվում են ճորտատիրական «նախկին գարշելիությունները»՝ «տիրոջ մահակը» և նույնիսկ աշխարհագորայինի ինքնասպանությունը, բայց թե ինչպես կծավալվեր այդ թեման, դժվար է ասել: Պեսը է միայն նշել, որ այդ ժամանակվա բավական պահպանողական հայրենասիրական գրականության մեջ Հայրենական պատերազմի հերոսների, հաշմանդամ հերոսների մասին քիչ արտահայտություններ չկային, ինչն ամենևին էլ այդ հերոսներին ճորտությունից ազատագրելու հարցադրմանը չէր հանգեցնում»²⁴:

Սոտավորապես նմանատիպ եզրակացության է հանգում Ն. Պիկսանովը նաև “Грузинская ночь” ողբերգության ուրվագծի վերաբերյալ: Այս պիեսի հիմքում ընկած է վրացական մի հեքիաթ, ըստ որի՝ սիրելի ձիուն ետ ստանալու համար իր դայակի որդուն որպես փրկագին տված իշխանն անիծվում է դայակի կողմից, ինչի հետևանքով ողբերգական վախճան են ունենում իշխանի դուստրն ու դայակի որդին²⁵: Ելելով ողբերգության սյուժեից և ուրվագծից պահպանված որոշ հատվածներից՝ Ն. Պիկսանովը եզրակացնում է, թե **դրանում սոցիալական խնդիրը մշակվում է՝ ենթարկվելով բարոյական այլ խնդիրների, և սոցիալական սուր թեման լուծվում է կրոնաբարոյական վերջաբանով**²⁶: Ն. Պիկսանովը միայն «Խելքից պատուհասն» է համարում **լիարժեք ավարտուն գործ**, որից կարելի է որոշակի եզրակացության հանգել ճորտատիրության հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի մասին: **Ըստ նրա՝ Ա. Գրիբոյեդովի բողոքն ընդամենը հատուկ ազնվական խմբի բողոք է պալատական-արքունական վերնախավի դեմ**²⁷: Վերոհիշյալ տեսակետը հիմնավորելու համար Ն. Պիկսանովն օրինակ է բերում **Սուվարովի, Կարամզինի** նման մի քանի գործիչների, որոնք բողոքում էին ճորտա-

24 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., նշվ. աշխ., էջ 152:
 25 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 23-24, տես նաև՝ Грибоедов А.С., Сочинения, т. 1, նշվ. աշխ., էջ 370-375:
 26 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., նշվ. աշխ., էջ 152:
 27 Նույն տեղում՝ էջ 153:

տիրության գռեհիկ դրսևորումների դեմ, բայց հայտնի էին որպես պահպանողականներ և ճորտատիրական կարգերի պաշտպաններ: **Նա ճորտատիրությունը պահպանելու ցանկություն է տեսնում նաև Ա.Ս. Պուշկինի հայացքներում:** Ըստ Ն. Պիկսանովի՝ «Գրիբոյեդովի ժամանակների երիտասարդ, կրթված, զգայուն ազնվականներին զայրացնում էին ճորտատիրության կոպիտ ձևերը, և նրանք հույս ունեին, որ գործը կարելի է շտկել «մարդասիրությամբ»²⁸:

Իր տեսակետները համոզիչ դարձնելու համար Ն. Պիկսանովն օրինակ է բերում ևս երկու հայտնի մարդկանց՝ ղեկաբերիստ հրապարակախոս **Ն.Ի. Տուրգենին և գրող Ի.Ս. Տուրգենին, որոնց մայրերը Ա. Գրիբոյեդովի մոր նման ևս եղել են բռնակալ ճորտատիրուհիներ:** Ընդունված է եղել համարել, որ **նրանց ազատամիտ որդիները պայքարել են մայրերի դեմ և ճանաչված էին իրենց հակաճորտատիրական հայացքներով:** Դրանով հանդերձ՝ Ն. Պիկսանովը բերում է փաստեր, օրինակ՝ Ներքին գործերի նախարարին **Ի.Ս. Տուրգենի ուղղած կիսապաշտոնական գրությունը**, որում, վերլուծելով իրավիճակը, Ի.Ս. Տուրգենինը ցանկանում է, որ ճորտերի և նրանց տերերի հարաբերությունների հիմքում ընկած լինեն «օրինականությունն ու կայունությունը, ճորտական համայնքում կատարելագործվեն դատարանն ու դատական կարգը, ներքին կառավարումը, հավասարակշռվեն առևտուրն ու հողագործությունը, զարգանան գյուղատնտեսական գիտությունն ու գրագիտությունը»²⁹: «Գրության մեջ ճորտատիրական կարգերի վերացման մասին խոսք չի գնում:

Ն. Պիկսանովն ընդունում է, որ «Գրությունը» գրելիս Ի. Տուրգենինը կարող էր հաշվի առնել իշխանությունների պահպանողական հայացքները, բայցևայնպես, **հետագայում դառնալով հասուն մարդ և ճանաչված գրող, գյուղացիական բարեփոխումների նախապատրաստման ժամանակաշրջանում հայտնվում է ոչ թե հեղափոխական Չեռնիշևսկու, այլ պահպանողական Չերկասսկու ճամբարում**³⁰: Հողվածի վերջում, թվարկելով Ա. Գրիբոյեդովի մոր ճորտերի ելույթի, «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի», Տուրգենինների վերոհիշյալ օրինակների արդեն ներկայացրած ու վերլուծած փաստերը, Ն. Պիկսանովը եզրակացնում է. «Այս համադրությունների և բացահայտումների լույսի ներքո մենք սկսում ենք հասկանալ, որ նաև Չացկու ռեպ-

28 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., ևշվ. աշխ., էջ 155:

29 Նույն տեղում՝ էջ 155-156 ("Несколько заметок о русском хозяйстве и русском крестьянстве"):

30 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., ևշվ. աշխ., էջ 157:

լիկները չի կարելի այդքան լայնորեն մեկնարանել, ինչպես դա անում էին հին ազատամիտ բանասերները: Այն բանից, որ Չացկին դժգոհում է ճորտատիրական իրավունքի չարաշահման դեմ, դեռ չի հետևում, որ նա և իր արարիչը լիովին մեթոմ են այդ սոցիալ-պետական կառույցը»³¹:

1920-30-ական թվականների գլխական շրջանակներում Ն. Պիկսանովի տեսակետները մեծ ազդեցություն են ունենում, սակայն **1940-ական թվականներից սկսվում է այդ տեսակետների վերաարժևորումը:** Այս գործում վճռորոշ դեր է խաղում Մ. Նեչկինայի **վերոհիշյալ հիմնարար մենագրությունը**, որում տեղ գտած Գրիբոյեդով-ղեկաբերիստներ հարաբերությունների վերաբերյալ նրա տեսակետների մասին արդեն խոսվել է:

Ինչպես նշել ենք, «Трибоедов и декабристы» աշխատությունն ունեցել է երեք հրատարակություն: Ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի վերաբերյալ ներկայացնում ենք Մ. Նեչկինայի տեսակետները՝ օգտվելով 1977թ. հրատարակությունից, քանի որ այն լույս է տեսել լրացումներով, ճշգրտումներով, և նրանում պետք է որ հաշվի առնված լինեին մինչ այդ վերջինիս ուղղված քննադատությունները:

«Ընկերության հիմնադրման կանոնադրության նախագծին» վերաբերող Մ. Նեչկինայի տեսակետները ներկայացնելիս փորձենք համեմատել բոլոր երեք հրատարակությունները, քանի որ 1947թ. հրատարակության ժամանակ Օ. Մարկովան դեռ չէր հրապարակել «Նախագծի» վերաբերյալ գեներալ-համբարակ Մ. Ժուկովսկու մեկնաբանություններով տեքստը: Ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքին առնչվող հատվածները մեծ մասամբ նվիրված են Ն. Պիկսանովի տեսակետների քննադատությանը, ինչը կարելի է «տրամաբանական» համարել, **քանի որ, քննադատելով գիտության մեջ գերիշխող պիկսանովյան տեսակետները, Մ. Նեչկինան առավել հեշտությամբ ընդունելի էր դարձնում ժամանակի ոգուն համապատասխան իր հակադարձումները:** Ն. Պիկսանովի նման Մ. Նեչկինան ևս անդրադառնում է վերոհիշյալ հարցերի շուրջ Ա. Գրիբոյեդովի գրական գործերում տեղ գտած բոլոր հայտնի արտահայտություններին՝ միևնույն ժամանակ սխալ համարելով այդ մեթոդը, **քանի որ, ըստ նրա, գրական ստեղծագործություններից միայն առանձին**

31 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования..., ևշվ. աշխ., էջ 158:

հատվածներ առանձնացնելու և վերլուծելու դեպքում դուրս է մնում այդ ստեղծագործությունների «չեզոք» կամ «բնավորությունից զուրկ» (ոչ գաղափարական – Վ.Ս.) պատկերը, ինչը հակասում է հետազոտության պատմական մեթոդի սկզբունքներին և ուղեկցվում է պատմության նկատմամբ արհամարհանքով³²:

Ն. Պիկասնովի վերլուծությունների քննադատությունը և իր տեսակետների շարադրանքը Մ. Նեչկինան ևս սկսում է «Խելքից պատուհաս»-ից:

Նշենք, որ «Խելքից պատուհաս»-ի որոշ հատվածներ **Ն. Պիկասնովը համարում է ճորտատիրական կարգերին ոչ անմիջականորեն առնչվող մասեր³³, իսկ անմիջականորեն, ըստ նրա, դրան առնչվում են Չացկու երկու՝ սրիկա Նեստորի (ով իր կյանքը բազմիցս փրկած հավատարիմ ծառաներին փոխել էր որսորդական շնիկի հետ) և բալետասեր հարուստ ազնվականի (ով ընտանիքներից նախ կտրել ու բալետային խմբում հավաքել էր իր ճորտերի երեխաներին, ապա պարտքերը վճարելու համար առանձին-առանձին վաճառել էր նրանց) ռեպլիկները ներկայացնող հատվածները³⁴:**

Քանի որ Ն. Պիկասնովը դրանք համարում էր ոչ թե ճորտատիրական կարգերի, այլ դրանց առանձին վատ դրսևորումների դեմ բողոք, Մ. Նեչկինան գտնում է, որ դրանով Ն. Պիկասնովը **ևս մեկ անգամ նվազեցնում է ճորտատիրական կարգերի դեմ բացահայտ բողոքի փաստը:** Ըստ նրա՝ դա ամենևին էլ միջին ազնվականության բողոք չէր մեծահարուստ և բարձրաստիճան ազնվականության դեմ, և պիեսի տեքստում էլ նման ակնարկ չկա: Ճորտեր վաճառելը կամ փոխանակելը բացատրվում է ճորտատիրական օրենսդրությամբ, ուստի Մ. Նեչկինան նույնիսկ նշում է, որ նաև միջին դասի ազնվականներն իրենց ճորտերին կարող էին փոխել շների հետ, քանի որ բարձր խավը հիմնականում հարուստ էր, դրամի պակաս չուներ և կարող էր կանխիկ դրամով ձեռք բերել շներ: Ինչ վերաբերում է բալետասեր ազնվականին, ապա այստեղ Ա. Գրիբոյեդովն ընդհանրապես չի շեշտում նրա ծագումը, այլ նշում է միայն նրա հարուստ լինելն, ինչը, ըստ Մ. Նեչկինայի, բավարար չէ նրան

բարձր խավին դասելու համար: Մ. Նեչկինան «Խելքից պատուհաս»-ի ողջ վերլուծության վերաբերյալ գրում է. «Այսպիսով, եթե նույնիսկ կենդանի համատեքստից վերցնենք ճորտատիրական կարգերի վերաբերյալ արհեստականորեն անջատված արտահայտությունների իրանը (корпус) և հետազոտենք այն, ապա այստեղ մենք չենք ստանա Ն. Պիկասնովի կողմից որոնվող համայնր եզրակացությունը: Այդ աղճատված խրատական ասությունը (сентенция) պատկանում են կատակերգության համալիր հակաճորտատիրականությանը, և առաջին հերթին դրանք ուղղված են ճորտատիրական կարգերի դեմ. դրանում է նրանց էությունը»³⁵:

Ավարտելով «Խելքից պատուհաս»-ի վերլուծությունը՝ Մ. Նեչկինան ևս անդրադառնում է Ա. Գրիբոյեդովի մյուս ստեղծագործություններին, որոնցում անդրադարձ կա ճորտատիրական կարգերին: Դրանք դարձյալ մեր կողմից հիշատակված “Студент”, “1812 год”, “Грузинская ночь” նախագծերն են: Վերլուծելով վերոհիշյալ ստեղծագործությունների նախագծերը՝ **Մ. Նեչկինան Ն. Պիկասնովին մեղադրում է հետազոտման կիրառած մեթոդներում անհետևողական լինելու մեջ³⁶:**

Վկայակոչելով Դ.Ա. Սմիռնովին, ով առաջին անգամ հրապարակել էր Ա. Գրիբոյեդովի “Черновая тетрадь” նյութը (որի բնօրինակը, ինչպես ասվել է, մեզ չի հասել – Վ.Ս.), Մ. Նեչկինան նշում է, որ **վերջինս հերոս ճորտ գյուղացու դրվագում իր հրապարակման մեջ «հուսահատություն», «ինքնասպանություն» բառերը մնացած տեքստից անջատել է 15 կետերով: Հաշվի առնելով այս փաստը՝ նա առաջադրում է մի վարկած, ըստ որի՝ բնօրինակում այդ 15 կետերի փոխարեն եղել է ինչ-որ տեքստ (— Վ.Ս.), որը Գ. Սիմոնովը չի հրապարակել՝ ելնելով գրաքննության նկատառումներից: Այս ամենից նա եզրակացնում է.** «Այսպիսով, ամենից առավել կենտրոնական է հանդիսանում աշխարհագրային թեման: Տեքստը խոսում է ինքնին: Այս ուրվագիծը գրիբոյեդովյան հակաճորտատիրական հրաշալի փաստաթուղթ է: Ա. Գրիբոյեդովը մնացյալ ռուս գրողներից ավելի վաղ առաջ բաշեց ժողովրդի ծոցից ելած մարդու թեման՝ ճորտ գյուղացուն առաջադրելով պատմական նշանակության իրադարձություններին մասնակցի դերում»³⁷:

Չընդունելով Ն. Պիկասնովի տեսակետները նաև “Грузинская ночь” ողբերգության շուրջ՝ Մ. Նեչկինան դարձյալ հիմնականը ճորտա-

35 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, ևզվ. աշխ., էջ 349-350:

36 Նույն տեղում՝ էջ 351:

37 Նույն տեղում՝ էջ 352:

32 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1977, ևզվ. աշխ., էջ 345-346:

33 Գրիբոյեդով Ա.Ս., «Խելքից պատուհաս», Չափածո կոմեդիա, չորս գործողությամբ, Մուրեն Վահունու թարգմանությամբ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1981, էջ 61 (Սոֆյայի աղախին Լիզայի խոսքերը առաջինի հոր Ֆամուսովի հասցեին):

34 Նույն տեղում՝ էջ 61 (Չացկու «Իսկ ովքե՞ր են դատավորները» խոսքերը), էջ 111 (Խլոստովայի խոսքերը Չագրեցկու մասին):

տիրության դեմ բողոքի թեման է համարում: Ըստ նրա՝ **բարոյական, կրոնական և այլ թեմաների առկայությունը չի խանգարում, որպեսզի պատասխան տրվի գլխավոր հարցին. ինչ վերաբերմունք ունեն Ա. Գրիբոյեդովը ճորտատիրական կարգերի հանդեպ, ինչի պատասխանը, ըստ ակադեմիկոսի, պիեսում նույնպես ինքնին միանշանակ է.** Ա. Գրիբոյեդովը դեմ էր այդ կարգերին, իսկ ստնտուի որդուն ձիու փոխարեն որպես փրկագին տալու փաստը հետազոտողը ներկայացնում է Ֆ. Բուլգարինի խոսքերով. «Դա սովորական գործ էր, և դրա համար էլ իշխանը չէր մտածում հետևանքների մասին»³⁸: Մ. Նեչկինայի կարծիքով այս նախագծում «ճորտատիրության դեմ բողոքը բարձրացվել է առավել մեծ բարձունքի: Պիեսում հենց մարդկայինն է հակադրված ճորտատիրական հալածանքներին»³⁹:

Ավարտելով Ա. Գրիբոյեդովի ստեղծագործություններում ճորտատիրական կարգերին առնչվող Ն. Պիկասնովի ներկայացրած հատվածների վերլուծությունը՝ ակադեմիկոս Մ. Նեչկինան անդրադառնում է այն փաստերին, որոնք, նրա կարծիքով, իրենց մեջ պարունակում են **այդ կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի բացասական վերաբերմունքը**, և որոնք դուրս են մնացել Ն. Պիկասնովի կողմից թեմային վերաբերող առանձնացված փաստերի շարքից: Նա հիշատակում է Ա. Գրիբոյեդովի մի քառատողը (Էքսպրոմտը), որը նա գրել էր դեկաբրիստների գործով Գլխավոր շտաբում կալանքի տակ գտնվելիս և գտնում է, որ դրանով պետք է փորձել է համառոտ ներկայացնել իր ձերբակալության պատճառը.

По духу времени и вкусу

Он ненавидел слово “раб”

За что посажен в Главный штаб

*И там притянут к Иисусу.*⁴⁰

(Ժամանակի ճաշակով ու ոգով

Նաատում էր բառը «ստրուկ»,

Ինչի համար բանտվեց Գլխավոր շտաբում,

*Ուր կարկառվեց դեպի Հիսուս:
- Վ.Ս.)*

Մ. Նեչկինան կասկածի տակ է դնում նաև Ն. Պիկասնովի այն խոսքերը, թե. «Գրիբոյեդովը տեսականորեն երբեք չի արտահայտվել

38 А.С. Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 23:

39 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 354:

40 Նույն տեղում՝ էջ 355:

ճորտատիրական կարգերի վերացման օգտին»: Ընդհակառակը, **նա գրտնում է, որ Գրիբոյեդովը դրա շուրջ արտահայտվել է հենց ղեկաբրիստների հետ զրույցներում, պարզապես դրանք չէին կարող և գրի էլ չեն առնվել:** Միևնույն ժամանակ նա նշում է, որ «միգուցե այդպիսի գրավոր փաստաթղթեր եղել են, բայց մեզ չեն հասել» (⁴¹ - Վ.Ս.): Ն. Պիկասնովի տեսակետների քննադատությունը Մ. Նեչկինան փորձում է ավարտել հետևյալ կերպ. «*Մտածում ենք, որ ապացույցները բազմապատկելու կարիք չկա: Պիկասնովի եզրակացությունները ճիշտ չեն և պետք է մերժվեն*»⁴¹:

Ինչպես տեսնում ենք, հարգարժան հետազոտողը կատարում է անապացույց պնդումներ ու ենթադրական եզրահանգումներ և գրում է. «Կատակերգությունում («Խելքից պատուհաս»-ում - Վ.Ս.) արտացոլված են ճորտատիրական կարգերի բազմազան կողմերը, որին էլ պատերազմ է հայտարարված: Կատակերգությունն իր սուր ծայրով ամբողջովին ուղղված էր ինքնակալաճորտատիրական կարգերի դեմ»⁴²:

Մ. Նեչկինան անդրադառնում է նաև «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծին», սակայն դա անում է ոչ թե ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը պարզաբանող **“Противник крепостного строя” («Ճորտատիրական կարգի հակառակորդը» - Վ.Ս.)** հատվածում, այլ աշխատության վերջում՝ **“Трибоедов и декабристы после разгрома восстания” («Գրիբոյեդովը և ղեկաբրիստներն ապստամբության ջախջախումից հետո» - Վ.Ս.)** գլխում: Հավանաբար գիտնականը ցանկացել է պահպանել ժամանակագրությունը և այն չկապել «Խելքից պատուհաս»-ի գաղափարական բովանդակության հետ: Որպես տնտեսական հարցերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի հետաքրքրությունների առաջացման ժամկետ Մ. Նեչկինան ևս նշում է 1820-ականների սկզբը, երբ նա ծառայում էր Ա. Երմոլովի շտաբում: Ներկայացնելով մեր կողմից ևս հիշատակված մի քանի նամակներ և այլ փաստաթղթեր՝ նա անցնում է «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» հետ կապված խնդիրներին: Բնականաբար, **նա չի ընդունում «Նախագծին» Ն. Պիկասնովի տված գնահատականները, որոնցում վերջինս Ա. Գրիբոյեդովին անվանում էր «ընչաքաղց իմպերիալիստ, նվաճող, ճորտատիրական կարգերի կողմնակից»:**

41 Нечкина М., Грибоедов и декабристы, 1977, նշվ. աշխ., էջ 355-356:

42 Նույն տեղում՝ էջ 368:

Ինչպես նշվեց, երբ 1947թ. առաջին անգամ լույս է տեսնում Մ. Նեչկինայի աշխատությունը, Օ. Մարկովան դեռ չէր հրապարակել «Նախագծի» շուրջ գեներալ-համբարակ Մ. Ժուկովսկու դիտողություններով տեքստը, **իսկ որպես բացասական դիրքերից հանդես եկող ծրագրի քննադատ՝ հայտնի էր Ի. Բուրցովի անունը**: Մ. Նեչկինան չափազանց բարձր է գնահատում «Նախագիծը»՝ շեշտը դնելով մի քանի հանգամանքների վրա: **Նախ՝** նա գտնում է, որ «Նախագիծն» իրենում բացահայտորեն պարունակում է կապիտալիստական (ապրանքադրամական), շուկայական տնտեսությանը բնորոշ տարրեր, ինչպես, օրինակ, **Ռուսաստանից զնված գյուղացիներին ճորտությունից ազատելու և որպես վարձու աշխատողներ օգտագործելու գաղափարը**: Հայտնի է, որ մարդու վարձու աշխատանքն օգտագործելը բնորոշ է կապիտալիստական տնտեսաձևին, իսկ ֆեոդալաճորտատիրական Ռուսաստանի համար կապիտալիզմին բնորոշ տարրեր պարունակող տղնտեսական նախագիծը, ըստ նրա, արդեն առաջադիմական երևույթ էր:

Մ. Նեչկինան դրական է համարում նաև այն, որ **հեղինակներն իրենց նպատակներում անընդհատ շեշտում են երկրամասը ծաղկուն տարածքի վերածելու իրենց ցանկությունը, ինչի համար էլ կառավարությունից խնդրում են մի շարք մեծաշնորհներ**: Ռուսմեմասիրողը «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» համեմատությունն անգլիական «Օստհենդկականի» («Արևելա-հենդկականի») հետ համարում է անընդունելի, քանի որ **Գրիբոյեդովն ու Չավիլեյսկին չէին պատրաստվում թալանել Անդրկովկասը, այլ, ընդհակառակը, ընկերության ստացած շահույթների մեծ մասը ցանկանում էին ներդնել այնտեղ՝ նոր ֆաբրիկաներ ու գործարաններ կառուցելու համար**: «Նախագիծը» կառավարության կողմից հավանության չարժանանալու հիմնական պատճառը Մ. Նեչկինան համարում է դրա ուտոպիական բնույթը, քանի որ **ֆեոդալաճորտատիրական Ռուսաստանը պատրաստ չէր ընդունելու կապիտալիստական և բացահայտ հակաճորտատիրական բնույթ ունեցող ծրագիր**⁴³:

Մենագրության 1947թ. հրատարակության մեջ Մ. Նեչկինան ընդամենը մեկ անգամ է հիշատակում դեկաբրիստ Ի. Բուրցովին՝ **փորձելով չհամաձայնել ռուս ճորտ գյուղացիներ զնելու և 50 տարով «Ընկերության» հողերում պարտադիր աշխատացնելու վերաբերյալ վեր-**

ջինիս բացասական կարծիքին՝ նշելով, որ տվյալ դեպքում ճորտը դառնալու էր վարձու աշխատող, ստանալու էր աշխատավարձ, ունենալու էր անձնական որոշ իրավունքներ, որպես սեփականություն չէր պատկանելու կալվածատիրոջը, առանց վերջինիս թույլտվության կարող էր ամուսնանալ և գույք ձեռք բերել, իսկ նրանց երեխաներն արդեն լինելու էին ազատ մարդիկ: Այս ամենը, ըստ նրա, բնորոշ էր կապիտալիստական տնտեսությանը⁴⁴:

Մենագրության հաջորդ՝ 1951թ. հրատարակության մեջ, երբ արդեն հայտնի էր դարձել, որ Մ. Մալշինսկու կողմից Ի. Բուրցովին վերագրած քննադատությունն իրականում պատկանում է **«հետադիմական» Մ. Ժուկովսկուն**, Մ. Նեչկինան հնարավորություն է ստանում **առավել ազատորեն քննադատել վերջինիս** և «Նախագծին» տված իր գնահատականներում դառնում է ավելի ինքնավստահ: Ուշագրավ է այն, որ, եթե 1947 և 1951 թվականների հրատարակություններում Մ. Նեչկինան տնտեսական հարցերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի հետաքրքրություններին և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» **հատկացնում էր մեկ ենթագլուխ**, ապա 1977թ. հրատարակության մեջ այս հարցին անդրադառնում է **գրքի վերջում տված ծանոթության մեջ (№ 700)**: Կարելի է կարծել, որ **այսպիսի փոփոխության պատճառն այն է, որ հեղինակն արդեն վստահ էր, որ իր տված գնահատականները բռնել էին ժամանակի քննությունը, և այդ ընթացքում նոր խոսք չէր ասվել վերոհիշյալ հարցերի շուրջ** (1951թ. համեմատությամբ՝ 1977թ. հրատարակության մեջ տեքստային առանձնակի փոփոխություն չկա):

Անդրադառնանք նաև Մ. Նեչկինային ուղղած Ն. Պիկսանովի պատասխանին: Հարցին նա **լրջորեն անդրադառնում է 1969թ.** «Խելքից պատուհաս»-ի համար գրած ներածականում: Պատասխանում անդրադարձ կա նաև Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքներին: Ն. Պիկսանովն ընտրում է «Грибоедов и декабристы» աշխատության 1947թ. հրատարակության առիթով **Ն.Մ. Գրուծինիի ներկայացրած գրախոսականի միջոցով պատասխանելու տարբերակը**: Խոսելով Մ. Նեչկինայի այն պնդումների մասին, թե Ա. Գրիբոյեդովը ոչ միայն դեկաբրիստական գաղափարների կրող էր, այլ **ինչ-որ տեղ նույնիսկ առաջ էր անցել նրանցից և մտածում էր պատմության մեջ ժողովրդի դերի և**

43 Нечкина М.В., Грибоедов и декабристы, Гос. изд.-во художественной литературы, Москва, 1947, сс. 515-522.
218

44 Нечкина М.В., Грибоедов и декабристы, Гос. изд.-во художественной литературы, Москва, 1947, էջ 521:
219

ժողովրդավարական հեղափոխության մասին՝ Ն. Պիկսանովը սկզբում Ն. Դրուժինինի միջոցով հիշեցնում է դեկաբրիստական շարժմանը տված **Վ. Լենինի վերոհիշյալ բնորոշումը**, այնուհետև մեջ է բերում Ն. Դրուժինինի տեսակետները, որոնցում վերջինս քննադատում է Մ. Նեչկինային առ այն, որ եթե Ա. Գրիբոյեդովը դեկաբրիստների գաղափարների կրող էր, **ուրեմն նա էլ զերծ չէր նրանց աշխարհայացքի դասակարգային սահմանափակումներից, իսկ կոնկրետ, հաշվի առնելով Ա. Գրիբոյեդովի հոռետեսությունը դեկաբրիստների զինվորական հեղափոխության մարտավարության հանդեպ, ըստ նրա, դժվար է պատկերացնել, որ, չընդունելով այն, նա կողմ լիներ ժողովրդական հեղափոխությանը**⁴⁵:

Անդրադառնալով Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների ու տնտեսագիտական հետաքրքրությունների վերաբերյալ իրեն ուղղված Մ. Նեչկինայի քննադատությանը՝ Ն. Պիկսանովը նշում է, որ **Մ. Նեչկինան այս հարցի վերաբերյալ իր վերլուծությունը կառուցում է միայն Չացկու արտահայտությունների վրա և մանրամասն չի վերլուծում Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող այն դրվագները, որոնք առնչվում են նրա սոցիալական հայացքներին ու տնտեսագիտական հետաքրքրություններին**: Այս հարցերի վերաբերյալ քննադատությունը Ն. Պիկսանովը դարձյալ կառուցում է Մ. Նեչկինային ուղղված Մ. Դրուժինինի քննադատության վրա: Վերջինս մասնավորապես գտնում էր, որ **Մ. Նեչկինան ճիշտ չէ, երբ բացառում է «Ընկերության նախագծում» առկա ճորտատիրական կարգերի դրսևորումները**:

Անդրադառնալով Ռուսաստանից ճորտեր գնելու և «Ընկերության» պլանտացիաներում պարտադիր աշխատեցնելու վերաբերյալ Ի. Բուրցովի կարծիքի շուրջ Մ. Նեչկինայի քննադատությանը՝ Ն. Դրուժինինը գրում է. «Մ. Նեչկինան մոռանում է, որ շահագործման բնույթն առաջին հերթին որոշվում է ոչ թե ձևական-իրավաբանական, այլ շահագործվողների սոցիալ-տնտեսական վիճակով: Անդրկովկասյան պլանտացիաներում փաստացի ցմահ հարկադրական աշխատանքը ընդհանուր ոչինչ չունի կապիտալիստական ազատ վարձակալության համակարգի հետ և հակառակ անձի ազատության իրավաբանական ճանաչմանը՝ պետք է անխուսափելիորեն

45 Грибоедов А.С., "Горе от ума", Изд-е подготовил Н.К. Пиксанов, при участии А.Л. Фришунина, Изд-во "Наука", Москва, 1969, с. 291-293, տես նաև՝ Дружинин Н., "Профессор М.В. Нечкина "А.С. Грибоедов и декабристы"", նշվ. աշխ., էջ 103:

ուղեկցվեր արտատնտեսական հարկադրանքի խիստ միջոցներով»⁴⁶:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության» թեման ավարտուն դարձնելու համար Ն. Պիկսանովը հիշատակում է նաև **Օ. Մարկովայի հրապարակումը՝ գտնելով, որ Ի. Բուրցովին վերագրված քննադատությունը, որն իրականում պատկանում է Մ. Ժուկովսկուն, էականորեն ոչինչ չի փոխում, և լիովին ուժի մեջ են մնում իր և Ն.Մ Դրուժինինի առարկությունները**⁴⁷: Անդրադառնալով ճորտատիրական կարգի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքին՝ Ն. Պիկսանովը գտնում է, որ Մ. Նեչկինան այս հարցը վերլուծելիս օգտագործել է հետագոտման համադրության մեթոդը՝ «Խելքից պատուհաս»-ի շատ արտահայտություններ համեմատելով որոշ դեկաբրիստների արտահայտությունների հետ, **ինչը բավարար չէ ճիշտ եզրահանգումների համար**: Նրա կարծիքով Մ. Նեչկինան **պետք է վերլուծեր նաև պատմական որոշ փաստեր, օրինակ՝ Ա. Գրիբոյեդովի մոր ճորտերի ելույթը և հատկապես դրա հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքն ու պահվածքը, ինչը «խոր լռությամբ» շրջանցել է ակադեմիկոսը**⁴⁸:

Այդ բանավեճից հետո Ա. Գրիբոյեդովի կյանքին և աշխարհայացքին անդրադարձած գրեթե բոլոր մյուս հեղինակներն այս կամ այն կերպ պաշտպանել են կողմերից մեկին: Խորհրդային պատմագիտության մեջ առավել խոր հետք են թողել ուսումնասիրող Մ. Նեչկինայի տեսակետները, **ինչի պատճառը ոչ թե այն է, որ դրանք գիտականորեն առավել ամբողջական և ճիշտ են հիմնավորվել, քան Ն. Պիկսանովինը, այլ այն, որ դրանք ավելի համահունչ են եղել խորհրդային պաշտոնական գաղափարախոսությանը**:

Ինչ վերաբերում է Ն. Դրուժինինին, ում կարծիքով Մ. Նեչկինան քիչ է անդրադառնում Ա. Գրիբոյեդովի և նրա կերտած հերոսի հայացքների ֆեոդալա-ճորտատիրական մնացուկների առկայությանը, դրա համար էլ, ըստ նրա, Ա. Գրիբոյեդովի բնութագիրը Մ. Նեչկինայի մոտ «ստացվել է միակողմանի և որոշակիորեն բացարձականացված (իդեալականացված)»⁴⁹, ապա փաստենք, որ **Ն. Դրուժինինը նույնպես զերծ չի մնացել Ա. Գրիբոյեդովի հայացքների վրա դեկաբրիստական շարժման**

46 Грибоедов А.С., "Горе от ума", Ред. Пиксанов..., Фришунин..., նշվ. աշխ., էջ 294, տես նաև՝ Дружинин Н., "Профессор М.В. Нечкина...", նշվ. աշխ., էջ 104:

47 Грибоедов А.С., "Горе от ума", Ред. Пиксанов..., Фришунин..., նշվ. աշխ., էջ 294:

48 Նույն տեղում՝ էջ 297:

49 Дружинин Н., "Профессор М.В. Нечкина...", նշվ. աշխ., էջ 106:

ազդեցության գերազնահատումից և ժամանակի՝ գրողին չափից ավելի քաղաքականացնելու հրամայականից:

1947թ. Վ.Տ. Պաշուտոն հրապարակում է իր ուսումնասիրությունը⁵⁰, որը չնայած նվիրված է Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանը, սակայն այստեղ անդրադարձ կա «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծին»: Մ. Նեչկինայի նման Վ. Պաշուտոն էլ է գտնում, որ «Նախագիծը» պարունակում է կապիտալիստական առաջադիմական տարրեր, իսկ ճորտերի հարցում չի ընդունում Ի. Բուրցովի կարծիքը: Մակայն, ի տարբերություն Մ. Նեչկինայի, Վ. Պաշուտոն նմանության առումով համեմատական եզրեր է անցկացնում «Ռուսական-անդրկովկասյան» և անգլիական «Արևելահնդկական» ընկերությունների միջև: «Նախագծի» մերժման պատճառներից մեկը Վ. Պաշուտոն համարում է դրա հակասանգլիական ուղղվածությունը⁵¹:

Խորհրդային հետազոտող Օ. Մարկովան հայտնաբերում է Կովկասի գլխավոր կառավարիչ Գ.Վ. Ռոզենի արխիվի ֆոնդերում եղած «Стамбутка 1836-1838 год» («1836-1838թթ. վիճակագրություն» - Վ.Ս.) վերնագրով փաստաթուղթը⁵² և, ինչպես ասվեց, հրապարակում է Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծի» վերաբերյալ գեներալ Մ. Ժուկովսկու դիտողություններով տեքստը: Օ. Մարկովայի հրապարակումը բաժանվում է երկու մասի: Առաջին մասում հեղինակը վերլուծում է «Նախագծին» վերաբերող հարցերը, իսկ երկրորդում՝ հրապարակում իր հայտնաբերած փաստաթուղթը: Մեզ համար կարևոր են և՛ առաջինը, և՛ երկրորդը:

Առաջին մասում Օ. Մարկովան զգալի տեղ է հատկացնում Ա. Մալշինսկու հրապարակմանը և իր կողմից հայտնաբերած փաստաթղթի համեմատական վերլուծությանն ու մեկնաբանությանը: Նա առաջ է քաշում այն վարկածը, որ Ա. Մալշինսկին Ի. Պասկևիչի դիտողություններով տեքստը սխալմամբ վերագրել է Ի. Բուրցովին, ինչի հետևանքով էլ պատմագիտության մեջ տեղ է գտել այն սխալը, ըստ որի՝ «ճորտատեր Մ. Ժուկովսկու քննադատությունը ներկայացվել է որպես

դեկաբրիստ Ի. Բուրցովի քննադատություն»⁵³:

Օ. Մարկովան հնարավոր է համարում, որ Ա. Մալշինսկին այս սխալը թույլ է տվել «անկանխամտածված կերպով, պարզապես անբարեխիղճ ու միտումնավոր է գտնվել և մինչև վերջ քննադատորեն չի վերաբերվել ձեռքի տակ գտնվող անանուն փաստաթղթին»: Օ. Մարկովան, հստակ չզանազանելով «անկանխամտածված»-ը «միտումնավոր»-ությունից, ընդհանուր առմամբ փորձում է պատմական փաստերի վերլուծության գործընթացում բաց չթողնել ոչ մի մանրուք, միևնույն ժամանակ դրանք դիտարկում է ոչ թե ամբողջության մեջ, այլ փաստերը բաժանում է առաջնայինի և երկրորդայինի: Զարգացնելով միտքը՝ Օ. Մարկովան առաջ է քաշում այն տեսակետը, որ երբ ճորտատեր Մ. Ժուկովսկու դիտողությունները վերագրվում էին առաջադեմ դեկաբրիստ Ի. Բուրցովին, պատմագիտության մեջ սխալմամբ Ա. Գրիբոյեդովի «Նախագիծը» շարունակել է բնութագրվել որպես «անձնական հարստացման համար ստեղծված և հետադիմական»: Փաստորեն, Օ. Մարկովան իր հայտնաբերած փաստաթղթով փորձում է ցույց տալ, որ Բուրցով-Գրիբոյեդով բանավեճը վերածվում է գեներալ-համբարակ Ժուկովսկի-Գրիբոյեդով բանավեճի⁵⁴: Մ. Նեչկինայի նման Օ. Մարկովան էլ է բարձր գնահատում «Նախագիծը»՝ նշելով երկու կարևոր հանգամանք. նախ՝ «Նախագծի» հեղինակներն իրենց առջև խնդիր էին դրել զարգացնել Անդրկովկասի տնտեսությունն ու մշակույթը, ապա այն, որ «Նախագիծն» իրենում պարունակում էր բուժուական կարգերին բնորոշ տարրեր: Հենց այս տեսակետներն էին, որ խորհրդային պատմագիտության մեջ Մ. Նեչկինայի և Օ. Մարկովայի հրապարակումներից հետո դառնում են գերիշխող:

Օ. Մարկովայի հրապարակումից հետո Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքներին և տնտեսագիտական հետաքրքրություններին վերաբերող նոր աղբյուրների հրապարակումներ չեն լինում: Հետագա ուսումնասիրողները մեծամասամբ խարսխվում են Օ. Մարկովայի և Մ. Նեչկինայի տեսակետների վրա:

Վ. Օռլովն իր աշխատություններում⁵⁵ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» անդրադառնալիս նշում է, որ Ա.

50 Паушто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова", т. 24, изд. 2, с. 111-119:

51 Նույն տեղում՝ էջ 137:

52 Маркова О.П., Новые материалы..., изд. 2, с. 344 (նշված ֆոնդի և գործի վերաբերյալ հղումը Օ. Մարկովային է):

53 Маркова О.П., Новые материалы..., изд. 2, с. 328-329:

54 Նույն տեղում՝ էջ 334:

55 Орлов В.Л., "Грибоедов. Очерк жизни и творчества", изд. 2, с. 244-245, տես նաև՝ Орлов В.Л., Грибоедов, изд. 2, с. 109-110:

Գրիբոյեդովն ու Պ. Ջավիլեյսկին իրենց մասնավոր նախաձեռնությամբ **ցանկանում էին զարգացնել Անդրկովկասի արտադրողական ուժերը և նույնիսկ մշակույթը, սակայն այն ընթացք չունեցավ, որովհետև հակասում էր Ռուսաստանի ֆեոդալաճորտատիրական կարգերին:**

Մեկնաբանելով Վլ. Օռլովի աշխատանքները՝ Ն. Պիկսանովը գրում է, որ խուսափելով «Նախագծում» արտացոլված որոշ հետադիմական մնացուկների հարցերի քննարկումից՝ **Ա. Գրիբոյեդովի կենսագրության հարցերում Վլ. Օռլովն անվերապահորեն միանում է Մ. Նեչկինայի սրղլաստիկ մեկնաբանություններին**⁵⁶:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագրծի» մասին փոքր-ինչ այլ կարծիք է հայտնում **Ս. Պետրովը**⁵⁷: Անդրկովկասի գյուղատնտեսության, արդյունաբերության, առևտրի, մշակույթի և այլ բնագավառների զարգացման հարցերում դարձյալ խոսելով «Նախագծի» **հեղինակների բարի նպատակների մասին՝ նա միևնույն ժամանակ հավելում է, որ «Նախագծում» տեղ են գտել նաև հետադիմական որոշ մտքեր:** Սակայն Ս. Պետրովը մանրամասնորեն չի վերլուծում «Նախագծի» հետ կապված բոլոր հարցերը և բավարարվելով վերոնշյալով՝ **չի անդրադառնում նաև հեղինակների կողմից հայցվող արտոնություններին վերաբերող հարցերին:**

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագծին» անդրադարձել է նաև **Ս.Վ. Շոստակովիչը**⁵⁸: Վերջինս Մ. Նեչկինայի և Օ. Մարկովայի նման «Նախագիծը» համարում է կապիտալիստական տարրեր պարունակող առաջադիմական մտքի արդյունք: Նա գրում է. «Անվիճելի է Գրիբոյեդովի և Ջավիլեյսկու նախագծի օբյեկտիվ կապիտալիստական բնույթը: Այդ նախագիծը ֆեոդալաճորտատիրական Ռուսաստանի պայմաններում իրենից ներկայացնում է ռուսական առաջադեմ տնտեսագիտական մտքի խոշոր ձեռքբերում»⁵⁹: Ս. Շոստակովիչը ևս մանրամասնորեն չի վերլուծում «Նախագծին» վերաբերող բոլոր հարցերը: Նրա անդրադարձի **առանձնահատկությունն այն է, որ «Նախագիծը» նա կապում է ռուս-պարսկական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հետ՝ միաժամանակ նշելով, որ կյանքի կոչվելու դեպքում այն վճռորոշ դեր էր խաղալու Իրան-Ռուսաստան-**

Անգլիա դիվանագիտական պայքարում⁶⁰:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» ավելի մանրամասն անդրադառնում է **Օ.Ի. Պոպովան**⁶¹, որի տեսակետները ևս հիմնականում համահունչ են Մ. Նեչկինայի և Օ. Մարկովայի տեսակետներին: «Նախագիծ» վերաբերյալ Ի. Բուրցովի և Մ. Ժուկովսկու կարծիքները ներկայացնելիս **Օ. Պոպովան ևս ամեն կերպ խուսափում է նշել, որ Ի. Բուրցովը, այնուամենայնիվ, բացասական կարծիք է հայտնել դրա շուրջ: Ըստ Օ. Պոպովայի՝ Ի. Բուրցովը, եթե նույնիսկ դրական չի արտահայտվել, համենայնդեպս բարյացակամ վերաբերմունք էլ չի ունեցել հեղինակների նպատակների վերաբերյալ և միայն մի քանի ցանկություն ու մտավախություն է հայտնել**⁶²: Նա գտնում է, որ ճորտեր գնելու և 50 տարով նրանց աշխատեցնելու կետն առաջադիմական քայլ էր, և քանի որ հեղինակները չէին կարող բացահայտորեն արտահայտվել գյուղացիներին ճորտությունից ազատագրելու մասին, ուստի գնացել էին այդպիսի տարբերակի: «Ըստ էության,- գրում է Օ. Պոպովան,- դա ընկերության արդյունաբերական գործունեության մեջ ներգրավված գյուղացիներին ապաճորտացնելու աստիճանական ճանապարհը կլիներ»⁶³: Օ. Պոպովան Ն. Մուրավյով-Վարսկու նման «Նախագծի» մերժման պատճառների հարցում **ևս ընդգծում է Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչի դժգոհության գործոնը:**

Ա. Լեբեդևը, որը, ինչպես արդեն նշել ենք, յուրօրինակ մտեցում է ցուցաբերում խորհրդային պատմագիտության կողմից Ա. Գրիբոյեդովի կյանքի ու գործունեության շատ փաստերին տված գնահատականներին, նույնպես **չի կարողանում զերծ մնալ «Ռուսական-անդրկովկասյան ընկերությանը» վերաբերող վերոհիշյալ տեսակետների ազդեցությունից**⁶⁴: Անդրադառնալով «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծի» շուրջ Վլ. Օռլովի, Մ. Նեչկինայի և հատկապես Յու. Տինյանովի արտահայտած տեսակետներին՝ **Ա. Լեբեդևը զարմանք է հայտնում, թե ինչու են «Նախագիծ» վերաբերյալ վերոհիշյալ հեղինակները շփոթմունք ապրում, և փորձում է այդ շփոթմունքը բացատրել այսպես.** «Հավանաբար Գրի-

56 Грибоедов А.С., "Горе от ума", Ред. Н. Пиксанов и А. Гришунин...., ևշվ. աշխ., էջ 298:

57 Петров С., А.С. Грибоедов, критико-биографический очерк, ևշվ. աշխ., էջ 102-103:

58 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 193-197:

59 Նույն տեղում՝ էջ 194:

60 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 196:

61 Попова О.И., Грибоедов - дипломат, Изд-во "Международные отношения", Москва, 1964, сс. 117-122.

62 Նույն տեղում՝ էջ 119-120:

63 Նույն տեղում՝ էջ 120:

64 Лебедев А., Грибоедов. Факты и гипотезы, ևշվ. աշխ., էջ 268-274:

բոյնդովի ուտոպիայում, նրանց այս դեպքում շփոթեցնում է քաղաքական արմատականության բացակայությունը, դրա թերի լինելը, ցարիզմին գերարմատական գիշումներ անելու, նույնիսկ ցարիզմի հետ համագործակցելու՝ ուտոպիայի հեղինակի պատրաստակամությունը»⁶⁵:

Վերոհիշյալ «Նախագիծը» Ա. Լեբեդևի կարծիքով բացարձակ միապետության և բուրժուազիայի միջև «դասական կոմպրոմիսի» (փոխգիջման) տարբերակ է⁶⁶: Ըստ Ա. Լեբեդևի՝ այդ փոխգիջումը կայանում էր բացարձակ միապետական կառավարման և մասնավոր ձեռնարկատիրության միջև, ընդ որում՝ ցարիզմին վերապահվում էր քաղաքականության ոլորտը: «Նման մտահղացման համաձայն,- գրում է նա,- առաջարկվում է ճորտատիրությունից դեպի աշխատուժի ազատ վարձակալման համակարգի աստիճանական, էվոլյուցիոն անցում»⁶⁷: Նա չի խուսափում ընդունել Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծում» առկա հակասականությունը, սակայն մյուսների նման ևս հակված է գերազնահատել «Նախագծի» նշանակությունը՝ այն համարելով Ա. Գրիբոյեդովի կողմից ստեղծված որոշակի ծրագրային փաստաթուղթ, որով նա փորձում էր իրականացնել դեկաբրիստների ծրագրում առկա նպատակները: Ա. Լեբեդևը գտնում է, որ «Նախագիծը» թեև տարբերվում էր դեկաբրիստների ծրագրային փաստաթղթերից, բայց նայնպես դեմ չէր և չէր հակասում դրանց⁶⁸:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագրծի» մասին խոսելիս հարկ է ներկայացնել նաև այսրկովկասյան խորհրդային պատմագիտության այն ներկայացուցիչների աշխատությունները, որոնցում անդրադարձ կա այս խնդրին:

Նախքան Օ. Մարկովայի հրապարակումը **Ի. Ենիկոլոպովն** Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծին» **անդրադարձել է միայն հպանցիկ՝** նշելով, թե ինչքան լայն է եղել Ա. Գրիբոյեդովի հետաքրքրությունների ոլորտը, և նա որքան քաջատեղյակ է եղել Անդրկովկասի հասարակական, տնտեսական և մշակութային գործերից: **Զվերյուծելով Ի. Բուրցովի բացասական «կարծիքը»՝ Ի. Ենիկոլոպովը** գտնում է, որ **Ա. Գրիբոյեդովի մահից հետո Ի. Պասկևիչի հաջորդ Ռոզենի թույլտվությամբ Պ. Զավիլեյսկու ջանքերով ստեղծված «3a-**

кавказское торговое дело» («Անդրկովկասյան առևտրային գործ» - Վ.Ս.) ընկերությունը հենց «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» գաղափարների հիման վրա ստեղծված համեստ ձեռնարկ է եղել⁶⁹:

Ի. Ենիկոլոպովը «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» առավել մանրամասն անդրադառնում է հետագա աշխատություններում⁷⁰, որոնցում վերանայում է Ի. Բուրցովի կողմից «Նախագծին» տված կարծիքի վերաբերյալ իր նախկին տեսակետը: Այժմ, արդեն, նա գտնում է, որ Ի. Բուրցովը դրական է արտահայտվել Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» շուրջ: Ի. Ենիկոլոպովը, որպես իր տեսակետների ապացույց, հղում է կատարում Լենինգրադի (Պետերբուրգի) Պատմության պետական կենտրոնական արխիվից հայտնաբերված **“Мнение об учреждении Российской Закавказской компании” («Կարծիք Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման մասին» - Վ.Ս.) վերնագրով փաստաթղթին⁷¹:**

Ըստ Ի. Ենիկոլոպովի՝ վերոհիշյալ վավերագիրը կարելի է համարել Ի. Բուրցովի կարծիքը ներկայացնող ոչ ամբողջական փաստաթուղթ: Կարծիքի հեղինակը հենց սկզբում փոքր ներածականից հետո գրում է. «Մտածված կանոններով կառուցված և կազմված լինելով միայն ռուսական բաժնետերերից՝ Ընկերությունը մեծ օգուտ կրերի պետությանը. այդ երկրում այն թույլ չի տա օտարերկրյա կապիտալի կիրառում և դրանով այնտեղ ներդրված կապիտալի սպառնալի աճի ողջ շահույթը շրջելով մեր հայրենիքի ընդերքը՝ կծառայի նրա հարստացմանը: Այս գաղափարը ես համարում եմ ընկերության ստեղծման և նրա բոլոր գործողությունների համար ամենակարևորը և, այսպես ասած, հիմնականը»⁷²:

Ելնելով փաստաթղթում արտահայտված հենց այդ մտքից՝ Ի. Ենիկոլոպովը և խորհրդային մյուս հետազոտողները սկսում են համարել, որ Ի. Բուրցովը դրական է արտահայտվել Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» վերաբերյալ, իսկ վերոհիշյալ տողերից հետո Կովկասում արևադարձային բույսերի աճեցման, մանուֆակտուրաների ու ֆաբրիկաների հիմնադրման, **Ընկերության արտոնությունների և այլ նպատակների վերաբերյալ արտահայտված բացասական**

69 Ениколопов И.К., А.С. Грибоедов в Грузии и Персии, ևշվ. աշխ., էջ 60-61.

70 Ениколопов И.К., Грибоедов в Восток, ևշվ. աշխ., էջ 143-160, նույնի՝ А.С. Грибоедов в Грузии, ևշվ. աշխ., էջ 54-82:

71 Ениколопов И.К., Грибоедов в Грузии, ևշվ. աշխ., էջ 128-129 (վկայականում է այդ արխիվի ֆոնդ №1018, գործ 233, էջ 1-2 փաստաթուղթը):

72 Նույն տեղում՝ էջ 128:

65 Лебедев А., Грибоедов. Факты и гипотезы, ևշվ. աշխ., էջ 270:

66 Նույն տեղում՝ էջ 270-271:

67 Նույն տեղում՝ էջ 271:

68 Նույն տեղում:

տեսակետները համարվում են Ի. Բուրցովի «դրական կարծիքի» վրա չազդող երկրորդական դիտողություններ:

Ի. Ենիկոլոպովը գուգահեռներ է անցկացնում իր՝ «Ի. Բուրցովի կարծիքն» արտահայտող հրապարակած փաստաթղթի, «Քարորության միության» կանոնադրության ու Պ. Պեստելի «Практические начала политической экономии» («Քաղաքական տնտեսության գործնական սկզբունքներ» - Վ.Ս.) աշխատությունների միջև: Ընդ որում, դրանց ազդեցությունը նա տեսնում է ոչ միայն «Ի. Բուրցովի կարծիքի» «դրական» հատվածում, այլ նաև այն մասում, որտեղ վերջինս քննադատում է տնտեսական ապրանքների վերամշակման, ձեռնարկությունների, արհեստավորական մանուֆակտուրաների հիմնման և արևադարձային բույսերի մշակման հետ կապված «Ընկերության» նախաձեռնությունները⁷³:

Ի. Ենիկոլոպովը հրապարակում է նա մեկ փաստաթուղթ, որը դարձյալ Լենինգրադի Պատմության պետական Գենտրոնական արխիվում այս անգամ հայտնաբերել էր Ա. Իոսելիանին՝ «Замечания на записку об устройстве земледельческой, мануфактурной и торговой компании» («Գիտողություններ հողագործական, մանուֆակտուրային և առևտրային ընկերության կառուցվածքի մասին գրություն» - Վ.Ս.) վերնագրով⁷⁴: Ամենայն հավանականությամբ դա հենց այն փաստաթուղթն է, որից ժամանակին օգտվել էր Ա. Մալչինսկին, քանի որ, ինչպես նշում է Ի. Ենիկոլոպովը, ն փաստաթղթում ն Ա. Մալչինսկու հրապարակման մեջ համընկնում են բաց թողած հատվածները: Սակայն այս փաստաթուղթը բնօրինակը չէր. բնօրինակը, ինչպես նշել ենք, հայտնաբերում և հրապարակում է Օ. Մարկովան:

Հետագայում Ի. Ենիկոլոպովն այլևս չի սկեռվում Ա. Իոսելիանիի հայտնաբերած փաստաթղթի վերլուծության հարցերի վրա և նույնիսկ չի անդրադառնում Ի. Բուրցովի և Մ. Ժուկովսկու կարծիքներին, իսկ «Նախագծի» գնահատման հարցերում մնում է նախկին դիրքերում՝ այն համարելով Այսրկովկասի արտադրողական ուժերի զարգացման «վիթխարի նախագիծ», որը դատապարտված էր ձախողման⁷⁵:

Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծին» անդրադարձել

73 Ениколопов И.К., Грибоедов в Грузии, ևշվ. աշխ., էջ 68-69:

74 Նույն տեղում՝ էջ 130-157 (վկայակոչում է այդ արխիվի ֆոնդ 1018, թղթ. 3, գործ 234, էջ 1-55 փաստաթուղթը):

75 Ениколопов И.К., "Грибоедов и Восток", ևշվ. աշխ., էջ 125-127: 228

է նաև վրացի պատմաբան Վ. Շադուրին⁷⁶: Վերջինս մանրամասն չի վերլուծում «Նախագծին» վերաբերող բոլոր հարցերը. նրա անդրադարձն ավելի շատ նման է քաղաքական գնահատականի: Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությունը համարելով Անդրկովկասի տնտեսական և մշակութային վերափոխման վիթխարի նախագիծ՝ նա գտնում է, որ «Նախագծում» տրված է Անդրկովկասում ցարիզմի ֆեոդալագիշատչային քաղաքականության քննադատությունը, նկարագրված է տեղական բնակչության իրավագրկությունն ու ճնշումը: «Նախագիծը», ըստ նրա, պահանջում է հաշվի առնել տեղական պայմանների առանձնահատկությունները, վերացնել «իշխող» և «հպատակ» ժողովուրդների միջև իրավական անհավասարությունը: «Նախագիծը» նրա կարծիքով ընդունում է արդյունաբերության, գյուղատնտեսության ու առևտրի զարգացման, տեղական բնակչության տեխնիկամշակութային մակարդակի բարձրացման և այլ ճանապարհներով Անդրկովկասի տնտեսական, քաղաքական ու մշակութային վերակառուցման անհրաժեշտությունն ու ընդհանուր օգտակարությունը⁷⁷:

Մեր կողմից նշենք, որ «Նախագծում» նման քննադատություններ և պահանջներ չկան և չէին կարող լինել: Վ. Շադուրին այն հեղինակներից է, ով կապ է տեսնում Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծում» տեղ գտած գաղափարների և այդ ժամանակվա առաջադեմ հայացքների տեր վրացիների, մասնավորապես Ա. Ճավճավաձեի գաղափարների միջև: Նա օրինակ է բերում վերջինիս կողմից կազմած «Краткий очерк положения Грузии 1801-1831гг.» («Վրաստանի 1801-1831թթ. վիճակի համառոտ պատմական ակնարկ» - Վ.Ս.) վերնագրով փաստաթուղթը՝ որպես այդ կապը հաստատող փաստաթուղթ⁷⁸:

Հայ հեղինակներից, ով նա անդրադարձել է Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագծին» Վ. Պարսամյանն է⁷⁹: Նա, բարձր գնահատելով «Նախագիծը», այն համարում է Անդրկովկասը Ռուսաստանի ծաղկուն մարզերից մեկը դարձնելու լուսամիտ ծրագիր⁸⁰: Վ. Պարսամյանը գրում է. «Գրիբոյեդովի նախագիծը մեզ հայտնի առաջին փաստաթուղթն է, որում նա հանգամանորեն

76 Шадури В., Грибоедов и грузинская культура, Изд-во "Зоря Востока", Тбилиси, 1946, сс. 25-28.

77 Նույն տեղում՝ էջ 25:

78 Նույն տեղում՝ էջ 27-28:

79 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., էջ 159-164:

80 Նույն տեղում՝ էջ 160:

քննադատում է Անդրկովկասի տնտեսական, վարչական ու կուլտուրական հետամնացությունը և հիմնավորում կյանքի նոր, կապիտալիստական ձևեր մտցնելու անհրաժեշտությունը»⁸¹:

Խորհրդահայ որոշ հեղինակներ, ովքեր իրենց հետազոտություններում այս կամ այն կերպ անդրադարձել են Ա. Գրիբոյեդովի գործունեությանը (**Մ.Գ. Ներսիսյան, Ջ.Տ. Գրիգորյան, Բ.Պ. Բալայան, Ա.Հ. Քյուրբջյան և այլք**), կամ շրջանցել են «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծը», կամ էլ իրենց անդրադարձներում դարձյալ փաստել են խորհրդային պատմագիտության մեջ ընդունված կարծիքները: Վերոնշյալ հանգամանքն ունի օբյեկտիվ բացատրություն. իրենց հետազոտություններում խորհրդահայ հեղինակները հիմնականում անդրադարձել և խորամուխ են եղել Կովկասում և Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի գործունեության, հայ-ռուսական հարաբերությունների ու Գրիբոյեդով-Հայաստան կապերի հարցերում:

Խորհրդային շրջանի վերջին փուլի հետազոտողներից **Ն. Էյդելմանը** «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագիծ»-ը համարում է Պարսկաստանում անգլիական «Արևելա-հնդկական ընկերության» ազդեցության դեմ արարված քաղաքական մտահղացում: Նա գրում է, որ իր ուժեղագույն հակառակորդի դեմ տեսակով դրա նմանությամբ «Ընկերություն» հիմնելու առաջարկով Ա. Գրիբոյեդովը **կարծես թե փորձում էր «ընդհատել» իր ճակատագիրը**⁸²:

Վկայակոչելով այն ժամանակի ռուսական ապրանքադրամական հարաբերությունների մակարդակն ու Անդրկովկասի դրությունը՝ Ն. Էյդելմանը գրում է, որ այդ պայմաններում Ա. Գրիբոյեդովն ու Պ. Չավիլեյսկին առաջարկում էին բոլորովին անիրագործելի ծրագիր⁸³:

Այն հարցին՝ «գո՞հ էր» Ա. Գրիբոյեդովը, թե՞ «փորձարար», Ն. Էյդելմանը, իաչաձևելով «Վազիր Մուխթարի» կերպարի հեղինակ Յու. Տինյանովի և «Փաստեր ու վարկածներ»-ի հեղինակ Ա. Լեբեդևի տեսակետները, համադրության մեթոդով ներկայացնում է իր բավականին յուրօրինակ եզրակացությունները: Այսպես, մտորելով այն հարցի շուրջ, թե ինչ կլիներ, եթե Ա. Գրիբոյեդովը Պարսկաստանում ողջ մնար, հեղինակն անմիջապես առաջադրում է երկու տարբերակ՝ **կամ**

ծառայություն, կամ արժանացում երմոլովյան ճակատագրին: Ըստ նրա՝ ապագայում Ա. Գրիբոյեդովին կարող էր փրկել միայն մի նոր «խելքից պատուհաս» ստեղծագործության արարումը (՝ – Վ.Ս.):

Նա գրում է. «... Գրիբոյեդովն իրականում զոհվել էր գրքի (Տինյանովի – Վ.Ս.) նախարանում՝ առաջին գործողության մեջ... Տինյանովը կռահում էր՝ չափազանցության հասցնելով, որի համար՝ որպես վեպի հեղինակ, ուներ գեղարվեստականացնելու իրավունք և դրա համար էլ նա ճշմարտությանն ավելի մոտ էր (՝ – Վ.Ս.), քան նրա ընդդիմախոսները: Ա. Լեբեդևը կառուցել է ֆանտաստիկ մոդել՝ մոռանալով գիտական այն հայտնի կանոնը, որ բավականին բարդ կառուցվածքի ճանապարհով կարելի է ապացուցել ցանկացած բան: Դրա համար էլ սկզբում պետք է փորձել առավել պարզ վարկածները: «Փոխզիջում-փորձ»-ի գաղափարն արհեստական վարկած է՝ բարդ ու մերժելի հասարակ բացատրություններով: Բացի այդ՝ այն չունի նաև պատմական հիմք: Եթե Տինյանովի ձևակերպումը («Ֆորմուլան») ժամանակի վազանցն է, որը վեպ է խցկում այն, ինչ-որ արդեն եղել է իրականում, ապա Լեբեդևը ոչ թե վնասում, այլ շարադրանքի առավել խիստ ժանրում իր հերոսին օժտում է այնպիսի գծերով, որոնք բոլորովին դուրս են ընկնում իրական պատմությունից: Ի՞նչ նշանակություն ունի փորձը («իշխանությունների հետ փոխզիջումը»), եթե այն չկա «իրերի բնության» մեջ, եթե այն ոչ միայն չի կրկնվելու Գրիբոյեդովից հետո, այլև ոչ մեկի կողմից չի նկատվելու հասարակական կյանքի հաջորդ տասնամյակներում (՝ – Վ.Ս.)»⁸⁴:

Մեր կողմից հարկ ենք համարում նշել, որ հարգարժան Ն. Էյդելմանն այնքան էլ խորությամբ չի հետազոտել Ա. Լեբեդևի աշխատությունը և իր մտավարժանքներում վերջինիս խոսքերով ասած՝ հակված է, իրոք, «շփոթմունք ապրելու», քանի որ մանևրում է գեղարվեստականի ու գիտականի «բացատրությունների» արանքում՝ այդպես էլ չկարողանալով սահմանել «ճշմարտության» վերաբերյալ իր պատկերացումները և, փոխանակ թվարկելու իր իսկ նշած «պարզ վարկածներից» թեկուզ մեկ-երկուսը, մերթընդմերթ շեշտում է, որ ինքը ձեռնպահ է նոր վարկածներ առաջադրելուց»⁸⁵: Ն. Էյդելմանը փորձ չի անում տնտեսական և իրավաբանական տեսանկյուններից վերլուծել «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» նախագիծը:

Հետխորհրդային հրապարակումներից արժե հիշատակել **Ն.Ա.**

81 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 164:

82 Н.Я. Эйдельман, Быть может за хребтом Кавказа, Москва, "Наука", Главная ред. восточной литературы, 1990, с. 111.

83 Նույն տեղում՝ էջ 162:

84 Н.Я. Эйдельман, Быть может за хребтом Кавказа, նշվ. աշխ., էջ 165-166:

85 Նույն տեղում՝ էջ 166:

Տարխտվայի հողվածը⁸⁶: Դրանում հեղինակը, համեմատելով և վերլուծելով Ռուսաստանի պատմության պետական արխիվի՝ Ի. Պասկևիչի ֆոնդերում պահպանվող «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագծին» վերաբերող բոլոր փաստաթղթերը, գտնում է, որ **Ա. Մալշինսկու և հետագայում Ի. Ենիկոլովի կողմից «Նախագծի» շուրջ հրապարակած «Գիտողությունների» ու «Կարծիքի» տեքստերն իրականում պատկանում են գեներալ Մ. Ժուկովսկուն, և որ վերջինիս կարծիքը «Նախագծի» վերաբերյալ ընդհանուր առմամբ եղել է դրական:** Ն. Տարխտվան նշում է, որ Մ. Ժուկովսկու քննադատական և բանավեճային հակադարձումները միշտ վերաբերում են «Նախագծի» առանձին հողվածներին, և **դրանց շուրջ գեներալի քննադատությունները չունեն ընդհանրացնող բնույթ:**

«Նախագծի հանդեպ վերաբերմունքը վառ արտահայտող և ընդհանրացնող տեքստի բացակայության պայմաններում,- գրում է Ն. Տարխտվան,- նշումների կտրուկ տոնը և առանձին դիտողությունների քննադատական բնույթը **Ժուկովսկու համար Գրիբոյեդովի և Չավիլևսկու մտահղացումը կործանողի համբավ ստեղծեցին**»⁸⁷: Հեղինակը վերջում եզրակացնում է. «Գեներալ Ժուկովսկու կարծիքը դրական է գնահատում «Անդրկովկասյան ընկերության նախագիծը», և դրա համար էլ Նախագծի անհաջողությունը Ժուկովսկու և նրանից հետո Պասկևիչի հետ կապող պատմական և պատմագրականագիտական հայեցակարգերը պահանջում են վերանայում և ճշգրտումներ»⁸⁸:

Այստեղ արժե նշել, որ Մ. Ժուկովսկու «Կարծիքը», անհասկանալի պատճառներով և չապացուցված կերպով դրական համարելով, իսկ Ի. Պասկևիչի անունն էլ քննադատողների ցուցակից հանելով՝ Ն. Տարխտվան, այնուամենայնիվ, չի նշում կամ վերլուծում «Նախագծի» մերժման պատճառները: Ավելին, հեղինակը ևս խուսափում է տնտեսագիտական և իրավաբանական տեսանկյուններից վերլուծել «Նախագծի» բովանդակությանը:

Հետխորհրդային շրջանում վերոհիշյալ հարցերին հայ հեղինակներից առավել հետաքրքիր մոտեցում է ցուցաբերում հետազոտող

Վ. Թունյանը⁸⁹, որի եզրակացությունը կարելի է համարել հետխորհրդային հայ պատմագիտության յուրօրինակ տեսակետ: Վ. Թունյանը «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» ստեղծման 3 աղբյուր է նշում. **1) վաղ ապրանքադրամական հարաբերությունների քաղաքատնտեսական մակարդակը (անգլիական «Արևելա-հնդկական ընկերություն» և Հյուսիս-ամերիկյան կղզիներ), 2) Ռուսաստանի կառավարական և տարածաշրջանային իշխանությունների կողմից Կովկասի յուրացման նպատակները, 3) ռուս գործարարների հետաքրքրությունները՝ արտահայտված Գրիբոյեդով-Չավիլևսկու կողմից ընկերությունների և տարբեր հասարակական կազմակերպությունների մարմնավորման անհրաժեշտության տեսքով** (⁹⁰⁰ - Վ.Ս.): Այդ ընկերության ստեղծողները, ըստ ուսումնասիրողի, «կարողացան մերժել կամ ներառել և արտահայտել Հարավային ծայրամասի «կապիտալիզացման» հրամայականի տարբեր ձևերը, մինևույն ժամանակ, ինքնակալական Ռուսաստանի պետական ջանքերով Չավիլևսկու ֆինանսական արշավախմբի գաղափարն ու իրականացումը սկսեցին ձևավորել Անդրկովկասի յուրացման մոտեցումները»⁹⁰:

Կարևորելով ոչ թե Պարսկաստանում, այլ հատկապես Անդրկովկասում «Ընկերության» հիմնադրման անհրաժեշտության նկատմամբ Ա. Գրիբոյեդովի հետաքրքրությունները՝ Վ. Թունյանը ներկայացնում է Կասպից ծովի առևտրի շուրջ քննարկվող երեք ուղղությունները՝ նշելով, որ **կարևորվել է երրորդ՝ Ռեդուտ-Կալե-Թիֆլիս-Երևան-Բաքվի վրայով անցնող ուղղությունը:** Մինևույն ժամանակ փաստելով նաև «Նիժեգորոդյան տոնավաճառի» առևտուրը քայքայող «անդրկովկասյան տարանցիկ առևտրի» ուղու փակման գործում ֆինանսների նախարար կոմս Կանկրինի ապարդյուն ջանքերը՝ նա հավելում է, որ դրա փակումը ժամանակի խնդիր էր, իսկ Ա. Գրիբոյեդովը ռուս-թուրքական ընթացիկ պատերազմի պայմաններում Պարսկաստանում առևտրաշրջանառության հաջողություններ չէր ակնկալում: **Հարց է առաջանում, իսկ որտեղ է վկայված վերջին հանգամանքը: Ա. Գրիբոյեդովը իշխանությունների կողմից հանձնարարականներ չի ունեցել այդ առումով: Վերջինս ընդամենը քարտուղար էր Ս. Մազարովիչի առաքելության կազմում:**

Ըստ ուսումնասիրողի՝ **«Ահա, թե ինչու էր հարկավոր, որ Ա. Գրիբոյեդովը**

86 Тархова Н.А., "О проекте Российской Закавказской компании" (По материалам архива И.Ф. Паскевича в РГИА), в кн. "Проблемы творчества А.С. Грибоедова (Сборник статей - В.С.)", Ред-ор Фомичев С.А., Изд-во "Траст-ИМАКОМ", Смоленск, 1994, с. 285-295.

87 Նույն տեղում՝ էջ 289:

88 Նույն տեղում՝ էջ 295:

232

89 Туян В.Г., А.С. Грибоедов и Армения, ևշվ. աշխ., էջ 52-55, նույնի՝ А.С. Грибоедов: новое в известном, Ереван, Чаргарагет, 2015, с. 96-130.

90 Туян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, ևշվ. աշխ. էջ 116:

հաշվի առնել կառավարության կողմից Անդրկովկասի տնտեսական բարեշինման նկարագիրը, օգտագործել նրա հովանավորությունը և ներգրավել տեղական կալվածատերերի ու առևտրականների հնարավորությունները: Անդրկովկասում (ընկերության հիմնելու համար – Վ.Ս.) այդպիսի հենարան կարող էր դառնալ Ջավիլեյսկին, իսկ Պարսկաստանում Գրիբոյեդովն այդպիսի օգնական չէր կանխատեսում: Այս ամենի արդյունքում էլ ծնունդ առավ «Անդրկովկասյան ընկերության» գաղափարը⁹¹:

Նշենք, որ սա վիճելի տեսակետ է, քանի որ ակնհայտ է, որ «Նախագծում» հենց սկզբից էլ անտեսված են վերը թվարկած հանգամանքները, չնայած, որ Ի. Պասկևիչին հղած նամակում Ա. Գրիբոյեդովն ինքն էր գեներալին հիշեցնում «մի քանի ունևոր մարդկանց կողմից կոմերցիոն ընկերության» ստեղծելու մասին հանձնարարականը: Սրան դեռ կանոնադառնանք:

Փաստենք նաև, որ իր աշխատություններում հեղինակն ընդունվածի պես գերադրական տոնով չի արտահայտվում վերոհիշյալ «Նախագծի» շուրջ, այլ հանդես է բերում ավելի սթափ և իրատեսական մոտեցում: Օրինակ, ներկայացնելով Օ. Մարկովայի այն տեսակետը, ըստ որի Մ. Ժուկովսկու հիմնական անհամաձայնությունը վերաբերում էր գյուղացիների ազատագրման հարցերին, բայց «նա դրա մասին չէր խոսում, որպեսզի չնվազեցնել իր առարկությունների համոզությունը», ապա, համառոտ ներկայացնելով Մ. Ժուկովսկու վերոհիշյալ առարկությունները, Վ. Թունյանը գրում է. «Ինչպես տեսնում ենք, առարկությունների Լուրյունը իրենից ներկայացնում է ոչ թե գյուղացիական հարցի վերաբերյալ «Ժուկովսկու և Գրիբոյեդովի միջև բանավեճ», այլ երկրամասը կառավարելու և դրա ամրապնդման միջոցների շուրջ բոլորովին այլ մոտեցում: Առարկությունների բովանդակությունը ցույց է տալիս, որ Մ. Ժուկովսկին ընկերության նախագծում տեսել է մասնավոր ձեռքերում երկրամասի «մոնոպոլիզացում» («մենաշնորհայնացում» - Վ.Ս.) և պետությունից նրա օտարման հնարավորությունը⁹²:

Վ. Թունյանն էլ է նշում, որ «Նախագծում» առկա է բուրժուական մոտեցում, իսկ կառավարությունը, հանձին ֆինանսական գերատեսչության ղեկավար Ե.Ֆ. Կանկրինի, ցանկանում էր երկրամասի տնտեսության զարգացման գործում օգտագործել ֆեոդալաճորտատիրական

կարգերի հնարավորությունները: Անդրկովկասի զարգացման գործում ուսումնասիրողը պետության մոտեցման այդպիսի ապացույց է համարում Թիֆլիսի նախկին փոխնահանգապետ և Վրաստանի պետական հիմնարկաբաժնի ղեկավար Օ. Վասիլևսկու կազմած «Օծօթբուսե Յակավկասկոյո կրայ» («Անդրկովկասյան երկրամասի տեսական» - Վ.Ս.) գրությունը: Ըստ Օ. Վասիլևսկու «Գրության» պետությունը պետ է խրախուսել տեղաբնիկների կողմից արդեն յուրացված գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, ինչը կրեբեր արդյունաբերական հիմքերի ստեղծման, իսկ թույլ զարգացած երկրամասում ցանկացած արտոնյալ ընկերությունների հիմնադրման հետևանքով տեղական բնակչությունը կմնար նախկին անտաշ և թերզարգացած վիճակում⁹³:

Ամեն դեպքում քննարկվող հարցերի շուրջ Վ. Թունյանի տեսակետը զգալի առաջընթաց քայլ է Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրությունների և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» գնահատման գործում, չնայած որ նրա մոտ էլ կան բացթողումներ և վիճելի եզրակացություններ: Այսպես, հիշատակելով Ի. Բուրցովին՝ որպես «Նախագծի» վերաբերյալ կարծիք հայտնած մարդու, նա ընդհանրապես չի անդրադառնում, նույնիսկ չի նշում՝ այդ կարծիքը դրական է եղել, թե՛ բացասական: Նա ընդամենը փաստում է Ի. Բուրցովի և Մ. Ժուկովսկու արտահայտած կարծիքների շուրջ խորհրդային հեղինակների տված գնահատականները և քննադատում է խորհրդային պատմագրության ջանքերով «Ընկերության» կարգավիճակը որպես «տնտեսագիտական մտքի գլուխգործոց» ներկայացնելու պնդումների շուրջ մեր կողմից ներկայացրած առարկությունները⁹⁴:

Այդ առումով հարգարժան դոկտորը գրում է. «Խոսքերի մոգուրությունը չեն կարող փոխարինել Անդրկովկասի տնտեսական յուրացման վերաբերյալ Գրիբոյեդովի ճանաչողությանը (՝ – Վ.Ս.)... Բերված գնահատականներն ունեն որոշակի հանձնառույթ (միտում), այն է՝ ի ցույց դնել ցարիզմի ֆեոդալագիշատչային քաղաքականությունը

93 Тунян В.Г., А.С. Прибоедов и Армения, ևշվ. աշխ., էջ 55:

94 Սիսոյան Վ.Ռ., *1828թ. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» գնահատման շուրջ», ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2007, 2(619), մայիս-օգոստոս, էջ 112-121, նույնի՝ «Ա.Ս. Գրիբոյեդովի տնտեսագիտական գործունեության որոշ հարցեր», ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2008, 3(623), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 35-48:

91 Тунян В.Г., А.С. Прибоедов: новое в известном, ևշվ. աշխ., էջ 104-105:

92 Тунян В.Г., А.С. Прибоедов и Армения, ևշվ. աշխ., էջ 54-55:

կամ էլ նրա հակամոնոպոլիստական ուղղվածությունը, մինչդեռ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» նախագիծը նախատեսում էր մասնավոր անձանց կողմից տարածաշրջանի մոնոպոլացում՝ արհամարհելով պետական շահերը: Մեծարվում է անձնական գործոնը՝ հանձին Մ. Ժուկովսկու և Ի. Պասկևիչի: Դրա հետ մեկտեղ՝ լինի այն անցումային (փուլի – Վ.Ս.) կամ ուժեղ կայսերական աշխանության արտահայտություն, բաց է թողնվում (опускается – ⁹⁵ – Վ.Ս.) «Նախագծի» ստեղծման բուն պատմական ժամանակը, երբ կառավարական մարմինների կողմից կատարվում էր ինքնակալության վարչատնտեսական քաղաքականության որոշարկում»⁹⁵:

Փաստենք, որ ինչպես այս, այնպես էլ Օ. Վասիլևսկու վերոհիշյալ «Տեսլական»-ից ներկայացված մեջբերումների առումով այնքան էլ պարզ չէ հետազոտող Վ. Թունյանի դիրքորոշումն Անդրկովկասում արտոնյալ ընկերություն ստեղծելու դրական կամ բացասական հետևանքների շուրջ: Մեր կարծիքով մեծավաստակ ռուսաստանագետն այլ ուսումնասիրողների պես ևս շրջանցում է «Նախագիծ»-ը իրավաբանական և տնտեսագիտական չափանիշներով գնահատելու անհրաժեշտությունը, ուստի կփորձենք նրա որոշ տեսակետների նկատմամբ մեր համերաշխությունը կամ անհամաձայնությունը ներկայացնել հաջորդիվ կատարած վերլուծություններում:

Հետխորհրդային ռուսական պաշտոնական տեսակետն արտահայտող գրականության մեջ⁹⁶ արդեն **չեն արժարժվում ո՛չ Ա. Գրիբոյեդովի «տնտեսագիտական փայլուն մտքերի», ո՛չ էլ Անդրկովկասը դեպի «պայծառ ապագա» առաջնորդող «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» հանճարեղ նախագծի մասին հարցերը:**

Ամփոփելով ասվածը՝ նշենք հետևյալը.

1. Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների և տնտեսագիտական հետաքրքրություններին վերաբերող հիմնական գիտական լուրջ աշխատությունները հրապարակվել են խորհրդային տարիներին, և հենց այս ժամանակաշրջանում էլ ավարտվել է գրող Գրիբոյեդովի անձի վերջնական քաղաքականացումն ու բացարձականացումը:

95 Туния В.Г., А.С. Грибоедов: новое в известном, ևշվ. աշխ., էջ 130:

96 Данилов А.А., История России с древнейших времён до наших дней в вопросах и ответах, 2004, ևշվ. աշխ., Կ. 1, История России, Орлов А.С., Георгиев В.А., Георгиева Г., Сивохина Т.А., "Проспект", 2006, ևշվ. աշխ., История России с древнейших времён до конца XX века, 2001, ևշվ. աշխ., История России с древнейших времён до наших дней, 2007, ևշվ. աշխ., Платонов С., Полный курс по русской истории, 2005, ևշվ. աշխ., Французова О.А., История России в вопросах и ответах, 2005, ևշվ. աշխ.:

2. Եթե XX դարի 20-40-ական թվականներին, չհաշված առանձին դրսևորումներ, դեռ հանդիպում էին Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների և տնտեսագիտական հետաքրքրությունների վերաբերյալ լուրջ տարակարծություններ և գիտական բանավեճ ծավալելու նպատակ հետապնդող հրապարակումներ, ապա 1950-ական թվականներից այդ տարակարծություններն ու բանավեճերն արդեն միայն թվացյալ էին և ընթանում էին զուտ երկրորդական հարցերի շուրջ:

3. Ճորտատիրական կարգերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքին և «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին» առնչվող գլխավոր հարցերի վերլուծությունը խորհրդային գաղափարախոսության ազդեցության շնորհիվ են ստացել իրենց «վերջնական պատասխանը»: Խորհրդային պատմագիտության կողմից Ա. Գրիբոյեդովը հռչակվել է ճորտատիրական կարգերի հակառակորդ, դեկաբրիստներից շատերի ընկեր և նրանց գաղափարակից: Ներկայացվել է, որ «դեկաբրիստ» Ա. Գրիբոյեդովն իր հեղափոխական «ընկերների» հետ ակտիվորեն պայքարել է ճորտատիրական կարգերի վերացման համար: Սակայն վերոհիշյալ պնդումներն անհիմն են, քանի որ այդ «պայքարին մասնակից լինելու» վերաբերյալ ոչ մի վավերագիր չկա. դրա մասին իրենց հուշերում կամ նամակներում չեն վկայում ո՛չ նրա դեկաբրիստ «ընկերները», ո՛չ նրանց հակառակորդները, ո՛չ էլ ինքը՝ Ա. Գրիբոյեդովը:

4. Ա. Գրիբոյեդովի սոցիալական հայացքներն ու տնտեսագիտական հետաքրքրությունները բացահայտող, բայց մեզ հասած քիչ թե շատ լուրջ փաստաթուղթը մնում է «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծը», ինչից էլ օգտվել է խորհրդային պատմագիտությունը՝ տվյալ «Նախագիծ»-ը որպես տնտեսագիտական մտքի գլուխգործոց, իսկ Ա. Գրիբոյեդովին էլ որպես ճորտատիրական կարգերի վերացման ջատագով ներկայացնելիս:

2. Ռուսական կայսրության ազգային-գաղութային տնտեսական քաղաքականությունն Այսրկովկասում

Ա.Ս. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների և տնտեսագիտական հետաքրքրությունների շուրջ հարցերը՝ վերլուծելուց առաջ *հարկ է անդրադառնալ այն նախադրյալներին, որոնք ազդել են վերոհիշյալ խնդիրների շուրջ գրողի դրսևորած հետաքրքրությունների և գործունեության վրա:*

Համառոտ ներկայացնենք այսրկովկասյան ժողովուրդների հանդեպ Ռուսաստանի վարած տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև Ա.Պ. Երմոլովի և նրա շրջապատի մարդկանց տնտեսական գործունեության ազդեցության ներքո Ա. Գրիբոյեդովի մասնակցությունն Այսրկովկասի տնտեսական զարգացման գործընթացին:

Այսրկովկասի մի մասի ռազմակալումից հետո Ռուսաստանը ձեռնարկում է նաև երկրամասի տնտեսական նվաճումը: Այս քաղաքականության գլխավոր խնդիրն այն էր, թե ինչպես *կազմակերպել նորանրված երկրամասի շահութաբերությունը, որը կարդարացներ այն բոլոր ջանքերն ու ծախսերը, որոնք ներդրվել էին այդ տարածքները ռազմակալելու գործում:* Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ռուս կառավարչապետի կողմից այստեղ տնտեսական կյանքն աշխուժացնելու փորձեր են կատարվում:

Դեռևս 1817թ. Պարսկաստանում դեսպանական առաքելություն իրականացնելիս Ա. Երմոլովը, ի թիվս այլ հարցերի, *քննարկել է նաև ռուս-պարսկական առևտրա-տնտեսական հարաբերությունների այնպիսի հարցեր²*, որոնք կարևոր էին դիտվում Այսրկովկասի տնտեսության զարգացման համար: 1820-ական թվականների սկզբին Ռուսաստանի

և Պարսկաստանի միջև առևտրային հարաբերություններն արագորեն ընդլայնվում են, ինչը պայմանավորված էր *երկու հանգամանքներով՝ առաջինը* 1821-1823թթ. պարսկա-թուրքական պատերազմն էր, որի հետևանքով զգալիորեն թուլանում են Անգլիայի դիրքերը, քանի որ *Հնդկաստանից Պարսկաստանով և Թուրքիայով անցնող անգլիական առևտրային կարճ ուղիները գրեթե չէին գործում:*

Ռուս-պարսկական առևտրային հարաբերությունների զարգացմանը նպաստող *երկրորդ հանգամանքը* Ռուսաստանից Պարսկաստան արտահանվող և այնտեղից հակառակ ուղղությամբ ներկրվող *սպարանքներից գանձվող մաքսի իջեցումն էր մինչև 5%-ի*, ինչն առաջին հերթին բխում էր 1813թ. Գյուլիստանի պայմանագրով նախատեսված դրույթներից: Երկու երկրների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունների կարգավորմանն են վերաբերում *այդ պայմանագրի V-X հոդվածները* (բացառությամբ VI-ի, որը վերաբերում էր ռազմագերիների և փախստականների վերադարձին): *Պայմանագրի IX հոդվածում* մասնավորապես ասվում է. «Պարսկական քաղաքներ կամ նավահանգիստներ բերվող ռուս վաճառականների ապրանքներից *գանձել 100-ից 5%-ից ոչ ավելի մաքս*՝ նրանցից չպահանջելով վճարել կրկնակի, ուր էլ որ այդ վաճառականները նույն ապրանքով գնան, և այդքան էլ գանձել այնտեղից բերվող պարսկական ապրանքներից...»³:

Գյուլիստանի պայմանագրով նախատեսված դրույթների իրագործմանն էր վերաբերում կայսեր՝ “О торговоюихъ Россійскихъ подданныхъ и иностранныхъ въ Грузіи, Имеретіи и въ областяхъ къ нимъ принадлежующихъ” («Վրաստանում, Իմերեթում և նրանց պատկանող մարզերում առևտր կատարող ռուսահպատակների և օտարերկրացիների մասին» - Վ.Ս.) 1821թ. հոկտեմբերի 8-ի հրամանագիրը, որով 5%-ոց միասնական արտոնյալ մաքսավճար էր հաստատվում Վրաստան ներմուծվող և տարանցիկ ճանապարհով դեպի Պարսկաստան արտահանվող օտարերկրյա ապրանքներից (§ 5): Օտարերկրյա ապրանքներ ներմուծելու նպատակով որպես նախնական («առաջին անգամվա համար» - Վ.Ս.) *նավահանգիստ էր հաստատվում Սև ծովի կովկասյան առափնյա Ռեդուտ-Կալե նավահանգիստը* (գտնվում է Փոթիից հյուսիս): Հետագայում տեղական իշխանությունները պետք է կառուցապատեին

1 Սիմոնյան Վ.Ը., «1828թ. «Ռուս-անգլիկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» գնահատման շուրջ», նշվ. հոդված, էջ 112-121, նույնի՝ «Ա.Ս. Գրիբոյեդովի տնտեսագիտական գործունեության որոշ հարցեր», նշվ. հոդված, էջ 35-48 (Երկու հոդվածներում նշված է «Ռուս-անգլիկովկասյան» մինչ այսօր ընդունված ձևով, սակայն, ինչպես նշել ենք, ճիշտ «Ռուսական-անգլիկովկասյան» ձևն է - Վ.Ս.): Երկրորդ հոդվածի տեքստի առաջին տողում կա վրիպակ, 1828 թվականի փոխարեն թյուրիմացաբար տպագրվել է 1878 թվականը - Վ.Ս.:

2 Орлик О.В., Россия в международных отношениях 1815-1829гг. (От Венского конгресса до Адрианопольского мира), Россия на Среднем Востоке, Политика европейских держав, Чрезвычайное посольство А.П. Ермолова в Персии, «Наука», Москва, 1998, с. 123-136.

3 «Договоры Россіи съ Востокомъ - Политическіе и торговые», Историческій обзор, «Персія», Собраль и издать Т. Юзефович, Тип-я О.Н. Бакста, С.Петербург, 1869, с. 213.

հարմար և անվտանգ նոր նավահանգիստներ (§ 6): Ինչպես Ռեդուտ-Կալեից, այնպես էլ Բաքվից Թիֆլիս տանող առևտրային տրանսպորտը պետք է ապահովվեր ռազմական պահակազորի ուղեկցությամբ (§ 9):

Այս հրամանագրով բավական լայն արտոնություններ էին նախատեսվում նաև օտարերկրյա վաճառականների համար: Նրանք, ովքեր հրամանագրի ուժի մեջ մտնելուց հետո այդ երկրամասում առաջին 10 տարվա ընթացքում կբացեին առևտրի տներ և կիրականացնեին մեծածախ առևտուր, **կդառնային առաջին դասի (գիղղիայի) վաճառական** և այդ ժամանակահատվածում **կազատվեին բոլոր հարկերից ու տուրքերից**՝ բացի տեղական այն քաղաքի հարկերից, որտեղ գործում էին (§ 1 և § 2): Նրանց թույլատրվում էր նաև ձեռք բերել անշարժ գույք, պետական հողերից՝ հողակտորներ, ինչպես նաև թույլատրվում էր տեղական իշխանությունների օգնությամբ «ասիական սովորություններով» կազմակերպել իջևանատներ (քարավանատներ) (§§ 3, 4, 8): Հրամանագիրն ուժի մեջ է մտնում **1822թ. հուլիսի 1-ից**, իսկ դրանով նախատեսված արտոնյալ մաքսագանձումները տարածվում էին ինչպես ռուսահայաստակ, այնպես էլ օտարերկրացիների վրա և գործում էին միայն Անդրկովկասի տարածքում (§ 1, § 10): Կովկասյան լեռնաշղթայով տեղափոխվող ապրանքների մաքսագանձումները կատարվելու էին ասիական և եվրոպական սակագուցակներով՝ ըստ ապրանքի ծագման (§ 5)⁴:

Ելնելով Գյուլիստանի պայմանագրի դրույթներից՝ ռուս-պարսկական առևտրային հարաբերությունների կարգավորմանն էր վերաբերում Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովի հատուկ հարցման հիման վրա Ռուսաստանի ֆինանսական գերատեսչության ղեկավար **Գ.Ա. Գուրևի**՝ 1822թ. ապրիլին հրապարակած հրամանագիրը, ըստ որի՝ մինչև 5% մաքս էր գանձվելու Պարսկաստանից Ռուսաստան ներմուծվող ապրանքների հայտագրված արժեքից:

Ռուս-պարսկական մաքսային սահմանագիծն ընդարձակվում է, սահմանապահ ուղեկալները Պարսկաստանից ներմուծվող ապրանքներից մաքսը տեղում գանձելու իրավունք են ստանում, ինչը հնարավորություն է տալիս խուսափել շրջանցիկ ճանապարհով հասնել այն քա-

ղաքները, որտեղ մաքսատներ կային⁵: **Ըստ մաքսային վիճակագրության՝ այս ամենի արդյունքում 1820-1823 թվականներին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տարեկան միջին ապրանքաշրջանառությունը 1814-1818թթ. համեմատությամբ աճում է երկու անգամ, իսկ 1823թ. գերազանցում է 4 միլիոն ռուբլին⁶:**

1820-ական թվականների սկզբին Ռուսաստանում նախապատրաստվել է ռուս-պարսկական տարանցիկ առևտրին վերաբերող համաձայնագիր, որի կազմման աշխատանքներին մասնակցել են գեներալ Ա. Երմոլովը, Ս.Ի. Մազարովիչը, Թիֆլիսում Ֆրանսիայի հյուպատոս Գամբան, ֆրանսիական գվարդիայի կապիտան Թ. Էթյեն, ֆրանսիացի վաճառականներ, Պարսկաստանի Շահզադե Աբբաս-միրզայի ֆրանսերենի թարգմանիչ և պետական քարտուղար Միրզա-Մասուդը, ինչպես նաև Ա.Ս. Գրիբոյեդովը⁷: Այսպիսի տեղեկացվածությունը, բնականաբար, ազդեցություն է գործել Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրությունների վրա: Ինչ վերաբերում է Այսրկովկասի ներքին տնտեսական կյանքին, ապա **դրանից ևս Ա. Գրիբոյեդովը տեղեկացված էր**, քանի որ Կովկասյան կորպուսի հրամանատար Ա.Պ. Երմոլովը որոշակիորեն հետաքրքրվել է տնտեսական հարցերով, իսկ Ա. Գրիբոյեդովը, մտերմիկ հարաբերությունների մեջ լինելով նրա ու շրջապատի հետ, անկասկած **տեղյակ է եղել Ա. Երմոլովի մտահոգություններին: Վերջինս մասնավորապես ցանկացել է Կովկասում և Այսրկովկասում զարգացնել շերամապահությունն ու մետաքսագործությունը, ինչպես նաև ողջ երկայնքով նավարկելի դարձնել Կուրը⁸:** Տնտեսական հարցերի հանդեպ Ա. Երմոլովի ու նրա շրջապատի մարդկանց ցուցաբերած հետաքրքրությունների մասին են վկայում մի շարք փաստաթղթեր:

Գիտակցելով, որ 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած շրջաններում տնտեսությունը հայտնվել է քայքայված վիճակում՝ **Ա. Երմոլովը փորձել է նախևառաջ թեթևացնել տեղացիների հարկային բեռը: Այդ մասին է վկայում Գ.Ա. Գուրևին ուղղված գրությունը, որով նա խնդրում էր Շուրազյալի (Շիրակի) գավառի նախկին 1000 ընտանիքներից տեղում մնացած 174-ից չգանձել 1813-1816թթ. հարկերից**

5 Семёнов Л.С., Россия и международные отношения..., ևշվ. աշխ., էջ 75:

6 Նույն տեղում էջ 78:

7 Балаян В.П., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1988, с. 134.

8 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1951, ևշվ. աշխ., էջ 537:

4 ՀԱԱ, Գյուտ Աղայանի արխիվ, ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 497, թերթ 12, տես նաև՝ ПСЗРИ, Санкт Петербург, 1830, томъ XXXVII, 1820-1821, док. 28.771, с. 871-872, док. 28.872, с. 872-873, տես նաև՝ Семёнов Л.С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-х годах XIXв., Изд-во Ленинградского университета, Л., 1963, с. 75-76.

մնացած 80000. պարտքը՝ ծայրահեղ աղքատության հասած լինելու պատճառով⁹:

Ալեքսանդր I-ին հղած զեկուցագրում Ա. Երմոլովը խնդրում էր Ղարաբաղի խանությունից (Արցախից) չզանձել հարկերից կուտակված պարտքը¹⁰, ինչին հետևում է ֆինանսական գերատեսչության ղեկավարին ուղղած Ալեքսանդր I-ի հրամանագիրը՝ Ղարաբաղի խանության բնակչությունից 34872 տուրքի հարկերի պարտքը չզանձելու մասին¹¹:

Ա. Երմոլովը Դ.Ա. Գուրկին¹² և Լ.Յա. Սեվարսամիձեին¹³ հղած գրություններում տեղեկացնում էր, որ իջեցվել են Փամբակի շրջանի բնակիչների հարկերը: Ի.Ա. Վելյամինովին ուղղված Ռ.Բ. Խովենի զեկուցագրից պարզ է դառնում, որ հացահատիկի մշակության համար Ալավերդու պղնձածուլական գործարանի 329 աշխատողների հատկացվել են հողատարածքներ¹⁴: Ռուսական իշխանությունների կողմից 1820-ականների սկզբին փորձ է արվել մարդահամար անցկացնել Ղարաբաղում, ինչի վկայությունն են Ի. Վելյամինովի նամակները՝ հղած Ներսես Աշտարակեցուն և Մեհտի-Կուլի խանին¹⁵:

Ղարաբաղի տնտեսական վիճակին են վերաբերում Ա. Երմոլովին ուղղված երկու զեկուցագրերը: Առաջինը գրվել է Մ. Մոզիլսկու ու Պ. Երմոլովի կողմից և բավական հանգամանալից տեղեկացնում է, թե ում և որքան հողատարածք է տրվել կապալային սկզբունքով¹⁶: Երկրորդ նամակում նույն անձինք մանրամասն նկարագրում են, թե տարբեր հարկերի ու տուրքերի միջոցով որքան եկամուտ է ստացել պետությունը Ղարաբաղից¹⁷:

Նորանվաճ տարածքներում ռուսական իշխանությունները զբաղվել են նաև օգտակար հանածոների որոնումներով: Դրա վկայությունն է Վ.Գ. Մադաթովի գրած զեկուցագիրն Ա. Երմոլովին, որով նա տեղե-

կացնում էր, որ Կապան-գետի աջ ափին՝ նրանից երկու վերստ հեռավորության վրա գտնվող Ողջի գյուղի մոտ, ու Կապանակ-գետի ձախ ափին հայտնաբերվել են պղնձի ու երկաթի հանքեր և առաջարկում էր Պարսկաստանի հետ սահմաններ որոշելիս հաշվի առնել վերոհիշյալ հանգամանքն ու թույլ չտալ, որ պարսիկները խորամանկորեն իրենց սահմաններում ներառեն այդ հարուստ հանքավայրերը¹⁸:

Առավել հետաքրքիր են Վրաստանի Գերագույն կառավարչության լեռնային արշավախմբի բերգ-հաուպտման Կարպինսկու և օրերբորգմեյստեր Բուրկովի երկու զեկուցագրերը: Դրանցից առաջինում Ա. Երմոլովին տեղեկացվում էր, որ Ալավերդու պղնձածուլական գործարանի մոտակայքում հայտնաբերվել է կապարի ու արծաթի հանքաքար և նպատակահարմար է կատարել փորձնական ձուլում ու տեղանքի հետազոտություն¹⁹: Երկրորդ զեկուցագրում տեղեկացվում էր, որ Ալավերդու պղնձածուլական գործարանից 17 վերստ հեռավորության վրա՝ Արդվի գյուղի մոտ՝ Լոռիս-Մելիքովների (Լոռու-Մելիքյան) պատկանող կավածքում, հայտնաբերվել են կապարի, արծաթի և ոսկու ոչ հարուստ հանքեր: Տեղեկացվում էր նաև, որ հույն գործարարներին խորհուրդ էր տրվել հողատեր-կավածատերերի համաձայնությամբ ստեղծել մի ընկերություն, որը Ալավերդու գործարանի գլխավոր (голова) Անատոյի Հաջիպոսովի ղեկավարությամբ կգրավեր հանքերի արդյունահանմամբ²⁰:

Այսերկուկասում շերամապահությունը և մետաքսագործությունը զարգացնելու մասին վկայությունն է փոխգնդապետ Ստարկովին ուղղված Բ. Վելյամինովի գրավոր կարգադրությունը, որից պարզվում է, որ ֆրանսահպատակ գործարարներ Գիդելոն ու Քաստեղելան ցանկություն էին հայտնել վարձակալելու պետական մետաքսագործական ձեռնարկությունները՝ փորձնական ու միայն իրենց հայտնի ձևերով մետաքսի արտադրություն կազմակերպելու համար Ա. Երմոլովին խնդրել էին մի քանի փուլ շերամի բոժոժ տրամադրել իրենց²¹: Ա.Պ. Երմոլովը համաձայնել է և Բ. Վելյամինովին հանձնարարել զբաղվել դրանով: Ի դեպ, դրա ծախսերը կատարվելու էին Շիրվանից ստացվող

18 Присоединение Восточной Армении к России, Сборник документов, №24, 2-й отд., ч. II, 1814-1830, փաստ. № 93, էջ 130 (1823թ. հուլիսի 30-ի զեկուցագիրը):

19 Նույն տեղում՝ փաստ. №117, էջ 193 (1825թ. ապրիլի 24-ի զեկուցագիրը):

20 Նույն տեղում՝ փաստ. № 119, էջ 194-195 (1826թ. հունիսի 28-ի զեկուցագիրը):

21 Նույն տեղում՝ փաստ. № 118, էջ 193-194 (1825թ. հուլիսի 25-ի կարգադրությունը):

9 Присоединение Восточной Армении к России, Сборник документов, Под ред. акад-ка АН Арм. ССР Ц.П. Атаяна, Изд-во Академии наук Арм. ССР, Ереван, 1978, т. II, 1814-1830, док. №8, с. 33-34 (1817թ. փետրվարի 28-ի գրությունը):

10 Նույն տեղում՝ փաստ. № 9, էջ 34-35 (1817թ. մարտի 4-ի զեկուցագիրը):

11 Նույն տեղում՝ փաստ. № 14, էջ 40 (1817թ. հուլիսի 4-ի հրամանագիրը):

12 Նույն տեղում՝ փաստ. № 28, էջ 52-53 (1818թ. հունվարի 15-ի գրությունը):

13 Նույն տեղում՝ փաստ. № 35, էջ 61-62 (1819թ. ապրիլի 28-ի գրությունը):

14 Նույն տեղում՝ փաստ. № 62, էջ 87-88 (1821թ. հուլիսի 29-ի զեկուցագիրը):

15 Նույն տեղում՝ փաստ. № 80, էջ 105-107 (1822թ. հուլիսի 8-ի նամակները):

16 Նույն տեղում՝ փաստ. № 87, էջ 112-119 (1823թ. մարտի 2-ի զեկուցագիրը):

17 Նույն տեղում՝ փաստ. № 88, էջ 119-123 (1823թ. մայիսի 2-ի զեկուցագիրը):

պետական եկամուտների հաշվին:

Կովկասում և Այսրկովկասում, փաստորեն, շարունակվել է տեղաբնիկներին, այդ թվում նաև հայերին սիրաշահելու քաղաքականությունը, որի վկայությունն է Խ. Լազարյանի՝ Մոսկվայից Ղզլարի հայությունն ուղղված նամակը, որում, խոսելով վերջիններիս գործերի ընթացքի մասին, հայտնում էր, որ ֆինանսների նախարարը 1824թ. մի նամակով կուսակալ Երմոլովին հարցրել է, թե Ղզլարի հասարակությունն ի՞նչ վիճակի մեջ կցանկանար ապրել, և ո՞րքան հարկ կկարողանար տալ պետությանը: Նա խնդրել է արագացնել պատասխանն ու իրեն ևս գրել, թե առաջիկայում որքա՞ն հարկ կկարողանան տալ և ի՞նչ վիճակ կգերադասեն ունենալ («...Արդ ֆինանց մինիստրն առաքեալ է առ կուսակալ Երմոլովն յետ 1824 թույնն նամակ մի, յորում հարցաքննե զհասարակութենտ,- գրում է Խ. Լազարյանը,- թե արտեռք յորում վիճակի ցանկայ լինել պատուելի հասարակությունը ու զինչ յընթացս տարույ պարտավորի հասուցանել արքունի զանձարանին...»)²²:

Սակայն 1820-ական թվականների կեսերին՝ Այսրկովկասում Ռուսաստանի դիրքերի որոշ չափով ամրապնդվելուց հետո, պետությանն առավել օգուտ բերելու և զանձարանի եկամուտներն ավելացնելու պատրվակով Ա.Պ. Երմոլովը փորձում է ռուսաց նախկին կայսրերի և կայսրուհիների կողմից ռուսահպատակություն ընդունած հայերին շնորհած արտոնությունները վերացնել և այդ նպատակով նույնիսկ դիմում է կայսր Նիկոլայ I-ին: Ուշագրավ է Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցուն Խ. Լազարյանի հղած նամակը, որում իբրև գաղտնիք տեղեկացվում է, որ Երմոլովը մի գրությամբ թագավորից պահանջել է վերացնել հայերին տրված առևտրային, հարկային և այլ արտոնությունները: Խ. Լազարյանը նամակին կից ուղարկում է Ա. Երմոլովի վերոհիշյալ գրության պատճեն, որն իրեն հանձնել էին հավատարիմ մարդիկ: Նա հայտնում է նաև, որ Ա. Երմոլովի չար դիտավորությունները կանխելու նպատակով ինքը շտապել է մեկնել Պետերբուրգ:

Կառավարչապետի (կուսակալի) մոտ ծառայության անցած կայսեր գեներալ-համհարզ Ի. Պասկևիչի հետ մտերմություն հաստատելու հորդորով դիմելով Ներսես Աշտարակեցուն՝ Խ. Լազարյանը գրում է. «Որպես ծանուցեալ ենք՝ ի վաղուց, նմանապես երկրորդենք յայսմ նամակիս ևս, զի

ամենայն հնարիք կապեսցիք ընդ նորոգ եկեալ այդր Ղեներալ ատիտանտի կայսեր սիրով մտերիմ բարեկամութեան, թերևս նպաստամատոյց լինելոյ նմա սակս՝ ի բարորութիւն կենաց և վիճակի ազգիս սիրեցեալ...»²³:

Լազարյանների արխիվում պահպանվել է “Занеска одъ Армянскъ населеніиакся въ Россіи” («Ռուսաստանում վերաբնակեցված հայերի մասին գրությունն - Վ.Ս.) վերնագրով անթվական մի փաստաթուղթ, որում խոսվում է Ալեքսեյ Միխայիլովիչ (Ռոմանով) ցարի ժամանակներից դեպի Ռուսաստան հայերի մուտքի իրավունքի, Պյոտր Մեծի շնորհած արտոնությունների, 1744թ. փետրվարի 29-ի հրամանագրով պարսկահայերի և թուրքահայերի՝ ասիական սահմանակից ռուսական տիրույթներում բնակության թույլտվության և 1779թ. նոյեմբերի 14-ին Եկատերինա II կայսրուհու կողմից Ղրիմից ելած և Նոր Նախիջևանն ու հինգ այլ բնակավայրեր հիմնած հայերին հանձնած շնորհագրի մասին: Փաստաթղթում ներկայացված են նաև կայսր Պավել I-ի կողմից 1779թ. շնորհագիրը հաստատելու և 1799թ. հոկտեմբերի 28-ի նոր շնորհագրով Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի, Գրիգորուպոլի, Ղրիմի և Գերբենտի հայ համայնքներին ընձեռած տարբեր արտոնությունների, հայերին ռուսական վաճառականական գիլդիաների (դասերի) մեջ մտնել չստիպելու ու տուրքեր չվճարելու փաստերը: 1802թ. դեկտեմբերի 2-ին նախնյաց հրամանագրերը հաստատում է նաև Ալեքսանդր I-ը:

Վկայակոչելով վաճառականական և այլ գիլդիաների վերակառուցման մասին 1824թ. նոյեմբերի 14-ի կայսերական հրամանագիրը՝ վերոհիշյալ «Գրության» հեղինակները նշում են, որ անտեսելով այդ հրամանագրի հոդվածներով երաշխավորված, իրենց իրավունքների մեջ հայերի՝ վնաս չկրելու հանգամանքները՝ տեղական պետերը (կառավարիչները) հայերին ստիպում են ցուցակագրվել գիլդիաներում և թվարկում են այն վնասներն ու քայքայումը, որ կկրեին հայերը, և որ դրանով կկասեցվեր հայերի հոսքը դեպի Ռուսաստան: «Գրության» մեջ նրանք նշում են հիշյալ վայրերում հայերի տնկած այգիների, գինու և այլ բարիքների արտադրության, երկրամասերի շենացման մասին և վերջում հայտնում են, որ Ռուսաստանի բոլոր համայնքների

23 Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթապանակ 106, գործ 14, վավերագիր 58 (1825թ. հուլիսի 16-ի նամակը):

22 Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթապանակ 106, գործ 14, վավերագիր 58 (1825թ. հուլիսի 16-ի նամակը):

հայերը, խոնարհվելով միապետ կայսեր ոտքերի առաջ, խոնարհաբար խնդրում են իրենց թողնել բարձրագույն հրովարտականերով շնորհված իրավունքները²⁴:

Դատելով այս անթվական «Գրության» տեքստից՝ կարծում ենք, որ այն պատրաստվել է 1826թ վերջին, այսինքն՝ **հայերին արտոնություններից զրկելու մասին Ա. Երմոլովի վերոնշյալ պահանջից հետո: Հայ քաղաքական և հոգևոր գործիչների ջանքերն ամեն դեպքում գուր չեն անցնում**, և հետագայում Գրիգորուպոլսի հայ հասարակությանն ուղղված նամակում, հայտնելով նրանց արտոնությունները պահպանելու վերաբերյալ նախարարների խորհրդի վճռի մասին և այն, որ ինքը մեկնելու է Պետերբուրգ, որովհետև հարցի վերջնական լուծումը կախված է թագավորական խորհրդարանից, Խ. Լազարյանը գրում է. «Յայտ լիցի պատուելի հասարակությանդ, զի 'ի ս.զ.բ. բազում գործս, գորս սկսել եք յօգուտ հասարակաց, տնօրինել դարձյալ այսր 'ի Մոսկով և կամիմ յայտոսիկ ավուրս հանդերձ ընտանեօքս դիմել անդ ի կատար հասուցանել զայն ամենայն յորում աշխատ լինեք... Բոլոր հասարակութեանց գործին և ձերն, 'ի Կօմիտետի տերաց մինիստրաց վճռեցավ այսպես մեր աշխատութեամբ և հոգացողութեամբ, երկուտասան անձինք ըստ մեր բազմադիմի խնդրանոց վճռեցին զի զպրիվիլեգ ի տառս ռուսաց վաճառականաց ի զանազան բազում հարկապահանջողութեանց հավուր է հաստատել և բաց յայսմանե ևս պարզնել ևնցա...»²⁵:

Այնհայտ է, որ ռուսական իշխանությունների կողմից Ռուսաստանում և Կովկասում բնակվող հայերին շնորհված արտոնությունները գոնե առժամանակ պահպանելու կարևորությունը պայմանավորված էր Հարավային Կովկասում հայերին սիրաշահելու քաղաքականությունը շարունակելու անհրաժեշտությամբ. ընթացում էր 1826-1828թթ. երկրորդ ռուս-պարսկական պատերազմը, օրակարգում էր ռուս-թուրքական հերթական բախումը, և տարածաշրջանում Ռուսաստանը դեռ չէր հասել վերջնական նպատակին: Սիրաշահելու քաղաքականության շնորհիվ ռուսական զորքերի շարքերը կարելի կլիներ համալրել տեղանքին քաջածանոթ հայ կամավորական ջոկատներով, ստանալ տեղական բնակչության նյութական աջակցությունը:

Դեռևս 1819-1821թթ. Պարսկաստանում, ռուսական դեսպանական

առաքելության կազմում գտնվող Ա. Գրիբոյեդովը ծանոթացել ու մտերմացել էր Աբբաս-Միրզայի մոտ ծառայող, նապոլեոնյան նախկին բանակի սպա **Թեոդոր Էթյոնի** հետ և արդեն Մոսկվայում 1823թ. հուլիսին նրա և իր մտերիմ **Ա. Վսեվոլոժսկու** հետ ամենայն հավանականությամբ մշակում են Պարսկաստանի հետ ապրանքափոխանակության առևտրական նախագիծ, սակայն միջոցների սղության պատճառով ծրագիրը չի իրականանում²⁶:

Ա. Երմոլովի շտաբում ծառայելիս, ինչպես նշվեց, Ա. Գրիբոյեդովը հնարավորություն էր ունեցել տեղեկանալու գեներալի տնտեսական ծրագրերին ու նպատակներին և հանձնարարականներ էր ստացել դրանց իրականացման համար: 1823թ. **Բեգիչևների** մոսկովյան կալվածքից Ա. Գրիբոյեդովն ընկերոջը՝ Ա.Վ. Վսեվոլոժսկուն, **խնդրում էր տեղեկություններ հաղորդել Նիժեգորոդյան (Նիժնիի) տոնավաճառի մասին՝ ասելով, որ նա հրամայի հետազոտել, թե պարսիկների հետ որքան գործնական է եղել այդ տարվա ապրանքափոխանակությունը, և որոնք են արտահանման և ներմուծման պահանջարկները²⁷: Հավանաբար դա ևս հանձնարարել էր Ա. Երմոլովը:**

Դեկաբրիստների գործով արդարացվելուց, ապա Այսրկովկաս վերադառնալուց հետո էլ տնտեսական հարցերի և Այսրկովկասում բարեփոխումներ անցկացնելու հանդեպ նրա հետաքրքրությունները շարունակվում են: **Ֆ.Վ. Բուլգարինին** հղած նամակում նա գրում է. «... Ուղարկիր ինձ Հարավային Ֆրանսիայի, Գերմանիայի կամ էլ Իտալիայի, մասնավորապես Տոսկանայի մարզի, որը որպես երկրամաս, ամենից կատարյալն ու բարեկարգն է, որևէ զավառի նորագույն համակարգով արված վիճակագրական ամենամանրակրկիտ նկարագրությունը ցանկացած լեզվով... Ես դրանից կստեղծեմ ոչ այնքան բարդ, բայց, համենայնդեպս, օրինավոր աղյուսակ, որը կադրերով կուղարկեմ շրջանային պետերին, որն էլ նրանք պարտավոր կլինեն լրացնել: Թե չէ այդ անբարեկիրթ չինովնիկական ժողովրդի հետ մի դարում ոչինչ չես իմանա, և նրանք իրենք էլ ոչինչ չեն իմանա...»²⁸:

Ընդունված տեսակետ է, որ Այսրկովկասում վիճակագրական, տե-

24 Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթ. 111, գործ 36, վավ. 28:

25 Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթ. 106, գործ 14, վավ. 132 (1827թ. մայիսի 3-ի նամակը):

26 Кальма Н., "Коммерческие замысли Грибоедова", "Литературное наследство", Журнально-газетное объединение, Москва, 1935, 19/21, с. 143-176 (ամեն դեպքում փաստներ, որ մասնավոր այս ձեռնարկի գործում Ա. Գրիբոյեդովի՝ սեփական նախաձեռնությամբ հունցես գալու և ղեկավարելու հանգամանքների շուրջ հիմնավոր վկայություններ և ապացույցներ չկան):

27 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, №2, в.2, с. 220-221 (1823թ. օգոստոսի 8-ի նամակը):

28 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, №2, в.2, с. 271 (1827թ. ապրիլի 16-ի նամակը):

դեկագրական, ազգագրական և ֆինանսական մանրամասն ուսումնասիրություններ կատարելու համար կառավարության որոշման համաձայն և **Ա. Գրիբոյեդովի անմիջական ջանքերով** մի շարք նախարարություններից մասնագետներ են գործուղվել տարածաշրջան: Հետագոտող Վ. Պարսամյանը գրում է. «Այդ գործը հաջողությամբ կատարելու համար Պետերբուրգում զանազան միևնույնություններից նա անձամբ ընտրում է մի շարք որակյալ կադրեր (Շոպեն, Ջուբարև, Գրիգորև, Ջավիլեյսկի և այլք)...»: Այնուհետև ավելացնում է, որ **Այսրկովկասի ժողովուրդներն Ա. Գրիբոյեդովին են պարտական այն յուրջ հետազոտությունների համար, որոնց արդյունքում հետագայում հրապարակվել են «Վիճակագրական, ժողովրդագրական, տեղագրական և ֆինանսական առումներով Կովկասից այն կողմ ռուսական տիրույթների տեսչական» (1836) քառահատոր աշխատությունը, Ի. Շոպենի «Հայկական մարզի վիճակի պատմական հուշարձան» (1852), Օ. Էվեցկու «Անդրկովկասյան երկրամասի վիճակագրական նկարագրություն» (1835), Ն. Նեֆեդևի «Հայացք Հայկական մարզի վրա» (1839) և այլ աշխատություններ, որոնք ցայսօր էլ արժեքավոր են 19-րդ դարի 20-30-ական թվականների Անդրկովկասի ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար»²⁹:**

Թվարկածներից նշենք **1836թ. վերոհիշյալ «Տեսչական» քառահատոր ժողովածուն**: Այստեղ բավականին հանգամանալից նկարագրված են Այսրկովկասի բոլոր շրջանները, այդ թվում նաև Հայկական մարզը, իսկ 4-րդ գրքի վերջում զետեղված են բնակչության թվի, պետական եկամուտների, լեռնային արդյունաբերության եկամուտների, մաքսային եկամուտների, հարկերի և տուրքերի մասին **վիճակագրական տեղեկություններով տարբեր աղյուսակներ**: Հարկ է նշել, որ աղյուսակները կազմված են և՛ ըստ առանձին շրջանների, և՛ ընդհանուր երկրամասի տվյալներով՝ առանձին բացառություններով³⁰:

Հավանական է, որ 4-րդ գրքում տեղ գտած վիճակագրական տրվյալների և աղյուսակների մի մասին գրքերի լույս ընծայումից դեռ շատ առաջ **տեղյակ են եղել Ա. Գրիբոյեդովն ու Պ. Ջավիլեյսկին, և «Ռու-**

²⁹ Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 158-159 (նշված աշխատությունների վերնագրերի հայերեն թարգմանությունները Վ. Պարսամյանին են):
³⁰ Обзорение российских владений за Кавказомъ, въ статистическомъ, этнографическомъ, топографическомъ и финансовомъ отношеніяхъ. Произведенное и изданное по Высочайшему соизволенію, Въ четырехъ частяхъ, В типографіи департамента Внѣшней торговли, Санктпетербургъ, 1836, ч. IV, с. 362-401.

սական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծը» կազմելիս օգտվել են դրանցից:

Ա. Գրիբոյեդովի անվան հետ են կապվում նաև այդ տարիներին Այսրկովկասում տեղի ունեցած մի քանի իրադարձություններ, որոնք կարևոր դեր են խաղացել երկրա-մասի հետագա զարգացման համար: **Դրանցից են Թիֆլիսում «Առևտրային բանկի» հիմնումը և դատապարտված կանանց համար «Աշխատանքային տուն» բացելը:**

Ըստ հետազոտողների՝ Ա. Երմոլովի պաշտոնագրկումից հետո, ծառայելով Ի.Ֆ. Պասկևիչի շտաբում և առնչվելով դիվանագիտական գործերին, Ա. Գրիբոյեդովն Այսրկովկասում զբաղվել է նաև տնտեսական գործունեության խրախուսմամբ: **Ընդունված կարծիք է, որ նա Թիֆլիսում մասնակցություն է ունեցել Քաստելլոյի կողմից մետաքսագործական ֆաբրիկայի հիմնադրմանը, Թիֆլիսում գտնվող Ֆրանսիայի հյուպատոս Ժան Քրիստոֆեր Գամբայի կողմից Իմերեթում կազմակերպած առաջին օրինակելի տնտեսության ստեղծմանը, Էրիսթովի կողմից Գորիի շրջանում ապակու գործարանի կառուցմանը և այլն: Ինչպես նշել ենք, Ա. Գրիբոյեդովի անվան հետ է կապվում նաև Թիֆլիսում հանրային գրադարան հիմնելու նախաձեռնությունը, սակայն այդ գաղափարը մնացել էր անարձագանք, և այնտեղ հանրային գրադարան հիմնելու փորձը ձախողվել էր»³¹:**

Վերը թվարկած բոլոր ձեռնարկումներին Ա. Գրիբոյեդովի ունեցած առնչությունների հարցում շատ հետազոտողների նման մենք ևս, **բայց մասամբ ենք համակարծիք, որ Ա. Գրիբոյեդովը որոշակի մասնակցություն (բայց՝ ոչ նախաձեռնություն) ունեցել է դրանց իրագործման աշխատանքներին, քանի որ ծառայելով Ի. Պասկևիչի շտաբում՝ ցածր պաշտոն չի զբաղեցրել, և ինչպես Ա. Երմոլովի ժամանակ, այս փուլում ևս գրավոր շատ փաստաթղթեր ու հատկապես կառավարության հետ տարվող գրագրությունն անցել են նրա ձեռքի տակով: Բացի այդ՝ Ի. Պասկևիչը, վստահելով Ա. Գրիբոյեդովին, վերոնշյալ գործերին վերաբերող հանձնարարականներ է տվել նրան: Սակայն ուղղակի փաստաթղթեր, ընկեր-բարեկամներին ուղղված նամակներ, որոնք կապացուցեն, որ վերոնշյալ նախաձեռնություններն Ա. Գրիբոյեդովին են եղել, չկան և չէին կարող լինել, որովհետև այդ ցուցումները ստացվում էին իշխանություններից:**

³¹ Ениколов И.К., А.С. Грибоедов в Грузии и Персии, նշվ. աշխ., էջ 55-61:

Տնտեսական հարցերին վերաբերող և Ա. Գրիբոյեդովի գրչին պատկանող փաստաթղթերից, ինչպես նշել ենք, մեզ հասել են երկուսը՝ 1827թ. գրված «*Записка о лучших способах вновь построить город Тифлис*»³² և «*Проект учреждения Российской Закавказской компании*» վավերագրերը³³: Առաջինում առանց մանրամասների նկարագրված է Թիֆլիսն իր արվարձաններով, և կատարված են մի քանի դիտողություններ, թե ինչպես վերակառուցել քաղաքի թաղամասերը, փողոցներն ու տները, սակայն այս «Գրությունը» պատմագիտության մեջ հիշատակվում է որպես Ա. Գրիբոյեդովի տնտեսական հետաքրքրություններին և Թիֆլիսի վրաց ժողովրդի հանդեպ նրա դրսևորած հոգատարությանը վերաբերող փաստաթուղթ³⁴:

Թե ինչ փաստերից էլնելով են ուսումնասիրողները հանգել նման պնդման, այնքան էլ պարզ չէ: Վրացահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1818թ. Հովակիմ Լազարյանին հղած նամակում փաստում էր, որ Թիֆլիսի 4000 տուն (ընտանիք) բնակչությունից 3500 տունը հայեր են, ուստի այն թերևս հայկական քաղաք էր, և առաջարկում էր Մոսկվայի Լազարյան դպրոցը փոխադրել Թիֆլիս³⁵:

Պատմագիտության մեջ վերլուծության չի ենթարկվել նաև այն հարցը, թե ինչ հանգամանքների բերումով է Ա. Գրիբոյեդովն անդրադարձել Թիֆլիսը վերակառուցելու խնդրին: Փաստենք, որ Կովկասին և Ա. Գրիբոյեդովին վերաբերող փաստաթղթերի որոնման ընթացքում Վրաստանի արխիվները պրպտած հետազոտողները Թիֆլիսի վերակառուցման համար Ա. Գրիբոյեդովի թափած ջանքերի վերաբերյալ այլ աղբյուրների ու վկայությունների հայտնաբերման դեպքում այդ ամենը կներկայացնեին որպես վերջինիս «տնտեսագիտական տաղանդի» ապացույց: Համարձակվենք կատարել մեկ հետևություն. դատելով տեքստի ոճից՝ «Գրությունը» որպես պատասխան հասցեագրված է ինչ-որ մեկին, կամ կատարված է այլ անձի հանձնարարություն-խնդրանքը: Կարծում ենք՝ այն անձը, որին, իշխանությունների տված ցուցումների համաձայն, կարող էր հետաքրքրել Թիֆլիսի վերակառուցումը, և

32 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, с. 86-87:

33 Նույն տեղում՝ էջ 90-114:

34 Шадурн Ваню, Грибоедов и грузинская культура, ԵՎՄ, աշխ., էջ 30-31:

35 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164, չիտագրակված վավ. 1319 (1818թ. մարտի 25-ի նամակը): Մտացվում է, որ հետազոտողները կամ չբացել են այս փաստը, կամ միայն շփոթել են վրացիների հետ, կամ մ էլ անտեսել են Վ. Պարսամյանի հիշատակած 1836 թ հրապարակված վերոհիշյալ քառասոր վիճակագրական «Տեսլականը»:

ով իրական հնարավորություններ ուներ դա կատարելու, Ի.Ֆ. Պասկևիչն էր: Ինչ վերաբերում է Ա. Գրիբոյեդովի և Պ. Ջավիլեյսկու կազմած «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծին», ապա հայտնվել է հետևյալ տեսակետը. «Ահա, թե ինչպիսի լուսավոր, պրոգրեսիվ մտքեր, ինչպիսի բարձր, համամարդկային իդեալներ էր կապում ռուս ժողովրդի մեծ զավակը այդ ընկերության («Ռուսական-անդրկովկասյան» – Վ.Ս.) կազմակերպման հետ: Յավոր սրտի, պիտի նշենք,... գտնվել են նույնիսկ մարդիկ, որոնք աշխատել են նսեմացնել դրա արժեքը: Այնինչ դա... Գրիբոյեդովին որպես իր ժամանակի ամենառաջավոր հասարակական գործչի բնութագրելու, Անդրկովկասում նրա ծավալած իսկական լուսավորական-պրոգրեսիվ գործունեությունը վեր հանելու համար չափազանց կարևոր մի փաստաթուղթ է,... և որտեղ նա... հիմնավորում է կյանքի նոր, կապիտալիստական ձևեր մտցնելու անհրաժեշտությունը»³⁶:

Ելնելով վերը ներկայացվածից՝ փաստենք հետևյալը.

1. Այսրկովկասում Ռուսաստանի վարած տնտեսական քաղաքականությունը սկզբնական շրջանում ծրագրային լուրջ բնույթ չի կրել: Ռուսական իշխանությունների կողմից այս փուլում նախատեսվող տրենտեսական քաղաքականության որոշարկված ծրագիր դեռևս չի եղել. նորանված այսրկովկասյան շրջանների մասին ռուսական իշխանությունները հստակ պատկերացում չեն ունեցել և առաջին քայլերն են կատարել երկրամասի ընդհանուր տնտեսական տեսլականն ունենալու համար: Ճիշտ է, Այսրկովկասի կառավարիչները, հատկապես Ա. Երմոլովը (որի կառավարման ժամանակաշրջանը համընկել էր խաղաղ տարիներին), որոշակի քայլեր են ձեռնարկել երկրամասի քայքայված տնտեսությունը վերականգնելու և աշխուժացնելու համար, սակայն այդ ամենը նույնպես ծրագրային բնույթ չի կրել:

2. Ռուսական իշխանությունների կողմից հայերին ժամանակավորապես սիրաշահելու քաղաքականությունը շարունակվել է մինչև 1820-ական թվականների վերջերը, ինչը փաստվում է հայ գործիչների ջանքերի շնորհիվ Կովկասի և այլ վայրերի հայերին տրված տնտեսական արտոնությունները վերացնելու ուղղությամբ Ա. Երմոլովի ձեռնարկած քայլերի ձախողման հանգամանքով: Ա. Երմոլովի վերոհիշյալ քայլերը կարելի է դիտարկել ոչ միայն որպես հակահայկական տրա-

36 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ ռուսական հարաբերությունները, ԵՎՄ, աշխ., էջ 164:

մադրվածության, այլև արտոնությունները վերացնելու՝ կայսրապետական շահերի առաջնահերթության գիտակցման դրսևորումներ:

3. Այսրկովկասը նաև տնտեսապես նվաճելու՝ Ռուսաստանի քաղաքականության իրականացման անմիջական մասնակիցներից է եղել նաև Ա. Գրիբոյեդովը, և դատելով նրա հանդեպ ղեկավարության (Երմոլով, Պասկևիչ, Սիպյագին) դրական վերաբերմունքից ու ծառայողական աստիճանով արագ վեր բարձրանալու հանգամանքներից՝ ռուսական պետության տնտեսական առաջին քայլերի և նպատակների իրականացման գործում նա զգալի ջանքեր է ներդրել: Դա է պատճառը, որ, այդ նպատակներից ելնելով, Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական հետաքրքրություններին նպաստել են ռուս-պարսկական տնտեսական հարաբերությունների զարգացումը և, ի պաշտոնե, 1821-1823թթ. նրա մասնակցությունը տնտեսական հարցերի քննարկման բանակցություններին, ինչպես նաև ռուսական իշխանությունների կողմից Այսրկովկասում ձեռնարկվող միջոցառումների իրականացման աշխատանքներին: Ա. Գրիբոյեդովը կատարել է Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի՝ դրանց առնչվող առաջադրած հանձնարարականներն ու ցուցումները: Ա. Գրիբոյեդովի՝ տնտեսագիտական հետաքրքրություններն արտահայտող մեզ հասած բոլոր վավերագրերն այս կամ այն կերպ առնչվում են Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի հրահանգներին ու մասնակցությանը:

4. Ծառայությունից դուրս տնտեսագիտական հարցերի հանդեպ սեփական նախաձեռնությամբ հետաքրքրություններ չցուցաբերելու մասին է վկայում այն, որ 1824-1825թթ. Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում եղած ժամանակահատվածում Ա. Գրիբոյեդովի կողմից նմանատիպ ոչ մի նախաձեռնություն չի ցուցաբերվել:

3. «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը

Տնտեսագիտական հարցերին Ա. Գրիբոյեդովի ունեցած առնչությունների և Այսրկովկասում տնտեսական նախաձեռնությունների բարձրակետ համարվող նրա և Պ.Գ. Զավիլեյսկու կողմից կազմված «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը, ինչպես նշել ենք, կազմված է եղել երեք մասից. 1) «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրության նախագծի ներածություն», 2) «Ռուսական-անդրկովկասյան ընկերության կանոնադրություն» և 3) «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման մասին գրություն»:

Այս երեքից մեզ են հասել առաջինը և երրորդը: Առաջինը հրապարակվել է 1831թ., իսկ երրորդը հրապարակել է Ա.Պ. Մալշինսկին 1891թ.¹: «Ընկերության» կանոնադրության բնօրինակի փոխարեն, ինչպես նշվել է, դրա՝ միայն մեկնաբանություններով ու դիտողություններով ոչ ամբողջական տարբերակներն են մեզ հասել: **Փորձենք այդ տարբերակների և մյուս մասերի քննությամբ վերլուծել «Նախագիծը»:**

Անդրադառնալնք այն հարցին, թե որտեղ և երբ են Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին մտահղացել իրենց «Ընկերության» նախագիծը:

Ա. Գրիբոյեդովի ժամանակակից Ն.Ն. Մուրավյով-Կարսկին նշում է, որ «Ընկերության նախագիծը» կազմվել է 1828թ. զարնանք Մանկտ Պետերբուրգում, որտեղ Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը կայսրին ներկայացնելու էր մեկնել Ա. Գրիբոյեդովը: Նա գրում է. «Գրիբոյեդովը... կազմեց ամբողջ Վրաստանը վերակառուցելու նախագիծ, որտեղ կառավարումն ու արդյունաբերության բոլոր ոլորտները Օստ-հնդկական («Արևելա-հնդկական») ընկերության պես պետք է պատկանեին Ընկերությանը («Ռուսական-անդրկովկասյան» – Վ.Ս.)»²: Նշվածից բացի՝ այլ հիշատակություններ հայտնի չեն «Նախագիծը» Պետերբուրգում կազմված լինելու մասին: Բոլոր մյուս աղբյուրները վկայում են դրա՝

1 Маркова О.П., "Новые материалы...", նշվ. աշխ., էջ 325, տես նաև՝ Мальшинский А.П., "Неизданная записка...", նշվ. աշխ., էջ 5-11:

2 Трибодов. Его жизнь и гибель в мемуарах современников, նշվ. աշխ., էջ 135:

Թիֆլիսում կազմված լինելու օգտին:

Հետագոտողները նշում են, թե «Ներածությունը» գրված է եղել **Թիֆլիսում 1828թ. հուլիսի 17-ի թվագրությամբ**³: Ինչ վերաբերում է «Ընկերության հիմնադրման մասին գրությանը», ապա այն նույնպես կազմվել է **Թիֆլիսում 1828թ. սեպտեմբերի 7-ի թվագրությամբ**⁴: Այսպիսով, «Կանոնադրություն»-ը, նրան կից «Գրություն»-ը և «Ներածություն»-ը գրվել են **Թիֆլիսում, իսկ Սանկտ-Պետերբուրգում տեղի են ունեցել միայն բանավոր գրույցներ ու տեսակետների ճշտում**:

Ա. Գրիբոյեդովի և Պ. Ջավիլեյսկու կողմից Այսրկովկասում բարեփոխումներ անցկացնելու նպատակով ծրագիր կազմելու գործին մասնակցություն է ունեցել նաև գեներալ Ի. Պասկևիչը: Այս մասին հեղինակները հիշատակում են «Նախագծին» կից գեներալին ուղղված գրությունում, որը մեջ կրերենք ընդարձակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդային պատմագիտության մեջ «Նախագիծը» կազմելու գործում Ի. Պասկևիչի խաղացած դերը մեկնաբանվել է ոչ պատշաճ:

«Գրության» մեջ ասված է. «Ձերդ պայծառափայլությունը 1827թ. առաջին եռամսյակին, անմիջապես անցնելով երկրամասի կառավարմանը, և հետո Ջալալ-Օղլիում, ռազմական պատրաստությունների և ճամբարային ժխորի մեջ ներքոստորագրյալներիցս մեկին (Ա. Գրիբոյեդովին – Վ.Ս.) բազմիցս բացատրեցիք Ձեզ վստահված գավառներում նոր կառույցներ մտցնելու ցանկության մասին, որպեսզի պետության համար դուրս բերի այն օգուտը, որ Առաստառնը 27 տարվա ընթացքում իզուր սպասել է նրանցից: Հետագայում Ձեր ղեկավարության ներքո նավարկելու համար նախագծվեց Կուրը մինչև Սամոխս մարքելու ծրագիրը: Այդ տեղը, որին հարում են հարուստ Կախեթը, Շաքիի խանությունը և Ելիզավետպոլի գավառը, Գուք նախատեսեցիք տեղական արտադրանքները պահեստավորել և այնտեղ տոնավաճառ հիմնել տարվա այն եղանակին, երբ տապն այնքան ուժեղ չէ, և ռուս վաճառականները նիժեգորոդյան տոնավաճառից հետո կկարողանան փոխանակության համար հայրենական ապրանքներն այնտեղ բերել... Պարսկական արշավանքի արագ և փառավոր իրադարձությունները թույլ չտվեցին, որ (Ձեր – Վ.Ս.) օգտակար գաղափարները հասնեն ցանկալի հասունացման, և Ձերդ պայծառափայլությունն ինքը հրամայեց դրանք թողցիկ կերպով հանձնել թղթին, որպեսզի դրանց կրկին անդրադառնա ավելի հանգիստ ժամանակներում: Ընդ որում, Գուք Ձեր մտածելակերպը պարզ արտա-

հայտեցիք, որ բարի մտադրությունների տեր և ունեոր մի քանի մարդ, կոմերցիոն ընկերության տեսքով, անհրաժեշտ բարեփոխումներ նախաձեռնեն այս ողջ երկրամասի տնտեսության և արդյունաբերության համար: Այս առարկայի վերաբերյալ Ձեր մտադրությունները շուտով իրապարակային դարձան»⁵:

Այս առումով հետագոտող Ի. Ենիկոլոպովը գրում է. «...Նախագծի այս տողերը տակտիկական բնույթ էին կրում և Ի.Ֆ. Պասկևիչի զգուշավորությունը բթացնելու նպատակ էին հետապնդում...»⁶: Կարծում ենք՝ վերոհիշյալ տողերը ոչ մի տակտիկական բնույթ էլ չէին կրում, և ճարպիկ ու խարդավասեր (ինտրիգան) Ի. Պասկևիչի զգուշավորությանը ոչինչ չէր սպառնում. այդ տողերում Ա. Գրիբոյեդովը չեղած բաների մասին չէր հիշեցնում Ի. Պասկևիչին: Բացի այդ, ինչպես երևում է վերոհիշյալ մեջբերման տողերից, խոսքը գնում է մի քանի ունևորների կողմից Ի. Պասկևիչի հանձնարարած «կոմերցիոն ընկերություն» և ոչ թե «պետության մեջ պետություն» ստեղծելու մասին:

«Նախագիծը» կազմելու գործում Ի. Պասկևիչի անմիջական մասնակցության մասին արտահայտված մեկ այլ ուսումնասիրող՝ Օ. Մարկովան, գրում է. «...Նախագծի հեղինակներին, անկասկած, հույս էր ներշնչում Անդրկովկասի կառավարումը բազմակողմանի բարեփոխելու վերաբերյալ Պասկևիչի մտածած ու Գրիբոյեդովի մահվանից հետո Անդրկովկասում կառավարական հիմնարկների գործունեությունը ստուգող սենատորներ Մեչնիկովի և Քուրախովի օգնությամբ կազմած պլանը...»: Միաժամանակ նա նշում է, որ Անդրկովկասը համընդգրկուն բարեփոխման ենթարկելու մտաեցումներն ու նպատակները «Նախագծի» հեղինակների և Ի. Պասկևիչի մոտ տարբեր էին⁷:

Այսրկովկասում Ի. Պասկևիչի՝ տնտեսական լուրջ ծրագրեր իրականացնելու մտադրությունների մասին է վկայում գեներալ-լեյտենանտ և կավալեր Կրասովսկուն Նախիջևան հղած իրամանագիրը, որում զբլխավոր հրամանատարը հանձնարարում է ճիշտ և մանրակրկիտ տեղեկություններ հավաքել Երևանի մարզի, Նախիջևանի սահմանների և սահմանակից շրջանների մասին⁸: Գեներալ Կրասովսկին Ի. Պասկևիչին է ներկայացնում Երևանի մարզի սահմանների վերաբերյալ մանրակրկիտ ցուցակ⁹, իսկ Տուրքերի հավաքման հանձնաժողովին

5 Грибоедов А.С., Сочинения, 1971, кн. 2, т. 2, с. 91:

6 Ениколопов И., Грибоедов и Восток, кн. 2, т. 2, с. 158:

7 Маркова О.П., Новые материалы..., кн. 2, т. 2, с. 158:

8 ЗУА, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 2, թերթ 2 (տուսերև):

9 Նույն տեղում՝ թերթ 3 (1827 թ. հոկտեմբերի 13-ի գեկուցագիրը՝ տուսերև):

3 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1951, кн. 2, т. 2, с. 538:

4 Грибоедов А.С., Сочинения, 1971, кн. 2, т. 2, с. 96:

ուղղված՝ Երևանի մարզային վարչության պետի պաշտոնակատար **գեներալ-մայոր Ճավճավաձեի** գրությունից հայտնի է դառնում, որ, կորպուսի հրամանատարի № 460 ծանուցման համաձայն, Երևանի մարզային վարչությունը վերոհիշյալ հանձնաժողովին հանձնարարել է մարզից տեղեկություններ հավաքել հետևյալ ուղղություններով. **ա) մարզի բոլոր ժողովուրդների և ցեղերի, նրանց բանջարանոցների, սերմացուի, պետական շինությունների մասին, բ) հացազգիների մշակության, անասնապահության, շերամապահության և այլ հողագործական արտադրությունների վերաբերյալ, գ) առևտրի, ֆաբրիկաների և ընդհանրապես արդյունազործության մասին, դ) գոյություն ունեցող հարկերի և այլ ճյուղերից ստացվող եկամուտների մասին, ե) բնամթերքով զանձվող տասանորդի, կապալով կամ վարձակալությամբ տրվող բահրատու հողվածների, պետական ջրաղացների, այգիների, լեռնային գործարանների, աղահանքերի մասին, զ) տարբեր դասի մարդկանց իրավունքների, հասարակության կառուցվածքի, գոյություն ունեցող տարբեր որոշումների մասին, է) մասնավոր տիրույթների չափերի, եկեղեցական տարատեսակ գույքի, ունեցվածքի, օգտակար վիճակագրական տեղեկությունների, պետական հողերի նկարագրության և այլնի մասին¹⁰:**

Ստացվում է, որ Այսրկովկասը բարեշինելու մտադրություն են ունեցել ոչ միայն Ա. Գրիբոյեդովն ու Պ. Չավիլեյսկին, այլև Բ. Պասկևիչը: «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագիծ»-ը կազմելիս նրանք հաշվի են առել հենց Բ. Պասկևիչի տեղեկացվածությունը, մտադրություններն ու հանձնարարականները: **Այս հանգամանքը, անկասկած, վկայում է նախագծի կազմման գործում Բ. Պասկևիչի եթե ոչ անմիջական, ապա գաղափարական մասնակցության և ցուցումների մասին:**

Խորհրդային շրջանում քննարկվել է նաև վերոհիշյալ «Ընկերության» նախագիծը ստեղծելու գործում **Պ. Չավիլեյսկու մասնակցության չափի հարցը**, և կասկածի է ենթարկվել Ն. Մուրավյով-Կարսկու հետևյալ միտքը. «...Ինչպես ասում են, Ա.Ս. Գրիբոյեդովի թելադրանքով գրողը եղել է Պ. Գ. Չավիլեյսկին, ում նա կարող էր իր կողմը գրավել... և, հանձին որի, նա ուներ այլոց մտքերն իր օգտին շեղող միջնորդ...»¹¹: Հետազոտողների կարծիքով այն չափազանցված է. իրականում Պ. Չավիլեյսկու մասնակ-

ցությունը շատ ավելին է եղել, **քան Ն. Մուրավյով-Կարսկու կողմից նրան վերագրվող «գրագրի» դերը: Նախագծի ստեղծման գաղափարն ամբողջությամբ վերագրելով Ա. Գրիբոյեդովին՝ այնուամենայնիվ հետազոտող Բ. Ենիկոլոպովը միաժամանակ նշում է. «...Որպես ֆինանսական կրթություն և փորձ ունեցողի՝ ամենայն հավանականությամբ Պ. Չավիլեյսկու կողմից են կազմվել «Ընկերության» կանոնադրության պարագրաֆների մեծ մասը՝ զեկուցագրին կցված ներածականով...»¹²: Իսկ այդ դեպքում ո՞ր մասն էր կազմել Ա. Գրիբոյեդովը: Այստեղ հակասությունն առկա է:**

Հետազոտող Օ. Մարկովան Ն. Մուրավյով-Կարսկու կողմից Պ. Չավիլեյսկու դերը նույնպես թերագնահատված համարելով՝ նշում է. «Պ. Գ. Չավիլեյսկին քիչ գրություններ, զեկուցագրեր և հաշվետվություններ չէր գրել տարբեր թեմաներով: Նա ֆինանսիստ էր ու մաքսային գործի գիտակ և հետաքրքրվում էր տնտեսագիտական հարցերով»¹³: Այսքանով հանդերձ՝ Ա. Գրիբոյեդովի հետ համեմատած, նա էլ է «Նախագիծը» կազմելու գործում **Պ. Չավիլեյսկու մասնակցությունը համարում «երկրորդական»¹⁴: Ներկայացնենք, թե ով է եղել Պ. Չավիլեյսկին:**

1828թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո ֆինանսների գերատեսչության ղեկավար կոմս Կանկրինը որոշում է ֆինանսական հիմնարկաբաժին (էքսպեդիցիա, արշավախումբ) ուղարկել Այսրկովկաս: **Այդ հիմնարկաբաժնի ղեկավար է նշանակվում ֆինանսական գերատեսչության հատուկ հանձնարարությունների գծով ծառայող (այսինքն՝ գործի խորագիտակ – Վ.Ս.) Պ. Գ. Չավիլեյսկին, որը, ըստ հայեցողության, ընտրում է իր անձնակազմի մասնագետներին: Հատուկ «Հրահանգով» Պ. Չավիլեյսկուց պահանջվում էր անդրկովկասյան երկրամասն ուսումնասիրել երեք ոլորտների գծով. 1) եկամուտների հայտագրում և կանոնակարգում, 2) պետական ունեցվածքի վիճակի վերաբերյալ հաշվետվության կազմում, 3) տարածաշրջանի ժողովրդագրական, աշխարհագրական, կլիմայական և արդյունազործական վիճակների ընդհանուր տեսչականի տրամադրում: Նշենք, որ Ա. Գրիբոյեդովն ընդգրկված չի եղել այդ անձնակազմում և տնտեսագիտական հետազոտություններին բովանդակային առումով նրա մասնակցության մասին ոչ մի վկայություն չկա:**

Դրված խնդիրները լուծելու համար Պ. Չավիլեյսկուն շնորհվում է **Վրաստանի գերագույն կառավարչության պետական հիմնարկաբաժնի պետի, ապա՝ Վրաստանի քաղաքացիական նահանգապետի պաշ-**

10 ՀԱԱ, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 9, թերթ 6 (1828թ. ապրիլի 4-ի գրությունը՝ ոռւսերեն):

11 Գրիբոեդով, Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 135:

12 Ениколопов И., Грибоедов и Восток, նշվ. աշխ., էջ 145:

13 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 340:

14 Նույն տեղում՝ էջ 339-340:

տուն¹⁵: Այս գործը ժամանակին չէր կարողացել կատարել **Ա. Գրիբոյեդովի ընկեր Ե.Գ. Չիլանը (Չիլածե)**:

«Նախագծում» Պ. Զավիլեյսկու կատարած կարևոր դերի մասին խոսելիս որպես փաստարկ է բերվել այն, թե Ա. Գրիբոյեդովի ստորագրությամբ կողմնակա դրված է Պ. Զավիլեյսկու ստորագրությունը: Ուսումնասիրող **Օ. Պոպովան** գրում է. «Չի կարելի կասկածել, որ Նախագծի մտահղացումն ու աշյուծի բաժինը պատկանում են Ա. Գրիբոյեդովին»¹⁶: Նկատենք, սակայն, որ **հետազոտողը չի նշում նման եզրահանգման հիմքը: Ն. Մուրավյով-Կարսկու կողմից «Նախագիծը» կազմելու գործում Պ. Զավիլեյսկու կատարած դերի թերազնահատմանը դեմ լինելով և որոշ չափով համերաշխելով այս հարցում պաշտոնապես ընդունված տեսակետի հետ՝ մինևույն ժամանակ գտնում ենք, որ վերջինիս դերը շատ ավելին է եղել, քան ներկայացվել է ուսումնասիրողների կողմից:** Դա է վկայում այն փաստը, որ Ա. Գրիբոյեդովի՝ Պարսկաստան մեկնելուց հետո Պ. Զավիլեյսկին միայնակ է զբաղվել «Նախագիծն» իրականություն դարձնելու հոգսերով: Եթե նա «ընդամենը գրագիր» է եղել կամ «երկրորդական» դեր է կատարել, ապա հետագայում այդպես ջերմեռանդորեն չէր դիմի բարձրագույն աստիճաններին՝ «Նախագիծ»-ը կյանքի կոչելու նպատակով: **Նման կերպ իրեն կարող էր դրսևորել տնտեսագիտական սեփական մտքի արգասիքն ամեն զնով պաշտպանելու և կյանքի կոչելու պատրաստ անձնավորությունը և ոչ թե մի պաշտոնյա, ում լիազորությունների մեջ չի մտել մասնավոր ընկերություններ հիմնելու նախագծեր կազմելը:** Հարկ է կրկին փաստել, որ Այսրկովկասում Պ. Զավիլեյսկին կառավարության հանձնարարությամբ բոլորովին այլ խնդիրներ է լուծել և պետական մակարդակով երկրամասի տնտեսական զարգացման վերաբերյալ նախագիծ կազմելու և կառավարությանն առաջարկելու, առավել ևս այլոց կազմած նախագծերը համառորեն առաջ տանելու պարտականություն չի ունեցել: «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ» կազմելու աշխատանքներին նա՝ որպես տնտեսագետ, միայն մասնավոր նախաձեռնությամբ է ներգրավվել **Ա. Գրիբոյեդովի առաջարկով:** Իսկ Ա. Գրիբոյեդովի մասին նույն Ն. Մուրավյով-Կարսկին շարունակում է. «...Ես պատրաստ եմ մտածել, որ Ա. Գրիբոյեդովը նախարարից (Կ.Վ. Նեսսելրոդեից - Վ.Ս.) մեծարանք, օգուտներ և Պարսկաստանում նշանակում ստանալով՝ իր Նախագծի

հանդեպ դարձավ անտարբեր և նոր առարկային անդրադառնալիս անցյալի մասին՝ որպես իր տեսած վեհասքանչ երագ, կսկսեք խոսել ժայտով, ընդ որում, ամենայն հավանականությամբ, չէր գթա նաև Զավիլեյսկուն, որի հանդեպ հնարավոր չէ, որ հարգանք տածեր...»¹⁷:

Առաջ անցնելով՝ փաստենք, որ «Նախագիծ»-ն Բ. Պասկևիչի կողմից մերժվելուց հետո էլ՝ դեռևս մինչև Թիֆլիս մեկնելը, Պ. Զավիլեյսկին դարձյալ մասնավոր նախաձեռնությամբ բաժնետիրական ընկերություն հիմնելու և ապագայում գործարան կառուցելու համար միջնորդագիր է ներկայացնում ֆինանսական գերատեսչության ղեկավար կոմս Կանկրինին: Ամեն ինչում «չմահավան և կաշուն» Կանկրինը, չնայած տեղական սեփականատերերի դիմադրությանը, համաձայնություն է տալիս և Բորժոմի կիրճում հիմնվում է գործարան: Այս մասին նշվել է. «Այսպիսով, Վրաստանում այդ առաջին բաժնետիրական ձեռնարկությունը կապված է Պ. Գ. Զավիլեյսկու անվան հետ...»¹⁸:

Շարունակելով ձեռնարկատիրական նախաձեռնությունները՝ 1831 թ. Պ. Զավիլեյսկին և նույն Ե. Չիլանը դիմում են իշխանություններին՝ «բամբակ, զաֆրան, տորոն և այլ ներկաբույսեր աճեցնելու, ինչպես նաև խաղողի և թթի այգիներ տնկելու համար... Դուշեթի գավառում իրենց հինգ հազար դեսյատին հող հատկացնելու խնդրանքով»¹⁹:

Պ. Զավիլեյսկու վերոնշյալ ձեռնարկումները, ըստ **Ա. Մալչինսկու**, «...Հսկայական «Ռուսական-անդրկովկասյան ընկերությունը» վերածեցին առևտրամիջնորդական համեստ հաստատության՝ “Закавказское торговое дело” («Անդրկովկասյան առևտրային դեպո» - Վ.Ս.) ֆիրմայի...»²⁰: Այսպես է կարծում նաև հետազոտող Բ. Ենիկոլոպովը, ըստ որի՝ «Գրության» լայնածավալ ծրագիրը մասնակի իրագործվել է միայն Բ.Ֆ. Պասկևիչին փոխարինած բարոն Ռոզենի ժամանակ: Երկրամասում առևտրի զարգացում նախատեսելով՝ Գ. Ռոզենը թույլ է տվել Թիֆլիսում հիմնել “Торговая компания” («Առևտրային ընկերություն» - Վ.Ս.), որը հետո վերածվել է “Закавказское торговое дело” ընկերության²¹:

Օ. Մարկովան, չհամաձայնվելով այս տեսակետի հետ, գտնում է, որ **Պ. Զավիլեյսկու այս ձեռնարկումը ոչ մի կերպ չպետք է ընդհանրացնել Ա. Գրիբոյեդովի նախաձեռնության հետ**, և հավելում, որ «...«Կագ-

17 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 136:

18 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 341-342:

19 Ениколопов И., Грибоедов и Восток, նշվ. աշխ., էջ 159:

20 Мальшинский А.П., Неизданная записка..., նշվ. աշխ., էջ 17:

21 Ениколопов И.К., Грибоедов в Грузии и в Персии, նշվ. աշխ., էջ 61 (Բ. Ենիկոլոպովն Ա. Մալչինսկու նշած “депо”-ն ներկայացնում է “дело” ձևով - Վ.Ս.):

15 Тунян В.Г., “Проекты экономического освоения Закавказья, (1826-1834)”, “Вестник общественных наук”, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1989, 12(564), декабрь, с. 16.

16 Попова О.И., Грибоедов-дипломат, նշվ. աշխ., էջ 118: 258

մակերայության» նպատակներն ու բնույթը տարբեր էին: Նոր «Ընկերությունը» («Дено»-ն – Վ.Ս.) միայն առևտրական նպատակներ էր հետապնդում՝ դուրս-ինչ չհետաքրքրվելով երկրամասի արտադրողական ուժերի զարգացմամբ²²: Այս կարծիքը համոզիչ չէ, քանի որ վերոհիշյալ «Дено»-ի նպատակների և բնույթի մասին ոչ մի հեղինակի մոտ մանրամասն համեմատություն չկա: Նշենք նաև, որ Պ. Չավիլեյսկու ծառայողական վերելքն ավարտվում է 1831թ. դեկտեմբերին, երբ Կովկասի կառավարչապետ բարոն Գ. Ռոզենը նրան հեռացնում է Վրաստանի քաղաքացիական նահանգապետի պաշտոնից՝ հակակառավարական խռովությանը մասնակից լինելու կասկածանքով:

Խորհրդային շրջանում առաջ է քաշվել մի ենթադրություն, ըստ որի՝ կենդանի լինելու դեպքում Ա. Գրիբոյեդովը նույնպես լինելու էր վերը նշված խռովության կազմակերպիչների շարքում: Մեզ համար անբացատրելի այդ ենթադրությունը «հիմնավորելու» համար հղում է արվել խռովության կազմակերպիչներից Ա. Ճավճավաձեի, Պ. Չավիլեյսկու և այլոց հետ Ա. Գրիբոյեդովի մտերմության և կապերի հանգամանքների²³: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մտերիմ, ընկերական և նույնիսկ ազգակցական կապերը բավարար չէին դրանք գաղափարական կապերի վերածելու համար: Նա լուրջ տարածայնություններ է ունեցել հատկապես դեկաբրիստների որդեգրած խռովարարական մարտավարության հարցերում և քիչ հավանական է, որ Ա. Գրիբոյեդովը միանար Վրաստանի խռովարարներին՝ ոչ վաղ անցյալում խռովարար դեկաբրիստների փորձի ու դառը ճակատագրի դասերն աչքի առաջ ունենալով:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծն» Բ. Պասկևիչին ներկայացնելուց հետո վերջինս, ուսումնասիրելու և կարծիք հայտնելու համար այն նախ՝ հանձնում է գնդապետ Ի. Գ. Բուրցովին, ապա՝ գեներալ-համբարակ Մ.Ս. Ժուկովսկուն: Ի. Բուրցովը Կովկաս արտրված դեկաբրիստներից էր: Նա բազմաթիվ պաշտոններ է զբաղեցրել Կովկասում և 1829թ. գոհվել ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Ժամանակակիցների շրջապատում նա հայտնի էր որպես քաջ, խելացի, կրթված, առաջադեմ հայացքների տեր մարդ²⁴: Խորհրդային պատմագիտությունը ևս Ի. Բուրցովին բնութա-

գրել է որպես դրական հատկանիշների տեր անձնավորություն: Մ. Ժուկովսկին Առանձին կովկասյան կորպուս էր գործուղվել 1827թ. ապրիլին գեներալ-համբարակի (ինտենդանտ) կոչումով (այսինքն՝ տրևտեսական ոլորտի գործիչ էր): Նա ևս Այսրկովկասում զբաղեցրել է բազմաթիվ պատասխանատու բարձր պաշտոններ: Խորհրդային պատմագիտության կողմից նա ներկայացվել է որպես հետադիմական (ռեակցիոն) գործիչ, ճորտատիրական կարգերի ջատագով, միևնույն ժամանակ՝ «խելացի, կիրթ, տեսականորեն լավ զինված հակառակորդ և անընդունակ՝ այլոց մտքերն իր սեփականի տեղ ներկայացնելու և փաստաթղթեր կեղծելու...»²⁵:

Ի. Բուրցովի մեկնաբանություններով կարծիքի տարբերակը հասկանալի էր հրապարակել է Ա. Մալչինսկին «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման մասին գրությանն» ուղեկցող տեքստում²⁶: Մակայն Ա. Մալչինսկին չի նշել այն արխիվն ու աղբյուրը, որտեղից հայտնաբերվել է այդ «Գրությունը» և Ի. Բուրցովի մեկնաբանություններով «Կանոնադրության» տեքստը: Ինչպես նշվել է, «Ա. Պ. Մալչինսկու հրատարակած Ա.Ս. Գրիբոյեդովի «Գրություն»-ը Օ. Մարկովայի ենթադրությամբ անկասկած նրա մոտ է հայտնվել «Սրբազան դրոժինայի» անդամ իշխան Ա. Պ. Շչերբատովի միջոցով, ում նա օգնել է կազմել Ի. Ֆ. Պասկևիչի կենսագրությունը»²⁷:

Ըստ Մ. Ժուկովսկու դիտողություններով տեքստն առաջին անգամ ամբողջությամբ հրապարակող Օ. Մարկովայի՝ «Մ. Ժուկովսկու «Գրության» տարբերակը ուղարկվել է Կովկասի նոր կառավարչապետ Գ. Վ. Ռոզենի խնդրանքով, ինչը երևում է Մ.Ս. Ժուկովսկու՝ 1833թ. հունվարի 26-ին վերջինիս հղած նամակից»²⁸: Համեմատելով իր հայտնաբերած փաստաթուղթն Ա. Մալչինսկու հրապարակման հետ՝ նա նշում է Ի. Բուրցովի և Ի. Պասկևիչի կարծիքների «տեքստային լիակատար համընկնումը» Մ. Ժուկովսկու կարծիքի հետ՝ կապված ինչպես արտոնությունների, այնպես էլ այլ հարցերի հետ²⁹: Նշենք, որ Ա. Մալչինսկին տվել է ոչ միայն Ի. Բուրցովի, այլև Ի. Պասկևիչի կողմից արված դիտողությունները, որոնց իսկությունը կասկածի չի ենթարկվել: Այս ամենից եզրակացվել է, որ Ա. Մալչինսկու ներկայացրած մեկնաբանությունները պատկանում են ոչ թե Ի. Բուրցովին, այլ Մ. Ժուկովսկուն: Օ. Մարկովան գտնում է, որ Ա.

22 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 342:

23 Шадурн В., Грибоедов и грузинская культура, նշվ. աշխ., էջ 27 (բարոն Ռոզենի՝ 1832թ. դեկտեմբերի 22-ի գեկուցագիրը ռազմական նախարար Չեռնիշևին, որտեղ ընդամենը նշված է Ա. Ճավճավաձեի և Ա. Գրիբոյեդովի աներ-փեսա լինելու հանգամանքը):

24 Еникопоров И., Грибоедов и Восток, նշվ. աշխ., էջ 151 (մեջ է բերված Ի. Բուրցովի արտակարգ օժտվածությունների մասին Մ. Շիպովի վկայությունները):

25 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 330:

26 Мальшинский А.П., Неизданная записка..., նշվ. հոդվ., էջ 11-17:

27 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 330:

28 Նույն տեղում՝ էջ 326:

29 Նույն տեղում՝ էջ 327-328:

Մալշինսկին թյուրիմացության մեջ է եղել, քանի որ նա իր ձեռքի տակ չի ունեցել Ս. Ժուկովսկու «Գրության» բնօրինակը, հակառակ դեպքում «նա Ժուկովսկու «Գրությունը» չէր վերագրի Ի. Բուրցովին, ում մասին «Գրության» մեջ խոսում է երրորդ դեմքով»³⁰:

Ա. Մալշինսկու տրամադրության տակ է եղել Ս. Ժուկովսկու դիտողություններով փաստաթղթի ոչ ամբողջական տեքստը, որտեղ Ի. Բուրցովի անունը հիշատակվում է որպես մի մարդու, ում հանձնարարվել է կարծիք գրել հիմնադրվող «Ընկերության» նախագծի մասին: Օ. Մարկովան նույնիսկ **կասկածելի է համարում այն, որ Ի. Պասկևիչն է Ի. Բուրցովին հանձնարարել «Կարծիք» գրելու գործը:** Այս կապակցությամբ ներկայացվում է երկու պատճառ. **նախ՝ Ի. Բուրցովը դեկաբրիստ էր, իսկ Ի. Պասկևիչը ծայրահեղ դեպքում էր դիմում կասկածելի մարդկանց օգնությանը, և հետո՝ Ի. Բուրցովը մտերիմ էր Վրաստանի ռազմական նահանգապետ Ն.Մ. Սիպյագինի հետ, ում, որպես հակառակորդ, ատում էր Ի. Պասկևիչը:** Սրանից ելնելով՝ եզրակացվել է. «... Անկախ մեզանից ստեղծվում է այն ենթադրությունը, որ հեղինակներն իրենք էին Ի. Բուրցովին առաջարկել «Կարծիք» հայտնել իրենց «Նախագծի» մասին...»³¹:

Վերոհիշյալ ենթադրությունը, սակայն, չի պաշտպանվել խորհրդային այլ պատմաբանների կողմից: Մեր կարծիքով կարևորն այն չէ, թե ով է հանձնարարել «Կարծիք» գրել Ա. Գրիբոյեդովի և Պ. Չավիլեյսկու «Նախագծի» մասին: Կարևորն այն է, որ դա գրվել է, ու կարելի է հավաստի համարել և այն, որ Ա. Մալշինսկու կողմից հրապարակված և իբր Ի. Բուրցովին վերագրվող մեկնաբանություններն իրականում պատկանում են Ս. Ժուկովսկուն: Այդուհանդերձ, հարց է առաջանում. այս ամենի մեջ ինչու՞ է շրջանառվել Ի. Բուրցովի անունը, ում կողմից պատրաստված դիտողությունների տեքստի բնօրինակը մեզ չի հասել:

Արժե վկայակոչել հետազոտող Ի. Ենիկոլոպովի հետևյալ պնդումը. «...Մինչև այժմ Ա. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողներին հայտնի էր, որ Բուրցովն է գեներալ Պասկևիչին ներկայացրել «Նախագծի» մասին իր «Կարծիքը», բայց ոչ «Կարծիքի» տեքստը, որից կարելի էր դատել «Նախագծի» վերաբերյալ Բուրցովի հայացքների մասին, ոչ էլ «Նախագիծը» հայտնաբերված չէին, և միայն վերջերս այդ բացթողումը լրացվեց... Բուրցովի «Կարծիք»-ն ամբողջությամբ վկայում է «Նախագծի» նկատմամբ նրա դրական վերաբերմունքի մասին... Դա հիմնված էր այն սկզբունքի

վրա, որոնցով ղեկավարվում էին գաղտնի ընկերությունների անդամները. դա գյուղացիների ստրկացման դեմ պայքարն ու օտարերկրյա ազդեցության վերացումն էր պետության մեջ...»³²:

Դրանով հանդերձ՝ հետազոտողների կողմից չեն վկայակոչվել այն տողերը, որոնք կփաստեին Ի. Բուրցովի դրական վերաբերմունքի մասին: Ի. Բուրցովի մեկնաբանություններով ուղեկցվող «Նախագծի» տեքստի գոյության մասին ուսումնասիրողներից ոչ մեկը չի հիշատակում, այլ այդ առնչությամբ հղում են կատարում Ի. Ենիկոլոպովի աշխատությանը: Բացառվում է նաև այն հանգամանքը, թե Ի. Ենիկոլոպովը կարող էր արդեն հայտնի փաստաթղթերը շփոթել մեկը մյուսի հետ: Նա գրում է. «Ա. Մալշինսկին օգտվել է «Դիտողություններ»-ի տեքստից, որն արխիվում “Замечания на записку об устройстве земледельческой, мануфактурной и торговой компании” վերնագրով վերջերս հայտնաբերել է Ա. Իոսեյանին... Օ. Մարկովայի հետազոտությունների շնորհիվ հաջողվեց պարզել, թե ով է «Դիտողությունների» հեղինակը. դա Առաջին կովկասյան կորպուսի գեներալ-ինտենդանտ Մ.Ս. Ժուկովսկին էր...»³³:

Չնայած վերոհիշյալին՝ փաստելով, որ Ի. Բուրցովի գրած մեկնաբանություններով «Նախագիծ» տեքստի բնօրինակը ցայսօր ամբողջությամբ հայտնաբերված չէ, ամեն դեպքում հակված ենք կարծելու, որ նա, այնուամենայնիվ, գրավոր կամ բանավոր մեկնաբանություններ արել է «Նախագծի» վերաբերյալ, և կարևոր չէ, թե ում հանձնարարությամբ: Հակառակ դեպքում կրկին անորոշ կմնա, թե ո՞րն է եղել Ի. Բուրցովի անունը շրջանառության մեջ մտցնելու նպատակը: Չի բացառվում, որ սա հենց այն «ծայրահեղ դեպքն» էր, երբ Ի. Պասկևիչին իրո՞ք հարկավոր է եղել հաշվի առնել նաև դեկաբրիստ Ի. Բուրցովի կարծիքը:

Շարկ է անդրադառնալ ևս մեկ հարցի. խոսելով «Ընկերության» նախագիծը գրելու վայրի մասին՝ ներկայացրեցինք Ա. Գրիբոյեդովի ժամանակակից Ն.Ն. Մուրավյով-Կարսկու այն մտքերը, որտեղ նա վերոհիշյալ «Նախագիծ»-ը նմանեցնում է անգլիական «Արևելա-հնդկական» («Օստ-հնդկական») ընկերությանը: Այս առումով խորհրդային ուսումնասիրող Վ. Պաշուտոն գրում է. «...Այն («Նախագիծ»-ը – Վ.Ս.) հանգեցնում էր նրան, որ Անդրկովկասում պետք էր ստեղծել Օստ-հնդկական ընկերության նման խոշոր առևտրաարդյունաբերական ձեռնարկություն՝ 100մլն ռուբլուց ավել բաժնետիրական կապիտալով, կառավարության

30 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 328:

31 Նույն տեղում՝ էջ 333:

262

32 Ениколопов И., Грибоедов и Восток..., նշվ. աշխ., էջ 151:

33 Նույն տեղում՝ էջ 153:

կողմից առանձնացված 120 հազ. դեպատին հողային ֆոնդով և այլն...»³⁴:

Արտահայտվել է գրեթե համանման կարծիք. «Գրիբոյեդովն ու Ջավիլեյսկին որոշեցին Անդրկովկասում և Թիֆլիսում հիմնել «Ռուս-ամերիկյան» կամ նույնիսկ «Օստ-հնդկական» ընկերությունների նման առևտրային (կոմերցիոն) ընկերություն՝ Արևելքում նրա առջև դնելով առևտրի և արդյունաբերության ահռելի խնդիրներ...»³⁵:

1951 թվականից հետո «Ընկերության» հասմատությունն «Արևելահնդկականի» հետ համարվում է սխալ: «Օստ-հնդկական ընկերությունը,- գրում է Մ. Նեչկինան,- որի թայանչական եկամուտը կերակրեց ծնունդ առնող անգլիական կապիտալիզմին, 1828թ. լրիվ անկում էր ապրում և իրենից ծաղկող տնտեսական ընկերության գայթակղիչ օրինակ չէր ներկայացնում: Ն. Մուրավյովի համեմատությունն ակնհայտորեն արդարացի չէր ներկայացվում»³⁶: Այս տեսակետը հիմնավորելու համար նշվել է, որ «Նախագծի» հեղինակներն իրենք էլ ոչինչ չեն գրել «Օստ-հնդկական ընկերության» մասին: Մեջ են բերվել «Նախագծի» ներածականի այն տողերը, որտեղ Ա. Գրիբոյեդովն ու Պ. Ջավիլեյսկին իրենց «Ընկերությունը» համեմատում են Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգների հետ, որը «դրա ամենառասանելի օրինակն է ներկայացնում»³⁷: Ըստ Մ. Նեչկինայի՝ «Արևելա-հնդկական ընկերությունն» իր առջև արտադրական նպատակներ ու խնդիրներ չէր դրել, այլ միայն թայանչել էր պատրաստի եղածը և մենաշնորհային կերպով առևտուր էր արել, մինչդեռ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագիծն» ընդգծված կերպով իր առջև խնդիր էր դրել Վրաստանում նոր ձեռնարկություններ բացել, մեքենաներ ներկրել և զարգացնել արդյունաբերությունը:

Որպես վերոհիշյալ երկու «Ընկերությունների» միջև եղած զգալի տարբերություն՝ Մ. Նեչկինան նշում է այն, որ «Գրիբոյեդովի «Նախագրծում» բացակայում են, այսպես ասած, Օստ-հնդկական ընկերության ոգին կազմող առևտրային մենաշնորհները»³⁸: Ինչ վերաբերում է հեղինակների կողմից հայցվող մենաշնորհներին, ապա, ըստ ուսումնասիրողի, դրանք պետք է հատուկ ակտով դառնային օրենք և կրեին ժամանակավոր բնույթ:

34 Пашуто В.Т., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 135:

35 Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, Ленинград, 1934, с. 147.

36 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1951, ևշվ. աշխ., էջ 541:

37 Грибоедов А.С., Сочинения, 1971, ևշվ. աշխ., հ. 2, էջ 110:

38 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1951, ևշվ. աշխ., էջ 541:

1951 թվականից հետո, սակայն, խորհրդային հետազոտողների կողմից այս հարցը կա՛մ շրջանցվել, կա՛մ էլ մեկնաբանվել է նույն կերպ: Օրինակ, Մ. Շոստակովիչը նշում է հետևյալը. «...Նախագիծն այլ տիպի ընկերություն էր ցանկանում ստեղծել, քան Արևելքում լավ հայտնի անգլիական Օստ-հնդկական ընկերությունն էր: Նախագիծը նկատի չունեց ընկերության առևտրային մենաշնորհները, բայց մեծ ուշադրություն էր դարձնում Անդրկովկասում արդյունաբերության ստեղծմանը, այնտեղ տարբեր ձեռնարկություններ հիմնելուն...»³⁹:

Չնայած ասվածին՝ այնուամենայնիվ հակված ենք կարծելու, որ «Ռուսական-անդրկովկասյան» և անգլիական «Արևելա-հնդկական» ընկերությունների համեմատության մեջ մեծ նմանություն կա. երկուսն էլ ունեին գաղութատիրական էություն⁴⁰: Այն, որ «Նախագիծի» հեղինակները տեքստում չեն հիշատակում «Արևելա-հնդկական ընկերության» անունը, ոչինչ չի նշանակում, իսկ Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգների հետ համեմատությունը բոլորովին այլ իմաստ ունի. այստեղ խոսքը վերաբերում է Այսրկովկասում իբր լուսավորչալ և հարուստ բնակչություն ունենալուն, ինչը կօգներ վերացնել միմյանց հանդեպ թշնամությունը և «կսանձահարեք» լեռնական ժողովուրդներին⁴¹: Սրան հասնելու համար է, որ բերվում է ԱՄՆ-ի օրինակը: «Այսպիսով,- գրում են «Նախագիծ»-ը կազմողները,- անտառները մաքրելով կամ դասակերտներ և ցորենի դաշտեր հիմնելով՝ գիշատիչ գա-

39 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 194:

40 «Արևելա-հնդկական» ընկերության և Անգլիայի վարչապետ Փիթթի գլխավորած թորիների կաբինետի կողմից 1784թ անգլիական պառլամենտում սովյալ «Ընկերության» արտոնություններին վերաբերող օրենքի անցկացման մասին տե՛ս «Всемирная история» в десяти томах, Москва, изд-во СС. Эконом. литературы, 1958, հ. V, էջ 282-294: Փաստված է, որ «Օստ-հնդկական ընկերության» փաստական մենաշնորհային (մոնոպոլ) իրավունքների դեմ անգլիական վաճառականների և արդյունագործողների մղած պայքարի արդյունքում 1784թ ակտով Անգլիայի թագավոր Գեորգ III-ը ստիպված էր գնալ փոխզիջման, և «Օստ-հնդկական ընկերությունը» ենթարկել 6 հուլիսից Վերահսկիչ խորհրդին: Դրա արդյունքում շեղաստանի նվաճման համար ձևավորվել է երկակի համակարգ, այսինքն՝ Շեղաստանի գաղութացումն ու կառավարումը իրականացվելու էր կառավարության (հանձին Վերահսկիչ խորհրդի) և «Օստ-հնդկական ընկերության» (հանձին Դիրեկտորների խորհրդի) կողմից համատեղ: Չնայած նախատեսվել էր «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» ղեկավարումն իրականացնել չորս ռեզիդենտների՝ Վրաստանի գլխավոր կառավարչի, Թիֆլիսի գլխավորական նահանգապետի, ֆինանսների և ներքին գործերի նախարարների միջոցով (տես նաև՝ Туляев В.Г., «Проекты экономического освоения Закавказья...» ևշվ. հոդված, էջ 21-22), ամեն դեպքում, ի լրումն ասվածի, Ա. Գրիբոյեդովն ու Պ. Ջավիլեյսկին «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» նախագծում պետության և մասնավոր ընկերության կողմից երկրամասի շահագործման գործում հակաշեռներ չէին նախատեսել: Հակառակ դեպքում «Նախագիծ» քննադատողները կանդրադառնային նաև այս հարցին:

41 Հիշեցնենք, որ ԱՄՆ-ի «ուսանելի փորձը» տեղաբնիկներին «սանձելու» և լուսավորություն տարածելու, րկթացել է ամերիկյան տեղաբնիկ հնդկացիական ցեղերին ցեղասպանության ենթարկելու ճանապարհով, ինչին անկասկած տեղյակ էին այդ համեմատությունը դրական համարող խորհրդային հետազոտողները:

զաններն անհետանում են՝ իրենց տեղը զիջելով մարդուն կերակրող ընտանի հեզ կենդանիներին: Հյուսիսամերիկյան Միացյալ Նահանգները ներկայացնում են դրա ամենատասանելի օրինակը...»⁴²: Ի դեպ, Մ. Ժուկովսկին ևս անդրադառնում է վերոհիշյալ դրվագին և ԱՄՆ-ի օրինակը փոխառնելու մասին գրում է, որ նախկին հայրենիք Անգլիայի առումով ամերիկացիների համար այն, իրոք, ուսանելի է *միայն տնտեսական, այլև քաղաքական առումով*⁴³:

Եթե անգամ ընդունենք, որ հեղինակներն իրենց ձեռնարկումը համեմատել են ԱՄՆ-ի հետ, ապա դա դեռ չի նշանակում, որ այն ոչ մի ընդհանուր եզր չէր կարող ունենալ «Արևելա-հնդկական ընկերության» հետ: Կարծում ենք՝ հարկ չկա լիովին բացառել նման համեմատությունը: Ավելին, իր «Դիտողություններում» մեկնաբանելով «Ընկերության» կողմից արտոնություններ ստանալու հարցը՝ Մ. Ժուկովսկին կատարում է հետևյալ համեմատությունը. «...Անդրկովկասյան գավառներում, որտեղ աշխատասիրությամբ և գործունեությամբ դեռ ոչինչ արված չէ, նոր ձեռնարկումների հանդեմ ընկերությունը Օստ-հնդկականի կամ Հյուսիսամերիկյան-ռուսական ընկերությունների նման պետք է օժտվի բացառիկ արտոնություններով, որոնք Ընկերությունից կհեռացնեին նրան վնաս պատճառող այլ անձանց ու միություններին...»⁴⁴: Այնուհետև ծավալվելով՝ Մ. Ժուկովսկին ավելացնում է, որ Անդրկովկասը Ռուսաստանից այնքան հեռու չէ, ինչպես Հնդկաստանը կամ Հյուսիսամերիկյան կղզիները, և «Ընկերությունը» ոչ մի օրինակ չի դիմում այստեղ հասնելու համար: Ըստ նրա՝ Անդրկովկասն ունեցել է զարգացածության որոշակի մակարդակ, և «Ընկերությունն» իր աշխատանքը գրոյից չէր սկսելու, ու որ *այդպիսի արտոնություններ չեն շնորհվում Եվրոպայում գործունեություն ծավալած ոչ մի ընկերության*: Մ. Ժուկովսկին գրում է. «Անգլիայում էլ Օստ-հնդկական ընկերության արտոնությունները չեն տարածվում ո՛չ Անգլիային սահմանակից կղզիների և գավառների, ո՛չ էլ նոր ձեռք բերած վայրերի վրա... և դուրս է գալիս, որ այս արտոնությունները ոչ բոլոր վայրերում են պետքական. եթե Անգլիայի կառավարությունն այն ժամանակ նույնքան ուժ և կարողություն ունենար, որքան ունի հիմա՝ առանց Օստ-հնդկական ընկերության ինքնուրույն հպատակեցնելու և կառավարելու ժողովուրդների, ապա

Օստ-հնդկական ընկերությունը կարող էր գոյություն չունենալ»⁴⁵:

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության» համար պահանջվող արտոնություններն (այդ թվում նաև առևտրային) իրենց բնույթով չէին զիջում անգլիական «Արևելա-հնդկական ընկերության» արտոնություններին: Հակիրճ ներկայացնենք, թե ինչպիսի նպատակներ էին հետապնդում Ա. Գրիբոյեդովն ու Պ. Ջավիլեյսկին և դրանց հասնելու համար ինչ էին խնդրում կառավարությունից: *Կովկասից այս կողմ ընկած բարեբեր գավառներում գինեգործություն, մետաքսագործություն, բամբակագործություն, ներկանյութերի, դեղագործական և այլ արտադրություններ կազմակերպելու, կատարելագործելու և հասարակության բարօրության համար նրանք արտոնություններ էին հայցում թվարկված բոլոր բնագավառներում*⁴⁶:

Գյուղատնտեսության ոլորտում հեղինակները պետությունից խընդրում էին իրենց հանձնել 120 հազար դեսյատին չմշակված հող և պետությանը պատկանող բոլոր այգիները: Նրանք Անդրկովկաս նոր բուսատեսակներ ներմուծելու և աճեցնելու, վայրի բույսեր հավաքելու և վերամշակելու բացառիկ իրավունք էին խնդրում: «Ընկերության» հողերում վերաբնակեցվածներն ու գաղութաբնակներն ազատվելու էին պետական բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից: Արդյունագործության ոլորտում այլ ընկերությունների և մասնավոր անձանց կողմից նորամուծություններ չպետք է կիրառվեին: «Ընկերությունը» պետք է իրավունք ունենար իր արտադրանքն առանց մաքսի արտահանել և նույն կերպ ներմուծել իրեն անհրաժեշտ ապրանքներ, իսկ այլ ընկերությունների կողմից նույնպիսի ապրանքներ ներմուծելու դեպքում կամ պետք է դա արգելվեր, կամ բարձր մաքս վճարվեր:

Անդրկովկասում այլ ընկերությունների արտոնություններ տալիս, ըստ հեղինակների, պետությունը պետք է հաշվի առներ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» կարծիքը: «Ընկերության» իրավունքները պետք է տարածվեին բոլոր այն հողերի վրա, որոնք Ռուսաստանը կնվաճեր Անդրկովկասում և Ասիայում: «Ընկերությանը» պետք է նավահանգիստ տրամադրվեր Սև ծովի ափին պորտո-Ֆրանկոյի (ազատ նավահանգիստ – Վ.Ս.) կարգավիճակով, ընդ որում, հեղինակների ցանկությամբ, դա պետք է լիներ Բաթումը, որը դեռ պետք է նվաճվեր:

42 Грибоедов А.С., Сочинения, 1971, кн. 2, т. 2, с. 110:

43 Маркова О.П., Новые материалы..., кн. 2, т. 2, с. 361:

44 Նույն տեղում՝ էջ 357-358:

45 Маркова О.П., Новые материалы..., кн. 2, т. 2, с. 359:

46 Грибоедов А.С., Сочинения..., 1971, кн. 2, т. 2, с. 90:

Իրենց խնդրանքը հիմնավորելու համար հեղինակները հղում են կատարում 1807թ. հունվարի 1-ի “Высочайшій манифест”-ին և 1821թ. հոկտեմբերի 8-ի վերոհիշյալ հրամանագրին⁴⁷:

Ինչպես տեսնում ենք, մաքսերի հարցում խնդրվող արտոնությունը հակասում էր հենց 1821թ. հոկտեմբերի 8-ի վերոհիշյալ կայսերական հրամանագրին, որով 5%-ոց արտոնյալ մաքս էր սահմանվում Վրաստան ներմուծվող և տարանցիկ ճանապարհով Պարսկաստան արտահանվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ: «Նախագծի» վերոնրջյալ արտոնության խնդրանքը վերացնում էր 5%-ոց արտոնյալ մաքս հասկացությունը և լուրջ խոչընդոտ դառնում հավասար մրցակցային դաշտ ստեղծելուն և Այսրկովկասում տարանցիկ առևտրի զարգացմանը:

Արտոնությունների մասին խոսելիս հեղինակները նշում են, որ դրանք նորություն չէին, և որպես հողահատկացման օրինակ՝ բերում են Ֆրանսիայի հյուպատոս Ժ.Ք. Գամբային Բմբեյում 15 հազար դեսյատին, Տավրիայի գավառում դուքս Անհալթի գաղութաբնակներին 50 հազար դեսյատին հող հատկացնելու փաստերը: Ըստ նրանց՝ Վրաստանում գաղութաբնակներ վերաբնակեցնելիս կառավարությունը բավականին նշանակալի նպաստներ էր տրամադրել⁴⁸: Որպես պորտո-ֆրանկոյի իրավունքներ ստացած քաղաքի օրինակ՝ նրանք նշում էին Օդեսան և այլն: Վերանշյալ հակասությունները տեսնելով ու համեմատությունները մեկնաբանելով, ինչպես նաև վկայակոչելով 1821թ. հոկտեմբերի 8-ի «Հրամանագիրը»՝ Մ. Ժուկովսկին գրում է. «1821թ. հրամանագիրը թույլ չէր տալիս ընտրությամբ լավագույն կտորներով հողեր հատկացնել և չէր տալիս այն արտոնությունները, որոնք այստեղ («Նախագծում» – Վ.Ս.) պահանջվում են: Հետևաբար հրամանագիրն այս գործի համար ոչ որպես կանոն, ոչ էլ որպես օրինակ ծառայել չի կարող...»⁴⁹:

Բաթումին պորտո-ֆրանկոյի կարգավիճակ տրամադրելու մասին Մ. Ժուկովսկին գրում է, որ հայտնի չէ, թե Ռուսաստանին ինչ օգուտ կա Օդեսայի պորտո-ֆրանկոյից, քանզի այնտեղ նավահանգիստն էլ, քաղաքն էլ պատկանում են կառավարությանը, իսկ արդյունաբերությունը՝ բնակչությանը⁵⁰: **Այնհայտ է, որ Մ. Ժուկովսկու մեկնաբանությունները**

47 ЗУА, 4-й отдел Удальский архив, фонд 332, групп. 1, карт. 497, листы 12, тек. №1. ПСЗРИ, т. XXIX, 1806-1807, ф. 111, № 22.418, № 971-979, т. XXXVII, 1820-1821, ф. 111, № 28.771, № 871-872, ф. 111, № 28.772, № 872-873:

48 Прибоєдов А.С., Сочинения. 1971, №2, т. 2, № 93:

49 Маркова О.П., Новые материалы..., №2, т. 2, № 387:

50 Նույն տեղում՝ էջ 388:

ցույց են տալիս «Նախագծի» հեղինակների բերած համեմատական օրինակների համոզիչ չլինելը: Դա երևում է նաև խնդրվող արտոնությունների շուրջ նրա այլ մեկնաբանություններից ևս. նախքան դրանց անդրադառնալը նշենք, որ ազատ նավահանգստային քաղաքի (պորտո-ֆրանկոյի) գաղափարի վերաբերյալ բավականին ուշագրավ տեսակետ է արտահայտում նաև վերոհիշյալ հետազոտող Վ. Թունյանը: Նա գրում է. «Գրիբոյեդովը և Զավիլյեյսկին Անդրկովկասում Բաթումի պորտո-ֆրանկոյի գաղափարն առաջադրելիս նախօրոք նախապատրաստել էին Հարավային ծայրամասի քաղաքատնտեսական գործունեության ու զարգացման՝ նաև տարածքային սահմանագծման (կոնֆիգուրացիայի) այլընտրանքային նոր ծրագիր, ինչով Մերձավոր Արևելքում առևտրական ուղիների վրա Անգլիայի և Ռուսաստանի միջև տնտեսական մրցակցությունը կթնակոխեր նոր փուլ: «Նախագծի» հեղինակների ակնարկների մասին տեղյակ էր Կովկասի կառավարչապետ Պասկևիչը, որն ըստ արժանվույն գնահատեց Բաթում նավահանգիստն ու Կարսը ներառյալ՝ Ճորոխ գետից մինչև Արարատ առաջարկվող նոր սահմանի բոլոր առավելությունները և այդ հարցում հանդես եկավ հետևողականորեն: Կենդանի լինել Գրիբոյեդովը՝ անշուշտ կմասնակցեր այդ ծրագրի զարգացմանն ու իրականացմանը: Իսկ եթե Գրիբոյեդովը Պարսկաստանում «բերանից թոցրել էր» դրա մասին, ապա անգլիացիների կողմից, բնականաբար, ներողամտության չէր կարող սպասել: Համեմայնդեպս, «Նախագծի» հեղինակներն անդրկովկասյան պլանավորված մաքսային օկրուգում կամենում էին գործողությունների ամրագրված ազատություն ունենալ: Պորտո-ֆրանկոյի առկայությունը նշանակում էր եվրոպական ապրանքների ներկրման համար տուրքերից ազատվելու ձրգտում, Թուրքիայի և Պարսկաստանի հետ առևտրի հնարավորություն, իսկ Օդեսայի պորտո-ֆրանկոյի նմանությամբ ունենալ նաև «սեփական դրամը»: Այս գաղափարի իրագործումը կնշանակեր նաև մուտքերի ոլորտում պետական գանձարանին զգալի վնասների պատճառում»⁵¹:

Բացի Բաթումի նավահանգստից՝ առաջադրվում էր նաև այլ տարբերակ: Դրա մասին Վ. Թունյանն իրավացիորեն փաստում է՝ ներկայացնելով 1826-1828թթ. դրությամբ Թիֆլիսի մաքսատան զանձված տուրքերի աղյուսակը: Նա գրում է. «Որպես Բաթումին այլընտրանք՝ եվրոպական ապրանքների ներկրումը «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» Փոթիի կամ Ռիոնի կառավարությունների պահեստատեղեր, նա-

խաղրյալներ կստեղծեր անդրկովկասյան տարանցիկ առևտրի փակման համար, կմենաշնորհայնացներ առևտրի այդ ոլորտը և կնպաստեր մաքսանենգությանն ու հարստացմանը: Պորտո-Ֆրանկոյի գաղափարում կար նաև այլ հեռանկար. խուսափել հատկապես ռուս գործարարների արտադրանքի հետ բախվելուց»⁵²: **Հիշեցնենք, որ «անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղու» փակման ջատագովներից էր նաև կոմս Կանկրինը:**

Հարկ է նշել, սակայն, որ վերոբերյալ պնդումներում և մասնավորապես Ի. Պասկևիչի կողմից հավանության արժանացած «Ծրագրի» մասին Պարսկաստանում «բերանից թոցներու» և անգլիացիների «ներողամտությանը չարժանանալու» դրվագում հետազոտողի կողմից կարծես թե թափանցիկ, բայց անապացույց նոր վարկած է առաջ քաշվում «Հարավային ծայրամասի տարածքային սահմանագծման այլ-ընտրանքային ծրագիր կազմելու համար» Ա. Գրիբոյեդովի նահատակության գործում անգլիացիների դերակատարության վերաբերյալ: Ա. Գրիբոյեդովի նահատակության խնդիրներին դեռ կանդրադառնանք:

«Արևելա-հնդկական ընկերություն»-ը «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» հետ համեմատելիս մեջ բերեցինք Մ. Ժուկովսկու մեկնաբանություններից մեկը, սակայն դրանք շատ են և վերաբերում են «Ընկերության» համար հայցվող բոլոր արտոնություններին: Ծավալային առումով նպատակահարմար է ներկայացնել միայն նրանք, որոնք առավելագույնս բացահայտում են «Նախագծի» էությունը: Այսպես, խոսելով հողահատկացման խնդրանքի մասին և թվարկելով Անդրկովկասի այն գավառները, որտեղից պետք է հողեր հատկացվեին, Մ. Ժուկովսկին նկատում է, որ դրանք ընդգրկում են մի ծովից մյուսը (Սև և Կասպից ծովերի միջև – Վ.Ս.), և վերջում ավելացնում է. «...Տարածքների այդպիսի ընտրության դեպքում առանց հատկացումների մնացած ամբողջ տարածությունը կարող է հայտնվել հատկացված տարածքներից կախյալ վիճակում, քանի որ հանդերից գրկված տարածությունն ինքն իրենով անպետք կդառնա բոլորի համար...»⁵³:

Ինչպես տեսնում ենք, պետությանն այնքան էլ ձեռնառու չէր այդքան մեծ հողատարածք զիջել մեկ «Ընկերությանը»: Այդպես էր նաև պետական այգիների դեպքում: Համաձայնելով հեղինակների այն մտքի հետ, թե այգիներ պահելը պետությանը ձեռնառու չէ, քանի որ վարձա-

կալողները խաբում են պետությանը, Մ. Ժուկովսկին մինևսյն ժամանակ առաջարկում է դրանք մեկ «Ընկերությանը» տալ ոչ թե ամբողջությամբ, այլ վաճառել մասնավոր անձանց, «քանի որ Ընկերության հետ էլ կարող են անշահավետ հաշվարկներ կատարվել: «Ընկերությանը, ինչպես նաև Գանձարանին (պետական – Վ.Ս.), կարող էին խաբել նրա կառավարիչները, և «Ընկերությունը» նույնպես ներողամտություն և զիջումներ կխնդրեր կառավարությունից»⁵⁴:

Պետությանը ձեռնառու չէր նաև «Ընկերությանն» ազատել հարկերից և տուրքերից: Նշելով դրա անարդարացիությունն այլ ընկերությունների հանդեպ՝ Մ. Ժուկովսկին հարց է տալիս. «Պատշաճ է արդյոք, որ կառավարությունն իր վրա վերցնի ապագա անհայտ ժամանակների և հանգամանքների պարտավորությունները»⁵⁵: Առանձին-առանձին մեկնաբանելով առևտրային արտոնությունները՝ Մ. Ժուկովսկին հարցնում է, թե ինչպե՞ս պետք է ներմուծվող ապրանքները տարբերել «Ընկերության» ապրանքներից, և դա չէ՞ր բերի արդյոք ներմուծման մենաշնորհի, և հանգում է հետևության, որ արտասահմանցիները կարող էին վճարել (այսինքն՝ կաշառել – Վ.Ս.), որ «Ընկերությունը» չխանգարի իրենց առևտրին»⁵⁶:

Արտահանմանը վերաբերող արտոնության մասին խոսելիս Մ. Ժուկովսկին դարձյալ հարցնում է. «...Տեղարանակներին էլ ի՞նչ արտադրանք է մնում արտահանել, եթե Ընկերությունն արտահանում է տեղի բոլոր ապրանքատեսակներից, կամ ինչպե՞ս պետք է տարբերել, թե որն է արտադրվել «Ընկերության» կատարելագործված մեթոդներով, որը՝ ոչ. չէ՞ որ մյուսներն էլ են կատարելագործում արտադրության հին ձևերը: Արդյոք դա չի՞ բերի դատական անընդհատ քաշքշուկների, թե որն է արտադրվել Ընկերության նոր ներդրված մեթոդներով, որը՝ ոչ»: Վերջում նա դարձյալ դիմում է «Նախագծի» հեղինակներին. «Մի՞թե դա է ազգը լուսավորելու ձևը՝ արգելք դնելով լուսավորության պտուղների վրա»⁵⁷: **Այստեղ տեղին է կրկին նշել, թե ինչն էլ էին այս արտոնությունները զիջում «Արևելա-հնդկական ընկերության» արտոնություններին, կամ ինչն էլ էին դրանք նպաստելու Այսրկովկասում «արտադրողական ուժերի» զարգացմանը:**

Խորհրդային շրջանում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել

54 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 388:

55 Նույն տեղում՝ էջ 370:

56 Նույն տեղում՝ էջ 381:

57 Նույն տեղում՝ էջ 378-379:

52 Тунян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, նշվ. աշխ., էջ 113:

53 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 366-367:

270

«Ռուսական-անդրկովկասյան ընկերության» ապագա տարածքներում գյուղացիներ վերաբնակեցնելու և բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից նրանց ազատելու հարցերին՝ **որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական հայացքների դրսևորումներ**: Հայտնի է, որ «Նախագծի» հեղինակները խնդրում էին թույլ տալ գյուղացիներ գնել Ռուսաստանում և վերաբնակեցնել «Ընկերության» հողերում՝ նրանց ազատելով ճորտությունից և բոլոր տեսակի հարկերից, պայմանով, որ նրանք 50 տարի աշխատեին «Ընկերության» համար: Այս առումով Մ. Ժուկովսկին նկատում է. «...Ո՞վ կապրի մինչև ճորտական վիճակից ազատվելը, քանզի 50 տարին մարդու դարձնում է 588... Ընկերությունը որքան ասես կարող է գյուղացիներ գնել ու նրանց աշխատանքն օգտագործել ընկերության պլանտացիաներում... այնպիսի շոգ վայրերում, որտեղից նույնիսկ տեղաբնակներն են հեռանում լեռները..., և վրոպացիներն իրենց գաղութներում այդպիսի պլանտացիաներում օգտագործում են նեգրերի և արստրված հանցագործների, իսկ այստեղ (Այսրկովկասում – Վ.Ս.) Ռուսաստանի գյուղացիները պետք է ծառայեն նեգրերի և հանցագործների փոխարեն...»⁵⁹: Ըստ Մ. Ժուկովսկու՝ տեղում մահացության բարձր տոկոսը կվնասեր պետությանը, ինչն անվերջ նոր աշխատուժի կարիք կառաջացներ, ինչն էլ դարձյալ կհամարվեր ռուս գյուղացիների հաշվին: Արդյունքում կնվազեր ռեկրուտների (հավաքագրված զինվորների – Վ.Ս.) թիվը:

Վերաբնակեցվածներին գաղութաբնակի կարգավիճակ տալու և բոլոր հարկերից ու տուրքերից ազատելու հարցում Մ. Ժուկովսկին առարկում է՝ ասելով, թե «այսպիսի պայմաններով ո՞վ չի համաձայնի Ռուսաստանից և այստեղից (Այսրկովկասից – Վ.Ս.) անցնել Ընկերության հպատակության տակ»⁶⁰, ապա պնդում է, թե այդ դեպքում ո՞վ պետք է պետության հարկերն ու տուրքերը վճարի՝ այս արտոնությունը համեմատելով հնում Եվրոպայում կաթոլիկ եկեղեցուն շնորհած համանման արտոնությունների հետ, ինչի հետևանքով պետությանը ծառայող զրեթե չէր մնացել:

Ընդհանրացնելով Մ. Ժուկովսկու դիտողությունները՝ փաստենք, որ նա դեմ էր վերոհիշյալ արտոնություններին, որովհետև դրանք վնասում էին պետությանը: Նրա հետ համակարծիք է նաև Ա. Մալշինսկին, որը վերաբնակեցվածների և նրանց հարկերից ազատելու շուրջ ավել-

58 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 370:

59 Նույն տեղում՝ էջ 367:

60 Նույն տեղում՝ էջ 370:

լացնում է. ««Ընկերությունը», ճորտությունից ազատելով գյուղացիներին (ռուս – Վ.Ս.), ամեն տեսակի բարիք էր խոստանում միայն 50 տարի հետո, իսկ մինչ այդ ժամկետի վերջը անդրկովկասցիները (տեղաբնակները – Վ.Ս.), եթե ուշադրության առնենք «Ընկերության» արտոնությունները, ապա պետք է այնտեղ ծառայեին որպես աշխատողներ (վարձու – Վ.Ս.) և աշխղկներ («приказчики» – Վ.Ս.)»⁶¹:

Ամփոփելով գյուղացիներ գնելու և նրանց 50 տարով «Ընկերության» հպատակության տակ պահելու մասին Մ. Ժուկովսկու և Ա. Մալշինսկու տեսակետները՝ նշենք, որ նրանք դա չէին համարում ճորտությունից ազատագրում: Առանձին փաստերի վրա հենվելով՝ խորհրդային որոշ հետազոտողներ, ինչպես նշել ենք, նույնիսկ պնդել են Ա. Գրիբոյեդովի՝ ճորտատիրական կարգերի կողմնակից լինելու հանգամանքը: Անդրադառնալով այս հարցին՝ հետազոտող Ն. Պիկսանովը գտնում է, որ «Ընկերությունը» չէր կարող սեփական ճորտեր ունենալ, և ճորտության վիճակից ազատված գյուղացիները հատուկ պայմանով՝ 50 տարով ծառայելու էին Ընկերության պլանտացիաներում, այսինքն՝ Ռուսաստանում գնված գյուղացիներն իրավաբանական անձի կոլեկտիվ կալվածատեր «Անդրկովկասյան» ընկերության մոտ մինչև կյանքի վերջ փաստորեն մնալու էին ճորտի կախյալ վիճակում⁶²:

Ինչպես նշել ենք հարցի շուրջ պատմագրությունը ներկայացնելիս, Ն. Պիկսանովը նախքան «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» մասին խոսելն անդրադառնում է Կոստրոմայի մարզում նրա մորը՝ Նաստասյա Ֆեոդորովնային պատկանող կալվածքում 1816-1819թթ. գյուղացիական հուզումներին, որոնց նույնիսկ խառնվել էր բանակը: **Ա. Գրիբոյեդովը չէր կարող չիմանալ մոր և գյուղացիների (ճորտերի) դիմակայության մասին, սակայն հայտնի չէ մի վավերագիր, որում Ա. Գրիբոյեդովն արտահայտված լիներ այդ իրադարձությունների, էլ չենք ասում «ճորտատիրուհի-մորը» դեմ գնալու և ճորտերին պաշտպանելու մասին: Լինելով ծնողներ՝ նա շատ լավ էր վերաբերվում մորը, ինչը բազմիցս երևում է նրա նամակներից**: Ն. Պիկսանովը վկայակոչում է Ա. Գրիբոյեդովից Սո. Բեգիչևին ուղղված մի նամակ, որտեղ ասված է. «...Էլի մեկ խնդրանք ունեմ քեզ... Իլյա Օզարյովը Կոստրոմայից փող կողարկի քո անունով. եթե արձակուրդ գնաս, դա վերահանձնարարի

61 Мальшинский А.П., Незданная записка..., նշվ. աշխ., էջ 14-15:

62 Пиксанов Н.К., Грибоедов - Исследования и характеристики, նշվ. աշխ., էջ 147-148:

ժանդրին...»⁶³: Նշենք, որ Իլյա Օգարյովը Կոստրոմայի կալվածատեր և Նաստասյա Ֆեոդորովնայի ազգականն էր, նույն ինքը, ով Նաստասյա Ֆեոդորովնայի դեմ ըմբոստացած ճորտերին սպառնացել էր մինչև վերջին գերանը քանդել նրանց տները և վերաբնակեցնել Պենզայի իր տիրույթներում: Վերոհիշյալ նամակը փաստում է, որ Ա. Գրիբոյեդովը ոչ միայն չէր հակառակվել մոր ճորտատիրական հակումներին, այլ ընդհանրապես անտարբեր է եղել նրա ճորտերի վիճակի ու ճակատագրի նկատմամբ և անհոգ ծախսել է նրանցից քամված գումարները: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Ա. Գրիբոյեդովն իր առջև ճորտատիրական կարգերը վերացնելու համար պայքարի խնդիր չէր դրել: Սակայն խորհրդային շրջանում չէր կարելի նման բնութագրում թույլ տալ, և հարցը որոշվել է հոգուտ «ճորտատիրական կարգերի դեմ պայքարող» Ա. Գրիբոյեդովի:

Օգտվելով Օ. Մարկովայի հրապարակումից՝ Մ. Նեչկինան և իր հետևորդները սուր քննադատության են ենթարկել ֆեոդալական կարգերի կողմնակից Մ. Ժուկովսկուն, ինչը հարկավոր չէր անել դեկաբրիստ Ի. Բուրցովի դեպքում: Վերաբնակեցվածներին «Ընկերության» ենթակայության տակ աշխատեցնելը, որպես ճորտական նույն կախյալ վիճակը համարելը դիտվել է սխալ, քանի որ «Ընկերության» «ձեռքի տակ» անցնելով՝ գյուղացիները, ըստ նրանց, դառնալու էին կապիտալիստական վարձու աշխատողներ, իրավական առումով կարող էին առանց տիրոջը հարցնելու ամուսնանալ, շարժական ու անշարժ գույք ունենալ, եթե ոչ իրենք, ապա գոնե իրենց երեխաներն արդեն ճորտեր չէին լինելու:

Զուգահեռներ անցկացնելով Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու այս «Նախագծի» և դեկաբրիստ Նիկիտա Մուրավյովի «Սահմանադրության» միջև՝ Մ. Նեչկինան նշում է, որ եթե Ն. Մուրավյովը ամեն ընտանիքի՝ ճորտությունից ազատելու դեպքում ընդամենը երկու դեսյատին հող էր հատկացնում, նրան դեռևս դուրս չեն թողել ճորտատիրական իրավունքի հակառակորդների կազմից: Մեր կարծիքով այս օրինակն ու մոտեցումը թերի և միակողմանի են, քանի որ համեմատական զուգահեռներ անցկացնելիս հետազոտողը չի փաստում, թե 50 տարի անց քանի՞ դեսյատին հող էր տրամադրելու կամ սոցիալական ինչ կարգավիճակ էր սահմանելու վերոհիշյալ «Նախագիծը»:

Հարկերից ազատելու մասին Մ. Ժուկովսկու հայտնած կարծիքը, թե «այդպիսի պայմաններով ո՞վ չի համաձայնի» պետության կախվածությունից անցնել «Ընկերության» ենթակայության տակ, համարվել է Մ. Ժուկովսկու կողմից ինքն իրեն հակասելու փաստ և եզրակացվել է. «...Ակնհայտ է, որ նույնիսկ Ժուկովսկին չէր կարող չընդունել բնակչության համար այն օգուտները, որոնք կարող էին լինել «Անդրկովկասյան ընկերության նախագծի» իրագործման արդյունքում...»⁶⁴:

Սակայն, դրանով հանդերձ, դարձյալ փորձ չի արվել ցույց տալ, թե այդ ինչ արտոնությունների և ճորտությունից բարվոք ո՞ր բարեկեցիկ կյանքի անցնելու մասին է խոսքը, որն ակամայից «ստիպված պետք է ընդուներ» Մ. Ժուկովսկին: Այդ ո՞ր օգուտներն էին, որոնց համար ռուս ճորտ գյուղացին պատրաստ էր ևս 50 տարի մնալ այս անգամ էլ «կոլեկտիվ կալվածատիրոջ» ենթակայության տակ: Ավելորդ չի լինի շեշտել, որ Մ. Ժուկովսկին գոնե դա հասկացել էր դեռևս մինչև 1861թ. ճորտատիրական իրավունքի վերացումը, մինչդեռ 1861թ. ճորտությունից ազատված գյուղացիները շատ ուշ «գլխի ընկան», որ կալվածատիրականից անցան պետությունից կախվածության: Չենք կարծում, որ «Ընկերության» ենթակայության տակ անցնող անգրագետ ճորտ գյուղացիներն էլ Մ. Ժուկովսկու նման 1861 թվականից 33 տարի առաջ քաջ կգիտակցեին իրենց սպասվող օգուտները:

Վերոհիշյալ միակողմանի տեսակետները հետագայում դարձել են գերիշխող, սակայն որոշ վերապահումներով՝ երբեմն զգույշ կամ ակամա ընդունելով «Ընկերության» գյուղացիներին սպասվող ստրկական (կաբալային – Վ.Ս.) վիճակը կամ նման ծրագրերի համար Այսրկովկասի թույլ ու հետամնաց լինելու հանգամանքները: Ամեն դեպքում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մեկնաբանություններով ուղեկցվող «Նախագծի»՝ մեզ հասած տեքստերում բացակայող հետևյալ կարևոր հարցերը, որոնք շրջանցված են համարյա բոլոր հետազոտողների կողմից: Այսպես, ու՞մ և ի՞նչ միջոցներով ու որքան՞ ճորտեր էին զնվելու Ռուսաստանում, ինչու՞ պետք է գյուղացիները 50 և ոչ թե 40 կամ 60 տարով ծառայեին «Ընկերության» ենթակայության տակ, ի՞նչ վարձատրություն էին նախատեսում 50 տարով ճորտերին աշխատեցնել պատրաստվող հեղինակները, մեկ ճորտի համար վճարվող անհայտ գինը քանի՞ տարում պետք է դուրս գար «Ընկերության»

63 Пиксанов Н.К., Грибоедов - Исследования и характеристики, ևշվ. աշխ., էջ 146: 274

64 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1951, ևշվ. աշխ., էջ 544:

հաշվեկշռից, որքան էր կազմելու մեկ ճորտի բերած եկամուտն ըստ կանխատեսման (ոխակային գործոնը), աշխատեցվելու՝ էին արդյոք «նախկին» ճորտերի զավակները և ի՞նչ կարգավիճակով, ո՞վ էր պաշտպանելու «Ընկերությունում» աշխատող «նախկին» ճորտերի իրավունքները, ի՞նչ պատիժներ կամ տուգանքներ էին նախատեսվում աշխատել չցանկացող, փախուստի դիմած կամ ըմբոստ ճորտերի համար, և դատական ի՞նչ ատյաններ էին քննելու նրանց գործերը, ինչպիսի՞ փոխհատուցումներ կամ նպաստներ էին նախատեսում Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին աշխատավորների հիվանդության, հաշմանդամության, անաշխատունակության, նույնիսկ մահվան դեպքերում, ի՞նչ ճակատագրի էին արժանանալու «Ընկերության» գնած «նախկին» ճորտերը «Ընկերության» հնարավոր սնանկացման կամ լուծարման դեպքում, ինչպիսի՞ տույժեր էին նախատեսվում «Ընկերության» համար՝ պետության հանդեպ պարտավորությունները չկատարելու դեպքում, տնտեսական ի՞նչ պատժամիջոցներ էին նախատեսվում «Ընկերության» և պետության կամ այլ սուբյեկտների միջև ծագած հանկարծահաս ու չնախատեսված (ֆորսմաժորային) իրավիճակներում և այլն:

Այս թեմային առնչվող վերջին հարցը վերաբերում է «Նախագծի» մերժման պատճառներին: Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու ներկայացրած «Նախագծի» մերժման հիմնական պատճառներից մեկը խորհրդային շրջանում համարվել է Ի. Պասկևիչի կողմից դրանում իր իշխանությանը սպառնացող վտանգ տեսնելը: Դրա համար հիմք է հանդիսացել Ն. Մուրավյով-Կարսկու կարծիքը, որտեղ ասված է. «... Պասկևիչի իշխանությունը համարյա կատարելապես ոչնչացնող այս նախագիծը չէր կարող դուր գալ նրան, և ժամանակի ընթացքում այն ոչ մեկի կողմից ուշադրության չարժանացավ...»⁶⁵:

Վերոհիշյալ բացատրության շուրջ կրկնելով Ն. Մուրավյով-Կարսկուն՝ հետագոտող Օ. Պոպովան գրում է. ««Ռուսական-անդրկովկասյան ընկերության նախագծի» մեծությունն ու թափը սարսափեցրին Պասկևիչին, ով դրանում տեսավ իր իշխանության նվազումը, քանի որ Գրիբոյեդովն ինքն էր ցանկանում «Ընկերության» գլուխ կանգնել՝ հավանաբար վախենալով գուտ պետական ձեռքերում իր նորարար մտքի աղավաղումից...»⁶⁶: Այս դեպքում էլ փորձ չի արվել պատասխանել այն հարցին, թե Ի. Պասկևիչի՝ Կով-

կասից հեռանալուց հետո նրան փոխարինած մյուս կառավարչապետներն ինչու՞ չեն փորձել կյանքի կոչել այդքան «փայլուն «Նախագիծը»: Ավելին, ռուսական իշխանությունները մերժել են իրականացնել նույնիսկ այնպիսի ծրագրեր, որոնք, հոգուտ իշխանությունների, էականորեն տարբերվել են վերոհիշյալ «Նախագծից»:

Դրանցից մեկն «Ազատ տնտեսական ընկերության» և Պետական խորհրդի քաղաքացիական ու հոգևոր գործերի գերատեսչության նախագահ կոմս Ն.Ս. Մորդվինովի «Занеску для памяти и соображения» («Գրառումներ հիշողության և դատողության համար» - Վ.Ս.) վերնագրով ուրվագիծ-պլանն է: Ն. Մորդվինովը 20-30 տարում Այսրկովկասի տնտեսական զարգացման համար նպատակադրվել էր միավորել տնտեսական ու ձեռնարկատիրական շահերը: Նա հաշվի էր առել Ա. Գրիբոյեդովի և Պ. Զավիլեյսկու «Նախագծի» ճակատագրի դասերը: Ն. Մորդվինովի նախագիծն ուներ էական հետևյալ տարբերությունները. 1) պահպանում էր տարածաշրջանի նկատմամբ կառավարության անմիջական իրավասությունը, 2) նախատեսում էր տարածաշրջանի ներառումը կայսրության տնտեսական օրգանիզմի մեջ, 3) չէր թույլատրվում առանձին ընկերությունների մենաշնորհային (մոնոպոլ) գործունեությունը: Ն. Մորդվինովի ծրագիրն արտահայտում էր Այսրկովկասի յուրացման հարցում ռուսական՝ չափավոր ձեռնարկատիրական շրջանակների տեսակետը, սակայն նրա մտքերը գործնական կիրառում չունեցան⁶⁷:

Այսրկովկասում ծրագրավորվող քաղաքականության մաս կարելի է համարել Հայկական մարզային վարչությանն ուղղված մայրը Մեդոքսի զեկուցագիրը: Ըստ Մեդոքսի՝ Երևանի սարդարի օրոք բնակչությունը բաժանված է եղել «լիարժեք» և «ոչ լիարժեք» տնտեսությունների ու ծանր կախվածություն է ունեցել նրանից: Նա կառավարությանն առաջարկում էր վերացնել «լիարժեք – ոչ լիարժեք տնտեսություններ» տարբերակումը, դրանք հաշվել որպես միանման տնտեսություններ, և հարկերը գանձել ամբողջ համայնքից՝ ըստ տարեկան կտրվածքի ու ծխերի քանակի: Նա առաջարկում էր երեք տարին մեկ անցկացնել համընդգրկուն հաշվառում, և հարկերը սահմանել այնպես, որ ոմանց համար դրանք խիստ ծանր չլինեին: Առաջարկվում էր հաշտարար ժողովներ հրավիրել քեղ-խուղաների, ծխական քահանաների կամ մոլլաների ու մահալի կա-

65 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 136:

66 Попова О.И., Грибоедов - дипломат, նշվ. աշխ., էջ 121:
276

67 Туян В.Г., Проекты экономического освоения Закавказья (1826-1834), նշվ. հոդված, էջ 22-23:

ռավարչի մասնակցությամբ և որոշել, թե ով ինչքան հարկ էր վճարելու համայնքին, իսկ ունևորներն ինչքան պետք է վճարեին աղքատների փոխարեն: Մեղոքսը գտնում էր, որ հարկերը ծանրացուցիչ չպետք է լինեին գյուղացիների համար, որ նրանք չսնանկանային և օգնություն ստանալու համար չդիմեին կառավարությանը⁶⁸:

«Նախագծի» մերժման պատճառներից նշվել են նաև պետության գաղութացման ծրագրին հակասող, պետության դերի նսեմացմանը նպաստող⁶⁹, ինչպես նաև հակաանգլիական ուղղվածություն ունեցող⁷⁰ այն արտոնությունները, որոնք նախատեսված են եղել ծրագրով: Ուշագրավ է նաև Ի. Պասկևիչի կենսագիր իշխան Շչերբատովի բնորոշումը, ըստ որի՝ «Նախագիծը» ճանաչվել է «հասարակության համար անօգուտ»⁷¹: **Ա. Մալչինսկին «Նախագծի» մերժման պատճառ է համարել նախատեսվող արտոնությունների շնորհիվ «Ընկերության» մենաշնորհային դիրքի գրավումը, ինչով այն դառնալու էր «պետություն» պետության մեջ»⁷²:**

Այն, որ ռուսական իշխանությունները ոչ միայն դեմ էին Այսրկովկասում մենաշնորհ ունեցող ընկերություններ հիմնելուն, այլ նույնիսկ վերանայում էին գոյություն ունեցող որոշ արտոնություններ, վկայում է Հայկական մարզային վարչությանն ուղղված կոմս Պասկեվիչ-Էրիվանսկու հրամանագիրը, որում հանձնարարվում էր Երևանի նման Նախիջևանում և Օրդուբադում ևս ժամկետները լրանալուն պես ոչնչացնել առանձին անձանց կողմից կապալային իրավունքով իրականացվող և քիչ եկամուտ ապահովող հողվածները, որոնք դժվարին իրավիճակի մեջ էին դրել ժողովրդին⁷³:

Գեներալ Ի. Պասկևիչը հրամայել է վերնոշյալի մասին հայտարարել ամենուրեք, որ բնակիչներն իմանան կառավարության հոգատարության մասին: **Պարզ է, որ Ի. Պասկևիչի նպատակն ավելի շատ պետական գանձարանը լցնելու և ոչ թե հասարակ ժողովրդի վիճակի բա-**

68 ՀԱԱ, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուց. 1, գործ 9, թերթ 49-56 (1828թ. №164 ռուսերեն զեկուցագիրը):

69 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 344:

70 Шостакович С.В., Дипломатическая деятельность А. С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 196, տես նաև՝ Пашуто В.Т., Дипломатическая деятельность А. С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 137:

71 Щербатов А.П., Генерал-фельдмаршал князь Паскевич..., նշվ. աշխ., հ. III, էջ 333, տես նաև՝ Тунян В.Г., А.С. Грибоедов и Армения, նշվ. աշխ., էջ 55:

72 Мальшинский А.П., Незданная записка..., նշվ. աշխ., էջ 14:

73 ՀԱԱ, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուց. 1, գործ 9, թերթ 121 (1829թ. հունվարի 15-ի №183 հրամանագիրը ռուսերեն):

բելավումն էր, սակայն հանուն արդարության պետք է նշել, որ կապալային հողվածների և մենաշնորհների վերացումը կարող էր նպաստել նաև այդ ոլորտներում տնտեսական առաջընթացին:

Հետխորհրդային շրջանում պաշտոնական տեսակետին հակադարձելու ուշագրավ փորձ է դարձյալ Վ. Թունյանի այն միտքը, թե. «... Այնպիսի մի երկրամասում, որը դեռ երեսյայի պես թույլ է և չունի սեփական ուժ, ամեն տեսակի արտոնյալ ընկերություն կամաց-կամաց իրեն կենթարկի արդյունաբերության բոլոր ոլորտները, ժողովրդին կկանխի (կխոչընդոտի – Վ.Ս.) սպառման բոլոր դեպքերում և նրան կստիպի ամենացածր գներով միայն իրեն վաճառել նրա արտադրանքը: Այսպիսի անբարենպաստ գործողություններով... ժողովուրդը կմնա իր նախկին տգիտության մեջ...»⁷⁴:

Հետագոտողի այս և մեր կողմից ներկայացված մյուս տեսակետների⁷⁵ միջև, ինչպես տեսնում ենք, կան որոշակի անորոշություններ. այդպես էլ հստակորեն չի բացահայտվում նրա վերաբերմունքը «Նախագծի» վերաբերյալ: Դրանցում բացակայում են բուն «Նախագծի» իրավաբանական ու տնտեսագիտական վերլուծությունները և ճորտատիրության հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերը:

Ամփոփելով ուսումնասիրության այս ենթագլուխը՝ եզրակացնենք հետևյալը.

1. «Ռուսական-անդրկովկասյան ընկերության» կանոնադրության նախագիծը ստեղծվել է Թիֆլիսում: «Նախագիծ»-ը՝ որպես ծրագիր, տրևտեսագիտական տեսքի է բերվել Պ. Զավիլեյսկու ջանքերով, ով մասնագիտորեն հասու է եղել նման խնդիրներ լուծել:

2. Ա. Գրիբոյեդովին՝ որպես ճորտատիրական կարգերի հակառակորդ, դրանց դեմ ակտիվորեն պայքարող գործիչ կամ ճորտատիրության կողմնակից ներկայացնող հեղինակների տեսակետները տարել են որոշ ծայրահեղությունների. միակողմանի է առանց լուրջ ապացույցների հիմք ընդունել կամ ժխտել Ա. Գրիբոյեդովի հասարակական-քաղաքական պասսիվությունն ու հռետեսությունը և հնարավոր համարել ճորտատիրական կարգերի հանդեպ նրա կողմնակից կամ հակառակորդ լինելը:

3. Ելնելով խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական պարտադրանքից՝ հետագոտողները ստիպված են եղել Ա. Գրիբոյե-

74 Тунян В.Г., А.С. Грибоедов и Армения, նշվ. աշխ., էջ 55:

75 Տե՛ս Կ. Գրիբոյեդով: новое в известном, նշվ. հոդված, էջ 104-105, 130:

դովին առանձնացնել Ռուսաստանի առաջադեմ այն մարդկանց գաղափարակիցն ու համախոհը լինելուց, ովքեր չեն ընդունել դեկաբրիստների զինվորական հեղափոխության մարտավարությունը և գրողին ներկայացրել են որպես հեղափոխական շարժման գաղափարախոս: Յայսօր հայտնի չէ, թե ինչպես է նա պատկերացրել ռուս գյուղացուն ճորտությունից ազատագրելու ճանապարհը, քանի որ նրա կողմից այդ մասին ոչ մի տեղ կոնկրետ չի նշվել:

4. Ելնելով հայտնի վերլուծություններից՝ հարկ է «Նախագծի» վերաբերյալ Մ. Ժուկովսկու կողմից միջնորդավորած կերպով ներկայացված Ի. Բուրցովի արտահայտած կարծիքը համարել բացասական:

5. Հետազոտողները «Նախագծին» փորձել են տալ միայն քաղաքական գնահատական՝ անտեսելով տնտեսագիտականը: «Նախագիծն» առաջին հերթին հարկ էր ենթարկել տնտեսագիտական և իրավաբանական առավել խոր վերլուծության, ինչը ժամանակին մասամբ փորձել են կատարել «Նախագծի» առաջին քննադատներ Ի. Բուրցովն ու Մ. Ժուկովսկին: Երկու քննադատների կարծիքներն էլ եղել են բացասական: Այն, որ Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին իրենց «Նախագիծ»-ը կազմելիս առաջնորդվել են դեկաբրիստական գաղափարներով, նույնպես չի ապացուցվում փաստերով: Պահպանողական Մ. Ժուկովսկին ծանոթ է եղել դեկաբրիստ Ի. Բուրցովի կարծիքի ողջ տեքստին և կրճատադատել ճորտատիրության հակառակորդ Ի. Բուրցովի «դրական» կարծիքը ևս:

6. Ի. Բուրցովի կարծիքի վերաբերյալ Ա. Մալչինսկու հրապարակած փաստաթղթերի մեկնաբանության հարցերում փորձ է արվել փաստերը դիտարկել ոչ թե ամբողջության մեջ, այլ դրանք բաժանել առաջնայինի և երկրորդայինի՝ հաշվի չառնելով, որ Ա. Մալչինսկին չէր կարող իմանալ, որ գրող Ա. Գրիբոյեդովի անձն ապագայում միտումնավոր քաղաքականացվելու է: Պնդում է արվել, թե Ա. Մալչինսկին, միտումնավոր նսեմացնելով Ա. Գրիբոյեդովին, վերջինիս հակադրել է ամուր պետականության կողմնակից Ի. Պասկևիչի «դրական» կերպարին⁷⁶, ինչով ակամայից ստացվել է, որ Ա. Գրիբոյեդովը կողմնակից չի եղել ամուր պետականության:

7. Ա. Մալչինսկին կողմ է արտահայտվել պետական շահերի դիրքերից հանդես եկող Ի. Պասկևիչի և Բուրցով-Ժուկովսկու քննադատույթ-

յուններին ու գտել, որ «Նախագիծ» հակասում էր այդ շահերին: Այն, որ Ա. Մալչինսկին իր հրապարակման մեջ, քննադատելով Ա. Գրիբոյեդովի «Նախագիծ»-ը և այն, որ Ի. Բուրցովին ներկայացնելով Մ. Ժուկովսկու փոխարեն, իբր փորձել է կասկածի տակ դնել «ձախ» ճամբարի քաղաքական ծրագրերի «առաջադիմականությունը»⁷⁷ համոզիչ կղառնար այն դեպքում, եթե պարզվեր, որ Ի. Բուրցովը «Նախագծի» մասին դրական էր արտահայտվել:

8. Այսրկովկասը ծաղկուն երկրամաս դարձնելու համար կարևորը ոչ թե նպատակն է, այլ «Նախագիծ»-ը կազմողների կողմից դրա իրականացման եղանակը: Այդպիսի «Ընկերության» գործունեությունը խոչընդոտելու էր ինչպես երկրամասի ծաղկմանը, այնպես էլ Ռուսաստանի ու նվաճված լեռնական և այսրկովկասյան ժողովուրդների մշակութային և տնտեսական կապերին ու մերձեցմանը:

9. XIX դ. առաջին երեսնամյակում ֆեոդալաճորտատիրական ռուսական իրականության մեջ ապրած Ա. Գրիբոյեդովն ու Պ. Զավիլեյսկին չէին կարող բառիս լայն իմաստով պատկերացում ունենալ ապրանքադրամական (կապիտալիստական) հասարակարգի, շուկայական հարաբերությունների և բուրժուազիայի՝ որպես դասակարգի, մասին, որ կարողանային միապետության (ցարիզմի) և բուրժուազիայի միջև փոխգիշտմային «Նախագիծ»⁷⁸ կազմել: Փոխգիշտմանի և անցումային փուլ նախատեսող ծրագրերի մասին կարելի կլիներ խոսել, եթե Ա. Գրիբոյեդովն իր առջև քաղաքական և տնտեսագիտական լուրջ նպատակներ դրած լիներ և ակտիվորեն պայքարած լիներ դրանց իրագործման համար: Ա Գրիբոյեդովը ոչ քաղաքական, ոչ էլ տնտեսական հետաքրքրությունների հարցերում արմատական ճանապարհով արմատական բարեփոխումների ձգտողներից չի եղել:

10. «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ» հակասականությունը նրանում էր, որ հակառակ իշխանությունների ծրագրերի՝ Այսրկովկասի տնտեսությունը «զարգացնելու» նրպատակին հասնելու համար ընտրել էին բացառիկ արտոնությունների ճանապարհը, ինչը տարածաշրջանում հանգեցնելու էր մենաշնորհային դիրքի և չէր կարող դրական ազդեցություն ունենալ, քանի որ մենաշնորհները վերաբերում էին ոչ թե առանձին վերցրած մեկ ճյուղի, այլ

77 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 328-332:

78 Лебедев А.А., Прибоедов. Факты и гипотезы, նշվ. աշխ., էջ 268-274:

76 Маркова О.П., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 332:
280

ընդգրկելու էին Այսրկովկասի ողջ տնտեսական համակարգը, և դրա վերահսկողությունը դուրս էր մնալու պետության իրավասությունից:

11. Ակնհայտ է, որ «Նախագծի» կանոնադրության՝ մեզ հասած մեկ-նաբանությունների ոչ ամբողջական տարբերակներում և դրա «Ներածությունում» ու կից «Գրությունում» անտեսված են եղել բուրժուական տնտեսությանը բնորոշ այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք էին մրցակցության հավասար պայմանները, ազատ շուկայական հարաբերությունները, ազատ գնագոյացումը և այլն:

Այսպիսով՝

1. XIX դարի առաջին երեսնամյակին Այսրկովկասում ռուսական կայսրության վարած տնտեսական քաղաքականությունը նրա գաղութային, նվաճողական քաղաքականության շարունակությունն էր: Դա է վկայում իշխանությունների կողմից տնտեսական նույնիսկ չափավոր նպատակներ հետապնդող վերոհիշյալ նախագծերի մերժումը, քանզի դրանք չեն համապատասխանել Այսրկովկասի գաղութացման, երկրամասը որպես հումքի կցորդ, էժան աշխատուժի աղբյուր և վաճառահանման շուկա դարձնելու մեծապետական վերջնական նպատակներին:

2. «Նախագիծ»-ը ճիշտ կլինի համարել ոչ թե միայն Ա. Գրիբոյեդովի և Պ. Ջավիլեյսկու հեղինակած աշխատանք, այլ հարկ է այն դիտարկել որպես Ռուսական կայսրության գաղութային շահերը սպասարկող Ի. Պասկևիչի գաղափարներով, հանձնարարականներով ու ցուցումներով Ա. Գրիբոյեդովի նախաձեռնած, վերջինիս կողմից այս գործում մասնավոր նախաձեռնությամբ ներգրավված Պ. Ջավիլեյսկու և նրա հիմնարկաբաժնի ու այլ մասնագետների բազմակողմանի ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերված նյութերով գրագետ մշակված, խմբագրված ու վերջնական տեսքի բերված «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»:

3. Պետության կողմից հավանության արժանանալու դեպքում «Ընկերությունը» դառնալու էր երկրամասը զարգացնելու գլխավոր խոչընդոտներից մեկը: Հայցվող արտոնություններն Այսրկովկասում երկրորդական էին դարձնելու պետության դերը և խեղդելու էին ազատ ձեռնարկատիրությունը:

3. «Նախագծի» մերժման պատճառները ոչ միայն դրա ուտոպիական բնույթի կամ «Նախագծում» իր իշխանության թուլացման վտան-

գը տեսած Ի. Պասկևիչի ու «Նախագծի» հակաճորտատիրական էության գործոններն էին, այլ նաև տնտեսագիտական և իրավաբանական առումով դրա թերի լինելու և Ռուսաստանի գաղութային քաղաքականությանը հակասելու հանգամանքները:

ԳԼՈՒԽ Գ

Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը

1. Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի հիմնախնդիրները պատմագրության գնահատմամբ

Այսրկովկասում և Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանը վերաբերող պատմագիտական ուսումնասիրությունների ընթացքը ևս բաժանվում է մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային փուլերի:

1830-80-ական թթ. հրապարակվում են Այսրկովկասում և Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի գործունեության վերաբերյալ աղբյուրներ, որոնցից էին վերջինիս ձեռքով գրած նամակներն ու փաստաթղթերը, ժամանակակիցների հուշերը և պետական-պաշտոնական այլ փաստաթղթեր: Ա. Գրիբոյեդովի՝ ղեսպան նշանակվելու և ղեսպանակազմի ձևավորման վերաբերյալ հրամանագիրն առաջին անգամ հրապարակվում է **1830թ.**¹:

Թեհրանում Ա. Գրիբոյեդովի գլխավորած ղեսպանական առաքելության տապալման և նրա վախճանի վերաբերյալ տեղեկություններով առաջին հրապարակումը պատմագրության մեջ հայտնի է **“Релляция”** (**«Ռ-ազնագեկույց» - Վ.Ս.) անվամբ** և ֆրանսիական մամուլում հրապարակվել է **1830թ.**: Այն ղեսպանակազմի ուղեկցորդի (մեհմանդարի) պարսիկ քարտուղարի պատմածի հիման վրա վառ ֆրանսերենով հրապարակել է ոմն անգլիացի **“Nouvelles Annales des Voyages et des Sciences Geographiques”** (**«Ճանապարհորդությունների**

¹ ПСЗРИ, Собрание второе, с 12 декабря 1825 года по декабрь 1881 года, Санктпетербургъ, 1830, Томъ III (1828), №24, 304., փաստ. 1994, էջ 505, 1994-ի հավելված, էջ 178:

միջնորդավորված կերպով ներկայացրած Ս. Մորբուսկու պատմածների միջև:

Ի. Մալցովի զեկուցագրերից և «Ռազմագեկույց»-ից մեջբերելով հատվածներ և համեմատելով դրանք՝ **Պ. Եֆրեմովը** ևս քննադատում է Ն. Բերգի խեղաթյուրված տեղեկություններով հրապարակումը¹⁰ և միակողմանիորեն **կարևորում հատկապես «Ռազմագեկույց»-ի տեղեկությունները:** Պ. Եֆրեմովի հրապարակումն արժեքավոր է նրանով, որ համեմատության ընթացքում նա **գրեթե ամբողջությամբ մեջ է բերում Ի. Մալցովի զեկուցագրերն ու «Ռազմագեկույց»-ի տեքստը:**

Ա. Գրիբոյեդովի ողբերգական մահվանը վերաբերող հայկական առաջին աղբյուրը **1872թ. հրապարակում է Այ. Երիցյանը**¹¹: Վերջինս **Գ. Ներմազանյանի** փաստաթղթերի հարուստ հավաքածուից ներկայացնում է «**Ներսես Աշտարակեցուն Թեհրանից ուղղված անանուն նամակ**»-ը, որում տեղեկություններ կան **ներքինի Միրզա Աղա-Յաղուբի (Միրզա-Յաղուբ Մարգարյան), Թեհրանի մուջթեհիդ (գլխավոր մուլլա) Հաջի-Միրզա Մեսիհի՝ անհավատներին կոտորելու սադրիչ կոչերի, շահի հարեմի նախկին կառավարիչ Մանուշար խանի (Ենիկոյուպյան), նրա զարմիկի և դեսպանակազմի կոտորվելու մասին:**

1873թ. հրապարակվում է Կարազիադինի բանակցությունների մասին 1827թ. հուլիսի 30-ին Կարաբաբայի ճամբարից գեներալ Ի. Պասկևիչին ուղղված **Ա. Գրիբոյեդովի զեկուցագիրը**¹², որը տպագրվում է **Ն.Վ. Կուկոլնիկի** արխիվից **Ի.Ա. Պուգիրսկու և Օ.Վ. Բուլզարինի** որդիների հայտնաբերած և **Տ.Ա. Սոսնովսկու** միջնորդությամբ ձեռք բերված տարբերակների հիման վրա:

Պարսկաստանում և Կովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեության վերաբերյալ խիստ արժեքավոր հրապարակումներով հանդես է գալիս **Ադուլֆ Բերթեն**¹³, որը հանդիսանում է նաև **1866 թվականից** հրատարակվող Կովկասի կառավարչության փաստաթղթերի («Акты») **հայտնի բազմահատոր ժողովածուի խմբագիրը:** Այդ ժողովածուի մի-

ջոցով Ադ. Բերթեն շրջանառության մեջ է դնում նաև Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն ու վախճանին վերաբերող շատ փաստաթղթեր¹⁴: **Ա. Գրիբոյեդովի պահվածքն արդարացնող նրա կողմնակալ տեսակետները հետագայում լայն կիրառում են գտնում խորհրդային շրջանի հրապարակումներում, որոնցում ևս փորձ է արվում արդարացնել Ա. Գրիբոյեդովին և գերազնահատել նրա դիվանագիտական գործունեությունը:**

Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության վերաբերյալ աղբյուրների հրապարակումը շարունակվում է **1880-ական թվականներից մինչև XX դարի երկրորդ տասնամյակ:** Դրանցից կարևոր են գեներալ **Ն. Մուրավյով-Կարսկու հուշերը**¹⁵, որոնցում քննադատվում են Ա. Գրիբոյեդովի հակասական բնավորության դրսևորումները, **Պարսկաստանում ռուսական հավատարմատար Ս. Մազարովիչի հասցեին Ա. Գրիբոյեդովի ներկայացրած հաճախ ոչ պատշաճ դատողությունները**, սակայն, այդուհանդերձ, որոշ դեպքերում դրական չարտահայտվելով վերջինիս մասին՝ **Ն. Մուրավյով-Կարսկին գտնում է, որ Ա. Գրիբոյեդովը Պարսկաստանում որպես դեսպան եղել է իր դիրքերում ու որ մեն-միայն իր ներկայությամբ նա այնտեղ փոխարինել է 20 հազարանոց ռուսական բանակին: Ըստ գեներալի՝ Ռուսաստանում չէր գտնվի տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ավելի արժանի մեկը**¹⁶:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և մահվան հանգամանքներին է անդրադառնում ռազմական պատմաբան **Վ. Պոտտոն**¹⁷, որը բարձր է գնահատում նրա դիվանագիտական որակները՝ սկսած 1818 թվականից՝ նրան համարելով եռանդուն, համառ, քաջ անձնավորություն: **Ռուսական դեսպանական առաքելության ձախողման գործում Վ. Պոտտոն երրորդական է համարում դեսպանակազմի հայ և վրացի անդամների ամբարտավան պահվածքն ու գերի կանանց**

14 АКАК, лзվ. ժողովածու, 1875, հ. VI, մաս II, փաստ. № 403, էջ 219, № 465, էջ 253, № 471, էջ 255-256, № 492, էջ 267-268, № 498, էջ 270, 1878, հ. VII, փաստ. № 501, էջ 539, № 516, էջ 553-560, № 533, էջ 579, № 536, էջ 582, № 551, էջ 594-595, № 566, էջ 607, № 591, էջ 622-624, № 617, էջ 642, № 618, էջ 642-644, № 619, էջ 644-645, № 621, էջ 645-646, № 623, էջ 647-649, № 633, էջ 657-658, № 652, էջ 672-673, № 653, էջ 673, № 654, էջ 675, № 661, էջ 679-681, № 672, էջ 688-689, № 673, էջ 689-690, № 677, էջ 692, № 688, էջ 698-699, № 694, էջ 702, № 698, էջ 704-706, № 700, էջ 707-708:

15 "Записки Н.Н. Муравьева (Тифлиси, октябрь 1818)", (Баку - Тифлиси), "Русский архив", Изд-ий Петромъ Бартевьевымъ, Москва, 1886, кн. третья, с. 331-0335, նույնի "Записки Николая Николаевича Муравьева-Карскаго (декабрь 1821 - май 1822)", (Баку - Тифлиси), նույն տեղում՝ 1888, №5, էջ 97-0122, 313-0352, նույնի "Записки Н.Н. Муравьева-Карскаго. Взятие Тавриза, 1827", նույն տեղում՝ 1891, №10, էջ 177-228:

16 Грибоедов. Его жизнь и гибель..., лзվ. աշխ., էջ 138-139 ("Из записок", 1828):

17 Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, Томъ III, "Персидская война 1826-1828гг.", Выпуск IV, Изд-е второе, Издалъ В. Березовский, С.Петербургъ, 1888 ("Посольство и смерть Грибоедова"), гл. XXXV, с. 603-632.

10 Ефремов П.А., "О смерти А.С. Грибоедова", "Русский архив", Тип-я Грачевъ и К., 1872, с. 1491-1538.

11 Ерицов А.Д., "О причинахъ убийства Грибоедова", "Кавказская старина", Тип-я главнаго управления Наместника Кавказскаго, Тифлиси, 1872, Годъ первый, ноябрь, № 1, с. 28.

12 "Персия и персияне", Донесение А.С. Грибоедова, 1827, "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб, 1873, т. 7, кн. 1-6, с. 799-814.

13 Берже Ад.П., "Смерть А.С. Грибоедова", "Русская старина", Тип-я С.В. Балашова, СПб, 1872, №8, էջ 163-207, նույնի "Александръ Сергеевичъ Грибоедовъ въ Персїи и на Кавказе (1818-1828)", նույն տեղում՝ հ. XI, էջ 276-302, նույնի "Александръ Сергеевичъ Грибоедовъ. Деятельность его какъ дипломата, 1827-1829", նույն տեղում՝ 1874, հ. XI, էջ 517-534, 746-765, նույնի "Хосров Мирза, 1813-1875", նույն տեղում՝ 1879, էջ 333-352:

խնդիրը¹⁸: Դրանք, ըստ հեղինակի, պարսկական կողմը շրջանառության մեջ է դրել ողբերգական դեպքերից հետո՝ նշելով, որ **պատճառներից «կենտրոնականը» Միրզա-Յաղուբին պահանջելու խնդիրն է եղել: Վ. Պոտտոն հավանական է համարում անգլիացիների անդրկուլիսյան խարդավանքները¹⁹**, որոնք նպաստել են հակառուսական կողմնորոշման տեր պարսիկ պետական և հոգևոր գործիչների սաղորիչ ձեռնարկումներին: Ըստ նրա՝ հավանական է, որ 1829թ. հունվարի 30-ի **գրված խավոր հրահրողը եղել է Ալլահ-Յար խանը, իսկ շահը ցանկացել է ամբոխի միջոցով սպանել տալ միայն հարեմի նախկին գանձապետ Միրզա-Յաղուբին, սակայն դեպքերի ընթացքը դուրս է եկել նրա հսկողությունից:**

Կովկասում Ա. Գրիբոյեդովի գործունեության մասին տեղեկություններ կան նաև Ի. Պասկևիչի կենսագիր **Իշխան Շչերբատովի** բազմահատորյակում²⁰: Իր աշխատության մեջ **նա փորձ է անում ազատամիտ պոետ Ա. Գրիբոյեդովին հակադրել ամուր պետականության կողմնակից Ի. Պասկևիչին՝ նախապատվությունը տալով վերջինին:**

Ի. Մալցովի որոշ զեկուցագրեր է հրապարակում **Ա. Մալչինսկին²¹**: Նա կարծիք է հայտնում, որ դրանք կազմելիս **Ի. Մալցովի վրա ազդել է Ի. Պասկևիչը, որպեսզի թույլ չտա ռուս-պարսկական հարաբերությունների սրում:** Քննադատելով Պարսկաստանի շահի և վեզիրների ներկայությամբ Ի. Մալցովի՝ զգուշության նկատառումներով արտաբերած հաճոյախոսությունները և նրանց վարկածների հետ համերաշխումը՝ Ա. Մալչինսկին գրում է. «Անհավանական ոչինչ չկա նաև նրանում, որ շահի ներկայությամբ «խելամիտ զգուշավորության սառը շիթը» Մալցովին բշեց-տարավ (րնդհուպ – Վ.Ս.) մինչև Ա. Գրիբոյեդովին առավել եռանդով մեղադրելը»²²:

1829թ. թեհրանյան իրադարձությունների վերաբերյալ կարևոր տեղ են զբաղեցնում **քիչ ուշադրության արժանացած կամ շրջանցված հայկական աղբյուրները, մինչդեռ դրանցում տեղ գտած տեղեկուր-**

յունները մեր կարծիքով ավելի անաչառ են, քանի որ հայերը, ի տարբերություն պարսկական և ռուսական կողմերի, խնդիր չեն ունեցել արդարացնելու կողմերից որևէ մեկին կամ այլ մեղավորներ փնտրել:

Ա. Գրիբոյեդովի դեսպանակազմի վախճանի շուրջ հայկական կարևոր աղբյուրներ է հրապարակում **Գ. Շերմազանյանը²³, ում տեղեկությունները, ի տարբերություն կողմնակալ պարսկական և ռուսական աղբյուրների, հավաքված են անմիջական և այդ ժամանակ դեռ կենդանի ականատես հայերից ու այլազգիներից, և առավել անաչառ են ներկայացնում կատարված իրադարձությունները, Ա. Գրիբոյեդովի և առաքելության առանձին անդամների պահվածքը, ինչպես նաև թեհրանյան խաժամովի գրգռվելու իրական պատճառները: Գ. Շերմազանյանը ևս հակված չէ քաղաքական դրդապատճառներ տեսնել կատարվածում:** Գ. Շերմազանյանի վերոհիշյալ հրապարակումը հետագայում **ռուսերենով վերահրատարակում է Մ. Ալավերդյանը²⁴:**

1894թ. հրապարակված իր աշխատության մեջ **Ալ. Երիցյանը** մեկ անգամ ևս անդրադառնում է Ա. Գրիբոյեդովին՝ հայերեն հրապարակելով **պարսկահայերի ներգաղթի գործում զնդապետ Ե. Լազարյանի գործունեության վերաբերյալ Ի. Պասկևիչին ուղղված Ա. Գրիբոյեդովի զեկուցագիրը²⁵:**

Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ **1895թ.** հրապարակվում են նրա դեսպանակազմի փրկված անձանցից **հայազգի պարսից սուրհանդակ (ղուլամ) Համբարձումի (Իբրահիմ բեգի) հուշերը²⁶, որոնք պատմագիտության մեջ լքջորեն անտեսվել են: Հավանաբար դա պայմանավորված է եղել նրանով, որ հրապարակվելով բավականին ուշ և ոչ մեծ ծավալով՝ իրադարձությունների շատ հարցեր դրանցում մանրամասնված չեն կամ բացակայում են, իսկ եղածներն էլ որոշակիորեն հակասության մեջ են մտնում այլ ականատեսների հայտնի վկայությունների հետ: Մի կողմից թվարկած հանգամանքները կասկածի տակ են դրել Համբարձումի վկայության հավաստիությունը, մյուս կողմից չեն մեկնաբանվել հենց սկզբից էլ պարսկական ծառայության**

18 Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, Томъ III, «Персидская война 1826-1828гг.», Выпуск IV, Изд-е второе, Издаль В. Березовский, С.Петербургъ, 1888 («Посольство и смерть Грибоедова»), гл. XXXV, էջ 618:

19 Նույն տեղում՝ էջ 619:

20 Щербатов А.П., Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность., նշվ. աշխ., հ. III (Ա. Գրիբոյեդովին վերաբերող էջերը տե՛ս սույն հետազոտության համապատասխան ծանոթություններում):

21 Мальшинский А., «Подлинное дело о смерти Грибоедова», «Русский вестник», Тип-я «Общественная польза», С.Петербургъ, 1890, июнь, т. 208, с. 160-175, июль, т. 209, с. 211-233.

22 Նույն տեղում՝ էջ 173-175:

290

23 Շերմազանյան Գալուստ, Կիլիկի ազգային պատմության համար, Երևելի հայկազույնք ի Պարսկաստան, Ռուստով (Դոնի վերայ), 1890 = ՌՅԼԹ, գլ. Թ, էջ 82-103 (Գ. Շերմազանյանի տեղեկությունների մասին մանրամասն տես սույն հետազոտության Գլ. Գ-ի 4-րդ երթարժում, էջ 375-376):

24 Алавердянц М.Я., Кончина А.С. Грибоедова (по армянским источникамъ), Тип-я «Товарищества Общественная польза», С.Петербургъ, 1901, 27 с.

25 Երիցյան Ալ., Ամենայն հայոց կարողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Մաս Ա., Տպարան Ա. Շարաճեի, Թիֆլիս, 1894, էջ 392-393:

26 Հ.Ա., «Գրիբոյեդովի սպանությունը (նրա 100-ամեայ տարեդարձի առթիվ)», «Մշակ», Թիֆլիս, 1895, №2 հունվարի 5, №3 հունվարի 6 (Тип-я Главнонач. Гражд. частью на Кавказе):

մեջ եղած և ռուսական դեսպանատանը կցված Համբարձումին ռուսական իշխանությունների կողմից ցմահ ուշադրության կենտրոնում պահելու և թոշակավորելու դրդապատճառները²⁷:

1910թ. Վ. Պոտտոն հրապարակում է Ա. Գրիբոյեդովի՝ 1827-1829թթ. դիվանագիտական գործունեությանն առնչվող հույժ կարևոր փաստաթղթերը²⁸:

1914թ. Բարզեն վարդապետ Մանուել վարդապետ Գյումուշխանեցու անտիպ հիշատակարանից հրապարակում է Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ հատվածը²⁹, որում ևս խոսք չի գնում կատարվածում պետական մակարդակով քաղաքական դրդապատճառների առկայության մասին:

1920-ական թվականներից սկսվում է Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության արժևորման խորհրդային փուլը: Շարունակվում են արխիվների և սկզբնաղբյուրների հրապարակումները, որոնք դառնում են առավել համակարգված և լույս են տեսնում առանձին ժողովածուներով: Դրանցից են *Չին. Գավիդովի*³⁰ և *Ն. Պիկսանովի*³¹ խմբագրությամբ կազմված վերոհիշյալ աշխատանքները: Չնայած խորհրդային պատմագիտությունն այս բնագավառում էլ է բացարձականացրել և քաղաքականացրել գրող Ա. Գրիբոյեդովի անձն ու գործունեությունը:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վերաբերյալ ուսումնասիրություններով աչքի են ընկնում այսօրվա պայան ուսումնասիրողները: 1920-ականների վերջերից գիտական հրապարակումներով հանդես է գալիս Ի. Ենիկոլոպովը³²: Շնորհիվ բազմամյա պրպը-

տումների՝ հայկական, հատկապես վրացական արխիվներից հայտնաբերում ու հրատարակում է Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներ՝ *դրանք լրացնելով Ենիկոլոպովների ընտանեկան արխիվի նյութերով*³³ և *հայկական աղբյուրներով*:

Ի. Ենիկոլոպովը հանդիսանում է Ա. Գրիբոյեդովի անձը բացարձականացնող և դիվանագիտական գործունեությունը գերազնահատող հեղինակ՝ հատկապես ընդգծելով, որ Ա. Գրիբոյեդովը *ցարական Ռուսաստանի ինքնակալական կարգերի և գաղութային քաղաքականության համոզված և հետևողական հակառակորդ էր, և միայն նկատի ունենալով ժողովուրդների ընդհանուր շահերը՝ վերջինս անդրերկրկապյան երկրամասի վերաբերյալ խոսում էր այնպես, ինչպես կխոսեր Ռուսաստանի հետ հարազատացած և նրա կողմից «որդեգրած» տարածաշրջանի մասին*: Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը, ըստ Ի. Ենիկոլոպովի, վերաբերում է այն պատմափուլին, երբ Անդրկովկասի ժողովուրդներն իրենց ճակատագիրն ընդմիջտ կապեցին պարսկա-թուրքական ստրկացնողներից իրենց ազատագրող ռուս մեծ ժողովրդի հետ³⁴: Ելնելով մի շարք փաստերից՝ Ա. Գրիբոյեդովի վախճանի գործում Ի. Ենիկոլոպովը *գլխավոր մեղավոր է համարում ոչ թե Ալլահ-Յար խանին, որին, մասնակից լինելը կատարվածին պարզելու դեպքում, ավելի հեշտ կլիներ պատժել, այլ սրբերին համահավասար համարվող Թեհրանի մուջթեհիդ (գլխավոր մուլլա) Միրզա-Մեսիհին, ում ետևից գնում էր թեհրանյան մուլեռանդ խաժամուժը*³⁵, և ումից իբր վախենում էր նույնիսկ շահը:

1945թ. հայերեն թարգմանությամբ լույս են տեսնում Ա. Գրիբոյեդովի «Նոթերը»³⁶, որոնցում ընկերներին ուղղված նամակների և օրագրի տեսքով նա հաբուտ տեղեկություններ է ներկայացնում Կովկասի, Պարսկաստանի և իր դիվանագիտական գործունեության վերաբերյալ:

Այսօրվա պայան ժողովուրդների և հանկապես հայ ժողովրդի հանդեպ Ա. Գրիբոյեդովի մտահոգ և հոգատար վերաբերմունքն ընդգծելու համար որոշ հեղինակներ այնքան հեռուն են գնում, որ նույնիսկ Ա.

33 Ենիկոլոպով Ի.Կ., Գրիբոեդով Ի.Կ. Գրիբոեդով և Գրիբոեդով Ի.Կ., 1929, նշվ. աշխ., Առաջաբան (Պարսկաստանի շահի հանդեպ նախկին կառավարիչ Մանուչար խանը և նրա եղբայր Աղալո բեգը եւ Ենիկոլոպովներից կին, իսկ Ի. Ենիկոլոպովի պապ Մ.Ա. Ենիկոլոպովը Կովկասում ծառայել է Ա. Գրիբոյեդովի հետ):

34 Ենիկոլոպով Ի.Կ., Գրիբոեդով և Կովկաս, 1954, նշվ. աշխ., էջ 196:

35 Ենիկոլոպով Ի.Կ., Գրիբոեդով և Գրիբոեդով Ի.Կ., 1929, նշվ. աշխ., էջ 192:

36 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», նշվ. աշխ., 93 էջ:

27 Դրանական ծառայության մեջ եղած Համբարձումի վկայության մասին տես սույն աշխատության Գլ. Գ-ի 4-րդ ենթաբաժնում, էջ 374-375:

28 "Материалы къ истории персидской войны, 1826-1828гг. (продолжение, 1826-ой год)", "Кавказский сборник", Под ред. ген.-майора Потто, Тин-я Кавказскаго военнаго округа, Тифлисъ, 1910, томъ XXX, с. 1-214 (այսուհետև Материалы...):

29 Բարզեն վարդապետ, «Մանուել վարդապետը Ա.Ս. Գրիբոյեդովի մասին (1795-1829)», «Սպանումն դեսպանին ռուսաց», Մահուան ութսուն և հինգ ամեայ տարելիցի առթիվ, «Արարատ» պաշտօնական ամսագիր Հայրապետական արժող Ս. Էջմիածին, 1914-ՌՅԿԳ, փետրուար, համար Բ, էջ161-162:

30 Գրիբոեդով. Его жизнь и гибель..., նշվ. ժող., 351 էջ:

31 Ա.Ս. Գրիբոեդով в воспоминаниях современников, Ред-ор Пиксанов Н.К., Изд-во "Федерация", М., 1929, նշվ. աշխ. (մենք օգտվել ենք Վ. Վաղորդի խմբագրությամբ հետազայում լույս տեսած նրկրորդ հրատարակությունից) ("Художественная литература", Москва, 1980, 448 էջ):

32 Ենիկոլոպով Ի.Կ., Գրիբոեդով և Գրիբոեդով Ի.Կ., МСМХХІХ (1929), նշվ. աշխ., 209 էջ, նույնի՝ Ա.Ս. Գրիբոեդով և Գրիբոեդով Ի.Կ., նշվ. աշխ., 160 էջ, նույնի՝ Գրիբոեդով և Կովկաս, 1954, նշվ. աշխ., 200 էջ (նույնը՝ "Айастан", Երևան, 1974, 158 էջ), նույնի՝ "Из истории русско-иранских отношений и дипломатической деятельности А.С. Грибоедова", ИФЖ АН Арм. ССР, 1962, 4(19), с. 143-151, նույնի՝ "Письмо А.С. Грибоедова К.В. Нессельроду", "Известия", АН Арм. ССР, 1963, №5, с. 101-107, նույնի՝ "Армянские друзья Грибоедова", "Литературная Армения", Орган правления Союза писателей Арм. ССР, Երևան, 1971, 9 сентбры, с. 81-82.

Գրիբոյեդովի գրչին են վերագրում վավերագրեր, որոնց հետ վերջինս ընդհանրապես չի առնչվել: Այդպիսի հեղինակներից է Տ. Հախումյանը³⁷, որը Արսեն Թումանյանի հրապարակած մի փաստաթղթի³⁸ կազմումը վերագրում է Ա. Գրիբոյեդովին:

Վրաց հեղինակ **Վ. Շադուրին**³⁹ Ա. Գրիբոյեդովին ներկայացնում է որպես վրաց ժողովրդի մեծագույն բարեկամ, որը սերտ կապեր և մասնակցություն է ունեցել վրաց մշակութային կյանքին և, հոգատար լինելով Կովկաս արքայական գաղափարակից դեկաբրիստներին՝ օգնել է դժվար իրավիճակում հայանված վերջիններին:

Հայաստանի արխիվներում պահպանվող հայ-ռուսական հարաբերություններին և Ա. Գրիբոյեդովին վերաբերող նյութերի հրապարակման գործում զգալի է Վ. Պարսամյանի դերը⁴⁰: **Նա առաջին անգամ շրջանառության մեջ է դնում հայ հոգևորական և ազգային գործիչների նամակագրությունը, Հայկական մարզային վարչության գրությունները, որոնցում հիշատակվում են Ա. Գրիբոյեդովի նշանակման, դեսպանական առաքելության ողբերգական վախճանի, նրա աճյունի տեղափոխման և հուղարկավորության վերաբերյալ տեղեկությունները**⁴¹: XX դարի կեսերի հայ հեղինակներից **Վ. Պարսամյանն առաջինն էր, որը համեստ փորձ է կատարում առավել իրատեսական մոտեցում ցուցաբերելու հայ ժողովրդի կյանքում Ա. Գրիբոյեդովի կատարած դերին**⁴²՝ մասնավորապես քննադատելով Տ. Հախումյանին, որը հայ հոգևոր և հասարակական գործիչների ձեռքով կազմված փաստաթղթերը հանիրավի կերպով վերագրել է Ա. Գրիբոյեդովի ջանքերին⁴³: Չնայած վերոգրյալին՝ Վ. Պարսամյանը ևս, ժամանակի ոգուն համապատասխան, **հակված է բացարձականացնել Ա. Գրիբոյեդովի անձը, գերազնահատել նրա դիվանագիտական կարողություններն ու գործունեությունը, ինչպես**

նաև պարսկահայերի ներգաղթի գործում նրա խաղացած դերը⁴³: Վ. Պարսամյանը մասնավորապես գրում է. «Պատմական փաստերի մեր նոր բացատրության լույսի տակ, հայ-ռուսական հարաբերությունների ընթացքում ունեցած իր գործունեությամբ, Ա. Գրիբոյեդովը մեր առջև կանգնում է որպես Հայաստանի ազատագրության պաշտպան, հայ ժողովրդի բարեկամ: Ընդհանրապես պաշտպանելով ժողովուրդների բարեկամության նվիրական գաղափարը, Գրիբոյեդովն աշխատում էր, որրան կարելի է, ամրապնդել ու ընդլայնել հայ-ռուսական բարեկամական կապերը: Ժամանակակիցների մեջ նա այդ հարցում ամենից ավելի բարձր էր կանգնած և ամենից ավելի հեռուն էր տեսնում»⁴⁴:

Կարևորելով պարսկական հասարակության բոլոր խավերի շրջանում «**թուրքական ազենտներին**» ու եվրոպական պետությունների առանձին ներկայացուցիչների սաղրիչ գործունեությունը՝ Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ Վ. Պարսամյանը նշում է. «Հայաստանում երկար տարիներ հիշվում էր Գրիբոյեդովի սպանությունը, որպես հայերի պաշտպանության համար կատարված մի ակտ: Դա էլ ավելի էր բորբոքում հայ ժողովրդի սերը դեպի Գրիբոյեդովը, միշտ թարմ պահում նրա հիշատակը»⁴⁵:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության, Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում նրա դերի գերազնահատման ու հա՛տկապես առաքելության տապալման հարցում **դեսպանի թույլ տված վրիպումներն արդարացնելու և թեհրանյան ողբերգությունը քաղաքական դրդապատճառներով բացատրելու փորձ է Վ. Պաշուտոյի հրապարակումը**⁴⁶: Հեղինակը տարածված այն տեսակետը, թե մինչև 1826 թվականն Ա. Գրիբոյեդովն իրեն որպես դիվանագետ նկատելիորեն չի դրսևորել՝ Վ. Պաշուտոն գտնում է, որ **Ա. Գրիբոյեդովը եղել է ռուս մեծագույն դիվանագետներից մեկը, բազմագիտակ և դիվանագիտական նրբագույն տակտով օժտված մարդ, որը խորապես գիտակցել է տնտեսական, ռազմական և մշակութային հարցերի հետ դիվանագիտական խնդիրների կապը:** Հեղինակն Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ գրում է. «Ա. Գրիբոյեդովի և ռուսական առաքելության վախճանի պատճառները կայանում են նրանում, որ նախ՝ ռուսական Արտաքին գործերի նախարարությունը մերժեց Ա. Գրիբոյեդովի ինչպես դիվանագի-

37 Հախումյան Տիգրան, Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով կյանքն ու ստեղծագործությունը, «Հայպետհրատ», Երևան, 1945, էջ 85, 94-105:

38 Туманян Арсень, «Некоторые предположения о Грузии и сопредельных ей областях». Обзорение Грузии - ея провинции и жителей», «Армянский вестник», Московское-армянское изд-во, Москва, 1917, №№ 43-44, с. 13-15.

39 Шадури В., Грибоедов и грузинская культура, 1946, ևշվ. աշխ., 77 էջ:

40 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., 280 էջ, նույնի՝ «Ա.Շ. Գրիբոևով և переселение армян», в книге «Из истории вековой дружбы», Изд-во АН Арм. ССР, Ереван, 1983, с. 136-146, նույնի՝ «Присоединение Восточной Армении к России (к 150-летию)», Библиографический указатель, Под ред. проф. В.А.Парсамяна, Министерство культуры Арм. ССР, Ереван, 1980, 209 с..

41 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., 207-241 (փաստաթղթեր բաժինը):

42 Տ. Հախումյանի տեսակետի վերաբերյալ Վ. Պարսամյանի քննադատությունը տես սույն հետազոտության Գլ. Գ-ի 4-րդ ենթաբաժնում, էջ 355:

43 Парсамян В.А., «А.С. Грибоедов и переселение армян», ևշվ. հոդվ., էջ 136-146:

44 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ևշվ. աշխ., էջ 190:

45 Նույն տեղում՝ էջ 172-173, 195:

46 Пашуто В.Т., «Дипломатическая деятельность А.С. Грибоедова», հ.24, ևշվ. աշխ., էջ 111-159:

տական, այնպես էլ տնտեսական նախագծերը և նրան ուղարկեց Պարսկաստան՝ փաստացի գրկելով անհրաժեշտ դիվանագիտական և ռազմական աջակցությունից, երկրորդ՝ անգլիական գործակալները ռուսական դեսպանությունը վերացնելու նպատակով կազմակերպեցին և ֆինանսավորեցին պարսկական արքունիքի հակառուսական կուսակցությանը, և երրորդ՝ արքունիքի հակառուսական կուսակցությունը շահի գլխավորությամբ ձեռնարկեց իրագործել թեհրանյան արյունոտ սադրանքը»⁴⁷: Այսպիսով, Վ. Պաշուտնն ռուսական դիվանագիտական առաքելության տապալման կազմակերպման և իրականացման գործում մեղադրում է ոչ միայն պարսկական արքունիքին, այլև Պարսկաստանում անգլիական «Արևելա-հնդկական» ընկերության գործակալներին և Անգլիայի կառավարությանը՝ նրանց համարելով դրա կազմակերպողն ու գլխավոր հրահրողը:

Գ.Մ. Պետրովը 1953թ. հրապարակում է Թեհրանում ռուսական դեսպանատանը 1829թ. հունվարին զոհված **Սողոմոն Մելիքյանի եղբորորդու** հուշերն այդ ողբերգության վերաբերյալ⁴⁸, սակայն դրա **արժանահավատությունը քննություն չի բռնում** մասնավորապես **Միրզա-Յազուբի անձի, հարեմի կանանց, Սողոմոն Մելիքյանի և Ա. Գրիբոյեդովի վախճանի հարցերի շուրջ այլ հայտնի աղբյուրների հետ համեմատելիս**: Օգտվելով Ա. Մալշինսկու հրապարակումից՝ Գ. Պետրովը ևս առաջ է քաշում այն վարկածը, **թե իբր դեսպանակազմի փրկված անդամ Ի. Մալցովն իր հայտնի զեկուցագրերը գրել է Ի. Պասկևիչի ճնշման տակ՝ մեղքը բարդելով Ա. Գրիբոյեդովի վրա, որպեսզի պարսկական կառավարության մեղսակցությունը հարթվի դիվանագիտական ճանապարհով**: Նա գրում է. «Այդ ծրագրի համար որպես հիմք է ծառայել Մալցովի դիրքորոշումը. նա շահի և շահական աստիճանավորների հետ խոսակցությունների ժամանակ, «կյանքին հրաժեշտ տալու վախից զգուշավորության համար ձևացել է նրանց ճառերից համոզված»... Այլ խոսքով՝ շահի ներկայությամբ Մալցովը համաձայնել է այն մեղադրանքներին, որոնք, ընդդեմ Ա.Ս. Գրիբոյեդովի, առաջ էին քաշվում պարսկական կառավարող շրջանակներում... Այսպիսով, առաջնորդվելով անձնական շահերով և ինքնապահպանման բնագործով՝ Մալցովը ջուր լցրեց իրանական կառավարող շրջանների ջրաղացին: Դա, անշուշտ, օգտագործվեց պալատական աստի-

ճանավորների և պարսից պատմաբանների կողմից՝ Թեհրանում Ա. Գրիբոյեդովի և ռուսական դեսպանության համարյա ողջ անձնակազմի սպանության վերաբերյալ պաշտոնական և լիովին սխալ վարկած հորինելու համար»⁴⁹:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն անդրադարձ կա նաև խորհրդային Ադրբեջանի հեղինակների մոտ, մասնավորապես 1955թ. ակադեմիական մի հրատարակության մեջ⁵⁰, որում նշվում է, որ **Թուրքմենչայի բանակցությունների ժամանակ Ա. Գրիբոյեդովն է արտահայտել Հարավային Ադրբեջանը (Իրանական Ատրպատականը – Վ.Ս.) Ռուսաստանին միացնելու միտքը**: Հետագայում նույն միտքն է արտահայտում նաև ադրբեջանցի ուսումնասիրող Հաջի Մուրադ Իբրահիմբեյլին⁵¹:

Իրանական ժամանակակից մամուլից քաղած նյութերի հիման վրա Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ **մեկ այլ աղբյուր է հրապարակում Չ. Բայբուրդին⁵², սակայն դրա արժանահավատությունը ևս խիստ կասկածելի է, քանի որ «վկայությունը» պատկանում է 150-ամյա ոմն Ղանբար Ալիի**: Չ. Բայբուրդին ներկայացնում է նաև Ա. Գրիբոյեդովի մահվան վերաբերյալ իրանական պատմագրության տեսակետները: Ըստ հեղինակի՝ **եթե XIX դարի իրանական պատմագրությունը (Ռեզա-Կուլի խան, Սեփեեր, Սանի-էդ-դոուլե) 1829թ. թեհրանյան իրադարձություններում մեղավոր էր համարում Ա. Գրիբոյեդովին, ապա ժամանակակից հեղինակները գտնում են, որ Ա. Գրիբոյեդովը զոհ է գնացել ռուսական դիվանագիտության հաջողությունների համար Ֆարսի-Ալի շահից առավել անհանգստացած անգլիացիների գաղութային քաղաքականությանը (Ա. Շամիմ), և որ Ա. Գրիբոյեդովի սպանությունը կազմակերպել են անգլիացի գաղութարարները (Մ. Մահմուդ)⁵³**:

Ուշագրավ է ուսումնասիրող **Լ.Ս. Սեմյոնովի հրապարակումը⁵⁴, որում հեղինակը գերազնահատում է Ա. Գրիբոյեդովի դերը Թուրքմենչայի պայմանագրի կազմման և կնքման գործում՝ ընդգծելով հատ-**

49 Петров Г.М., Новые материалы..., նշվ. հոդվ., էջ 147-148:

50 Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX–нач. XXв.), Под ред. А.Н. Гулиева и В.Д. Мочалова, Изд-во АН Азербайджанской ССР, Баку, 1955, с. 48.

51 Ибрагимбеёв Хаджи Мурат, Россия и Азербайджан в первой трети XIX века, Изд-во "Наука", Главная ред-я Восточной литературы, Москва, 1969, с. 211.

52 Байбурди Ч., "Новое о гибели А.С. Грибоедова (По данным иранской печати)", "Русская литература", ИЛЖ, Изд-во АН СССР, Ленинград, 1959, №4, с. 171-173.

53 Նույն տեղում՝ էջ 171-172:

54 Семёнов Л.С., "К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении", ИФЖ, АН Арм. ССР, Ереван, 1959, № 4, с. 105-122.

47 Пашуто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова", հ.24, նշվ. աշխ., էջ 159:

48 Петров Г.М., "Новые материалы об убийстве А.С. Грибоедова", Учёные записки Института Востоковедения, Иранский сборник, Изд-во АН СССР, Москва, 1953, том VIII, с. 146-165.

կապես նրա հայանպաստ գործունեությունը, և այն, որ հայերին վերաբերող հողվածները ևս կազմել ու Թուրքմենչայի պայմանագիր է մտցրել Ա. Գրիբոյեդովը: Լ. Սեմյոնովը գրում է. «...Ավելի ուշ 12-րդ, 14-րդ, 15-րդ հողվածների իրավաբանական մեկնաբանությունն Ա. Գրիբոյեդովն այնպես ներկայացրեց, ինչպես կարող էր անել միայն դրանք կազմողը... Անդրադատնանք հարցի մյուս՝ 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի փուլում Ա. Գրիբոյեդովի հայկական կապերի հարցին: Դա թույլ է տալիս առավել լրիվ պարզել Ա. Գրիբոյեդովի կապերը Հայաստանի հետ և դրա հետ մեկտեղ հաստատում է Թուրքմենչայի պայմանագրի հողվածները հեղինակելու մասին եզրակացությունը: Հայտնի է, որ պատերազմական գործողությունների թատերաբեմում Ա. Գրիբոյեդովն աջակցել է հայերի շահերի պաշտպանությանը...»⁵⁵:

Անդրադանալով թեհրանյան իրադարձություններին՝ Լ. Սեմյոնովը նշում է. «Պարսկաստանի նկատմամբ գերիշխանություն հաստատելու բրիտանական քաղաքականությունն իր դերը խաղաց նաև հետագա իրադարձություններում, որոնք հանգեցրին Թեհրանում ռուսական առաքելության ջախջախմանը: Գրիբոյեդովը զոհվեց դիվանագիտական իր դիրքում՝ պաշտպանելով Թուրքմենչայի հաշտության պայմաններում արտացոլված Ռուսաստանի և Հայաստանի շահերը»⁵⁶:

Ա. Գրիբոյեդովի դեսպանական առաքելության տապալման վերաբերյալ խորհրդային պետական պաշտոնական մտեցումներ կարելի է համարել 1950-ականների վերջին հրատարակված *դիվանագիտության պատմությունը ներկայացնող բազմահատորյակում*⁵⁷ տեղ գտած տեսակետները: Գրանցում, շրջանցելով ռուս դեսպանի թույլ տված վրիպումների ու պահվածքի հարցերը, վերջինիս վախճանի մեղավորներ են համարվում Պարսկաստանի շահը, նրա պալատականները և անգլիական դիվանագիտական առաքելությունը, միևնույն ժամանակ շեշտվում է իրադարձությունները սրել չցանկացող և նվերներով ու ներման խնդրանքներով բավարարված ցարական իշխանությունների՝ Ա. Գրիբոյեդովին հանուն պետական շահերի զոհաբերելու դիրքորոշումը:

1818 թվականից մինչև վախճանը Ա. Գրիբոյեդովի գործունեությանն առնչվող հսկայական նյութերի ներկայացմամբ աչքի է ընկնում

55 Семёнов Л.С., "К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении", նշվ. աշխ., էջ 114-115:
56 Նույն տեղում՝ էջ 126:

57 История дипломатии, Ред. коллегия, Гос. изд-во полит. литературы, Москва, 1959, том I, с. 613.
298

Ս.Վ. Շոստակովիչը⁵⁸, սակայն նա ևս իր աշխատության մեջ հայտնի և նոր աղբյուրները, արխիվային նյութերը փորձում է ծառայեցնել Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի պատճառների վերաբերյալ խորհրդային պատմագրության մեջ արմատավորված տեսակետների ապացուցմանը: Ռուսական դեսպանակազմի ոչնչացման հարցում Ս. Շոստակովիչը փորձում է *ապացուցել անգլիացիների մասնակցությունը և մատնանշել Միջին Արևելքում Անգլիայի հետ հարաբերությունները սրել չցանկացող ռուսական կառավարության կողմից անգլիական մինիստրությունների տեղեկություններին առավել հավատ ընծայելու հանգամանքները: Հեղինակը միաժամանակ նշում է, որ Արտաքին գործերի գերատեսչությունը, հանձին Կ. Նեսսելրոդեի, դատապարտում էր Ա. Գրիբոյեդովի «անբավարար խորաթափանցությունը», և այն, որ չնայած մի քանի տարի լինելով Թավրիզում և հարաբերվելով պարսիկների հետ՝ նա «վատ ճանաչեց և սխալ դատեց մի ժողովրդի մասին, ում հետ գործ ուներ»⁵⁹:*

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը գնահատելիս, Ս. Շոստակովիչը, հայտնի չէ թե ինչ փաստերից օգտվելով, գտնում է, որ ռուս-պարսկական հարաբերությունների հետագա մերձեցման խնդիրն Ա. Գրիբոյեդովի մտադրությունների շարունակությունն էր, որ վերջինս ներդրել էր բոլոր ջանքերը, որպեսզի բարելավվեն ռուս-պարսկական հարաբերությունները, որպեսզի դրանք ոչ միայն բարելավվեն, այլև դառնան բարեկամական, և դրանով ամրապնդվի ռուսական ազդեցությունը Պարսկաստանում⁶⁰: Ըստ Ս. Շոստակովիչի՝ եթե Ա. Գրիբոյեդովը չզոհվեր, ապա Ռուսաստանի և նրա արևելյան հարևանի միջև անկասկած տեղի կունենար առավել համընդգրկուն և երկարատև մերձեցում⁶¹:

1818-1829թթ. Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի վերաբերյալ խորհրդային տեսակետների ամրապնդման փորձ է նաև Օ. Պոպովայի աշխատությունը⁶²: Նշելով՝ դեռևս 1818 թվականից (Ս. Մազարովիչի, ապա Ա. Երմոլովի ղեկավարությամբ ծառայելու ժամանակներից) Ա. Գրիբոյեդովի *ատելությունը պաշտոնների, տիտղոսների, պետերի, գեներալների և իր դիվանագիտական*

58 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., 296 էջ:

59 Նույն տեղում՝ էջ 265-267:

60 Նույն տեղում՝ էջ 4:

61 Նույն տեղում՝ էջ 273:

62 Попова О.И., Грибоедов дипломат, նշվ. աշխ., 219 էջ:

աշխատանքի հանդեպ՝ Օ. Պոպովան մինևսյն ժամանակ փորձում է շեշտել վերջինիս դիվանագիտական բարձր ունակություններն ու կարողությունները: Գերագնահատելով Ա. Գրիբոյեդովի դերը պարսկահայերի ներգաղթի գործում՝ նա գրում է. «Թուրքմենչայի պայմանագրի XV հոդվածն իրացնելիս Ա. Գրիբոյեդովը կրկնակի ծանրություն էր կրում իր ուսերին՝ Ռուսաստանին հենց նոր միացված Երևանի և Նախիջևանի մարզերում Ադրբեջանի (Ատրպատականի – Վ.Ս.) հայերին վերարձակեցնելու համար: Գրիբոյեդովը պետք է պաշտպաներ հայերի շահերը ոչ միայն Իրանում, այլև ռուսական տիրույթներում»⁶³:

Ռուսական դեսպանակազմի վախճանի հարցում **Օ. Պոպովան ևս կարևորում է ռուսատյաց իրանցիների և անգլիացիների դավադրության հանգամանքը, քանի որ վերջիններս նպատակ ունեին խաթարելու ռուսական ազդեցության ընդլայնումն Իրանում**⁶⁴: Չհերքելով այն տեղեկությունը, թե Ի. Մալցովը զեկուցագրերը գրել է Ի. Պասկևիչի ճնշման տակ՝ հեղինակը գրում է. «Բայց, ինչպես տեսնում ենք, Նիկոլայ I-ը և արտաքին գործերի նախարար Նեսսերոդեն օգտվեցին միայն Մալցևի զեկուցագրի՝ իրանական կառավարությանն արդարացնող նախապես սուտ այն հատվածից, որն այդ պահին առավել համապատասխանում էր նրանց դիվանագիտական շահերին: Յարական կառավարությունը մեծագույն անարդարությամբ ավարտեց իր հաշվարկները Գրիբոյեդովի հետ՝ անհրաժեշտ չափով չգնահատելով ոչ նրա փայլուն ձիրքը, ոչ նրա անմոռանալի արիությունը, ոչ էլ Ռուսաստանի հանդեպ նրա պարտքի զգացումը»⁶⁵:

Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ **1960-ական թվականներից իրանական պատմագրության տեսակետների սուր քննադատությամբ հանդես է գալիս Բ. Բալայանը**⁶⁶, որի ավանդը մեծ է նաև ռուս-իրանական դիվանագիտական հարաբերությունների և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցերի ուսումնասիրության գործում⁶⁷:

63 Попова О.И., Грибоедов дипломат, ևշվ. աշխ., էջ 129-130:

64 Նույն տեղում՝ էջ 170-193:

65 Նույն տեղում՝ էջ 217-218 (Օ. Պոպովան նշում է «Մալցև» ձևով):

66 Балаян Б.П., "Фальсификация истории гибели А.С. Грибоедова в современной иранской историографии", "Вестник общественный наук", АН Арм. ССР, Ереван, 1962, №2, с. 118-129, նույնի՝ "Иранская историография о гибели А.С. Грибоедова", "История СССР", Изд-во "Наука", -Москва, 1964, №6, ноябрь, декабрь, с. 183-189, նույնի՝ "Кровь на алмазе "Шах". Трагедия А.С. Грибоедова", Изд-во "Айастан", Ереван, 1983, 179 с.

67 Балаян Б.П., "Из дипломатической истории присоединения Восточной Армении к России", "Известия" общественные науки, Академии наук Арм. ССР, Ереван, 1962, №11, с. 19-32, նույնի՝ "Международные отношения Ирана в 1813-1828гг.", Изд-во АН Арм. ССР, Ереван, 1967, 296 с., նույնի՝ "Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России", Изд-во АН Арм. ССР, Ереван, 1988, 279 с.

Վերլուծելով իրանական պատմագրության ներկայացուցիչների (**Մ. Մահմուդ, Մոաթամեդ, Ֆ. Ադիամաթ, Ա. Բինա, Էբբալ, Հեդայաթ, Ա. Թաջբախշ, Ի. Թեյմուրի, Ն. Նավվար, Ջ. Քանե-Մոհամ, Մեհդիվի, Ջավադի և մյուսներ**) տեսակետները հարցի կապակցությամբ՝ Բ. Բալայանը եզրակացնում է. «Ա.Ս. Գրիբոյեդովի սպանության պատճառների վերաբերյալ իրանական պատմաբանների վարկածների վերլուծությունը թույլ է տալիս դրանցում առանձնացնել հայացքների հիմնական համակարգը (կոնցեպցիան – Վ.Ս.): Այդ վարկածներից առավել սթափն ու օրյեկտիվը (Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ա. Գրիբոյեդովի սպանությունը կապում է Արևելքում անգլո-ռուսական հակասությունների և Իրանում Անգլիայի ծավալապաշտական քաղաքականության հետ: Դեռևս նախորդ դարի իրանական քրոնիկոններից հայտնի մյուս հայեցակարգը ժխտում է ռուսական առաքելության վախճանի քաղաքական բնույթը և Ա. Գրիբոյեդովի վախճանի մեջ անհիմն կերպով մեղադրում է հենց իրեն, իսկ ամենատարածված վարկածը կառչում է նույն տեսակետից, բայց հենվում է ցարիզմի պաշտոնական վարկածի վրա»⁶⁸:

Ա. Գրիբոյեդովի վախճանի հանգամանքները քննարկելիս Բ. Բալայանը, հետևելով խորհրդային պատմագիտության կարծրատիպերին, **կատարվածում կարևորում է քաղաքական դրդապատճառները և մեղադրում պարսկական և անգլիական հետադիմականներին, ռուսական կառավարությանը**⁶⁹: ուշադրություն հրավիրելով նաև թուրքական գործոնի վրա: Ըստ նրա՝ շահագրգռված լինելով Իրանի կողմից Ռուսաստանի դեմ կրկին պատերազմելու հարցում, **Թուրքիան կարող էր Թեհրանում հակառուսական տրամադրություններ գրգռել**: Բ. Բալայանը նշում է. «Ռուսական գործերի հաջողությունների պայմաններում, ձրգտելով ռուս-թուրքական պատերազմի դադարեցմանը, Անգլիան միջնորդության տեսքով միջամտեց այդ պատերազմին և Ղաջարների ու Բ. Դռան հետ միասին Թեհրանում կազմակերպեց ռուսական դեսպանի սպանությունն այն բանի համար, որպեսզի սրի միջազգային իրադրությունն Արևելքում և Ռուսաստանին սպառնա պարսկա-թուրքական նոր դաշինքով ու երկու ճակատով պատերազմով»⁷⁰:

Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ իրանական ժամանակակից պատմաբանների տեսակետների քննադատությամբ հանդես է գալիս

68 Балаян Б.П., Дипломатическая история русско-иранских войн..., ևշվ. աշխ., էջ 244:

69 Նույն տեղում՝ էջ 244-256, տես նաև նույնի՝ "Кровь на алмазе "Шах"...", ևշվ. աշխ., էջ 177:

70 Балаян Борис, "Кровь на алмазе "Шах"...", ևշվ. աշխ., էջ 176:

նան Դ.Ս. Կոմիսարովը⁷¹, ով նույնպես *փորձ է անում արդարացնել Ա. Գրիբոյեդովին՝ դարձյալ առաջ մղելով կատարվածի քաղաքական դրդապատճառները*: Չնայած որ նա դրական է վերաբերվում իրանական պատմագրության այն ներկայացուցիչներին, ովքեր թեհրանյան ռդբերգության մեջ առավել կարևորում են անգլիացիների անագնիվ դերն ու վերջիններիս կապերն այն ժամանակվա Իրանի շահի ու պաշտոնյաների հետ, իսկ Ա. Գրիբոյեդովի սպանության մեջ էլ մեղադրում են իրանական իշխանություններին⁷², **Գ. Կոմիսարովը, սակայն, գարմանք է արտահայտում այն հանգամանքի շուրջ, թե իրանցի ներկայիս որոշ հետազոտողներ (Նավվար, Թեյմուրի, Քանե-Մոհամ) շարունակում են կատարվածում պաշտպանել իրանական պաշտոնական վարկածը և շեշտում են, որ Ա. Գրիբոյեդովի սպանության հարցում իրենց նախ և առաջ անհանգստացնում է իրանական ժողովրդի և պետության հեղինակությունը**⁷³:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության խնդիրը մշտապես եղել է նաև XIX դարի առաջին երեսնամյակի հայ-ռուսական հարաբերությունների և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցերն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում որպես դրանց հետ սերտորեն առնչվող թեմա: «Գրիբոյեդով-Հայաստան», «Գրիբոյեդով-Թուրքմենչայի պայմանագիր», «Գրիբոյեդով-իրանահայերի ներգաղթ», վերջինիս վախճանի և այլ հարցերի անդրադարձել են մեծավաստակ գիտնականներ **Մ.Գ. Ներսիսյանը**⁷⁴, **Ջ.Տ. Գրիգորյանը**⁷⁵, **Մ.Ա. Մուրադյանը**⁷⁶, **Գ.Ա. Գալոյանը**⁷⁷, **Կ.Ս. Հովհաննիսյանը**⁷⁸, **Ա.Պ.**

Քազիյանցը⁷⁹ և այլք, սակայն, նպատակ չունենալով խորանալ վերոհիշյալ հարցերի մեջ, նշված հետազոտողները հիմնականում փաստել են խորհրդային պատմագիտության մեջ նախկինում ամրագրված տեսակետները: Մասնավորապես, Մ. Ներսիսյանը գրում է. «Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում խոշոր դեր խաղաց ռուս մեծ գրող և հումանիստ Ալեքսանդր Սերգենիչ Գրիբոյեդովը: 1827թ., երբ Արարատյան դաշտում ծավալվել էին ռազմական գործողությունները պարսկական զորքի դեմ, երբ տեղի էր ունենում Սարդարապատի և Երևանի ազատագրումը խանական լծից, Գրիբոյեդովը գտնվում էր բանակում, մասնակցում էր ռազմական գործողություններին և անում ամեն ինչ ռուսական զորքերի հաղթանակի համար: Ռուս մեծ գրողը, ինչպես հայտնի է, խոշոր դեր կատարեց Թուրքմենչայի պայմանագրի կնքման, ինչպես նաև՝ պարսկահայերի գաղթը կազմակերպելու և նրանց ամեն կերպ օգնելու գործում»⁸⁰:

Չ. Գրիգորյանն իր հերթին գրում է. «Պարսկաստանից հայերի գաղթի կազմակերպման գործում մասնակցություն ունեցավ ռուս նշանավոր գրող Ա. Գրիբոյեդովը... Այդ ժամանակամիջոցում Գրիբոյեդովը մոտիկից ծանոթացավ հայ ժողովրդի հարուստ պատմությանը, օտար զավթիչների դեմ նրա մղած հերոսական պայքարին, ինչպես նաև խանական ճիրաններում հայ զանգվածների թշվառ կացությանը: Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո... նա անում էր ամեն ինչ պարսկահայերին խանական ստրկությունից փրկելու համար: Գաղթի նախապատրաստման ու իրագործման ընթացքում նա սերտ կապերի մեջ էր Լ. Լազարյանի ու Հայկական մարզի վարչությանն առընթեր գործող գաղթի կոմիտեի հետ և օգնում էր նրանց՝ հաջողությամբ իրագործելու գաղթը»⁸¹: Պարսկական պալատական հակառուսական խմբավորման և հետադիմական հոգևորականության սադրանքով Ա. Գրիբոյեդովի գլխավորած դեսպանակազմի կործանման մեջ **մեղադրելով անգլիացիներին** Չ. Գրիգորյանը նշում է. «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև նոր պատերազմ հրահրելու նպատակով էր, որ անգլիական գործակալները 1829թ. փետրվարի 11-ին (նոր տոմարով – Վ.Ս.) Թեհրանում կազմակերպեցին պարսկական խաժամուժի բանդիտային հարձակումը ռու-

71 Комиссаров Д.С., "Иранские авторы о гибели А.С. Грибоедова", "Вопросы истории", Изд-во "Правда", Москва, 1975, №8, с. 188-195.

72 Նույն տեղում՝ էջ 189:

73 Նույն տեղում՝ էջ 195:

74 Нерсисян М., Из истории русско-армянских отношений, кн. вторая, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1961, с. 201-217, նույնի՝ Декабристы в Армении, Изд-во Ереванского университета, Ереван, 1975, гл. седьмая, с. 141-155, նույնի՝ «Նոր դարագլուխի հայ ժողովրդի պատմության մեջ», ՊԲՀ Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 3(82), էջ 6, 9:

75 Գրիգորյան Ջ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Հայաստանի հրատ., Երևան, 1960, էջ 266-277, 274-277, նույնի՝ «Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման և գոյատևման համար», ՊԲՀ Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 3(82), էջ 18:

76 Мурадян М.А., "Присоединение Восточной Армении к России в оценке дореволюционной русской историографии и общественной мысли", Сборник статей, Изд-во Ереванского университета, Ереван, 1978, с. 83-84, նույնի՝ «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ», Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1985, էջ 97-110:

77 Գալոյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, «Հայաստան» հրատ., Երևան, 1978, էջ 203-209:

78 Հովհաննիսյան Կ.Ս., Եջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, «Հայաստան» հրատ., Երևան, 1981, էջ 85, 96-97:

79 Базиянц А.П., Над архивом Лазаревых (очерки), Изд-во "Наука", Главная редакция восточной литературы, Москва, 1982, с. 122-147.

80 Ներսիսյան Մ.Գ., «Նոր դարագլուխի հայ ժողովրդի պատմության մեջ», ՊԲՀ, 1978, 3(82), նշվ. հոդվ., էջ 9:

81 Գրիգորյան Ջ.Տ., «Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը...», ՊԲՀ, 1978, 3(82), նշվ. հոդվ., էջ 18:

ասկան դեսպանատան վրա, որի եղեռնական գոհը դարձավ Ա.Ս. Գրիբոյեդովը»⁸²:

1978թ. Հայաստանում մեծ շուքով նշվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու 150-ամյակը: Այդ առիթով հրատարակվեցին փաստաթղթերի մի շարք ժողովածուներ, որոնցում առանձին փաստաթղթեր վերաբերում են Ա.Գրիբոյեդովին⁸³:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն անդրադարձել են նաև XIX դարի առաջին երեսնամյակի՝ Պարսկաստանի և ռուս-պարսկական հարաբերությունների պատմությունն ուսումնասիրողները, սակայն վերջիններս էլ յուրովի, **բայց դարձյալ կրկնում են խորհրդային պատմագիտության մեջ Ա. Գրիբոյեդովի գործունեությունը գերազնահատող և անձր բացարձականացնող ամրագրված տեսակետները:**

Մ.Ա. Իգամբերդիևը⁸⁴ նշում է. «Իր Հայրենիքի հայրենասեր և խոշորագույն դիվանագետ Ա.Ս. Գրիբոյեդովը խոր հարգանքով էր վերաբերվում փոքր երկրների ինքնիշխանությանը: Անգլիական ազդեցության դեմ հաջող պայքարի, Արբաս-Միրզայի հետ մերձեցման և Իրանի չեզոքացման նպատակով Ա.Ս. Գրիբոյեդովը Պետերբուրգի ցարական նախարարությանն առաջարկեց հետաձգել ռազմատուգանքի վճարումը, բայց, Գրիբոյեդովի վերագրած՝ ցարական «արտաքին գործերի քնատ և ամենատարօրինակ նախարարությունը» մերժեց այդ հիմնավոր առաջարկը»⁸⁵: «Իրանում Գրիբոյեդովի գործունեությունը,- շարունակում է Մ. Իգամբերդիևը,- շատ բաներում նպաստեց ռուս-թուրքական պատերազմի փուլում Արաքսի վրա խաղաղության պահպանմանը: Գրիբոյեդովն ուշադիր հետևում էր նրան, որ այստեղից չկատարվի դավաճանական զզվելի ինչ-որ բան»⁸⁶: Ա. Գրիբոյեդովի վախճանի հարցում հեղինակը նույնպես նշում է, որ **Գրիբոյեդովը գոհ դարձավ անգլիական դիվանագետների խարդավանքներից, Իրանում, հետադիմական հոգևորականության մոլեռանդությանը և շահական կա-**

ռավարության չարամիտ թողտվությունը⁸⁷:

Խոսելով դիվանագիտական ծառայության վաղ շրջանում Ա. Գրիբոյեդովի գործունեության մասին՝ **Ն.Ս. Կինյայինան**⁸⁸ գրում է. «Լինելով Կովկասի կառավարչի (Ա. Երմոլովի – Վ.Ս.) արտաքին գործերի գծով քարտուղար՝ Ա.Ս. Գրիբոյեդովը շատ բան արեց այն բանի համար, որպեսզի ձախողի անգլիացիների հակառուսական ջանքերը: Նրան հաջողվեց քայքայել Ռուսաստանի դեմ ուղղված թուրք-պարսկական դաշինքը և հետաձգել ռուս-պարսկական պատերազմը»⁸⁹:

Թուրքմենչայի պայմանագրի վերաբերյալ Ն. Կինյայինան գրում է. «Բանակցությունների և հաշտության կնքման ընթացքում ակտիվ դեր խաղաց Պարսկաստանում ռուսական կառավարության պաշտոնական լիազոր Ա.Ս. Գրիբոյեդովը... Նա պետք է շահին ստիպեր ոչ միայն հրաժարվել Վրաստանի և Հյուսիսային Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններից, այլև հասնել Հայաստանը և Հարավային Ադրբեջանը Ռուսաստանին հանձնելու համաձայնությանը»⁹⁰: **Ա. Գրիբոյեդովի վախճանի հարցում Ն. Կինյայինան ևս մեղադրում է անգլիացիներին, իրանական արքունիքին և նրանց պաշտոնական բացատրություններն ընդունած ռուսական կառավարությանը:** «Դրա համար,- գրում է հեղինակը,- նա (ցարական կառավարությունը - Վ.Ս.) պատրաստակամությամբ ընդունեց շահի պաշտոնական վարկածը, թե շահական կառավարությունը թեհրանյան աղետի մեջ մեղասկից չէ, և որ առաքելության ջախջախման պատճառով եղել է «դեսպանի մարդկանց և ամբոխի միջև (տեղի ունեցած – Վ.Ս.) կռիվը»⁹¹:

Ռուսական և ընդհանրապես խորհրդային պատմագիտության մեջ առաջին անգամ **1977թ. հրապարակված Իրանի ամբողջական պատմությանը**⁹² մեջ ևս մեկ անգամ ամրագրված են Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի վերաբերյալ խորհրդ-

82 Գրիբոյեդովի Ջ.Ս., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նշվ. աշխ., էջ 274:

83 Присоединение Восточной Армении к России, Сборник документов, նշվ. ժող., հ. II, 1814-1830, փաստ. № 49, էջ 73-74, № 171, էջ 286, 295, № 355, էջ 580-591, տես նաև՝ Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828гг., Сборник документов. Вестник архивов Армении 2(51), Ըլ. ред-ор А.О. Арутюнян, Центральный государственный исторический архив Арм. ССР (ЦГИА Арм ССР), Ереван, 1978, док. № 119, с. 149-150, № 139, с. 163-168, № 187, с. 248-250, № 189, с. 251-252.

84 Իգամբերդիև Մ.Ա., Իրան в международных отношениях первой трети XIX века, Изд-во Самаркандского Гос. Университета им. А. Навои, Самарканд, 1961, 297 с..

85 Նույն տեղում՝ էջ 240:

86 Նույն տեղում՝ էջ 241:

87 История Ирана, Отв. ред-ор М.С. Иванов, Изд. Московского университета, Москва, 1977, 488 с..

88 Киняпина Н.С., Внешняя политика России первой половины XIX в., Гос. изд-во "Высшая школа", Москва, 1963, 288 с..

89 Նույն տեղում՝ էջ 133:

90 Նույն տեղում՝ էջ 138 (Ն. Կինյայինան սխալմամբ պայմանագրի կնքմանը նախորդած բանակցությունների և պայմանագրի կնքման ժամանակ Ա. Գրիբոյեդովին ներկայացնում է որպես Ռուսաստանի պաշտոնական լիազոր անձ, մինչդեռ այդպիսի անձ հանդիսանում էր Ա. Օրբեակովը, իսկ Ա. Գրիբոյեդովն Բ. Պասկևիչի շտաբում արտաքին գործերի գրասենյակի կառավարիչ էր: Ն. Կինյայինայի աշխատանքից այն տպավորություն է ստեղծվում, առես բանակցությունները վարել և պայմանագրի կնքել է գլխավորապես Ա. Գրիբոյեդովը, որին «նախանձում էր» Բ. Պասկևիչը, ով ստիպված էր «ընդունել» նրա արձանիքները և հետո էլ Թուրքմենչայի պայմանագրի տեքստը Պետերբուրգ տանելու գործը վստահել էր նրան – Վ.Ս.):

91 Նույն տեղում՝ էջ 141:

92 История Ирана, Отв. ред-ор М.С. Иванов, Изд. Московского университета, Москва, 1977, 488 с..

82 Գրիբոյեդովի Ջ.Ս., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նշվ. աշխ., էջ 274:

83 Присоединение Восточной Армении к России, Сборник документов, նշվ. ժող., հ. II, 1814-1830, փաստ. № 49, էջ 73-74, № 171, էջ 286, 295, № 355, էջ 580-591, տես նաև՝ Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828гг., Сборник документов. Вестник архивов Армении 2(51), Ըլ. ред-ор А.О. Арутюнян, Центральный государственный исторический архив Арм. ССР (ЦГИА Арм ССР), Ереван, 1978, док. № 119, с. 149-150, № 139, с. 163-168, № 187, с. 248-250, № 189, с. 251-252.

84 Իգամբերդիև Մ.Ա., Իրան в международных отношениях первой трети XIX века, Изд-во Самаркандского Гос. Университета им. А. Навои, Самарканд, 1961, 297 с..

85 Նույն տեղում՝ էջ 240:

86 Նույն տեղում՝ էջ 241:

դային պաշտոնական տեսակետները: *Մասնավորապես նշվում է, որ Թուրքմենչայի պայմանագիրը կազմել է Ա.Գրիբոյեդովը⁹³, վերջինիս վախճանի հանգամանքներում մեղադրվում են իրանական հետադիմական հոգևորականությունը, շահն ու նրա պալատականները, իսկ առիթը համարվում է ռուսական դեսպանատանը հայ կանանց և ներքինի Միրզա-Յաղուբի գտնվելու հանգամանքը, ինչը Թեհրանի խաժամոժին գրգռելու նպատակով օգտագործվել է հանկապես անգլիացիների և Ալլահ-Յար խանի կողմից⁹⁴:*

Վերոնշյալ տեսակետներն առավել ընդարձակ կերպով ներկայացնում է նաև հետազոտող **Ն.Ա. Կուզնեցովան**⁹⁵:

Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանը նվիրված խորհրդային պատմագրության փուլը կարելի է ավարտել Լ.Մ. Արինշտեյնի երկու ուշագրավ հրապարակումներով⁹⁶, որոնցում, հղում կատարելով անգլիական և պարսկական աղբյուրներին, *հեղինակն առաջին անգամ առաջ է քաշում ոչ թե Պարսկաստանում անգլիական ամբողջ առաքելության և կառավարության, այլ միայն դրանց ընդգծված հակառուսական թևի մեղսակցության հարցը⁹⁷, ինչպես նաև մեջտեղ է բերում իրանական պատմագրության այն տեսակետը, ըստ որի՝ թեհրանյան ողբերգության մեջ կարևորվում է «հայկական գործոնը»: Հենվելով անգլիական հրապարակումներում կանադացի հետազոտող Էվլին Հարդենի արած «բացահայտումների» վրա՝ Լ. Արինշտեյնն առաջ է քաշում այն վարկածը, թե Միրզա-Յաղուբը եղել է անգլիացի դիվանագետներ Վիլյոբ եղբայրների և բժիշկ Մաքնեյի գործակալը, և որ Յաղուբի կողմից ռուսական դեսպանատանն ապաստան խնդրելը եղել է կազմակերպված սադրանք⁹⁸: Հենվելով արտահայտած վերոհիշյալ անապացույց տեսակետների վրա՝ Լ. Արինշտեյնը գրում է. «Պարսկաստանում ու նրա շուրջ ստեղծված խառը և բարդ իրավիճակի լրացուցիչ հանգամանքների վրա լույս սփռող ներկայացված փաստաթղթերը ևս մեկ*

ծանրակշիռ վկայություն են այն բանի օգտին, որ ռուսական դեսպանատան վրա շատ բանի 6-ի հարձակումը տարերային բռնկում և պարսկական կառավարության իրականացրած գործողություն չէր, այլ մանրակրկիտ ծրագրավորված սադրանք այն շրջանակների կողմից, ովքեր իրենց քաղաքականությունը կառուցում էին ժողովուրդների միջև աստելություն բորբոքելու և մի ժողովրդին մյուսի դեմ հրահրելու վրա»⁹⁹: **Լ. Արինշտեյնի հրապարակումը ևս հերթական յուրօրինակ փորձ է՝ արդարացնելու Ա. Գրիբոյեդովի թույլ տված վրիպումները:**

Հետխորհրդային շրջանի սկզբնական փուլում դեռևս շարունակում է զգացվել խորհրդային պատմագիտության ազդեցությունը: Այսպես, մեծավաստակ երջանկահիշատակ հետազոտող Ա.Հ. Քյուրբչյանը¹⁰⁰, խոսելով 1821-1823թթ. թուրք-իրանական պատերազմից առաջ Իրանում Ս. Մազարովիչի առաքելության կազմում Ա. Գրիբոյեդովի «չթույլատրված (չիրահանգավորված) ձեռնարկումների» և Օսմանյան Թուրքիայի դեմ Իրանի հետ համատեղ ելույթի գաղափարից պետերբուրգյան արքունիքի հրաժարվելու մասին, նշում է. «Մորհրդային պատմաբաններն ուշադրություն չեն դարձրել, որ երբ Մազարովիչն ու Գրիբոյեդովը ռուս-թուրքական պատերազմի հարցով դիմեցին Արբաս-Միրզային, նրանք չէին էլ կասկածում, որ արդեն այդ ժամանակ Արբաս-Միրզան Անգլիայի հետ այն բանի համար էր գիտակցարար գնում հարաբերությունների սրման, որպեսզի Ռուսաստանի դեմ պատերազմի համար Անգլիայից ստանա ռազմական և ֆինանսական օգնություն Թուրքիայի հետ հաշտություն կնքելու գնով... Այսպիսով, պարզվում է, որ 1821-1823թթ. իրանա-թուրքական պատերազմը և 1823թ. Էրզրումի հաշտությունը Ղաջարների կողմից օգտագործվեցին Ռուսաստանի դեմ փոխլրեժային պատերազմի համար այն դեպքում, երբ Թավրիզում ռուսական առաքելությունն ավելի շատ մտածում և երազում էր ապաստամբ (թուրքերի դեմ – Վ.Ս.) հույն ժողովրդի օգնության մասին»¹⁰¹: **Նշելով Ս. Մազարովիչի և Ա. Գրիբոյեդովի «չթույլատրված դիվանագիտության» շնորհիվ բռնկված թուրք-պարսկական պատերազմի ընթացքում ապաստամբած հույների հաջողությունների հանգամանքը՝ հետազոտողը դա համարում է Ա. Գրիբոյեդովի մեծագույն հաղթանակը¹⁰²: Այս տեսակետը խիստ վիճելի է:**

99 Արինշտեյն Լ.Մ., "Персидские письма...", նշվ. աշխ., էջ 133:

100 Кюркчян А.А., Русско-иранская война 1826-1828 (Новые концепции современной историографии), Изд-во АН Армении, Ереван, 1991, 208 с..

101 Նույն տեղում էջ 100-101:

102 Նույն տեղում:

93 История Ирана, Отв. ред-ор М.С. Иванов, Изд. Московского университета, Москва, 1977, էջ 232:

94 Նույն տեղում էջ 235:

95 Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, Изд-во "Наука", Главная ред-я Восточной литературы, Москва, 1983, с. 56-57, 60-65.

96 Аришштейн Л.М., "Новые данные об обстоятельствах гибели Грибоедова (по английским источникам)", "Русская литература", ИЛЖ, "Наука", Ленинградское отделение, Ленинград, 1981, №2, с. 225-233, նույնի "Персидские письма по поводу гибели Грибоедова", в книге А.С. Грибоедов. Материалы к биографии, Сборник научных трудов, Отв. ред-ор С.А. Фомичев, "Наука", Ленинград, 1989, с. 108-133.

97 Аришштейн Л.М., "Новые данные...", նշվ. հոդվ., էջ 232:

98 Նույն տեղում էջ 232-233:

Ա. Գրիբոյեդովի կյանքին և գործունեությանը նվիրված հետախույզ-
հրապարակային ժողովածուներից հարկ է նշել գրողի ստեղծագործական խըն-
դիրներին նվիրված ևս մեկը¹⁰³, որում ևս հրապարակումներ կան մեզ
հետաքրքրող թեմայի շուրջ:

Մ.Ա. Յակուբովան¹⁰⁴ ներկայացնում է **Ա. Գրիբոյեդովին իբր «չա-
փազանց մտերիմ ադրբեջանական շրջապատը»** և **խորհրդային ադր-
բեջանական պատմագրության ոգով քողարկված կերպով Ղարաբաղն
(Արցախը) ու Նախիջևանը դարձյալ ներկայացնում է որպես ադրբե-
ջանական տարածքներ, Ատրպատականը՝ Հարավային Ադրբեջան և
թվարկում է այն ադրբեջանցի անձանց (Աբբաս-Կուլի-աղա Բակիխա-
նով, Միրզա-Ջան Մադաթով (Շ), Ֆազիլ խան Շեյդա, Մեհտի-Կուլի
խան Ղարաբաղցի, Էքսան խան Նախիջևանցի, Շիհ-Ալի բեկ, Նազար-
Ալի խան Աֆշարցի և այլք), ովքեր մշակութային և դիվանագիտական
«սերտ» կապեր են ունեցել գրողի հետ՝ իր ներկայացրած «անհերքելի»
տեղեկությունները մեծամասամբ «համեմելով» «կարելի է ենթադրել»,
«կարելի է կարծել», «հնարավոր է» ենթադրական մոտեցումներով:**

Նույն ժողովածուի մեջ հետազոտող **Ե.Վ. Յիմբալը**¹⁰⁵ հրապարակում
է Թեհրանում ռուսական դեսպանական առաքելության տապալումից
հետո դեսպանի, նրա աշխատակազմի անդամների ու ծառաների իրե-
րի, նաև Ա. Գրիբոյեդովի գրադարանի գրքերի ցուցակը, որը Ղազվինից
Թավրիզ իրերը տեղափոխելուց հետո կազմել և Թավրիզի անգլիական
դեսպանատան միջոցով Պարսկաստանում Ռուսաստանի նորանշա-
նակ դեսպան Ն.Ա. Դոլգորուկովի իրերի հետ միասին փոխանցել էր
կոլեգիական ասեստր Ի. Մալցովը: Ե. Յիմբալը, ելնելով Ա. Գրիբոյեդո-
վի թողած գրքերի ցուցակից, եզրակացնում է. «Ա.Ս. Գրիբոյեդովի գրքերի
ցուցակը... մտորումների շատ առիթ է տալիս: Եվ թեկուզ դրանց գիտական
վերլուծությունը դեռ առջևում է, կարելի է վստահաբար ասել (— Վ.Ս.), որ
կյանքի վերջին տարիներին Գրիբոյեդովին համակել էր «պետական գաղա-
փարը»¹⁰⁶: Հեղինակը դրա ապացույց է համարում «Անդրկովկասյան
ընկերության» նախագիծը և նշում. «Գրիբոյեդովը սպասում էր նրա (Ի.
Պասկևիչի — Վ.Ս.) վճռին և պատրաստվում էր անմիջական գործունեության:

103 Проблемы творчества А.С. Грибоедова, 1994, №2, стр., 304 էջ:

104 Якубова М.А., "Грибоедов и его азербайджанское окружение", "Проблемы творчества А.С. Грибоедова", №2, стр., էջ 262-272:

105 Цимбал Е.В., "Посмертные документы грибоедовского посольства", "Проблемы творчества...", №2, стр., էջ 295-303:

106 Նույն տեղում՝ էջ 303:

Նրան հետաքրքրում էին պատմության հարցերը, պետության և իրավուն-
քի տեսությունները, քաղաքական փոփոխությունը, Արևելքի երկրների
պատմությունը և դրանց բնակիչների հոգեբանությունը. այդ ամենը կարող էր
պետք գալ գործնականում: «Անդրկովկասյան ընկերության» տեսքով Գրիբոյե-
դովը ձգտում էր պետության մեջ ստեղծել յուրօրինակ պետություն, որպեսզի,
ռուսական իշխանություններից հեռու գտնվելով, փորձեր իրագործել բարու և
արդարության սկզբունքներ, ինչպես ինքն էր հասկանում (— Վ.Ս.)¹⁰⁷:

Նույն ժողովածուի մեջ ընդգրկված հրապարակումներից արժե անդ-
րադառնալ հատկապես **Ն.Ե. Մյաստեդովայի**¹⁰⁸ հոդվածին, որում, **ան-
հիմն կերպով և փաստերն աղավաղելով, նա ջանքեր է գործադրում
վարկաբեկելու հայ ազգային գործիչներ Եղիազար և Քրիստափոր Լա-
զարյաններին ու նրանց համբավվոր տոհմը**: Հիշատակելով ավագ
եղբայր Քրիստափորին ուղղված Եղիազար Լազարյանի նամակները,
որոնցում վերջինս դրական կողմերով է բնութագրում Ա. Գրիբոյեդովին
և քննադատում է Ի. Պասկևիչին ու նրա շտաբի սպաներ Ի. Բուրցովին,
Մախնո-Ուստիմովիչին և այլոց՝ **հեղինակը վերոհիշյալ նամակները
համարում է նրանց հասցեին ուղղված «քաղաքական մատնություն», իսկ
Արտաքին գործերի կոլեգիայի պաշտոնյա Քրիստափոր Լազարյանին
համարում է III բաժանմունքի լրտես**¹⁰⁹: Ըստ **Ն. Մյաստեդովայի՝ Ի.
Պասկևիչը Ե. Լազարյանին Այսրկովկասից հեռացրել է իր ձեռքն ընկած
վերոհիշյալ հենց այդ նամակների պատճառով: Հեղինակը բավակա-
նին արգահատալից վերաբերմունք է դրսևորում նաև հայոց պատմութ-
յան և հայերի վերաբնակեցման վերաբերյալ աշխատությունների հեղի-
նակ Ս. Գլինկայի հետազոտությունների**¹¹⁰ **հանդեպ, և քանի որ դրանք
հրատարակել էին Լազարյանները, ապա կասկածի տակ դնելով դրանց
անաչառությունը՝ հեղինակը Ս. Գլինկային համարում է Լազարյան-
ների պատվերը կատարող**¹¹¹:

Հասկանալով, որ Ի. Պասկևիչը բացասական էր տրամադրված Ե.
Լազարյանի հանդեպ և առիթ էր փնտրում նրան հեռացնելու, իսկ Ա.

107 Цимбал Е.В., "Посмертные документы грибоедовского посольства", "Проблемы творчества...", №2, стр., էջ 303:

108 Мясоедова Н.Е., "Неизвестное письмо Грибоедова", Проблемы творчества..., №2, стр., էջ 272-284:

109 Նույն տեղում՝ էջ 276:

110 Глинка Сергей, Обзор истории армянского народа от начала бытия его до возрождения области Армянской в российской империи, ч. первая, В тип-и Лазаревых Института Восточных языков, Москва, 1832, 362 с., ч. вторая, 1833, 312 с., նույնի՝ Описание переселения армян азербайджанских в пределы России, с кратким предварительным изложением исторических времён Армении, В тип-и Лазаревых Института Восточных языков, Москва, 1831, 145 с..

111 Мясоедова Н.Е., "Неизвестное письмо...", №2, հոդվ., էջ 272:

Գրիբոյեդովն էլ գեներալի ցուցումով Ե. Լազարյանի գործունեության և անձի վերաբերյալ բացասական բնույթի գեկուցագիր էր հղում նրան¹¹²՝ Ն. Մյաստեդովան այդ գեկուցագիրն **անապացույց կերպով համարում է «ազնիվ մարդու» կողմից տրված անաչառ բնութագիր**, իսկ Ա. Գրիբոյեդովին գովաբանող Ե. Լազարյանի նամակը հակված է համարել **«քաղաքական մատնություն»**: Ն. Մյաստեդովայի կողմնակալ և միտումնավոր տեսակետներով այս **հրապարակումը կարելի է համարել «ազնիվ Գրիբոյեդովին» «անազնիվ հայերին» հակադրելու անհաջող փորձ կամ ադրբեջանական քաղաքական պատվերի շրջանակներում կատարված մտավարժանք**:

Հետխորհրդային սկզբնական շրջանի հետազոտող **Վ.Գ. Թունյանը**¹¹³, իր հերթին ընկնելով ծայրահեղության մեջ, արտահայտում է Ա. Քյուրքչյանի վերոբերյալ տեսակետներից տարբերվող այլ կարծիք՝ **նրշելով, որ Ս. Մազարովիչի և Ա. Գրիբոյեդովի այսպես կոչված «չթույլատրված դիվանագիտությունը», այնուամենայնիվ, իրականում գեներալ Ա. Երմոլովի միջոցով հրահանգավորված էր Ռուսաստանի բարձրագույն իշխանության կողմից, և գեներալն ամենևին էլ չէր շեղվել կենտրոնի ցուցումներից**: Շրջանցելով Գ. Նեսսելրոդի տված հստակ հրահանգների փաստը՝ նա նշում է. «Երմոլովյան դատողությունների ընդհանուր ուղղվածությունը հանդիսանում էր Ալեքսանդր I ցարի՝ Լայբախի վեհաժողովից հետո տված ցուցումների արդյունք, որոնք մշակվել էին արտաքին քաղաքականության գերատեսչության կողմից: Կովկասի կառավարիչը (Երմոլովը – Վ.Ս.) արտաքին քաղաքականության գերատեսչության և Պարսկաստանում գտնվող առաքելության միջև փոխանցող մեխանիզմի դեր խաղաց»¹¹⁴:

«Արևելյան քաղաքականության մեջ,- գրում է հետազոտողը,- Անգլիայի և Ռուսաստանի քաղաքատնտեսական շահերի բախումը, Պարսկաստանում ապրանքների իրացման հարցում եվրոպական երկրների շահագրգռվածությունը արտացոլեցին 1821-1823թթ. արևելյան ճգնաժամի հերթական փուլը: Եվրոպական քաղաքականության թատերաբեմում հունական հարցի շուրջ իրադարձությունների զարգացումների սպասումով ինքնակալությունը (ռուսական – Վ.Ս.) կարողացավ հանդես բերել ճկունություն և

ստիպեց Պարսկաստանին՝ Բարձր Դռան դեմ պատերազմել Արևմտյան Հայաստանի տարածքում (՝ – Վ.Ս.): Անդրկովկասյան տարանցիկ առևտրի բացումը հաջող գործողություն եղավ, ինչը հայ վաճառականներին թույլ տվեց ակտիվորեն մասնակցելու դրա աշխատանքներին... Մազարովիչ-Գրիբոյեդով տանդեմի (հերթազայության) մատուցած ծառայությունը եղավ տերունական նպատակների իրականացումը... Ռուս-պարսկական դաշինքի գործում ռուս դիվանագետների այդ տանդեմի մեջ առաջնորդող դերն անկասկած պատկանում էր Գրիբոյեդովին: Դա հաստատվում է Աբբաս-Միրզայի կողմից առաքելության քարտուղարին պարսից բարձրագույն՝ «Առյուծի և Արևի» շքանշանով պարգևատրելով և հավատարմատար Մազարովիչին առանց դրա (պարզևի – Վ.Ս.) թողնելով»¹¹⁵: **Փաստենք, սակայն, որ, ինչպես Պարսկաստանի կողմից Օսմանյան Թուրքիայի դեմ Ռուսաստանի ջանքերով պատերազմը հրահրելու շուրջ պնդումը, այնպես էլ այս վերջին մեկնաբանությունը համոզիչ չեն: Փաստված է, որ հենց Ս. Մազարովիչի ծառայությունն էր ամենից բարձր գնահատել Ա. Երմոլովը:**

Վկայակոչելով ռազմական պատմաբան Վ. Պոտտոյի այն համոզմունքը, որ 1821-1823թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ թեհրանյան արքունիքը և Աբբաս-Միրզան նպատակ են ունեցել իրացնելու «Հայկական նախագիծը», Վ. Թունյանն իրավացիորեն եզրակացնում է, որ նախևառաջ Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ էր իր նշանակությունը պահպանել «հայկական գործոնը», որը հունական ապստամբությունը ճնշելու ընթացքում թուլացնում էր սուլթանական վարչակարգը՝ նրանց համար իրական վտանգ ստեղծելով պարսկական ներխուժման տեսքով¹¹⁶: **Հետազոտողը, սակայն, առանց ապացույցի Ա. Գրիբոյեդովին է համարում պարսկա-թուրքական պատերազմին հանգեցնող ռուս-պարսկական դաշինքի ակտիվ նախաձեռնող:**

Լայբախից հետո Ալեքսանդր I-ի տված ցուցումների առումով Վ. Թունյանը նման կողմնակալ կարծիք է հայտնում նաև պարսկական իշխանություններից դժգոհ մահմեդական խաների և բնակչության հետ Ի. Պասկևիչի «կնքած գործարքների» շուրջ և գտնում է, **որ դրանք այս անգամ էլ կատարվել են Նիկոլայ I կայսեր ցուցումով**: Նա նշում է. «Ընդհանրացումը կառուցելու ժամանակ հետազոտողների տեսադաշտից

112 АКАК, в. VII, ф. 1, л. 623, ф. 647-649 (1828թ. հոկտեմբերի 1-ի՝ Ա. Գրիբոյեդովի պատասխան գրությունն Բ. Պասկևիչին):

113 Тунян В.Г., А.С. Грибоедов и Армения, кн. 2, с. 69 էջ:

114 Նույն տեղում՝ էջ 13:

310

115 Тунян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, кн. 2, с. 57:

116 Նույն տեղում՝ էջ 58-59:

դուրս են մնացել մի շարք փաստաթղթեր, որոնք կարևոր էին Ռուսաստանի քաղաքականությունն իրականացնելու մեջ Գրիբոյեդովին բնութագրելու համար: Այսպես կոչված «խաների հետ գործարքները» թույլատրել էր ինքը՝ Նիկոլայ I-ը¹¹⁷: Այսքանով հանդերձ՝ հետազոտողը չի ներկայացնում վերոհիշյալ պնդումը փաստող այն վավերագրերը, որոնք «դուրս են մնացել» ուսումնասիրողների տեսադաշտից:

Խոսելով Կարազիադինի և Դեհկարխանի բանակցությունների մասին՝ Վ. Թունյանը «ռազմական հակամարտություն – ոչ պաշտոնական շփումներ», «նախապատրաստական բանակցություններ – կոնֆերանսներ – հաշտություն» զարգացումների տեսանկյուններից Ա. Գրիբոյեդովի առաքելությունը գնահատում է հաջողված, ինչն իբր թույլ է տվել պատերազմող կողմերի կարծիքները «զոնդավորել» բարձր մակարդակով¹¹⁸: Հարկ է նշել, որ այս աշխատության մեջ Վ. Թունյանն արդեն ինչ-որ չափով խուսափում է Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը գերազնահատող նախկին բնութագրումներից: Այսպես, Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում գրողին նա ներկայացնում է ոչ թե որպես այդ պայմանագիրը կազմող, այլ դրա խմբագիր, չի առաջադրում հայանպաստ հողվածներն Ա. Գրիբոյեդովի կողմից ներառած լինելու հարցերը, չի թերազնահատում բանակցությունների ընթացքում Ա. Օբրեսկովի գործունեությունը¹¹⁹, չի ընդգծում պարսկահայերի ներգաղթի գործում Ա. Գրիբոյեդովի բացառիկ դերակատարումը, սակայն, վերջինիս վախճանի հանգամանքների խնդրում հարգարժան հետազոտողը նույնպես հակված է պնդելու, թե. «Թեհրանյան ղեկավարության ջախջախումն Ի. Պասկևիչը դրեց (բարդեց – Վ.Ս.) «Թեհրանյան խաժամուժի սանձարձակության և ցատումի վրա»: Կատարվածում Թուրքիայի, Անգլիայի և Պարսկաստանի փոխվրեժային (ռեվանշիստական) կուսակցության շահագրգռվածությունը դուրս մնաց»¹²⁰:

Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը գերազնահատել շարունակող հետազոտողներից է նաև Օ.Վ. Օռլիկը¹²¹: Բարձր

գնահատելով գրողի վաղ շրջանի դիվանագիտական գործունեությունը՝ Օ. Օռլիկը գրում է. «Արդեն իր դիվանագիտական ծառայողական վերելքի սկզբում, զբաղեցնելով առաքելության քարտուղարի համեստ պաշտոնը, Գրիբոյեդովն իրեն դրսևորեց որպես բարդ իրադրություններում արագ և կշռադատված որոշումներ կայացնելու ընդունակ, ոչ սովորական դիվանագետ: Նրան հաջողվեց Ռուսաստանին անհրաժեշտ պայմանավորվածությունների հասնել պարսկական կողմից»¹²²: Փորձելով արդարացնել Ա. Գրիբոյեդովի և վերջինիս դեսպանակազմի անդամների պահվածքը՝ հեղինակը գրում է. «Գրիբոյեդովը հասարակ մարդ չէր, ինքնասեր և բռնկուն էր: Հնարավոր է, որ շահի մոտ պաշտոնական ընդունելության ժամանակ նա էթիկետի պահպանման հարցում թույլ էր տվել առանձին վրիպումներ, սակայն նա Պարսկաստանում ծառայելու մեծ փորձառություն ունեցող, նրա բարբերն ու սովորությունները լավ իմացող դիվանագետ էր, որպեսզի խախտեր պալատական էթիկետը (՝ - Վ.Ս.)... Առաքելության դիվանագիտական պաշտոնյաները և աշխատակիցներն իրենց պահել են արժանապատվորեն: Գուցեև բացառություն էին կազմում Ռուստամ բեկն ու Դադաշ բեկը... Դեսպանորդը դատապարտեց նրանց այդպիսի պահվածքը՝ Ռուստամ բեկին չներկայացնելով պարզևատրման»¹²³:

Նեղինակի վերոնշյալ կարծիքը բացահայտ կողմնակալ մտեցում է, քանզի նա շրջանցում է ականատեսների հայտնի վկայությունները: Թեհրանում ռուսական դիվանագիտական առաքելության կործանման հարցում Օ. Օռլիկը ևս դատապարտում է անգլիացիներին, քննադատում նրանց «հարեմային դիվանագիտությունը», առանց հիմնավորումների մեղադրում է սուլթանի դրածոներին և շահին¹²⁴: Քննադատելով կատարվածի հանդեպ ռուսական պաշտոնական վերաբերմունքը՝ Օ. Օռլիկը նշում է, որ, հանուն մեծ քաղաքականության, ցարական կառավարության կողմից Ա. Գրիբոյեդովը «սեփական դիվանագիտական անփորձություն և նույնիսկ անտաղանդություն» ցուցաբերելու որակավորմամբ հայտարարվեց թեհրանյան ողբերգության մեղավոր¹²⁵:

Կարևորելով վերոհիշյալ «Ռազմագեղարվույց»-ի («Реляция») տեղեկությունները՝ հետազոտող Վ. Յարխուն¹²⁶ այլ դիրքերից է գնահատում

122 Орлик О.В., Государственные люди России первой половины XIX века: пути и судьбы. Изд. 2, т. 1, с. 184:

123 Նույն տեղում՝ էջ 197-198:

124 Նույն տեղում՝ էջ 196:

125 Նույն տեղում՝ էջ 188:

126 Ярхо Валерий, "Трибедов и евнухи", "Огонёк", Общественно-научный еженедельный иллюстрированный журнал, Москва, 2002, № 47 (4775), ноябрь 25, с. 28-31.

117 Тунян В.Г., А.С. Трибедов и Армения, Изд. 2, т. 1, с. 25:

118 Նույն տեղում՝ էջ 25:

119 Նույն տեղում՝ էջ 59:

120 Նույն տեղում (նախորդ գլխում նշել ենք, որ Վ. Թունյանը նաև մի նոր, անպայացույց վարկած է առաջադրում այն մասին, որ Ա. Գրիբոյեդովին կարող էին ոչնչացնել տալ Պարսկաստանում գործող անգլիացիները՝ Ի. Պասկևիչին Ա. Գրիբոյեդովի ներկայացրած «Հարավային ծայրամասի տարածքային սահմանագծման այլընտրանքային ծրագիր», այսինքն՝ Բաթումը նվաճելուց հետո, դրան պորտաֆրանկոյի կարգավիճակ տալու գաղափարն առաջադրելու համար):

121 Орлик О.В., Государственные люди России первой половины XIX века: пути и судьбы. Инст-т Российской истории РАН, –Москва: 2000, 270 с.,

թեհրանյան իրադարձությունները: **Հարկ է նշել, որ Վ. Յարխոյի արտահայտած տեսակետները որոշակիորեն ծայրահեղ են և թողնում են պատշաճ չհիմնավորված վարկածների տպավորություն:** Այսպես, խոսելով անգլիական դիվանագիտության դերի մասին և չնշելով Պարսկաստանում անգլիացի որոշ ռուսատյաց (բայց ոչ Անգլիայի պետական) գործիչների շահագրգռություններն ու փաստերով չհիմնավորելով իր տեսակետը՝ **Վ. Յարխոն անգլիացիներին արդարացնելու համար նշում է, որ դեպքերը սադրել են ոչ թե Պարսկաստանի աշխարհիկ, այլ հոգևոր գործիչները, և որ նրանց համար անգլիացիները ռուսների նման նույն «գլավորներն» էին:** «Անգլիացիների ազդեցությունը,- գրում է նա,- խոսվության գլուխ կանգնած Միրզա-Մեսիհի պարսկական շարիաթի դատարանի վրա մոտավորապես նույնն էր, ինչ Ռուսաստանում թաթար վաճառականներին՝ ռուսական միտրոպոլիտի վրա»¹²⁷: **Սա ևս միակողմանի ու թերի մոտեցում է:**

Վ. Յարխոն պնդում է, որ անգլիացիներին ձեռնտու էր Ա. Գրիբոյեդովի առաքելության հաջողությունը (Պարսկաստանի գանձարանի դատարկումը ստիպելու էր շահին երկիրը «նստեցնել անգլիական նպաստների» վրա, ինչի հետևանքով ապագա իր քաղաքականությունը Պարսկաստանը կապելու էր Մեծ Բրիտանիայի շահերին¹²⁸: **Հետագոտողը թեհրանյան իրադարձություններում ոչ անմիջական կերպով առաջ է քաշում «հայկական գործոնը»՝ կատարվածում մեղադրելով Միրզա-Յաղուբին, իսկ հարեմի նախկին կառավարիչ Մանուշար խանին անապացույց կերպով համարում է անգլիացիների կողմնակից:** Նրա կարծիքով չի բացառվում, որ **Գրիբոյեդովը, գայթակղվելով Մանուշար խանին դիրքով համարյա հավասար մեկին պարսկական տարածքներից դուրս բերելու հնարավորությունից, փորձել է օգտվել եթե ոչ նրա ազդեցությունից, ապա գոնե այդ մարդու գիտելիքներից**¹²⁹:

Որոշ դեպքերում իրադարձությունները ներկայացնելով յուրովի և չնշելով աղբյուրներ՝ Վ. Յարխոն Ա. Գրիբոյեդովի գործունեության վերաբերյալ ձևավորված քրեատումատիական որակումները համարում է «**ոչ այնքան բացահայտ բաներ քողարկող լեզուներ ու առասպելներ**» և փորձում է **Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի տարօրինակ պահվածքը**

127 Ярко Валерий, "Грибоедов и евнухи", с. 27, հոդված, էջ 28:

128 Նույն տեղում՝ էջ 28-29:

129 Նույն տեղում՝ էջ 29:

բացատրել դիվանագիտական ծառայությունից ամեն գնով վերջինիս խուսափելու և ազատվելու ձգտմամբ: Նա գրում է, որ **Պարսկաստանում նրա վարքագիծը ամեննին էլ պատահական սխալմունք չէր. ամեն ինչ կանխամտածված էր, և Գրիբոյեդովն անշեղորեն իրականացնում էր պահվածքի այդ գիծը:** **Պարսիկների սովորույթների և կարգերի հանդեպ արհամարհանքը, վրացական իշխանների և իր կաթնեղբոր (Ալեքսաշա Գրիբովի - Վ.Ս.) «չարածնիությունները» կոծկելն այլ տեսանկյունից դիտարկող հեղինակը դրանք համարում է համարձակ խաղեր**¹³⁰:

Հետխորհրդային վրաց պատմագիտության մեջ շարունակվում են խորհրդային ժամանակաշրջանի տեսակետները պաշտպանող հրապարակումները: **Հետագոտող Լուիզա Շենգելիան** վրաց պատմագիտության պաշտոնական տեսակետներն արտահայտող «Վրացական դիվանագիտության տարեգրություն» ժողովածուի մեջ հրատարակած իր հոդվածում¹³¹ **Ա. Գրիբոյեդովին ներկայացնում է ռուսական ցարական կառավարության և Պարսկաստանի Վաջարների արքայատոհմի հանցավոր ծրագրերի զոհ:** **Պարսկական կողմից այդ ծրագիրը, ըստ նրա, դեկավարում էին Ֆաթեհ-Ալի շահը, գահաժառանգ Աբբաս-Միրզան, ինչպես նաև հետադիմական շիա հոգևորականությունն ու հակառուսական տրամադրությունների տեր արքունականները:** **Ըստ հեղինակի՝ ռուսական ցարիզմը, հակառակ իր իսկ շահերի, մերժել էր Ա. Գրիբոյեդովի տնտեսական, դիվանագիտական և ռազմական ծրագրերը, ինչով Ա. Գրիբոյեդովին զրկել էր ամեն տեսակի աջակցությունից:** **Լ. Շենգելիան գտնում է, որ Ա. Գրիբոյեդովը Պարսկաստանում դրսևորել է զգուշություն, հեռատեսություն և իր պարտականությունները կատարել է արժանապատվորեն:**

Վրաց հեղինակի տեսակետները, ինչպես տեսնում ենք, ևս թերի են և միակողմանի:

Դիվանագիտության և Իրանի պատմության վերաբերյալ հետխորհրդային որոշ հրապարակումներում¹³² **բացակայում են ոչ միայն Ա.**

130 Ярко Валерий, "Грибоедов и евнухи", с. 27, հոդված, էջ 31:

131 *ლუიზა შენგელიძე გობოვდოვის ტრაგიკული მკვლელობა თეირანში* (Լուիզա Շենգելիա, «Գրիբովի ողբերգական սպանությունը Թեհրանում» - Վ.Ս.) *ქართული დიპლომატიის წულოვლეულობა 98 თვანე ჯეჯახიშვილის სახელობის თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის ქართული სახელმწიფო და სახელმწიფო დიპლომატიის ისტორიის სამეცნიერო კვლევითი ცენტრის შთავაზი რედაქციის მიერ* *მეცნიერული თბილისი 2002 წელი 452-479*

132 История дипломатии, Отв. ред.-ор О.Ю. Клокова, ООО "Издательство АСТ", Москва, 2006, т. 1, 943 с., տես նաև История Ирана, Сост.-ели Шумов С.А., Андреев А.Р., Альтернатива-Европинц, Киев-Москва, 2003, гл. I, с. 53-62 (358 с.).

Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության, այլև ուսումնասիրվող փուլում ռուս-պարսկական հարաբերությունների և Թուրքմենչայի պայմանագրի մասին հիշատակումները:

Հետխորհրդային հայ հեղինակներից Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն է անդրադառնում Վ. Բայբուրդյանը¹³³, որն ընդհանրապես չի հիշատակում Թուրքմենչայի պայմանագրի կնքման և իրանահայերի ներգաղթի գործում Ա. Գրիբոյեդովի դերակատարությունը: Ելնելով իր աշխատության ժամանակաշրջանային լայն ընդգրկումից ու նպատակներից և դրա համար էլ չխորանալով թեևրանյան ողբերգության պատճառներում և մեղավորների ցուցահանման հանգամանքներում՝ Վ. Բայբուրդյանը նշում է միայն, որ Իրանի պարտությունից հետո ստեղծված իրավիճակից դժգոհ իրանական հասարակության բոլոր խավերի «գայռոյթն ու ցասումը վարպետորեն ուղղվում էին Ռուսաստանի և Իրանում նրա ներկայացուցիչների, մասնավորապես դեսպանորդ Ա. Գրիբոյեդովի դեմ»¹³⁴: Ըստ հետազոտողի՝ դրան, չնայած որոշակի զիջումների գնալու մասին Ա. Գրիբոյեդովի կատարած թախանձագին դիմումներին, նպաստում էր նաև ցարական իշխանությունների դիրքորոշումը՝ ոչ մի բանում զիջումների չգնալու մասին: Մոլեռանդ հոգևորականության քարոզչության հետևանքով դեսպանակազմի դեմ խաժամոժի գրգռվելու առիթը ևս հեղինակը պայմանավորում է Միրզա-Յաղուբի և Ալլահ-Յար խանի հարեմի կանանց՝ ռուսական դեսպանատանը պահելու հանգամանքով¹³⁵: Կատարվածում անգլիացիների և թուրքերի դերակատարության մասին Վ. Բայբուրդյանը ոչինչ չի ակնարկում:

Հետխորհրդային հայ ուսումնասիրողներից ուշագրավ է Ավիկ Իսահակյանի հրապարակումը¹³⁶: Հետևելով խորհրդային ժամանակների կարծրատիպերին՝ հեղինակը շարունակում է գերադրական տոներով արտահայտվել Ա. Գրիբոյեդովի գործունեության մասին: «Հատկապես նա,- գրում է Ավ. Իսահակյանը,- այն փուլում մասնակցեց ռուս-պարսկական ճակատի ամենաբարդ և պատասխանատու տեղամասում Ռուսաստանի արտաքին քաղաքականության ռազմավարության, ինչպես նաև Ռուսաստանի

133 Բայբուրդյան Վահան, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Հայաստանի գիտությունների Ազգային ակադեմիա, Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, 784 էջ:

134 Նույն տեղում՝ էջ 429:

135 Նույն տեղում՝ էջ 428-430:

136 Исаакян Авик, "А.С. Грибоедов и Армения", ИФЖ, Национальная Академия наук РА, Ереван, 2005, №1 (168), с. 141-159.

հարավային դաշնակիցներ Վրաստանի և Հայաստանի հետ հարաբերությունների մշակման գործին»¹³⁷:

Հեղինակը գտնում է, որ Ա. Գրիբոյեդովի խորհրդով է Ի. Պասկևիչը հավանություն տվել հայկական և վրացական աշխարհագրի մարտական ջոկատների կազմակերպմանը¹³⁸: Պարսկահայերի ներգաղթի առնչությամբ Ավ. Իսահակյանը նշում է, որ դրա նախագիծն Ա. Գրիբոյեդովը սկսել էր մշակել դեռևս 1827թ.՝ Ի. Պասկևիչի դիվանագիտական գրասենյակում ծառայելու ժամանակ, իսկ հետագայում, ունենալով հայերի օջակցությունը, նա այդ հարցը բարձրացրեց Գեեկարխանի կոնֆերանսում (Մ - Վ.Ս.): Հղում կատարելով Ս.Վ. Շոստակովիչի հրապարակմանը՝ Ավ. Իսահակյանը ևս հակված է Ա. Գրիբոյեդովին համարել հայանպաստ հողվածների հեղինակ¹³⁹: Հիշատակելով հայերի ներգաղթի հարցով Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. հոկտեմբերի 1-ի հայտնի զեկուցագիրն Ի. Պասկևիչին՝ հեղինակն առանձնացնում և կարևորում է այն հատվածը, որում Ա. Գրիբոյեդովը բարձր էր գնահատում միայն Մ. Արղության-Երկայնաբազուկի և Ղամազյանի դերակատարությունը: Մինևույն ժամանակ, սակայն, նա չի հիշատակում Ե. Լազարյանի հանդեպ Ա. Գրիբոյեդովի բացասական մոտեցումների և Նախիջևանի մարզի մահմեդական բնակչությանը հանգստության մեջ պահելու նպատակով այնտեղ վերաբնակեցված հայ ներգաղթյալների 500 ընտանիքների բռնի տեղահանելու և Գարալագյազի (Վայք) ամայի շըրջաններում վերաբնակեցնելու առաջարկների մասին¹⁴⁰: Ուսումնասիրողը չի ներկայացնում նաև պարսկահայերի ներգաղթի գործում Ա. Գրիբոյեդովի բովանդակային մասնակցությունը փաստող որևէ վավերագիր:

Մինևույն ժամանակ արդարացիորեն և հիմնավորապես քննադատելով վերոհիշյալ Ն. Մյաստեղովայի կողմից պատմական փաստերն աղավաղելու ազդեցականամետ ջանքերը¹⁴¹՝ Ավ. Իսահակյանն անդրադառնում է Ա. Գրիբոյեդովի ողբերգական վախճանի հանգամանքներին և իր հերթին առաջին հարթություն է մղում, այսպես կոչված, թուրքական գործունը՝ ընդգծելով, որ ռուս-պարսկական հա-

137 Исаакян Авик, "А.С. Грибоедов и Армения", ИФЖ, Национальная Академия наук РА, Ереван, 2005, №1 (168), էջ 142:

138 Նույն տեղում՝ էջ 143:

139 Նույն տեղում՝ էջ 148:

140 Նույն տեղում՝ էջ 149:

141 Նույն տեղում՝ էջ 151-156 (տես նաև՝ Мясоедова Е.Н., "Неизвестное письмо", նշվ. հոդվ., էջ 272-285):

բարերությունների կրկին վատացման գործում ամենաշահագրգռված կողմն Օսմանյան Թուրքիան էր: «Կոստանդնուպոլսում օսմանյան ռազմավարները,- գրում է ծայրահեղությունների մեջ ընկնող հեղինակը,- մշակեցին պարսկական մայրաքաղաքում ռուսական ներկայացուցչության դեմ մահմեդական մոլեռանդներին ոտքի հանելու, կրոնական հիստերիա բորբոքելու, դեսպանակազմը և առաջին հերթին Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության գլխավոր մշակողը (Մ - Վ.Ս.), դեսպանորդ-նախարար, քաղաքական գործիչ և ռազմավար (ՄՄ - Վ.Ս.) Ա.Ս. Գրիբոյեդովին ֆիզիկապես ոչնչացնելու ծրագիրը...»¹⁴²:

Չնշելով, թե անգլիական ու թուրքական կոնկրետ ինչ ծրագրերի և աղբյուրների մասին է խոսքը և առանց մանրամասնությունների ու ծանոթությունների հիշատակելով ֆրանսիացի հետազոտող ոմն դ'Անրարի տեսակետը (ըստ որի՝ թեհրանյան ողբերգության մանրամասներն իբր պետք է որոնել Օսմանյան Թուրքիայի Արտաքին գործերի դիվանի արխիվներում)՝ Ավ. Բահակյանը եզրակացնում է. «Հայկական շրջանակները Գրիբոյեդովի անվան հետ էին կապում Օսմանյան Թուրքիայի ձեռքում մնացած Արևմտյան Հայաստանի պատմական հողերն ազատագրելու իրենց հույսերը: Գրիբոյեդովի անվան հետ էին կապում Հայաստանի վերջնական ազատագրության և նրա երկու հատվածների միավորման հույսերը: Սակայն, ցավոք, բախտ չէր վիճակված այդ հույսերին իրականություն դառնալու. հանդիպելու Թուրքիան ճակատագրական դեր խաղաց Գրիբոյեդովի վախճանի մեջ»¹⁴³:

Հետազոտողի հանդիպելու վերջին անապացույց պնդումները ցանկալին իրականության տեղ մատուցելու անհաջող փորձեր են:

Ա. Գրիբոյեդովի կյանքին և ստեղծագործություններին նվիրված ժողովածուներից հարկ է նշել **Երևանի պետական լեզվաբանական համալսարանի հրատարակած ժողովածուն**¹⁴⁴, որում գրողի դիվանագիտական գործունեությունը ներկայացնող հոդվածներով հանդես են գալիս **Ս.Ա. Մարգարյանը**¹⁴⁵ **և Ա. Հաբեշյանը**¹⁴⁶, **Ե. Շվարցը**¹⁴⁷, **Ս. Նալբանդյանը և Ս. Աղաբալյանը**¹⁴⁸: Այդ հրապարակումներում շարունա-

կում է զգացվել խորհրդային պատմագիտության ազդեցությունը:

Քննադատելով մեր կողմից արդեն հիշատակված հետազոտող Վ. Յարխոյի տեսակետները, որոնցում մեղադրանքներ էին հնչեցվում Ա. Գրիբոյեդովի գործունեության և Իրանում վերջինիս պահվածքի վերաբերյալ, իսկ առաքելության տապալման գործում էլ երկրորդական հարթություն էին մղվում կատարվածում անգլո-թուրք-իրանական կողմերից բխող քաղաքական դրդապատճառների հարցերը՝ **Ս. Մարգարյանը** գրում է. «Ա.Ս. Գրիբոյեդովը զոհ դարձավ Ռուսաստանի, Անգլիայի և Իրանի դիվանագիտական մեծ խաղին»¹⁴⁹: Շարունակելով միտքը՝ հեղինակը նշում է, որ **Թուրքմենչայի պայմանագրի կազմման գործում միմիայն իր մասնակցությամբ նա դիվանագետի իր անունը թողեց պատմության տարեգրություններում, և որ**, նրա մասնագիտական բարձր համապատասխանության և կրթվածության վերաբերյալ ոչ մի կասկած չի կարող՝ ելնելով թեկուզև այն հոդվածների բովանդակությունից, որոնք կազմվել են նրա կողմից (ՄՄ - Վ.Ս.)¹⁵⁰:

Հետազոտող Ա. Հաբեշյանը, նույնպես ընկնելով ծայրահեղությունների մեջ, **Ս. Մարգարյանի առաքելության կազմում Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական ծառայությունը Պարսկաստանում համարում է «հակաիշխանական հայացքներ ունենալու համար պարտադրված արքայ», իսկ նշանակման առիթը վերագրում է «Վ. Շերեմետև – կոմս Զավադովսկի մենամարտին նրա մասնակցության» հանգամանքին**¹⁵¹: Խոսելով ձեռքբերվածությունից հետո 1826թ. սեպտեմբերին Ա. Գրիբոյեդովի Թիֆլիս վերադառնալու մասին՝ հեղինակը եզրակացնում է. «Հաշվի առնելով, որ արդեն սկսվել էր ռուս-պարսկական պատերազմը, կարելի է ենթադրել, որ այնտեղ Ռուսաստանը հմուտ դիվանագետի կարիք էր զգում, ուստի, հենց այդ ժամանակ Գրիբոյեդովին մեղադրանքներ (դեկաբրիստների գործով – Վ.Ս.) ներկայացնելուց հրաժարումը պատահական չէր»¹⁵²: **Հողվածագիրը ևս պնդում է, որ հայանպաստ հողվածները Թուրքմենչայի պայմանագրում ներառելն Ա. Գրիբոյեդովի ջանքերի արդյունք էր, և որ «դա, բացի մարդասիրական լինելուց, ավելի շատ քաղաքական նպատակներ էր հետապնդում»:** «Խրախուսելով հայերի ներգաղթը գրավված տարածքներ,-

142 Исаакян Авик, "А.С. Грибоедов и Армения", նշվ. հոդվ., էջ 157:

143 Նույն տեղում՝ էջ 158:

144 Грибоедовские чтения, Вып. I, ЕГЛУ им. В. Брюсова, ЛИНГВА, Ереван, 2009, 185 с.

145 Նույն տեղում՝ Маркрян С.А., "Тибель русской миссии в Иране и убийство А.С. Грибоедова", էջ 108-120:

146 Նույն տեղում՝ Հաբեշյան Արթուր, «Ա. Գրիբոյեդովը և ռուս-պարսկական հարաբերությունները», էջ 121-129:

147 Նույն տեղում՝ Шварц Е.А., "Иран на перекрестке великих держав XIX века", էջ 94-107:

148 Նույն տեղում՝ Налбандян С.Р., Агабалян С.А., "А.С. Грибоедов и его роль в развитии армяно-русских культурных и дипломатических отношений", էջ 149-159:

149 Грибоедовские чтения, նշվ. ժող., Маркрян С.А., "Тибель русской миссии в Иране и убийство А.С. Грибоедова", նշվ. հոդված, էջ 116:

150 Նույն տեղում՝ էջ 119:

151 Նույն տեղում՝ Հաբեշյան Արթուր, «Ա. Գրիբոյեդովը և ռուս-պարսկական հարաբերությունները», նշվ. հոդված, էջ 122:

152 Նույն տեղում՝ էջ 125:

գրում է հեղինակը,- Ռուսաստանն ապահովում էր այդ տարածքների անվտանգությունը, քանի որ մահմեդական Պարսկաստանը հազիվ թե կարողանար քրիստոնյա հայերին... հրահրել Ռուսաստանի դեմ»¹⁵³:

Չներկայացնելով կատարվածի պատճառներն ու առիթը՝ Ա. Հաբեշյանն Ա. Գրիբոյեդովի վախճանի վերաբերյալ կատարում է բավականին անհեթեթ փեղրակացություն. «Չնայած նրա առաքելությունը ողբերգական ավարտ ունեցավ, այնուամենայնիվ կարևոր քայլ կատարվեց ռուս-պարսկական հարաբերությունների ձևավորման և բարելավման գործում, ինչով էլ անմահացավ Ա. Գրիբոյեդովի՝ մեծ հայրենասերի և հմուտ դիվանագետի անունը»¹⁵⁴:

Արդի հետազոտող Ե. Շվարցը նույնպես գերազնահատում է Ա. Գրիբոյեդովի բացառիկ դերը Թուրքմենչայի պայմանագրի ձևակերպման, ինչպես նաև Ռուսաստանի համար առավել ձեռնտու սահմանների և Իրանի կողմից խոշոր ռազմատուգանքի վճարման հարցում¹⁵⁵: «Շատ բաներում,- գրում է Ե. Շվարցը,- Գրիբոյեդովի համառության և հմուտ դիվանագիտության շնորհիվ Ռուսաստանին հաջողվեց պահել Էջմիածինն ու Նախիջևանի մարզը (- Վ.Ս.)... Նաև պետք է նշել, որ պայմանագրի կարևոր կետն Իրանից դեպի Ռուսական կայսրության տարածքներ հայերի անվտանգ ներգաղթն էր»¹⁵⁶: Նշելով անհաջող ու հյուժիչ պատերազմից հետո Պարսկաստանի հասարակության բոլոր խավերի շրջանում ծայր առած դժգոհությունները և իշխող շահի դեմ ուղղված խաների խարդավանքները՝ Ա. Գրիբոյեդովի վախճանի հարցում Ե. Շվարցը ևս թեհրանյան ողբերգության առիթը համարում է ռուսական դեսպանատանը հայ ներքինու և Ալլահ-Յար խանի երկու կանանց պահելու հանգամանքը, որը, ըստ հեղինակի, դեսպանի կողմից կատարված լիովին օրինական գործողություն էր: Նա ևս ընդունում է թեհրանյան դեպքերում անգլիացիների խաղացած կարևոր դերակատարությունը: «Իրանի ապագա պատմության տեսանկյունից,- գրում է հեղինակը,- արժե նաև ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ օտար տերությունների ներխուժմանն ի պատասխան՝ Գրիբոյեդովի սպանությունը դարձավ կրոնական վերելքի առաջին դրվագներից մեկի հետևանքը: Հետա-

գայում կրոնական արմատականացումը (ֆունդամենտալիզմը - Վ.Ս.) Իրանի համար կունենա ավելի աճող (ահագնացող - Վ.Ս.) նշանակություն»¹⁵⁷:

Հարց է առաջանում. իսկ ո՞ւմ սպանությունն է պայմանավորել խլամական արմատականացումն ու լայնածավալ ահաբեկչություններն արդի աշխարհում:

Թուրքմենչայի պայմանագրում Ա. Գրիբոյեդովի կողմից հայերի ներգաղթը երաշխավորող հողվածք մտցնելու բացառիկ ջանքերի մասին են արտահայտվում նաև հետազոտողներ Ս.Ռ. Նաբաևոյանն ու Ս.Ա. Աղաբալյանը¹⁵⁸: Գերադրական աստիճանով ներկայացնելով Ա. Գրիբոյեդովի գործունեությունը, նրա վերաբերմունքն ու հարգանքը կովկասյան ժողովուրդների, ինչպես նաև տեղական ժողովուրդների սովորույթների ու բարքերի նկատմամբ՝ հեղինակները մինևույն ժամանակ ստիպված են ընդունել Ա. Գրիբոյեդովի մեծապետական պահվածքի հանգամանքները Թեհրանում: «Երբեմն,- գրում են նրանք,- իր գերազանցությունը շահին ցուցադրելու ձգտման մեջ նա, որքան հնարավոր է քիչ հարգանք ցուցաբերելով շահին, խախտում էր շահական արքունիքի էթիկետը՝ մեկ իր հովանավորության տակ վերցնելով հարեմի հայազգի կառավարչին, մեկ էլ՝ հարեմի բնակչուհիներին, եթե նրանք ռուսահպատակ էին (- Վ.Ս.) և փնտրում էին ռուսական դեսպանի պաշտպանությունը... Բայց, ցավոք, կողմնակի շուկներից գրգռված՝ Գրիբոյեդովը երբեմն գործում էր չափազանց անզգույշ: Այդ սխաներից օգտվեցին անգլիական դիվանագետները, որպեսզի արքունական շրջանակներում ատելություն բորբոքեն դեսպանի նկատմամբ, իսկ հոգևոր դեմքերը ժողովրդի շրջանում աջակցում էին ատելության սերմանմանը»¹⁵⁹:

Ուշագրավ է հետազոտող Ի. Սուխովի հրապարակումը¹⁶⁰, որում, վերապատմելով Ա. Գրիբոյեդովի կյանքի դրվագները և երբեմն աղավաղելով թեհրանյան իրադարձություններն ու առանձին անձանց անուններ, հեղինակը գրում է. «Եթե ընթերցենք գրիբոյեդովյան կենսագրությունը, կպարզվի, որ նա միշտ առավելապես զինվոր ու դիվանագետ էր, քան գրող»¹⁶¹: Հեղինակը ևս հիշատակում է գիտական շրջանակների այն բանավեճը, թե արդյո՞ք անկեղծ էր դեսպանատանն ապաս-

157 Грибоедовские чтения, №24, 2011, Шварц Е.А., №24, 2011, էջ 101:

158 Նույն տեղում՝ Налбандян С.Р., Агабалян С.А., "А.С. Грибоедов и его роль...", №24, 2011, էջ 149-152:

159 Նույն տեղում՝ էջ 157 (Միրզա-Յաղոբին ներկայացնում են որպես հարեմի կառավարիչ):

160 Сухов И., "Солдат "большой игры". Тайны гибели российского посла в Персии А. Грибоедова", 2009, 26-27 февраля, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1235710980>

161 Նույն տեղում:

153 Грибоедовские чтения, №24, 2011, Маркрян С.А., "Тибель русской миссии в Иране и убийство А.С. Грибоедова", №24, 2011, էջ 127:

154 Նույն տեղում՝ էջ 128:

155 Նույն տեղում՝ Шварц Е.А., "Иран на перекрестке...", №24, 2011, էջ 100:

156 Նույն տեղում (Ե. Շվարցը զուգահեռաբար օգտագործում է և՛ Իրան և՛ Պարսկաստան անվանումները):

տան խնդրած Միրզա-Յաղուբի ցանկությունը, թե՛ դեսպանատունը ենթարկվել էր շահի արքունիքում գործող անգլիական «բազենների» և Անգլիայի հետ հարաբերությունները զարգացնել ձգտող պալատական մեծատոհմիկների կազմակերպած հարձակման սադրանքին, սակայն հենց ինքը հարցի առնչությամբ չի ներկայացնում իր կարծիքը: **Ըստ Ի. Սուխովի՝ տեղի ունեցածում որպես «գաղանի բենեֆիցիար» կարող էր հանդես գալ նաև Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ գտնվող Թուրքիան: Վերջում հեղինակն Ա. Գրիբոյեդովին համարում է գերտերություններ Անգլիայի, Ռուսաստանի և մյուսների՝ Ասիայում ազդեցություն հաստատելու համար «փակ աչքերով» ձեռնարկած շախմատային «մեծ խաղին» զոհաբերված զինվոր¹⁶²:**

Շրջանցելով անվանի թյուրքագետների հետազոտությունները¹⁶³, ադրբեջանական նորոյա զեղծարարները քաղաքական նպատակներ հետապնդելու, համաշխարհային հասարակությանն ապակողմնորոշելու և հայության դեմ տրամադրելու միտումով փորձում են վերածնել պատմությունը¹⁶⁴:

Ազգային կամ էթնիկ պատկանելության հարցերում ցայսր չկողմնորոշվող և իրար բզկտող ադրբեջանական «գիտնականները»¹⁶⁵ նեն-

162 Сухов И., "Солдат "большой игры". Тайны гибели российского посла в Персии А. Грибоедова", 2009, 26-27 февраля, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1235710980>

163 Երևան Դ.Է., Թուրքերի ծագումը (Օազումը և Էթնիկական պատմության հիմնական էտապները), «Հաշտակ», Երևան, 1975, էջ 67-97, Шнирельман В.А., "Подделки и альтернативная история" – в кн. "Фальсификация исторических источников и конструирование этнокрагических мифов", М. 2011, նույնի Ну, зачем же приписывать господствующие в Азербайджане взгляды "мировой науке"?, <http://www.regnum.ru/news/1624198.html>, նույնի "Албанский миф", <http://www.vehi.net/istoriya/armenia/albanskymif.html>

164 Ризван Гусейнов, "Большой Азербайджан в российских, европейских и иных источниках" – ч. 7, Информационно-политический сборник, <http://www.rizvanhuseynov.com/2012/10/7.html>; Атаев Т., Армянский буфер для империи Романовых, <http://www.islamnews.ru/news-138730.html>, նույնի До "Геноцида" или документально-реальный взгляд на предисторию Карабахского конфликта, http://www.echo.az/archive/2007_07/1601/; III. Гасанова, "В Туркманчае Персия и Россия делили независимые азербайджанские ханства, 09.02.2013, Echo.Az, <http://www.echo.az/article.php?id=35341>

165 Фарид Алекперли, Парадигмы азербайджанского национального сознания, <http://www.kavkazoved.info/news/2011/09/23/paradigmy-azerbajdzhanskogo-nacionalnogo-soznania.html>, նույնի Полемика Фарид Алекперли-Тюркас Сулейманом Мурадалиевым-азербайджанцем, http://www.atc.az/forum/showpost.php?p=283148&post_count=1096 (բանավեճում Ալերալիյին պնդում է, որ հարյուրավոր տարիներ Ադրբեջանի տարածքում եղել են միմիայն էթնիկ ազերի թյուրքեր («ազերի թյուրքարի»); Юсиф Джафаров, Кто мы и откуда? О происхождении азербайджанского народа, <http://yusif-rauf.livejournal.com/7869.html>, Aug 31* 2009 (քննադատում է ադրբեջանցի հեթաբասացիների ու գրչակների, ովքեր շումերներին, սկյութներին և աղվանցիներին համարում են ադրբեջաներեն խոսող թյուրքերը; Джавид Ага, Фальшивая историография Азербайджана, <http://janarmenian.ru/news/44222.html>, Перевод ©Noi (հեղինակը ծայրում է այն կարծիքը, թե իբր «աղվանները և ասորպատականցիները եղել են թյուրքեր. նրանցից առաջ եղել են լուրսիների, թուրքների, կուսիների թյուրքական ցեղերը, իսկ աղվի վաղ եղել են շումերները, որոնք նա թյուրքեր են: Հետո անջատվելով նրանք գնացել են Միջին Ասիա, որտեղ դարձել են օղու թյուրքեր, և կրկին վերադարձել են այստեղ): Айдын Алекперов, Этногенез азербайджанцев: уроки Играра Алиева, <http://atopar.narod.ru/istoriya/istoriya2.html> (փաստարևում է պատմաբաններ Մ. Բախալիովի, Յու. Յուսիֆովի, Հ. Հեյրուլլանի, Ա. Մամեդովի, Է. Ալիբեյգադի, Ս. Ալիյարովի, Ֆ. Ջալիլովի, Ա. Ռուստամխանլիի և շատ ուրիշների մինչև ուղևորությունը հակադրական բարբառանքների իր տեսակետներով հակադրող և նրանց դատելով Իգրար Ալիևին):

գափոխում են հայ-Հայաստան-Արցախ անվանումների հետ կապված ամեն ինչ՝ թողարկելով մեկը մյուսին հակասող կամ իրարամերձ տեսակետներ: Հիշյալ ձեռնածուների կարևորագույն խնդիրն է «ապացուցել», որ կովկասյան տարածաշրջանում հայերը եկվորներ են, որ Արցախը (Ղարաբաղը) զուտ ադրբեջանական տարածք է եղել և հայկականացվել է շնորհիվ Ռուսական կայսրության և ռուս գրող Ա. Գրիբոյեդովի ջանքերի՝ պարսկահայերի զանգվածային վերաբնակեցման շնորհիվ:

Իրենց Ատրոպատսի, Ջևանշիրի, Բաբեկի, մինևույն ժամանակ՝ Օղուզ Խաբանի, Շահ Իսմայիլի և Մահմուդ Ղազնևիի «թոռները» համարող¹⁶⁶ ադրբեջանցի «հետազոտողները» Թուրքմենչայի պայմանագրի իրենց համար չարաբաստիկ XV հոդվածի կազմման գլխավոր մեղավոր են համարում Ա. Գրիբոյեդովին, որն իբր «գործիք էր դարձել հայ քաղաքական և հոգևոր գործիչներ Լազարյանների և արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու ձեռքին», այսինքն՝ գրողը հայտնվել էր հայերի ամուր օղակի մեջ: Վերջիններս, ըստ նրանց, շարունակել են այն գործը, որը դեռ 1701թ. սկսել էր «Մեծ Հայաստանի» գաղափարի հեղինակ Իսրայել Օրին¹⁶⁷: «Նոյեմբերին Ներսես,- գրում է Ն. Հասանովան,- Գրիբոյեդովի և Պասկևիչի մոտ Խոյից պատվիրակություն ուղարկեց՝ խնդրելով հոգ տանել հայերի վերաբնակեցման մասին... Երկու ամսում նա փափուկ ճնշում կազմակերպեց Պասկևիչի վրա, որպեսզի ստիպի օրինական հիմքերի վրա դնել հայերի վերաբնակեցումը Հարավային Կովկասում»¹⁶⁸:

Հետխորհրդային Ադրբեջանի պատմագիտության պաշտոնական տեսակետների խտացված արտահայտություն կարելի է համարել տարբեր, նաև Բաբլում հավատարմագրված ռուսական ՋԼՄ-ներում գետեղված Ֆուադ Ախունդովի հրապարակումներն ու ելույթները¹⁶⁹: Ա. Գրիբոյեդովի գործունեության շատ դրվագներում և վախճանի հան-

166 Джавид Ага, У нашей истории одна цель – "доказать", что армяны не существовало, и найти себе "албанские" корни, <http://www.panorama.am/ru/news/2012/12/12/javid-aga/624053>

167 Ш. Гасанова, В Туркманчае Персия и Россия..., նշվ. հոդված, համացանց:

168 Նույն տեղում:

169 Ахундов Фуад (зав. Сектором политических исследований администрации президента Азербайджана), "Российские источники раскрывают белые пятна в истории гибели А. Грибоедова", 11.02.2012, в 2-х частях, [www.zerkalo.az, http://erevangala500.com/news/16.html](http://erevangala500.com/news/16.html), նույնի "В гибели Грибоедова повинна его армянское окружение", 17 февраля 2012, [www.day.az, http://news.day.az/politics/316216.html](http://news.day.az/politics/316216.html), նույնի "Гибель Грибоедова. Кто виноват?", март 02nd 2012, [www.azcongress.ru, http://azcongress.ru/2012/03/02/gibel_griboeдова_kto_vinovat/](http://azcongress.ru), նույնի "Российская общественность должна знать истинные обстоятельства гибели Грибоедова", 11 февраля 2014, [www.day.az, http://news.day.az/politics/465750.html](http://news.day.az/politics/465750.html), <http://interfax.az/view/599881>, 11.02.2014.

գամանքներում հեղինակը մեղադրում է դեսպանի «հայկական շրջապատին»: Ըստ նրա՝ «մոլեռանդության աստիճանի հասնող ազնիվ» Ա. Գրիբոյեդովը¹⁷⁰ չափազանց վստահել է հայերին, որոնք, ինչպես նաև հայ եկեղեցականները, իբր նրան համոզել էին Հարավային Կովկասում իրենց՝ տեղաբնիկ լինելու հարցում, ինչի «ապացույցն» իբր Ա. Գրիբոյեդովը համարել է «հայկականացված» աղվանական եկեղեցիների գոյությունն «աղբբեջանական խանութայիններում»¹⁷¹: Արդյունքում՝ Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ է իբր XV հոդվածը մտել Թուրքմենչայի պայմանագիր, ինչով էլ կազմակերպվել է պարսկահայերի ներգաղթը: Ֆ. Ախունդովը գրում է, որ հակառակ Բ. Պասկևիչի՝ հայերին բռնի կերպով չվերաբնակեցնելու, ոչ թե կալվածատիրական, այլ պետական հողերում տեղաբաշխելու վերաբերյալ տված խստիվ հրահանգի՝ իբր ուժի մեջ է մտել հայկական կեղծիքը, և խախտելով Թուրքմենչայի պայմանագիրը՝ հայերին վերաբնակեցրել են բռնությամբ¹⁷², և որ Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ կազմակերպված հայերի ներգաղթի շնորհիվ են Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի «աղբբեջանական» նախկին խանութայինները հայկականացվել¹⁷³: Ըստ հեղինակի՝ ռուսական դիվանագիտական առաքելության կործանումը սադրել են նրա դեսպանակազմի հայերը:

Քաղաքական նպատակներ հետապնդող և «աղբբեջանական վերևներին» ակնհայտ պատվերը հանդիսացող¹⁷⁴ Ֆ. Ախունդովի անհեթեթ մտավարժանքները, սակայն, քննություն չեն բռնում հայտնի պատմական փաստերի և վկայությունների հետ համեմատելիս: Այդքանով հանդերձ՝ հեղինակը խուսափում է առաջ քաշել և վերլուծել բնական կերպով ծագող այն հարցերը, թե ինչու՞ պետք է հայերը զոհաբերեին մեկին, որը, ըստ իրենց իսկ պնդումների, այնքան մեծ հայանպաստ գործունեություն էր ծավալել, և ինչի՞ց դրդված և հանուն ինչի՞ են այդ «սադրանքը» կազմակերպող հայերն իրենք ևս կոտորածի զոհ դարձել

170 Ахундов Фуад, "Российские источники раскрывают...", նշվ. հոդված, մաս I, "Российская общественность должна знать...", նշվ. հոդված, համացանց:

171 Նույն տեղում, նշվ. հոդված, մաս I, "Российская общественность должна знать...", նշվ. հոդված, նաև՝ "Гибель Грибоедова. Кто виноват?", նշվ. հոդված, համացանց:

172 Фуад Ахундов, Разрушители фальсификаций, <http://www.nofalsify.com/page/2.html>; Пришёл – Разрушил – Вещ изгнал – Переиначил – Переписал, <http://www.nofalsify.com/page/6.html>

173 Ахундов Фуад, "Российские источники раскрывают...", նշվ. հոդված, մաս I, համացանց:

174 St u "Ильхам Алиев выступал на сессии Парламентской Ассамблеи Совета Европы", 24.06.2014, <http://ru.president.az/articles/12149> (դրանում հայտարարվում է, որ Արևելյան Հայաստանն ու Արցախը «Արևմտյան Աղբբեջանի» տարածք են):

(այսինքն՝ գնացել ինքնազոհողության): Ֆ. Ախունդովը «հանճարեղ» կերպով «սպիտակ բիծ» է հայտնաբերում նաև հարեմի երկու կանանց հարցում: Նշելով, որ վերջիններս ոչ թե շահի, այլ Ալլահ-Յար խանի հարեմից էին՝ նա խոր հետազոտության անհրաժեշտություն է տեսնում այն հարցի կապակցությամբ, թե ինչու՞մն էր կայանում Ալլահ-Յար խանի հանդեպ Ա. Գրիբոյեդովի անվստահությունն ու ատելությունը¹⁷⁵:

«Հայկական կեղծիքների և սադրանքների», ինչպես նաև «Մեծ Աղբբեջանի» մասին բարբաջող «պատմաշինարարներին» ուղղված քննադատությամբ և պատմական փաստերի ու վկայությունների ներկայացմամբ հանդես է գալիս պատմաբան Արման Կարապետյանը¹⁷⁶, որը պատասխան հոդվածում գրում է. «Գրիբոյեդովի կյանքի և մահվան վերաբերյալ Ախունդովը հորինել է սեփական պատմությունը և ցինիկորեն փորձում է այն ներշնչել ռուս ընթերցողին: Փոփոխելով Գրիբոյեդովի արտահայտությունը («Խելքից պատուհաս» – Վ.Ս.)՝ Ախունդովի կապակցությամբ կարելի է ասել «Խելքից տգիտություն»: Այնուամենայնիվ, իր ծառայողական վերելքի համար Ախունդովը պարտական է Գրիբոյեդովին... Այսօր Ախունդովը... ծառայողական նոր առաջընթացի համար լրացուցիչ վարկանիշներ է հավաքում: Ինչ վերաբերում է ռուսական հասարակությանը, ապա, ի տարբերություն աղբբեջանական ազիտ-քարոզչության, նա լավ գիտն պատմությունը»¹⁷⁷:

1829թ. հունվարյան իրադարձությունների ժամանակ դեսպանատան վրա գրոհող մոլեռանդ խաժամուժի և հետագա պատմական իրադարձությունների միջև զուգահեռներ անցկացնելով՝ Ա. Կարապետյանը նշում է. «Նման պատմությունները կրկնվել են Թուրքիայում և Աղբբեջանում. ծայրահեղական քարոզիչները և խմբավորումները, ձգտելով իրենց նպատակների համար օգտագործել իրենց կողմից հավասարակշռությունից հանած, մոլեգնած մարդկանց ամբոխը, կազմակերպեցին հայոց Եղեռնը: Եվ հիմա այդ նույն քարոզիչները փորձում են վարկանիշ ստեղծել Գրիբոյեդովի և հայ ժողովրդի իրական բարեկամների վրա»¹⁷⁸: Իրավացիորեն քննադատելով աղբբեջանական «տեսակետներն ու վարկածները»՝ Արման Կարապետյանը, սակայն, ևս հակված է գերազնահատել Ա. Գրիբոյեդովի դերը պարսկահայերի ներգաղթի գործում՝ նրան հա-

175 Ахундов Фуад, "Российские источники раскрывают...", նշվ. հոդված, մաս I, համացանց:

176 Карапетян Арман, историк, "Баку динично пытается сделать дивиденды на Грибоедове", www.yerkramas.org

177 Նույն տեղում:

178 Նույն տեղում:

մարելով այդ գործընթացն իրականացնող¹⁷⁹:

Ադրբեջանական մերօրյա կեղծարարի տեսակետների սուր քննադատությամբ, հիմնավոր փաստերով և վկայություններով հանդես է գալիս նաև հետազոտող Վ.Գ. Թունյանը՝ նշելով, որ Ֆ. Ախունդովն օգտագործում է պատմական **փաստերը վարպետորեն կեղծելու՝ անգլիական դիվանագիտության մեջ օգտագործվող առասպելատեղծների կեղծարարության հնարքը, որի նպատակն է հորինել տարածաշրջանի նոր պատմությունը**, հիմնավորել Այսրկովկասյան Ադրբեջանի հավակնությունները հարևան ժողովուրդների պատմական տարածքների նկատմամբ¹⁸⁰ և տեղեկատվության բոլոր հնարավոր միջոցներով (այդ թվում՝ կինեմատոգրաֆիայի – Վ.Ս.)¹⁸¹ քանդել հայագիտության հիմնական դրույթները:

Փաստենք, որ ոչ միայն Ֆ. Ախունդովը, այլև ադրբեջանական ողջ պատմագիտական միտքը միտումնավոր շրջանցում կամ այլափոխում է պատմական այն փաստերը, ըստ որոնց հիշյալ տարածաշրջանում

179 Карапетян Арман. “Баку цинично пытается сделать дивиденды на Грибоедове”, նշվ. հոդված, համացանց:
180 Туянн В.Г., “Гибель А.С. Грибоедова”, Вестник арменоведения, НАН РА, Изд-во “Гитутюн”, № 2-3 (5-6), 2014. с. 203-217.
181 Հարկ ենք համարում այստեղ ներկայացնել վերջերս հայտնի դարձած մի տեղեկատվություն այն մասին, որ բազմաթիվ բիզնես ընկերությունների բաժնետեր. ճանաչված ռեժիսոր Նիկիտա Միխալկովը (տես “Википедия – свободная энциклопедия”, <https://ru.wikipedia.org/wiki/>), ով 2015թ. հոկտեմբերին Բարվում արժանացել է «Դոստոյով» («Բարեկամություն») շքանշանին (տես՝ Никита Михалков получил азербайджанский орден Дружбы, <http://www.gazeta.ru/culture/news/2015/10/20/n7792343.html>), միջոցների սղոթյան պատճառով. 19 մասանոց ֆիլմ նկարահանելու համար, գումար է ակնկալում ադրբեջանական օլիգարխներից (տես՝ “Михалков в Баку ищет деньги у азербайджанских олигархов на новый фильм о Грибоедове”, 07.12.2015, <http://bloknot.ru/kul-tura/mihalkov-v-baku-ishhet-den-gi-u-azerbajdzhanskih-oligarhov-pa-novy-j-fil-m-o-griboedove-358497>): Քննարկելով Ա. Գրիբոյեդովի մասին ֆիլմի համատեղ աշխատանքների նկարավորության հարցերը՝ Ն. Միխալկովը հույս է հայտնել Ադրբեջանի նախագահին, որ կարողարացնի այդ պետության պատելիքները (Никита Михалков: Хочу надеяться, что сумею оправдать своим творчеством столь высокую награду азербайджанского государства, 20 окт. 2015, <http://vesti.az/news/268005>): Գաղտնիք չէ, որ ով վճարում է, նա էլ պատվիրում է: Հայրության շրջանում այս ամենը, բնականաբար, չի ընդունվել միանշանակ, և արձագանքը հետևյալն է. «Այլևը, իհարկե, փող չի խնայի Միխալկովի ֆիլմի և այն բանի վրա, որպեսզի Գրիբոյեդովի մասին պատմող ֆիլմում նա առաջ մղի Արցախում հայերի վերաբնակեցման գաղափարը... Բայց ամենակարևորը՝ Արցախում հայերի եկվորության գաղափարն ամբողջությամբ տեղավորվում է Կովկասում ոռոսական քաղաքականության և ռուս-ադրբեջանական հարաբերությունների տրամաբանության մեջ... Հարկավոր է հասարակության գիտակցության մեջ արմատավորել այս գաղափարը, ինչն էլ հանձնարարվում է Միխալկովին: Նրա ֆիլմը հանրությանը պետք է համոզի, որ Արցախը ռուսներն են տվել հայերին, ուրեմն կարող են նաև ետ վերցնել...» (տես՝ Ахон Бадалян. Обзоратель, “Михалков и Алиев острогойровали на письмо Зория Балаяна”, <http://www.iragir.am/index/rus/0/country/view/44870> (հիշյալ նամակում Չ. Բալայանն Արցախի պրոբլեմը հռչակել էր Ռուսաստանի պրոբլեմ և նախագահ Պուտինին կոչ էր արել փրկել Արցախն այս փորձրկվող աշխարհում), տես նաև՝ Միմոնյան Վահրամ Ա. «Ալեքսանդր Գրիբոյեդովը և պարսկահայերի 1828-1829թթ. ներգաղթը՝ ադրբեջանառուսական պատմագեղարվեստական վարժանքների առարկա», «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2016, Ը(ԺԴ) տարի, թիվ 4(56), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 153-171:

հայերն ապրել ու արարել են դարեդար¹⁸² և Օսմանյան Թուրքիա ու Պարսկաստան են բռնագաղթեցվել տարբեր ժամանակներում¹⁸³: Շրթջանցվում կամ անտեսվում են ցարական այն ժամանակվա պաշտոնյաների և այլոց վկայությունները¹⁸⁴, որ մինչև պարսկահայերի՝ 1828-1829թթ. ներգաղթը, **նույնիսկ դարավոր բռնագաղթեցումներից ու տեղահանություններից հետո հիշյալ խանություններում հայերն ունեցել են գերակշիռ թվաքանակ**: Դրա մասին են փաստում նաև Հայաստանի տեղանվանումների և դրանց սկզբնաղբյուրների, ինչպես նաև հայկական տեղանունների թյուրքացման ու վարչական փոփոխությունների շուրջ հիմնավոր վերլուծությունները¹⁸⁵:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

1. Նշելով Ա. Գրիբոյեդովի կարևոր դերը 1828թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում՝ մինչխորհրդային հայ և ռուս հեղինակները միևնույն ժամանակ բացարձակապես չեն վկայակոչում նրա նախաձեռնությամբ առանձին, նաև հայերին վերաբերող հոդվածները կազմելու և այդ փաստաթղթում ընդգրկելու հանգամանքների մասին:

2. Մինչխորհրդային փուլում հրապարակված աղբյուրներում և աշխատանքներում կամ չեն շեշտվում, կամ էլ բացակայում են դեպի Արևելյան Հայաստան կազմակերպված պարսկահայերի ներգաղթի գործում Ա. Գրիբոյեդովի բովանդակային գործունեության, առավել ևս՝ խաղացած «բացառիկ կարևոր դերի» վերաբերյալ տեղեկությունները:

3. Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վերաբերյալ հրապարակումների մինչխորհրդային փուլում տրված գնահատականները, առանձին շեշտադրումներով հանդերձ (Ադ. Բերժե, Կ. Բողե, Ն. Մուրավյով-Կարսկի), կրկնում են 1829թ. հունվարի 30-ի թեհրանյան

182 Туянн В.Г. Пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, նշվ. աշխ., էջ 23-112, տես նույնի՝ “А.С. Грибоедов: новое в известном”, նշվ. աշխ., էջ 85 (ըստ հեղինակի՝ իրանահայերի վերաբնակեցումը ադրբեջանցիների կողմից դիտարկվում է որպես Ռուսաստանի կողմից Հյուսիսային Ադրբեջանի վերաբնակեցման ուղղված վեկտոր, ինչի նպատակն է «տարածքների և էթնոսների հայկականացմանն ուղղված հայերի ծավալապաշտության ցուցադրությունը, որպես Կովկասի քրիստոնեացման առասպելական ծրագրի մաս»), տես նաև՝ Павел Чобанян, Демографические перемещения и топонимия Восточной Армении в первой трети XIX века, «Բանբեր հայագիտության», ՀՀ ԳԱ, «Գիտություն» հրատ., 2015, N3(9), էջ 188-211:
183 Павел Чобанян, Демографические перемещения..., նշվ. հոդված, էջ 188-189, տես նաև՝ Захаров В., “Искажение истории в Азербайджане на рубеже XX-XXI вв.: ответ моим оппонентам (I)”, <http://bs-kavkaz.org/2011/09/iskazhenie-istorii-v-azerbajdzhane-na-rubezhe-xx-xxi-vv-i/> (հեղինակը համոզիչ փաստերով հերքում է Ռուսաստանի կայսրության կողմից Կովկասի քրիստոնեացման ծրագրի գոյությունը):
184 Павел Чобанян, Демографические перемещения..., նշվ. հոդված, էջ 189:
185 Նույն տեղում՝ էջ 191-205:

ողբերգության մեջ պարսկական կողմից պետական մակարդակով ծրագրավորված քաղաքական դրդապատճառների առկայությունը չբնաստատող ռուսական պետական պաշտոնական տեսակետը:

4. Առանձին դեպքերում նշելով անգլիական կառավարության և Պարսկաստանում անգլիական որոշ դիվանագետների ռուսատյաց գործունեությունը՝ այդուհանդերձ միևյանս խորհրդային հեղինակներն անգլիացիներին բացահայտորեն չեն մեղադրում թեհրանյան իրադարձությունների գլխավոր կազմակերպիչներ ու նախածեռնողներ հանդիսանալու մեջ: Նման մեղադրանքներ չեն հնչեցվում նաև կատարվածում իբր տեղ գտած, Օսմանյան Թուրքիայի կողմից նախօրոք ծրագրավորված սադրիչ գործողությունների վերաբերյալ:

5. Հայտնվելով խորհրդային գաղափարախոսության պայմաններում ձևավորված կաղապարների մեջ՝ որոշ ուսումնասիրողներ (Վ. Պարսամյան, Բ. Բալայան, Գ. Գալոյան, Վ. Գիլոյան), այնուամենայնիվ, կարողացել են հնարավորինս անաչառ ներկայացնել Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի հարցերը: Սակայն վերջիններս էլ, առաջնորդվելով գրողի անձի բացարձակ անացման հրամայականով, զերծ չեն մնացել նրա դիվանագիտական կարողություններն ու գործունեությունը գերազնահատելու գայթակղությունից:

6. Հաշվի չառնելով կամ շրջանցելով Ա. Գրիբոյեդովի վաղ շրջանի դիվանագիտական գործունեության հանդեպ անգլիական, պարսկական և հանկպալես ռուսական իշխանությունների դժգոհության ու բացասական վերաբերմունքի մասին փաստերը՝ խորհրդային հեղինակներն ամեն կերպ ընդգծել են գրողի դիվանագիտական բացառիկ տաղանդը, արդարացրել նրա պահվածքն ու վրիպումները: Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովին դիվանագիտական ծառայության նշանակելն ու ուղարկելը խորհրդային շրջանում ընդհանրապես անհիմն կերպով դիտարկվել է իբրև արքայի և պատժամիջոց՝ «հակաիշխանական հայացքներ» ունենալու համար:

7. Գերազնահատվել է նաև Ա. Գրիբոյեդովի դերակատարությունը Կարագիաղինի, Գեհկարխանի և Թուրքմենչայի բանակցություններում. նա ներկայացվել է որպես Ի. Պասկևիչի գլխավոր խորհրդատու և հիմնավոր առաջարկություններ կատարող հմուտ դիվանագետ, ում մտադրությունները ռուս-պարսկական հետագա հարաբերությունների հարցում առաջ էին անցել իր ժամանակից:

8. Անտեսելով հայ աշխարհիկ և հոգևոր գործիչների առաջարկներն ու ջանքերը՝ խորհրդային հետազոտողները Թուրքմենչայի պայմանագրի կազմումը և դրանում հայանպաստ հոգվածների ներառումը ևս անհիմն կերպով վերագրել են բացառապես Ա. Գրիբոյեդովին:

9. Ընդգծելու համար Ա. Գրիբոյեդովի՝ հայ ժողովրդի մեծագույն բարեկամ լինելու հանգամանքը, գրողը ներկայացվել է նաև պարսկահայերի ներգաղթի գործում որպես բացառիկ դերակատարում ունեցող անձնավորություն, ինչը համոզիչ փաստարկված չէ:

10. Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի գլխավորած դեսպանական առաքելության կործանման հարցում, անտեսելով կամ շրջանցելով նաև դեսպանի և նրա աշխատակիցների թույլ տված կուպիտ սխալների ու վրիպումների հանգամանքները, հետազոտողներն առաջ են մղել քաղաքական դրդապատճառները՝ կատարվածում մեղադրելով պարսից շահին, նրա արքունիքին, մոլեռանդ հոգևորականությանը, անգլիական կառավարությանն ու դիվանագետներին, ինչպես նաև դատապարտել են ռուս-պարսկական հարաբերությունների կրկին սըրման հարցում շահագրգռված Օսմանյան Թուրքիայի և վերջինիս գործակալների սադրիչ գործունեությունը: Մեղադրվել է նաև ռուսական կառավարությունը, որը, հանուն իր դիվանագիտական և արտաքին քաղաքականության շահերի, անտեսել է Ա. Գրիբոյեդովի վախճանի իրական հանգամանքները:

11. Հետխորհրդային շրջանում գաղափարական կապանքներից ազատվելը հնարավորություն տվեց հրապարակ բերելու ոչ միայն խորհրդային պատմագիտության մեջ ամրագրված տեսակետները կրկնող, այլև Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունն այլ տեսանկյունից դիտարկող աշխատանքներ: Այս դեպքում էլ որոշ հեղինակներ տարբեր հարցերում ընկել են ծայրահեղությունների մեջ՝ առաջ քաշելով և յուրովի ներկայացնելով պատշաճ չհիմնավորված կամ խեղաթյուրված նորանոր վարկածներ (Վ. Յարխո, Ն. Մյասնեդովա, Ի. Սուխով, Ավ. Իսահակյան, Ֆ. Ախունդով, Ե. Հասանովա, Ռ. Հուսեյնով և այլք):

12. Հարցի ուսումնասիրման հետխորհրդային փուլում նկատվում է կարևոր մեկ միտում ևս. Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության գնահատման առանձին դրվագներում ուսումնասիրողներից ոմանք սկսում են հրաժարվել նրա անձի բացարձակ անացման և գերազնահատման ջանքերից (Վ. Թունյան, Ա. Կարապետյան):

2. Ռուսական կայսրության արտաքին գաղութային քաղաքականությունն Այսրկովկասում և Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վաղ շրջանը

Ա.Ս. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը սերտորեն առնչվում են հայ-ռուսական հարաբերություններին: **Նա մասնակցություն է ունեցել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու, որոշ չափով պարսկահայերի ներգաղթի, ինչպես նաև Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործընթացներին, շփումներ է ունեցել այդ ժամանակաշրջանի հայ հասարակական, զինվորական, հոգևոր և մշակութային որոշ գործիչների հետ:**

Նախքան Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությանն անդրադառնալը նպատակահարմար է համառոտ ներկայացնել Ռուսաստանի արտաքին քաղաքականությունն Այսրկովկասում և Պարսկաստանում XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին:

Ռուսաստանի XVIII դարի վերջի վարած արտաքին քաղաքականության մասին հետազոտող Պ. Չոբանյանն իրավացիորեն նշում է. «Գովկասյան ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականության դրսևորումները մեծ չափով նմանություններ են բացահայտում անգամ տարբեր կարգավիճակ ունեցող Վրաստանին, պարսից խանություններին և պետականություն չունեցող ու ազգային ձգտումներ դրսևորող ժողովուրդներին Ռուսաստանի գերիշխանությունն ընդունելի դարձնելու ռուսական քաղաքականության մեջ... Միայն Ռուսաստանի կազմի մեջ մտնելու և ռուսական տիրապետության ամրապնդումից հետո էր նշված ժողովուրդների համար պարզվում, որ նախկինում ունեցած հավաստիացումներն ու խոստումներն այլևս կիրառում չեն կարող գտնել, իսկ հետագայում ուղին փակված էր շատ ամուր կերպով»¹:

XVIII դարում, քանի դեռ Վրաստանը պետականություն ուներ, նրա հետ հարաբերություններում ռուսական իշխանություններն ընդգծում էին **Վրաստանի անկախ պետականության պահպանման ցանկություն**

¹ Չոբանյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Եզվ. աշխ., էջ 12: 330

նր: Սակայն XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Վրաստանում, բացի արտաքին խնդիրներից, ի հայտ են գալիս նաև գաղափարագույն հետ կապված հարցեր և դրանց էլ **Պարսկաստանի հնարավոր միջամտությանն առնչվող խնդիրներ ու ներքին երկպառակություններ:** Օգտվելով ստեղծված իրավիճակից և Ռուսաստանին ուղղված Վրաստանի դիմումներից՝ 1801թ. հունվարի 18-ի կայսերական մանիֆեստով **Վրաստանը հայտարարվում է Ռուսաստանի մաս՝ առանց նրա անկախության պահպանման: Եթե XVIII դարում Ռուսաստանը հայվրացական թագավորության տեսքով ցանկանում էր Անդրկովկասում ստեղծել բուֆերային (թափարգել, պատնեշ) պետություն, ապա XIX դ. սկզբին, ելնելով աշխարհաքաղաքական նոր իրավիճակից, բացառում է դրա ստեղծման անհրաժեշտությունը. Ռուսաստանը որդեգրում է տարածքային ծավալապաշտության ուղին և ձգտում սահմանային անմիջական շփում ունենալ Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի հետ²:**

Այսպիսով, Վրաստանի միացումով հստակորեն դրսևորվում է Ռուսաստանի վարած քաղաքականության մեջ կատարված շրջադարձն Այսրկովկասում, և այլևս **խոսք չէր կարող գնալ «պատնեշ» պետություն ստեղծելու մասին:**

Ծավալապաշտական քաղաքականությունը Ռուսաստանը ձգտում և փորձում է առաջին հերթին իրականացնել խաղաղ ճանապարհով՝ օգտագործելով տեղաբնիկ ժողովուրդների նկրտումներն ու նպատակները: **Կ.Ֆ. Կնորինգին** ուղղված հրովարտական կայսր **Պավել I-ը (1796-1801)** խորհուրդ էր տալիս ամրանալ Վրաստանում, տեղացի հավատարիմ անձանցով համալրել բանակը, որոնք էլ հանքեր, մաքսատուներ տեղափոխել սահմանի վրա, **շահել հայերի բարյացակամությունը և խորհել ոչ թե զավթելու, այլ կամավոր համաձայնություն ձեռք բերելու միջոցով ու խաղաղ ճանապարհով Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցի շուրջ³:**

Կայսր Ալեքսանդր I-ը նույն գեներալ Կնորինգին տված հրահանգում դարձյալ արտահայտվում էր տեղաբնիկներին և հանկապես հա-

² ПСЗРИ, Собрание первое, с 1649 по 12 декабря 1825 года, кн. 2, т. XXVI, 1800-1801, ф. 19.721, л. 502-505, տես նաև՝ Авалов З.Д., Присоединение Грузии к России, "Вече", Москва, 2011, с. 1-288 (այս աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1901թ՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու 100-ամյակի առիթով), Գիլյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 143:

³ Մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթապանակ 111, գործ 79, վավ. 1, ռուսերեն ձեռագրի պատճեն, 4 էջ (1801թ հունվարի 23-ի հրովարտակը):

յերին սիրաշահելու ու Վրաստանում վերաբնակեցնելու քաղաքականության մասին⁴: Հայերի դերը կարևորվում էր գեներալ Կ.Ֆ. Կնորինգին փոխարինած Կովկասյան զորքերի նոր գլխավոր հրամանատար Պ.Դ. Յիցիանովին՝ Ալեքսանդր I-ի 1802թ. սեպտեմբերի 26-ին հղած շնորհագրում, որում ասված է. «Ի դեպ, հայերը՝ որպես արդյունագործող ժողովուրդ, իրենց ձեռքում ունենալով Ասիայի այս շրջանի ողջ առևտուրը, արժանի են Ձեր հատուկ ուշադրությանն ու պաշտպանությանը, քանզի, ճնշված լինելով Պարսկաստանում, անկասկած այդ ժողովրդի միջից շատերը կհիմնավորվեն Վրաստանում, եթե շատ շուտով իրենց ապահովված զգան կանոնավոր կազմակերպված պարկեշտ կառավարությամբ»⁵:

Խաղաղ ճանապարհով Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու ցարական կառավարության քաղաքականության հետևանքով 1801թ. Ռուսաստանին է միացվում Վրաստանի մի մասը՝ **Քարթլի-Կախեթին, 1803-1804թթ.**՝ **Իմերեթը, Մենգրելիան և Գուրիան, իսկ 1810թ.**՝ **Աբխազիան**: 1804-1813թթ. ռուս-պարսկական առաջին պատերազմի ժամանակ համեմատաբար **խաղաղ ճանապարհով** Ռուսաստանին են միացվում նաև **Շարխի, Շիրվանի, Ղուբայի և Ղարաբաղի խանությունները (1805թ.)**⁶, **1806թ.**՝ **Գերբենդի, Բաքվի խանությունները, իսկ 1809թ.**՝ **Թալիշի խանությունը**⁷:

Գանձակի խանի կողմից հպատակության անցնելու հրաժարումից հետո Պ.Դ. Յիցիանովը, դեռևս 1804թ. հունվարին, ռազմակալել ու Ռուսաստանին էր միացրել Գանձակի խանությունը⁸: Ակնհայտ էր, որ Պարսկաստանն իր հերթին, օգտագործելով բոլոր, այդ թվում ռազմական և դիվանագիտական միջոցները, չէր պատրաստվում վերոհիշյալ տարածքները զիջել Ռուսաստանին: Վրաստանի և վերը նշված խանությունների միացումով հանդերձ՝ ռուսական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ իրենց հարավային նոր սահմաններն այնքան էլ

4 Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին... նշվ. աշխ., էջ 152-154, (կայսր Ալեքսանդր I-ի 1801թ սեպտեմբերի 12-ի հրահանգը):

5 АКАК, т. 2, 1868, ф.а.с.т. 5, էջ 8:

6 История Ирана, Отв. Ред-ор М.С. Иванов, նշվ. աշխ., էջ 226:

7 Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX - нач. XX вв), նշվ. աշխ., էջ 32, տես նաև՝ Киняпина Н.С., Блиев М.М., Дегоев В.В., Кавказ и Средняя Азия во внешней политике России. Вторая половина XVIII-80-е годы XIXв., М., 1984, с. 98-121; Хаджи Мурат Ибрагимбеги, Россия и Азербайджан в первой трети XIXв., նշվ. աշխ., էջ 39-145, Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, С. Петербургъ, 1886, т. III, с. 351-550, т. IV, с. 1-536, т. V, с. 1-495, т. VI, с. 1-167; Утверждение русского владычества на Кавказе, Под ред. генерал-майора Потто, 1801-1901, Къ столетию присоединения Ирузи къ Россіи, Тифлисъ, 1901, т. I, с. 1-308, 1903, т. II, с. 1-527.

8 История Ирана, Отв. Ред-ор М.С. Иванов, նշվ. աշխ., էջ 226:

ապահով չեն, և դրանք ամրապնդելու համար **հարկ էր սահմանային դարձնել Կուր-Արաքս-Ախուրյան (Արփաչայ) գիծը, ինչի մասին է փաստում Ալեքսանդր I-ի կողմից գեներալ Պ. Յիցիանովին տրված շնորհագիրը**⁹:

Վերոհիշյալ նպատակն իրականացնելու գործում ռուսների համար **առաջնային է դառնում Նախիջևանի, և հատկապես Երևանի խանությունների նվաճման խնդիրը**: Ռուսաստանը սկզբում փորձում է դրանք ևս միացնել խաղաղ ճանապարհով: 1804-1813թթ. ռուս-պարսկական առաջին պատերազմի ընթացքում ռուսական զորքերը երկու անգամ՝ **1804թ. (գեներալ Յիցիանով)** և **1808թ. (գեներալ Գուդովիչ)**, արշավում են Երևանի վրա, սակայն անհաջողության մատնվելով՝ ստիպված են լինում նահանջել¹⁰:

Ռուս-պարսկական հարաբերությունները մեծապես առնչվում են այդ ժամանակվա եվրոպական երկու խոշոր պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ Պարսկաստանի ունեցած փոխհարաբերություններին¹¹: Անգլիան ամեն կերպ խոչընդոտում է Պարսկաստանի և Ռուսաստանի միջև զինադադարի կամ հաշտության պայմանագրի կնքմանը¹²: Միայն ռուսական բանակի լուրջ հաջողություններն Այսրկովկասում, Նապոլեոնի դեմ տարած փառավոր հաղթանակները, 1812թ. մայիսին Օսմանյան Թուրքիայի հետ կնքած Բուխարեստի պայմանագիրը և ռեսուրսները սպառելու պատճառով պատերազմը շարունակելու անկարողությունը Պարսկաստանին ստիպում են հաշտության պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ¹³:

Ղարաբաղի (Արցախի) **Գյուլիստան գյուղում 1813թ. հոկտեմբերի 12(24)-ին** կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրի հոդվածները կարելի է բաժանել **երկու մասի՝ քաղաքական և առևտրային**¹⁴:

9 Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին... նշվ. աշխ., էջ 154:

10 Գրիգորյան Զ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նշվ. աշխ., էջ 184-223:

11 1801-1812թթ պարսկա-անգլո-ֆրանս-ռուսական դիվանագիտական հարաբերությունների և կնքված պայմանագրերի մասին մանրամասն տես՝ Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, նշվ. աշխ., էջ 30-31, 35-37, նաև՝ A. General Sketch of the History of Persia. By Clements R. Markham, C.B.E.R.S. London: Longmans, Green, And CO. 1874, p. 532-533; Иоаннисян А.Р., "Борьба Англии и Франции против присоединения Армении к России", Известия АН Армянской ССР, №3, 1953, Общественные науки, с. 50-51, 55-57; История дипломатии, նշվ. աշխ., հ. I, էջ 69, Մ. Մուրադյան, Բ. Մինայան, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIXդդ), Երևան, 2005, էջ 158-237:

12 Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, նշվ. աշխ., էջ 35-37:

13 Иоаннисян А.Р., "Борьба Англии и Франции...", նշվ. հոդվ., էջ 55-57:

14 ПСЗРИ, т. XXXII, 1812-1815, 1830, նշվ. ժող., փաստ. 25-466, էջ 642-643 (տես՝ Գյուլիստանի պայմանագիրը):

Քաղաքական մասի երկրորդ հոդվածով հստակ տրվում էր **Ադինա-Քազարից Կապանակ գետի (Կապանակ-չայի) և Կապան գետի (Կապան-չայի) սահմաններով մինչև Ախուրյան գետը տարածվող սահմանագիծը**: Թալիշի խանության սահմանները որոշվելու էին երկու կողմերից լիազորված կոմիսարների փոխոցով, ովքեր իրենց գլխավոր հրամանատարների ղեկավարությամբ մանրամասն նկարագրելու էին տվյալ պահին **կողմերից յուրաքանչյուրի փաստացի իշխանության տակ գտնվող (Status quo ad presentem) տարածքները**, և այնժամ ճշտվելու էր ողջ սահմանագիծը: Երրորդ հոդվածով պարսկական կողմը որպես Ռուսական կայսրության սեփականություն էր ճանաչում հետագայում Ելիզավետպոլի շրջան անվանված Ղարաբաղի և Գյանջայի նախկին խանությունները, ինչպես նաև Շաքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները, ողջ Դաղստանը, Վրաստանը՝ Շոքրազյալի շրջանով, Իմերեթը, Գուրիան, Մենգրելիան, Աբխազիան: **Չորրորդ հոդվածով ռուսաց կայսրն իր և իր ժառանգների անունից հանդիսավոր խոստանում էր Պարսկաստանի շահ ճանաչել այն արքայագանին, ում գահաժառանգ կճանաչեր շահը, և պարտավորվում էր պարսից արքայագանների միջև ծագած գահակալական վեճերի դեպքում չմիջամտել այնքան ժամանակ, քանի դեռ գործող շահն իրեն չէր դիմել խնդրանքով¹⁵:**

Հասկանալի է, որ Գյուլիստանի պայմանագիրը չէր կարող բավարարել կողմերից և ոչ մեկին. **Ռուսաստանը չէր հասել իր գլխավոր նպատակին, այն է՝ ռուս-պարսկական սահմանագիծը հաստատել Կուր-Արաքս-Ախուրյան գետերի գծով, իսկ Պարսկաստանը չէր կարող հաշտվել Այսրկովկասում իր նախկին տարածքների կորստյան հետ**, ուստի սահմանագծի հաստատման ժամանակ պայմանագրում տեղ գտած անորոշություններն ու դրանք վերանայելու հնարավորությունները հույս են տալիս Պարսկաստանին Ռուսաստանից ետ ստանալ կորցրածը: **Այլ խոսքով ասած՝ դա այն խախտող հաշտությունն էր, որը, ըստ ասացվածքի, «լավ էր բարի գծտությունից» («Худои мур лучше доброи есори»)¹⁶:**

Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Անգլիայի ազդեցությունը Պարսկաստանում ավելի է աճում: Դրան նպաստում են նաև

Եվրոպայում նապոլեոնյան Ֆրանսիայի կրած անհաջողությունները: **1814թ. նոյեմբերի 25-ին Թեհրանում կնքվում է անգլո-պարսկական նոր պայմանագիր**, որում հիմնականում պահպանվում են 1812թ. կնքած պայմանագրի դրույթները¹⁷: **1814թ. պայմանագրով Պարսկաստանը պարտավորվում էր խզել դիվանագիտական հարաբերություններն Անգլիայի թշնամի բոլոր երկրների հետ, արգելել Պարսկաստանի տարածքով եվրոպական ցանկացած երկրի զորքերի արշավանքը դեպի Հնդկաստան: Պարսկաստանի դեմ եվրոպական որևէ երկրի պատերազմի դեպքում Անգլիան այդ երկրին օգնելու էր Հնդկաստանում գրտնվող իր զորքերով կամ որպես փոխհատուցում տարեկան վճարելու էր 200.000 թուման: Անգլիան պարտավորվում էր չգրավել Պարսկաստանի որևէ տարածք, չխառնվել նրա ներքին գործերին, իսկ պարսկա-աֆղանական պատերազմի դեպքում չխառնվել դրան¹⁸:** Ըստ պայմանագրի՝ Անգլիան **միջնորդի դեր** էր ստանձնում և՛ **Գյուլիստանի պայմանագրի վերանայման**, և՛ **ռուս-պարսկական հնարավոր նոր պատերազմի** դեպքում¹⁹:

Ռուս-պարսկական սահմանների վերանայման հնարավորությունից և անգլիական խոստումներից թևավորված **պարսիկ պատվիրակ Միրզա-Աբու-Հասանին**, սակայն, Պետերբուրգում հավաստիացնում են, որ վերջնական որոշում կկայացվի Պարսկաստանում լիազոր դեսպան նշանակված **Կովկասի նոր կառավարիչ Ա. Երմոլովի** ստուգայ-

17 Clements R. Markham, C.B.E.R.S., A General Sketch of the History of Persia, ևշվ. աշխ., էջ 534-536, տես նաև՝ Кузнецова Н.А., ևշվ. աշխ., էջ 35-37, Туляев В.Г., А.С. Грибоедов: новое в известном, ևշվ. աշխ., էջ 33 (հեղինակը նշում է, որ մատակցապատ Այբինը (Անգլիան – Վ.Ս.) երկերեսանի քաղաքականության օրինակ էր ցուցանաում. մի կողմից բարձրաձայնում էր Պարսկաստանի հետ իր դաշնակցային հարաբերությունների մասին, այսինքն՝ «Պետերբուրգ գիտցի՛ր և գգուշացի՛ր», իսկ մյուս կողմից՝ «սահմանների պահպանման «ստատուս-քվոյի պայմաններում» Ռուսաստանի հետ դեմ առ դեմ թողնում թեքրանյան արքունիքին: Այս ոչ սովորական իրավիճակում ռուսական դիվանագիտությունը թեքրանյան արքունիքին իր կողմը թեքելու համար ձգտում էր առավելագույն հնարավորին անել և ցույց տալ Անգլիայի հետ նրա հարաբերությունների անհուսալիությունը: Մագարովիչին Երմոլովը ցուցում էր տալիս, որ «անհրաժեշտ է պարսկական արքունիքին հավատացնել, որ քանի Ռուսաստանի կողմից առաջիկայում հարձակվելու մտադրություն չկա, ապա վերջինիս դեմ Անգլիայի կողմից օգնության կարիք էլ չկա» (հղում է արված АККА, h. VI, մաս II, փաստ. 407, էջ 221)):

18 История Ирана, Отв. ред.-ор М.С. Иванов, ևշվ. աշխ., 229-230:

19 Иоаннисян А.Р., «Борьба Англии и Франции...», ևշվ. աշխ., էջ 59, տես նաև՝ АККА, h. VI, մաս II, 1875, փաստ. 408, էջ 221-223 (անգլո-պարսկական պայմանագրի կնքման մասին լրող Քեքրլիի հաղորդագրությունը ռուսական կողմին), տես նաև՝ Afschar Mahmoud, "La politique européenne en Perse: quelques pages de L'histoire diplomatique", Librairie orientale "Innschahr", Berlin, 1921, p. 34-35 (գտնում է, որ Հարավային Գովկասը հնուց պատկանել է Պարսկաստանին, իսկ Ռուսաստանը, համաձայն «Պյոտր I-ի կտակի», ձգտել է տարածվել դեպի հարավ, Անգլիան էլ ձգտել է թույլ չտալ, որ Ռուսաստանը շատ մոտենա Հնդկաստանին):

15 ПСЗРИ, h. XXXII, 1812-1815, 1830, ևշվ. ժող., փաստ. 25.466, էջ 643:

16 Покровский М.Н., Дипломатия и войны царской России в XIX столетии, Сборник статей, Москва, 1923, с. 184. 334

ցից հետո²⁰: Ալեքսանդր I-ը գեներալ Ա. Երմոլովին հանգամանորեն բացատրում է ռուս-պարսկական սահմանագիծը Կուր-Արաքս-Արփաչայ գծով հաստատելու անհրաժեշտությունը, միաժամանակ հրահանգում, որ դրան պետք է հասնել որքան հնարավոր է խաղաղ ճանապարհով²¹: Իրականացրած բանակցությունների արդյունքների մասին Ա. Երմոլովը երկու գեկուցագրերով²² Թավրիզից տեղեկացնում է կայսերն ու **Արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսելրոդին**՝ նույնպես նշելով ռուս-պարսկական սահմանն Արաքս գետով անցկացնելու անհրաժեշտությունը²³: Կ. Նեսսելրոդեն Ա. Երմոլովի այդ առաքելությունը համարում է **մինչ այդ ուղարկվածներից ամենահաջողվածը և ուսանելին**²⁴:

Մեր կարծիքով, սակայն, Ա. Երմոլովի ղեկավարական **առաքելության արդյունքները միանշանակ դրական գնահատելու հարցին հարկ է ցուցաբերել վերապահ մոտեցում**. Եթե գեներալին հաջողվում է **ժամանակավորապես հանդարտեցնել Պարսկաստանի փոխվրեժային (ռևանշիստական) նկրտումները**, ապա հանուն արդարության հարկ է փաստել, որ **նա շեղվել է իրեն տրված կայսերական հրահանգներից: Նա պարտավոր էր Աբբաս-Միրզային հավաստիացնել Ռուսաստանի կողմից նրան գահաժառանգ ճանաչելու հաստատական դիրքորոշման հարցում (Գյուլիստանի պամնագրի IV հոդված), մինչդեռ նա ինքնագլխորեն շփումներ է ունեցել գահաժառանգության իրավունքն Աբբաս-Միրզայի հետ վիճարկող շահի քրիստոնյա կնոջից ծնված ավագ որդի Մոհամմեդ-Ալի-Միրզայի հետ և նույնիսկ իր հաշվետվության մեջ**

20 АКАК, т. VI, мему II, 1875, ф.м.с. 262, л. 119-120, ВПР, Документы российского министерства иностранных дел, Серия вторая, 1815-1830гг, том первый (девятый), ноябрь 1815г – сентябрь 1817г, Изд-во Политической литературы, Москва, 1974, док. 37, с. 122-126, Балаян Б.П., Международные отношения Ирана в 1813-1828гг, л. 24, աշխ., էջ 32 (ինչպես անգլիացի Քեթարթին բացատրում է ռուսական արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսելրոդին՝ «Պետական այն սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվում է բրիտանական կաթավարությունը, դժվար է թույլ տալ Անգլիայի միջամտությունը ռուս-պարսկական հարաբերություններին»: Նմանատիպ հայտարարությամբ Լոնդոնում հանդես է գալիս նաև ռուսական դեսպան Խ.Ա. Լիվենը):

21 Պարսկաստանի հետ զինուժների, տարածքների փոխանակման, Աբբաս-Միրզային գահաժառանգ ճանաչելու, ռուս ռազմագերիների ու փախստականների հարցերով բանակցություններին անգլիացիների մասնակցությունը թույլ չտալու և միևնույն ժամանակ նրանց բողոքը չհարուցելու մասին մանրամասն տես Ալեքսանդր I-ի՝ 1816թ հուլիսի 29-ի հրահանգները՝ АКАК, т. VI, мему II, 1875, ф.м.с. 267, л. 122-127 (նույն տեղում տես նաև՝ Կ.Վ. Նեսսելրոդիի ստորագրած «Обозрение мирных переговоровъ съ Персидскимъ правительствомъ» փաստաթուղթը):

22 Балаян Б.П., Международные отношения Ирана..., л. 24, աշխ., էջ 38:

23 АКАК, т. VI, мему II, 1875, ф.м.с. 341, л. 177-178 (1817թ. հոկտեմբերի՝ Ա. Երմոլովի գեկուցագրերը):

24 Նույն տեղում՝ փաստ. 342-345, էջ 178-182, փաստ. 351, էջ 183-184 (Կ. Նեսսելրոդիի՝ 1818թ. փետրվարի 19-ի հաղորդագրությունը):

Կ. Նեսսելրոդին խորհուրդ է տվել որոշ ժամանակ հետաձգել Աբբաս-Միրզային գահաժառանգ ճանաչելու վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները՝ ամենը բացատրելով Աբբաս-Միրզայի ընդգծված հակառուսական և անգլիամետ դիրքորոշմամբ²⁵:

Կարծում ենք՝ հենց վերջին նկատառումներից ելնելով էլ գեներալն Աբբաս-Միրզային պետք է հավաստիացումներ աներ գահաժառանգության հարցում ռուսական կողմի պատրաստականության շուրջ, **ինչն անկասկած կարող էր դրական իմաստով փոխել Աբբաս-Միրզայի դիրքորոշումը Ռուսաստանի հանդեպ և կթուլացներ նրա արքունիքում անգլիացիների ազդեցությունը**: Մինչդեռ Ա. Երմոլովի վերոբերյալ դիրքորոշումն էլ ավելի է խորացնում Աբբաս-Միրզայի հակառուսական կողմնորոշումը²⁶ և մեծացնում Պարսկաստանի վրա Անգլիայի ազդեցությունը:

Պետք չէ բացառել նաև այն հանգամանքը, որ միգուցե Ա. Երմոլովը **նախապես համոզված չէր, թե ռուս-պարսկական սահմանն Արաքս գետով հաստատելու խնդիրները կլուծվեն խաղաղ ճանապարհով և Պարսկաստանի հետ հարաբերությունների սրմանը միտումնավոր կերպով էր գնում այն նպատակով, որպեսզի հաղթական նոր պատերազմի միջոցով հետագայում Ռուսաստանին անցնեն Երևանի և Նախիջևանի խանությունները (նշենք, որ հայրենական այդ տարածքներ ներգաղթելը ձեռնտու էր հայերին)**, սակայն դիվանագիտական ուղիներով ջանքեր գործադրելու համար ռուսական իշխանությունների տված ցուցումների առումով հարկ է փաստել, որ **ռուս-պարսկական բանակցությունների այս փուլում Ա. Երմոլովի պահվածքն ավելի շատ թողնում է Ռուսաստանի ծավալապաշտական շահերն առաջ հրող ազգայնական գեներալի, քան հաշվենկատ և փորձառու դիվանագետի դրսևորած վարքագծի տպավորություն**:

Ինչևէ, **կարևոր հարցերում զինվորականին բնորոշ նրա կոշտ, փոխզիջումների չզնալու դիրքորոշման հետևանքով բանակցություններն այդպես էլ լուծում չեն ստանում և հետաձգվում են մինչև 1826-1828թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտն ու Թուրքմենչայի պայմանագրի կնքումը**: Այսպեսով հանդերձ՝ Ա. Երմոլովի ղեկավարական առաքելությունը գրանցում է նաև հաջողություններ, որոնցից

25 АКАК, т. VI, мему II, 1875, ф.м.с. 345, л. 181-182 (Ա. Երմոլովի 1817թ. հոկտեմբերի գեկուցագիրը Կ. Նեսսելրոդին):

26 Покровский М.Н., Дипломатия и войны царской России, л. 24, աշխ., էջ 184-185:

կարևորը Պարսկաստանի հետ ձեռք բերած համաձայնությունն էր՝ այնտեղ Ռուսաստանի մշտական ներկայացուցչություն հիմնելու մասին, ինչը կարելի է համարել այդ երկրում Անգլիայի ունեցած քաղաքական ազդեցության մենաշնորհը սահմանափակելուն ուղղված լուրջ քայլ:

Պարսկաստանում մշտական ներկայացուցչի պաշտոնում Ա. Երմոլովն առաջարկում է իր դեսպանակազմի **բժիշկ Ս.Ի. Մազարովիչի** թեկնածությունը որպես այնտեղ իրեն դրական կերպով դրսևորած մարդու, ինչպես նաև առաջարկում է դեսպանության կազմում ընդգրկել նաև պարսկերենին տիրապետող երիտասարդ քարտուղարներ, և բանակցությունների ժամանակ Ռուսաստանը հարկադրված չէր լինի դիմել անվստահելի մարդկանց օգնությանը²⁷: Ա. Երմոլովի խնդրանքն ի վերջո բավարարվում է, և Պարսկաստանում Ռուսաստանի մշտական ներկայացուցչության ղեկավար է նշանակվում Ս. Մազարովիչը, իսկ **քարտուղարներից մեկի պաշտոնում նշանակվում է դեռևս 1816 թվականից Արտաքին գործերի կոլեգիայում ծառայության անցած Ա. Գրիբոեդովը**:

Արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսեյրոդեի հետ հանդիպման ժամանակ Ա. Գրիբոեդովը պահանջում է միանգամից երկու աստիճանով բարձրացնել իր կոչումը²⁸: Վերջինս Սանկտ-Պետերբուրգը լքում է 1818թ. օգոստոսի 28-ին²⁹: Նրա համար ծանր էր թողնել պետերբուրգյան բարձրաշխարհիկ կյանքը, ընկերներին, մշակութային-գրական միջավայրը³⁰, Մոսկվայում մնացած ընտանիքը³¹:

Ա. Գրիբոեդովի ճանապարհորդությունը դեպի Պարսկաստան տրպավորիչ կերպով արտահայտված է նրա նամակներում և «Ճանապարհորդական նոթեր»-ում³², որոնցում արտացոլված են նրա փոփոխական արամադրությունն ու առաջին տպավորությունները **Կովկասից ու Պարսկաստանից**: Պետերբուրգը լքելու պատճառով նրան պարուրած թախծին Ալսրկովկասում և Պարսկաստանում համարյա մշտապես

ուղեկցում են ծուլությունն ու ձանձրությոթ³³: Ա. Գրիբոեդովի վրա մեծ տպավորություն է թողնում Ա. Երմոլովը, ում հետ ծանոթությունից հետո Մոզդոկից Ս. Մազարովիչին գրում է հետևյալը. «...Անհնար է լինել ավելի գրավիչ... պետք է նաև խոստովանել, որ նա այնպես հրաշալի է խոսում, որ չնայած ինքնասիրությամբ ինձ ներշնչած ինքնավստահությանը՝ հաճախ նրա հետ զրույցի ժամանակ ոչինչ չեմ գտնում ասելու...»³⁴:

1819-1821թթ. Պարսկաստանում անցկացրած տարիները բավականին օգտակար էին Ա. Գրիբոեդովի համար. **նա սովորում է պարսկերեն, ուսումնասիրում պարսից մշակույթն ու գրականությունը, սկսում է սերտել նաև սանսկրիտ**³⁵: Պարսկաստանում Ա. Գրիբոեդովի դիվանագիտական գործունեությունն առնչվում է երկու կարևոր հարցերի. **առաջինը ռուս ռազմագերիների և դասակրթների մի խմբի՝ դեպի հայրենիք վերադարձի, երկրորդը 1821-1823թթ. պարսկա-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուսական դեսպանական առաքելության վարքագծի խնդիրներն են**:

Ռուս ռազմագերիներին և փախստականներին Պարսկաստանից վերադարձնելու խնդրի բարդությունը կայանում էր նրանում, որ **պարսից թագաժառանգ (Վալիահո, Շահզադե, Նախր-Մուլթան) Աբբաս-Միրզան** նրանցից կազմել էր բավականին մարտունակ գումարտակ և ամենին էլ չէր ցանկանում զրկվել դրանից: Ըստ ընդունված կարծիքի՝ ռուսները փորձում էին ետ վերադարձնել փախստականներին և վերականգնել իրենց միջազգային հեղինակությունը³⁶: 1819թ. օգոստոսի վերջերին Թավրիզում Ա. Գրիբոեդովը հանդիպում է ռուս զինվորներից մի քանիսին, ովքեր ցանկություն են հայտնում վերադառնալ հայրենիք, և խոստանում է ամեն ինչ անել, որպեսզի իրականացնի նրանց ցանկությունը: Այս առիթով 1819թ. օգոստոսի 30-ին, օգտվելով ռուսական հավատարմատար Ս. Մազարովիչի բացակայությունից, հանդիպելով պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզային՝ նա այնպիսի համառություն է ցուցաբերում, որ վերջինս, տեղի տալով, ի վերջո համաձայնում է

27 АКАК, т. VI, м. II, 1875, ф. 100, к. 344, л. 280:

28 Մուրադյան Մ., Միևայան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIXդդ.), Եվ. աշխ., էջ 243 (Կ. Նեսսեյրոդեի այդ պաշտոնը վարել է Հովհան Կապոդիստրիայի հետ համատեղ), տես նաև Гривоедов А.С., Сочинения, 1971, Եվ. աշխ., հ. 2, էջ 184 (1818թ. ապրիլի 15-ի նամակը, որում խոսվում է իր պաշտոնը 2 աստիճանով բարձրացնելու պահանջի մասին):

29 Фомичев С.А., Гривоедов в Петербурге, Եվ. աշխ., էջ 55:

30 Гривоедов А.С., Сочинения, 1971, Եվ. աշխ., հ. 2, էջ 185 (1818թ. օգոստոսի 30-ի նամակը Մո. Բեգիչևին):

31 Նույն տեղում էջ 188 (1818թ. սեպտեմբերի 18-ին Կորոնեմից գրած նամակը Մո. Բեգիչևին):

32 Գրիբոեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», Եվ. աշխ., էջ 28:

338

33 Гривоедов А.С., Сочинения, 1971, Եվ. աշխ., հ. 2, էջ 192, 200-203 (1819թ. մարտի 26-ին Թեհրանից և 1820թ. փետրվարին Թավրիզից Պ. Կատենինին գրած նամակները), էջ 204-208 (1820թ. մայիսի 3-ին և հունիսի 25-ին Թավրիզից Ն.Ա. Կախովսկուն գրած նամակը), էջ 208-210 (1820թ. հունիսի 25-ին Թավրիզից Ա. Ռիլյակուն գրած նամակը):

34 Նույն տեղում էջ 190 (1818թ. հոկտեմբերի 12-ի նամակը):

35 Гривоедов. Его жизнь и гибель в мемуарах современников, Եվ. աշխ., էջ 41:

36 Берке Ад.П., "Самсонь хань, Макинцевь и русские беглецы въ Персию, 1806-1853", "Русская старина", Санкт-петербургъ, 1876, апрель, с. 770-804.

հայրենիք վերադառնալու ցանկություն ունեցող 70 ռուսների թույլ տալ վերադառնալ Ռուսաստան³⁷: Փախստական ռուս զինվորներին ռուսական կայսրության սահմաններ հասցնելու գործը հանձնարարվում է Ա. Գրիբոյեդովին: Չնայած ճանապարհի դժվարություններին և պարսից իշխանությունների հարուցած խոչընդոտներին՝ Ա. Գրիբոյեդովն ի վերջո կարողանում է բարեհաջող տեղ հասցնել իր ջոկատը³⁸:

Ա. Երմոլովը բարեհաճությամբ է ընդունում և գնահատում նրա կատարած աշխատանքը, որի մասին տեղեկացնում է Մ. Մազարովիչին, թե. «Ա. Գրիբոյեդովն իր ազնվածին պահվածքով հարուցեց Աբբաս-Միրզայի անբարեհաճությունն ու նույնիսկ կոպտությունը, միաժամանակ ոչ պակաս ազնիվ կերպով կանգնեցրեց նրան՝ հասկացնել տալով Ռուս աստիճանավորի արժանիքները»³⁹: Ա. Երմոլովն Ա. Գրիբոյեդովին նույնիսկ ներկայացնում է պարզևատրման, սակայն **արտաքին գործերի գերատեսչությունում գտնում են, որ «ղիվանագիտական աստիճանավորին վայել չէր այդպես վարվել»**⁴⁰:

1819-1821թթ. Ա. Գրիբոյեդովի ղիվանագիտական գործունեությունից **դժգոհելու առիթ են ունենում նաև անգլիացիները**: Հարցը կրկին առնչվում է փախստական ռուս զինվորներին: Ա. Գրիբոյեդովին հայտնի է դառնում, որ Պարսկաստանում անգլիական գործերի հավատարմատար **Հենրի Վիլյորի եղբայր Էդուարդը** և նրա ծառան Այսրկովկասից Պարսկաստան վերադառնալիս իրենց հետ սահմանն անց էին կացրել ռուս փախստականների մի ջոկատ, իսկ Էդուարդը նույնիսկ նրանցից երկուսին իր հետ բերել էր Թավրիզ: 1820թ. օգոստոսի 14 (26)-ին առաքելության քարտուղար Ա. Գրիբոյեդովը **հավատարմատար Ա. Մազարովիչի բացակայության պարագայում դարձյալ ինքնազույս կերպով բողոքի հայտագիր (նոտա) է հղում անգլիական հավատարմատար Հենրի Վիլյորին, որում նրա եղբորն ու ծառային**

37 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», նշվ. աշխ., էջ 46-49:

38 Նույն տեղում էջ 50-52, տես նաև Գրիբոեդով Ա.Ս., Сочинения, 1971, նշվ. աշխ., հ. 2, էջ 192-200 (Մ. Մազարովիչին 1819թ. սեպտեմբերի 6-ին, սեպտեմբերի 11-13-ին Ղազախիցից Ա. Գրիբոյեդովի գրած զեկուցազրույթը):

39 АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 403, էջ 219 (1819թ. նոյեմբերի 11-ի հաղորդագրությունը Մ. Մազարովիչին):

40 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 63, տես նաև Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», նշվ. աշխ., էջ 47 (1819թ. օգոստոսի 30-ին կայացած գրույցի ժամանակ Աբբաս-Միրզան Ա. Գրիբոյեդովին բարկացած խորհուրդ է տալիս «սուսուփուս ու հանդարտ» լինել անգլիացիների նման):

մեղադրում է ռուս զինվորներին դասավորության դրդելու մեջ⁴¹: Հավատարմատար Հ. Վիլյորի հանձնարարությամբ **բժիշկ Քոմմիրն ու կապիտան Հարթը** պատասխան հայտագրով այցելում են Ա. Գրիբոյեդովին⁴²: Այդ հայտագրում Հ. Վիլյորը հերքում է եղբոր հասցեին ուղղած մեղադրանքները⁴³, սակայն Ա. Գրիբոյեդովը Հ. Վիլյորի պահանջով ոչ միայն ետ չի վերցնում նրան ուղղած մեղադրական հայտագիրը, այլև հղում է երկրորդը, ինչին, արդեն, պատասխան չի տանում: Վերոհիշյալ ղիվավածի մասին տեղեկացնելով Լոնդոնի իր ղեկավարությանը՝ **Հ. Վիլյորն Ա. Գրիբոյեդովին բնութագրում է որպես «Ռուսաստանի և Պարսկաստանի հարաբերություններին վերաբերող խոսակցությունների ժամանակ չմտածված և անզուսպ լեզվի, բռնկուն և անսանձ բնավորության տեր անփորձ և անխոհեմ երիտասարդ»**⁴⁴:

Ա. Գրիբոյեդովի ղիվանագիտական գործունեությունը, ինչպես նրշվեց, սերտորեն առնչվում է նաև 1821-1823թթ. պարսկա-թուրքական պատերազմից առաջ և դրա ժամանակ ընթացող ռուս-պարսկական հարաբերություններին: Ռուսաստանին անցած տարածքային կորուստները թուրքերի հաշվին փոխհատուցելու հեռանկարից թևավորված թագաժառանգ Աբբաս-Միրզան, **ոգևորված նաև Հունաստանի հարցում ռուս-թուրքական հարաբերությունների սրումից ու նրանց միջև պատերազմի հավանականությունից**⁴⁵, **Ռուսաստանի բարեհաճությունը շա-**

41 А.С. Грибоедов. Полное собрание сочинений в трех томах, 1995-2006, Изд. ред-ор С.А. Фомичев, Санкт-Петербург 2006, том III, с. 189-190, տես նաև Կунин В.Г., А.С. Грибоедов: новое в известном, նշվ. աշխ., էջ 34-35 (Հ. Վիլյորին ուղղված բողոքի հայտագրից մի քանի ամիս առաջ, սահմանների անփոփոխելիության հետ կապված կատավարական նրանհանցանքը Ա. Մազարովիչի կողմից թեմերական արքեպիսկոպոսի «զոլոչոբեն» տեղակ պահելուց հետո, Աբբաս-Միրզան կարող վերաբերմունք է ցուցաբերում, ինչին հետևում են պարսկալիքները ռուսական անարելության հասցեին: Վկայակոչելով АКАК, в. VI, փաստ. 414-ը (էջ 226) այս դեպքերի շուրջ Վ. Թուխանը գրում է որ Աբբաս-Միրզայի և պարսկական կողմի սպանալիքներից խուճապի մատնված Ա. Մազարովիչին Ա. Երմոլովը չի ազատում Պարսկաստանում հավատարմատարի պաշտոնից և 1820թ. մարտի 11-ին Կ. Նևսեյրոդիկի ուղղված զեկուցագրում գրում է որ մինչև սահմանածի վերջնական հաստատումը նա օգտակար է լինելու, քանի որ այս դեպքում ոչ մեկն էլ վիճակի չէր նրա պես գործելու: Այստեղ բնական հարց է ծագում Ա. Մազարովիչի բացակայության պարագայում համարձակություն և ինքնազույսություն դրսևորող Ա. Գրիբոյեդովին գովաբանող և միշտ նրա համար բարեխոսող Ա. Երմոլովի ինչու՝ այդ պարսկականությունները չէր որևէ նրա վրա):

42 Шостакович С.В., Дипломатическая деятельность..., նշվ. աշխ., էջ 65:

43 А.С. Грибоедов. Полное собрание сочинений..., 2006, նշվ. աշխ., էջ 191-197:

44 Шостакович С.В., Дипломатическая деятельность..., նշվ. աշխ., էջ 66:

45 Истиярия Ирана, Отв. ред-ор М.С. Иванов, նշվ. աշխ., էջ 230-231, տես նաև Բалаян Борис, Кровь на алмазе "Шах", նշվ. աշխ., էջ 10-12, Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, նշվ. աշխ., էջ 52, История дипломатии, Отв. ред-ор О.Ю. Клокова, նշվ. աշխ., էջ 431 (Տրոպայատի 1820թ. հոկտեմբերի 11(23) և Լայթախի 1821թ. մայիսի 12-ի, 1822թ. հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 14-ը Վերոնայի վեհաժողովների մասին մանրամասն տես էջ 432-436: Անգլիան և Ավստրիան ստիպում են, որ Ռուսաստանը հրաժարվի իրենց օրինական (լեգիտիմ) տիրակալ սուլթանի դեմ ապստամբած հույներին օգնելու մտքից: Այստեղ մեծ դեր է խաղում նաև Ռուսաստանում Մեմոնովյան գեղի ապստամբությունը, որի մասին Ալեքսանդր I-ը խնայում է Ավստրիայի կանցլեր Մետերնիխից: Ալեքսանդր I-ը հույն-թուրքական խնդիրը դուրս է բերում կրոնական հարթություն, իսկ Անգլիան հետո վերանայում է Վերոնայի վեհաժողովում լեգիտիմիզմ վերաբերյալ իր վերաբերմունքը և հավաքվում է «Սրբազան դաշինքի» երկրներին պաշտպանելու ազգային-ազատագրական ելույթները, տես նաև Մ. Մուրադյան, Է. Մխչյան, Ռուսաց ղիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIXդդ.), նշվ. աշխ., էջ 222-226 (ավստրիացի կանցլեր Կլեմենս Վեցել Լոթար Մետերնիխը «Սրբազան դաշինք»-ը, որը ստեղծվել էր 1815թ. սեպտեմբերի 14(26)-ին, բնորոշում է որպես «դատարկ և գրեզու փաստաթուղթ»), АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 464, էջ 252 (Գեներալ Երմոլովի 1821թ. նոյեմբերի 9-ի հաղորդագրությունը Կ. Նևսեյրոդիկի՝ քրիստոնյա հույներին թուրքերի կողմից նեղելու հարցում Աբբաս-Միրզայի վրդովմունքի մասին):

հելու մտադրությամբ նույնիսկ այցելում է Էջմիածին և կաթողիկոսին խնդրում է քրիստոնեական արարողակարգով օծել իր սուրը⁴⁶: Դաստիարակության պատրվակով իր որդիներինց մեկին Սանկտ-Պետերբուրգ ուղարկելու, Թալիշի խանությունն ու մի քանի թնդանոթներ ետ վերադարձնելու խնդրանքներով պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզան ղիմում է ռուսական կառավարությանը⁴⁷: Մինևույն ժամանակ խաթարված անգլո-պարսկական հարաբերությունները վերականգնելու⁴⁸, Անգլիայի դիրքորոշումը մեղմելու և առավել զիջողական դարձնելու համար Աբբաս-Միրզան ղիմում է խորամանկության. վերջինս Անգլիայից 25-30 հազար թումանի զենք է գնում և վճարելու համար կարճաժամկետ և անտոկոս փոխառություն տրամադրելու խրնդրանքով ղիմում է Ռուսաստանին: **Ըստ դրա՝ ռուսական կողմը գումարը հանձնելու էր ոչ թե Պարսկաստանում, Թիֆլիսում (Թբիլիսի) կամ Սանկտ Պետերբուրգում, այլ Լոնդոնում՝ այնտեղ գտնվող Ռուսաստանի դեսպան Խ. Լիվենի միջոցով:** Պարսկական կողմն էլ իր հերթին **Ռուսաստանին վճարումները կատարելու էր Թիֆլիսում:** Հասկանալով, որ գործարքը Լոնդոնում կատարելու դեպքում ամենը հայտնի է դառնալու Անգլիայում և հարուցելու է տեղի կառավարության բողոքը, Ա. Երմոլովին հրահանգվում է գործարքը կազմակերպել Սանկտ Պետերբուրգում, սակայն դա կատարել չի հաջողվում: Արդյունքում **ռուսական դեսպան Խ. Լիվենը բողոքի հայտագիր է ստանում անգլիական կառավարությունից⁴⁹:**

46 Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах..., ևշվ. աշխ., էջ 9:

47 АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 455, 456, էջ 246-248 (1821թ. սեպտեմբերի 18-ի գեկուցագիրը Կ. Նեսևերդիին), Աբբաս-միրզայի խնդրանքների վերաբերյալ Ա. Երմոլովի կարծիքը և Կ. Նեսևերդիի պատասխանը տես՝ փաստ. 456, էջ 247-248, փաստ. 462, էջ 250-251 (1821թ. հոկտեմբերի 31-ի գրություն Ա. Երմոլովին):

48 Баян Борис, Кровь на алмазе "Шах", ևշվ. աշխ., էջ 15-18 (անգլիացիների կողմից Քելեզ կղզիի գրավելու, իրանա-թուրքական պատերազմի պատճառով խաթարված անգլո-իրանական առևտրի, ֆրանսիացիների Իրանի կողմից ծառայության վերցնելու, 1814թ. անգլո-իրանական պայմանագրով որոշված 200.000 թումանի վճարումը Անգլիայի կողմից մերժելու, Շահի կողմից դավաճանության մեջ մեղադրված Հ. Վիլյամսի և Մաքսելի կողմից Իրանը լքելու մասին), տես նաև՝ АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 464, էջ 252-253 (Ա. Երմոլովի՝ 1821թ. նոյեմբերի գեկուցագիրը Կ. Նեսևերդիին՝ անգլիացիների ջանքերով Պարսկաստանի և թուրքերի կողմից Ռուսաստանի դեմ համատեղ դաշինքով հանդես գալու մասին), փաստ. 466, էջ 253-254 (պատերազմում Պարսկաստանի անհաջողությունների մասին):

49 АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 478, էջ 259, փաստ. 479, էջ 259-260 (Ա. Երմոլովի՝ 1822թ. մարտի 27-ի հաղորդագրությունը Կ. Նեսևերդիին), Բորիս Բալայանը թյուրիմացաբար նշում է ոչ թե 25 կամ 30 հազար թուման, այլ՝ 100.000 թուման գումար: Բանն այն է, որ այդ ժամանակ 1 թումանը հավասար էր ռուսական 4 ռուբլու արծաթով, և 25 հազար թումանը կկազմեր 100.000 ռուբլի (տես նրա՝ Кровь на алмазе "Шах", ևշվ. աշխ., էջ 19): Փոխառության հետ կապված հարցերի գործարքը Լոնդոնում կատարելուց Ռուսաստանի խուսափելու, Աբբաս-Միրզայի կողմից Լոնդոնում դրա կայացումն անխուսափելի դարձնելու և այն ձախողելու (Անգլիայի ջանքերի մասին տես՝ АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 484, էջ 262-263, փաստ. 485, էջ 263 (Պարսկաստանը վճարումները կատարելու էր Թիֆլիսում), փաստ. 488, էջ 265-267 (1822թ. մայիսի 3-ի Ա. Երմոլովի գեկուցագիրը Միրզա-Մալեհի՝ խոստումը չպահելու և Պետերբուրգով Լոնդոն մեկնելու մասին)), ВПР, 1815-1830 гг., том четвертый (двенадцатый), март 1821г. - декабрь 1822г., док. 196, с. 564-565 (Աբբաս-Միրզային ուղղված կայսր Ալեքսանդրի նամակը), Баян Борис, Кровь на алмазе "Шах", ևշվ. աշխ., էջ 20 (Ջ. Քանինգի Թավրիզի ռուսական ապարելության գործունեությունը դատապարտող հայտագիրը ռուսական դեսպան Խ. Լիվենին):

Որոշ ժամանակ անց կազմակերպելով վերոհիշյալ ճարպիկ ու խորամանկ խաղը՝ Աբբաս-Միրզան հասնում է նրան, որ մեղմանում է 1814թ. Թեհրանի պայմանագրով խոստացված դրամական օժանդակությունը չվճարելու հարցում Անգլիայի դիրքորոշումը: Հետագայում համոզվելով, որ Ռուսաստանն ամենևին էլ չի ցանկանում պատերազմել Օսմանյան Թուրքիայի դեմ, իսկ երկրում ծագած ներքին հակապետական ելույթները թուլացնում են Պարսկաստանը⁵⁰, պարսից կողմը Լոնդոնում 1823 թ. հուլիսի 15-ին թուրքական դեսպանի հետ պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին ստորագրում է «քաղաքական համաձայնագիր», որով համատեղ ելույթ էր նախատեսվում նաև Ռուսաստանի դեմ⁵¹: Արդեն 1823թ. հուլիսի 28-ին Էրզրումում (Կարին) կնքվում է թուրք-պարսկական հաշտության պայմանագիրը, որով վերականգնվում են նախկին սահմանները⁵²:

Դեռևս 1821թ., ելնելով թուրք-պարսկական հակառուսական դաշինքի հավանականությունից, Ա. Երմոլովը Ս. Մազարովիչին առաջարկում էր Աբբաս-Միրզայի ուշադրությունը շեղել նրա մյուս եղբոր կողմը՝ ցույց տալով, թե վերջինս կանոնավոր բանակ ստեղծելու գործում որքան հաջողություններ է ունեցել, և հնդկական առևտրի շնորհիվ նա ինչ մեծ շահույթներ էր ստանում անգլիացիներից, ու հասկացնել նրան, որ ամենից ավելի լավ հնարավոր չի լինի ձեռք բերել ժողովրդի վստահությունն ու նվիրվածությունը, ինչպես թուրքերից մի քանի շրջաններ միացնելով՝ ընդարձակել պետության սահմանները, ինչը տվյալ խառնակ իրավիճակում, առավել ևս Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում, թուրքերն ի վիճակի չէին արգելել⁵³:

Ա. Երմոլովը հրահանգում էր Ս. Մազարովիչին հատուկ ուշադրություն դարձնել Անգլիայի բոլոր գործակալների գործունեությանը: Ռուսաստանի դեսպան Գ. Ստրոգանովի կողմից դիվանագիտական հարաբերությունները խզելուց և 1821թ. օգոստոսի 10-ին Կոստանդնուպոլիսը լքելուց հետո Ս. Մազարովիչն ու Ա. Գրիբոյեդովը ձեռնամուխ են լինում կատարել Ա. Երմոլովի «հրահանգները» և հանդիպելով Աբբաս-

50 Игамбердиев М.А., Иран в международных отношениях первой трети XIX века, ևշվ. աշխ. էջ 193:

51 Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, ևշվ. աշխ. էջ 53:

52 Баян Борис, Кровь на алмазе "Шах"..., ևշվ. աշխ., էջ 25, АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 523, էջ 282 (1823թ. օգոստոսի 5-ի՝ Պարսկաստանում ռուսական առաքելության քարտուղար Ա. Ամբուրգերի գեկուցագիրն Ա. Երմոլովին, որում հայտնվում է պարսիկ մի ֆառաշից լսած տեղեկությունը՝ Պարսկաստանի դեմ որևէ հարևան երկրի հարձակման դեպքում Թուրքիայի օգնության մասին):

53 АКАК, 1875, в. VI, մաս II, փաստ. 447, էջ 242-243 (1821թ. հուլիսի 1-ի նամակը Ս. Մազարովիչին):

Միրզային՝ նկարագրում են այն օգուտները, որոնք կարող էր ունենալ Պարսկաստանը՝ Թուրքիայի դեմ պատերազմելու դեպքում, քանի որ թուրքերը զբաղված էին հունական ապստամբությունը ճնշելու գործով⁵⁴:

Հակառակ Ա. Երմոլովի հղած հրահանգների՝ արտաքին գործերի գերատեսչության ղեկավար կոմս Կ. Նեսսեյրոդեն Ս. Մազարովիչին տեղեկացնում էր, որ Ռուսաստանն ամեն ինչ անելու է, որ Թուրքիայի հետ լարված հարաբերությունները կարգավորվեն միմյանց երկու երկրների դիվանագիտության շրջանակներում, սակայն, եթե հնարավոր չլիներ խաղաղություն պահպանել, ապա Պարսկաստանի ռուսական առաքելության խնդիրն էր այնպես անել, որ այդ երկիրը պահպաներ չեզոքություն և ընդդեմ Ռուսաստանի՝ չղաշնակցեթ Թուրքիայի հետ: **Կ. Նեսսեյրոդեն չի բացառում, որ թուրքերի մոտ առաջանար Պարսկաստանի օժանդակությունը ձեռք բերելու ոչ խելամիտ ցանկություն թեկուզև այն բանի համար, որ նրան էլ իր հետ ներքաշեր աղետի մեջ, որն այդ ժամանակ նրանց համար կդառնար ընդհանուր: Անկախ ռուս-թուրքական հարաբերություններից՝ Պարսկաստանի բարգավաճման ու ծաղկման, ինչպես նաև Ռուսաստանի հետ կապերի ամրապնդման իմաստով էլ, ըստ Կ. Նեսսեյրոդեի, Ս. Մազարովիչին հարկավոր էր բացատրվել պարսկական նախարարության հետ⁵⁵:**

Ինչպես տեսնում ենք, **ակնհայտ հակասություն կա** Ա. Երմոլովի և Կ. Նեսսեյրոդեի պաշտոնական հրահանգների միջև. եթե Ա. Երմոլովը ցուցում էր տալիս Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև ամկա հակասություններն օգտագործելով խափանել նրանց միջև հնարավոր հակառուսական դաշինքը և հարմար պահից օգտվելով՝ Պարսկաստանին դրդել Թուրքիայի դեմ պատերազմի, ապա, հաշվի առնելով անգլիական գործոնը, Կ. Նեսսեյրոդեն հրահանգում էր Պարսկաստանին բացատրել միջազգային իրավիճակը, և Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմի դեպքում այնպես անել, որ Պարսկաստանը պահպաներ չեզոքություն: Պարսկական կողմին պետք է բացատրվեր, որ Օսմանյան Թուրքիայի հետ իրենց հարաբերություններում չառաջնորդվեն այդ պետության և Ռուսաստանի հարաբերություններին վերաբերող եզրահանգումներով: Հարկավոր է եղել պարսիկներին ներշնչել միայն այն, որ բարեկամությունը ռուսների հետ մեծ օգուտներ կբերեր

նրանց⁵⁶: **Այսքանով հանդերձ՝ Պարսկաստանում ռուսական դեսպանական առաքելությունն իր հետագա գործողություններում ավելի շատ առաջնորդվում է ոչ թե կառավարության և .հատկապես Կ. Նեսսեյրոդեի՝ Ռուսաստանի համար այս փուլում առավել իրատեսական հրահանգներով, այլ Ա. Երմոլովի ցուցումներով:**

Իր հղած երկու հաղորդագրություններից առաջինում **Կ. Նեսսեյրոդեն կայսեր անունից Ա. Երմոլովին հանձնարարում է պարզել այն աղբյուրը, որի միջոցով անգլիացիները ենթադրաբար եզրակացրել են պարսկա-թուրքական հարաբերությունները սրելու նպատակով Ռուսաստանի՝ իբր իրականացրած գործողությունների մասին⁵⁷**, իսկ մյուսում՝ վերոհիշյալ փոխառության գործարքը կատարել Թիֆլիսում կամ Պարսկաստանում, որպեսզի **ոչ մեկը հետո իրենց չմեղադրի Թուրքիայի դեմ պատերազմի հրահրմանը կամ դրա շարունակմանն աջակցելու մեջ⁵⁸:**

Ա. Երմոլովը Կ. Նեսսեյրոդեին տեղեկացնում է, որ պարսից արքունիքում անգլիական հավատարմատար Հ. Վիլյոքսն է իր կառավարությանը տեղեկացրել, թե իբր Ս. Մազարովիչն Աբբաս-Միրզային 30.000 թուման է առաջարկել և գրգռել Թուրքիայի դեմ պատերազմի: Պաշտպանելով օժտված գործակալ Ս. Մազարովիչին և գտնելով, որ թուրքերի դեմ Պարսկաստանի պատերազմն ավելի շուտ կարող էին կանխել Աբբաս-Միրզայի վրա ավելի մեծ ազդեցություն ունեցող անգլիացիները, քան Ս. Մազարովիչը կարող էր այն հրահրել՝ Ա. Երմոլովը գրում է. «**Անհրաժեշտ են հավաստիազույն ապացույցներ և ոչ թե վատ ընտրված կամ ավելի վատ օգտագործվող լրտեսների բամբասանքներ**»⁵⁹:

Պատասխան երկրորդ գրության մեջ Ա. Երմոլովը գրում է, որ անգլիացիները շատ ավելի մեծ գումարներ են տրամադրում Պարսկաստանին՝ մարզելով նրանց բանակն ու **թուրքերին էլ հավաստիացնելով, թե այդ ամենն ուղղված չէ նրանց դեմ, ապա, ըստ նրա, այդ դեպքում Պարսկաստանի հարևաններից ու՛մ դեմ էր դա ուղղված⁶⁰:**

Անգլիայի հետ հարաբերությունները չբարդացնելու կողմնակից Ա. Նեսսեյրոդեն չէր կարող համաձայնվել Ա. Երմոլովի վերոհիշյալ տե-

56 ВПР, том четвертый (двенадцатый), изд. 2-е, ф. 142, л. 402-405:

57 АКАК, 1875, к. VI, м. II, ф. 477, л. 258 (1822թ. մարտի 10-ի հաղորդագրություն Ա. Երմոլովին):

58 Նույն տեղում՝ փաստ. 483, էջ 262 (1822թ. ապրիլի 12-ի հաղորդագրություն Ա. Երմոլովին):

59 Նույն տեղում՝ փաստ. 478, էջ 259 (Ա. Երմոլովի՝ 1822թ. մարտի 27-ի պատասխանը Կ. Նեսսեյրոդեին):

60 Նույն տեղում՝ փաստ. 488, էջ 266 (1822թ. մայիսի 3-ի գրությունը Կ. Նեսսեյրոդեին):

54 Балаян Борис, Кровь на алмазе "Шах", изд. 2-е, л. 12:

55 ВПР, том четвертый (двенадцатый), изд. 2-е, ф. 79, л. 211-213 (1821թ. հուլիսի 7 (19)-ի գրությունը):

ասկետներին: **Ա. Երմոլովին և Ս. Մազարովիչի դեսպանական առաքելությանը պաշտոնական հրահանգներով և ցուցումներով բացատրվել էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակները, սակայն Պարսկաստանում նրանց գործունեությունն Անգլիային առիթ է տալիս բողոքի հայտագիր հղել Ռուսաստան:** Աշխատանքում դրսևորած այդպիսի թերացումներին և անխոհեմությանը կառավարությունն անտարբեր կամ իմիջիայլոց չի վերաբերվում, և, իրադրությունը շրտկելու նպատակով օգտագործելով Ս. Մազարովիչի՝ արձակուրդ ստանալու խնդրանքն ու Թավրիզում բռնկված խուլերայի համաճարակի առիթը՝ **Կ. Նեսսելրոդեն վերջինիս և գրեթե ողջ դեսպանակազմը հենացնում է Պարսկաստանից՝ «հարգելով» նաև Ա. Երմոլովի հաղորդագրություններում իրեն ուղղված խնդրանքը**⁶¹: Մինչ այդ Կ. Նեսսելրոդեն «բավարարել» էր **Ա. Գրիբոյեդովին պարզևատրելու**⁶² և կոչումի մեկ աստիճան բարձրացումով **Ա. Երմոլովի շտաբում արտաքին գործերի քարտուղար նշանակելու վերաբերյալ իրեն ուղղված խնդրանքը**⁶³:

Ա. Երմոլովի մոտ ծառայության անցնելը նաև Ա. Գրիբոյեդովի ցանկությունն էր: **Ա. Գրիբոյեդովին ծառայության նշանակելու խընդրանքն Ա. Երմոլովը հիմնավորել էր Թավրիզից Թիֆլիս մեկնելու ճանապարհին նրա կոտորված ձեռքը բուժելու և իր շտաբում այդ երիտասարդի նման աշխատասեր, ընդունակ և պարսկերենի գերազանց իմացությամբ ենթականեր չունենալու պատճառաբանություններով**⁶⁴:

Կ. Նեսսելրոդեն չի առարկում Ա. Երմոլովի խնդրանքին. չնայած Ա. Գրիբոյեդովի ընկերը լինելու հանգամանքին՝ **նա դժգոհ էր վերջինիս աշխատանքից**: Իրա վկայությունն են Աբբաս-Միրզայի հետ տեղի ունեցածի կապակցությամբ նրա վերոհիշյալ հանդիմանությունը, ինչպես նաև 6 տարի անց՝ 1828թ. գեներալ Ի.Ֆ. Պասկևիչին Թավրիզից գրած Ա. Գրիբոյեդովի նամակը, որում, դարձյալ խոսելով Պարսկաստանին Օսմանյան Թուրքիայի դեմ տրամադրելու մասին (ընթանում էր 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը – Վ.Ս.), Ա. Գրիբոյեդովը գրում է. **«Թափ տվեք մեր քնատ արտաքին և ամենատարօրինակ նախարարությանը: Ձերդ պայծառափայլություն. Աբբաս-Միրզայի հաշվով ուղիղ տիրակալին**

61 АКАК, 1875, т. VI, мѡа II, фшас. 492, էջ 267-268, фшас. 498, էջ 270 (Ա. Երմոլովի՝ 1822թ. հուլիսի 8-ի և օգոստոսի 18-ի գրությունները Կ. Նեսսելրոդեին):

62 Նույն տեղում՝ փաստ. 465, էջ 253, տես նաև Александръ Сергеевичъ Трибоедовъ в Персии и на Кавказе (1818-1828), էջվ. հոդվ., հ. XI, էջ 276-302, 517-534, 746-765:

63 Նույն տեղում՝ փաստ. 471, էջ 255-256 (Ա. Երմոլովի՝ 1822թ. հունվարի 12-ի գրությունը Կ. Նեսսելրոդեին):

64 Նույն տեղում՝ փաստ. 471, էջ 255-256 (Ա. Երմոլովի՝ 1822թ. հունվարի 12-ի նամակը Կ. Նեսսելրոդեին):

գրեցեք Ձեր կարծիքը, թե լավ կլինի նրան զինել թուրքերի դեմ: Ես առանց ղեկավարության հատուկ հաստատման չեմ կարող դա ինձ վրա վերցնել: 1821թ. ես դա շատ հաջող իրականացրեցի և Նեսսելրոդեից թուր ու մոր ստացա (получил голову мою), չնայած Երմոլովը լրիվ հավանության էր արժանացրել ինձ: Հիմա էլ կարող է այդպես պատահել. Դուք ինձ կգովեք, իսկ սատանաները կկտցահարեն: Աբբաս-Միրզան ևս ինձ չի հավատա, քանի դեռ ես նրան չեմ հայտարարի տիրակալ կայսեր կամքը»⁶⁵:

Դիվանագիտական ծառայությունից **ակնհայտորեն խուսափող** և Պ. Կատենին ուղղած նամակում իրեն **«թափառական առաքելության քարտուղար»**⁶⁶ համարող Ա. Գրիբոյեդովը Թավրիզից Ն.Ա. Կախովսկուն գրած նամակում երդվում է. «Նույնիսկ հանուն Օրանգ-Ձեբի գանձերի՝ Կովկասից այս կողմ (Պարսկաստանում - Վ.Ս.) ոչ մի տեղ և ոչ մի անգամ այլևս ու հավիտյան չբնակվել»⁶⁷: Ա.Բ. Ռիխտսկուն հղած նամակում իր ընտրած ծառայության մասին սրտաբուխ, անկեղծ պոռթկումով Ա. Գրիբոյեդովը գրում է. «Ի՞նչ կյանք է սա... Ավելի լավ էր նետվել Ներչինսկի գործարանների քուրաները և հիմա կոչում եմ Հորին. կործանվի այն օրը, երբ ես հազա օտարերկրյա կողեգիայի համազգեստ, և կործանվի այն առավոտը, երբ ինձ կոչեցին տիտղոսավոր խորհրդական»⁶⁸: «Անծանոթին» Թավրիզից գրած նամակում Ա. Գրիբոյեդովը խնդրում էր **իրեն ազատել ծառայությունից** կամ **«ետ կանչել թախժոտ երկրից, որտեղ ոչ միայն չէր կարելի ինչ-որ բան սովորել, այլև՝ մոռանալ այն, ինչ գիտեր նախկինում»**⁶⁹:

Դիվանագիտական ծառայության նկատմամբ վերոհիշյալ ակնհայտ տհաճության և ձանձրույթի դրսևորումներն Ա. Գրիբոյեդովի մոտ ժամանակավոր բնույթ չեն կրել. դրանք ուղեկցել են նրան նաև Հյուսիսային Կովկասում և Այսրկովկասում Ա. Երմոլովի շտաբում նրա անցկացրած հետագա տարիներին: Այդպիսի դրսևորումներ կարելի է համարել **Ա.Ա. Բեստուժեին**⁷⁰, **Ստ. Բեգիչևին**⁷¹, **Ա. Ժանդրին** և **Վ.Ս. Միկլաշևիչին**⁷² ուղղված նամակները:

65 Трибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, с. 328-329 (1828թ. ղեկոտներին 3-ի նամակն Ի. Պասկևիչին): Այս նամակում խոսքը 1821թ. բռնկված թուրք-պարսկական պատերազմին նախորդած դեպքերի մասին է, որին դեռ կանխարդանանք:

66 Նույն տեղում՝ էջ 200-203 (1820թ. փետրվար):

67 Նույն տեղում՝ էջ 207-208 (1820թ. հունիսի 25-ի նամակը Ն. Կախովսկուն):

68 Նույն տեղում՝ էջ 208-210 (1820թ. հունիսի 25-ի նամակը):

69 Նույն տեղում՝ էջ 213-214 (1820թ. նոյեմբերի նամակը):

70 Նույն տեղում՝ էջ 252-253 (1825թ. նոյեմբերի 22-ի նամակը):

71 Նույն տեղում՝ էջ 256-258 (1825թ. ղեկոտներին 7-ի նամակը):

72 Նույն տեղում՝ էջ 258-259 (1825թ. ղեկոտներին 18-ի նամակը):

Պարսից արքունիքի հետ ևս Ա. Գրիբոյեդովի փոխհարաբերությունները հարթ չեն ընթացել: Չնայած նրա մտերիմ ընկեր Ֆ.Վ. Բուլգարինը գրում է, **թե վարքագծով ու բնավորությամբ Ա. Գրիբոյեդովը ձեռք էր բերել անգլիական ողջ դեսպանակազմի հարգանքը Թավրիզում, ինչպես նաև վայելում էր պարսից գահաժառանգ Աբբաս-Միրզայի հատուկ բարեհաճությունը, և որ վերջինս անկեղծ սիրում էր Ա. Գրիբոյեդովին ու հաճույք էր զգում նրա հետ զրուցելիս⁷³, չեն հաստատվում այլ վկայություններով, փոխարենը հակասության մեջ են մտնում պարսիկ պաշտոնյաների և Աբբաս-Միրզայի՝ իր հանդեպ դրսևորած թշնամական վերաբերմունքի մասին Ս. Մազարովիչին⁷⁴, Պ. Կատենինին⁷⁵ Ա. Գրիբոյեդովի գրած նամակների ու «Ճանապարհորդական նոթեր»-ի⁷⁶ տեղեկությունների հետ:**

Ֆ. Բուլգարինը վկայում է, որ պարսից բոլոր գերաստիճան պաշտոնյաները նույնպես հարգում էին Ա. Գրիբոյեդովին այն բանի համար, որ վերջինս մեծապես նպաստել էր Աբբաս-Միրզայի և Վրաստանի ռուսական կառավարչության միջև բարի համաձայնությանը⁷⁷, **սակայն այս վկայությունը ևս չի կարելի ընդունել անվերապահորեն, իսկ անգլիական դեսպանակազմի հարգանքի մասին տեղեկությունը քննություն չի բռնում Հ. Վիլյորի հետ Ա. Գրիբոյեդովի բախման և Հ. Վիլյորի կողմից Լոնդոնի իր կառավարությանը նրա հասցեին գրած բացասական որակումների մասին վերոհիշյալ դրվագի հետ համեմատելիս: Ինչ վերաբերում է Ս. Մազարովիչի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերին, ապա փաստենք, որ նրա հետ հարաբերություններում էլ ի հայտ են գալիս վերջինիս նաև ազգայնական հայացքների դրսևորումները:** Այսպես, Ա. Գրիբոյեդովը Ն. Մուրավյով-Վարսկուն պատմել է, որ Պետերբուրգից պարսից արքունիքին ուղղված թղթեր են ստացվել, որոնցում պարսիկներին տեղեկացվել է, որ թուրքերի պահվածքը վերջիններիս վրա էր հրավիրել կայսեր ցասումը: Ըստ ռուսական կողմի՝ թուրքերն են կայսրին դրդել պատերազմի, հետևաբար անհրաժեշտ է եղել Աբբաս-Միրզային բացատրել, որ **կայսրը ցանկացել է՝ բոլոր ժողովուրդներն իմանան, որ նվաճումների հանդեպ**

իր կիրքը չէ, որ մղել է դրան, այլ թուրքերի ոչ ճիշտ արարքները: Ա. Գրիբոյեդովին առաջարկվում է այդ ամենն Աբբաս-Միրզային բացատրել և նշել, որ կայսրը դաշնակիցներ չի պահանջում, այլ միայն հասկացնում է դրա մասին: Ուրախացած Աբբաս-Միրզան խոստանում է թուրքերի դեմ հանել 50.000 զինվոր: Մյուս օրը Աբբաս-Միրզային տեսակցում է հավատարմատար Ս. Մազարովիչը, կրկին շոշափում նույն խնդիրը, բայց, **փոխանակ պարկեշտություն պահպանելու, Աբբաս-Միրզային խնդրում է դաշնակցել Ռուսաստանի հետ, և երբ վերջինս համաձայնում է, Ս. Մազարովիչը «խլում է» նրա ձեռքը և ի նշան շնորհակալության՝ համբուրում է այն:** «Ահա մեր ծառայության մեջ օտարերկրացուն, վարձկանին վայել արարք»- ասել է Ա. Գրիբոյեդովը⁷⁸:

Այստեղ պետք է կրկին շեշտել, որ նախ Ա. Գրիբոյեդովի «պատմածը» չի փաստվում Կ. Նեսսելրոդի վերոհիշյալ հրահանգների բովանդակությամբ, երկրորդ՝ հիշյալ որակումները հակասության մեջ են մտնում Ս. Մազարովիչին ուղղված մի գեկուցագրի այն տողերի հետ, որոնցում Ա. Գրիբոյեդովը գրում է. «Վերջապես, բարեզույթ տեր, իմ մտքերում ես մշտապես ունեցել եմ Ձեր ամբողջ օրինակը, հավասարապես նաև՝ շահի և Նայիր-Մուլթանի արքունիքներում Ձեր դրսևորած չափավորության օրինակը: Ես ինքս էլ եմ ունեցել բավականին զսպվածություն. ինձ չեն կարողացել մոլորեցնել: Նույնիսկ գրգռված վիճակում ես ինձ թույլ չեմ տվել սթափ դատողությանը վերագրվող սահմանն անցնել և չեմ վիրավորել ոչ մեկին, և եթե Ձեզ դրա մասին այլ կերպ գեկուցեն, դա կլինի մաքուր կեղծիք: Համարձակվում եմ դրանում Ձեզ հավաստիացնել պատվովս⁷⁹»: Այս տողերն էլ իրենց հերթին հակասության մեջ են մտնում Վիլյոր եղբայրների և Աբբաս-Միրզայի հանդեպ նրա կտրուկ պահվածքի և արտգործնախարարության տված գնահատականների հետ:

1812թ. հերոս գեներալ Դ. Դավիդովը նշում է, որ լինելով Ս. Մազարովիչի դեսպանության կազմում՝ Ա. Գրիբոյեդովը «ոչինչ չսովորեց այն վերաբերմունքից, որն անհրաժեշտ էր պարսիկների ազգային ինքնասիրությունը, սովորույթներն ու բարքերը հարգելու կապակցությամբ: Նա չէր կարողանում տարբերություն դնել «զիջողականության»

73 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 13:

74 Грибоедов А.С., Сочинения, 1971, նշվ. աշխ., հ. 2, էջ 194-200 (1819թ. սեպտեմբերի 11-13-ի և 1820թ. փետրվարի նամակները):

75 Նույն տեղում՝ էջ 200-203 (1820թ. փետրվարի 20-ի նամակը Թավրիզից):

76 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», նշվ. աշխ., էջ 49:

77 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 13:

78 "Записки Николая Николаевича Муравьева-Карскаго (декабрь 1821 - май 1822)" (Баку-Тифлиς), նշվ. աշխ., էջ 104-105 (Ն. Մուրավյով-Վարսկու 1822թ. փետրվարի 2-ին գրած հուշերից): Այս դեպքերն է Ա. Գրիբոյեդովի նկատի ունեցել, երբ 1828թ. դեկտեմբերի 3-ին գրում էր Բ. Պասկևիչին (Грибоедов А.С., Сочинения, 1971, հ. 2, էջ 328-329), տես նաև Միսնյան Վ., «Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ...», նշվ. հոդվ., էջ 184-185:

79 Грибоедов А.С., Сочинения, 1971, նշվ. աշխ., հ. 2, էջ 194-200 (1819թ. սեպտեմբերի 11-13-ի գեկուցագիրը):

և «կտրուկ» պահանջների միջև»⁸⁰: **Չնայած Գ. Գավիդովի հուշերում երբեմն հնչում են խիստ ծայրահեղ և միտումնավոր որակումներ, սակայն այս դեպքում նրա տված արդարացի գնահատականները հաստատվում են Պարսկաստանում դեսպան եղած ժամանակ Ա. Գրիբոյեդովի պահվածքի փաստերով:**

Ս. Մազարովիչի հասցեին ուղղված պաթետիկ, գովաբանական վերոհիշյալ որակումներն ակնհայտորեն չեն համաձայնեցվում իր ընկերների նուղված նամակներում **դարձյալ նրա հասցեին արված ծաղրական, արհամարհական որակումների հետ:** Տպավորություն է ստեղծվում, որ Ա. Գրիբոյեդովը, Աբբաս-Միրզայի հետ Ս. Մազարովիչի հանդիպման մասին Ն. Մուրավյովին ներկայացրած «դրվագում» ռուսական հավատարմատարին «օտարերկրացի», «վարձկան» որակումներով նսեմացնելով, **փորձել է առաջին հարթություն մղել դիվանագիտական իր որակները: Ինչ վերաբերում է հիշյալ «դրվագում», ի նշան շնորհակալության Աբբաս-Միրզայի ձեռքը Ս. Մազարովիչի կողմից համբուրելու մասին վկայությանը, փաստենք, որ դրանում լուրջ անորոշություն կա: Նախ՝ Պետերբուրգից ստացված իմ կամ ինչ «թղթերի» մասին է խոսքը: Մեզ հայտնի և սույն աշխատության մեջ ներկայացված՝ Ա. Երմոլովին ու Ս. Մազարովիչին ուղղված՝ այն ժամանակների կառավարական-պաշտոնական գրություններում ոչ մի տեղ չի նշվում Պարսկաստանին Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմի դրդելու մասին: Հետևաբար, Ա. Գրիբոյեդովի հաղորդածը կեղծիք է և չի համապատասխանում իրականությանը: Երկրորդ՝ Աբբաս-Միրզայի ձեռքը Ս. Մազարովիչի կողմից համբուրելու պահին Ա. Գրիբոյեդովը ներկա չի եղել, իսկ եթե այդպես է, ուրեմն այդ «անպարկեշտ» արարքի մասին պետք է, որ նա իմացած լիներ կամ Ս. Մազարովիչի հետ թագաժառանգի մոտ գնացած իր որևէ աշխատակցից, կամ էլ արդեն տարածվող, շրջանառվող խոսակցություններից (նաև՝ օտարերկրացիներից, քանի որ պարսկական կենցաղում բամբասանքը տարածված երևույթ էր): Սակայն այս մասին չեն վկայում ո՛չ օտարերկրացիները (օրինակ՝ Հ. Վիլյորը), ո՛չ էլ հենց Ա. Գրիբոյեդովը՝ իր ընկերներին այդ ժամանակ և հետո հղած այլ նամակներում: Որտեղի՞ց է, ուրեմն, այդ մասին իմացել Ա. Գրիբոյեդովը: Նման դիպվածը, նույնիսկ եղած լինելու դեպքում, Ս. Մազարովիչը, բնականաբար, չէր պատմի Ա. Գրիբոյեդովին:**

80 Դավիդով Դենիս, Ռազմական հուշեր, նշվ. աշխ., էջ 526: 350

Ա. Երմոլովի ջանքերով Ա. Գրիբոյեդովին իր շտաբում ծառայության վերցնելը, բացի պարսկերենին և արաբերենին տիրապետող մասնագետ ունենալու անհրաժեշտությունից, նաև այն էր, որ **գեներալն Ա. Գրիբոյեդովի մեջ ամենից առաջ գնահատել էր գրողի ձիրքն ու տաղանդը**, որոնք ավելի անհրաժեշտ էին Ռուսաստանին. դրա համար էլ նրան հնարավորություն էր տվել ազատ լինելու դիվանագիտական գործերից և ժամանակի մեծ մասը հատկացնել գրական գործունեությանը: Մինևայն ժամանակ Ա. Գրիբոյեդովի ժամանակակից Դ. Դավիդովն իր հուշերում գրում է, թե Ա. Երմոլովը համոզված էր, որ Ա. Գրիբոյեդովը «բավականաչափ ընդունակ չէ ծառայողական գործերը վարելու կամ, ավելի ճիշտ, շատ քիչ եռանդ է ցուցաբերում ծառայողական գործերի նկատմամբ, քանի որ դրանք չի սիրում»⁸¹:

Սակայն մի բան է՝ «ընդունակ չէ», այլ բան՝ «չի սիրում»: Գիվանագիտության համար անհրաժեշտ ճարտար լեզուն, օտար լեզուների իմացությունը, անհրաժեշտության դեպքում՝ սառնասրտությունը, երբեմն՝ անզուսպ ու բռնկուն պահվածքը, խառնվածքի ու վարքի հակասականությունն Ա. Գրիբոյեդովին բնորոշ հատկանիշներ էին, այնպես որ դիվանագիտական ունակությունների բացակայության մեջ նրան մեղադրելը համոզիչ չէ. շատ ավելի իրական է այն, որ գրական գրադմունքներն Ա. Գրիբոյեդովը գերադասել է դիվանագիտականից: Ա. Երմոլովը բազմիցս համոզվել է, թե ինչպես է Ա. Գրիբոյեդովը ձեռնամուխ լինում իրեն տրված դիվանագիտական հանձնարարությունների կատարմանը:

Արտաքին գործերի գերատեսչությունը, բացի քաղաքական և դիվանագիտական հրահանգներից, ռուսական դեսպանական առաքելությանը նաև ցուցումներ է տրամադրել Պարսկաստանում դրա անդամների վարքի և պահվածքի շուրջ⁸², **սակայն փաստացի հայտնի է, որ Ա. Գրիբոյեդովի ցոփ ու շվայտ կենցաղի հետ կապված իրադարձությունները⁸³ տեղի են ունեցել մի երկրում, որտեղ իշխում էին մահ-**

81 Դավիդով Դենիս, Ռազմական հուշեր, նշվ. աշխ., էջ 521-524:

82 Грибоедов А.С., Сочинения, 1971, նշվ. աշխ., հ. 2, էջ 342-347 (տես արդեն՝ 1828թ. ապրիլի կեսերին Պետերբուրգում գրված «Проект инструкции посылаемому в Персию» («Պարսկաստան ուղարկվողի հրահանգների նախագիծ» - Վ.Ս.) փաստաթուղթը, որտեղ տրված են դեսպանի խնդիրների, պահվածքի մասին մանրակրկիտ ցուցումներ: Գարծիք կա, որ այս նախագիծը գրվել է հենց Ա. Գրիբոյեդովի ձեռքով):

83 Նույն տեղում՝ էջ 204-207 (իր բռնի կյանքի մանրամասների մասին 1820թ. մայիսի 3-ին Ն. Կախովսկուն թավրիզից Ա. Գրիբոյեդովի հղած նամակը), էջ 208 (դարձյալ Ն. Կախովսկուն ուղղված 1820թ. հունիսի 25-ի նամակը Թավրիզից):

մեղական շարիաթի օրենքները, խիստ վարքուկանոնը, մոլեռանդ բարքերն ու սովորույթները: Այս ամենը չէին կարող չստվերել ողջ դեսպանակազմի հեղինակությունը և չանդրադառնալ նրա դիվանագիտական ծառայության վրա: Ռուսները շփվում էին (թղթախաղ, խնջույքներ) նաև օտարերկրացիների (Ալլար, Ջիբելլի, Լինդսաու, Մաքհինթոշ և այլք) ու պարսիկ ծառայողների հետ, ուստի պարսկական իշխանությունները չէին կարող տեղյակ չլինել նրա վարած հախուռն կենսակերպին և դրանք չդիտարկել որպես իրենց բարքերի և սովորույթների հանդեպ անհարգալից վերաբերմունքի դրսևորումներ: Ա. Գրիբոյեդովի վարքի նման դրսևորումներն ի հայտ են գալիս նաև 1829թ. Պարսկաստանում նախարար-դեսպան եղած ժամանակաշրջանում⁸⁴:

1821-1823թթ. Ա. Երմոլովի շտաբում Ա. Գրիբոյեդովի ծառայությունը հիմնականում առնչվում է գեներալի հանձնարարականների, գրագրության և Թիֆլիսի հասարակական կյանքի հետ ունեցած շփումներին: 1823-1825թթ. Ա. Գրիբոյեդովը երկարատև արձակուրդում էր: **Մոսկվայում նա ավարտում է իր «Խեղճից պատուհաս»** կատակերգությունը, իսկ 1824-1825թթ. Սանկտ Պետերբուրգում զբաղվում է դրա հրապարակման և բեմադրման աշխատանքներով:

Ամփոփելով վերոշարադրյալ նյութը՝ նշենք հետևյալը.

1. Ա. Երմոլովի՝ Կովկասի կառավարիչ նշանակվելով՝ ռուս-պարսկական հարաբերությունները թևակոխել են նոր փուլ: Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան դառնալուց և մեծ ջանքեր գործադրելուց հետո Ա. Երմոլովի դեսպանական առաքելությանը չի հաջողվել լուրջ հաջողություններ գրանցել ռուս-պարսկական հարաբերություններին խոչընդոտող գլխավոր հարցերում⁸⁵, սակայն կարողացել է ժամանակավորապես կանխել դրանց սրումը:

2. Կովկասում և Պարսկաստանում Ա. Երմոլովը ոչ միշտ է առաջնորդվել ռուսական կառավարության ցուցումներով, ինչը կարող էր ռուս-անգլո-պարսկական միջպետական հարաբերություններում հասցնել լարվածության և անկանխատեսելի հետևանքների: Արտաքին գործերի գերատեսչությունում առավել քաջատեղյակ էին միջազգային ան-

84 Алавердянцъ М.Я., Кончина А.С. Грибоедова (по армянским источникамъ), ևշվ. աշխ., էջ 24 (դեսպանատան սուրհանդակ (ղուլամ) շարքարձումը վկայում է Ա. Գրիբոյեդովի մոտ գիշերները շախի հարեմից վրացի մի կնոջ այցելությունների մասին):

85 Покровский М.Н., Дипломатия и войны царской России в XIX столетии, Сборник статей, Москва, 1923, с. 184-185 (Արբաս-Միրզայի հակառուսական կողմնորոշումն ուժեղացնող Ա. Երմոլովի դիրքորոշման և վրիպումների մասին):

ցուղարձերին, Ռուսաստանի հետ մեծ տերությունների հարաբերություններին և գիտակցում էին, որ Պարսկաստանն այդ փուլում այն երկիրը չէր, որի հետ հարաբերությունները բարելավելու համար Ռուսաստանը պատրաստ լիներ խնդիրներ ու տարածայնություններ ունենալ Անգլիայի հետ, մանավանդ, եթե պարզվեր, որ Ռուսաստանն էր պարսիկներին հրահրել Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմի: Մա կարող էր նաև անդրադառնալ հունական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականության վրա: Ա. Երմոլովը, Ս. Մազարովիչը և Ա. Գրիբոյեդովը, օգտվելով անգլո-պարսկական հարաբերությունների ժամանակավոր սրացումից, փորձել են մեծացնել Պարսկաստանում Ռուսաստանի ազդեցությունը և նրան հրահրել Օսմանյան պետության դեմ պատերազմի (սրա ապացույցն արդեն 1828թ. Ի. Պասկևիչին ուղղված Ա. Գրիբոյեդովի խոստովանությունն է):

3. Դիվանագիտական ծառայության ընթացքում Ա. Գրիբոյեդովի կենցաղը շատ հաճախ հակասել է արտաքին գործերի գերատեսչության հրահանգներին ու մահմեդական երկրին բնորոշ վարքուբարքերին: Չնայած Ա. Գրիբոյեդովն ուներ դիվանագետին բնորոշ անվիճելի ունակություններ, սակայն, պայմանավորված Ա. Երմոլովի ազդեցությամբ, դիվանագիտական շփումներում դրսևորած կոշտ, անգիջում, երբեմն էլ անզգույշ պահվածքը նրա դեմ են տրամադրել Արբաս-Միրզային, բարձրաստիճան պարսիկ պաշտոնյաներին ու անգլիացիներին, հարուցել են արտաքին գործերի գերատեսչության ղեկավարի դժգոհությունը և հանգեցրել դիվանագիտական ծառայությունից նրան հեռացնելուն: Դրան նպաստող հանգամանք էր նաև Պարսկաստանում իր համար «ձանձրալի» ծառայությունից ամեն կերպ ազատվելու նրա բուռն ցանկությունը:

3. Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը 1826-1828թթ. և Թուրքմենչայի պայմանագիրը

1823-1825թթ. Ա. Գրիբոյեդովը Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում մտերմանում է 1825թ. դեկտեմբերի 14-ի ապստամբության մասնակիցներից ու ղեկավարներից ոմանց հետ: 1825թ. հոկտեմբերի վերջերին նա ժամանում է Կովկաս, սակայն 1826թ. հունվարի 22-ին ձերբակալվում է ղեկաբրիստների ապստամբության գործով, տեղափոխվում Սանկտ Պետերբուրգ, որտեղ մինչև հունիսի 22-ը կալանքի տակ անց է կացնում Գլխավոր շտաբի շենքում¹, ապա արդարացվում ու պաշտոնի բարձրացումով կրկին գործառնվում է Այսրկովկաս: 1826թ. սեպտեմբերի 3-ին Ա. Գրիբոյեդովը ժամանում է Թիֆլիս², երբ նույն թվականի հուլիսից արդեն սկսվել էր ռուս-պարսկական երկրորդ պատերազմը³:

Քանի որ հետագա ռազմական գործողություններին զուգահեռ ընթացող դիվանագիտական գործընթացները (որոնց ակտիվ մասնակիցներից էր Ա. Գրիբոյեդովը) նպատակ ունեին նաև կարգավորելու ռուս-պարսկական թնջուկը, փորձենք նախ համառոտ ներկայացնել նոր պատերազմի պատճառները: Դրանք կապված էին հետևյալ հանգամանքների հետ. 1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումից հետո պարսկական կողմը շարունակում էր պնդել Ռուսաստանի գրաված Ղարաբաղի (Արցախի), Թալիշի խանությունների և Շորագյալի (Շիրակի) շրջանի վերադարձման պահանջը⁴: Երկուստեք ձգձգվում են նաև սահմանների վերջնական ճշգրտման և կոմիսարներ

ուղարկելու ջանքերը, որոնք արդյունք չեն տալիս⁵: Ա. Երմոլովի՝ փոխադարձ զավթումներն օրինականացնելու փորձերը ևս ավարտվում են անարդյունք⁶: Աբբաս-Միրզան առաջ է քաշում միայն Ռուսաստանի կողմից Պարսկաստանին զիջումներ կատարելու իր պահանջները⁷:

Շարունակելով վերազինել թուրքական բանակը՝ Անգլիան նպատակ ուներ Ռուսաստանի դեմ ասիական երկրների դաշինքով պատերազմ հրահրել մի քանի ճակատով: 1823թ. վերջին Անգլիան Պարսկաստանի հետ հարաբերությունները կառուցում է «Արևելա-հնդկական» ընկերության միջոցով և Պարսկաստանում վերջինիս նախարար-գործակալ (ռեզիդենտ) է նշանակում Գ. Մաթդոնալդին⁸: Պարսից շահի առաջարկով ռուսական կողմը Գիլանում որպես հյուպատոս է նշանակում պետական խորհրդական Վազենկոյին, բայց նրա մուտքը Պարսկաստան ձգձգվում է: Վազենկոն Թեհրան է ժամանում 1824թ. և Գիլան մեկնելու փոխարեն այստեղ է պահվում մինչև 1825թ. վերջերը⁹: Անգլիայի դիրքորոշումը մեղմելու նպատակով շահի թույլտվությամբ

5 AKAK, 1875, h. VI, մաս II, փաստ. 450, էջ 244 (գեներալ Վելյամինովի՝ 1821թ. օգոստոսի 2-ի գրությունը Ա. Մազարովիչին), փաստ. 453, էջ 244-245 (գեներալ Վելյամինովի՝ 1821թ. օգոստոսի 19-ի գեկուցագիրը գեներալ Երմոլովին), փաստ. 517, էջ 277-279 (Ա. Երմոլովի՝ 1823թ. հունիսի 21-ի հրահանգները կոմսարներին), փաստ. 518, էջ 279-280 (Ա. Երմոլովի հրահանգները Էնկոյին՝ 1823թ. հուլիսի 9-ին), փաստ. 519, էջ 280 (Ա. Երմոլովի՝ 1823թ. հուլիսի 9-ի հրահանգները Մոզիլսկուն), փաստ. 525, էջ 283 (Ա. Երմոլովի՝ 1823թ. դեկտեմբերի 20-ի հրահանգներն իսկական պետական խորհրդական Մոզիլսկուն և գեներալ-մայոր Երմոլովին), փաստ. 531, էջ 288-289 (Ա. Երմոլովի՝ 1824թ. մայիսի 1-ի նամակները Ֆաթի-Ալի շահին), փաստ. 539, էջ 294-295 (իշխան Սևարամիձեի՝ 1824թ. հուլիսի 26-ի գեկուցագիրն Ա. Երմոլովին՝ սահմանախախտումների մասին):

6 Նույն տեղում՝ փաստ. 561, էջ 305-306 (Ա. Երմոլովի՝ 1825թ. մարտի 30-ի գրությունն Աբբաս-Միրզային), փաստ. 418, էջ 227-228 (դեպ 1820թ. մայիսի 4-ին նման առաջարկով Ա. Երմոլովը դիմել էր Կ. Նեսսելրոդին), փաստ. 578, էջ 318-320 (Ա. Երմոլովի՝ 1825թ. հուլիսի 22-ի նամակը Ա. Մազարովիչին), տես նաև՝ «Материалы...», «Кавказский сборник», նշվ. ժող., 1901, h. XXII, էջ 53-56, 1900(1825 год), h. XXI, էջ 1-170:

7 Потто В., «Кавказская война...», Персидская война 1826-1828гг., h. III, նշվ. աշխ., էջ 11 (Աբբաս-Միրզան ռուսներից պահանջում էր Ղարաբաղը, Սևանը, ողջ Թալիշը՝ Լեկորբանով հանդերձ):

8 AKAK, 1875, h. VI, մաս II, փաստ. 538, էջ 293 (1824թ. հուլիսի 19-ին Կ. Նեսսելրոդին Ա. Երմոլովին տեղեկացնում էր Անգլիայի կողմից Ադրբեջանում (Ատրպատականում) անգլո-գերմանական գաղութի միանելու և հարևան երկրների նկրտումների դեմ հզոր հենարան ստեղծելու վերաբերյալ Ա. Մազարովիչի մտավախության մասին), փաստ. 573, էջ 314-315 (պետական խորհրդական Վազենկոյի գեկուցագիրն Ա. Երմոլովին՝ 1825թ. մայիսի 30-ին), տես նաև՝ Семёнов Л.С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-х годах XIXв., Л., 1963, с. 83-84, նաև՝ Kaye J., The life and Correspondence of Major-General sir John, G.C.B. Malkolm, Late envoy to Persia, and governor of Bombay from unpublished Letters and Journals, In two volumes, vol. II, London, Smith, Elder, and CO, 65, Cornhill, Bombay: Smith Taylor, and CO, MDCCCLVI (1895 - Վ.Ս.), քր. 428-432:

9 Նույն տեղում՝ փաստ. 467, էջ 254 (Կ. Նեսսելրոդին՝ 1821թ. դեկտեմբերի 15-ի գրությունն Ա. Երմոլովին), փաստ. 543, էջ 296-297 (Վազենկոյի՝ 1824թ. օգոստոսի 20-ի գեկուցագիրն Ա. Երմոլովին), փաստ. 544, էջ 297 (նույնի՝ 1824թ. հոկտեմբերի 5-ի գեկուցագիրն Ա. Երմոլովին), փաստ. 547, էջ 299 (Ա. Երմոլովի՝ 1824թ. նոյեմբերի 30-ի գրությունը Կ. Նեսսելրոդինին), փաստ. 548, էջ 299 (Վազենկոյի՝ 1824թ. դեկտեմբերի 23-ի գեկուցագիրն Ա. Երմոլովին), տես նաև՝ Балаян Борис, Международные отношения Ирана..., նշվ. աշխ., էջ 102 (տեսակետ կա, որ շահը Վազենկոյին ռուսաց կայսեր նվերների (ղոգավազանի բյուրեղապակյա սալիկների) համար է թույլատրել ժամանել Թեհրան):

1 Нечкина М.В., Следственное дело А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 104, տես նաև՝ Завалишин Д.И., «Воспоминание о Грибоедове», նշվ. հոդվ., էջ 311-321, Вейденбаум Е.Г., «Арест Грибоедова», նշվ. աշխ., էջ 261-267, Щеголев П.Е., «Грибоедов и декабристы», նշվ. աշխ., 91 էջ:

2 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 28-29, տես նաև՝ «Материалы...», «Кавказский сборник», նշվ. ժող., 1910, h. XXX, էջ 1-214:

3 Գրիգորյան Ջ.Տ., Շախ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, նշվ. աշխ., էջ 243, տես նաև՝ «Материалы...», «Кавказский сборник», նշվ. ժող., 1901 (1826 год), h. XXII, էջ 1-156:

4 Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 194 (Միրզա-Աբուլ-Հասանի պատվիրակության պահանջները):

Պարսկաստանում ֆրանսիական հյուպատոսություն հիմնելու¹⁰ մասին Ա. Երմոլովին տեղեկացնում է այդ երկրում ռուսական հավատարմատար Ս. Մազարովիչը¹¹:

1823թ. հուլիսի 28-ին Էրզրումի (Կարինի) թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումից հետո վերականգնվում է առևտուրը հին ճանապարհներով, ինչը նեղ դրության մեջ է դնում Պարսկաստանի հյուսիսում առևտուր կատարող ռուս վաճառականներին¹²: **1825թ. վերջերին պարսկական կողմն արդեն Ռուսաստանի դեմ պատրաստվում է բացահայտ փոխվրեժային (ռևանջիստական) պատերազմի, ինչին նպաստում են նաև դեկաբրիստների ապստամբության մասին անգլիացիների տարածած լուրերը, Ռուսաստանի հանդեպ Անգլիայի դիրքորոշումը, 1821-1823թթ. պարսկա-թուրքական պատերազմում պարսիկների նախկին հաջողությունները¹³, Ֆարսի-Ալի շահի հանդեպ երկրում ծագած դժգոհությունները, ներքաղաքական և գահակալական պայքարը Ղաջարների արքայատոհմի ներսում¹⁴, ինչպես նաև մահմեդական բարձրաստիճան անձանց կողմից քրիստոնյաների դեմ պատերազմելու մարտակոչերը¹⁵:**

1826թ. հունվարին նոր գահ ելած Նիկոլայ I-ն իր մերձավոր շրջապատից Պարսկաստան է գործուղում իշխան Ա. Մենշիկովի պատվիրակությունը¹⁶: Մակայն անգլիացիների օգնությամբ Պարսկաստանը Ռուսաստանի դեմ արդեն մշակել էր ռազմավարական պլան, որի

10 Семёнов Л.С., Россия и международные отношения..., ևշվ. աշխ., էջ 95-97 (տե՛ս դե Ռիշմոնթի և Վ. Ֆոն-թանիեի գործունեությունը), էջ 99 (ֆրանսիացիները բռնում են Անգլիայի կողմը և որոշվում է տարանցիկ առևտուրը ոչ թե Այսրկովկասի վրայով, այլ Տրապիզոնով իրականացնել):

11 Потто В., "Материалы ко истории персидской войны, 1826-1828гг. (1825 год)", "Кавказский сборник", 1900, г. XXI, ևշվ. աշխ., էջ 8-9 (Արբաս-Միրզան ֆրանսիացի Ռիշմոնթին խնդրում է որպես միջնորդ հանդես գալ ռուս-պարսկական հարաբերություններում):

12 АКАК, 1875, г. VI, մաս II, փաստ. 573, էջ 314-315: Ռուս վաճառականներին դեռևս 1824թ. Գիլանում նեղելու մասին տես նաև նույն ժող.՝ փաստ. 527, էջ 284-285 (գեներալ Վելյամինովի հաղորդագրությունը Ա. Մազարովիչին), փաստ. 530, էջ 286-287 (Ա. Երմոլովի 1824թ. մայիսի 1-ի նամակը Ֆարսի-Ալի շահին):

13 Потто В., "Кавказская война...", Персидская война 1826-1828гг., г. III, ևշվ. աշխ., էջ 17:

14 Орлик О.В., Россия в международных отношениях 1815-1829гг., ևշվ. աշխ., էջ 152:

15 Լեո. Երկերի լիակատար ժողովածու, Չորրորդ հատոր, Երևան, 1984, էջ 403:

16 ВПР, серия вторая (1815-1830), том шестой (четырнадцатый), январь 1825г. - декабрь 1826г., փաստ. 130, էջ 373 (Ա. Մենշիկովի 1826թ. հունվարի 28-ի (փետրվարի 9-ի) գրությունը Նիկոլայ I-ին), փաստ. 170, էջ 487-488 (Ա. Մենշիկովի 1826թ. ապրիլի 30-ի (մայիսի 12-ի) նամակը Կ. Նեսսելրոդին՝ անգլիացիների մեծ ազդեցության մասին): Առաքելության նպատակներից էր նաև Ա. Երմոլովի կատարած ծառայության և գործերի, դեկաբրիստների հետ նրա հնարավոր կապերի բացահայտման, ինչպես նաև Ա. Գրիբոյեդովից գրուշանայու և նրա մասին և տեղեկություններ հավաքելու խնդիրը, տես նաև Полковник Бартоломей, "Секретная инструкция, данная Императором Николаем I-м, ևշվ. հոդվ., էջ 423-434 (ուշագրավ է, որ 1825թ. դեկտեմբերի 14-ից հետո կազմված 16 հրահանգներին տրված պատասխանում բացակայում է Ա. Գրիբոյեդովից գրուշանայու և նրա մասին տեղեկություններ հավաքելու պահանջի շուրջ 16-րդ հրահանգի պատասխանը, քանի որ, ըստ Երևույթին, հաշվետվությունը գրելու ժամանակ Ա. Գրիբոյեդովի արդեն արդարացվել էր), տես նաև՝ АКАК, 1875, г. VI, մաս II, փաստ. 598, էջ 334, փաստ. 599, էջ 334, փաստ. 600, էջ 334 (Կ. Նեսսելրոդի նույն օրվա հաղորդագրությունը գեներալ Երմոլովին), փաստ. 604, էջ 336 (Կ. Նեսսելրոդի 1826թ. փետրվարի 2-ի նամակը Միրզա-Աբուլ-Հասան խանին):

նպատակն էր ռուս-պարսկական սահմանը ետ տանել մինչև Թերեք գետը (Հյուսիսային Կովկաս)¹⁷:

1826թ. հուլիսի 16-ին առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու Երևանի սարգար Հուսեյն-Կուլի խանի զորքերի հարձակմամբ սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Մինչ այդ Ա. Երմոլովը նախագրուշական դիմումներ էր հղել ռուսական իշխանություններին և խնդրել էր մեծացնել Կովկասյան հատուկ կորպուսի զորքերի թիվը¹⁸: Բռնկված ռուս-պարսկական պատերազմի պատճառով Պարսկաստանում, ապա Երևանում սարգարի կողմից փաստական գերության մեջ հայտնված Ա. Մենշիկովի առաքելությանը, ի վերջո, բախտ է վիճակվում ողջ և անվնաս հատել ռուսական սահմանն Այսրկովկասում¹⁹:

Կայսր Նիկոլայ I-ը 1826թ. սեպտեմբերի 16(28)-ին ստորագրում է ռուսական կառավարության *"Декларация о войне с Персией"* («Հռչակագիր Պարսկաստանի դեմ պատերազմի մասին» - Վ.Ս.) փաստաթուղթը²⁰:

Ա. Երմոլովին չվստահող կայսր Նիկոլայ I-ը դեռևս օգոստոսին Այսրկովկաս էր գործուղել գեներալ Ի.Ֆ. Պասկևիչին, ում անվան

17 Орлик О.В., Россия в международных отношениях..., ևշվ. աշխ., էջ 155-156, 152-153 (Արևելա-հնդկական ընկերությունը Պարսկաստանին է տրամադրում 200 զրաստաբեռ (вьюк) զենք, 1825թ. վերջին՝ 1,5 մլն., իսկ 1826թ. առաջին կեսին՝ 800.000 ռուբլի (200.000 թուման) դրամական օժանդակություն):

18 ВПР, том шестой (четырнадцатый), ևշվ. աշխ., փաստ. 210, էջ 589-590 (գեներալ-համարգ Ի.Ֆ. Պասկևիչի 1826թ. սեպտեմբերի 4(16)-ի զեկուցագիրը Նիկոլայ I-ին), տես նաև՝ Орлик О.В., Россия в международных отношениях..., ևշվ. աշխ., էջ 157, Atkin Muriel, Russia and Iran. 1780-1828, The University of Texas of San Antonio, Minneapolis, 1980, p. 92-95 (նա նշում է, որ Ռուսաստանի դեմ պատերազմը Պարսկաստանի Ղաջարների դիմադրության ամենից առաջ հարկավոր էր նրա համար, որ պարսից շահնշահի գահի վրա ավելի ամրապնդվեն իրենց դիրքերը):

19 "Посольство князя Меншикова в Персию в 1826 году" (Из дневника ген-лейтенанта О.О. Бартоломея), "Русская старина", Тип-я "Товарищество Общественная польза", С.Петербург, 1904 год, апрель, с. 65-92, նույն հանդես՝ С.Петербург, 1904, май, с. 291-320.

20 ВПР, том шестой (четырнадцатый), ևշվ. աշխ., փաստ. 214, էջ 601-603, տես նաև՝ АКАК, 1875, г. VI, մաս II, փաստ. 684, էջ 376-378 (պատերազմի մասին ռուսական «Հռչակագիր»), Потто В., "Кавказская война...", Персидская война 1826-1828гг., г. III, ևշվ. աշխ., էջ 1-602, Հակոբյան Թ.Խ., Երևանի պատմությունը (1801-1879), Երևան, 1959, էջ 307-358, Нерсисян М.Г., "Ценный первоисточник об Ошаканской битве", ՊԲՀ, Երևան, 1978, 1(80), էջ 241-257, նույնի՝ "Освобождение Еревана от ханского ига", ՊԲՀ, Երևան, 1977, 3(78), էջ 65-73, Кюркчян А.А., Русско-иранская война 1826-1828 (Новые концепции современной историографии), ևշվ. աշխ., 208 էջ, Բարխուդարյան Վ.Բ., Ռուկանյան Վ.Կ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի փախուսումը Ռուսաստանին, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 201-217, Գրիգորյան Ջ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, ևշվ. աշխ., էջ 223-369, Дилоян В.А., "Присоединение Восточной Армении к России и его историческое значение", Сборник статей, Ереванский Государственный Университет, Ереван, 1978, с. 20-28, "Персидская война в царствование Императора Николая I" (Второе изд-ие), Ред-ор П. Зубовъ, Въ тип-и Конрада Вингебера, Санктпетербургъ, 1837, с. 200-216; Нерсисян М.Г., "Материалы по новой истории Армении", "Журнал военных действиям в провинциях Бамбак и Шурагелъ, против войск персидских в 1826 году", ՊԲՀ, Երևան, 1959, 4(7), էջ 288-308.

հետ են կապվում նաև Ա. Գրիբոյեդովին երկու անգամ կալանքից ու դատապարտվելուց փրկվելու հանգամանքները: Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի հարաբերությունները հենց սկզբից անհարթ էին, քանի որ **երկուսն էլ, չնայած ցարական իշխանությունների գաղութային քաղաքականությունն իրականացնող ռազմական գործիչներն էին, միևնույն ժամանակ խիստ տարբեր էին դրա իրականացման մեթոդների և իրենց պատվասնդրության (ամբիցիաների) ու հավակնությունների հարցերում**²¹:

Ա. Երմոլովի մոտ ծառայության մեջ գտնվող Ա. Գրիբոյեդովը հայտնվում է բավականին բարդ իրավիճակում. նա պարտական էր նաև Ա. Երմոլովին՝ «Թեհրանի դիվանագիտական վանքից» իրեն ազատելու և մշտապես հովանավորելու, ինչպես նաև դեկաբրիստների գործով ձեռքակալվելուց առաջ իր թղթերն ու վարկաբեկող նյութերը ոչնչացնելու հնարավորություն տալու համար²²: Ա. Գրիբոյեդովն ինքն էլ, մշտապես դրական արտահայտվելով Ա. Երմոլովի անձնական հատկանիշների և գործունեության վերաբերյալ, **Կովկասում չեչենների և մյուս լեռնականների դեմ գեներալի սղոթ պայքարն անվանում էր «թմբուկային լուսավորության պայքար՝ ընդդեմ լեռնային և անտառային ազատության»: Նա գրում է. «Կասելու և ներելու ենք ու թքում ենք պատմության վրա»**²³:

21 Ա. Երմոլով – Ի. Պասկևիչ փոխհարաբերությունների վերլուծության հարցում մինչխորհրդային հեղինակները հիմնականում նախապատվությունը տվել են Ա. Երմոլովին՝ բացառությամբ որոշ հեղինակների, օրինակ Ի. Պասկևիչի կենսագիր իշխան, գեներալ-լեյտենանտ Ա.Պ. Շչերբատովի: Այդ փոխհարաբերությունների մասին մանրամասն տես նրա "Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность", том второй, изд. 2-е, 1891, 520 էջ, Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, изд. 2-е, 1912, т. VI, էջ 698-744, Андреев В., "Ермоловъ и Паскевичъ", "Русский архивъ", Изд-мъ Петромъ Бартевевымъ, Москва, 1873, с. 1571-1583, նույնը "Кавказский сборникъ", Издаваемый по указанию Его Императорскаго высочества Главнокомандующаго Кавказскою Арміею, Тифлисъ, 1876, томъ I, изд. 2-е, հանդես, էջ 197-213, Вронин П.И., "Ермоловъ, Дибичъ, Паскевичъ на Кавказе въ 1826-1827гг. Донесенія и письма", "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб, 1872 годъ, Годъ третій, май, с. 706-726; 1872 годъ, июль, с. 39-69; 1872 годъ, август, с. 243-250.

22 Шимановский Н.В., "Арест Грибоедова в 1825 году", изд. 2-е, էջ 339-344, Դավիդով Դ., Ռազմական հուշեր, էջ 522-523, П.Б.(Берже), "Александръ Сергеевичъ Грибоедовъ на Кавказе 1818-1829", "Кавказский вестникъ", Еж. научно-литературный журналъ, Тифлисъ, 1900г., годъ первый, №8, август, с. 38-39, տես նաև Լեոն. Երկերի ծողրվածու, Չորրորդ հատոր, էջ 395 (Երմոլովը բնութագրվում է որպես գոռոզ, փառասեր և իսկական արևելյան սատրապ): Ա. Երմոլովի գործունեության վերաբերյալ մանրամասն տես նաև՝ "Записки А.П. Ермолова. 1798-1826гг.", Сост. д.и.н. В.А. Федоров, "Высшая школа", М., 1991, (463 էջ) հուշերը:

23 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, изд. 2-е, էջ 256 (Ա. Գրիբոյեդովի՝ 1825թ. դեկտեմբերի 7-ի նամակը Ստ. Բեգիչևին), էջ 17 (Ֆ. Բուլցարինին ուղղված նամակը), էջ 238-242 (1825թ. փետրվարի 14-ին Պ. Կատեխինին ուղղված նամակը), էջ 276-291 (Ի. Պասկևիչին ուղղված Ա. Գրիբոյեդովի գեկուցագիրը, որոնցում կարելի է հանդիպել նրա դրսևորած տիրապիտության, միապետության համոզված կողմնակից լինելու մասին բազմաթիվ վկայությունների), տես նաև Սիմոնյան Վ., «Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ...», էջ 17, հոդված, էջ 186-187, Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», էջ 11, էջ 11:

Իր կյանքի առաջին իսկ քայլերից **«ճակատագրի կողմից շոյված» Ի. Պասկևիչը «վարակված էր անսահման պատվասիրությամբ» և մինչև խոր ծերություն մնացել էր այդպիսին**²⁴: **Նա պատկանում էր գորաշարքի հավասարությամբ և հանդիսավոր քայլքով հրապուրված «գծային-շարային գեներալների» համաստեղությանը**²⁵:

1827թ. մարտի 28-ի հրամանագրով ի վերջո Ի. Պասկևիչն Ա. Երմոլովի փոխարեն նշանակվում է Կովկասի կառավարիչ և գորքերի գլխավոր հրամանատար²⁶: Ինքը՝ Ա. Գրիբոյեդովը, երկու գեներալների պայքարի մասին դեռևս 1826թ. դեկտեմբերի 9-ին Ստ. Բեգիչևին գրում է. **«Երկու ավագ գեներալները վիճում են, իսկ փետուրները ենթականերից են թռչում»**²⁷: Ա. Գրիբոյեդովն իր շրջապատում միշտ բացասական է արտահայտվել Ի. Պասկևիչի հասցեին՝ ասելով, որ **«այդ հիմարն» այնքան անտանելի է, որ ինքը «Վրաստան կվերադառնա ոչ այլ կերպ, քան իբրև դեսպան՝ պարսկական արքունիքին կից»**²⁸: Սակայն նույն ժամանակահատվածի իր նամակներից շատերում Ա. Գրիբոյեդովն Ի. Պասկևիչին դիմում է **«հոգեկան նվիրվածության անկեղծ զգացումով, հոգով և մարմնով ամբողջովին Ձեր՝ ամենահնագանդ ծառա»**, **«ամենահարգարժան և անգին բարերար»**, **«ամենաանգին կոմս»**²⁹ և այլ մակդիրներով ու շոյող արտահայտություններով:

Ի. Պասկևիչի օրոք Ա. Գրիբոյեդովի ծառայությունը ոչ միայն չի ավարտվում, այլև նոր վերելք է ունենում³⁰: Ժամանակակիցներից ոմանք **Ի. Պասկևիչի մոտ նրա ծառայությունը համարել են երախտամոռություն**

24 Алавердянц М.Я., Графъ Иванъ Феодоровичъ Паскевичъ-Эриванский и его деятельность на Кавказе въ очеркахъ Армянскаго историка, 1782-1912, С.Петербургъ, 1912 (27 с.), с. 4.

25 Дубровин Н., История войны и владычества русских... изд. 2-е, էջ 703: Ի. Պասկևիչի՝ ոգով անկայուն, միջակ խելքի տեր և «անդրդնեպյայն խտալացի» կոչված լինելու մասին արականների շուրջ տես Դավիդով Դ., Ռազմական հուշեր, էջ 522-530:

26 АКАК, 1878, т. VII, изд. 2-е, ժողովածու, փաստ. 2, էջ 1, տես նաև՝ Алавердянц М.Я., Графъ Иванъ Феодоровичъ Паскевичъ, էջ 5 (Մ. Ավալերյանցը նշում է մարտի 29-ը):

27 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, изд. 2-е, էջ 266 (այստեղ առաջին անգամ հիշատակվում է Երմոլովի և Գրիբոյեդովի հարաբերություններում ծագած աստության մասին), տես նաև՝ Грибоедов. Его жизнь и гибель..., էջ 332, №163 ծանոթ. (այստեղ խոսվում է Դ. Սմիռնովի և ոմն Մ. Շչեպկինի միջև կայացած կասկածելի մի գրույցի մասին, թե իբր Ա. Երմոլովին Ա. Գրիբոյեդովն անվանել է «կատաղյալ բռնապետ», ինչին Ա. Երմոլովն իբր պատասխանել է. «Նախևառաջ ի՞նքը փորձիր իշխանության բերկրանքը, հետո նոր քննադատիր»): ոչ մի այլ վկայությամբ կամ նամակներով փաստված չէ:

28 Դավիդով Դ., Ռազմական հուշեր, էջ 525-526:

29 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, изд. 2-е, էջ 310 (1828թ. օգոստոսի 23-ի Թիֆլիսից Ի. Պասկևիչին գրած նամակը), էջ 311-313 (1828թ. սեպտեմբերի 6-ին Թիֆլիսից դարձյալ Ի. Պասկևիչին գրած նամակը):

30 АКАК, 1878, т. VII, изд. 2-е, ժողովածու, փաստ. 501, էջ 539 (Ի. Պասկևիչը 1827թ. ապրիլի 13-ին Կ. Նեսսել-րոյլին գրած հազորագրություններում նրանից խնդրում էր թուրք փաշաների, Պարսկաստանի և լեռնական ժողովուրդների հետ հարաբերությունների համար իր մոտ որպես քաղաքական գծով աշխատակից նշանակել Ա. Գրիբոյեդովին):

Ա. Երմոլովի հանդեպ³¹:

Ընդհանրացնելով Ա. Գրիբոյեդով - Ա. Երմոլով - Ի. Պասկևիչ փոխհարաբերությունների հարցերը, նշենք, որ իր երկու ղեկավարներից **Ա. Գրիբոյեդովը նախապատվությունը տվել է Ա. Երմոլովին**, ում օրոք ինքը հնարավորություն է ունեցել զբաղվելու իր համար սիրելի գրական գործունեությամբ, և **ով տեսել ու նրանում գնահատել էր տաղանդավոր գրողի ձիրքը**:

Ի. Պասկևիչի օրոք Ա. Գրիբոյեդովը դիվանագիտության ասպարեզում ունեցել է ծառայողական առաջընթաց, սակայն նոր ժամրշխանը նրան այնքան էլ հնարավորություն չի տվել զբաղվելու գրական գործունեությամբ³², և ըստ վկայությունների՝ նա չարդարացված ձևով իրեն դրել է կրակի տակ³³: **Մեր կարծիքով նաև դրա համար է Ա. Գրիբոյեդովը բացասական վերաբերմունք ունեցել Ի. Պասկևիչի հանդեպ, թեև ստիպված է եղել այդ ամենը թաքցնել նրա անձը շոյող արտահայտությունների շղարշի տակ: Ա. Երմոլովի հանդեպ Ա. Գրիբոյեդովի երախտամոռության և նրան վարկաբեկելու հարցում մեղադրանքները չափազանցված են. Ա. Գրիբոյեդովի կողմից դիրքի կամ պաշտոնի հասնելու ձգտումը բնական երևույթ է, և այստեղ նույնիսկ էականն այն չէ, թե նա ձգտել է բարձր դիվանագիտական պաշտոնների, այլ այն, որ նա կարևորել է Ի. Պասկևիչից անպայման հեռու լինելու, նաև գրական ազատ գործունեությամբ զբաղվելու ցանկությունը. մի հանգամանք, որը վրիպել է ժամանակակիցների ուշադրությունից: Երջանցվել է նաև այն, թե ինչ ճակատագիր էր նրան վիճակվելու, եթե նա ընդդիմանար նոր ժամրշխանին: Այս դեպքում էլ նրան կարող էին մեղադրել երկու անգամ իրեն բանտարկությունից «փրկած» Ի. Պասկևիչի հանդեպ դրսևորած անշնորհակալ վերաբերմունքի հարցում: Միանգամայն իրավացի է Ադ. Բերժեն՝ Պասկևիչի մոտ Ա. Գրիբոյեդովի ծառայությունը համարելով**

հարկադրական քայլ³⁴: Ասվածից բացի՝ հարկ է նաև նշել, որ Ա. Գրիբոյեդովի և Ի. Պասկևիչի հարաբերություններում որոշակի դեր է խաղացել նրա՝ Ի. Պասկևիչի կնոջ զարմիկը լինելու հանգամանքը:

Քաջ գիտենալով ցանկացած միապետական իշխանության օրինականության (լեգիտիմության) հանդեպ կայսր Նիկոլայ I-ի անհողդողդ, վճռական դիրքորոշման մասին³⁵՝ Գլխավոր շտաբի պետ Ի. Դիրիչը կայսերը հավաստիացնում էր ռուսական կողմից ներպարսկական խժոժություններին միջամտելուց խուսափելու անհրաժեշտության մասին: Տեղյակ լինելով դեռևս XIX դարի սկզբին Այսրկովկասում Ռուսաստանի որդեգրած քաղաքականությանը, ըստ որի նա ձգտում էր հնարավորինս խաղաղ ճանապարհով իր կողմը գրավել ու իրեն միավորել պարսկահպատակ տարբեր խանություններ՝ **նորանշանակ Ի. Պասկևիչը փորձում է այս հանգամանքը «համապատասխանեցնել» Պարսկաստանում գահակալող Ղաջարների դեմ ընդվզող թշնամի կամ նրանցից դժգոհ խանների ելույթների հանդեպ չեզոքություն պահպանելու մասին կառավարական նոր ցուցումների հետ՝ դրանք «ներկայացնելով որպես ռուսահպատակ դառնալու նրանց ցանկություն»:** Սակայն իրականությունն այլ է:

Ի. Պասկևիչի համար դժվար էր առաջնորդվել իրեն տրված ցուցումներով և նա երբեմն շեղվում էր դրանցից. տերերի դեմ լարելու և ընդվզելու նպատակով նա հրահանգում էր տարաբնույթ գործակալների միջոցով քարոզչական բնույթի հատուկ թուուցիկ-կոչեր (պրոկլամացիաներ) տարածել և ներշնչել իրենց կառավարությունից դժգոհ բնակչությանն ու պաշտոնյաներին, որ ռուսները շուտով գրավելու են պարսկական Արարատականը և նրանց հատուկ կերպով հովանավորելու են:

31 Դավիդով Դ., Ռազմական հուշեր, նշվ. աշխ., էջ 523-525 (Ի. Պասկևիչի բարեհաճության արժանանալու և կնոջ զարմիկը հանդիսանալու հանգամանքների և Ա. Գրիբոյեդովի կողմից ինքն իրեն՝ Ա. Երմոլովի հանդեպ իբրև չարագործ համարելու մասին Ստ. Բեզիչի վկայության շուրջ), տես նաև՝ Իրիբոեդով. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 80, 123 (Գ. Զավալիշինի և Ն. Մուրավյով-Վարսկու հուշերը):

32 Իրիբոեդով А.С., Сочинения, т. 2, նշվ. աշխ., էջ 271-272 (1827թ. ապրիլի 16-ին Ֆ. Բուզարիսին ուղղված նամակում գրում է. «Բնական բանաստեղծություններ մի՛ սպասիր. լեռնականները, թուրքերը, պարսիկները, իմ ներկայիս պետի կառավարչական գործերը, հսկայական գրագրությունը կլանում են իմ ողջ ուշադրությունը... Իմ մեղքը չէ. մարդիկ մահր են, նրանց գործերը՝ հիմար, հոգիս կոշտանում է, դատողությունս՝ մթազանում, և բարոյականությունս մեռնում է՝ առանց մերձավորիս օգուտ տալու: Ես ծնված եմ այլ ասպարեզի համար»):

33 Потто В., "Посольство и смерть Грибоедова. Грибоедов полномочный министр при персидском дворе", т. III, նշվ. աշխ., էջ 8, 11:

34 П.Б. (Берже), "Александръ Сергеевичъ Грибоедовъ на Кавказе, նշվ. աշխ., №9, էջ 30 (նշենք, որ բանտարկությունից փրկվելու հանգամանքներից առաջինը կապված էր Երեմեևոս-Զավաղովսկի մեծամարտի հետ (տես՝ "Беглые очерки. Воспоминания О.А. Пржевальскаго", նշվ. հոդված, էջ 377-406), մյուսը՝ դեկաբրիստական ապստամբությանը մասնակից լինելու կասկածանքով ձերբակալված լինելու, ապա ազատ արձակվելու իրողությունների հետ - Վ.Ս.):

35 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 98 (1827թ. մայիսի 23-ին Գլխավոր շտաբի պետ Ի. Դիրիչը գրում է կայսերը, որ դեռևս չգրավված մարզերի խտությունները խրախուսելու ցանկացած միջոց ու ջանք, որի նպատակը կլիներ Պարսկաստանի Ղաջարների արքայատոհմի տապալումը, պետք է վճռակալորեն մերժվեր): Պարսկական կառավարության դեմ գահակալական ելույթների դեպքում իր գործելակերպի մասին կայսրից Ի. Պասկևիչի խնդրած ցուցումների մասին տես՝ АКАК, 1878, т. VII, նշվ. ժողովածու, փաստ. 507, էջ 542-543 (1827թ. մայիսի 17-ի գեկուցագիրը): Պարսկաստանի երկպառակություններին չմասնակցելու, ցեղերին չզրոգելու մասին Վ. Նեսեյլոդդի Ի. Պասկևիչին ուղղված հրահանգների մասին տես նույն տեղում՝ փաստ. 509, էջ 544-553 (1827թ. հունիսի 4-ի հրահանգները):

Ա. Երմոլովի հանդեպ³¹:

Ընդհանրացնելով Ա. Գրիբոյեդով - Ա. Երմոլով - Բ. Պասկևիչի փոխհարաբերությունների հարցերը, նշենք, որ իր երկու ղեկավարներից **Ա. Գրիբոյեդովը նախապատվությունը տվել է Ա. Երմոլովին**, ում օրոք ինքը հնարավորություն է ունեցել զբաղվելու իր համար սիրելի գրական գործունեությամբ, և **ով տեսել ու նրանում գնահատել էր տաղանդավոր գրողի ձիրքը:**

Ի. Պասկևիչի օրոք Ա. Գրիբոյեդովը դիվանագիտության ասպարեզում ունեցել է ծառայողական առաջընթաց, սակայն նոր ժամիշխանը նրան այնքան էլ հնարավորություն չի տվել զբաղվելու գրական գործունեությամբ³², և ըստ վկայությունների՝ նա չարդարացված ձևով իրեն դրել է կրակի տակ³³: **Մեր կարծիքով նաև դրա համար է Ա. Գրիբոյեդովը բացասական վերաբերմունք ունեցել Բ. Պասկևիչի հանդեպ, թեև ստիպված է եղել այդ ամենը թաքցնել նրա անձը շոյող արտահայտությունների շղարշի տակ: Ա. Երմոլովի հանդեպ Ա. Գրիբոյեդովի երախտամոռության և նրան վարկաբեկելու հարցում մեղադրանքները չափազանցված են. Ա. Գրիբոյեդովի կողմից դիրքի կամ պաշտոնի հասնելու ձգտումը բնական երևույթ է, և այստեղ նույնիսկ էականն այն չէ, թե նա ձգտել է բարձր դիվանագիտական պաշտոնների, այլ այն, որ նա կարևորել է Բ. Պասկևիչից անպայման հեռու լինելու, նաև գրական ազատ գործունեությամբ զբաղվելու ցանկությունը. մի հանգամանք, որը վրիպել է ժամանակակիցների ուշադրությունից: Երջանցվել է նաև այն, թե ինչ ճակատագիր էր նրան վիճակվելու, եթե նա ընդդիմանար նոր ժամիշխանին: Այս դեպքում էլ նրան կարող էին մեղադրել երկու անգամ իրեն բանտարկությունից «փրկած» Բ. Պասկևիչի հանդեպ դրսևորած անշնորհակալ վերաբերմունքի հարցում: Միանգամայն իրավացի է Ադ. Բերթեն՝ Պասկևիչի մոտ Ա. Գրիբոյեդովի ծառայությունը համարելով**

31 Դավիդով Դ., Ռազմական հուշեր, նշվ. աշխ., էջ 523-525 (Ի. Պասկևիչի բարեհաճությանը արժանանալու և կնոջ զարմիկը հանդիսանալու հանգամանքների և Ա. Գրիբոյեդովի կողմից ինքն իրեն՝ Ա. Երմոլովի հանդեպ իբրև չարագործ համարելու մասին Ստ. Բեգիչևի վկայության շուրջ), տես նաև Գրիբոեդով. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 80, 123 (Դ. Ջավախիշևի և Ն. Մուրավյով-Վարսկու հուշերը):
32 Գրիբոեդով А.С., Сочинения, т. 2, նշվ. աշխ., էջ 271-272 (1827թ. ապրիլի 16-ին Ֆ. Բուլգարինին ուղղված նամակում գրում է «Ինձանից բանաստեղծություններ մի՛ սպասիր. լեռնականները, թուրքերը, պարսիկները, իմ ներկայիս պետի կառավարչական գործերը, հսկայական գրագրությունը կլանում են իմ ողջ ուշադրությունը... Իմ մեղքը չէ. մարդիկ մանր են. նրանց գործերը՝ հիմար, հոգիս կոշտանում է. դատողությունս մթազնում, և բարոյակնությունս մեռնում է առանց մերձավորին օգուտ տալու: Ես ձևված եմ այլ ասպարեզի համար»):
33 Потто В., "Посольство и смерть Грибоедова. Грибоедов полномочный министр при персидском дворе", т. III, նշվ. աշխ., էջ 8, 11:

հարկադրական քայլ³⁴: Ասվածից բացի՝ հարկ է նաև նշել, որ Ա. Գրիբոյեդովի և Բ. Պասկևիչի հարաբերություններում որոշակի դեր է խաղացել նրա՝ Բ. Պասկևիչի կնոջ զարմիկը լինելու հանգամանքը:

Քաջ գիտենալով ցանկացած միապետական իշխանության օրինականության (լեգիտիմության) հանդեպ կայսր Նիկոլայ I-ի անհողողող, վճռական դիրքորոշման մասին³⁵՝ Գլխավոր շտաբի պետ Բ. Դիրիչը կայսերը հավաստիացնում էր ռուսական կողմից ներպարսկական խժոժություններին միջամտելուց խուսափելու անհրաժեշտության մասին: Տեղյակ լինելով դեռևս XIX դարի սկզբին Այսրկովկասում Ռուսաստանի որդեգրած քաղաքականությանը, ըստ որի նա ձգտում էր հնարավորինս խաղաղ ճանապարհով իր կողմը գրավել ու իրեն միավորել պարսկահպատակ տարբեր խանություններ՝ **նորանշանակ Բ. Պասկևիչը փորձում է այս հանգամանքը «համապատասխանեցնել» Պարսկաստանում գահակալող Ղաջարների դեմ ընդվզող թշնամի կամ նրանցից դժգոհ խանների ելույթների հանդեպ չեզոքություն պահպանելու մասին կառավարական նոր ցուցումների հետ՝ դրանք «ներկայացնելով որպես ռուսահպատակ դառնալու նրանց ցանկություն»:** Մակայն իրականությունն այլ է:

Բ. Պասկևիչի համար դժվար էր առաջնորդվել իրեն արված ցուցումներով և նա երբեմն շեղվում էր դրանցից. տերերի դեմ լարելու և ընդվզելու նպատակով նա հրահանգում էր տարաբնույթ գործակալների միջոցով քարոզչական բնույթի հատուկ թռուցիկ-կոչեր (պրոկլամացիաներ) տարածել և ներշնչել իրենց կառավարությունից դժգոհ բնակչությանն ու պաշտոնյաներին, որ ռուսները շուտով գրավելու են պարսկական Ատրպատականը և նրանց հատուկ կերպով հովանավորելու են:

34 П.Б. (Берже), "Александръ Сергеевичъ Грибоедовъ на Кавказе, նշվ. աշխ., №9, էջ 30 (նշենք, որ բանտարկությունից փրկվելու հանգամանքներից առաջինը կապված էր Շերմետև-Ջավադովսկի մեկամարտի հետ (տես "Беглые очерки. Воспоминания О.А. Пржевальскаго", նշվ. հոդված, էջ 377-406), մյուսը՝ դեկաբրիստական ապստամբությանը մասնակից լինելու կասկածանքով ձերբակալված լինելու, ապա ազատ արձակվելու իրողությունների հետ - Վ.Ս.):
35 Поставочник С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 98 (1827թ. մայիսի 23-ին Գլխավոր շտաբի պետ Բ. Դիրիչը գրում է կայսերը, որ դեռևս չգրավված մարզերի խռովությունները խրախուսելու ցանկացած միջոց ու ջանք, որի նպատակը կլինի Պարսկաստանի Ղաջարների արքայատոհմի տապալումը, պետք է վճռակետորեն մերժվի): Պարսկական կառավարության դեմ գահակալական ելույթների դեպքում իր գործելակերպի մասին կայսրից՝ Բ. Պասկևիչի խնդրած ցուցումների մասին տես АКАК, 1878, т. VII, նշվ. ժողովածու, փաստ. 507, էջ 542-543 (1827թ. մայիսի 17-ի գեկուցագիրը): Պարսկաստանի երկպառակությունների չմասնակցելու, ցեղերին չգրգռելու մասին Կ. Նեսսեղյոդի Բ. Պասկևիչին ուղղված հրահանգների մասին տես նույն տեղում՝ փաստ. 509, էջ 544-553 (1827թ. հունիսի 4-ի հրահանգները):

Վերոնշյալի ապացույցն է «իր կողմից իրեն ուղղված և ինքն իրեն մակագրած» Բ. Պասկևիչի՝ «О способах вступить в сношения с частными Персидскими владетелями, с кем именно и через кого» («Պարսից մասնավոր սեփականատերերի հետ հատկապես ում շնորհիվ և ինչպես հարաբերությունների մեջ մտնելու միջոցների մասին» - Վ.Ս.) վերնագրով զեկուցագիրը³⁶: Ենթադրվել է, որ այս փաստաթղթի հեղինակն Ա. Գրիբոյեդովն է³⁷: Այսպիսի մտայնության համար հիմք են հանդիսացել Պարսկաստանի, Թուրքիայի և կովկասյան լեռնականների հետ երմուլվյան, ապա պասկևիչյան ժամանակների հարաբերությունների շուրջ Ա. Գրիբոյեդովի քաջատեղյակությունը և դրա շուրջ Ֆ. Բուլգարինին ուղղված վերոհիշյալ նամակը³⁸: Վերոհիշյալ «Զեկուցագրում» մասնավորապես նշվում են Պարսկաստան գործուղվող գաղտնի գործակալներին տրվող հրահանգները: **Խորհուրդ էր տրվում ցուցումներ տալ Ղարաբաղի կառավարչին, որ «նա չխորշի Թավրիզի այն բնակիչների և պաշտոնյաների հետ երկկողմանի գրավոր կամ բանավոր փոխադարձ խոստումներից, ովքեր դժգոհ էին Ատրպատականում գործերի ընթացքից և պատրաստ էին աջակցել իրենց (ռուսներին – Վ.Ս.)»**³⁹:

Ռուսական հրամանատարության անունից պարսկահպատակ քոչվոր ցեղերին ուղղված վերոհիշյալ քարոզչական բնույթի կոչերի (պրոկլամացիաների) հեղինակը ևս համարվել է Ա. Գրիբոյեդովը⁴⁰, քանի որ նրա «Ճանապարհորդական նոթեր»-ում ևս հիշատակվում է դրանց մասին⁴¹: **Հասկանալի է, որ առանց Բ. Պասկևիչի ցուցումների Ա. Գրիբոյեդովը չէր կարող դրանք կազմել, իսկ Բ. Պասկևիչը, որպեսզի չմեղադրվի Պարսկաստանում հակակառավարական ընդվզումներ հրահրելու մեջ, իր գործունեությունը ներկայացնում էր ընդամենը «որպես Ռուսական կայսրության արդարամտության ու բարեգթության դրսևորում» և իբրև ապացույց առաջ էր բերում շաղիլիցիների, կարափափախների և այլոց՝ ռուսահպատակ դառնալու «ցանկությունը», ինչին**

36 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 99 (հեղինակը հղում է կատարում Լենինգրադի կենտրոնական պատմական արխիվի ֆոնդ 1018, թղթ. 2, 1827թ., գործ 397, թերթ 13-ից):

37 Նույն տեղում (խոսքը 1827թ. ապրիլի 19-ի «Զեկուցագրի» մասին է):

38 Նույն տեղում՝ էջ 99-100 (1827թ. ապրիլի 16-ի նամակը):

39 Նույն տեղում՝ էջ 99:

40 Նույն տեղում՝ էջ 107:

41 Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր», ևշվ. աշխ., էջ 61 (1827թ. հունիսի 22-ի գրառումը՝ «Պրոկլամացիա՝ ուղղված աղակցիներին և միլիներին»):

նա ընդամենը նպաստել էր, և ինչի հետևանքով նրա արշավանքը դեպի Նախիջևան և ավելի առաջ դարձել էր ավելի արդյունավետ և համարյա անարյուն⁴²: Ենթադրվել է, որ Բ. Պասկևիչի այդ հաղորդագրության հեղինակը ևս Ա. Գրիբոյեդովն է⁴³:

Վերոբերյալ ենթադրություններից այն տպավորությունն է ստեղծվում, որ Կովկասյան կորպուսի հրամանատարի ողջ նամականու և զեկուցագրերի գաղափարական հեղինակը հենց Ա. Գրիբոյեդովն է եղել: Բ. Պասկևիչի վրա Ա. Գրիբոյեդովի ունեցած «հսկայական ազդեցության»⁴⁴ «ապացույց» է համարվել Ն. Վսեվոլոժսկու մի նամակը, որում ասված է. «Պասկևիչը, որ son factotum est (նրա վստահված անձը – Ս.Շ.)՝ Գրիբոյեդովը, ինչ որ ասի, այն էլ սրբություն է... Մանրամասն ամեն ինչ գիտեմ Գենիս Վասիլևիչից (Դավիդովից – Վ.Ս.), ով ամեն օր ինձ հետ է»⁴⁵: **Նշենք, որ Բ. Պասկևիչը գիտակցում էր, որ ինքը նոր մարդ էր Կովկասում և քաջածանոթ չէր ո՛չ տեղական բարքերին ու սովորույթներին, ո՛չ էլ Պարսկաստանի հետ տարվող քաղաքականության դիվանագիտական նրբություններին: Այս առումով նրան իրոք օգտակար է եղել Ա. Գրիբոյեդովը, քանի որ, ըստ էության, հիմնականում նա էր վարում Բ. Պասկևիչի արտաքին քաղաքական, նաև որոշ խիստ անձնական բնույթի գրագրությունը: Սակայն ասել, թե Բ. Պասկևիչն այդ հարցերում շարժվել է միայն Ա. Գրիբոյեդովի խորհուրդներով, և որ նրա վրա հսկայական է եղել գրողի գաղափարական ազդեցությունը⁴⁶, չափազանցված և անապացույց պնդում է:**

Ինչ վերաբերում է Ն. Վսեվոլոժսկու նամակին, ապա հաշվի առնելով Բ. Պասկևիչի մոտ Ա. Գրիբոյեդովի ծառայության անցնելու մասին Գ. Դավիդովի և մյուսների բացասական հուշերը՝ կարելի է հասկանալ, թե Ն. Վսեվոլոժսկին ինչպիսի չափազանցված տոներով է պատկերացրել Ա. Գրիբոյեդովի «խոսքի սուրբ ազդեցությունը» նոր ժամիշխանի վրա: Ի դեպ, Ն. Վսեվոլոժսկու անապացույց վկայությունից բացի՝ այլ վկայություններ չկան Բ. Պասկևիչի վրա Ա. Գրիբոյեդովի ունեցած

42 АКАК, 1878, т. VII, ևշվ. ժողովածու, փաստ. 512, էջ 547 (Բ. Պասկևիչի՝ 1827թ. հունիսի 27-ի գրությունը Կ. Նեսսելրոդին):

43 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 113:

44 Попова О.И., Грибоедов дипломат, ևշվ. աշխ., էջ 99:

45 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, ևշվ. աշխ., էջ 120 (1827թ. հունիսի 15-ին իր եղբայր Ալեքսանդրին ուղղած Նիկիտա Վսեվոլոժսկու նամակը): Օ. Պոպովան ևս մեջ է բերում այս նամակը օգտվելով Ս. Շոստակովիչի աշխատությունից:

46 Նույն տեղում՝ էջ 107:

«ազդեցության» վերաբերյալ:

Ետ դառնալով նշենք, որ 1826թ. սեպտեմբերի 3-ին Շամքորի, սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլի (Գանձակ) հաղթական ճակատամարտերն ու **գեներալ Վ. Մաղաթովի՝** դեպի Թավրիզ ձեռնարկած խիզախ արշավանքը⁴⁷ ստիպում են առերևույթ իրենց չեզոք պահող անգլիացիներին առավել ակտիվ քայլերի դիմել ապագա հաշտության բանակցություններում որպես հաշտարար միջնորդ հանդես գալու համար: Անհաջողություններից անհանգստացած պարսից շահը Կոստանդնուպոլիս-Վարշավա-Պետերբուրգ երկար երթուղով որպես դեսպան Ռուսաստան է գործուղում Դավիթ խանին⁴⁸, որի առաքելությունն անավարտ է մնում⁴⁹:

Թիֆլիսում կայացած բանակցությունների ժամանակ ռուս բարձրաստիճան պաշտոնյաներից Կովկաս ժամանած **Գլխավոր շտաբի պետ Ի. Գիբիչն առաջինն էր, ով նախքան ռուսների կողմից Երևանի և Նախիջևանի խանությունների գրավումը պահանջել էր վերջիններս միացնել Ռուսաստանին և Պարսկաստանին էր ներկայացրել 700.000 թուման ռազմատուգանքի պահանջ**⁵⁰:

Ռուսական կողմի համար շուտով պարզվում է, որ պարսիկները ժամանակ շահելու նպատակով, տարբեր առիթներով անվերջ ձգձգում են բանակցությունները և **ամեն կերպ փորձում են շրջանցել Ա. Երմոլովին, ինչպես նաև ուղղակիորեն բանակցությունների մեջ մտնել ռուսական կենտրոնական իշխանությունների հետ**⁵¹: Չհասնելով իր նպատակին՝ Միքայիլ Մոհամմեդ-Ալիի պարսկական պատվիրակությունը հեռանում է Թիֆլիսից⁵²: Պարսկաստանի հետ հաշտության բանակցություններում

Ռուսաստանը մերժում է նաև Անգլիայի միջնորդությունը⁵³: Անգլիայի արտաքին գործերի ստատս քարտուղար **Ջ. Քաննինգհեմ**⁵⁴ **փոխարինած վիքոնթ Գոդերիչը (Գոդրիչ)** և անգլիական կառավարությունը Օշականի ճակատամարտում⁵⁵ ռուսների նոր հաջողություններից հետո ստիպված են լինում կրկին միջամտել, սակայն անհնար էր այլևս որևէ բան փոխել:

Հայտնի է, որ Կ. Նեսսելրոդեն Կովկասյան կորպուսի նոր հրամանատար Ի. Պասկևիչին արդեն **հրահանգել էր ոչ մի կերպ թույլ չտալ անգլիացիների միջնորդությունը ռուս-պարսկական բանակցություններին**⁵⁶: Պարսկաստանի հետ բանակցություններ վարելու, հաշտություն կնքելու համար և դրանից էլ առաջ Կ. Նեսսելրոդեի տված հատուկ հրահանգներով Կովկաս էր ուղարկվել իսկական պետական խորհրդական Ա.Ս. Օրբեսկովը⁵⁷: **1827թ. ապրիլին գլխավոր հրամանատար Ի. Պասկևիչին Պետերբուրգից ուղարկված հատուկ հրահանգում ռուսական իշխանությունները նշել էին այն կարևոր պահանջները, որոնք ռուսական լիազոր ներկայացուցիչները պետք է պարսկական կողմին ներկայացնեին բանակցությունների ժամանակ**⁵⁸: **Հայերի ներգաղթի վերաբերյալ այս պահանջներում ոչինչ չէր խոսվում:**

Ի. Պասկևիչը համաձայնվում է Աբբաս-Միրզայի հետ բանակցություններ սկսել միայն Ջևան-Բուլաղի հաղթական ճակատամարտից

53 Балаян Б.П., Из дипломатической истории..., նշվ. աշխ., էջ 29:

54 История дипломатии, "Образование коалиции трех держав против Турции", Отв. ред.-ор О.Ю. Клокова, նշվ. աշխ., էջ 448:

55 Нерсисян М.Г., "Ценный первоисточник об Ошаканской битве", ՊԲՀ, 1(80), նշվ. հոդված, էջ 241-257, տես նաև՝ Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении 2(51), նշվ. ժող., էջ 160 («Ներսես Աշոտրակեցուն ուղղված Եփրեմ կաթողիկոսի՝ Էջմիածնի մոտ պարսիկների նկատմամբ տարած հաղթանակի մասին», կոնդակից, 10 սեպտեմբերի 1827թ., Թիֆլիս, №135):

56 АКАК, 1878, h. VII, նշվ. աշխ., փաստ. 503, էջ 540 (1827թ. ապրիլի 23-ի հաղորդագրությունը), տես նաև՝ Балаян Б.П., Из дипломатической истории..., նշվ. աշխ., էջ 30-31(դիվանագետ Վիլլորի գործուղումը):

57 АКАК, 1878, h. VII, նշվ. աշխ., փաստ. 502, էջ 540 (Կ. Նեսսելրոդեի 1827թ. ապրիլի 19-ի հրահանգը: Թուրքմենչայի պայմանագրի տակ նա ստորագրել է Օրբեսկով ձևով, սակայն պատմագիտության մեջ նա հայտնի է Օրբեսկով ազգանունով: Մենք հետևել ենք վերջին ձևին - Վ.Ս.), տես նաև՝ Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 119 (Տարիքով մոտավորապես Ա. Գրիբոլենդովին հասակակից, դիվանագիտական հարուստ ավանդույթներ ունեցող ազնվականական հին գերդաստանի ներկայացուցիչ Ա. Օրբեսկովի արդեն հասցրել էր որպես դիվանագետ աշխատել և փորձ կուտակել Շուտուգարտում, Կ.Պոլսում, Տոսկանայում և Վիեննայում: Նա անձամբ վայելում էր կայսերական ընտանիքի հզոր հովանավորությունը և Կովկասյան գործող բանակ էր գործուղվել իր «վաստակած կրոնումներն ամրապնդելու համար»: Կարծիք կա, որ կայսր Նիկոլայ I-ը համակրել է Օրբեսկովի հարսնացու կամուսնի Ն.Լ. Սոլյոգոբին, որի մասին տես՝ "Из дневника П.Г. Дивова, 1828 год», "Русская старина", "Товарищество Общественная польза", Санкт-Петербург, 1898, март, томъ 93, с. 500-501.

58 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 124: Տեղանունների ճշգրտման և հստակ թարգմանությունների մասին Ի. Պասկևիչին ուղղված Կ. Նեսսելրոդեի ցուցումները տես՝ АКАК, h. VII, փաստ. 505, էջ 541 (1827թ. ապրիլի 28-ի հաղորդագրությունը):

47 Мадатова С.А., "Князь В.Г. Мадатов, генерал лейтенант, род. 1782+1828г", "Русская старина", 1873, т. 7, кн. 1-6, с. 87-91.

48 Балаян Б.П., "Из дипломатической истории присоединения Восточной Армении к России", նշվ. աշխ., էջ 19-20 (օգտագործելով Иоаннисян А.Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, էջ 441-446-ից բաղած տեղեկությունները՝ նշում է, որ Դավիթ խանը նախկին ֆրանսիական գործակալ Դավիթ Օստոտրի Մելիք-Շահնազարյանն է, ով 1816թ. ժամանել էր Փարիզ որպես Իրանի դեսպան):

49 Շահը Միրզա-Մոհամմեդ-Ալիի գլխավորությամբ նոր պատվիրակություն է ուղարկում Ա. Երմոլովի մոտ, տես՝ АКАК, 1875, h. VI, մաս II, նշվ. ժող., փաստ. 708, էջ 390 (Ա. Երմոլովի՝ 1827թ. փետրվարի 20-ի նամակը Կ. Նեսսելրոդեին):

50 Балаян Б.П., Из дипломатической истории..., նշվ. աշխ., էջ 24:

51 АКАК, 1878, h. VII, նշվ. ժող., փաստ. 711, էջ 393 (Միրզա-Աբուլ-Հասան խանի՝ 1827թ. նամակն Ա. Երմոլովին):

52 Նույն տեղում՝ փաստ. 712, էջ 393-394 (Ա. Երմոլովի՝ 1827թ. մարտի 8-ի նամակը Միրզա-Աբուլ-Հասան խանին):

(հուլիսի 5-ին) և Աբասաբադի գրավումից (հուլիսի 7-ին)⁵⁹ հետո ու բանակցությունների համար Կարազիադին լքյալ բնակավայր է գործուղում Ա. Գրիբոյեդովին: **Քնականաբար հարց է ծագում. Պետերբուրգից հատուկ բանակցությունների նպատակով դեռևս մայիսից ժամանած Ա. Օբրեսկովի փոխարեն ինչու՞ է Ի. Պասկևիչն Աբբաս-Միրզայի հետ բանակցելու համար ուղարկել Ա. Գրիբոյեդովին:** Պատմագիտության մեջ Ա. Օբրեսկովի և Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական առումներով համեմատություններում միշտ էլ նշվել է, որ առաջինը եղել է «արշավանքների վտանգներից բնակարանային հարմարավետությունը նախընտրող անփորձ դիվանագետ», իսկ «Ա. Գրիբոյեդովը՝ ճակատային գծի վտանգներն արհամարհող հմուտ դիվանագետ»⁶⁰: Ա. Օբրեսկովի նկատմամբ նախնական գոռաշավորությունն Ի. Պասկևիչը «հիմնավորել էր» մինչև պայմանագրի կնքումը պատերազմական թոհուրոհից նրան զերծ պահելու պատճառաբանությամբ⁶¹: **Հնարավոր է, որ Ի. Պասկևիչը զգուշանում էր նաև, որ Աբբաս-Միրզան կարող էր տեղեկացնել պետական դավաճանության դրդող քարոզների հետևանքով 3.000 ընտանիքների հետ մասին Ղարաբադի Մեհտի-Կուլի խանի⁶², Շադիմի սուլթանի չորս ցեղերի և շահի հրամանով ժամանակին կուրացված Նախիջևանի Քելբ-Ալի խանի որդի Էքսան խանի՝ ռուսների դրդմամբ դավաճանության և ռուսահպատակության անցնելու⁶³ փաստերի շուրջ:**

59 АКАК, к. VII, № 4, ф. 511, № 546 (Ի. Պասկևիչի՝ 1827թ. հուլիսի 18-ի հաղորդագրությունը Կ. Աետեղոդեին, որտեղ նշվում է Աբբաս-Միրզայի առաջարկները մերժելու մասին): Այս իրադարձությունների մասին Ի. Պասկևիչի մանրամասն հաշվետվությունները տես՝ փաստ. 513, № 550 (1827թ. հուլիսի 4-ին Աբասաբադից կայսերն ուղղված գեկուցագիրը), փաստ. 514, № 550 (Աբասաբադից կայսերն ուղղված հուլիսի 6-ի գեկուցագիրը), փաստ. 515, № 551 (կայսերն ուղղված հուլիսի 7-ի գեկուցագիրը):

60 "Замиски Н.Н. Муравьева-Карскаго. Взятие Тавриза, 1827", № 214 (Ղեկավարի 1827թ. նոյեմբերի բանակցությունների մասին պատմելիս Ն. Մուրավյովը նշում է, որ Ա. Օբրեսկովը սկզբում անփորձ էր և հարցերին մոտենում էր չափազանց դիվանագիտորեն, իսկ պարսիկների մոտ այդ ձևն իրեն չէր արդարացնում), տես նաև՝ Шостакович С.В., Дипломатическая деятельность..., № 2, աշխ., № 122:

61 Ղեկավարի և Թուրքմենչայի բանակցությունների ժամանակ Ա. Օբրեսկովի հաստատակամության, անկողմնասպասության և պարսիկների նենգությունները կտահելու վերաբերյալ Ի. Պասկևիչի գովարանական տողերը տես АКАК, к. VII, փաստ. 557, № 601 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. փետրվարի 23-ի հաղորդագրությունը: Այս փաստաթղթում գրված է Օբրեսկովի մեղադրանքները (Վ.Ս.), տես նաև՝ Шостакович С.В., Дипломатическая деятельность..., № 2, աշխ., № 157-158 (Այստեղ հեղինակն Ա. Գրիբոյեդովին՝ Ի. Պասկևիչի տված բնութագրումներն ավելի բարձր է դասում Օբրեսկովին տված գնահատականներից: Ս. Շտոտակովիչն Ա. Օբրեսկովին կայսեր կողմից 300.000 ռուբլի թոթադրամով պարգևատրելը բացատրում է կոչումների, պաշտոնների խստագույն համաչափությամբ և կայսեր հետ մերձավորագույն կապերով (էջ 159):

62 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, № 2, աշխ., "Путевые записки. Эриванский поход", № 272-273:

63 АКАК, к. VII, փաստ. 402, № 454 (Չեղեկայացնելով իրենց կողմից գործադրած «ջանքերը», բայց թվարկելով Մեհտի-Կուլի խանին ռուսահպատակության բերելու օգուտները՝ 1827թ. հունիսի 12-ին Ի. Պասկևիչն Ի. Գիրիչին գրած գեկուցագրում նշում է, որ Ղարաբադի թիկունքում գտնվող մարզերը դարձել են ամուր, պաշտպանված: Նա նշում է նաև Մեհտի-Կուլի խանի աջակցությամբ Պարսկաստանում ռուսական ազդեցության ամրապնդման մասին), տես նաև՝ Ениколопов И., Грибоедов и Восток, № 4, աշխ., № 75-76 (ըստ հեղինակի՝ գեներալ Աբխազովին արված ցուցումներից երևում է, որ Ա. Գրիբոյեդովն է Էքսան խանին համոզել ապստամբել և բացել Աբասաբադի դարպասները):

Կարազիադինի բանակցությունների մասին Ա. Գրիբոյեդովն ամենայն մանրամասնությամբ գեկուցագիր է ներկայացնում Ի. Պասկևիչին⁶⁴: Հարկ է նշել, որ այս բանակցություններն **Ա. Գրիբոյեդովը վարում է բավականին զուսպ և դիվանագիտական սառնասրտությամբ:** 1827թ. հուլիսի 21-ին Կարազիադինում Աբբաս-Միրզան վրդովմունքով է ընդունում Ա. Գրիբոյեդովի ներկայացրած ռուսական կողմի պահանջները և առաջարկում զինադադար հաստատել 10 ամսով: Հետևելով ռուսական բանակի հաջողությունների դեպքում ռուսական կողմի պահանջների մեծացման շուրջ Ի. Պասկևիչի ցուցումներին՝ Ա. Գրիբոյեդովը, հասկանալով, որ Շահադեն փորձում է ժամանակ շահել, մերժում է նրա պահանջները⁶⁵ և Աբբաս-Միրզայի պաշտոնյաների միջոցով վերջինիս **ակնարկում է Ատրպատականի կորստի հետ կապված ու սպասվող թշվառ և աննախանձելի վիճակը և այն, որ իբրև պատերազմի և պարտության մեղավոր՝ նա կարող էր զրկվել նաև գահաժառանգի իրավունքից:**

Կարազիադինի բանակցությունները երկու կողմերի համար էլ ավարտվում են անարդյունք: Հիշտ է, Ա. Գրիբոյեդովին չի հաջողում պարսիկներին ստիպել հաշտության գալ ռուսական կողմին ձեռնադրուկ պայմաններով, սակայն 1827թ. օգոստոսի 17-ին Օշականի հաղթական ճակատամարտից⁶⁶, սեպտեմբերի 20-ին՝ Սարդարապատի, ապա՝ հոկտեմբերի 1-ին Երևանի բերդերի գրավումից⁶⁷ հետո խուճապահար Աբբաս-Միրզան փորձում է վերստին ընթացք տալ ընդհատված բանակցություններին:

1827թ. հոկտեմբերի 13-ին՝ Թավրիզը գրավելուց հետո, Ի. Պասկևիչը, ինչպես սպասուհացել էր **Թավրիզի բեկլարբեկ Ֆաթի-Ալի խանին**, առաջին անգամ մերժվելուց հետո կրկին իր մոտ ժամանած անգլիացի **Քենմիբեյին և Բեժան-խանին** հայտարարում է, որ **ռազմատուգանքի գումարը բարձրացնում է ևս 5 կուրուրով** (15 կուրուր - Վ.Ս.): Մինչև առաջին 5 կուրուրը ստանալը Ի. Պասկևիչը հրաժարվում է հաշտություն կնքել և կայսերն ուղղված իր գեկուցագրում այս պահանջը հիմնավորում է Աբբաս-Միրզայի նոր խորամանկությունները կանխարգելելու,

64 АКАК, к. VII, փաստ. 516, № 553-560 (1827թ. հուլիս), տես նաև՝ Գալյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, № 2, աշխ., № 203:

65 Աբբաս-Միրզան, անվերջ փոփոխելով իր առաջարկները, ի վերջո հիմնվելով շահի հրովարտակի վրա, պահանջում է Աբբասաբադը, Նախիջևանի խանությունն ու Էջմիածինը:

66 Нерсисян М.Г., "Ценный первоисточник об Ошаканской битве", № 4, աշխ., № 241-257:

67 Հակոբյան Թ.Թ., Երևանի պատմությունը (1801-1879), Երևան, 1959, էջ 307-358:

ինչպես նաև պարսիկների նախկին մտայնությունն ի չիք դարձնելու պատճառաբանություններով՝ գտնելով, որ *առանց այդ նոր պահանջի՝ նրանք կարող էին ենթադրել, թե վերսկսված պատերազմի դեպքում ռուսական պահանջները մնալու են նույնը*⁶⁸: Ինչպես նկատում է Պարսկաստանում Անգլիայի նախարար-գործակալ Դ. Մաքդոնալդը. «Շահն ավելի շուտ կհամաձայնվեր երեք Ադրբեջան (Ատրպատական) զիջել, քան՝ փող վճարել իր զանձարանից»⁶⁹:

Պարսկական կողմի հետ բանակցությունները նախապատրաստելու համար Բ. Պասկևիչն այս անգամ Կարա-Մելիք գյուղ է ուղարկում Ա. Օբրեսկովին, ընդ որում՝ առաջին 5 կուրուրը պահանջում է վճարել 30 օրվա, իսկ մնացած 10 կուրուրը՝ երկու ամսվա ընթացքում⁷⁰: *Այս անգամ Ա. Օբրեսկովին Աբբաս-Միրզայի մոտ ուղարկելիս Բ. Պասկևիչը դիվանագիտական հաջողությունների փառքը կորցնելու մտավախություն չուներ. Ա. Օբրեսկովն ընդամենը նախապատրաստելու էր Բ. Պասկևիչի հանդիպումը, իսկ բանակցությունները վարելու էր անձամբ վերջինս*:

Բ. Պասկևիչի և Աբբաս-Միրզայի բանակցությունները *Դեհկարխանում սկսվում են 1827թ. նոյեմբերի 6-ին և ընդհատումներով շարունակվում են մինչև 1828թ. հունվարի 7-ը*⁷¹: Դեհկարխանի բանակցությունների սկզբնական փուլում պարսիկների կողմից ռազմատուգանքի առաջին մասի վճարման հավանականության շուրջ Բ. Պասկևիչի թերահավատությունն ու կասկածներն արտացոլված են նրա օրագրում⁷²:

*Անգլիական կողմին այս անգամ թույլատրվում է ռազմատուգանքի վճարման հարցում որպես միջնորդ հաղես զալ ռուսական և պարսկական կողմերի միջև: Բ. Պասկևիչը կայսերն առաջարկում է, որ հարուստ Ատրպատական անցնի Ռուսաստանին և Պարսկաստանի դեմ ստեղծվի պատեռնե (թափարգել) երկրամաս՝ ինքնուրույն խանություններով, որոնք կենթարկվելին նշանակված ռուս նախագահին (պրեզիդենտին) կամ վալիին*⁷³, սակայն *կայսրը մերժում է՝ նշելով, որ դա իրենց հանդեպ*

*«կասեցնի» եվրոպական երկրներին և տպավորություն կստեղծի, թե իբր Ռուսաստանը ձգտում է ափրանալ ողջ Ասիային*⁷⁴:

Դեհկարխանի բանակցությունների ողջ ընթացքը ներկայացված է նաև Նիկոլայ I-ին Բ. Պասկևիչի հղած զեկուցագրերում⁷⁵: Ճիշտ է, Ա. Գրիբոյեդովի մասին Բ. Պասկևիչն իր զեկուցագրերում ոչինչ չի նշում, սակայն *որոշ հետազոտողների կարծիքով վերջինս անկասկած մասնակցել է Դեհկարխանի բանակցություններին*⁷⁶, և գոհ լինելով *նրա ծառայությունից՝ Բ. Պասկևիչը դիմել է կառավարությանը որպես պարգևատրում Ա. Գրիբոյեդովի պաշտոնը մեկ աստիճանով բարձրացնելու խնդրանքով*⁷⁷:

Գլխավոր շտաբի պետ Բ. Դիրիչը կայսեր անունից Բ. Պասկևիչին գրում է *լավ կլինեք, որ սովորական նվերների փոխարեն շահն ուղարկեք հազվագյուտ ձեռագրեր, սակայն դրա մասին հաշտության պայմանագրում հարկ չկար, որ հատուկ հողվածներ ներառվեին*⁷⁸: *Կայսեր ցանկությամբ հազվագյուտ ձեռագրերի և գանձերի հայտնաբերումն ու ձեռքբերումը Պարսկաստանում հանձնարարվում է Ա. Գրիբոյեդովին*⁷⁹:

74 АКАК, h. VII, փաստ. 529, էջ 573-574 (կայսեր՝ 1827թ. նոյեմբերի 29-ի հրահանգը, որում հավանություն է տալիս հավելյալ 5 կուրուրի առաջարկին և պահանջում է մինչև ռազմատուգանքի ստացումը գործերը չհանել Ատրպատականից), նաև՝ Русско-армянское сотрудничество... Вестник архивов Армении, 2(51), նշվ. ժող., փաստ. №144, էջ 173-175:

75 Նույն տեղում՝ փաստ. 538, 539, էջ 583-585 (Բ. Պասկևիչի՝ 1828թ. հունվարի 5-6-ի զեկուցագրերը կայսրին, որում նշում է անգլիացի Մաքսելլի որպես երաշխավոր հանդես գալու մասին: Նա գումարը ստանալու էր Ղազվինում և որպես իրենց սեփականություն հանձնելու էր նուսներին), փաստ. 531, էջ 575-577 (Բ. Պասկևիչին ուղղված 1827թ. դեկտեմբերի 20-ի զեկուցագիրը, որում խոսվում է գումարը ստանալու համար ուղարկված կապիտան Վոլխովսկու մասին), փաստ. 532, էջ 577-579 (նույնը՝ դեկտեմբերի 19-ին), փաստ. 534, էջ 579-580 (նույնը՝ դեկտեմբերի 22-ին), փաստ. 538, էջ 583 (Բ. Պասկևիչի՝ 1828թ. հունվարի 5-ի զեկուցագիրը կայսրին, որում տեղեկացնում է շահի որդիներից Հասան-Ալի-Միրզայի՝ գործերով Թեհրան ժամանելու, պատերազմական կոչերի ու Ատրպատականում իբր ռուսների ներկայության պատճառով բռնկված ըմբոստությունների մասին):

76 Семёнов Л.С., "К вопросу о значении Туркменчайского договора...," նշվ. աշխ., էջ 110 (նշենք, որ եղիճակը չի նշում այն փաստաթղթերը, որոնք կփաստեին Դեհկարխանի բանակցություններին Ա. Գրիբոյեդովի մասնակցության աստիճանի և բնույթի մասին):

77 АКАК, h. VII, փաստ. 533, էջ 579 (Կ. Նեսսելրոդիի՝ 1827թ. դեկտեմբերի 20-ի գրությունն Բ. Պասկևիչին՝ Ա. Գրիբոյեդովին մեկ աստիճանով ավելի բարձր կոչում շնորհելու մասին):

78 Նույն տեղում՝ փաստ. 536-ի հավելված, էջ 582 (Բ. Դիրիչի՝ 1827թ. նոյեմբերի 17-ի այս գրությունը գրված է ֆրանսերենով և ունի ռուսերեն համառոտ թարգմանություն):

79 Նույն տեղում (Բ. Պասկևիչի՝ 1827թ. դեկտեմբերի 27-ի գրությունն Ա. Գրիբոյեդովին), փաստ. 547, էջ 589 (զեներալ Մուխտելենի՝ 1828թ. փետրվարի 9-ի զեկուցագիրն Բ. Պասկևիչին՝ 50 չերվոնեցով հազվագյուտ գրքերի գրադարան ձեռք բերելու և Թիֆլիս հասցնելու մասին), փաստ. 581, էջ 615 (կոմս Չեռնիշևի՝ 1828թ. ապրիլի 25-ի գրությունն Բ. Պասկևիչին, որում հանդիմանում է Արդեբիլի Շելյա-Սեֆի-էդ-Դինի մզկիթի գրադարանն արտագրելուց հետո, դրա և մյուս գանձերը ետ վերադարձնելու խոստումների համար և կայսեր անունից հայտնում է, որ այդ ամենը չի վերադարձվելու: Նա խորհուրդ է տալիս խոստումալ պարսիկներին, որ եթե հնարավոր լինի, գրքերի միայն պատճենները ետ կուղարկեն Պարսկաստան): Հմմտ. 1829թ. Թեհրանում Միրզա-Յազուբի հազվագյուտ իրերը Ա. Գրիբոյեդովի կողմից համառորեն պահանջելու վկայության հետ:

68 Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении..., Вестник архивов Армении 2(51), նշվ. ժող., փաստ. №138, էջ 163-168 (այս նույն փաստաթուղթը՝ АКАК, h. VII, փաստ. 528, էջ 569-ում 22-ի փոխարեն թվագրված է հոկտեմբերի 29-ով - Վ.Ս.):

69 Նույն տեղում՝ փաստ. №138, էջ 167:

70 АКАК, h. VII, փաստ. 528, էջ 571 (1827թ. հոկտեմբերի 29-ին կայսերն ուղղված Բ. Պասկևիչի զեկուցագիրը):

71 Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении, 2(51), նշվ. ժող., ծանոթութ. №104, էջ 265:

72 Նույն տեղում՝ փաստ. №140, էջ 168-171:

73 АКАК, h. VII, փաստ. 528, էջ 572 (1827թ. հոկտեմբերի 29-ին կայսերն ուղղված Բ. Պասկևիչի զեկուցը):

Դեհկարխանի անհաջող բանակցություններից հետո էլ Ի. Պասկևիչի և Աբբաս-Միրզայի միջև շփումները նամակաձև ձևով շարունակվում են⁸⁰: Ռուսների կողմից Մարաղայի, Ուրմիայի և Արդեբիլի գրավումից հետո 1828թ. հունվարի 30-31-ին Միանեում գտնվող ռուսական ճամբար է հասնում 5 կուրուր ռազմատուգանքը, ինչից հետո բանակցությունների և հաշտություն կնքելու համար **Ի. Պասկևիչը, հակառակ անգլիացիների, ընտրում է Թուրքմենչայ գյուղը**: Դրանից առաջ Ի. Պասկևիչի հետ նոր բանակցությունների համար Աբբաս-Միրզան արդեն ստացել էր շահի հրովարտակը (ֆիրմանը)⁸¹: Թուրքմենչայի հաշտության բանակցությունները սկսվում են 1828թ. փետրվարի 6-ին: Փետրվարի 7-ի հրահանգում՝ ուղղված Ա. Գրիբոյեդովին, Ի. Պասկևիչը ցուցում է տալիս մինչև պարսկական կողմի հետ իր հանդիպումն այնպես դասավորել ընթացքը, որ նրանց հիմնական պահանջը դառնա Ատրպատականից ռուսական զորքերը հանելու հարցը (որի շրջանակներում հնարավոր կլինեն զիջումների գնալ), ինչն էլ հնարավորություն կտար չեզոքացնել պարսկական կողմից ռազմատուգանքի նվազեցման խնդրին ուղղված ջանքերը⁸² (այս հարցում Ի. Պասկևիչը չէր պատրաստվում զիջումներ անել):

Ի վերջո, **1828թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում կրկնվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը: Մի կողմից Ի. Պասկևիչի և Ա. Օբրեսկովի, մյուս կողմից՝ Աբբաս-Միրզայի ստորագրած Թուրքմենչայի պայմանագիրը կազմված է 16 հոդվածներով գլխավոր պայմանագրից և 9 հոդվածներից բաղկացած հատուկ արձանագրությունից⁸³:**

Այս պայմանագրի կնքման գործում **Ա. Գրիբոյեդովի դերը «բացահայտող»** հիշատակություն է անում Ի. Պասկևիչի կենսագիր իշխան 80 АКАК, h. VII, փաստ. 545, էջ 588 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. հունվարի 20-ի նամակն Աբբաս-Միրզային):
81 Балаян Б.П., "Дипломатическая история русско-иранских войн...", նշվ. աշխ., էջ 190-191, տես նաև՝ АКАК, h. VII, փաստ. 545, էջ 587-588 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. հունվարի 20-ի շնորհավորական նամակն Աբբաս-Միրզային՝ շահի ֆիրմանի առիթով):
82 Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении, 2(51), նշվ. ժող., փաստ. №149, էջ 209-210:
83 Договоры России с Востокомъ - Политическіе и торговые, Собралъ и издалъ Т. Юзефовичъ, նշվ. ժող., էջ 214-227: Հաշտության գործում անգլիացիների դերի և Երևանի ու Նախիջևանի խանությունների մասին տես նաև՝ Atkin Muriel, Russia and Iran. 1780-1828, նշվ. աշխ., էջ 96 (հեղինակի կարծիքով միայն անգլիացիների կողմից Ռուսաստանին հակազդելու շնորհիվ է, որ Իրանը 1826-1828թթ. պատերազմում պարտվելուց հետո կարողացավ պահպանել իր անկախությունը և նվազագույնի հասցնել տարածքային կորուստները), տես նաև՝ Afschar Mahmoud "Le politique européenne en Perse", նշվ. աշխ., էջ 192 (ըստ հեղինակի՝ պարսից պատմաբանները ստիպված են երբեմն միայն ընդունել, որ Պարսկաստանն օրինական, իրավաբանական ոչ մի հիմք կամ իրավունք չի ունեցել հայկական երկու հինավուրց մարզերի՝ Երևանի և Նախիջևանի խանությունների վրա):

Շչերբատովը՝ վկայակոչելով Ի. Դիրբիչին հղած Ի. Պասկևիչի մի զեկուցագիր, որում իբր կայսերը հղած մի զեկույցում Ի. Պասկևիչը գրել է. «Համարձակվում եմ երաշխավորել նրան (Ա. Գրիբոյեդովին - Վ.Ս.) որպես մի մարդու, ով ինձ մոտ քաղաքական գործերում չափազանց օգտակար է եղել: Ես նրան եմ պարտական այն մտքերի համար, որ պայմանագիր չկնքվի, մինչև նախօրոք չստացվի ռազմատուգանքի մի մասը»⁸⁴:

Գատելով Ի. Դիրբիչին հղած վերոհիշյալ զեկուցագրի տեքստից⁸⁵, ինչպես նաև Թուրքմենչայի պայմանագրի առիթով կայսերն ուղղված Ի. Պասկևիչի շնորհավորական նամակից⁸⁶ ու հաջորդ օրն էլ արտգործնախարար Կ. Նեսսեյրոդեին ուղղված հաղորդագրությունից⁸⁷ դրանցում բացակայում է ռազմատուգանքի առաջնահերթ պահանջի վերաբերյալ իշխան Շչերբատովի բերած վկայությունը, թեև երեք փաստաթղթերում էլ Ի. Պասկևիչը պարզապես գովաբանում է Ա. Գրիբոյեդովին որպես եռանդուն, տեղական գործերում փորձառու մարդու: Ի. Դիրբիչին և Կ. Նեսսեյրոդեին նա խնդրում է կայսեր մոտ բարեխոսել Ա. Գրիբոյեդովի համար և նրա քայքայված վիճակը բարելավելու նպատակով պարզևատրել **4.000 չերվոնեցով⁸⁸: Իշխան Շչերբատովի վերոհիշյալ հիշատակությունը չի հաստատվում նաև այլ փաստաթղթերով:**

Վկայակոչելով նախքան Կարազիադիինի բանակցությունները Պարսկաստանում նախկին հավատարմատար Ս. Մազարովիչին Ա. Գրիբոյեդովի հղած մի նամակ, որում վերջինից **նա խնդրում էր իրեն ուղարկել Գյուլիստանի պայմանագրի ֆրանսերեն կամ ռուսերեն տարբերակը⁸⁹**՝ հետազոտողներն այն կարծիքն են հայտնել, թե **Ա. Գրիբոյեդովին պայմանագրի այդ օրինակը հարկավոր էր Պարսկաստանի հետ հաշտության պայմանագրի նախնական տարբերակ կազմելու համար⁹⁰:** Մակայն հայտնի է, որ **Կ. Նեսսեյրոդեն** նույն թվականի ապրիլին Ա. Օբրեսկովի հետ **Ի. Պասկևիչին արդեն ուղարկել էր Պետերբուրգում կազմված պայմանագրի նախնական տարբերակը**, որը տեղ

84 Генерел-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, том III, Октябрь 1827 - май 1831гг., նշվ. աշխ., էջ 95 (1828թ. փետրվարի 12-ին Ի. Դիրբիչին հղած Ի. Պասկևիչի զեկուցագրի մասին):

85 Присоединение Восточной Армении к России, Сборник документов, h. II (1814-1830), նշվ. ժող., փաստ. №248, էջ 455-456:

86 Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении, նշվ. ժող., փաստ. №151, էջ 211-213:

87 АКАК, h. VII, փաստ. 551, էջ 594-595 (1828թ. փետրվարի 12-ի հաղորդագրությունը):

88 Նույն տեղում՝ փաստ. 551, էջ 594-595:

89 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 100: Հետազոտող Օ. Պուպովան "А.С. Грибоедов в Персии. 1818-1823гг.", М., 1929, աշխատության մեջ (էջ 73-74) սխալմամբ այդ նամակը թվագրում է 1821 թվականով, ինչը Ս. Շոստակովիչը հերքում է համոզիչ փաստարկներով:

90 Балаян Б.П., "Дипломатическая история русско-иранских войн...", նշվ. աշխ., էջ 180:

էր հասել մայիսի վերջին, այսինքն՝ **եթէ նախքան Կարազիադիցի բանակցություններն Ի. Պասկևիչը հրամայել է կազմել նախնական պայմանագրի տեքստը, ապա նա անպայման պետք է որ տրամադրած լիներ նաև արդեն տեղ հասած նախնական պայմանագրի կառավարական տարբերակը: Կարազիադիցում Ա. Գրիբոյեդովը հանդես է եկել ոչ թե Գյուլիստանի պայմանագրի հիման վրա իր «կազմած» նախնական պայմանագրի, այլ կառավարության և Ի. Պասկևիչի ցուցումներով ու իր կողմից գրագեա խմբագրված տարբերակով:**

Բացի վերոնշյալը՝ **Ա. Գրիբոյեդովին է վերագրվել Թուրքմենչայի պայմանագրի՝ նաև հայերին վերաբերող XII, XIV, XV հոդվածները պայմանագիր մտցնելու գաղափարը**⁹¹, ինչի համար հիմք է ծառայել գերինների փոխանակման և վերաբնակեցման վերաբերյալ **Գյուլիստանի պայմանագրի VI հոդվածի հետ XII, XIV, XV հոդվածների համեմատական վերլուծությունը**⁹² և Ի. Պասկևիչին Ա. Գրիբոյեդովի հղած հաղորդագրության մեջ այդ հոդվածների շուրջ վերջինիս կատարած մեկնաբանությունների ծանոթությունը⁹³: **Փաստենք, որ վերոհիշյալ պնդումները խիստ ենթադրական են. հիշյալ ծանոթության մեջ Ա. Գրիբոյեդովն ընդամենը մեկնաբանում է հոդվածները, որովհետև դա կապված էր մահմեդական որոշ անձանց՝ պայմանագրի հոդվածները ճիշտ չընկալելու և կրկին պարսկահպատակություն ընդունելու ցանկության անհնարինության հետ, ինչն Ա. Գրիբոյեդովը փորձում է Ի. Պասկևիչի միջոցով հրամանի ձևով հասցնել մաքսային և սահմանապահ պետերին**⁹⁴: **Ա. Գրիբոյեդովի կողմից հոդվածների մեկնաբանումը բոլորովին էլ չի նշանակում, թե նա է եղել դրանց հեղինակը:**

91 Попова О.И., Трибодов дипломат, изд. 2-е, т. 102, տես նաև՝ Семёнов Л.С., К вопросу о значении Туркменчайского договора..., изд. 1-е, 1911, էջ 105-106, Պարսիական Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ուսական հարաբերությունները, 1911, էջ 81-82, Трибодов А.С., Полное собрание сочинений. Под ред. Н.К. Пиксанова и И.Н. Шляпкина, 1911, т. первый, с. XXIX, Գրիբոյեդովի և հայ-ուսական հարաբերությունները, էջ 266, Нечкина М., Трибодов и декабристы, 1977, էջ 600 (Մ. Նեչկինան ընդհանրապես Թուրքմենչայի ողջ պայմանագրի է կամարում Ա. Գրիբոյեդովի ստեղծածը), Ениколопов И.К., "Из истории русско-иранских отношений...", изд. 2-е, т. 143: Նշենք, որ Թուրքմենչայի պայմանագրի XII հոդվածով երկու կողմերի հպատակներին թույլ էր տրվում հակառակ կողմն անցնելիս 3 տարվա ընթացքում վաճառել, փոխանակել կամ իրավունք տալ վաճառելու իրենց գույքը, XIV հոդվածով նախատեսվում էր դասալիքներին և վախճատականներին չվերադարձնելու և նրանց բնակեցման կարգին, XV հոդվածը վերաբերում է ռուսներին աջակցած պարսկահպատակներին ներում շնորհելու, վերաբնակվելու և Պարսկաստանում մնացած նրանց անշարժ գույքը 5 տարվա ընթացքում վաճառելու կարգին:

92 Балаян Б.П., "Дипломатическая история русско-иранских войн...", изд. 2-е, т. 182, տես նաև՝ Семёнов Л.С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-х годах XIX в., изд. 2-е, էջ 124:

93 АКАК, т. VII, փաստ. 619, էջ 644-645 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. սեպտեմբերի 23-ին Ի. Պասկևիչին հղած հաղորդագրությունը):

94 Նույն տեղում՝ էջ 644-645:

Նշենք, որ նախքան Դեհկարիսանի բանակցությունները սկսելը **Եղիազար Լազարյանին ուղղված նամակում վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին գրում էր, որ «իրազեկ է կացուցել» Ի. Պասկևիչին Հայաստանի սահմաններն ընդարձակելու և պարսկահայերով և տաճկահայերով բազմամարդ դարձնելու մասին: Նա նշում է Սուրմալուի և Մակվի գավառների միացման, Ղազվիհից, Համադանից, Թեհրանից, Սպահանից և այլ վայրերից հայերի վերաբնակեցման անհրաժեշտության մասին: «...Մեծ բազմություն ունի հայոց բազմանալ այսր ի Հայաստան ի տերութեան օսմանցոց,- գրում է արքեպիսկոպոսը,- առ որ անանցանելի հարկավորութեամբ, հարկ է վասն սահմանաց Երևանու նշանակել ոչ զԵրասխ գետն, այլ զսեպհական սահմանն Երևանու, այսինքն է յայնկոյս Երասխայ յարևելից կողմանն անմատչելի ձորն Մակու անուանեալ, որ բաժանէ զԵրևանու սահմանն ի Խոյէ, զգազաթ լերինն Արարատայ և ընդ նմին կցեալ շղթայապատ լերանց՝ որք բաժանեն յԵրևանայ զսահմանն օսմանցոց իշխանութեան...»⁹⁵:**

Արդեն Դեհկարիսանի բանակցությունների ժամանակ Ն. Աշտարակեցին Մակվի մահալի Սր. Թաղևոս առաքյալի վանքի վանահայր Բարսեղ Եպիսկոպոսին և այլոց հույժ գաղտնի տեղեկացնում էր, **որ ռուսական սահմանն Արաքսից այն կողմ չի անցնելու, և պատվիրում էր հորդորել պարսկահայերին, որ անցնեն Արաքսը և բնակություն հաստատեն Արարատյան դաշտում կամ Նախիջևանում՝ ընդմիջտ ազատվելով պարսից բռնակալությունից**⁹⁶:

Ներսես արքեպիսկոպոսին ուղղված Ի. Պասկևիչի պատասխան նամակից տեղեկանում ենք, **որ դեռ 1827թ. դեկտեմբերի 27-ին վերջինիս ուղղված նամակով արքեպիսկոպոսը խնդրել էր վերաբնակեցման նպատակով պարսկական տիրույթներից դեպի Ռուսաստանին անցած տարածքներ հայերի գաղթ կազմակերպել և Պարսկաստանի կառավարությանն առաջարկել հայերի ունեցվածքը, անշարժ գույքը, այգիներն ու ջրաղացները վերցնել կառավարության տրամադրության տակ՝ դրանց տերերին տալով որոշ փոխհատուցում, կամ էլ պարսիկ**

95 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 166, վավ. 822 (Ներսես Աշտարակեցու մանրամասն շարադրած տեսակետներով նամակը Եղիազար Լազարյան (Լազարյան), «Ի բերդն Երևանու», 06.10.1827):

96 Նույն տեղում՝ թղթ. 166, վավ. 912 (1827թ. դեկտեմբերի 17-ի նամակը), թղթ. 166, վավ. 929 (1827թ. դեկտեմբերի 29-ի նամակը Թավրիզի պարետ Ե. Լազարյանին), թղթ. 166, վավ. 930 (1827թ. դեկտեմբերի նամակի իշխան Երիսթովին, որ կարդա նաև կոմս Մուխոմելսկին և Ա. Գրիբոյեդովին), թղթ. 166, վավ. 931 (1827թ. դեկտեմբերի նամակը Բարսեղ Եպիսկոպոսին, որում հայտնում է գաղթի հորդորով Երեզակի և Նախավկայի վանահայրերին Պարսկաստան ուղարկելու մասին):

մասնավոր անձանց հնարավորություն տալ դրանք գնել հարմար գներով: Ի. Պասկևիչը Ն. Աշտարակեցուն տեղեկացնում է, որ ապագա հաշտության պայմանագրում ներառվել է **հատուկ կետ**⁹⁷: ներգաղթողների անշարժ գույքը 5 տարվա ընթացքում վաճառելու իրավունքի վերաբերյալ: Նա նաև նշում է, որ քանի դեռ ռուսական զորքերը գտնվում են Պարսկաստանում, ապա ներգաղթող հայերին ոչ մի նեղություն չի պատճառվի պարսկական կողմից⁹⁷: **Ուշագրավ է, բայց անտեսված, որ կոմս Բլուդովին Ի. Պասկևիչը գրում էր, որ դեռ Գեեկարխանի բանակցություններում, ռուսական մարզերում բնակվելու ցանկություն հայտնած որոշ հայերի իղձերին ընդառաջ գնալով, ինքը որոշել է դրա վերաբերյալ անհրաժեշտ հանձնարարականներ տալ**⁹⁸:

Հայերին վերաբերող հողվածները պայմանագիր մտցնելու՝ **նաև հայ գործիչների ջանքերն անտեսելու պարագայում նշվել է, որ այդ հողվածները պայմանագրի մեջ չեն մտցրել Ի. Պասկևիչն ու Ա. Օբրեսկովը**, որովհետև Անդրկովկասի հարցում **«համեստ վերաբերմունք»** ունեցող **Ի. Պասկևիչը, ամեն դեպքում, առաջնորդվում էր կառավարական քաղաքականությամբ և ուղղակի գործում էր Նիկոլայ I-ի հրահանգներով**⁹⁹, մինչդեռ ռուսական կողմի մյուս ներկայացուցիչ **Ա. Գրիբոյեդովն ամեն ջանք գործադրեց, որպեսզի այդ հողվածները շարադրվեն պայմանագրում**: Նշվել է հետևյալը. «...Ա. Գրիբոյեդովի ամենակտիվ մասնակցությունը Պարսկաստանի հետ խաղաղության պայմանագրի մշակմանը, նախքան պայմանագրի կնքումը նրա սերտ կապերը Հայաստանի հետ՝ հնարավորություն են տալիս ենթադրել, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող Թուրքմենչայի պայմանագրի հողվածները կազմված են հենց նրա՝ կողմից»¹⁰⁰:

Հարց է ծագում. եթե արտաքին գործերի ստատս քարտուղար Կ. Նեսսելրոդեն, Ի. Պասկևիչը, Ա. Օբրեսկովը և մյուսները կայսրապետական գաղութային քաղաքականությունը հետևողականորեն իրականացնող գործիչներ էին, ապա ի՞նչ քաղաքականություն իրականացող գործիչ էր Ա. Գրիբոյեդովը: Եթե իշխանություններին չէին հետաքրքրում հայ ժողովրդի շահերը, իսկ Ի. Պասկևիչն ու Ա. Օբրեսկովն էլ

իրենք չէին առաջարկել մտցնել հայանպաստ հողվածները, ապա շրջանցվել է այն կարևոր հարցը, թե ինչպե՞ս եղավ, և ի՞նչը նրանց դրդեց հետաքրքրվել և համաձայնվել հաշտության պայմանագրում ներառել վերոհիշյալ հողվածները: Փաստենք, սակայն, որ վերոբերյալ ենթադրությունը հետագայում դարձել է կարծրատիպ, չնայած որ այն ոչ մի վավերագրով կամ վկայությամբ փաստված չէ:

Գիվանագետ Ա. Գրիբոյեդովի ծառայությունն ընդգրկում է 1818-1829թթ. (ընդամենը 11 տարի), իսկ Հայաստանի ազատագրության համար դիվանագիտական պայքարն ու շփումները լրջորեն ծավալվել են՝ սկսած Պյոտր Մեծի և Եկատերինա II Մեծի ժամանակներից, ու դրան հասնելու ուղիների, ակնկալվող օգուտների և շահերի վերաբերյալ հայկական հիմնավորումներն արդեն վաղուց կային Ռուսաստանի արտաքին քաղաքականության զինանոցում, որոնք էլ, ըստ ամենայնի, քննարկվել են ռուսական իշխանությունների կողմից: Հարկ է նշել, որ այս փուլում հայերի և ռուսական իշխանությունների շահերը պարզապես համընկել են¹⁰¹:

Ա. Գրիբոյեդովին է վերագրվել նաև **Թուրքմենչայի պայմանագրի մեջ Աբբաս-Միրզային գահաժառանգ ճանաչելու վերաբերյալ VII հողվածը մտցնելու գաղափարը**¹⁰²: Այս հարցի շուրջ «արտաքին գործերի նախարարության դեմ Ա. Գրիբոյեդովի մղած պայքարի» վերաբերյալ «որպես ապացույց» հղում է կատարվել կայսերն ուղղված Ի. Պասկևիչի՝ 1827թ. հոկտեմբերի 29-ի վերոհիշյալ գեկուցագրին և իշխան Շչեքրատովի աշխատությանը¹⁰³: **Այստեղ, սակայն, անհրաժեշտ ենք համարում փաստել, որ տվյալ փաստաթղթերում բացարձակապես խոսք չի գնում ո՛չ Ա. Գրիբոյեդովի, ո՛չ էլ արտգործնախարարության դեմ Ա. Գրիբոյեդովի «մղած պայքարի» մասին: Դրանցում խոսվում է Կ. Նեսսելրոդեից ստացված այն կտրուկ հրահանգի մասին, որով Ի. Պասկևիչից պահանջվել է հաշտության նոր պայմանագրում չընդգրկել Աբբաս-Միրզային Գյուլիստանի նախկին պայմանագրի IV հող-**

101 Дилоян В.А., Присоединение Восточной Армении к России и его историческое значение, նշվ. աշխ., էջ 6-12, տես նաև՝ Միսոկյան Վահրամ, «Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ա.Ս. Գրիբոյեդովի մասնակցության հարցը խորհրդային պատմագրության գնահատմամբ», ՊԲՀ, Երևան, 2005, 3(170), էջ 103-110 (հողվածի 4-րդ ծանոթության մեջ անկա է վրիպակ. պետք է լինի ոչ թե "Нессельроде-Паскевичу, 28 апреля 1827г." АКАК, Тифлис, 1878, т. VII, с. 541, այլ՝ նույն ժող., փաստ. 566, էջ 607 ("Гр. Нессельроде – Паскевичу, от 16-го марта, 1828, №433"):

102 Пашуто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова", նշվ. աշխ., էջ 128:

103 Генерал-фельдмаршал князь Паскевич. Его жизнь и деятельность, Կ. III, նշվ. աշխ., հավելված 1, էջ 11:

97 АКАК, Կ. VII, փաստ. 546, էջ 588-589 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. հունվարի 25-ի նամակը):

98 Նույն տեղում՝ փաստ. 214, էջ 260 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. նոյեմբերի 16-ի նամակը):

99 Семёнов Л.С., "К вопросу о значении Туркменчайского договора...", նշվ. հոդվ., էջ 107-108:

100 Նույն տեղում՝ էջ 110, տես նաև՝ Գալոյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, նշվ. աշխ., էջ 207:

վածով գահաժառանգ ճանաչելու հարցը: Ջեկուցագրում Ի. Պասկևիչը կայսրից ընդամենը հարցնում է՝ խրախուսել, թե՞ «ոչնչացնել» Աբբաս-Միրզայի կամ նրա որդու՝ Պետերբուրգ մեկնելու հույսը¹⁰⁴: Իսկ 1827թ. նոյեմբերի 29-ի կայսերական վերոհիշյալ հրամանագրով Ի. Պասկևիչին կայսրը մեկ անգամ ևս ցուցում էր տվել հաշտության նոր պայմանագրում չնորոգել և չընդգրկել Գյուլիստանի պայմանագրի IV հոդվածը, քանի որ Ռուսաստանն Աբբաս-Միրզային արդեն գահաժառանգ էր ճանաչել նախկինում: Որպեսզի Շահգադեի հանդեպ իրենց վրա նոր պարտավորություններ չդրվեն, այդ հիման վրա կայսրը կրկնում էր, որ ինքը չի դժվարանում Աբբաս-Միրզային Պարսկաստանի գահաժառանգ ճանաչել, սակայն մինևույն ժամանակ նա վճռականորեն մտադիր էր մերժել գահին տիրելու համար նրա հանդեպ նոր պարտավորություններ վերցնելու հարցը¹⁰⁵: Ի վերջո Աբբաս-Միրզային գահաժառանգ ճանաչելու վերաբերյալ հոդվածն Ա. Գրիբոյեդովի կողմից Թուրքմենչայի պայմանագրում ձևակերպվում է կայսեր նախընտրած տարբերակով, այսինքն՝ Աբբաս-Միրզան ճանաչվում է Պարսկաստանի գահաժառանգ՝ առանց ռուսական կողմից լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու:

Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ի. Պասկևիչի թույլ տված «սխալներից» է համարվել հաշտության բանակցությունների ընթացքին Իրանում անգլիական առաքելության անդամներին (Մաքնեյ, Մաքդոնալդ) մասնակից դարձնելը: Անգլիացիների միջնորդության մասին առաջարկն իրականում արվել էր պարսկական կողմից, իսկ անգլիացիների երաշխավորությամբ զանձվելիք ռազմատուգանքի նախնական վճարման հանգամանքն Ի. Պասկևիչին հարկավոր էր Պարսկաստանի հետ պայմանագրի կնքման գործընթացն արագացնելու համար: Ռուսները չէին համաձայնվում լքել Ատրպատականն առանց 5 կուրուրի ստացման՝ անհանգստանալով վճարման ձգձգումներից և գումարի փոփոխության մասին նոր առաջարկներից:

Երաշխավորի դերում հանդես գալն այս փուլում ձեռնառու էր նաև անգլիացիներին. ի վերջո նրանք «ետ են զնում» 1814թ. Թեհրանի պայմանագրի III և IV հոդվածները, որոնցով պարտավորվել էին Պարս-

կաստանին տարեկան 200.000 թուման վարկ տրամադրել և պարսկական հարցերում այլ երկրների դեմ հետագայում հանդես գալ որպես միջնորդ¹⁰⁶: Հարկ է փաստել, որ անգլիացիների միջնորդությունն իրոք արագացնում է հաշտության պայմանագրի կնքումը: Պատահական չէ, որ կայսր Նիկոլայ I-ը հետագայում, բացի բանակցություններին մասնակցած ռուս պաշտոնյաներից, պարզևատրում է նաև Պարսկաստանում անգլիական դեսպանակազմի բոլոր աշխատակիցներին: Անգլիացիներին բանակցություններին մասնակից դարձնելու՝ նաև Ա. Գրիբոյեդովի համաձայնության անուղղակի ապացույց է վերջինիս կողմից Ի. Պասկևիչին հղած հաղորդագրությունը, որում նա խնդրում է պարզևատրել անգլիական առաքելության քարտուղար Քեմփբելին ևս, որն Անգլիա մեկնելու պատճառով դուրս էր մնացել Նիկոլայ I-ի կողմից պարզևատրվածների ցուցակից և որը գործուն կերպով մասնակցել էր իրենց և պարսիկների մերձեցման գործին՝ նշելով, որ այդ քայլը Պարսկաստանում գտնվող անգլիական առաքելության կողմից կրնա դուրսի երախտագիտությամբ¹⁰⁷:

Հաշտության պայմանագրի օրինակը Պետերբուրգ տանելու գործն Ի. Պասկևիչը հանձնարարում է Ա. Գրիբոյեդովին¹⁰⁸: Այս ընտրությունը պատահական չէր: Թուրքմենչայի պայմանագրի կնքմանը, բացի Ա. Օրբեսկովից, մասնակցել են Ա. Գրիբոյեդովը, Ա. Ամբուրգերը, Ն. Կիսելյովը, թարգմանիչներ Աբբաս-Կուլի-աղա Բակիխանովը, Գ. Վլանգային¹⁰⁹: Թվարկվածներից Ի. Պասկևիչն անկասկած պետք է ընտրեր հատկապես Ա. Գրիբոյեդովին, քանի որ նա, որպես փորձառուներից մեկը, ակտիվ մասնակցություն էր ունեցել բոլոր բանակցություններին և հաշտության պայմանագրի խմբագրմանը, ուստի նրանից լավ ու

106 Балаян Б.П., "Дипломатическая история русско-иранских войн...", ևշվ. աշխ., էջ 194, տես նաև՝ История дипломатии, "Англия и новая русско-иранская война. Туркменчайский мир 1828г.", ևշվ. աշխ., հ. 1, էջ 613:

107 АКАК, h. VII, փաստ. 621, էջ 645-646 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. սեպտեմբերի 23-ի №56 հաղորդագրություն Ի. Պասկևիչին), փաստ. 574, էջ 612 (Կ. Նեսեյրոդեի՝ 1828թ. ապրիլի 12-ի գրություն Ի. Պասկևիչին, որում նշում է բանակցությունների ժամանակ իրենց մատուցած ծառայությունների համար անգլիական առաքելության անդամներից պարզևատրելու մասին), փաստ. 638, էջ 663 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. դեկտեմբերի 3-ի գրություն Ի. Պասկևիչին, որում տեղեկացնում է, որ անգլիացի Մաքդոնալդը խնդրել է ռուսական կառավարության առաջ կոմսի միջնորդությունը, որպեսզի ռուսական կառավարությունը միջնորդի Անգլիայի իշխանությունների առաջ՝ Մբ. Անլայի I աստիճանի շքանշանը ստանալու թույլտվության համար: Ա. Գրիբոյեդովը նշում է, որ անգլիական իշխանությունները թույլ են տալիս օտարերկրյա շքանշաններ ստանալ այն անգլիացիներին, ովքեր մասնակցել են տվյալ օտար երկրի ռազմական գործողություններին: Նա թվարկում է 1812թ. Հայրենական պատերազմից հետո կոմս Միլոբրադովիչի գործերի կազմում Լյուցենի, Դանցիգի, Գլոգաուի կոիվներում Մաքդոնալդի մասնակցության մասին):

108 Նույն տեղում՝ փաստ. 551, էջ 594:

109 Балаян Б.П., "Дипломатическая история русско-иранских войн...", ևշվ. աշխ., էջ 179:

104 АКАК, h. VII, փաստ. 528, էջ 573 (Ի. Պասկևիչի՝ 1827թ. հոկտեմբերի 29-ի գեկուցագիրը):

105 Նույն տեղում՝ փաստ. 529, էջ 574 (1827թ. նոյեմբերի 29-ի կայսերական հրահանգները), փաստ. 528, էջ 573 (ռուսական չափից մեծ պահանջներով Պարսկաստանի կառավարությանը հուսահատության հասցնելու մասին Ի. Պասկևիչի մտավախությունը):

գրագետ ոչ մեկը չէր կարող ամենը ներկայացնել արքունիքում: Բացի այդ՝ Ա. Գրիբոյեդովին ուղարկելով Պետերբուրգ՝ Ի. Պասկևիչը ցանկացել է հիմնավորել և արդարացնել նաև ոչ վաղ անցյալում «հեղափոխական մեղքերի» մեջ կասկածվող իր հովանավորչալի համար նախկինում կատարած միջնորդությունը և ապացուցել գահի հանդեպ Ա. Գրիբոյեդովի ջանքերն ու հավատարմությունը՝ վստահ լինելով, որ կայսրն առանց ուշադրության չէր թողնի նրան:

Այսպիսով, եզրակացնենք հետևյալը.

1. Գերագնահատվել է Ա. Գրիբոյեդովի ազդեցությունն Ի. Պասկևիչի վրա՝ նրան ներկայացնելով որպես Ի. Պասկևիչի «աջ ձեռքն» ու ոգեշնչողը: Այսրկովկասում իրականացնելով Ռուսաստանի գաղութային ու ռուսականացման քաղաքականությունը՝ Ի. Պասկևիչը հասկանում էր նաև Նիկոլայ I-ի ակնկալիքները, ուստի, գործելով ըստ Պետերբուրգից ուղարկված պաշտոնական ցուցումների, հրահանգների և երբեմն միայն շեղվելով դրանցից, կարողանում էր ճարպկորեն օգտագործել այն ամենը, այդ թվում՝ Ա. Գրիբոյեդովի գիտելիքներն ու գրիչը, որոնք օգուտ կրեբեին իրեն: Անձնական շահ հետապնդող ու փառքի ձգտող Ի. Պասկևիչը որևէ մեկին թույլ չէր տա խորհուրդներով իրենից ավելի խելացի երևալ, իրեն շեղել նախընտրած ուղուց կամ օգել գաղափարական ազդեցության տակ:

2. Բանակցությունների նպատակով Ա. Օբրեսկովի փոխարեն Ա. Գրիբոյեդովին Կարագիադին ուղարկելու համար Ի. Պասկևիչը խորքային պատճառներ ուներ. նա չէր վստահում կենտրոնից ուղարկված Ա. Օբրեսկովին: Գեներալը գիտակցում էր, որ կայսեր բարեհաճությունն ու հովանավորությունը վայելող այդ երիտասարդ պաշտոնյան, հանուն ծառայողական առաջընթացի, կարող էր իրենից «խլել» Պարսկաստանի հետ տարվող բանակցությունների դիվանագիտական հաջող ընթացքի և հաշտության պայմանագրի կնքմանը հասնելու դափնիները: Չի բացառվում նաև, որ Կարագիադինում Ա. Օբրեսկովը, պարսկական կողմից տեղեկանալով պարսկահպատակ ցեղերի շրջանում Ի. Պասկևիչի և Ա. Գրիբոյեդովի կողմից տարատեսակ հակահռավարական թուուցիկների տարածման մասին, կարող էր պետերբուրգյան իշխանությունների առաջ փաստել Ի. Պասկևիչի զեկուցած տեղեկություններին հակասող բոլորովին այլ իրականություն:

3. Նախքան հաշտության պայմանագրի կնքումը ռազմատուգանքի մի մասի ստացման գաղափարը զուտ Ա. Գրիբոյեդովին վերագրելու տեսակետը հիմնավոր չէ. այն չի հաստատվում փաստաթղթերով:

4. Կարագիադինում (1827թ. հուլիս) պարսկահպատակների (մասնավորապես հայերի)՝ դեպի Ռուսաստանին անցած տիրույթներ գաղթելու վերաբերյալ հողվածներ նախատեսված չեն եղել: Հողվածները պայմանագրում ներառվել են Դեհկարխանում (1827թ. նոյեմբեր - 1828թ. հունվար), երբ բանակցությունները վարում էին Ա. Օբրեսկովն ու Ի. Պասկևիչը: Թուրքմենչայի պայմանագրում XIV, XV և Աբբաս-Միրզային գահաժառանգ ճանաչելու մասին VII հոդվածները մտցնելու ջանքերը բացառապես Ա. Գրիբոյեդովին վերագրելն արդարացված չէ. առավել իրատեսական է հարցը դիտարկել որպես ռուսական իշխանությունների գաղութային քաղաքականության նպատակներից բխող հրահանգների, հայ գործիչների առաջարկների ու ջանքերի և Ա. Գրիբոյեդովի կողմից հողվածները գրագետ խմբագրելու արդյունք¹¹⁰:

5. Թուրքմենչայի պայմանագրի կնքման և բանակցությունների գործընթացում ընդհանրապես գերագնահատվել է Ա. Գրիբոյեդովի դերը. պայմանագրի հետ կապված բոլոր դրական երևույթները վերագրվել են Ա. Գրիբոյեդովին, իսկ բացթողումներն ու սխալները՝ Ի. Պասկևիչին: Անտեսվել է այն հանգամանքը, որ, այսպես ասած, «Գրիբոյեդովի խորհուրդներով շարժվող Ի. Պասկևիչն» անգլիացիների հարցում ևս «հետևել է» Ա. Գրիբոյեդովի խորհրդին, որը նույնպես, դատելով Քեմփբելին պարզևատրելու մասին նրա խնդրանք-նամակից, դեմ չի եղել այդ բանակցություններին անգլիացիների մասնակցության խնդրին:

110 AKAK, h. VII, փաստ. 566, էջ 607 (Կ. Նեսելրոդի՝ 1828թ. մարտի 16-ի գրություն Ի. Պասկևիչին, որում, պայմանագիրը համեմատելով կառավարական հրահանգների հետ, գրում է «...Թուրքմենչայի տրակտատի հողվածներն այս հարցի կապակցությամբ ևս բարձրագույն հրահանգներին համապատասխան տրված, ամենայն մանրամասնությամբ մտածված և խտուզույնս ճշտությամբ արված գտա»):

4. Ա.Ս. Գրիբոյեդովի առնչությունները պարսկահայերի ներգաղթի գործին և ռուսական դիվանագիտական առաքելության տապալումը Թեհրանում

1828թ. մարտին Թուրքմենչայի պայմանագիրը Պետերբուրգ հասցրած Ա. Գրիբոյեդովը, կառավարական պարզների արժանանալուց՝ բացի, **ապրիլի 25-ին կայսեր հրամանով նշանակվում է Ռուսաստանի լիազոր դեսպան Թեհրանում²: Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի նոր նշանակումը խորհրդային պատմագիտության կողմից դիտարկվել է որպես կայսեր կողմից նրան քաղաքական արտոյի ենթարկելու քայլ³:** Դրա համար հիմք են ծառայել Կովկաս արքայազն զեկաբրիատ Պ. Բեստուովի հուշերը, որոնցում նա գրում է. «...Բնավորության բարեծնությունն ու բարձրությունը (Ա. Գրիբոյեդովի - Վ.Ս.) լիովին բացահայտվեցին, երբ նա հանդգնեց մարդկանց (արքայազն զեկաբրիատների - Վ.Ս.) օգտին խոսել թագավորի հետ, որոնց միայն անունները հիշատակելիս տիրակալը գունատվում էր»⁴: Ա. Գրիբոյեդովի նամակներից մեկում կա այսպիսի արտահայտություն. «Սիրելի բարեկամ Ֆադեյ, տպագրիր այս փայլուն նկարա-

գրությունը, որ շատ հաջող դուրս է հորդել քաղաքական արտոյի իմ ընկերոջ գրչի տակից»⁵: Պ. Բեստուովի վերոբերյալ վկայության համար նախ պետք է, որ հիմք հանդիսանար Ա. Գրիբոյեդովի պատմածը, սակայն Պ. Բեստուովը դժբախտաբար չի նշում, թե ինչ հանգամանքներում են ասվել այդ տողերը, և **այս դեկաբրիստներից հատկապես ու՛մ համար է նա կայսրից խնդրել ներում շնորհել:** Հայտնի է, որ կայսերն այս կամ այն խոսվարարին ներում շնորհելու խնդրանքով շատերն են դիմել: Օրինակ, **նույն Ի. Պասկևիչը, որը դարձյալ Ա. Գրիբոյեդովի խնդրանքով⁶ և արդեն նրա վախճանից հետո միջնորդում է կայսեր առաջ Ա. Օդոևսկու⁷, ապա նաև Ա. Բեստուով-Մարիինսկու համար⁸, սակայն դրա համար կոմսի ծառայությունը Կովկասում, ապա Լեհաստանում չի համարվել քաղաքական արտոյ:**

Պ. Բեստուովի գրառումներից բացի՝ ոչ մի այլ վկայություն չկա կայսեր առաջ Ա. Գրիբոյեդովի վերոհիշյալ պահվածքի վերաբերյալ: Ընդհակառակը, **մեջ բերելով «կայսեր գունատվելու» վերաբերյալ Պ. Բեստուովի վերոհիշյալ վկայությունը և ապա ընկնելով հակասության մեջ՝ հետազոտող Օ. Պոպովան** Ա. Գրիբոյեդովի մի վկայության մասին ներկայացնում է հետևյալը. «Ընդունելությունների մասին (կայսեր մոտ - Վ.Ս.) Ա. Գրիբոյեդովը գրում էր Ի. Պասկևիչին, որ իր համար այնքան հեշտ էր խոսել թագավորի հետ, որ ինքը «մոռացել էր այն տարածությունը, որ բաժանում էր մեր մոլորակի 7-րդ մասի տիրակալին դիվանագիտական սուրհանդակից... Տիրակալն ինձ արձակելիս ասաց, որ ինքը շատ գոհ է, որ ինձ հետ մնաց երես առ երես... Իսկ ես հոգեպես ուրախ եմ, որ բացի ճշմարտությունից՝ ոչ մի ավելորդ բան դուրս չպրծավ ինձանից. հոգու սովորական վիճակի պարագայում ինձ հետ դա այլ կերպ չէր էլ կարող լինել...»⁹: **Կարծում ենք՝ ավելի իրատեսական կարելի է համարել հենց այս նամակը:**

Ժամանակակիցները նշում են նաև, որ Ա. Գրիբոյեդովը կանխատեսում էր իր մոտալուտ վախճանը Պարսկաստանում¹⁰: Հետաքրքիր է

5 Գրիբոևов А.С., Сочинения, т. 2, 1971, էջ 324 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. նոյեմբերի վերջի նամակը Ֆ. Բուլգարինին):
6 Նույն տեղում՝ էջ 331:
7 Нечкина М.В., Гривоедов и декабристы, 1977, էջ 608:
8 Нерсисян М.Г., Декабристы в Армении, Ереван, 1975, с. 146.
9 Попова О.И., Гривоедов дипломат, էջ 111-112 (հղում է կատարում «Дела и дни» հանդեսի՝ 1921թ. №2-ում հրատարակված Ա. Գրիբոյեդովի մի վկայությանը):
10 Գրիբоедов. Его жизнь и гибель..., էջ 46 (Ա. Գրիբոյեդովը նշում է, որ իր անձնական թշնամի Ալլահ-Յար խանը խաղաղություն չի նվիրի), էջ 46 (իր վախճանի մասին գրում է Ա. Շառդրին), էջ 22 (Ֆ. Բուլգարինին գրում է, որ Պարսկաստանում իր գերեզմանն է, և այլևս չի տեսնի Ռուսաստանը), տես նաև Գալյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, էջ 47, էջ 206:

1 Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, էջ 47, աշխ., էջ 158-159, տես նաև՝ Грибоедов. Его жизнь и гибель..., էջ 47, աշխ., էջ 45 (Սու. Բեգիլիի հուշերը):
2 ПСЗРИ. Собрание второе, с 12 декабря 1825г. по декабрь 1881г., т. III (1828), էջ 4, մոդ., փաստ. 1994, էջ 505, 1994-ի հավելված, էջ 178, տես նաև՝ Балаев Б.И., "Кровь на алмазе" Шах", էջ 85 (Ա. Գրիբոյեդովի դեսպան նշանակվելու ամսաթիվը Բ. Բալայանը նշում է 1828թ. ապրիլի 15-ի թվագրությամբ, սակայն և՛ Սենատի կայսերական հրամանագրում, և՛ Ի. Պասկևիչին ուղղված արտոգործնախարարության ամսական գործերի բաժանմունքի կառավարիչ Բոտրֆինիկինի՝ նույն թվականի մայիսի 8-ի հաղորդագրության մեջ նրա նշանակման ամսաթիվն ապրիլի 25-ն է (տես՝ АКАК, т. VII, փաստ. 591), էջ 622): Վկայակոչելով Կ. Նեսելրոդի նամակն Ի. Պասկևիչին՝ Բ. Բալայանն իր նշված աշխատության էջ 85-ի №1 ծանոթության մեջ հղում է կատարում АКАК, т. VII, փաստ. 591-ին, սակայն սովալ գրությունը ոչ թե Կ. Նեսելրոդի, այլ Ի. Պասկևիչին ուղղված Կ. Բոտրֆինիկինի վերոհիշյալ հաղորդագրությունն է, որտեղ զետեղված է նաև "Инструкция, данная полномочному министру при Персидскомъ дворе, с. с. Грибоедову, 1-го мая 1828, №791" փաստաթուղթը (էջ 622-624), տես նաև՝ Bournoatian George, The Khanate of Erevan under Qajar Rule. 1795-1828, Mazda Publishers, California and New York, 1992, 355 p. (նշում է, որ շահավան արքունիքին թուրքմենչայի պայմանագրի հոդվածները կատարել տալու համար ռուսական կառավարությունը Թեհրան է ուղարկում Ա. Գրիբոյեդովի գլխավորած ռուսական դեսպանական առաքելությունը):
3 Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1977, էջ 47, աշխ., էջ 609:
4 "Воспоминания Бестужевых", էջ 47, աշխ., էջ 363, տես նաև՝ Шадури В., "Грибоедов и грузинская культура", էջ 47, աշխ., էջ 10 (նուտ հեղինակի՝ Կովկաս արքայազն զեկաբրիատները խմբեր էին ստեղծում՝ իրար հետ շփվելու համար: Սակայն նշենք, որ փաստացի տեղեկություններ չկան Կրասնատում դեկաբրիստական նորաստեղծ խմբակների գոյության և դրանց հետ Ա. Գրիբոյեդովի կապերի մասին: Քսեյի որ Պ. Բեստուովը չի նշում, թե կոնկրետ ինչպե՞ս է կապեղ Կովկաս արքայազն զեկաբրիատների ցուցաբերած Ա. Գրիբոյեդովի օգնությունը, և այդ մասին չեն նշում նաև այլ աղբյուրներ ու ժամանակակիցներ, ուստի արտամարտական է ընդունել, որ Ա. Գրիբոյեդովն այնքան էլ չի ձգտել հարաբերվել բոլոր արքայազների հետ և շփվել է միայն իր երեք ծանոթ-բարեկամների (Մ. Պուշչին, Ն. Օրբիցկու, Դ. Դավիդովի, Ե. Ալայնովի և այլոց) հետ):

Պարսկաստան մեկնելուց առաջ Ա. Գրիբոյեդովի հետ ռուս գրող Ա.Ա. Պուշկինի՝ 1828թ. տեղի ունեցած ուշագրավ վերջին մի զրույցի մասին հիշատակությունը, որը պատշաճ ուշադրության չի արժանացել: **Իր տխուր և տարօրինակ կանխագագումներն այդ ժամանակ Ա. Գրիբոյեդովը բացատրել է Պարսկաստանի ծեր շահի մահվանից հետո նրա յոթանասուն որդիների միջև սպասվող արյունահեղ պայքարի հանգամանքներով, այսինքն՝ Ա. Գրիբոյեդովն իր մտալուտ վախճանի կանխագագումը կապել է այդ երկրում հնարավոր գահակալական կռիվների հետ: «Բայց ծեր շահը, գրում է Ա. Պուշկինը, դեռ ողջ է, իսկ Գրիբոյեդովի մարգարեական խոսքերն իրականացան. նա զոհվեց պարսիկների դաշույններից»¹¹: Ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Ա. Գրիբոյեդովը պարզապես վստահ չէր, որ Պարսկաստանի հետ նոր պայմանագիրը երկար կպահպանվի, և ինքն էլ ողջ կմնա գահակալական կռիվների ժամանակ:**

Հայ ժողովրդի հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքի հարցերը ներկայացնելուց առաջ հիշատակենք, թե ինչ ակնկալիքներ ունեին հայերը ռուսներից և ինչ ստացան: Հայերն ակնկալում էին, որ «վերականգնված Հայկական թագավորության» գլուխ կկանգնեք ռուս միապետը, ինչը ռուսական կայսրության մեջ հայերի համար կարող էր որոշ արտոնություններ ունենալու հնարավորություն տալ: Նման մտայնության համար որպես **փաստարկ է համարվել 1827-1828թթ. Արսեն Թումանյանի կողմից կազմված մի վավերագիր¹², որը, ինչպես նշվել է, դարձյալ անհիմն վերագրվել է Ա. Գրիբոյեդովի գրչին: Դրանով փորձ է արվել ցույց տալու նաև, թե վերջինս որքան էր մտահոգված Այսրկովկասի և, մասնավորապես, հայերի ճակատագրով¹³: Հետագոտող Վ. Պարսամյանը, հերքելով վերոհիշյալ վավերագրի շուրջ արված պնդումը, գրում է. «Մինչև օրս հայտնի չէ որևէ փաստ, որի հիման վրա կարելի լիներ պնդել, թե Ա. Գրիբոյեդովն իրոք, հակառակ կառավարության, հակառակ Ի. Պասկևիչի, կողմնակից է եղել Հայաստանում անկախ պետական իշխանության հաստատելուն»¹⁴:**

11 Пушкин А.С., "Путешествие въ Арзрум во время похода 1829 года", նշվ. աշխ., էջ 47 (հարկ է նշել, որ ուսումնասիրողները միշտ մեջ են բերում վերոհիշյալից միայն վերջին երկու տարր):
 12 Туманян Арсень, "Некоторые предположения о Грузии и сопредельных ей областях", նշվ. աշխ., էջ 13-15, տես նաև՝ Дилоян В.А., "Присоединение Восточной Армении к России и его историческое значение", Сборник статей, նշվ. աշխ., էջ 13:
 13 Հախումյան Տիգրան, Ալեքսանդր Մերգելսիչ Գրիբոյեդով, կյանքն ու ստեղծագործությունը, նշվ. աշխ., էջ 95-96:
 14 Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, նշվ. աշխ., էջ 139-145 (ապացուցում է, որ գրության հեղինակը Խ. Լազարյանն է, որն Ա. Բենկենդորֆի միջոցով այն հասցրել է կառավարությանը):

Անկախության վերաբերյալ հայերի ակնկալիքների մասին է վկայում **"Замиска об армянах" («Գրություն հայերի մասին» – Վ.Ա.) փաստաթուղթը¹⁵, որում անդրադարձ կա հայոց անցյալին, և առաջարկվում է հայոց թագավորի տիտղոսը մտցնել ռուսաց կայսեր տիտղոսացանկ: Հարյուր տարուց ավել հայերին տված բազում խոստումներից ռուսական պետությունը միանգամից հրաժարվել չէր կարող, ու, սկզբնական շրջանում, ռուսական իշխանությունները որոշում են գնալ որոշակի զիջումների, և նորանվաճ տարածքները կառավարելու գործում ներգրավվում են նաև հայեր: Երևանը գրավելուց հետո ստեղծվում է Ժամանակավոր վարչություն¹⁶: Թուրքմենչայի պայմանագրով ստեղծվում է Պարսկաստանից հայերի ներգաղթը կազմակերպելու հնարավորություն, իսկ 1828թ. մարտի 21-ին կայսր Նիկոլայ I-ը ստորագրում է Հայկական մարզ կազմակերպելու մասին հրամանագիր: "Армянская область" («Հայկական մարզ» – Վ.Ա.) անվանումը ևս մտնելու էր կայսեր տիտղոսացանկ: Մրանից առաջ՝ 1828թ. հունվարի 25-ի հրամանագրով արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցիին ցուցաբերած հավատարմության և եռանդի համար պարգևատրվել էր «Ալեքսանդր Նևսկու» շքանշանով¹⁷: Զխորանալով հայերի ներգաղթի վերաբերյալ արդեն հայտնի փաստերի¹⁸ մեջ՝ ներկայացնենք այդ գործընթացին վերաբերող**

15 Туян В.Г., "Материалы об организации управления Восточной Армении 1827-1828гг.", док. №183, 1-ое июня 1827, "Об образовании армянской государственности в составе России", ИФЖ, Ереван, 1986, 2(113), с. 209-210 (այս գրությունը ևս կազմել են Լազարյանները՝ Ա. Բենկենդորֆի միջոցով կայսերը ներկայացնելու համար, ուստի ստացվում է, որ ժանդարմների կորպուսի պետ Բենկենդորֆն ավելի լուրջ քայլեր է արել հայոց պետականության վերականգնման համար, քան Ա. Գրիբոյեդովը):
 16 Присоединение Восточной Армении к России, Материалы по истории армянского народа, Кн. семнадцатая, Сборник статей, том II (1814-1830), նշվ. ժող., փաստ. 223, էջ 402-403 (1827թ. հոկտեմբերի 6-ին Ի. Պասկևիչի հաստատած "Общие правила для управления Ереванской областью" փաստաթուղթը), փաստ. 235, էջ 421-426 (1827թ. դեկտեմբերի 2-ի "О правилах которые должны служить основанием при управлении Ереванской провинцией и проч."), տես նաև՝ Туян В., "Материалы правительственного комитета о включении Ереванского ханства в состав Российской империи", "Вестник общественных наук", ИФЖ, Ереван, 1985, 2(506), февраль, с. 80-90.
 17 Акты, относящиеся до заключения мира съ Персией, Санктпетербургъ, 1828 года, с. 8-9, տես նաև՝ Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении, 2(51), նշվ. աշխ., փաստ. 148, էջ 208-209, Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. II, նշվ. ժող., փաստ. 242, էջ 443:
 18 Русско-армянское сотрудничество..., Вестник архивов Армении 2(51), նշվ. ժող., փաստ. №156, էջ 217, №163, էջ 226, №170, էջ 232-234, №173, էջ 236-237, №175, էջ 238-239, №177, էջ 240, №180, էջ 241-242, №181, էջ 242-243, №182, էջ 243-244, Присоединение Восточной Армении к России, т. II, նշվ. ժող., փաստ. №249, էջ 456-457, №253, էջ 460-461, №255, էջ 463-466, №256, էջ 466-468, №257, էջ 468, №264, էջ 474-475, №270, էջ 479-480, №275, էջ 486-487, №277, էջ 487-488, №279, էջ 491-493, №286, էջ 496-498, տես նաև՝ Парсаян В.А., "А.С. Грибоедов и переселение армян", նշվ. աշխ., էջ 136-146, Գրիգորյան Ջ.Տ., Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը..., նշվ. աշխ., էջ 17-21, Пашуто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова", նշվ. աշխ., էջ 140-143, Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 197-199, Тавакалян Н.А., "Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России", ИФЖ, Ереван, 1978, 3(82), с. 26-40.

ռուսական իշխանությունների քաղաքականությունը, և դրանում՝ Ա. Գրիբոյեդովի մասնակցության խնդիրը:

Դեռևս XVIII դարի II կեսին վրաց Հերակլ II թագավորն Արևելյան Հայաստանից տասնյակ հազարավոր հայերի բռնի կերպով Վրաստանում վերաբնակեցնելու քաղաքականություն էր վարում¹⁹: Նույն քաղաքականությունն են շարունակում վարել նաև ռուսական իշխանությունները Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, մասնավորապես՝ ռուս-պարսկական 1804-1813թթ. պատերազմի առաջին փուլում, երբ **գեներալ Յիգիանովը բռնությամբ մեծ թվով հայեր է վերաբնակեցնում Արևելյան Վրաստանում**: Հետագայում **կայսր Ալեքսանդր I-ը 1819թ. հոկտեմբերի 22-ին հաստատում է “О принятии помещиками въ Грузіи выходящими изъ за границы поселенцевъ и о водвореніи ихъ на собственныя землиахъ” («Արտասահմանից դուրս ելած վերաբնակեցվածներին Վրաստանում կալվածատերերի կողմից սեփական հողերում ընդունելու մասին» - Վ.Ս.) կանոնադրությունը²⁰**, որում խոսվում է արտասահմանից վերաբնակեցվածներին վրացի կալվածատերերի (հողված 1) և կայսերական հողերում (հողված 2) տիրույթներ հասկացնելու, կայսերական հողերում՝ 6, իսկ կալվածատիրական հողերում՝ 3 տարի հարկերից ազատելու (հողված 3), վերաբնակեցվածների անձնական կախումը կալվածատերերից արգելելու (հողված 4), հարկերի և պարտույթների վերաբերյալ փոխհամաձայնեցվածության, բնամթերքով կամ գուժարով հարկերի վճարման համաձայնության մասին (հողված 5; 6):

19 Չորակյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺՀ դարի երկրորդ կեսին, նշվ. աշխ., էջ 305, նույնի “Демографические перемещения и топонимия...”, նշվ. հողված, էջ 188-189 (հեղինակը փաստում է, որ Արարատյան դաշտի հայ բնակչության թվաքանակի նվազումը սկսվել է դեռևս վրաց արքա Հերակլ II-ի օրոք՝ 1779թ. դեպի Երևանի խանություն կատարած արշավանքի ժամանակ: Գրա նպատակն էր հայ բնակչությանը բռնի կերպով Վրաստանում վերաբնակեցնելու ճանապարհով թուլացնել Երևանի խանությունը): Մեր կարծիքով հիշյալ գործընթացի պատմությունը պետք է տանել սելջուկ-թյուրքերի, մոնղոլների, Լենկ-թեմուրի արշավանքների, ապա թուրք-պարսկական պատերազմների ժամանակները (Շահ Աբաս), որոնց հետևանքով հայության զգալի գանգվածներ բռնագաղթեցվել կամ վաճառվել են ստրկության կամ էլ ստիպված են եղել տարագրվել օտար ափեր: Փոխարենը, Հայկական լեռնաշխարհի, այդ թվում նաև Արցախ են թափանցել թյուրքական ու մահմեդական գաղազան վաչկատուն հորդաներ, ինչի հետևանքով փոխվել է և՛ ժողովրդագրական, և՛ տեղակալական պատկերը - Վ.Ս.: Նշվ. հողված, էջ 189 (վկայակոչելով Ա. Բերժեի խմբագրությամբ հրատարակված АКАК, հ. I, 1866թ., փաստ. 118-ը՝ Պ. Չորակյանը ներկայացնում է ստատու խորհրդակցան Արևելյան Այս վկայությունը, որ Արաքսի երկայնքով ընկած ողջ մարզը համարյա ամբողջությամբ բնակեցված էր հայերով), էջ 190 (նույն АКАК՝ 1868, հ. II-ի փաստ. 276-ում փաստվում է գեներալ Յիգիանովի վկայությունն առ այն, որ 1795թ. դրությամբ Ղարաբաղում կար 60.000 հայ ընտանիք, որոնց թիվը խստագույն կրճատվել է 1797թ. դրությամբ՝ Աղա Մուսահամդ շահի ավերիչ արշավանքներից հետո, համաձայնակների և գանգվածային արտագաղթի հետևանքով): Մեր կողմից հավելենք, որ միջինը 5 անձով հաշվելու դեպքում, դա կկազմեր 300.000 մարդ - Վ.Ս.:

20 ՀԱԱ, Գյուտ Աղանյանի արխիվ, ֆոնդ 332, ցուց. I, գործ 497, թերթ 4-5 (1819թ. հոկտեմբերի 22-ի կանոնադրությունը ռուսերեն), տես նաև՝ ПСЗРП, Собрание первое, с 1649 года по 12 декабря 1825 года, 1830, նշվ. ժող., հ. XXXVI (1819), փաստ. 27.947, էջ 557-558:

Հողատիրոջ մահվան, հողի վաճառքի կամ նվիրատվության դեպքում նոր տերը պարտավոր էր պահպանել վերաբնակեցվածի հետ նախկինում հաստատված պայմանավորվածությունները (հողված 9): Կալվածատիրոջից փախած վերաբնակեցվածների հողերը տեղաբնիկներին կարող էին տրվել միայն այն դեպքում, եթե փախածները 12 տարի մնային արտասահմանում (հողված 12): **Հասկապես կարևոր էր այդ կանոնադրության 13-րդ հոդվածը, ըստ որի՝ Վրաստանի հետ սահմանակից երկրների հետ պատերազմի դեպքում վրաց կալվածատերերին թույլ էր արվում այդ երկրներից դուրս բերել և իրենց հողերում վերաբնակեցնել այդ երկրների հպատակներին այն հիմունքներով, ինչ կամավոր վերաբնակեցվածների դեպքում: Կարծում ենք՝ հասկանալի է, որ սահմանակից երկրներն Օսմանյան Թուրքիան և Ղաջարական Պարսկաստանն էին, իսկ այդ երկրների հպատակները հայ բնակչությունն էր:**

Վրաստանում հայերի բռնի վերաբնակեցման հետևանքով Արևելյան Հայաստանի, մասնավորապես Ղարաբաղի խանության (Արցախի) հայ բնակչության թիվը դարձյալ կտրուկ նվազում է մահմեդական ցեղերի բնակչության թվի համեմատությամբ, ինչը **զգալի անհարմարություններ է պատճառում ռուսներին նաև ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում:**

Ալեքսանդր I-ի վերոհիշյալ կանոնադրությունը կիրառում է գտնում նաև այդ պատերազմից հետո՝ **հայերի ներգաղթի և մահմեդական քոչվոր ցեղերին հպատակեցնելու ժամանակ**: «Պարսկաստանի հետ իրենց սահմանները հուսալիորեն պաշտպանելու, ասիական ցեղերին սանձելու, դավանանքով և ջանասիրությամբ իրենց (ռուսներին - Վ.Ս.) ամենևին էլ ոչ օտար հայերի հետ մերձենալու, ռուսական զորքերի մահացությունը պակասեցնելու... մալոռուսական աղքատ կազակների բարեկեցությունն ապահովելու, Մալոռուսիան «ավելորդ ազգաբնակչությունից» (“излишняго народонаселения”) ազատելու նպատակով» 1827թ. ապրիլի 27-ին ռուսական կառավարության կողմից հետևագործի գեներալ կոմս Տոլստոյի գլխավորությամբ կազմակերպվում է հատուկ կոմիտե, որը 80.000 մալոռուս կազակներ պետք է վերաբնակեցնեք Այսրկովկասի նորանվաճ տարածքներում²¹: **Նաև սրանով կարելի է բացատրել այն**

21 АКАК, հ. VII, փաստ. 274, էջ 319-322 (կոմս Տոլստոյի՝ 1827թ. մայիսի 6-ի գրությունը Ի. Պասկևիչին): Ուսումնասիրող Վ. Դիլյանս «Արևելյան Հայաստանը XIXդ. առաջին երեսնամյակին...» աշխատության մեջ վերաբերյալ փաստաթուղթը նշում է որպես А274, իսկ կոմիտեի կազմավորման մասին կայսերական հրամանագրի ամսաթիվը թյուրիմացաբար եղում է ոչ թե ապրիլի 27-ի, այլ ապրիլի 17-ի թվագրությամբ - Վ.Ս., փաստ. 276, էջ 322-324 (Ի. Պասկևիչի՝ 1827թ. նոյեմբերի 4-ի գեկուցադիրը կոմս Ի. Դիլյանսին, որում մալոռուսների վերաբնակեցման առաջարկում էր իրականացնել փոլ առ փոլ, սկզբում մեկ, ապա՝ այլ գավառներում, տեղանքի և կլիմայի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո):

հանգամանքը, որ նախքան Գեհկարխանի բանակցությունները ռուս-պարսկական պայմանագրի նախնական տարբերակում նախատեսված չի եղել պարսկահայերի վերաբնակեցումն Արևելյան Հայաստանում²²: Կազակների վերաբնակեցման ծրագիրը, սակայն, չի իրականանում և ռուսական կառավարությունը գործողության մեջ է դնում հայ գործիչների՝ պարսկահայերի ներգաղթ կազմակերպելու առաջարկներն ու նախագծերը և այդ նպատակով ստեղծում է գերազանցապես հայ գործիչներից կազմված Ներգաղթի կոմիտե, որը գլխավորում է Ի. Պասկևիչի կողմից Ռուսաստանից հրավիրված Եղիազար Լազարյանը:

Ներգաղթի գործի անուրանալի ջատագույներից էր վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին, ում ազգանպաստ գործունեությունը նսեմացնելու համար ռուսական իշխանությունները երբեմն օգտագործում էին որոշ հայ հոգևորականների²³: Ներսես Աշտարակեցու հայրենասիրությունը, Հայաստանն ազատագրված ու հայերով վերաբնակեցված և հայկական գորքերով պաշտպանված տեսնելու բուռն տենչանքն ու գործունեությունը կասկածից դուրս են²⁴: Հայերն

իրենց ռուսամետ կողմնորոշմամբ ապացուցել էին նաև միամիտ հավատարմությունը հավատակից ռուսների նկատմամբ և ռուս-պարսկական ու ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուսական բանակին ցուցաբերել էին բազմակողմանի, այդ թվում նաև զինական օգնություն: Մահմեդական բնակչության ուխտադրժությանը ռուսները բազմիցս էին առնչվել²⁵: Վրացիներն էլ միտված էին վրացական թագավորությունը վերականգնելու ակնկալիքներին²⁶: Ռուսական իշխանությունները ճարպկորեն շահարկում են հայոց անկեղծ նվիրվածությունն ու հավատարմությունը²⁷: Հայերին սիրաշահելու վերաբերյալ վրկայությունն է Ի. Պասկևիչի՝ թարգմանությամբ պահպանված հետևյալ գրությունը. «...Ոչինչ երկմտիմ նմանապես թե երևելի միաբանություն հոգևորական անձանց Լջմիածնի վանացի թախանձեալ յինչ յինչ օրինակաց այնքան բազմաթիւ ժողովրդականաց չունիցին զբարօրութիւն ընդ հեզ և իմաստուն կառավարութեամբ Մեծի Արքայիս մերոյ... Այլ ինձ ախորժելի է հավատացուցանել ձեզ... ինչք ձեր ի վանացի եղիցի անմըծնայի յաղագս

22 АКАК, h. VII, ф.и.с. 502, л. 540 (Լուսն Լեւոնյորդէի՝ 1827թ. ապրիլի 19-ի շրջաբերական իսկական պետական խորհրդական Ա. Օբրեկովիկն, որում խոսվում է Պարսկաստանի հետ հաշտության և անտրակայն պայմանագրի նախագծերի մասին, որոնցում առաջ էին բաշխված միայն սահմանափակ 40 միլ ռուբլի ռազմատարների հարցերը), տես նաև՝ Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Гривбеодова, Եզվ. աշխ., էջ 124, հմմտ.՝ Балаев Б.П., «Дипломатическая история русско-персидских войн...», Եզվ. աշխ., էջ 180 (Բ. Բալաևը չի բացատրում, որ Կարաբաղի խնդիրն Ա. Գրիբոեդովի պայարատան պայմանագրի նախնական տեսքում հնչվել էր անտեղի հայ գործիչների, մասնավորապես Ներսես Աշտարակեցու՝ «Записка об армянах для включения при переговорах с миром» և «О переселении армян из персидских владений в провинцию, принадлежащую России» գրությունները, որի վերաբերյալ հղում է կատարում АКАК, h. VII, ф.и.с. 546, (էջ 588-589), սակայն այդ փաստաթուղթը նախ թվագրված է 1828թ. հունվարի 25-ով, ապա Ի. Պասկևիչի կողմից պատասխան է ուղղված Ներսես Աշտարակեցու՝ 1827թ. դեկտեմբերի 27-ի՝ պարսկակաների գաղթը դեպի ռուսական տիրույթներ թույլատրելու խնդրանքին, և բոլորովին կապ չունի Կարաբաղի բանակցությունների հետ, որոնք ավարտվել են 1827թ. հուլիսի վերջերին):

23 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, Ներսես Աշտարակեցու նամակները, թղթ. 164, վավ. 1024 (06.07.1817թ., Ներսեսը նախարար Գոնիվիկին գրում է իր կեմ ապօրինի համախոսական կազմողների գործի ընտրության մասին), վավ. 1326 (21.03.1818թ. Աղայր Միրզա Չևորգյանին Թեհրան է հղում իր դեմ հարուցված հակառակության խաթմահարման մասին գրություն), թղթ. 167ա, վավ. 33 (Ալ. Խաղաբաշյանին գրում է իր և Պասկևիչի միջև եղած հարբանակների և դավաճան Սերովի վարդապետի և նրա գործակալների ջանքերով ու հույն Վանազալիի օգնությամբ այդ հարբանակությունների վատացման մասին բացատրական), վավ. 90 (29.04.1829թ. Եփրոն կարողիկոսին մեղադրում է Սերովի նման քառ և ստոր մեկին Տաճկաստանում գործող բանակում նշանակելու համար, նշում է դրա հետևանքները, Սերովիի դրդումով իր դեմ Պասկևիչի լարվելու մասին, ներկայացնում է Սերովիի նամակների պատասխանը ու կործանարար գործունեությունը, մանրամասն տալիս է Սերովիի «Ճուգակ ծառայութեանց»-ը), վավ. 98 (05.06.1829թ., Խ. Լազարյանին գրում է Սերովիի անվայել գործերով ժողովրդին զզվեցնելու մասին), Արխիվ Լազարյանների, թղթ. 107, գործ 44, չիրապարակված վավ. 370 (Խ. Լազարյանի անթվական նամակը Ներսես արքեպիսկոպոսին՝ Մոսկվայի քահանայների գծուրացու, դրա համար Ավետիք քահանա Արարատյանցի՝ Լջվիսիին վերադարձնելու մասին և դրան խնայելով գրում է հայ հոգևորականության տեղության, սեպհառության, կառավարչության փաստերի մասին. «...Յայտնի է համբռն ազգին հայոց և չեն յունեթե ծածկեալք կիրք արծարսարությունս հոգևորականաց մերոց, որք վասն սրան արծարով ձեռնադրեն սարկավազն և քան արծարով զքահանայս ասան, որ հազիվ ուրեն զյտե գայր ու բեն...»):

24 Լուսն տեղում՝ թղթ. 166, վավ. 932 (24.01.1828թ., Հ. Ալամդարյանին նայտնում է պարսկահայերին գաղթել հորդորելու համար հրավիրակներ ուղարկելու մասին), վավ. 949 (18.12.1827թ. Լջվիսիին կառավարչությանը հորդորում է գաղթը կազմակերպել նախքան Պարսկաստանից ռուսերի հեռանումը), վավ. 1016 (05.03.1828թ. Սամաասից Լջվիսիին է գրում Ստեփանոս Եսիվկուրոս Ենոքյանը), վավ. 1030 (16.01.1828թ. Բարսեղ Եսիվկուրյանին Ներսեսը հայտնում է Պարսկաստանից դեպի Արարատյան երկիր կազմակերպվող գաղթի մասին), չիրապարակված վավ. 1061 (20.02.1828թ. Կարապետ Ավագյանին ցավ է հայտնում, որ ժողովուրդը, փոխանակ միխրարների, ներդրություն է կրում իր հոգևորականներից, առաջարկում է արագացնել գաղթի կազմակերպումը՝ հայտարարելով, որ ռուսական տիրապետության տակ հայերը կվաղվեն ոչ միայն սպառություն, այլև ազատ կլինեն հոգևորականների կամայականություններից), վավ. 1071 (25.02.1828թ. Առղայստանյանի արարության ուղղված Ներսեսի կողմ Պարսկաստանի գերությունից հրաժարվելու և Ռուսաստանում գաղթելու մասին):

25 Կարաբաղի Մեհտի-Կուլի խանի փախուստը և կրկին ռուսահպատակությունը ընդունելը, 1826թ. պատերազմի սկզբում պարսկական զորքերի սկզբնական հաջողությունները, որոնք կապված էին ռուսահպատակ մահմեդական խաների և բնակչության պարսկամետ դիրքորոշման և գորակցության հետ, տես նաև՝ ՀԱԱ, Հայկական մարզային վարչության արխիվ, ֆոնդ 90, ցուց. 1, գործ 18, թերթ 2 (22.10.1828թ. պորուչիկ Անտոնախիմկո զեկույցը Հայկական մարզային վարչությանը Բարչալուի մտախից Մամադ Չաֆար և Լիբեռ Խամայիլ խաների՝ իրենց եեծելազորով, ռուսական ծառայության քողի տակ Շահաղդեի մոտ փախչելու մասին), թերթ 17, 18, 25-26, 28-29 (սրանցում ես խոսվում է փախած խաների, նրանց ունեցվածքի ստորինման և նրանց ընտանիքներին դեպի Պարսկաստան գաղթելու և չխոչընդոտելու մասին):

26 Маркова О.П., Восстание в Кахетии в 1812г., Изд-во АН СССР, Москва, 1951, 332 с., տես նաև ՀԱԱ, Արխիվ Լազարյանների, ֆոնդ 42, ցուց. 1, գործ 17, չիրապարակված թղթ 3 (գնդապետ Հակոբ Դավթի Լազարյանը վկայում է 1812թ. վրացիների կողմից Ռուսաստանի հանդեպ ուխտադրժության դավաճանություն մասին: Վրացիները շրջապատում են Թելավի ու Սղեախը: Ռուսական փորձաքիվ կայաքարք փակվում է միջնաբերդում՝ առանց հացի ու ջրի: Միայն հայերն են եղել, որ գիշերով սողալով հասել են պարիսպներին և պարանով հաց ու ջուր են հասցրել ռուսներին: Կասկածելով հայերին, որ օգնություն են հասցնում ռուսներին՝ վրացիները դիտորդներ են կարգում: Հետագայում, հավատարով վրացի իշխանների Լրդմանը, ռուս զինվորները, պաշտոնյաները և պարենու անձնատուր են լինում, հանձնում են միջնաբերդը, բայց ենթարկվում են բարբարոսական ձեռնադրույթի: Նրանցից ոմանք փրկվում են՝ միայն մեծահոգի և բարի հայերի տներում պատսպարվելով): Ի դեպ, Ա. Գրիբոեդովն իր «Հանապարհորդական նոթեթ»-ում այս իրադարձության մասին գրելիս ոչ մի խոսքով չի հիշատակում հայերի օգնության և ռուսներին փրկելու մասին (Գրիբոեդов А.С., Сочинения. 1971, т. 2, Եզվ. աշխ., «Путевые записки», էջ 121):

27 ՀԱԱ, Գյուտ Աղանյանի արխիվ, ֆոնդ 332, ցուց. 1, գործ 489, թերթ 1-2 (Հ. Ալամդարյանի՝ 1827թ. մայիսի 15-ի ողջույնի ուղերթը հայկական կամավորական գնդին: Քրիստոսասուն զինվորությանը դիմում է՝ ասելով, որ լցվել է Աստծո ցասումի բաժանը, և մինչև օրս հայերին պատժող Աստծո աջն այժմ սրբում է նրանց արցունքները և բացում հարուստ ողորմության դռները Ամենաբարեպաշտ, Ամենօգոստափառ մեծագույն Օծյալ միապետի միջոցով («...Դարձուցանե գուրք մեր յուրախալութեան, գերծա ՚ի շավիլս յուր: Մթանչելի է և Օգոստափառ Օծյալ նորա խաղաղութան և միխթար որբացելոյն Հայաստանի...: Բարութիւն Աստուծոյ և Օծելոյն Նորա ո՛չ շատ համարի դարձուցանել մեզ գլորուստս մեր...»): Այնուհետև գրում է, որ Աստվածն ու իր Օծյալը չեն բավարարվում միայն վերբերք բուժելով, այլ անիմաստի ճանապարհով Հայաստանի կեղեքված որդիներին անտան ևն դեպի դարերով ավերակված ամենասիրելի հայրենիքի վերականգնում: Նա կոչ է անում հայ կամավորներին երդվել Աստծո, խաչի և սր. Ավետարանի առաջ և հավատարիմ ծառայել կայսր Նիկոլայ Պավլովիչին):

խրաբանչիրոց»²⁸:

Արևելյան Հայաստան ներգաղթելու գաղափարին պարսկահայության մեծ մասն, իրոք, ցուցաբերում է դրական վերաբերմունք, **սակայն եղել են տարակուսանքի, երկմտանքի, թերահավատության և անվստահության բազմաթիվ դեպքեր**, և հայ հոգևոր-հասարակական գործիչները ստիպված էին քարոզչական մեծ աշխատանք տանել պարսկահայության շրջանում՝ բացատրելով ռուսական տիրապետության տակ անցնելու օգուտներն ու առավելությունները²⁹:

Բացի հարուցած խոչընդոտներից՝ անգլիացիները և իրենց հերթին էլ Պարսկաստանի իշխանությունները հայերի և նեստորականների շրջանում փորձում են մեծ արտոնությունների և ազգային իղձերի իրականացման շուրջ հավաստիացումներ անել³⁰: Պարսկահայերի շըր-

ջանում ներգաղթին թերահավատորեն էին վերաբերվում ունևոր հայերը³¹, մինչդեռ ռուսական իշխանություններին ձեռնառու էր հենց այդ խավի ներկայացուցիչների ներգաղթը, որովհետև այս պարագայում կրթեթևանար պետության հոգսը, և զանազանը օգուտներ կունենար³²: Բացի թերահավատությունից՝ ներգաղթի հապճեպ և անկազմակերպ լինելու հետևանքով ներգաղթյալների շրջանում հանդիպում են նաև հիասթափության և մտափոխության դեպքեր³³: Հիմնականում Արևելյան Հայաստան են գաղթում չքավոր կամ միջակ ունեցվածքի տեր ընտանիքներ:

Ռուսական իշխանությունները չէին սպասում ներգաղթյալների այդքան մեծ քանակություն և դրա հետ կապված՝ մեծ ծախսեր ունենալուն (պարսկահայերի գաղթին հետևում է արևմտահայերի գաղթը): Դրավկայությունն է Ներսես Աշտարակեցուն ուղղված Բ. Պասկևիչի հանդիմանական մի նամակը, որում դժգոհություն է հայտնվում **անսպասելի ծախսերի կապակցությամբ, և զենքերալը հույս է հայտնում, որ վիրահայոց թեմակալը միջոցներ կգտնի և իր ներգաղթյալ «ցեղակիցներին ու հոտին» (“единоплеменниковъ и пастве”) չի թողնի մեռնել սովից**³⁴:

Բ. Պասկևիչը դժգոհում է նաև Ե. Լազարյանի գործունեությունից և որպես նրան մեղադրելու առիթ օգտագործում է այն հանգամանքը, որ ներգաղթի կազմակերպման գործում նա «կարևորել և ի ցույց է դրել» իր տոհմի արժանիքների մասին հավաստիացումները և այն, թե իբր պարսկահայերի շրջանում իր տոհմի հանդեպ ունեցած մեծ հավատի

28 Նույն տեղում՝ ֆոնդ 332, ցուց. 1, գործ 749, թերթ 1 (ռուսերենից թարգմանություն, Բ. Պասկևիչի՝ 1828թ. նոյեմբերի 9-ի պատասխան գրությունը Էջմիածնի հոգևորականներին), տես նաև Մատենադարան. Արխիվ Լազարյանների, թղթ. 111, գործ 79, վավ. 7 (4 էջ, ռուսերեն. Չեռնիշևի՝ 1829թ. փետրվարի 12-ի նամակը, որում հայտնում է, որ կայսրը հավատացած է Բ. Պասկևիչի դեմ Ներսեսի բողոքի անհիմն լինելու մեջ և միևնույն ժամանակ կայսեր անուսից նրան խնդրում է՝ զոնե առերես հարգանքով վերաբերվել հայ գործիչներին), թղթ. 111, գործ 36(32), վավ. 64 (ռուսերեն. Դ. Բլադովի՝ 1829թ. մարտի 12-ի նամակը, որում զովաբանում է Ներսեսին, հայտնում է Բեսարաբիայի թեմակալ նշանակվելու մասին և հույս հայտնում, որ այնտեղի հայերին նա կդատարարակի ռուսահայատակության ոգով):

29 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, չիրապարակված վավերագրեր՝ թղթ. 166, վավ. 1082 (03.03.1828թ. Երևանից Պավլոս խան Մատուրյանին ուղղված Ներսես Աշտարակեցու նամակը, որում պախարակում է գինվորությունից դասարթելու տրամադրությունը: Նա գրում է. «Տի որ է գուցե գինտրոբիան, ոչ կարել լինել և գինտրոբական կամ ազգային արտոնություն», վավ. 1084 (03.03.1828թ. Ներսեսը պախարակում է Նովիաննես ավագ քահանա Տեր-Նովակիյանին և Թադևոս Թովմայանին՝ դեպի Ռուսահայաստան գաղթին դեմ լինելու համար), վավ. 1083 (03.03.1828թ. Երևանի Աղադ-Միրզա Գորկիյանին ուղղված նամակում վնասակար է համարում հակազգաթի տրամադրությունը), վավ. 1086 (01.03.1828թ. Ներսես Աշտարակեցու նամակը Բարսեղ եպիսկոպոսին, որում պախարակում է գաղթել չցանկացողներին, որոնք ավելի բարձր են գնահատում իրենց կայրը, քան ազատությունը: Հայտնում է, որ կարգադրված է ձերբակալել Պարսկաստանում հակազգաթի տրամադրություններ քարոզող Բարայել եպիսկոպոսին և պահակների հսկողությամբ տեղափոխել Էջմիածին): Վերջինի մասին տես նաև՝ AKAK, h. VII, փաստ. 603, էջ 632 (1828թ. մայիսի 31-ին Եփրեմ կաթողիկոսին Բ. Պասկևիչը գրում է Ներսես Աշտարակեցու մարտի 17-ի նամակի մասին, որից տեղեկացվել էր Մամլատի վանքի եպիսկոպոս Բարայելի գաղտնի և բացահայտ միջոցներով ներգաղթը խաչընդոտելու մասին, նշում է նրա անբարո այլ արարքները ևս: Բ. Պասկևիչը կաթողիկոսին առաջարկում է ռուսների հանդեպ անբարեհաճ Բարայելին դատել և գրկել հոգևոր կոչումներից):

30 AKAK, h. VII, փաստ. 586, էջ 619-620 (գլխավորապես Լազարյանի՝ 1828թ. մայիսի 1-ի նամակն Բ. Պասկևիչին, որում խոսում է նեստորականների կողմից ռուսական իշխանություններից իրենց ամեն ընտանիքի համար 10 թուրան պահանջի և Աբբաս-Միրզայի կողմից սիրաշահելու նպատակով նրանց պատրիարքին նվերներ ուղարկելու և արտոնությունների խոստման մասին), փաստ. 570, էջ 608 (Ե. Լազարյանի՝ 1828թ. ապրիլի 2-ի գեկուցագիրն Բ. Պասկևիչին), տես նաև՝ Դիրյան Վ., Արևելյան Հայաստանը XIXդ. առաջին երեսնամյակին, Նշվ. աշխ., էջ 312-312 (ներկայացնում է 1829թ. Խ. Լազարյանի՝ անպատեբերի 27-ի և նոյեմբերի 1-ի նամակներն Ա. Բենկելտորֆին, որոնցում բողոք է արտահայտվում ռուսական իշխանությունների կողմից հայերի ճնշումների, հայաճանրների դեմ, և որինքան է բերում այն հանգամանքը, որ Պարսկաստանի իշխանությունները Նոր Ջուղայի և հարակից գավառի 5.000 հայ ընտանիքների վրա կառավարել են կարգել հայ Աստվածատուրիին, ով Անգլիայի վիսգոր բանկիրն ու զանազապահն էր և ուղղակի հաշվետու էր շահին: Նշվում է Նոր Ջուղայի օրինակով այլ վայրերում ևս անգլիացիների ազդեցության մասին և բացատրում է, որ ամենը կատարվում է ռուսական իշխանությունների հանդեպ հայերի վերաբերմունքի փոփոխության նպատակով):

31 AKAK, h. VII, փաստ. 572, էջ 610-611 (Բարուն Աշի՝ 1828թ. ապրիլի 7-ի գեկուցագիրը գեներալ Պանկրատին, որում վկայում է, որ Մակվի մահալի աղբատ հայերը լավ կյանքի հույսով են ցանկանում գաղթել, իսկ հարուստները՝ ոչ):

32 Նույն տեղում՝ փաստ. 586, էջ 619-620 (գլխավորապես Լազարյանի՝ 1828թ. մայիսի 1-ի նամակը Բ. Պասկևիչին, որում դարձյալ վնաս է Ուրմիայից 2.000 հայ ընտանիքների՝ Մավլատս հասնելու և հուսահատական վիճակի մասին: Հայտնում է նաև Հայկական մարզային վարչության՝ միջոցներ չունեցող հայերի ներգաղթն արգելելու պահանջի մասին, որը ծանր վիճակի մեջ է դրել և՛ իրեն և՛ նրանց, ովքեր ստիպված պետք է ետ դարձնեն իրենց ընտանիքները և ներթափանցվեն պարսիկների վրեժին: Ե. Լազարյանը խնդրում է հրամայել Մարզային վարչությանը, որ օգնեն ներգաղթյալներին խոստանալով, որ Ուրմիայի և Մավլատսի աշխատասեր ժողովուրդը լիովին հատուցելու է զանազան ծախսերը: Պայմանները փոփոխելու պայմանով նա նույնիսկ խնդրում է պարսկահայերին վերաբնակեցնել մահմեդական մասնավոր տնտեսություններում):

33 Նույն տեղում՝ փաստ. 573, էջ 611-613 (1828թ. ապրիլի 12-ի գեկուցագրում Ե. Լազարյանն Բ. Պասկևիչին տեղեկացնում է Երևանի և Նախիջևանի խանություններում Մարաղայից գաղթած 700 ընտանիքների սովի մասին և խնդրում է ավելացնել դրամական օգնությունը: Նա նշում է հայերի մասին Բ. Պասկևիչի այն սխալ կարծիքը, թե իբր հայերն ամեն ընտանիքի համար պահանջել են 10 թուրան գումար և ապացուցում է, որ այդ գումարը պահանջել են նեստորականները՝ վկայակոչելով կուսակալի խոստումները: Նա հայտնում է 300 հայ ընտանիքների արդեն գաղթելու և սովից վախեցած 200 ընտանիքների կողմից հատկացված գումարը ևս վերադարձնելու մասին):

34 Նույն տեղում՝ փաստ. 582, էջ 615-616 (Բ. Պասկևիչի՝ 1825թ. ապրիլի 25-ի հանդիմանական նամակն արքեպիսկոպոս Ներսեսին - “Дабы не допустить христиан... умереть съ голода... Вы не оставите искать всесть способъ къ предохранению переселенцевъ отъ бедствениаго положенія...”):

ու վստահության հետևանքով են հայերը գաղթել Այսրկովկաս: Ի. Պասկևիչը չէր կարող հանդուրժել, որ դրանով «նսեմացվեն» իր, ռուսական զենքի ու պետության դերը, և առաջին հարթություն մղվեն ներգաղթյալների վրա հայ գործիչների հեղինակության և ազդեցության հանգամանքները: Դրա համար էլ նա հատուկ նամակներով³⁵ Ա. Գրիբոյեդովից, զեներալ Պանկրատևից, Ճավճավաձեից և իշխան Արդուբյան Երկայնաբազուկից պահանջում է իրեն ներկայացնել տեղեկություններ, թե ներգաղթի գործում իրոք մեծ է եղել Ե. Լազարյանի տոհմի մեծ համարումն Ատրպատականի հայերի շրջանում, և ինչպես է նա կազմակերպել այդ գործընթացը: Նշված անձինք և առաջին հերթին Ա. Գրիբոյեդովն իրենց զեկուցագրերում բացառում են պարսկահայերի ներգաղթի ընթացքի վրա Լազարյանների տոհմի հեղինակության ազդեցությունը և հիմնականում կարևորում են ռուսական զենքի, ռուսական պետության հովանավորության և Ի. Պասկևիչի արդար խոստումների հանգամանքները³⁶:

Շայերի հանդեպ ռուսական իշխանությունների դրսևորած վարքագիծը բացահայտվում է ռուսական գաղութային քաղաքականության շահերը սպասարկողներից, հատկապես՝ Ա. Գրիբոյեդովի ներկայացրած դիտողություններով: Ե. Լազարյանի գործունեության «գնահատականն» առավել ամբողջական է Ա. Գրիբոյեդովին վերագրվող ընդարձակ «Заниска о переселении Армянъ изъ Персiи въ наши области» («Հայերին Պարսկաստանից դեպի մեր մարզեր վերաբնակեցնելու մասին գրություն» - Վ.Ս.) փաստաթղթում³⁷: «Գրության» մեջ քննադատվում է Ե. Լազարյանի կազմակերպած ներգաղթը՝ կետ առ կետ նշելով թերությունները: Ներգաղթի գործում հեղինակը կարևորում է իշխան

Արդուբյանին և սպա Ղամազյանին, իսկ Ե. Լազարյանին մեղադրում է հայկական աշխարհագրի մասին անիմաստ կոչեր գրելու մեջ, որոնցում անհիմն կերպով ընդգրկել էր նաև Ղարաբաղն ու մյուս մարզերը: Ա. Գրիբոյեդովը վկայակոչում է Ե. Լազարյանին մի քանի անգամ վարքի, անօգուտ և պարծենկոտ արարքների համար իշխան Արդուբյանի կողմից արված հանդիմանությունները՝ գտնելով, որ գաղթի համար հասկացված գումարները բաշխվել են առանց չարաշահման, բայց ծայրահեղ անհավասարաչափ, ներգաղթողներին տեղավորել են խիստ անիմաստ ու անփույթ ձևով: Նա քննադատում է Ե. Լազարյանին մահմեդական կալվածատերերի տիրույթներում հայ ներգաղթյալներ բաշխելու հարցում³⁸:

Ուշագրավ է այն փաստը, որ Մ. Արդուբյանի հետ Ա. Գրիբոյեդովը երկար քննարկել է մահմեդականներին արվելիք այն հավաստիացումները, որոնց նպատակն էր լինելու համոզել վերջիններին, որ նրանց նեղությունները ժամանակավոր բնույթ էին կրելու և հայերին ստիպելու էին հեռանալ մահմեդականների տարածքներից: Անդրադառնալով ներգաղթյալներին՝ Ա. Գրիբոյեդովը համոզված պնդում է, որ Ռուսաստանի համար պարսկահայ բնակչությունն առավել օգտակար է վրացահայերից և ընդհանրապես՝ չարչիներից (торжаны), որոնք զանձարանին ոչ մի օգուտ չեն բերում, իսկ Պարսկաստանից գաղթածներն արհեստավորներ ու հողամշակներ են³⁹:

Շավաքված վերոհիշյալ «բացահայտումների» և Ե. Լազարյանի հիվանդության պատճառով միայն ինն ամիս անց նրանից ստացած հաշվետվության հիման վրա կուսակալ Բ. Պասկևիչը գնդապետ Ե. Լազարյանին մեղադրում է այլոց ծառայություններն ու հաջողություններն անհիմն կերպով իրեն վերագրելու հանդգնության մեջ⁴⁰ և Արդահանից գրված հանձնարարականով զեներալ-համհարզ Ստրեկալովից պահանջում է Ե. Լազարյանին վտարել Այսրկովկասից⁴¹: Բացի հիշյալ «Գրություն»-ից՝ Ա. Գրիբոյեդովը գրում է Բ. Պասկևիչին, որ Նախիջևանում թաթարների շրջանում մեծ հուզումներ են սկսվել ներգաղթյալ հայերի

38 АКАК, h. VII, ф. шашт. 618, л. 643 («...Армяне большею частью поселены на земляхъ помещичьихъ мусульманскихъ... Хозяева, мусульмане, большею частью находились на кочевьяхъ и мало имели случая съ сообщаться съ иновѣрными пришельцами...»):

39 Նույն տեղում՝ փաստ. 618, էջ 642-643:

40 Նույն տեղում՝ փաստ. 693, էջ 702 (1829թ. մայիսի 28-ին զեներալ Ստրեկալովին ուղղված շրջաբերականում տրված է նաև Բ. Պասկևիչի շրջաբերականը Ե. Լազարյանին):

41 Նույն տեղում:

35 АКАК, h. VII, ф. шашт. 617, л. 642 (Բ. Պասկևիչի՝ 1828թ. սեպտեմբերի 20-ի իրած հանձնարարականը), տես նաև՝ Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Եջվ. աշխ., էջ 381-395:

36 Նույն տեղում՝ փաստ. 623, էջ 647-649 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. հոկտեմբերի 1-ի պատասխան գրությունն Բ. Պասկևիչին), փաստ. 625, էջ 650 (զեներալ Պանկրատևի՝ 1828թ. հոկտեմբերի 7-ի պատասխան գրությունն Բ. Պասկևիչին), փաստ. 626, էջ 650-651 (զեներալ Ա. Ճավճավաձեի պատասխան գրությունն Բ. Պասկևիչին), փաստ. 627, էջ 651-652 (Մ. Արդուբյանի՝ 1828թ. հոկտեմբերի 17-ի պատասխան գրությունն Բ. Պասկևիչին):

37 Նույն տեղում՝ փաստ. 618, էջ 642-644: Այս փաստաթղթի հեղինակի ով լինելու հակամասնը բոլոր վեճեր է առջացրել: Հետազոտող Բ. Ենիկոյաովը գտնում է, որ դրա հեղինակը Ռուսաստանից վերադարձված (ռեկիզիտի) նպատակով Կովկաս ժամանած Դ. Ջուրբախին է («Трибоедовъ и Востокъ», Եջվ. աշխ., էջ 140), իսկ Վ. Պարսամյանն այդ փաստաթղթի հեղինակ է համարում Ա. Գրիբոյեդովին՝ հենվելով «Արձանագրությունների» (АКАК-ի) խմբագիր Ադ. Բերժևի հավանական կարծիքի վրա, որի համար հիմք է հանդիսացել այդ փաստաթղթում հիշատակվող Ա. Գրիբոյեդովի թարգմանիչ Դաղաշևի անունը («Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» Եջվ. աշխ., էջ 123-124): Չնշելով փաստաթղթի անվանումը՝ ոչ անմիջական կերպով, սակայն այդ փաստաթուղթն Ա. Գրիբոյեդովի կողմից կազմված լինելու մասին է վկայում նաև մինչխորհրդային հեղինակ Ա. Երիցյանը («Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք...», Եջվ. աշխ., էջ 392-393), տես նաև Բարսամյան В.А., «А.С. Трибоедов и переселение армян», Եջվ. աշխ., էջ 141-142:

պատճառով⁴²: Նա ներկայացնում է իր կազմած աղյուսակը, որում ցույց է տալիս Նախիջևան քաղաքի և «մարզի» տարածքում նախկին 404 հայ և 2024 մահմեդական ընտանիքների առկայության պայմաններում ընտանիքների հարաբերակցության փոխվելը 1328 հայ ընտանիքների ներգաղթի հետևանքով, որի արդյունքում հայ ընտանիքների թիվը մահմեդական 2024-ի դիմաց հասել էր 1732-ի:

Ա. Գրիբոյեդովը վերոնշյալ «անհամամասնությունը» վեր է համարում ամեն տեսակի դատողությունից և մահմեդականներին հանգստացնելու համար առաջարկում է շտապ կերպով 500 հայ ընտանիք տեղահանել և 15-20 ընտանիքներով վերաբնակեցնել Գարալագյազի (Վայք) ամալի վայրերում: Ըստ նրա՝ 200 ընտանիք արդեն ցանկացել էր տեղափոխվել, մնացածների մի մասին կարելի էր կլիներ համոզել, իսկ առավել համառներին՝ հարկադրել գաղթելու: Ա. Գրիբոյեդովի պնդմամբ ավելի քիչ անհարմարություն կլիներ 100 կամ 150 հայ ընտանիքների, քան ողջ մարզի թաթարների բողոքների դեպքում: Հակառակ դեպքում, ըստ նրա, ռուսական իշխանությունները թաթարներին կդրդեին զղջալ և կարոտով հիշել պարսկական կառավարումը: Նա Ի. Պասկևիչին համոզում է, որ 500 հայ ընտանիքների դուրս բերումը մեծ բարեգործություն կհամարվի թաթարների համար: Գրանից բացի՝ Ա. Գրիբոյեդովն առաջարկում է ռուսների կողմն անցած մահմեդական ցեղերին վերցնել ծառայության, ռոճիկ վճարել և չի հապաղում ավելացնել, որ խաներից ու բեկերից խլված իշխանության փոխարեն իրենք նրանց տվել են օտար (ռուսական – Վ.Ս.) օրենքների խճճվածություն:

Թաթարների կրած նեղությունների պատճառով ստացած բազմաթիվ բողոքներից «խեղդված» Ա. Գրիբոյեդովը «բռնում է Նազար-Ալի խանի և Շիհ-Ալի Բեկի կողմը և նրանց համոզում է իրենց ժողովրդին ներշնչել՝ հավատարիմ ծառայելու ռուսական կառավարությանը»: Ըստ նրա՝ մահմեդական ցեղերին կարելի էր «խելքի բերել» նրանց տոհմական պետերի և հոգևորականների միջոցով, ինչպես նաև վերջիններիս ու ղազիների դատաստանական գործերին չխառնվելով: Նա նույնիսկ խորհուրդ է տալիս տարեկան 800 թուման նպաստ վճարել

Նազար-Ալի խանին այն գումարից, որն իրենց կողմն անցած խաներին, մահմեդական իրենց մարզերի գործիչներին խոստացել էին ռուսները: Նրա կարծիքով պարսկական անհնազանդ տիրույթներում դա կբարձրացներ ռուսական իշխանության վարկը⁴³: Այսպիսով, Ա. Գրիբոյեդովը շարունակում էր այն քաղաքականությունը, որը գալիս էր Հերակ II-ի, գեներալ Յիգիանովի ժամանակներից, և ինչն ուղղակի հակադիր էր հայերի ակնկալիքներին:

Մինչխորհրդային պատմագիտության մեջ, բացի վերոհիշյալ փաստաթղթերի հիշատակումից⁴⁴, Ա. Գրիբոյեդովի անունը հայերի ներգաղթի գործընթացին այլ կերպ չի կապվում, և նրան չեն վերագրվում Լազարյանների ու Ներգաղթի կոմիտեի հետ մշտապես կապված լինելու⁴⁵, ներգաղթի կազմակերպման «Հրահանգները» կազմելու⁴⁶, հայ ժողովրդի հավատարիմ պաշտպանը լինելու, պարսկա-թուրքական լծից հայերին ազատագրելու գաղափարի հեղինակը հանդիսանալու և նրա շնորհիվ պարսկահայերի գաղթի իրականացման առաքելությունն իրականացնելու⁴⁷, բազմաշարքար հայ ժողովրդի վիճակի ու ճակատագրի հանդեպ կարեկից, նաև նրա պատմությանն ու մշակույթին խորագիտակ լինելու հանգամանքները⁴⁸: Այսպիսի մոտեցումը յուրահատուկ էր խորհրդային շրջանի պատմագիտությանը, մինչդեռ պարսկահայերի ներգաղթի հարցում Ա. Գրիբոյեդովի բովանդակային գործունեության վերաբերյալ որևէ փաստաթուղթ հայտնի չէ:

Հայերի ներգաղթի նկատմամբ Ա. Գրիբոյեդովի «հոգատար» վերաբերմունքի դրսևորում է համարվել նաև Թավրիզից Վ. Միկլաշևիչին հղած մի նամակ, որում նա պատմում է ներգաղթյալների՝ Պարսկաս-

43 АКАК, h. VII, փաստ. 623, էջ 647-649 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. հոկտեմբերի 1-ի զեկուցագիրն Ի. Պասկևիչին):

44 Берге Ад., "Александръ Сергеевичъ Грибоедовъ. Деятельность его какъ дипломата (1827-1829)", "Русская старина", Санкт-Петербургъ, 1874, томъ XI, с. 746-750 (մինչխորհրդային հայ հեղինակներ Մ. Ալավերդյանցը, Ալ. Երիցյանը, Լեոն և այլք նա հայերի ներգաղթի գործում չեն հիշատակում Ա. Գրիբոյեդովի անունը):

45 Գրիգորյան Ջ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եզվ. աշխ., էջ 393-400:

46 Пашуто В.Т., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, Եզվ. աշխ., էջ 140-143:

47 Պարասյան Վ.Ս., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եզվ. աշխ., էջ 116:

48 Попова О.И., Грибоедов дипломат, Եզվ. աշխ., էջ 135-136, տես նաև՝ Тузиян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, Եզվ. աշխ., էջ 7 (թվարկելով Ա. Գրիբոյեդովի ստեղծագործական կյանքի կարևոր յուրահատկությունները՝ հեղինակը նշում է, որ նա եղել է հայ-ռուսական բարեկամական փոխկապերի արարիչ, որը ձգտում էր արտահայտել հայերի իդեալը պարսից լծից Արարատյան երկրի ազատագրման ավարտին): Նույն աշխ. ներածականում Երևանում գիտության և մշակույթի ռուսաստանյան կենտրոնի տնօրեն Մ.Ա. Գալինինը գրում է, որ հայերի հանդեպ Գրիբոյեդովի հոգատարությունը նրա դիվանագիտական գործունեության բաղկացուցիչն էր (էջ 5):

42 Չորանյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺՀ դարի երկրորդ կեսին, Եզվ. աշխ., էջ 18 (հեղինակը, ներկայացնելով XVIII դարի II կեսի իրավիճակը, Հայաստանում նստակեցության կամ կիսաքաղաքի կյանքի անցած մահմեդական ցեղերի առումով գրում է, որ նրանք գիտակցում էին, որ գտնվում են ուրիշի պատմական տարածքներում, և որ հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական ամեն մի առաջընթաց պայտնալիք է իրենց տիրապետությանը: Նրանք Ռուսաստանի հետ հարաբերություններում կարևորում էին ռուսների տիրապետության տակ իրենց իշխանության պահպանման անհրաժեշտությունը):

տանում թողած գույքն իր կողմից «հսկելու» մասին⁴⁹: **Վ. Առողջֆինիկի-նին հղած մեկ այլ նամակում** նա նա նկարագրում է «հսկիչի» իր ծանր աշխատանքը և թույլտվություն ու լիազորություններ է խնդրում գնելու գաղթածների կալվածքների առք ու վաճառքի պայմանագրերը («ղաբալաները»), որի դեպքում Պարսկաստանի իշխանությունները հասկանալով, որ 5 տարվա փոխարեն այդ տիրույթները կարող են ընդմիջտանցնել Ռուսաստանին, իրենց հպատակներին չէին արգելի գնել դրանք⁵⁰:

Ինչ վերաբերում է Վ. Միկլաշնիչին հղած նամակին, ապա նշենք, որ **նախ չի նշվում, թե կոնկրետ ինչ ազգության կամ դավանանքի ներգաղթողների մասին է խոսքը. եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նա իր «չթույլատրված ամուսնության» պատճառով արդեն ուշացրել էր իր մեկնումը Թեհրան, և, շտապելով Թավրիզում էր թողել կնոջը՝ Նինո Ճավճավաձեին, իսկ Թեհրանում էլ մնացել էր 3 շաբաթ, ուրեմն ինչ «հսկիչի» մասին է խոսքը, երբ նա ուղղակիորեն պարտականություններ ու ժամանակ չի ունեցել ներգաղթողների ունեցվածքի և գույքի «հսկողության» համար: Սրա մասին վկայություններ և փաստաթղթեր չկան:**

Ընդհանրապես հայերի հանդեպ Ա. Գրիբոյեդովի դրսևորած արգահատալից վերաբերմունքը փաստվում է նրա նամակներով: “Сын отечества” հանդեսի խմբագրին ուղղված “Письмо к издателю” («Նամակ հրատարակչին» – Վ.Ս.) նամակում Վրաստանում իբր ծագած ինչ-որ խռովության մասին Կոստանդնուպոլսում տպված մի հոդվածն այլ հանդեսում վերատպվելու առիթով **Ա. Գրիբոյեդովը ռուսական իշխանություններին վերաբերող սուտ լուրերը տարածելու գործում անապացույց կերպով մեղադրում է «իրենց առևտրից դժգոհ» հայերին, որոնց միջոցով այդ լուրերն իբր կարող էին հասնել նաև «Համբուրգյան թղթակից» հանդեսին՝ չափազանցված ձևով**⁵¹:

Ի դեպ, վրացի հետազոտող Զվանշեր Վաթեյշվիլին ընդունում է, որ վերոհիշյալ նամակն ունեցել է պատվիրված բնույթ, քանի որ Ա. Գրիբոյեդովն Ա. Երմոլովի հանձնարարությամբ կապեր էր պահպանում մայրաքաղաքի թերթերի և ամսագրերի հետ, իսկ «Նամակի» ուղղվածությունն իրավացիորեն միահյուսված է համարում քաղաքական նա-

49 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, с. 318-319 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. դեկտեմբերի 3-ի նամակը):

50 Նույն տեղում՝ էջ 325-326 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. դեկտեմբերի նամակը):

51 Նույն տեղում՝ էջ 56 (Ա. Գրիբոյեդովի՝ 1819թ. հունվարի 21-ի նամակը):

խատրամադրվածության հետ: Չ. Վաթեյշվիլին գրում է. «Կարելի է ընդունել, որ Ա. Գրիբոյեդովը դիտավորյալ է քաղաքական իրավիճակը Վրաստանում ներկայացրել որոշակիորեն բացարձականացված, որպեսզի ինքնակալական կառավարության հովանու ներքո ծայրագավառի «խաղաղ բարգավաճման» հանդեպ դեպի լավը տրամադրի իշխանական շրջանակներին, որ թեկուզ ինչ-որ չափով նպաստի դրա «քաղաքացիական բարեկեցությանը» ոչ թե խոսքերով, այլ իրականում»⁵²:

Վրացական իրականությունը մեկնաբանելու հարցում **հեղինակը մատնացույց է անում Ա. Գրիբոյեդովի կայացած չլինելը, որովհետև Վրաստանում ինչ-որ խռովության մասին վերջինիս հավաստիացումները չէին համապատասխանում իրականությանը, քանի որ որոշ ժամանակ անց նույն՝ 1819թ., Իմերեթում բռնկվում է ժողովրդական խռոտ ապստամբություն, որը դաժանորեն ճնշվում է գեներալ Ա. Երմոլովի կողմից**⁵³:

Նույն՝ “Письмо к издателю” նամակի առնչությամբ հետազոտող Վ. Թունյանն արդարացիորեն այն **համարում է Ա. Երմոլովի հեղինակության հանդեպ «կոսմետիկ» հոգատարություն**⁵⁴, որը քողարկում էր **Թիֆլիսի բազմաշերտ հասարակության և հայ բնակչության դժգոհությունը Երմոլովի քաղաքականությունից**, երբ նրա նորամուծությունները **որպես ոտնձգություն էին դիտվում ավանդականորեն ձևավորված նիստուկացի դեմ**: Վ. Թունյանն իրավացիորեն նշում է, որ **Ա. Գրիբոյեդովը բնածին դիվանագետ էր, այսինքն՝ մի բան մտածում էր, ուրիշ բան՝ խոսում և կատարում էր լրիվ այլ բան**⁵⁵: Միևնույն ժամանակ **«հայ առևտրականի» շուրջ նրա «դիտողությունը» նա համարում է Վրաստանի բազմաշերտ հասարակության, մասնավորապես հայ բնակչության կյանքի արտացոլման ենթատեքստ**⁵⁶, ինչն այլևս էլ համոզիչ չէ. «Նամակում» պարզորոշ ընդգծված է **քամահրանքը հայի հանդեպ**: Նման մոտեցման դեպքում Ա. Գրիբոյեդովի «դիտողության» շուրջ վերոհիշյալը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. **իրականում Ա. Գրիբոյեդովը մտածում էր թաթարների, արտահայտվում՝ վրացիների մասին, բայց մատնացույց էր անում հայերին**: Այնպես, որ Վ. Թունյանի **մեկնաբանությունը «նա-**

52 Ватейшвили Джуаншер Л., “Русская общественная мысль и печать на Кавказе в первой трети XIX века”, М., “Наука”, 1973, с. 97.

53 Նույն տեղում՝ էջ 199:

54 Туян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, кн. 2, с. 28:

55 Նույն տեղում՝ էջ 29:

56 Նույն տեղում:

մակի» վերաբերյալ ճիշտ է, սակայն չի արդարացնում Ա. Գրիբոյեդովի հակահայկական մտորումները: Դա ապացուցվում է նաև այլ վաստերով: Այսպես, Ղազանչիից Ս. Մազարովիչին գրած նամակում Ա. Գրիբոյեդովը պատմում է, որ քարավանի հետ գնացող մի հայի միջոցով ինքը ցանկացել է նամակ ուղարկել ռուսական ուղեկալ, բայց վերջինս պահանջել է 50 հորթ (») որպես վարձ: Այս «չափից դուրս մեծ պահանջից» վրդովվելով և տվյալ հայի հավատարմության նկատմամբ երաշխիք չունենալով՝ նա վռնդել է այդ մարդուն: Ա. Գրիբոյեդովը գրում է. «Ինչ ստոր վիժվածք են այդ հայերը. նրանցից ոչ մեկն ինձ ճանաչել չէր ուզում, և մինևույն ժամանակ ականջիս շնչում են, որ մենք նրանց ապագա (in spe) հովանավորներն ենք: Լսով հովանավորյալներ են: Նրանք մեզ ծախում են այն նույն պարսիկներին, որոնք պատրաստ են նրանց մասնատել և եփել ցանկացած խյուսի (coyre) տակ»⁵⁷:

Թավրիզից Ն. Կախովսկուն գրած նամակում, խոսելով ռուսական ոստիկանական հսկողությունից դժգոհ անգլիացի Լինդսաուի և Մաքինթոնչի մասին, Ա. Գրիբոյեդովը գրում է. «Ու՞մ համար են երկու անգլիացիները վտանգավոր: Չէ՞ որ նրանք նեղացած են հեռացել Պարսկաստանից: Ինչ վերաբերում է քաղաքական հետախուզություններին, ապա դրա համար Աբբասը (Միրզան - Վ.Ս.) ելրուպացիներ վարձելու կարիք չունի. մեծամասամբ թիֆլիսեցիներն իրենք են իրենց հոգիները վաճառել պարսիկներին»⁵⁸: Եթե հաշվի առնենք Ներսես Աշտարակեցու վերոհիշյալ գրությունը⁵⁹, ըստ որի՝ Թիֆլիսի 4000 ընտանիքներից 3500-ը հայկական էին, ակնհայտ է, թե խոսքն ում մասին է: Ակնհայտ է նաև, որ վերոհիշյալ այդպիսի բնութագրումներն ու կարծիքները դուրս են գալիս մասնավոր ղեպերի շրջանակից, և փորձ է արվում բացասական իմաստով ընդհանրացնել մի ողջ ժողովրդի բնութագիրը: Թվարկված վկայությունները լռությամբ շրջանցվել են բոլոր, այդ թվում նաև հայ հետազոտողների կողմից:

Անդրադատնանք Ա. Գրիբոյեդովի ղեկավարած ղեսպանակազմի ողբերգական վախճանի հարցերին: Ողբերգությունը վերապրած ակա-նատեսների երեք վկայություններ են հայտնի. առաջինը ղեսպանական առաքելության անդամներից փրկված քարտուղար Ի. Մալցովինն է⁶⁰,

57 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, с. 325-326 (1819թ. սեպտեմբերի 11-13-ին գրած նամակը):
58 Նույն տեղում՝ էջ 325-326 (1820թ. հունիսի 25-ի նամակը):
59 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 164, վավ. 1319 (Ներսես Աշտարակեցու՝ 1818թ. մարտի 25-ի նամակը Հովակիմ Լազարյանին):
60 АКАК, т. VII, ф. 1, кн. 672, էջ 688-689, տես նաև՝ Берже А.Д., «Смерть А.С. Грибоедова», кн. 2, с. 174-179 (Ի. Մալցովի՝ 1829թ. մարտի 18-ի, 21-ի, 23-ի զեկուցագրերն Ի. Պասկևիչին):

երկրորդը ղեսպանակազմի պարսիկ մեհմանդարի (ուղեկցորդի) պարսիկ քարտուղարի պատմածն է, որի հիման վրա հետագայում կազմվել է հայտնի «Реляция»-ն («Ռազմագեկույց» – Վ.Ս.)⁶¹, երրորդը ղեսպանական առաքելության սուրհանդակ (ղուլամ) հայազգի Համբարձումի (Իբրահիմ-Բեգի) վկայությունն է⁶²:

Չափազանց կարևոր են Պարսկաստանում տարբեր ազգություններին, նույնիսկ եվրոպացի ականատեսներից հավաքված վկայությունների հիման վրա 1833-1838թթ. այդ երկրում Ռուսաստանի լիազոր ղեսպան կոմս Ի.Օ. Սիմոնիչի⁶³ և նրա ղեսպանակազմի առաջին քարտուղար Կ. Բոդեի հուշերը⁶⁴:

Առավել իրատեսական են Ա. Գրիբոյեդովի ղեսպանակազմի կործանման ականատեսների՝ պարսիկ զինվորների հայ հրամանատար Յաղուբ (Հակոբ) Սուլթանի, ռուսական ղեսպանատանը կից Շահ-Աբդուլ-Ազիմ բերդի մոտ գտնվող հայկական եկեղեցու գանձապետ Խուրդաթի, թավրիզցի Մալքումի (որը շահի հարեմի նախկին գանձապետ Միրզա-Յաղուբի գործակատարն էր), մայր Փաշա բեգի, թիֆլիսեցիներ Հովհաննես Մանթաշյանի և Մահտեսի Եղո Մարգարյանի վկայությունները, որոնք անձամբ լսել, համեմատել և գրի է առել Գալուստ Շերմազանյանը⁶⁵:

Կարևորելով «Ռազմագեկույց»-ի, Բ. Սիմոնիչի, Ի. Մալցովի և Գ. Շերմազանյանի վկայություններում առկա նմանություններն ու տարբերությունները՝ փորձենք հնարավորինս անկողմնակալ վերլուծության ենթարկել կատարվածը:

Ռուսական պաշտոնական տեսակետը հիմնականում ձևավորվել է առաքելության կենդանի մնացածներից մեկի՝ ղեսպանակազմի առաջին քարտուղար Ի. Մալցովի զեկուցագրերի⁶⁶ և պարսկական կողմի

61 Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 121, «Реляция происшествий, предваивших и сопровождавших убиение членов последнего российского посольства в Персии», էջ 151-184, տես նաև՝ Берг Н.В., «Из рассказов С.А. Соболевского», кн. 2, с. 187-196, Ефремов П.А., «О смерти А.С. Грибоедова», кн. 2, с. 1491-1538:
62 Չ.Ս., Գրիբոյեդովի սպանությունը (նրա ծննդեան 100-ամյա տարեդարձի առիթով), կն. 2, հոդվ., տես նաև՝ Алавердианц М.Я., Кончина А.С. Грибоедова (по армянским источникам), кн. 2, с. 27 էջ. նաև՝ Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 121, Г.А., «Смерть Вазир-Мухтара», Рассказ Амбарцума, էջ 199-201:
63 Грибоедов. Его жизнь и гибель..., кн. 2, с. 121. И. Симонич, «Убийство русского посланника», էջ 201-206 (այն առաջին անգամ տպվել է «Москва» թերթի 1867թ. №145-ում):
64 Նույն տեղում՝ էջ 207-211:
65 Շերմազանյանի Գալուստ, Նիքեր ազգային պատմության համար, կն. 2, էջ 77-103:
66 АКАК, т. VII, ф. 1, кн. 672, էջ 688-689 (Ի. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 29-ի հաղորդագրությունը Կ. Ասեսկոդեին), փաստ. 684, էջ 696 (Կ. Ասեսկոդեի՝ 1829թ. ապրիլի 23-ի հաղորդագրությունն Ի. Պասկևիչին, որոնցում խոսվում է Ի. Մալցովի՝ 1829թ. մարտի 18-ի զեկուցագրերի մասին):

ներկայացրած պաշտոնական բացատրությունների հիման վրա⁶⁷: Հստ Ի. Մալցովի՝ կատարվածի մեղավորը եղել է Պարսկաստանի շահը, ով, իմանալով ժողովրդի հուզումների մասին, նախօրոք չի տեղեկացրել դրանց մասին, ջարդի նախորդ գիշերը պահպան գորք չի ուղարկել և Ա. Գրիբոյեդովին էլ չի համոզել հեռանալ Թեհրանից: **Ի. Մալցովը գրում է, որ չկարողանալով շահի հարեմի գաղտնիքներն իմացող Միրզա-Յաղուբին⁶⁸ ամեն միջոցներով ետ ստանալ՝ պարսիկները կազմակերպել են ամբոխի ներխուժումը դեսպանատուն և վերջինիս սպանությունը:**

Միաժամանակ, սակայն, Ի. Մալցովը հաստատում է նաև, որ **շահն ու արքունիքը մտադիր չեն եղել կործանել առաքելությունը և սպանել Ա. Գրիբոյեդովին, այլ նպատակ են ունեցել ոչնչացնել միայն Միրզա-Յաղուբին, խլել Ալլահ-Յար խանի երկու կանանց և վախեցնել անզույժում Ա. Գրիբոյեդովին⁶⁹:**

Բնականաբար, չցանկանալով բացահայտել Ա. Գրիբոյեդովի և դեսպանատան այլ անդամների կողմից պարսիկների ազգային և կրոնական ինքնասիրությունը վիրավորելու և մոլեռանդությունը գրգռելու հանգամանքները՝ **Ի. Մալցովը** դեպքերը նկարագրելիս շրջանցում, խեղաթյուրում կամ չի անդրադառնում շատ մանրամասների: **Փոխարենը նա մանրամասն պատմում է իրեն ապահով Թիֆլիս հասցնելու համար Միրզա-Յաղուբի կողմից դեսպանակազմի թարգմանիչ, շտաբակապետան Միրզա-Նարիման Շահնազարյանին իբր կաշառելու մասին, և որ այդ պատճառով էլ Միրզա-Նարիմանն իբր ջանացել էր կանխել Ա. Գրիբոյեդովի կողմից դրսի անցուղարձերի և ժողովրդի հուզումների մասին տեղեկացվելը:**

Ի. Մալցովը նշում է նաև, որ դեպքերի նախօրեին Ա. Գրիբոյեդովն **իրեն բողոքի հայտագիր է թելադրել, որում խստորեն դատապարտել է պարսկական կողմից ռուսներին ցուցաբերած վատ վերաբերմունքը,**

67 AKAK, h. VII, փաստ. 661, էջ 679-681 (Ի. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 9-ի վերոհիշյալ հաղորդագրությունը Կ. Նեսսելրոդին, որում, բացի Աբբաս-Միրզային ուղղված շահի հրովարտակից, ներկայացնում է նաև ռուսաց կայսրը, արտգործնախարարության ու Ի. Պասկևիչին ուղղված Աբբաս-Միրզայի նամակները), տես նաև՝ Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 167ա, վավ. 226 (19.08.1829թ. Ներսես Աշտարակեցիի հայտնում է Խ. Լազարյանին, թե տեղեկություն է ստացել, որ Ա. Գրիբոյեդովի սպանության ընթացքի մասին իշխան Դոլգորուկովը մեկնում է Պարսկաստան, և որ նրան հանձնարարված է եղել հետաքրքրվել նաև իր ղեմ հարուցված ամբաստանություններով: Նա հույս է հայտնում, որ «Արաբիչը չի թողուր, որ Մերովիլեն և նմանները» դատան դեկավար):

68 Շեքնազնեան Գալուստ, Լիթեր ազգային պատմության համար..., նշվ. աշխ., էջ 77-82 (Միրզա-Յաղուբը, ինչպես վերևում նշվեց, շահի հարեմի գանձապետ Հակոբ Մարգարյանն էր, ով նախկինում գերվել էր Հայաստանում, ներքինացվել, իսկ հետագայում իր կրթության և գիտելիքների շնորհիվ բարձր դիրքերի էր հասել Թեհրանում):

69 AKAK, h. VII, փաստ. 661, էջ 679-681 (Ի. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 9-ի հաղորդագրությունը Կ. Նեսսելրոդին, որին կցված է Ֆաթի-Ալի շահի հրովարտակը՝ ուղղված Աբբաս-Միրզային, որում գերության մեջ գտնվող վերոհիշյալ երկու կանանց ներկայացնում է ոչ թե որպես Ղարաբախայից գերված երկու հայուհիներ, այլ՝ Մուշից գերվարված երկու բրդուհիներ, որոնք վաղուց ընդունել էին իսլամ):

անվտանգության ապահովման բացակայությունը և այդ հիմնավորումներով սպառնացել է Պարսկաստանից հեռանալու խնդրանքով դիմել ռուսաց կայսրին:

Ռուսական իշխանությունները, ստանալով պարսկական կողմի բացատրությունները⁷⁰, փաստորեն ընդունում են, որ **առաքելության անդամների և դեսպանի սպանությունը պետական մակարդակով քաղաքական դրդապատճառներ չի ունեցել, որ շահն ու Աբբաս-Միրզան մեղավոր չեն⁷¹ կատարվածի մեջ՝** տեղի ունեցածը վերագրելով մի կողմից **թեհրանյան ամբոխի կոպիտ սովորույթների և գիտակցության հետ Ա. Գրիբոյեդովի հաշվի չնստելու ու նրա չմտածված քայլերի հանգամանքներին, մյուս կողմից՝ այդ նույն ամբոխի մոլեռանդությանն ու սանձարձակությանը, որոնք դեռ 1826թ. պարսից շահին դրդել էին պատերազմել Ռուսաստանի դեմ⁷²:**

Ռուսական պաշտոնական տեսակետի առումով կարևոր են 1833-1838թթ. Պարսկաստանում ռուսական **դեսպան Ի. Սիմոնիչի հուշերը:** Նա ևս գտնում է, որ թեհրանյան իրադարձությունները պետական մակարդակով չեն ունեցել քաղաքական դրդապատճառներ՝ փաստելով, որ **մեղավորը շահի հանդեպ խելահեղության հասնող, վերամբարձ տոն որդեգրած իր բարեկամ հանգուցյալ Ա. Գրիբոյեդովն է եղել⁷³:** Հաստատելով ռուս դեսպանին ընդամենը վախեցնելու համար պարսից իշխանությունների որդեգրած քաղաքականության մասին Ի. Մալցովի տեղեկությունները՝ Ի. Սիմոնիչը **կոնկրետ որպես հրահրող հիշատակում է արտգործնախարար Միրզա-Աբուլ-Հասանին**, որը Միրզա-Յաղուբի և

70 AKAK, h. VII, փաստ. 661, էջ 679-681 (Ի. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 9-ի վերոհիշյալ հաղորդագրությունը Կ. Նեսսելրոդին, որում, բացի Աբբաս-Միրզային ուղղված շահի հրովարտակից, ներկայացնում է նաև ռուսաց կայսրը, արտգործնախարարության ու Ի. Պասկևիչին ուղղված Աբբաս-Միրզայի նամակները), տես նաև՝ Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 167ա, վավ. 226 (19.08.1829թ. Ներսես Աշտարակեցիի հայտնում է Խ. Լազարյանին, թե տեղեկություն է ստացել, որ Ա. Գրիբոյեդովի սպանության ընթացքի մասին իշխան Դոլգորուկովը մեկնում է Պարսկաստան, և որ նրան հանձնարարված է եղել հետաքրքրվել նաև իր ղեմ հարուցված ամբաստանություններով: Նա հույս է հայտնում, որ «Արաբիչը չի թողուր, որ Մերովիլեն և նմանները» դատան դեկավար):

71 Նույն տեղում՝ փաստ. 677, էջ 692 (կայսր Նիկոլայ I-ի՝ 1829թ. ապրիլի 3-ին Աբբաս-Միրզային հղած ուղերձը), փաստ. 700, էջ 707-708 (Կ. Նեսսելրոդի՝ 1829թ. սեպտեմբերի 13-ի հաղորդագրություն իշխան Դոլգորուկովին, որին կցված է Ֆաթի-Ալի շահին ուղղված բարձրագույն շնորհագիրը):

72 Նույն տեղում՝ փաստ. 665, էջ 683-684 (Կ. Նեսսելրոդի՝ 1829թ. մարտի 16-ի հաղորդագրություն Ի. Պասկևիչին):

73 Гринева. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 202 (И. Симонич, "Убийство русского посланника"), տես նաև՝ Комиссаров Л.С., "Иранские авторы о гибели А.С. Гринева", նշվ. աշխ., էջ 191-192 (զտնում է, որ գերիների ազատագրումը և վերաբնակեցումն Ա. Գրիբոյեդովի կատարել է Թուրքմենչայի պայմանագրի համապատասխան հոդվածների հիման վրա ոչ ոչ մի ինքնազիտություն թույլ չի տվել և այդ փաստն անտեսվել է):

հարեմի կանանց հետ կապված միջադեպի առիթով նույնիսկ *կոչ է արել բողոք գրել Պետերբուրգ՝ առաջարկելով անվայելույ վարքի համար ետ կանչել Ա. Գրիբոյեդովին* (հմմտ. Ի. Մալցովի այն բողոքի մասին վկայության հետ, որն իբր թելադրել էր Ա. Գրիբոյեդովը):

Ի. Միմոնիչը գտնում էր, որ Ա. Գրիբոյեդովը հասկանալով, որ *Միրզա-Յաղուբը գերի չէր* և վաղուց՝ նախքան ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, դեռ պատանի հասակում էր Երևանի խանությունից գերեվարվել Պարսկաստան, ինչպես նաև, որ *նա այդ ժամանակ արդեն բարձր պաշտոնով ծառայության մեջ էր գտնվում շահի հարեմում՝* պետք է նրան համոզեր, որ նա հետաձգեր Պարսկաստանից հեռանալու մտադրությունը: *Ռուսական դեսպանատան վրա կատարված հարձակման և ջարդի պատճառներն Ի. Միմոնիչը տեսնում է Ա. Գրիբոյեդովի դեսպանակազմի որոշ անդամների գրգռող պահվածքի պատճառով պարսից արքունիքում ձևավորված գրեթե բացահայտ ատելության, երկու կանանց դեսպանատանը տղամարդկանց մեջ պահելու պատճառով մահմեդական հոգևորականության գրգռվածության, Ալլահ-Յար խանի կողմից վրեժի առիթ փնտրելու, պալատականների կողմից էլ Միրզա-Աբուլ-Հասանի վերոհիշյալ կոչի մասին հանկարծ հիշելու և շահին գոհացնելու հարցերի հավաքական ամբողջության մեջ: Նա սխալ է համարում նաև Ա. Գրիբոյեդովի պահվածքը դեսպանատան մոտ հավաքված ամբոխի առջև՝ գտնելով, որ նա պետք է արգելեր իր աշխատակիցներին նույնիսկ պատուհանից երևալ ամբոխի աչքին:*

Ռուս իրականության մեջ տեղ է գտել նաև դեպքի շուրջ վերոհիշյալից մի փոքր տարբերվող այլ տեսակետ: *Չխորանալով Ա. Գրիբոյեդովի հանդեպ պարսից արքունիքի ատելության պատճառահետևանքային հանգամանքների մեջ՝ ռուսական դեսպանակազմի քարտուղար Կ. Բողեն եղեռնագործության պատճառը համարում է հարեմներում պահվող ռուսահպատակ գերիների հանձնման շուրջ Ա. Գրիբոյեդովի ներկայացրած համառ պահանջների նկատմամբ շահի և պալատականների դժգոհությունը:* Նա ևս հաստատում է դեսպանատանից առաջին արձակած գնդակից մի պարսիկի գոհվելու, դրանից ամբոխի առավել գրգռվելու և զրոհի մասին վկայությունները: Կ. Բողեն փառաբանում է Ա. Գրիբոյեդովի հայրենասիրությունը, ազնվությունը, պարսիկներին և անգամ շահին չզիջելու համառությունը՝ նրան համարելով

խսկական պետական մարդ⁷⁴: *Կ. Բողենի վերոհիշյալ տեսակետներն ու բնութագրումները հետագայում լայնորեն օգտագործվում են խորհրդային պատմագիտության կողմից Ա. Գրիբոյեդովի գործունեությունը Պարսկաստանում ներկայացնելու և նրա նահատակության մեջ մեղավորներ և քաղաքական դրդապատճառներ հայտնաբերելու գործում:*

Ուշագրավ է 1829թ. մարտի 30-ին Ի. Պասկևիչի հղած նամակը Կ. Նեսսելրոդին, որում *կոմսը հանգամանորեն վերլուծում է* վրեժի նպատակով Պարսկաստանի դեմ թե՛ հարձակողական, թե՛ պաշտպանական պատերազմի դեպքում *Ռուսաստանի համար ստեղծվելիք անհաղթահարելի դժվարությունները*, մանավանդ՝ Օսմանյան Թուրքիայի դեմ ընթացիկ պատերազմի պայմաններում: *Նա առաջարկում է ընդունել պարսկական կողմի գոյումն ու ներման հայցադիմումները⁷⁵:*

Պարսկական կողմի տեսակետները համարյա համահունչ են ռուսական պաշտոնական տեսակետին⁷⁶: Արդյունքում՝ *ռուսական կողմը 1829թ. օգոստոսին հանդիսավոր կերպով ընդունում է Աբբաս-Միրզայի որդի Խոսրով-Միրզայի պատվիրակությանը, պարսկական կողմի ներկայացրած ներման խնդրանքը, և որպես փոխհատուցում ուղարկված «Շահ» արմաստը⁷⁷:* Ռուսաց կայսր Նիկոլայ I-ը խոստանում է *«հավերժ մոռացության մատնել թեհրանյան չարաբաստիկ դեպքը»⁷⁸, որն, ըստ Խոսրով-Միրզայի, «վիրավորել է ռուսաց և պարսից արքունիքներին հավասարապես»⁷⁹:*

Իրադարձությունների շուրջ պարսկական կողմի *ոչ պաշտոնական տեսակետ* կարելի է համարել դեսպանակազմի պարսիկ քարտուղարի վկայություններով կազմված վերոհիշյալ *«Ռազմագեկույց»-ը*: Այն, ինչպես նշել ենք, կարելի է համարել նաև դեպքերի արտացոլման *անգլիական ոչ պաշտոնական տեսակետ*: Հակառակ Ի. Մալցովի վկայությունների՝ այն մանրամասն է ներկայացնում դեսպանական առաքելության և Ա. Գրիբոյեդովի պահվածքը, թույլ տված վրիպումները, դեպքերի ըն-

74 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 210-211 (Կ. Բողենի հուշերը):

75 АКАК, h. VII, фшшт. 673, էջ 689-690:

76 Նույն տեղում՝ փաստ. 698, էջ 704-706 (Շարհ-Ալի շահի և Աբբաս-Միրզայի նամակները ռուսաց կայսրին):
77 "Персидское посольство в России 1829 года (По бумагамъ графа П.П. Сухтелена)", "Русский архивъ", Москва, 1889, №2, с. 209-260, տես նաև՝ Базиянц А.П., Над архивом Лазаревых (Очерки), նշվ. աշխ., էջ 122-125:

78 Орлик О.В., Государственные люди России..., նշվ. աշխ., էջ 213:

79 Базиянц А.П., Над архивом Лазаревых..., նշվ. աշխ., էջ 123:

թացքի և ողբերգական ավարտի շրջանցված հանգամանքները⁸⁰: **Պարսկական և ռուսական պաշտոնական տեսակետի նման այս փաստաթուղթը ևս բացառում է կատարվածի դրդապատճառների քաղաքական նկատառումները:**

Թեհրանյան դեպքերին առավել իրատեսական գնահատական տալուն մեծապես նպաստում են **քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրները և Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցների հուշերը:**

Դեսպանակազմի ջարդից փրկված **սկանատես հայազգի սուրհանդակ (ղուլամ) Համբարձումը** դեպքերի շուրջ տալիս է լրացուցիչ տեղեկություններ: Նա նշում է **գիշերները դեսպան Ա. Գրիբոյեդովի մոտ շահի հարեմից ինչ-որ վրացի կնոջ այցելությունների, նախքան ամբոխի հարձակումը մի քանի անգամ իրենց կողմից դեսպանին արված նախազգուշացումների և վերջինիս կողմից դրանք լուրջ չընդունելու, ծիծաղելու, դեսպանատան վրա գրոհի և այդ պահին իր խորհրդով ծրխնելույցի մեջ Ա. Գրիբոյեդովի թաքնվելու և զոհվելու հանգամանքները**⁸¹: Նրա հուշերում ոչինչ չի խոսվում ո՛չ հարեմի երկու հայ կանանց, ո՛չ էլ Միրզա-Յաղուբի մասին: **Գժվար թե Պարսկաստանում բնակվող և ռուսական կառավարության կողմից անհասկանալի պատճառներով Թավրիզի հյուպատոսի միջնորդությամբ հողանդական 120 չերվոնեցյան թոշակ ստացող մարդը**⁸², **նույնիսկ տարիներ անց, մոռացած լինելով դեպքերի վերոհիշյալ կարևոր մանրամասները:**

Հայկական աղբյուրների շարքում կարևոր տեղեկություններ է պա-

րունակում **Ա.Գ. Երիցյանի հրապարակումը**⁸³, որի նյութը, ինչպես նշել ենք, վերցված է Թեհրանից Ներսես Աշտարակեցուն ուղղված անանուն մի նամակից, որը հայտնաբերվել է Գ. Շերմազանյանի արխիվից: Ա. Երիցյանը Միրզա-Յաղուբի հետ կապված դեպքերի վերաբերյալ նշում է, որ նրան տարել են շահի մոտ, և քրիստոնյա դառնալու վերաբերյալ շահի հարցին նա պատասխանել է, թե Մանուչար և Խոսրով խաներն էլ են քրիստոնյա և իրենց տներում կազմակերպել են գաղտնի եկեղեցիներ: Շահը հրամայել է չտալ իր հարեմի կառավարիչ եղած Մանուչար խանի անունը, ում խորհրդով է իբր Միրզա-Յաղուբը գնացել Ա. Գրիբոյեդովի մոտ:

Գ. Շերմազանյանի հրապարակման մեջ **Միրզա-Յաղուբի մասին Ա. Երիցյանի վերոհիշյալ տեղեկությունները բացակայում են:** Գ. Շերմազանյանի հաղորդած տեղեկությունների **արժեքը կարևորվում է նրանով, որ, ի տարբերություն մյուսների (Ի. Միմոնիչ, Կ. Բողե), նրանցում վկայակոչվում են դեպքերի ժամանակակիցների և սկանատեսների կոնկրետ անուններ, ովքեր այդ ժամանակ կենդանի էին: Բացի այդ՝ իր տեղեկությունները նա համադրել է իրար, անձամբ եղել է ռուսական ավերված դեսպանատանը և ուղեկցորդների նկարագրություններով վերակազմել է իրադարձությունների ընթացքը:** Նույնպես չքաղաքականացնելով կատարվածը՝ Գ. Շերմազանյանը կատարում է մի ուշագրավ վերապահում. «**Ես արդեն խոստովանում եմ, որ չեմ դիմելու պաշտոնական թղթակցություններին և նույնիսկ Պարսից պատմութեանը, որ միշտ զինքն արդարացնելու նպատակով իր կողմն է տաշում, իսկ Ռուսաց պատմիչներն էլ՝ ինչ լսել են այն ժամանակը Պարսից պաշտոնական թղթակցություններից, այն են փչում. այլ ես առաջ եմ բերելու ներկայ եղողներից և սկանատեսներից լսածներս, որոնք թևն մեծ հակասություններ ևս ունենան վերոհիշյալ երկու տեղությունների պաշտոնական թղթակցություններին, այսու ամենայնիվ թողնում եմ ընթերցողների դատողութեանը՝ ընտրել ճշմարիտը**»⁸⁴:

Գ. Շերմազանյանի հաղորդած մանրամասները բացակայում են Ի. Մալցովի և «Ռազմագեկույց»-ի տեղեկություններում: Նշենք միայն խիստ կարևորները: Այսպես, Գ. Շերմազանյանը նշում է ռուսների կողմից հայտնաբերված **գերիներին հարցաքննելուց հետո ըստ ցանկության ազատ արձակելու վերաբերյալ շահի կողմից Մանուչար խանին տված**

80 Грибоедов. Его жизнь и гибель... "Реляция происшествий...", նշվ. աշխ., էջ 151-184 (Ռուստեմ բեկի կողմից դրամական շորթումները (էջ 152-153), Ղազվինում սեյդի ձեճը (էջ 155-156), Ռասսաբադում ձերուռու ձեճը (էջ 157), Ա. Գրիբոյեդովի իր անգուսպ աշխատակիցներին Թավրիզ հասնելուց հետո հետացնելու խոստումը և անհետևանք թողնելը (էջ 158), Ա. Գրիբոյեդովի կողմից շահի պալատում ընդունելության ժամանակ արարողակարգի խախտումները և այդ առումով հղած բողոքի հայտագիրը (էջ 162), մի պարսիկի կողմից վատ վարքի համար Ա. Գրիբոյեդովի ծառա Ալեքսանդրին ձեծի ենթարկելը (էջ 162-163), ռուս կազակի օդու շիճը պատահաբար ջարդած պարսիկի դաժան պատիժը հրապարակայնորեն (էջ 162-163), շահին և արքունիքին հատկացված ռուսական նվերների առաքման անկազմակերպվածությունն ու ուշացումը (էջ 163-164), խնդրանքներով դիմող հայերի կողմից իրեն «չզգվեցնելու» համար դեսպանատնից Ա. Գրիբոյեդովի դուրս չգալու (էջ 164), գերիներին ժամանակին փողով գնածներին ազատելու դիմաց հատուցում չտալու (էջ 164), Միրզա-Յաղուբի և երկու կանանց հետ կապված իրադարձությունները (էջ 166-174), Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանանց բաղնիք ուղարկելու և դրա հետևանքով ժողովրդի և հոգևորականության գրգռվելու (էջ 174), դեսպանատան վրա գրոհին նախորդած իրադարձությունների և դեսպանակազմի կործանման շատ մանրամասներ (էջ 175-184) և այլն): Հարկ է նշել, որ թվարկված դեպքերի առնչությամբ Ա. Գրիբոյեդովի կողմից գնահատականներ տալու վերաբերյալ փաստաթղթեր կամ վկայություններ հայտնի չեն:

81 Հ. Ա. Գրիբոյեդովի սպանությունը (Նրա ծննդեան 100-ամյա տարեդարձի առիթով), նշվ. հոդված, 1895, №№ 2, 3:

82 Շերմազանյանի Գալուստ, Նիսբեր ազգային պատմութեան համար..., նշվ. աշխ., էջ 82:

83 Ерицов А.Л., "О причинах" убийства Грибоедова", նշվ. աշխ., էջ 28:

84 Շերմազանյանի Գ. Նիսբեր ազգային պատմութեան..., նշվ. աշխ., էջ 82:

հրամանի մասին: Ալլահ-Յար խանի հարեմի կանանց խնդիրը, ըստ նրա, ծագել է Միրզա-Յաղուբի կողմից նախքան Ա. Գրիբոյեդովից ռուսահպատակություն խնդրելը, և որ հենց շահն է կանանց հարցով Միրզա-Յաղուբին ուղարկել դեսպանի մոտ: Նա նշում է նաև Մանուչար խանի տանը վերջինիս, Խոսրով խանի և Միրզա-Յաղուբի գաղտնի հավաքների ու երկար զրույցների մասին, որոնք դարձյալ կատարվել են նախքան ռուսական դեսպանատանը Միրզա-Յաղուբի ապաստանելը: Միրզա-Յաղուբի խուզարկված և թալանված բեռների հարցում Ալլահ-Յար խանի պալատում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ի. Մալցովը շահի պալատականներին մեղադրել է գողության մեջ, ինչն ավելի է վրդովել պարսկական կողմին:

Հեղինակը նշում է Միրզա-Յաղուբի ողջ ունեցվածքը, գանձերը, թանկարժեք ձեռագրերը ռուսների կողմից համառորեն պահանջելու, Շահ-Աբդուլ-Ազիմ ուխտատեղիում պատսպարվելու համար Մանուչար խանի կողմից Միրզա-Յաղուբին արված հորդորների, վտանգի շուրջ զգուշացման նպատակով երեք անգամ իր զարմիկ Սողոմոն (Սուլեյման) Մելիքյանին Մանուչար խանի կողմից դեսպանատուն ուղարկելու, հեռանալու առաջարկը դեսպանի կողմից մերժելու, դեսպանատան գինովցած զինվորների գրգռող պահվածքի, առաջինը դեսպանատանից արձակված կրակոցով 15-ամյա պարսիկ պատանու զոհվելու, դեսպանատան պարսից պահակազորը հայազգի հրամանատար Յաղուբ-Սուլթանի գլխավորությամբ դեսպանատանից դուրս վրոնդելու, ոչ թե ներսում, այլ դեսպանատան առջև Սողոմոն Մելիքյանի նահատակվելու, դեպքերի միայն 4-րդ օրը շահի հրամանով դիակները թաղելու և 6-7-րդ օրը թաղած տեղից Ա. Գրիբոյեդովի դին հանելու և առանձնացնելու հանգամանքները: Կատարված ոճրագործության մեջ Գ. Շերմազանյանը մեղադրում է ոչ թե շահին, այլ զանազան սադրիչ և գրգռող լուրեր տարածող որոշ պալատականների⁸⁵:

Հայկական մեկ այլ աղբյուր նշում է, որ ծառաների հետ փրկված Ի. Մալցովը, ինչ-որ սարքազի շատ բան խոստանալով, վերջինիս կողմից թաքցվել է սնդուկի մեջ⁸⁶:

85 Շերմազանյան Գ., Սիբեր ազգային պատմություն... ևշվ. աշխ., էջ 77-103 (Միրզա-Յաղուբի ունեցվածքի պահանջը հմտ. Պարսկաստանում հազվագյուտ ձեռագրերի և գանձերի հայտնաբերման և ձեռքբերման համար կայսերական հրամանի հետ, որի կատարումը նա դրվել էր Ա. Գրիբոյեդովի վրա):

86 Русско-армянское сотрудничество... Вестник архивов Армении, ևշվ. մոդ., փաստ. №187, էջ 248-249 (վաճառական Եզրը Բեժնի՝ 1829թ. փետրվարի 13-ի նամակը Դ. Թամանյանին և իր եղբայր Գերասիմին):

Թեհրանյան իրադարձությունները քաղաքական տեսանկյունից չըդիտարկող հայկական մեկ այլ աղբյուր է դեպքերի ժամանակակից «Մանուել վարդապետ Գյումուշխանեցու հիշատակարանը»⁸⁷, որն անտիպ է և, ինչպես նշվել է, միայն մի փոքր բաժինն է հրապարակվել Բարգեն վարդապետի կողմից: Մանուել վարդապետը գրում է. «...Իսկ անգուսպ պարսից սրիկայք, շեղք (շեյխերը - Վ.Ս.), ուլամայք, տեսին, որ իրենց ըստ հաճոյս սեպհականեալ զաղջկունս և զկանայս, յետս պահանջին և առնուն, խռովութիւնս յարոցեալ մտանեն ի բնակարան դեսպան Գրիպայեդովին, ի 1829 ամի կոտորեն զամենայն ի տան նորին եղիպսն, սպանանեն նաև զինքն զդեսպանն: Տեսեալ ծերունի Քեթալի Շահն (Ֆաթի-Ալի - Վ.Ս.) և ժառանգ Ապպաս-Միրզայն և այլ խոհական իշխանավորք, թե տակավին առաջի պատերազմի վերքն չառողջացուցեալ, երկրորդին դուռն մեծ բաց լինի ի պատճառս անուպայից...»⁸⁸:

Հայկական աղբյուրների շարքը եզրափակենք շահի կազակային բրիգադի նախկին հրամանատար Կոստզովսկու արխիվից հետագայում հայտնաբերված մի փաստաթղթով, որը գրի է առել նույն բրիգադի շտաբի պետ հայազգի Մարտիրոս խանը՝ ռուսական դեսպանատան գրոհի ժամանակ նահատակված Սողոմոն Մելիքյանի (Մանուչար խանի զարմիկի) եղբորորդի, գեներալ (սարթիպ), նույնպես Սուլեյման Մելիքյան անունը կրող մեկի պատմածի հիման վրա⁸⁹: Վերջինս Միրզա-Յաղուբին ներկայացնում է որպես Թիֆլիսի գավառից գերված վրացի, իսկ Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանանց փոխարեն հիշատակում է անձամբ Ա. Գրիբոյեդովի մոտ եկած և ապաստան խնդրած վրացի մի կնոջ մասին (հմտ. Համբարձումի վկայության հետ - Վ.Ս.): Ի պատասխան իր հորեղբայր Սուլեյման Մելիքյանի կողմից Ա. Գրիբոյեդովին համառորեն ուղղված խնդրանքներին՝ դեսպանը, բոլոր հայերին վախկոտ համարելով, հայտարարել է, որ ինքը ոչնչից չի վախենում:

87 ՀԱԱ, Արխիվ Գյուտ Ադանյանի, ֆոնդ 332, ցուց. 1, գործ 526, թերթ 86-87:

88 Բարգեն Վարդապետ, «Մանուել վարդապետ Ա.Ս. Գրիբոյեդովի մասին (1795-1829), ևշվ. աշխ., էջ 161-162:

89 Петров Г.М., "Новые материалы об убийстве А.С. Грибоедова", ևշվ. աշխ., էջ 146-165 ("Из архива Косоговского, 30 июля 1897г., "Сведения об убийстве в Тегеране российского императорского чрезвычайного посланника и полномочного министра при дворе персидском Грибоедова, доставленные сартипом князем Сулейман-ханом Меликовым, которого родной дядя князь Сулейман-хан Меликов был убит в тот же день в русской императорской миссии вместе с покойным Грибоедовым и прочими членами русской миссии"): Գ. Պետրովը, հենվելով ազգագրագետ Ա. Սմերդինսկու և հնագետ Գ. Պրոգրիսկու պատմածի վրա, ներկայացնում է ուն «Ս»-ի և Ի. Մալցովի միջև 1875թ. Նիցցայում կայացած մի անհավանական ցրույցը, թե իբր, Ի. Մալցովի պատմելով, ինքը փրկվել է իր ծառայի կողմից իրեն գորգի մեջ փաթաթելու և սենյակի անկյունում կանգնեցնելու շնորհիվ: Հայտնի է, սակայն, որ ռուսական դեսպանատունը թալանվել է ցարի ժամանակ: Որտե՞ղ է հայտնվել այդ դեպքում Ի. Մալցովը:

Կատարված իրադարձություններում իր տոհմակիցների մասնակցությունն ու դերը ակնհայտորեն կարևորելու միտումով Մուլեյման Մելիքյանը նշում է, որ դեսպանի հետ կողք կողքի մինչև վերջ մարտնչելով նահատակվել է իր հորեղբայրը, **իսկ Ա. Գրիբոյեդովը գնդակահարել է 18 պարսիկների: Պարսիկները, ըստ նրա, շահին համոզել են ծածուկ թաղել սպանվածներին և ռուսական կողմին ստել, թե իբր նրանք փախուստով փրկվել են, բայց իր պապ Մանուշար խանն է շահին համոզել, որ այդ քայլով ռուսներին ավելի չթշնամացնեն իրենց հետ:** Կըրսուսեր Մուլեյմանի վկայությամբ դեսպանի դին, ում պարսիկի տված տեղեկության հիման վրա, **դեսպանատան զմռսած ջրհորից գտել է իր քենի Գորգին Ջուղայեցին և տեղափոխել հայկական եկեղեցի⁹⁰:**

Ռուսական դեսպանական առաքելության ձախողման վերաբերյալ աղբյուր է համարվում Պարսկաստանի **Ռուստամբադ գյուղի ավագ, ծերունի Ղանթար Ալիի պատմածների հիման վրա 1958թ. «Էթթելաթ» թերթում** լույս տեսած մի հրատարակում, որում խոսվում է Թեհրանի գլխավոր մզկիթում **մտտթեհիդ (մուջթեհիդ – Վ.Ս.) Միրզա-Մեսիհի կողմից Ա. Գրիբոյեդովի դեմ հայտարարված մահավճռի մասին⁹¹:**

Մեր կողմից փաստենք, որ Ա. Գրիբոյեդովի մեծապետական պահվածքի դրսևորումներն անուղղակիորեն հաստատվում են նաև վերադասներին հղած նրա նամակներով⁹²: **Նա գիտակցում էր, որ իր հանդեպ շահի և Աբբաս-Միրզայի վերաբերմունքը պայմանավորված էր իր թիկունքում կանգնած հաղթող Ռուսաստանի հանդեպ ունեցած վախով,** ինչը վկայվում է **Թավրիզից և Թիքմեդաշից Պ. Ռենենկամպֆին Ա. Գրիբոյեդովի** հղած երկու նամակներով⁹³:

Ա. Գրիբոյեդովի ժամանակակից գեներալ **Ն. Մուրավյով-Կարսկին** թեհրանյան ողբերգության պատճառների վերաբերյալ **ներկայացնում է 3 կարգի տեղեկություններ⁹⁴,** ըստ որոնց՝ **1) Ա. Գրիբոյեդովը մեղավոր**

է նախարարության հրահանգներից շեղվելու և գործերը վարել չկարողանալու համար 2) Ա. Գրիբոյեդովը կնամոլության պատճառով է գրբգռել պարսիկներին 3) Ամենի մեղավորը Ա. Գրիբոյեդովի ծառա Ալեքսաշան է: Գեներալն Ա. Գրիբոյեդովի մեկնումը Պարսկաստան համարում է մենամարտ ողջ Պարսից տերության դեմ և գտնում է, որ Ալլահ-Յար խանն է ոտքի հանել ժողովրդին: Ն. Մուրավյով-Կարսկին կատարվածի մեղավոր է համարում շահին, արքունիքին և անգլիացիներին՝ Ալլահ-Յար խանի գործողությունների մասին տեղյակ լինելու և չկանխելու համար, և նույնպես նշում է, որ նրանք չէին սպասում այդպիսի ողբերգական ավարտի՝ մտածելով, որ ամեն ինչ կավարտվի միայն դեսպանին ահաբեկելով և առավել զիջող դարձնելով: Ն. Մուրավյով-Կարսկին ևս նշում է հայկական եկեղեցում պատսպարվելու համար հայերի կատարած առաջարկին Ա. Գրիբոյեդովի՝ առելությամբ վերաբերվելու և մերժելու մասին: Գեներալի պնդմամբ Ի. Մալցովը, 50 թումանով կաշառելով մի հայի, փախել է շահի պալատ և այնտեղ թաքնվել մի սնդուկի մեջ:

Հարկ է փաստել, որ, բացառությամբ Ի. Պասկևիչի՝ Կ. Նեսսելրոդեին ուղղված նամակում տեղ գտած հաղորդման, մնացած փաստաթղթերում Պարսկաստանում **անգլիացիների դիվանագիտական գործունեության վերաբերյալ հիշատակումները չեն առնչվում առաքելության տապալման և Ա. Գրիբոյեդովի սպանության հանգամանքներին, իսկ Ի. Պասկևիչը հնարավոր չի համարել նաև այն, որ անգլիացիները մտադիր են եղել ոչնչացնել ռուսական առաքելությունը: Գտնելով Պարսկաստանում Արևելա-հնդկական ընկերության դեսպան Ջ. Մաքդոնալդի նամակից՝ անգլիացիներին ևս դուր չի եկել կատարվածը, մինչդեռ անգլիացի որոշ պաշտոնյաների անժխտելի մասնակցությունը թեհրանյան իրադարձություններին թույլ է տվել կատարվածում կարևորել անգլիական կառավարության շահագրգռությունները:** Մակայն արժե փաստել, որ ռուսական դեսպանակազմի ոչնչացման գործին անգլիական կողմի մասնակցության վերհանման խնդրում **հարկ է որոշակիորեն տարանջատել Պարսկաստանում անգլիական կառավարության որոշ ներկայացուցիչների և Արևելա-հնդկական ընկերության՝ ինչ-որ տեղ իրար հակասող դիրքորոշումները:** Մեր կարծիքով նշված նամակում խորհրդային հետազոտողների կողմից «քրեական բովանդակությամբ» ենթատեքստերի որոնումը **բոլորովին էլ չի հաստատում կատարվածում**

90 Петров Г.М., Новые материалы..., նշվ. աշխ., էջ 161:

91 Байбурди Ч., "Новое о гибели А.С. Грибоедова (По данным иранской печати)", նշվ. հոդվ., էջ 171:

92 Грибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, նշվ. աշխ., էջ 329 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. դեկտեմբերի նամակն Ի. Պասկևիչին, որում ռուսական գեներալ տարածած վախին է վերագրում իր հսկայական ազդեցությունն Աբբաս-Միրզայի և շրջապատի վրա և գտնում է, որ եթե արտգործնախարարությունը չպաշտպանի իրեն, ինքը հրաժարական կտա):

93 Նույն տեղում՝ էջ 332 (Ա. Գրիբոյեդովի՝ 1825թ. դեկտեմբերի 5-ի նամակը, որում նշում է շահի՝ վեճերից և անհամաձայնություններից խուսափելու մասին), էջ 333 (Ա. Գրիբոյեդովի՝ 1828թ. դեկտեմբերի 11-ի նամակը, որում նշում է, որ իրենք ուժով կարող են պարսիկներին ստիպել ճանաչելու իրենց մատնանշած ցանկացած սահմանները):

94 Грибоедов. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 138:

անգլիական կառավարության մեղսակցությունը: Հակառակ ասվածի՝ խորհրդային պատմագիտությունը մասնացույց է արել անգլիական կառավարության և նրանց բոլոր դիվանագետների մասնաբաժինը դեսպանակազմի ոչնչացման գործում⁹⁵:

Ասվածի ապացույցն է այն, որ ռուս-պարսկական հաշտության պայմանագրի շուտափույթ կնքման գործում **ջանք չխնայած անգլիական իշխանությունները դժվար թե շահագրգռված լինեին կոնկրետ այդ փուլում**՝ ընթացիկ ռուս-թուրքական պատերազմում թուրքերի պարտությունների պայմաններում, **հրահրել ռուս-պարսկական նոր պատերազմ, քանի որ վստահ էին, որ այն ևս հաջող չէր ընթանալու և կործանարար էր լինելու Պարսկաստանի համար, ինչն էլ կարող էր վտանգել անգլիական տիրապետությունը Հնդկաստանում:** Արևելա-հնդկական ընկերության նախարար-դեսպան **Ջ. Մաքդոնալդի առաջնահերթ խընդիրը անգլիական տիրապետության անվտանգության ապահովումն էր Հնդկաստանում և ոչ թե 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմում ի նպաստ թուրքերի գործելը, ինչին, դրան հակառակ, ձգտում էին Պարսկաստանում գտնվող անգլիական նվաճողական քաղաքականության կողմնակիցներ Հենրի և Ջորջ Վիլյոքները, բժիշկ Մաքնելյը, ովքեր հակառուսական քայլերի ջատագովներ էին**⁹⁶:

Ա. Գրիբոյեդովի սպանության գործում **անգլիական իշխանությունների և շահի մեղսակցության բացակայության մասին են վկայում** նաև Ջ. Մաքդոնալդի՝ 1829թ. փետրվարի 19-ին հաշվետվությունն Արևելա-հնդկական ընկերության քարտուղար (արտգործնախարար) **Ջորջ Սուինթոնին** և Ջ. Մաքդոնալդին ուղղված **Ֆարթ-Ալի շահի**, վարչապետ **Աբուլ-Վահաբ-Միրզայի** ու **Միրզա-Աբուլ-Հասան խանի** նամակները⁹⁷:

95 Пашуто В.Т., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, изд. 2-е, т. 1, с. 149, տես նաև՝ АКАК, к. VII, ф. 50, л. 652, էջ 672-673 (Պ. Մաքդոնալդը 1829թ. փետրվարի 21-ին Թավրիզից Միրզա-Աբուլ-Հասան խանին գրած նամակում խստորեն դատապարտում է կատարվածը և պահանջում է լիովին փոխհատուցում և բավարարում, ինչպես նաև կազմակերպիչների հանձնումը՝ պահանջելով բրիտանական կառավարությանը ներկայացնելու համար տրամադրել բացատրություններ, որից հետո իր կառավարությունը կորոշի հետագա հարաբերությունները Պարսկաստանի հետ), փաստ. 679, էջ 693-695 (Վ. Նեստլոդեի՝ 1829թ. ապրիլի 5-ի հրահանգներն իշխան Դոլգորուկովին, որում պատվիրում է խստորեն պահպանել Թուրքմենչայի պայմանագրի գլխավոր հոդվածները, չսկսել վարսիկների կրոնը, սովորույթները, ինքնասիրությունը ոտնահարող երկրորդական հարցերի վրա և նշում է անգլիական առաքելության դրական գործունեությունը Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո, զովարանում է նախարար Մաքդոնալդի ազնվածի բնավորությունն ու խորհուրդ է տալիս ձեռք բերել նրա բարեկամությունը):

96 Аринштейн Л.М., "Новые данные об обстоятельствах гибели Грибоедова (по английским источникам)", изд. 2-е, т. 1, с. 225-233, նույնի՝ "Персидские письма по поводу гибели Грибоедова", изд. 2-е, т. 1, с. 114-122:

97 Аринштейн Л.М., "Персидские письма по поводу гибели Грибоедова...", изд. 2-е, т. 1, с. 119-132:

Գաղտնիք չէ, որ Անգլիան և Ռուսաստանը Մերձավոր Արևելքում մրցակից պետություններ էին, և Պարսկաստանում նրանց պայքարն առավել սուր էր, սակայն տվյալ իրավիճակում անգլիացիները, չնայած առիթը բաց չէին թողնում Ռուսաստանի դեմ թուրք-պարսկական դաշինք ստեղծելու և օգտվելու ռուսական դեսպանի թույլ տված սխալներից ու վրիպումներից, ամեն դեպքում շահագրգռված չէին ռուսական դեսպանակազմը նման ձևով ոչնչացնելու հարցում: Անգլո-ռուսական վերոհիշյալ չդադարող մրցակցության հանգամանքները հետագայում խորհրդային և իրանական պատմագիտության⁹⁸ համար հիմք են հանդիսացել կատարվածի մեղսակից համարել Անգլիային:

Թեհրանյան ողբերգության մեջ թուրքական գործոնի առկայությունը ևս չի ապացուցվում փաստերով: Ընդհատ է, Օսմանյան Թուրքիան շահագրգռված էր, որ Պարսկաստանը կրկին մտներ Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ, սակայն, բացի դիվանագիտական որոշ ձեռնարկումներից, նա այդ երկրում չուներ այնքան ազդեցություն, որ կարողանար կազմակերպել և իրականացնել ռուսական դեսպանակազմի ջախջախումը և Ա. Գրիբոյեդովի՝ որպես «Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության գլխավոր մշակողի»⁹⁹, սպանությունը: Թուրքերն ու պարսիկները մահմեդական տարբեր և իրար թշնամի ուղղությունների հետևորդներ էին: Նշենք, որ նախ դեսպանի սպանությունը պարսից շիա ուսմունքում համարվում էր ծանրագույն մեղք և երկրորդ՝ երկու երկրների միջև թշնամանքն այնքան խորն էր, որ Օսմանյան Թուրքիայի դեմ Պարսկաստանն ավելի շուտ կդաշնակցեր Ռուսաստանի հետ, քան հակառակը. **Պարսկաստանում դեռ չէին մոռացել 1821-1823թթ. թուրք-պարսկական պատերազմից առաջ թուրքական տարածքներում պարսից շիա ուխտավորների հալածանքները, ստորացումները, ուխտագնացության ժամանակ շահի կանանցից մեկի շքախմբի խուզարկությունը, ինչպես նաև թարմ էր պարսիկների՝ 1826թ. ռուսների դեմ դաշնակցելու ջանքերին հակառակ կնքված ռուս-թուրք-**

98 Իրանական պատմագրության տեսակետների մասին տես՝ Байбурди Ч., "Новое о гибели А.С. Грибоедова...", изд. 2-е, т. 1, с. 171-173, Комиссаров Д.С., "Иранские авторы о гибели А.С. Грибоедова", изд. 2-е, т. 1, с. 188-195, Балаян Б.П., "Фальсификация истории гибели А.С. Грибоедова в современной иранской историографии", изд. 2-е, т. 1, с. 118-129, նույնի՝ "Иранская историография о гибели А.С. Грибоедова", изд. 2-е, т. 1, с. 183-189, նույնի՝ "Кровь на алмазе "Шах", изд. 2-е, т. 1, с. 116-141, նույնի՝ "Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России", изд. 2-е, т. 1, с. 231-244 (ըստ վերը նշված աշխատությունների՝ իրանական պատմագիտությունը կատարվածում, բացի Ա. Գրիբոյեդովից, մեղավոր է համարում նաև անգլիացիներին):

99 Исаакян А.В., "А.С. Грибоедов и Армения", изд. 2-е, т. 1, с. 157:

քական Արքերմանի համաձայնագրի փաստի հիշողությունը:

Նախքան Պարսկաստան մեկնելն Ա. Գրիբոյեդովը քաջաձանթ էր այնտեղ ռուսական դեսպանի պահվածքի և գործունեության վերաբերյալ հրահանգներին, որոնք, ըստ *հետազոտողների, արտաքին գործերի գերատեսչության ղեկավարի հանձնարարությամբ անձամբ մշակել էր Ա. Գրիբոյեդովը, և որոնք վերջնական տեսքի էր բերել Կ. Ռոդոֆինի-կինը*¹⁰⁰: “Проект инструкции, Посылаемому в Персию” հրահանգների “Упрочение мирных сношений” («*Խաղաղ հարաբերությունների ամրապնդումը*» - Վ.Ս.) և “*Покровительство персидским подданным служившим русским во время войны*» («*Պատերազմի ժամանակ ռուսներին ծառայող պարսկահպատակների հովանավորությունը*» - Վ.Ս.) բաժիններում խոսվում է համառությունը համեստությունից ու ներողամտությունից տարբերելու և Պարսկաստանի պետության դեմ հանցանք գործածներին, անկախ ռուսներին ցուցաբերած ծառայություններից, չպաշտպանելու մասին՝ նշելով, որ Պարսկաստանի պետության «տնային գործերում» օտարերկրյա ազդեցությունը միշտ ատելի է և կարող է ամենատհաճ դրության մեջ դնել¹⁰¹: Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ «Հրահանգներ»-ից դուրս են պետական պաշտոնյա Միրզա-Յաղուբի և հայրենիք վերադառնալ չցանկացող հարեմի երկու կանանց հարցերը, և այս դեպքում էլ է Ա. Գրիբոյեդովը շեղվել ցուցումներից¹⁰²:

Ա. Գրիբոյեդովի նահատակության գործում ռուսական կողմը, փորձելով շրջանցել Ա. Գրիբոյեդովի սխալները, իսկ պարսկական կողմը՝ արդարացնել շահական արքու-նիքին, *երկու կողմերն էլ, իրենց ձեռնառու կերպով, իրադարձություններում ակնհայտորեն առաջ են քաշել ամենը հայերի պատճառով (Միրզա-Յաղուբ, Գաղաշ բեգ, Միրզա-*

Նարիման Շահնազարյան, հարեմի երկու կանայք) կատարված լինելու հանգամանքները: Այսպես, Միրզա-Աբուլ-Հասան խանը Ջ. Մաքդունալդին գրած վերոհիշյալ նամակում բացահայտորեն մեղադրում է հայերին, *մասնավորապես՝ Գաղաշ բեգին*¹⁰³, *թե իբր նա է առաջինը կրակել ու սպանել մի պարսիկի, որ իբր հայերը փողոցներում վիրավորել են իսլամը, գրգռել բնակչությանը և նպաստել կողմերի բախմանը*¹⁰⁴:

Փորձենք բացել «*հայկական գործոնի*» վերաբերյալ փակագծերը: Միրզա-Նարիմանի՝ իբր «կաշառվելու» վերաբերյալ Ի. Մալցովի վկայությունն արդեն ներկայացրել ենք: *Նախ՝ Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանայք հայրենիք վերադառնալու խնդրանքով ոչ թե իրենց կամոք են դիմել Ա. Գրիբոյեդովին, այլ Ռուստեմ բեգն է նրանց բռնի ուժով բերել դեսպանի մոտ: Երկրորդ՝ կանայք սկզբում չեն ցանկացել հայրենիք վերադառնալ, բայց նրանց 2 օր «համոզելով» պահել են դեսպանատանը, և միայն 3-րդ օրն են կանայք տվել իրենց «համաձայնությունը», սակայն պարզ չէ, թե ինչու են շարունակել կապ պահել դրսում գտնվող Ալլահ-Յար խանի ծառաների հետ, որոնք փորձել են բաղնիք տանելու ճանապարհին փախցնել նրանց, ինչը չի հաջողվել: Երրորդ՝ ուշադրության չի արժանացել այն հանգամանքը, թե ինչ նպատակով էր կազմակերպվել բացառապես տղամարդկանցով լեցուն դեսպանատան ներսում կանանց բաղնիք տանելու իրողությունը:*

Լիովին դրական վերաբերվելով Միրզա-Յաղուբի կողմից հայրենիք վերադառնալու բնական ցանկությունը՝ նշենք, սակայն, որ դեսպանատանը նրան ապաստան տալու գործում էլ ակնհայտ են ոչ պատշաճ և ոչ խելամիտ պահվածքի դրսևորումները: *Օրինակ, Ա. Գրիբոյեդովը իրավիճակը չսրելու նպատակով պարտավոր էր վերադառնալու հարցում համառող Միրզա-Յաղուբին և հարեմի կանանց չպահել դեսպանատանը և հատուկ հսկողությամբ ուղարկել ինչ-որ ուխտատեղի (ինչպես առաջարկում էր Մանուչար խանը), կապվել Վրաստանի ռուսա-*

100 Прибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, с. 2, а. 2, а. 2. («Проект инструкции, Посылаемому в Персию», Вторая половина 1828, Петербург»), էջ 342-347, տես նաև՝ АКАК, т. VII, փաստ. 591, էջ 622-624 (Տիղուսավոր խորհրդակալան Ռոդոֆինիկինի՝ 1828թ. մայիսի 8-ի հաղորդագրությունն Ի. Պասկևիչին):

101 Прибоедов А.С., Сочинения, 1971, т. 2, кн. 2, а. 2, а. 2, նույն տեղում՝ էջ 343-344:

102 АКАК, т. VII, փաստ. 633, էջ 657-658 (Ի. Պասկևիչի՝ 1828թ. նոյեմբերի 23-ի գրությունը Կ. Նեսեյրոդեին: Նյնու ճավճավճածի և Ա. Գրիբոյեդովի ամուսնությունը ևս կատարվել է արտաքին գործերի գերատեսչության գործող արարողակարգի կոպիտ խախտումով: Ի. Պասկևիչը գրում է Կ. Նեսեյրոդեին, որ ինքը տեղյակ է առանց թույլտվության այդ ամուսնությանը, և նշում է, որ դա եղել է անպատշաճ և փոխանակ կայսեր հրամանով անմիջապես մեկնելու Պարսկաստան՝ Ա. Գրիբոյեդովը շտապ ամուսնացել է: Վերջինիս խնդրանքով Ի. Պասկևիչը ստիպված թույլատրել է այդ ամուսնությունը և խնդրում էր, որ արտաքին գործերի նախարարն այդ մասին հայտնի կայսերը): «Գրիբոյեդովի ողբերգական սպանությունը Թեհրանում» (թարգմ. – Վ.Ս.) հոդվածում վրաց հետազոտող Լ. Շենգելիան, անտեսելով բազմաթիվ ակնհայտ փաստեր, հակված է պնդել, որ Ա. Գրիբոյեդովին Իրանում դրանք էլ է գոլշություն, հետատեսություն և իր պարտականությունները կատարել է արժանապատիբներ (ըջջո՞՞ Մեծըջջո՞՞ շո՞՞՞ թյջջոջոջո ճո՞՞՞ջոջջոջո թյջջոջոջո թյջջոջոջո թյջջոջոջո): նշվ. հոդվ., էջ 452-478):

103 Գ. Շերմանյանը վկայում է, որ Դաղաշ բեգը (Աբրահամ Դաղաշյան Աստրախանցին) Թեհրան էր ժամանել դեպքերի նախորդ կենցաղից անց Թավրիզից բերելով դեսպանատան բեռները: Նրան հանդիպած Մոդոմոն Մելիքյանը խնդրել է դեսպանին համոզել լսելու Մանուչար խանի հորդորները, բայց դեսպանը կոպտորեն հրամայել է չմիջամտել իր գործերին (նշվ. աշխ., էջ 96-97): Մա նշանակում է, որ Դաղաշ բեգը չէր կարող առնչություն ունենալ դեսպանատան աշխատակիցների վատ պահվածքին, որովհետև երկար օրեր բացակայել էր Թեհրանից, իսկ Աբուլ-Հասան խանի հիշատակությունից բացի՝ ոչ մի աղբյուր, նույնիսկ «Ռազմագեկույց»-ը, չեն հիշատակում Դաղաշյանի կողմից կրակելու և պարսիկ սպանելու մասին: Դրա փոխարեն աղբյուրները նշում են վրացի հավատափոխ Ռուստեմ բեգի և կազակների գրգռող պահվածքի ու կրակ բացելու մասին:

104 Аринштейн Л.М., “Персидские письма по поводу гибели Прибоедова”, նշվ. աշխ., էջ 131:

կան կառավարչության հետ և այդ նրբին ու վտանգավոր հարցը լուծել վերևից եկող հրահանգների և բանակցությունների միջոցով: Գեսպանը պետք է նաև հենց այդ նույն գիշերը, երբ ամեն ինչ դեռ գաղտնի էր, Միրզա-Յաղուբին համոզեր հետաձգելու իր մտադրությունը՝ պատճառաբանելով, որ վերջինս ռազմագերի չէ, այլ բարձրաստիճան պաշտոնյա, և որ ինքն իրավասու չէ նման դեպքում առաջնորդվել Թուրքմենչայի պայմանագրի համապատասխան հոդվածով: Ռուս-պարսկական հարաբերություններում նոր լարվածություն թույլ չտալու համար հարկ է, որ նա հղում կատարեր միմիայն նոր ցուցումների սպասելու հանգամանքին: Աղբյուրներում դեսպանատան աշխատակիցների վատ կամ ամբարտավան պահվածքի շուրջ վկայությունները հիմնականում վերաբերում են կոնկրետ հավատափոխ վրացի Ռուստեմին, Ա. Գրիբոյեդովին, նրա ծառա և կաթնեղբայր Ալեքսանդրին, շուկայում հարբած կռիվ սարքած ռուս կազակին, իսկ Դադաշ բեգի, Միրզա-Նարիմանի և դեսպանակազմի հայ այլ անդամների անբարո պահվածքի մասին կոնկրետ փաստեր չեն հիշատակվում:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

1. Թուրքմենչայի պայմանագրից հետո հայերը քաղաքական իմաստով չստացան նույնիսկ այն նվազագույնը, ինչն ակնկալում էին ռուսների «ազատագրական առաքելության» հանդեպ դրսևորած իրենց հավատարմության և աջակցության դիմաց: Ներսես Աշտարակեցու և Ե. Լազարյանի նման ազգային ու հայրենամուտ գործիչներին ռուս-պարսկական պատերազմից հետո Այսրկովկասից հեռացնելը Ռուսաստանի գաղութային քաղաքականության շարունակությունն էր¹⁰⁵:

2. 8.000 հայ ընտանիքների ներգաղթի գործընթացի իրականացման առյուծի բաժինն իրավամբ պատկանում է անվանի հայրենասեր Ե. Լազարյանին: Թերությունների համար նրան մեղադրողները, այդ թվում նաև Ա. Գրիբոյեդովը, անտեսել են ռուսական կառավարության և Հայկական մարզային վարչության՝ գործից անտեղյակությունն ու դրան անպատրաստ լինելու հանգամանքները: Ներգաղթի գործում Ե.

105 Մատենադարան, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 167ա, չհրապարակված վավ.114 (01.07.1829թ. Քիչնից գրած նամակով Ներսես Խ. Լազարյանին հայտնում է, թե իշխան Ճավճավաձեին ազատել են Հայկական մարզի կառավարչի պաշտոնից և նշանակել են իշխան Վ. Բեհբուդյանին, և դա նրա կարծիքով արվել է այն հետին նպատակով, որ հետագայում էլ հայերի դժգոհության դեպքում պատասխանատուն լինի հայագրի: Խորին ցավ է հայտնում, որ չի գնահատվել հայ ժողովրդի անձկությունը կառավարության հանդեպ և, հակառակ դրան, մատնանշում է ռուսական իշխանությունների հալածական մղումները):

Լազարյանի «տոհմի հեղինակության» դերի՝ տեղ գտած լինել-չլինելու հանգամանքն ընդամենը խորամանկորեն շահարկված պատրվակ է եղել և կապված է եղել Ի. Պասկևիչի՝ սեփական դերն առաջնահերթ կարևորելու հերթական խարդավանքների հետ:

3. Ներսես Աշտարակեցու նման Ե. Լազարյանն էլ է նպատակ ունեցել Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի (Արցախի) խանություններում վերաբնակեցնել նախորդ դարերում այդ տարածքներից բռնությամբ տեղահանված բնիկ տերերին՝ հայերին, ու հնարավորինս վերականգնել ինքնուրույնության կամ ինքնավարության տարրեր (օրինակ՝ ազգային զինված ուժեր), քանի որ, ըստ երևույթին, իրենց տրամադրության տակ են ունեցել ռուսական իշխանությունների տված որոշակի գրավոր խոստումներ¹⁰⁶: Ռուսական կառավարության համար կարևոր էր թույլ չտալ հայերի դերի զգալի մեծացումը և Այսրկովկասում ունենալ հավատարիմ հպատակ, բայց միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված խառը բնակչություն¹⁰⁷:

4. Ա. Գրիբոյեդովն Ի. Պասկևիչի հանձնարարությամբ կատարել է Ներգաղթի կոմիտեի գործունեությունը վերստուգողի (ռևիզորի) և «վերլուծողի» դեր: Չլինելով տվյալ կոմիտեի և ոչ էլ Հայկական մարզային վարչության անդամ՝ նա ժամանակային առումով էլ չէր կարող ակտիվորեն մասնակցած լինել հայերի ներգաղթի գործին (գտնվում էր Պետերբուրգում): Նրա առնչությունները պարսկահայերի ներգաղթի գործընթացին դրսևորվում է նաև ռուսական կառավարության գաղութային քաղաքականությանը նպաստող մի քանի առաջարկներով, որոնք

106 Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը..., նշվ. աշխ., էջ 355-370 (Ալ. Երիցյանը հիշատակում է Ներսես արքեպիսկոպոսի ծոցագրպատում պահվող և նրա մասից հետո խորհրդավոր կերպով անհատացած մի փաստաթղթի մասին, որը, հավանաբար, պարունակում էր Ի. Պասկևիչի կողմից Ներսես Աշտարակեցու ռուսանպաստ գործունեությունը ոգևորելու և օգտագործելու նպատակով տրված ինչ-ինչ գրավոր խոստումներ), տես նաև General-фельдмаршал князь Паскевич..., князь Шербагов..., նշվ. աշխ., 1891, հ. III, էջ 320-321 (իշխան Շերբատովը նշում է, որ Ի. Պասկևիչը հայերի միջից արմատախիլ է արել այն թեթևամիտ երթադրությունը, թե իբր ցարական կառավարությունը, ոտնահարելով մահմեդականների շահերը, ցանկանում է վերածնել հայ ժողովրդին և հոգ տանել զերբանցապես հայերի մասին: Ի. Պասկևիչը Ներսես Աշտարակեցուն հանել է այդ մտրություններից: Հստ Շերբատովի Ի. Պասկևիչը լայն քաղաքական հայացքների ու մահմեդական բարձր առաքինությունների տեր հոգևորականությանը և հա տկապես Թավրիզից Ռուսաստան գաղթած մուջթեհիդ Ադա-Միր Ֆաթթահին հակադրել է վերոհիշյալ առաքինություններից գուրկ հայ հոգևորականությանն ու Ներսես Աշտարակեցուն):

107 Չորանյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺՀ դարի երկրորդ կեսին, նշվ. աշխ., էջ 18 (հեղինակն իրավացիորեն նշում է, որ դեռևս XVIII դարից այսրկովկասյան մահմեդական տիրակալների և ցեղերի հետ հարաբերություններում Ռուսաստանը, ինչպես և Վրաստանը, վստահ լինելով հայոց հետ նրանց շահերի անհամատեղելիությունը, հաճախ հենց լավատեղյակ հայերին էին վստահում իրենց դիվանագիտական բնույթի հանձնարարությունների կատարումը):

տնտեսական առումով¹⁰⁸ կարող էին ժամանակավորապես բարելավել ներգաղթողների վիճակը, սակայն քաղաքական առումով, նրանց վիճակը շարունակելու էր մնալ նույնը, և վերաբնակեցված քրիստոնյա հայերը շարունակելու էին մահմեդական բնակչության հեռ առնչվել նրանց շարիաթի օրենքներով, որոնք պահպանելու առաջարկներ էր անում Ա. Գրիբոյեդովը¹⁰⁹:

5. Ներկայացնելով հայ ժողովրդի հանդեպ Ա. Գրիբոյեդովի «ղրք-սևորած» սրտացավ ու կարեկից վերաբերմունքը՝ ուսումնասիրողներն առաջնորդվել են նախկին գերեվարվածների կամ գաղթեցվածների շահերի պաշտպանությամբ Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի հանդես գալու հանգամանքների շուրջ «հիշատակություններով», որոնք, սակայն, հիմնականում վերաբերում են միմիայն մահմեդական հարեմներում պահվող հայ, վրացի և գերմանացի կանանց հայտնաբերման և վերադարձնելու, ինչպես նաև աղերսներով դիմող հայերի կողմից նրան «չզզվեցնելու» իրողություններին:

6. Թեհրանում ռուսական դեսպանական առաքելության տապալման վերաբերյալ XIX դարի և XX դարի սկզբի համարյա բոլոր հրապարակումներում մինչխորհրդային հեղինակները ցարական իշխանություններին նաև չստորացնելու նպատակով պետական մակարդակով քաղաքական դրդապատճառներ չեն ներկայացրել: Իրավիճակը փոխվել է խորհրդային շրջանում. գաղափարական կապանքներով կաշկանդված հետազոտողները, ելնելով ժամանակի հրամայականից, Ա. Գրիբոյեդովին արդարացնելու և հայ-ռուսական դարավոր բարեկամության գաղափարն առավել հիմնավորելու համար փորձել են գրողի նահատակությունը պայմանավորել միմիայն քաղաքական դրդապատճառներով: Որպես մեղավորներ են նշվել շահն ու պարսից կառավարությունը և նրանց այդ քայլին դրդող Անգլիան¹¹⁰ ու Թուրքիան՝ որպես «ապացույց» բերելով դեպքերի ժամանակակիցների զեկուցագրեր,

հրահանգներ և հայտագրեր¹¹¹:

7. Ռուսական դեսպանական առաքելության անդամներին բարբարոսաբար կոտորելու ճանապարհով Պարսկաստանում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը հասնելու եղանակը ձեռնտու չի եղել ո՛չ շահին ու Աբբաս-Միրզային, ո՛չ էլ այս փուլում Անգլիային: Ռուս-պարսկական հարաբերությունների սրումը ձեռնտու էր Օսմանյան Թուրքիային, սակայն վերջինս ի վիճակի չէր նման բարդ ծրագիր մշակել և իրականացնել Պարսկաստանում:

8. Թեհրանյան ողբերգության պատճառները ևս հարկ է դիտարկել փոխկապակցված և մեկը մյուսից բխող պատճառների ամբողջության մեջ. կատարվածում որոշակի դերակատարություն են ունեցել Պարսկաստանի հակառուսական-փոխվրեժային (ռևանձիստական) և հակաղաջարական տրամադրությունների տեր անձինք ու մոլեռանդ հոգևորականները (Ալլահ-Յարխան, Միրզա-Աբուլ-Հասանխան, Հուսեյնխան, Միրզա-Մեսիհ և այլք), որոնք ահաբեկելու նպատակով կազմակերպել են ամբոխի ցույցը դեսպանատան առջև, ինչպես նաև կրքերը բորբոքող հակառուսական տրամադրությունների տեր որոշ անգլիացիներ (Վիլյուք եղբայրներ, բժիշկ Մարնեյլ և այլք), որոնք Պարսկաստանում ռուսական ազդեցությունը նվազագույնի հասցնելու գործում աջակցել են վրեժի ծարավ պարսիկներին: Այս խմբավորումների գործունեությանն ու ձեռնարկած քայլերին մեծապես նպաստել են Ա. Գրիբոյեդովի անհեռատես¹¹² ու մեծապետական պահվածքը և վերահսկողությունից

111 AKAK, h. VII, փաստ. 694, էջ 702 (Բ.Մայցովի՝ 1829թ. հունիսի 4-ի զեկույցն Ի.Պասկևիչին, որում հայտնում է Թավրիզում անգլիացիների կողմից Ա. Գրիբոյեդովի դիակին ընդառաջ չգնալու, Մաքդոնայդին հաճոյանալու նպատակով Աբբաս-Միրզայի կողմից դեսպանի աճյունին պատվներ չտալու և պարսիկներին անգլիացիների կողմից 5.000 հրացան և 7 թևառոթ տալու, անգլիացի սպաների կողմից Մահմուդ փաշայի բրդերին վարժեցնելու մասին), փաստ. 653, էջ 673 (Բ. Պասկևիչի՝ 1829թ. փետրվարի 23-ի նամակը Կ. Նեսսելրոդին, որում հնարավոր է համարում անգլիացիների մասնակցությունը կատարվածին, քանի որ զգում էին իրենց ազդեցության ոչնչացումը, սակայն հավանական չի համարում դեսպանակազմը ոչնչացնելու նրանց մտադրությունը), փաստ. 654, էջ 675 (Բ. Պասկևիչի՝ 1829թ. փետրվարի 23-ի հրահանգն Ամբուրգերին, որում պատվիրում է աչալբոթեն հսկել անգլիացիների և պարսիկների քայլերը), փաստ. 657, էջ 676 (Բ. Պասկևիչի՝ նույն թվականի մարտի 6-ի հրահանգը նույն Ամբուրգերին, որում, հանդիմանելով Թավրիզից փախչելու համար, նշում է, որ դրանով նա թույլ է տվել, որ Պարսկաստանում ուժեղանան Ռուսաստանի դեմ պատերազմի կողմնակիցների կուսակցության և անվստահելի անգլիացիների ազդեցությունը), փաստ. 688, էջ 698-699 (Իշխան Դուգորովովի՝ 1829թ. մայիսի զեկուցագրին Բ. Պասկևիչին, որում նշում է պարսից նախարարների անգլիացիների կողմից թշուշակալորելու, ռուսների անգլիացիներից ավելի մեծ ազդեցություն ունենալու անհնարինության մասին և հավատացնում է, որ նրանց նման ծախսեր անել պետք չէ, քանզի ռուսական զենքի հաղթանակներն արել են իրենցը):

112 Իրիբոեդ. Его жизнь и гибель..., նշվ. աշխ., էջ 104-105 (Բ. Դավիդովը նշում է չափազանց ինքնասիրահարված Ա. Գրիբոյեդովի կարուկ, համար պահանջները զիջողականությունից չտարբերելու և Մանուչար-խանի օգնականին, Միրզա-Յարուփ պեև, հայրենիք ուղարկելու խնդրանքը ժամանակին Մ. Մազարովիչի կողմից մերժելու և հարաբերությունները չարելու մասին, որից, Միրզա-Յարուփի և հարեմի կանանց հարցում, դաս չէր առել Ա. Գրիբոյեդովը):

108 AKAK, h. VII, փաստ. 618, էջ 642-644 ("Заниска о переселении Армянъ..."):

109 Նույն տեղում՝ փաստ. 623, էջ 647-649 (տե՛ս՝ քրիստոնյայի և մահմեդականի միջև դատական վեճերի մասին Ա. Գրիբոյեդովի կարծիքը, որտեղ ասված է. "Боимся-ли мы пристрастия мусульманскихъ судий? - но власть ихъ единственно основана на выборъ и доверіи народомъ... А где одинъ изъ тяжущихся христианинъ, то по мухаммеданскому шаро (духовный законъ), допускается до 6-ти свидетелей обоихъ вероисповеданий. Можно бы еще въ такомъ случае нарядить депутата отъ правительства...") (էջ 648):

110 Пашуто В.Т., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова", նշվ. աշխ., էջ 146-154, տե՛ս նաև՝ Шостакович С.В., "Дипломатическая деятельность А.С. Грибоедова, նշվ. աշխ., էջ 245-252, Балаян Борис, "Кровь на алмазе "Шах", նշվ. աշխ., էջ 116-133:

դուրս գտնվող նրա որոշ ենթակաների թույլ տված անվայելուչ գործողությունները:

1. Այսպիսով, տեղական ժողովուրդների, այդ թվում նաև հայերի նկատմամբ պետական ծառայող (չինովնիկ) Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը պայմանավորված էր ռուսական պետության հանդեպ այդ ժողովրդների դրսևորած հավատարմության և հպատակության ձևով ու չափով՝ հաճախ ուղեկցվելով մահմեդական ցեղերի շահերին հայ ժողովրդի իրավունքների ստորադասմամբ: Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը Կարագիադինից-Թուրքմենչայ, ինչպես նաև Պարսկաստանում նախարար-դեսպան նշանակված ժամանակաշրջանում հարկ է դիտարկել ռուսական նվաճողական քաղաքականության իրականացման տեսանկյունից և ոչ թե նրան համարել այդ քաղաքականությանը զոհաբերված անձ:

2. Փաստերով քննություն չեն բռնում հայանպաստ հողվածները Թուրքմենչայի պայմանագրում ներառելու և հայերի ներգաղթի գործում Ա. Գրիբոյեդովի կատարած «բացառիկ դերի» վերաբերյալ ցայսօր գերիշխող տեսակետները: Խորհրդային շրջանում հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության քարոզչության համատեքստում ռուս գրող, առաջադեմ, «հեղափոխական» հայացքների տեր Ա. Գրիբոյեդովը չպետք է ներկայացվեր որպես ընդամենը ռուսական կայսրապետական քաղաքականությանը սպասարկող պաշտոնյա: Ա. Գրիբոյեդովին Պարսկաստանում դեսպան նշանակելու հանգամանքը որպես քաղաքական աքսոր դիտարկելը փաստաթղթերով և հիմնավորված վկայություններով ապացուցված չեն:

3. Ռուսական դեսպանական առաքելության ձախողման հետ կապված իրադարձությունների համակողմանի և իրատեսական պատկերի ամբողջացումը հնարավոր է դառնում միայն դեպքերի վերաբերյալ քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրները՝ այլ վկայությունների և աղբյուրների հետ համադրական վերլուծության ենթարկելու արդյունքում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մինչխորհրդային ժամանակաշրջանի հեղինակները XIX դարի ռուս գրականության իրապաշտական թատերգության տաղանդավոր հիմնադիրներից Ա. Գրիբոյեդովին դիտարկել են որպես «Խելքից պատուհաս» հանճարեղ կատակերգության հեղինակ և բազմակողմանի զարգացած մարդ՝ սովորական մահկանացուին բնորոշ թերություններով ու բնավորության հակասական դրսևորումներով: XIX դարի 80-90-ական թվականներից սկիզբ է առել գրողի և նրա ստեղծագործության քաղաքականացման գործընթացը, ինչը պայմանավորված էր այդ պատմափուլի հասարակական-քաղաքական հոսանքների պայքարով:

1930-1940-ական թթ. խորհրդային ժամանակաշրջանում քաղաքական-գաղափարախոսական նպատակներով միակարծություն ձևավորելու իրամայականով և գրողի անձի արհեստական բացարձականացման ու գործունեության գերագնահատման շնորհիվ վերջինիս գործունեության հանդեպ պատմական մոտեցումները վերածել են պատմաքաղաքականի: Նման եղանակով կարծրատիպերի ստեղծումը բացասական է անդրադարձել գրողի անձն ու գործունեությունն իրատեսորեն արժևորելու գործընթացի վրա: Գրականագիտության մեջ հիմք է դրվել արհեստածին «գրիբոյեդովագիտությանը», որում ամրագրված բազում տեսակետներ հաստատագրվել են նաև պատմագիտության մեջ: Ռուս այլ դասականների հետ միասին Ա. Գրիբոյեդովը ևս ներկայացվել է որպես անհատականությունից գրեթե զուրկ «մարդ-դարաշրջան». խորհրդային գաղափարախոսական չափանիշներով այդպիսի գործիչները չպետք է ունենային թերություններ, իսկ լինելու դեպքում դրանց պատճառները կապվել են տվյալ դարաշրջանի բարքերի հետ:

Չնայած որ Այսրկովկասում Ա. Գրիբոյեդովը կարևոր դեր է կատարել ռուսական պետության քաղաքականության իրականացման գործում, սակայն, ի հաշիվ նաև հայ գործիչների վաստակի, անհարկի գերագնահատվել է նրա գործունեությունը: Նա ներկայացվել է որպես իր գաղափարներով «դեկաբրիստներից առաջ անցած» «հեղափոխական»

գործիչ, հայ և ընդհանրապես կովկասյան ժողովուրդների հոգատար բարեկամ, Թուրքմենչայի պայմանագրի և պարսկահայերի ներգաղթի հրահանգները կազմելու ու բուն գործընթացի կազմակերպիչ, դիվանագետի կատարելատիպ ու փայլուն տնտեսագետ և, վերջապես, ցարիզմի ծավալապաշտական քաղաքականությանն ու մեծ տերությունների «շախմատային մեծ խաղին» զոհաբերված անձ: Վերոհիշյալ տեսակետները, սակայն, քննություն չեն բռնում և չեն հիմնավորվում փաստերով:

Այսբանով հանդերձ՝ անհրաժեշտ ենք համարում հատուկ ընդգծել, որ Ա. Գրիբոյեդովի կյանքին ու գործունեությանը վերաբերող *խորհրդային պատմագիտության տեսակետների քննադատական վերաբերմունքն ամենևին էլ միտված չէ նսեմացնելու հիշյալ շրջանի ուսումնասիրողների ներդրումը* տվյալ հարցի հետազոտման մեջ. թեմային վերաբերող փաստական ու արխիվային նյութերի հայտնաբերման և ուսումնասիրման ասպարեզում *խորհրդային ուսումնասիրողների վաստակն իր ընդգրկումով վիթխարի է* և, միանշանակ, *արժանի մեծարանքի:*

Խորհրդային կարգերի փլուզումից հետո նախկինում ձևավորված կարծրատիպերը դեռ շարունակում են *իրենց ազդեցությունն ունենալ հետխորհրդային պատմագիտության վրա, իսկ նորանկախ պետությունների արդի որոշ հեռազոտողներ, այժմ էլ փորձելով Ա. Գրիբոյեդովի գործունեության ու հատկապես վախճանի հարցերը համապատասխանեցնել իրենց երկրների քաղաքական նպատակներին, շարունակում են մեղանչել պատմության առաջ և ներկայացնել խեղաթյուրված կամ չհիմնավորված տեսակետներ:*

Ա. Գրիբոյեդովի կյանքի և գործունեության մեջ հակասականությունների բազմաթանկությունը թույլ է տալիս փաստել, որ ցանկացած խնդրի շուրջ եզրահանգումների համար *միայն մեկ կամ երկու պատճառների կամ հանգամանքների կարևորումը դարձյալ կարող է հանգեցնել միակողմանի գնահատանքի:* Նրա գործունեության հետ կապված հանգուցային հարցերը *հարկ է գնահատել հայտնի պատճառների կամ հանգամանքների հավաքական ամբողջության մեջ:*

Ա. Գրիբոյեդովի (ինչպես նաև գերագնահատված այլ դասականների) կյանքի և գործունեության դրական ու բացասական կողմերի դրսևորումների հանդեպ անաչառ մոտեցման և իրատեսական վերաարժևորման անհրաժեշտությունը պահանջում է *նրան դիտարկել ոչ թե որպես «հեղափոխական-ազնվականական փուլը» մարմնավորող գործ-*

չի կատարելատիպ, այլ նախևառաջ՝ որպես իր ժամանակաշրջանի հոռի բարքերը, բացասական երևույթները ծաղրող և քննադատող անհատականություն:

Ա. Գրիբոյեդովի գրական-մշակութային գործունեությունը սերտորեն կապված է Պարսկաստանում և Այսրկովկասում անցկացրած տարիների հետ: Հիմնավոր չեն այն պնդումները, *թե նրա «Խելքից պատուհաս» հանճարեղ կատակերգությունը, մի քանի հայտնի բանաստեղծությունները և ողբերգությունների՝ մեզ չհասած նախագծերը ստեղծվել են դեկաբրիստական գաղափարների ազդեցության ներքո:* Իրականությունն այն է, որ մտերիմ լինելով դեկաբրիստներից ոմանց հետ և ամենայն հավանականությամբ ծանոթ լինելով նրանց ծրագրերին՝ *Ա. Գրիբոյեդովը չի ընդունել նրանց խռովարարական մարտավարությունը.* նա ո՛չ կիսատ ու անկատար, ո՛չ էլ ակտիվ կերպով չի գործակցել նրանց հետ: *Հետազոտողների կողմից Ա. Գրիբոյեդովի աշխարհայացքը նեղացնելը և նեղ դավադրական շրջանակներում ներկայացնելը զգալիորեն վնասել ու աղճատել է նրա՝ որպես գրողի և ազատ մտածող մարդու, էությունը:*

Համոզիչ չեն Կովկասում «գործած» դեկաբրիստական գաղտնի խմբակների հետ Ա. Գրիբոյեդովի ունեցած կապերի շուրջ խորհրդային շրջանում ձևավորված տեսակետները: *Ա. Գրիբոյեդովն Այսրկովկասում կապեր է ունեցել միմիայն այստեղ արտորված և իրեն ծանոթ դեկաբրիստների հետ՝ փորձելով օգնել ծանր վիճակում հայտնվածներին:*

Ապացուցված չէ այն տեսակետը, թե իբր “Радамист и Зенобия” ողբերգության գաղափարն ու մտահղացումը Հարություն Ալամդարյանը քաղել է Ա. Գրիբոյեդովի նույնանուն գործի նախագծից: *Հարություն Ալամդարյանի ստեղծագործությունը եղել է ավարտուն գործ, իսկ Ա. Գրիբոյեդովինը՝ ընդամենը մեզ չհասած նախագիծ: Փաստերով վկայված չէ նաև, որ այն երբևէ շրջանառվել է Այսրկովկասում, և որ Հ. Ալամդարյանն էլ երբևիցե ծանոթ է եղել դրան:*

Մերժելով «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը որպես բացառապես Ա. Գրիբոյեդովի տնտեսագիտական մտքի արգասիք հանդիսանալու շուրջ տեսակետները՝ նշենք, որ հարկ է այն դիտարկել որպես մի աշխատանք, *որն իրագործվել է իշխանությունների կողմից Այսրկովկասի տնտեսական նվաճմանը միտված նպա-*

տակների, Ի. Պասկևիչի բանավոր ցուցումների, Ռուսաստանից գործուղված տնտեսագետների և այլ մասնագետների կողմից տարածաշրջանում ձեռնարկած համակողմանի հետազոտությունների տվյալների, ապա դրանց հիման վրա Ա. Գրիբոյեդովի նախաձեռնությամբ «Նախագծի» ստեղծման գործում ներգրավված Պ. Չավիլեյսկու կողմից տնտեսագիտական չափանիշներին համապատասխան ձևակերպելու և հետո միայն՝ Ա. Գրիբոյեդովի կողմից գրագետ կազմելու և խմբագրելու արդյունքում:

Ճիշտ չէ «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը ներկայացնել նաև որպես Ա. Գրիբոյեդովի հակաճորտատիրական և կապիտալիստական (ապրանքադրամական) հայացքների ու տնտեսագիտական մտքի փայլուն դրսևորում, քանի որ դրանում անտեսված են ապրանքադրամական և ազատ շուկայական հարաբերություններին բնորոշ տնտեսագիտական և իրավաբանական տեսանկյուններից հույժ կարևոր շատ հարցեր: Տնտեսական ոլորտին առնչվող կայսերական հրամանագրերի հետ «Նախագծի» ունեցած հակասությունները, Այսրկովկասի իշխանությունների ազդեցության և դիրքերի թուլացման վտանգը, երկրամասում Ի. Պասկևիչին երկրորդական դերի հատկացման հանգամանքը, «Նախագծի» հակաանգլիական ուղղվածությունը և, ի վերջո, դրա ուսուցիական բնույթն են հանգեցրել «Նախագծի» մերժմանը:

Փաստված է, որ պետական-դիվանագիտական ծառայությունն ի սկզբանե անցանկալի է եղել Ա. Գրիբոյեդովի համար, և նա մշտապես փորձել է ազատվել «դիվանագիտական վանքից» ու զբաղվել իրեն հաճելի գրական-մշակութային գործունեությամբ: Ըստ այդմ՝ Ա. Երմոլովի ազդեցության տակ դիվանագիտական ծառայության վաղ փուլում (1818-1821թթ.) Ա. Գրիբոյեդովի դրսևորած պահվածքը նրան արժանացրել է արտաքին գործերի նախարարության դժգոհություններին և դիտողություններին, ինչի արդյունքում Ա. Գրիբոյեդովը հեռացվել է ռուսական դեսպանական առաքելության կազմից:

Ավելի շատ ազատ լինելու և իրեն հոգեհարազատ գրական-մշակութային գործունեությամբ զբաղվելու հարցում Ա. Երմոլովի և Ի. Պասկևիչի ցուցաբերած մոտեցումներով է պայմանավորված եղել Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը վերջիններիս հանդեպ: Ի. Պասկևիչի մոտ ծառայության մեջ մնալը եղել է հարկադրական քայլ, ինչն էլ իր հերթին

պայմանավորված է եղել ազատության մեջ գտնվելու համար գեներալին պարտական լինելու, ընտանիքի ֆինանսական քայքայված դրություներ բարելավելու, ծառայության մեջ բարձունքների հասնելու ձգտման և, ի վերջո, Ի. Պասկևիչի կնոջ զարմիկը լինելու հանգամանքներով: Այն պնդումները, թե Ի. Պասկևիչը 1826-1828թթ. իբր գտնվել է Ա. Գրիբոյեդովի գաղափարական ազդեցության տակ, փաստացի ապացուցված չեն:

1828թ. Թուրքմենչայի պայմանագրի տեքստն իրականում կազմվել է ռուսական կառավարության նախօրոք մշակած հրահանգներով, ինչը թույլ է տալիս պնդել, որ բոլոր, այդ թվում հայանպաստ, հողվածները պայմանագիր են մտել ոչ թե միայն Ա. Գրիբոյեդովի ջանքերի, այլ ռուսական գաղութային քաղաքականության նպատակները կառավարական հրահանգներով Այսրկովկասում իրականացնող Ի. Պասկևիչի ցուցումների, հայ գործիչների խնդրանքները և առաջարկները հաշվի առնելու և ռուսական դիվանագիտական աշխատակազմի միահամուռ ջանքերի ու հետո միայն՝ Ա. Գրիբոյեդովի կողմից գրագետ ձևակերպելու արդյունքում:

Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովին Ռուսաստանի լիազոր դեսպան նշանակելն իբրև քաղաքական արտորի և հավանական մահվան գիրկն ուղարկելու դիտավորություն տեսնելու վերաբերյալ տեսակետները ևս չեն ապացուցվում փաստերով:

Ա. Գրիբոյեդովի «բովանդակային մասնակցությունը» պարսկահայերի ներգաղթի գործընթացին ապացուցված չէ: Թուրքմենչայի պայմանագրից հետո՝ Պարսկաստանում եղած շատ կարճ ժամանակամիջոցում, նա հիմնականում զբաղվել է մահմեդական խսնորի ու ժողովրդի թողած գույքի հետ կապված ու նախկինում գերեվարված և մահմեդականների տներում պահվող քրիստոնյա անձանց որոնման, հայտնաբերման ու վերադարձի խնդիրներով: Ներգաղթի մեծածավալ գործընթացին Ա. Գրիբոյեդովի իրական առնչությունը սահմանափակվել է Ի. Պասկևիչի հանձնարարականով Ե. Լազարյանի ղեկավարած Ներգաղթի կոմիտեի գործունեության վերստուգմամբ (ռեվիզիա) և աշառու գնահատականներով, ինչպես նաև Ռուսաստանի գաղութային շահերից բխող առաջարկներով:

Փաստենք, որ հայերի և ընդհանրապես այլ ժողովուրդների հանդեպ Ա. Գրիբոյեդովի վերաբերմունքը պայմանավորված է եղել ռուսական

կայսրությանը նրանց ցուցաբերած հավատարմության և առավել օգտակար լինելու աստիճանով: Ա. Գրիբոյեդովի ազգայնական գաղափարները ձևավորվել են 1812թ. Հայրենական պատերազմի ժամանակ և զարգացում ստացել Ա. Երմոլովի մոտ ծառայության ընթացքում՝ կովկասյան ժողովուրդների վրա «թմբուկային լուսավորություն» տարածելու և ազատագրական նկրտումները դաժանորեն ճնշելու մեծապետական քաղաքականության իրականացման պայմաններում: Դիվանագիտական ծառայության ընթացքում Ա. Գրիբոյեդովի համար առաջնային են եղել ռուսական կայսրության շահերը: Նրա ազգայնական ու մեծապետական պահվածքի դրսևորումները և ներգաղթողների վիճակին հակասող առաջարկները թելադրված էին ռուսական կայսրապետական քաղաքականության շահերից:

Պարսկաստանում Ա. Գրիբոյեդովի թույլ տված ակնհայտ վրիպումները հետևանք էին այն բանի, որ բավական երիտասարդ հասակում զբաղեցնելով նախարար-դեսպանի պաշտոն՝ **Ա. Գրիբոյեդովը դրսևորել է ոչ թե դիվանագետին, այլ ավելի շուտ գրողին ու մշակութային գործչին հարիր զգացմունքային, միևնույն ժամանակ համառ, անզիջում և սեփական դիրքն ու արժանապատվությունը չափից դուրս կարևորող և ընդգծող պահվածք:**

Ա. Գրիբոյեդովն իր ենթակաների անվայելուչ գործողությունները չի կարողացել վերահսկել ու կանխել: Այս ամենը և Ա. Գրիբոյեդովի վարած «հարեմային դիվանագիտությունը» վերջինիս դեմ են տրամադրել և՛ պարսկական ժողովրդի մոլեռանդ ու իրենց թշվառ վիճակի հարցում ռուսներին մեղադրող հատվածին, և՛ տարածքային կորուստներից ու ռազմատուգանքի ծանրությունից զազազած իշխող վերնախավին, և՛ հետադիմական հոգևորականությանը, ինչից էլ օգտվել են հակառուսական տրամադրություններ ունեցող պարսկական և անգլիական խմբավորումները:

Այս փուլում հարկ է տարանջատել Անգլիայի իշխանությունների, Պարսկաստանում գտնվող անգլիացի առավել ռուսատյաց գործիչների և «Արևելա-հնդկական ընկերության» առանձին ներկայացուցիչների նպատակներն ու գործելակերպը: Ըստ այդմ՝ ճիշտ չէ 1829թ. թեհրանյան դեպքերը վերագրել բացառապես **Անգլիայի իշխանությունների մասնակցությանը**. Անգլիան, թեև շահագրգռված էր Մերձավոր Արևելքում իր գլխավոր մրցակից Ռուսաստանի դեմ թուրք-պարսկական հա-

մատեղ գործակցության հարցում, սակայն, **ռուս-պարսկական երկրորդ պատերազմում Պարսկաստանի պարտությունից հետո նոր պատերազմ վերսկսելու վերջինիս անկարողությունը, երկրում հակառաջարկական տրամադրությունների ուժգնացումն ու գահակալական կոիվների վրտանգը**, ինչպես նաև 1828 թվականից ընթացող **ռուս-թուրքական պատերազմում թուրքերի պարտություններն ու տարածքային կորուստներն Անգլիային վստահություն չեն ներշնչել՝ իրենց նպատակին հասնեն ռուսական դեսպանակազմը կոտորածի ենթարկելու ճանապարհով: Մեր կարծիքով ռուսական դեսպանակազմի ոչնչացումը չի մտել նաև անգլիական և պարսկական հակառուսական խմբավորումների ծրագրերի մեջ. խժոժությունները հրահրելուց հետո նրանք պարզապես չեն կարողացել վերահսկել իրավիճակը: Նշենք նաև, որ նրանք չէին կարող չզիտակցել այդ ամենի բացասական և ճակատագրական հետևանքներն իրենց երկրների համար:**

Թեհրանում ռուսական դիվանագիտական առաքելության տապալման պատճառների վերաբերյալ պարսկական և ռուսական կողմերի վկայություններում ու պաշտոնական տեսակետներում «**հայկական գործոնի» շուրջ տեղ գտած ակնարկները հիմնավոր փաստարկված չեն և երկուստեք թույլ տված սխալներն ու վրիպումները քողարկելու կամ արդարացնելու քաղաքական նպատակներ են հետապնդել:** Ասվածը հաստատվում է հայտնի փաստերի և վկայությունների հետ հայկական աղբյուրների համադրման և համակողմանի վերլուծության արդյունքում: **Մասամբ ընդունելով Ա. Գրիբոյեդովի և առաքելության որոշ անդամների մեղքը՝ մինչև խորհրդային շրջանում արդարացվել է կատարվածի շուրջ ռուսական կառավարության վերաբերմունքը՝ դա պատճառաբանելով թուրքերի դեմ պատերազմի իրավիճակում ռուս-պարսկական նոր պատերազմը կանխելու անհրաժեշտությամբ, իսկ խորհրդային ժամանակաշրջանում նպատակ է դրվել արդարացնել Ա. Գրիբոյեդովին, նրան ներկայացնել որպես անթերի դիվանագետ, որը մտահոգված և զբաղված է եղել այսրկովկասցի, հատկապես հայ գերեվարվածների ու պարսկահայ ներգաղթյալների խնդիրներով և որը գոհվել է իշխանությունների կազմակերպած քաղաքական արքորում՝ հանուն կայսրության գաղութային շահերի:**

Վերջապես, ինչպիսի գործիչ էր ռուս գրող Ա. Գրիբոյեդովը: Դատելով

Ժամանակակիցների հակասական հուշերից, անձնական նամակներից և այլ վավերագրերից՝ Ա. Գրիբոյեդովը որոշ չափով եղել է մելամաղձոտ խառնվածքի տեր, սիրել է ազատ կյանքը, եղել է ազնիվ, ընկերներին և ընտանիքին նվիրված անձնավորություն, միննույն ժամանակ՝ հաճախ հանդես բերել փառասիրություն, եսասիրություն, դյուրաբորբոք վարքագիծ, ունեցել է մարդկանց ծաղրելու և չարախոսելու բացասական հակումներ:

Հարկ է փաստել, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով Ա. Գրիբոյեդովն այդպես էլ *չի բացահայտվել ու չի դրսևորվել մինչև վերջ*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային սկզբնաղբյուրներ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. Արխիվ Գյուտ Աղանյանի (Աղանյանցի),

Ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 497, թերթ 12, 4-5, գործ 489, թերթ 1-2 (ռու.), գործ 749, թերթ 1 (թարգմ. ռու.), գործ 526, թերթ 86-87:

2. Արխիվ Լազարյանների,

Ֆոնդ 42, ցուցակ 1, գործ 17, թերթ 3:

3. Արխիվ Հայկական մարզային վարչության,

Ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 2, թերթ 2, 3 (ռու.), գործ 9, թերթ 6, 49-56, 121 (ռու.), գործ 18, թերթ 2 (ռու.), 17, 18, 25-26, 28-29 (ռու.):

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
“Մատենադարան” (Մատենադարան)

4. Արխիվ Լազարյանների

թղթ. 106, գործ 14, վավ. 58, 121, 132, **թղթ. 111**, գործ 36(32), վավ. 28 (ռու.), 37 (ռու.), 64 (ռու.), գործ 79, վավ. 1 (ռու. ձեռ. պատճեն՝ 4 էջ), 7 (4 էջ), **թղթ. 107**, գործ 44, վավ. 370:

5. Արխիվ Ներսես Աշտարակեցու

թղթ. 164, վավ. 1024, 1319, 1326, **թղթ. 166**, վավ. 822, 912, 929, 930, 931, 932, 949, 1016, 1030, 1061, 1071, 1082, 1083, 1084, 1086, **թղթ. 167ա**, վավ. 33, 90, 98, 114, 226:

2. Հրատարակված արխիվային սկզբնաղբյուրներ (ռուսերեն)

6. Акты собранные Кавказскою Археографическою Коммисією, Архивъ Главнаго управления Наместника Кавказскаго, Изданъ подъ редакціею председателя коммисіи Ад. Берже (АКАК), Тифлисъ, 1868, Томъ II, док. 5; 1875, Томъ VI, часть II, док. 262; 267; 341; 342; 343; 344; 345; 351; 403; 408; 418; 447; 450; 455; 456; 462; 465; 466; 467; 471;

477; 478; 479; 483; 484; 485; 488; 492; 498; 517; 523; 525; 527; 530; 531; 538; 539; 543; 544; 547; 561; 573; 578; 598; 599; 600; 603; 604; 684; 708; 711; 712; 1878, Томъ VII, док. 2; 214; 274; 402; 501; 502; 503; 505; 507; 509; 512; 513; 514; 515; 516; 528; 529; 531; 532; 533; 534; 536; 538; 545; 546; 547; 551; 557; 566; 570; 572; 574; 581; 582; 586; 591; 603; 617; 618; 619; 623; 625; 626; 627; 633; 638; 652; 653; 654; 657; 661; 665; 672; 673; 677; 679; 688; 693; 694; 698; 700.

7. Внешняя политика России XIX и начала XX века (ВПП), Документы российского Министерства иностранных дел. Серия вторая, 1815-1830, Изд-во Политической литературы. Москва, 1974, Том первый (девятый), ноябрь 1815г - сентябрь 1817г, док. 37; Том четвёртый (двенадцатый), март 1821г - декабрь 1822г, (783 с.), док. 79; 142; 196; Том шестой (четыренадцатый), январь 1825г - декабрь 1826г, док. 130; 170; 210; 214.
8. Полное собрание законовъ Россійской имперіи, повелениемъ Государя Императора Николая Павловича составленное (ПСЗРИ), Собрание первое, с 1649 по 12 декабря 1825 года. Печатано въ типографіи II отделения собственной Его Императорскаго Величества канцеляріи, Санкт Петербургъ, 1830, Томъ XXVI, 1800-1801, док. 19.721; Томъ XXIX, 1806-1807, док. 22.418; Томъ XXXII, 1812-1815, док. 25.466; Томъ XXXVII 1820-1821, док. 28.771; 28.772; 28.872; Собрание второе, с 12 декабря 1825 года по декабрь 1881года, Санктпетербургъ, 1830, Томъ III, 1828, док. 1994.
9. Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. II, 1814-1830, Под ред. акад-ка АН Арм. ССР Ц.П. Агаяна, Изд-во Академии наук Арм. ССР, Ереван, 1978 (Присоединение), док. №№ 8; 9; 14; 28; 35; 62; 80; 87; 88; 93; 117; 118; 119; 223; 235; 242; 248; 249; 253; 255; 256; 257; 264; 270; 275; 277; 279; 286.
10. Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826-1828гг., Сборник документов. Гл. ред-ор А.О. Арутюнян, Центральный государственный исторический архив Арм. ССР (ЦГИА Арм ССР), "Вестник архивов Армении", Ереван, 1978, 2(51), (296 с.), док. №№ 104; 119; 135; 138; 139; 140; 144; 148; 149; 151; 156; 170; 173; 175; 177; 180; 181; 182; 187; 189.

3. Տպագիր սկզբնաղբյուրներ

(հայերեն)

11. Բարզեն վարդապետ, «Մանուել վարդապետը Ա.Ս. Գրիբոյեդովի մասին (1795-1829), «Սպանումն դեսպանին ուսաց», Մահուան ութսուն և հինգ ամեայ տարեկիցի առթիվ, «Արարատ» պաշտոնական ամսագիր Հայրապետական արժող Ս. Էջմիածին, հրամանավ S.S. Գևորգ Ե Սրբազնագոյն Հայրապետի Ամենայն Հայոց, 1914-ՌՅԿԳ, փետրուար, համար Բ, էջ161-162:
12. Գրիբոյեդով Ա.Ս., «Խելքից պատուհաս», թարգմ. Ս. Վահունու, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1981, 180 էջ:
13. Գրիբոյեդով Ա.Ս., «Ճանապարհորդական նոթեր. Կովկաս-Պարսկաստան», Հայպետհրատ, Երևան, 1945, 93 էջ:
14. Դավիդով Դենիս, Ռազմական հուշեր, թարգմ. Հ. Մազմանյանի, Հայպետհրատ, Երևան, 1942, 627 էջ:
15. Հ.Ա., «Գրիբոյեդովի սպանությունը (նրա 100-ամեայ տարեդարձի առթիվ)», «Մշակ», Թիֆլիս, 1895, №2 հունվարի 5, №3 հունվարի 6, (Тип-я Главнонач. Гражд. частью на Кавказе):
16. Շերմազանեան Գալուստ, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Տպարան Հովհաննես Տեր-Աբրահամեան, Ռոստով (Դոնի վերայ), 1890 = ՌՅԼԹ, 400 էջ:
(ռուսերեն)
17. Алавердянцъ М.Я., Кончина А.С. Грибоедова (по армянскимъ источникамъ), Тип-я "Товарищества Общественная польза", С. Петербургъ, 1901, 27 с..
18. Акты, относящіяся до заключения мира съ Персією, Въ Тип-ии Армянскаго Лазаревскаго института Восточныхъ языковъ, Санктпетербургъ, 1828 года, с. 8-10 (10 с.).
19. Бартоломей О.О., "Секретная инструкция, данная Императоромъ Николаемъ I относительно Грибоедова и донесініе полковника Бартоломея", "Русская старина", Тип-я "Общественная польза", СПб, 1910, май, с. 423-434.
20. Вейденбаум Е.Г., "Арест Грибоедова", в книге "Вейденбаум Е.Г. - Кавказские этюды: Исследования и заметки", Изд-е центральной

- книжной торговли в Тифлисе, скоропечатня М. Мартиросянца, Тифлис, 1901, № 81, с. 261-267.
21. "Воспоминания Бестужевых", Ред., статья и комментарии Азадовского М.К., Изд-во Академии наук СССР, М.-Л. 1951, 892 с..
 22. Врioni П.И., "Ермоловъ, Дибичъ, Паскевичъ на Кавказе в 1826-1827гг., Донесенія и письма", "Русская старина", СПб., Годъ третий, май 1872 годъ, с. 706-726; июль 1872 годъ, с. 39-69; август 1872 годъ, с. 243-280.
 23. Гангелов А.С., "Как я попал в декабристы и что затем последовало", "Русский архивъ", Изд-ий Петромъ Бартевымъ, Въ университетской типографіи, Москва, 1886, № 6, с. 249.
 24. Генерал-фельдмаршал князь Паскевич, Его жизнь и деятельность, По неизданным источникам составил Генерального штаба ген. лейтенант князь Щербатов, Типо-литография Р. Голике, С.Петербург, 1891, октябрь 1827 - май 1831гг., т. третий 530 с.; 1890, август 1826 - октябрь 1827гг., т. второй, 625с..
 25. Греч Н.И., "Записки из моей жизни", текст по рукописи, Под ред. и с комментариями Иванова-Разумника и Д.М. Пинеса, "ACADEMIA", М.-Л., МСМXXX, 896 с..
 26. Грибоедов А.С. в воспоминаниях современников, Ред-ор Пиксанов Н.К., Изд-во "Федерация", М., 1929, 344 с..
 27. Грибоедов А.С. в воспоминаниях современников, Серия литературных мемуаров, Под ред-ей Вацура В.Э. (ред. тома), "Художественная литература", Москва, 1980, 448 с..
 28. Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников, Ред-я и примечания Зин. Давыдова, "Красная газета", Ленинград, 1929, 351с..
 29. Грибоедов А.С., Сочинения в двух томах, Библиотека "Огонёк", Изд-во "Правда", Москва, 1971, т. 1, 383 с.; 1971, т. 2, 368 с..
 30. Грибоедов А.С., Полное собрание сочинений, Сборник научных документов, Из разряда изящной словесности Императорской Академии наук, В трёх томах, Под ред. и с примечаниями Н.К. Пиксанова и И.А. Шляпкина, С.Петербург, 1911, т.-первый, 328 с..
 31. Грибоедов А.С., "Горе от ума", Изд-е подготовил Пиксанов Н.К., при участии А.Л. Гришунина, Изд-во "Наука", Москва, 1969, 399 с..
 32. Договоры Россіи съ Востокомъ - Политическіе и торговые, Историческій обзор, "Пер-сія", Собраль и издалъ Т. Юзефович, Тип-я О.Н. Бакста, С.Петербургъ, 1869, 296 с..
 33. Ениколопов И.К., "Письмо А.С. Грибоедова К.В. Нессельроду", "Известия", АН Арм. ССР, Ереван, 1963, с. 101-107.
 34. Завалишин Д.И., "Воспоминание о Грибоедове", "Древняя и новая Россия", Ред-ор и издатель В.И. Грацианский, СПб., 1879, № 4, с. 311-321.
 35. "Записки А.П. Ермолова. 1798-1826гг", Сост. д.и.н. В.А. Феодоров, "Высшая школа", М., 1991, 463 с..
 36. "Записки Н.Н. Муравьёва (Тифлисъ, октябрь 1818)" (Баку-Тифлисъ), "Русский архивъ", Изд-ий Петромъ Бартевымъ, Въ университетской типографіи, Москва, 1886, кн. третья, с. 331-0335.
 37. "Записки Николая Николаевича Муравьёва-Карскаго (декабрь 1821 - май 1822)" (Баку-Тифлисъ), "Русский архивъ", Изд-ий Петромъ Бартевымъ, Тип-я М.Г. Волчанинова, Москва, 1888, № 5, кн. вторая, с. 97-0122; 313-0352.
 38. "Записки Н.Н. Муравьёва-Карскаго. Взятие Тавриза, 1827", "Русский архивъ", Въ Университетской типографіи, Москва, 1891, № 10, с. 177-228.
 39. "Из дневника П.Г. Дивова, 1828 годъ", "Русская старина", "Тов-во Общественная польза", Санкт-Петербургъ, 1898, Март, Томъ 93, с. 497-519.
 40. Краснов П.С., "Из неопубликованного наследия Пиксанова Н.К.", в книге "А.С. Грибоедов. Творчество. Биография. Традиции", Ред-ор С.А. Фомичев, Изд-во "Наука", АН СССР, Ленинград, 1977, с. 263.
 41. Кюхельбекер В.К., Дневник, "Русская старина", СПб., 1883, № 7, с. 101-112; 1891, № 10, с. 61-112.
 42. Кюхельбекер Вильгельм Карлович, Путешествие. Дневник. Статьи, "Наука", Ленинград, 1979, 789 с..
 43. Лотарева Д., "Соколовская Т., "Тайные архивы русских масонов"", "Вече", Москва, 2007, 478 с..
 44. Мальшинский А.П., "Неизданная записка А.С. Грибоедова", "Русский

- вестникъ”, Тип-я “Общественная польза”, С.Петербургъ, 1891, сентябрь, т. двести шестнадцатый, с. 1-17.
45. Мальшинский А., “Подлинное дело о смерти Грибоедова”, “Русский вестникъ”, Тип-я “Общественная польза”, С.Петербургъ, 1890, июнь, т. 208, с. 160-175; июль, т. 209, с. 211-233.
46. Маркова О.П., “Новые материалы о проекте Российской Закавказской компании А.С. Грибоедова и П.Д. Завилейского”, “Исторический архив”, Издательство Академии наук СССР, М.-Л., 1951, Т. VI, с. 324-391.
47. “Материалы къ исторіи персидской войны, 1826-1828гг. (продолжение, 1826-ой годъ)”, “Кавказский сборникъ”, Изд-ій съ Высочайшего соизвеленія, по указанію Великаго князя Михаила Николаевича, в бытность Его Императорскаго высочества, Главнокомандующимъ Кавказскою арміею, Под ред. ген.-майора Потто, Тип-я Кавказскаго военнаго округа, Тифлисъ, 1900 (1825 годъ), томъ XXI, с. 1-170; 1901 (1826 годъ), томъ XXII, с. 1-156; 1910, томъ XXX, с. 1-214, 1901, с. 1-156.
48. Мещеряков В.П., “Новое о Грибоедове”, “Русская литература”, “Наука”, Ленинградское отд., Л., 1985, № 1, с. 201.
49. М.Г. (Микаел Гамазян - В.С.), “Первыя представленія комедіи “Горя отъ ума”, 1827-1832, Из воспоминаній участника М.Г., “Вестникъ Европы”, Тип-я М.М. Стасюлевича, Санкт- Петербургъ, 1875, книга 7-я, томъ IV, с. 319-332.
50. Миллер Ор., “Жизнь и личность Грибоедова по его переписке”, в книге Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения, Сборник историко-литературных статей, Сост-ль Покровский В., Москва, 1911, с. 188-213.
51. Миллер Ор.Ф., “В память А.С. Грибоедова”, “Древняя и Новая Россия”, СПб, 1879, № 4, с. 301-311.
52. Миллер Ор.Ф., “А.С. Грибоедов. Жизнь и переписка”, “Неделя”, Тип-я А.М. Котомина, СПб, 1879, № 15, с. 439-447; №№ 16-17, с. 473-486.
53. Нерсисян М.Г., Материалы по новой истории Армении, “Журнал военнымъ действиямъ в провинціяхъ Бамбакъ и Шурагель, противъ войскъ персидскихъ в 1826 году”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1959,

- 4(7), с. 288-308.
54. Обозреніе російскихъ владеній за Кавказомъ, въ статистическомъ, этнографическомъ, топографическомъ и финансовомъ отношеніяхъ, Произведенное и изданное по Высочайшему соизволенію, Въ четырёхъ частяхъ, В типографіи департамента Внешней торговли, Санктпетербургъ, 1836, ч. IV, с. 1-405.
55. “Персія и персіяне”, Донесение А.С. Грибоедова, 1827, “Русская старина”, Тип-я В.С. Балашова, СПб, 1873, т. 7, кн. 1-6, с. 799-814.
56. Пиксанов Н.К., “Грибоедов и старое барство”, По неизданнымъ материаламъ, Кооп. изд-во писателей “Никитинские субботники”, Москва, 1926, с. 1-77.
57. “Посольство князя Меншикова въ Персію въ 1826году (Из дневника ген.-лейтенанта О.О. Бартоломея)”, “Русская старина”, Тип-я “Товарищество Общественная польза”, С.Петербургъ, 1904 годъ, апрель, с. 65-92; там же, 1904, май, с. 291-320.
58. Потто В., Кавказская война в отдельных очеркахъ, эпизодахъ, легендахъ и биографіяхъ, Томъ III, Персидская война 1826-1828гг., Выпуск IV, Изд-е второе, Издаль В. Березов-ский, С.Петербургъ, 1888, 750 с..
59. Семёвский М.И., 1837-1892 [Некролог], “Александр Александрович Бестужев (Марлинский) – письмо его с предисловием, примечаниями М.М. Семивского 1797-1837гг.”, “Русская старина”, Тип-я В.С. Балашова, СПб, 1892, № 4, с. III-XXXVII.
60. Соковнина Е., “Воспоминание о Д.Н. Бегичеве”, “Исторический вестникъ”, Тип-я А.С. Суворина, СПб., 1889, № 3, с. 661-673.
61. Сорокин В., “Новые сведения о студенческихъ годахъ Грибоедова А.С.”, Московский университет, Изд-во Московскаго университета, Москва, 1939, 26 июля, № 49, с. 4.
62. Сосновский Т.А., “Александр Сергеевич Грибоедов, 1795-1829. Очерк жизни и неиз-данные его бумаги”, “Русская старина”, Тип-я В.С. Балашова, СПб, 1874, т. 10, кн. № 5, с. 152-170; № 6, с. 275-309.
63. Сухтелен П.П., “Персидское посольство в России 1829г. (По бумагамъ графа П.П. Сух-телена)”, “Русский архивъ”, Въ Университетской тип-и, Москва, 1889, № 2, с. 209-260.
64. Туманян Арсенъ, “Некоторые предположенія о Грузіи и сопредельныхъ

ея областяхъ. Обозрение Грузии - ея провинции и жителей”, “Армянский вестник”, Московское-армянское изд-во, Москва, 1917, №№ 43-44, с. 13-15.

65. Шаломытов Н.В., “К биографии А.С. Грибоедова” (Из неизданных материалов Д.А. Смирнова), “Исторический вестник”, Тип-я А.С. Суверина, С.Петербург, 1909, № 3, с. 1031-1035.
66. Шимановский Н.В., “Арест Грибоедова в 1825 году. Из воспоминаний”, “Русский архивъ”, Тип-я Грачёва и комп., Москва, 1875, № 7, с. 339-344.
67. Щеголев П.Е., “Грибоедов и декабристы”, (по архивным материалам), С приложением факсимеле дела о Грибоедове, хранящегося в Государственном архиве, Изд-во А.С. Суворина, С.Петербург, 1905, 91 с..

4. Աշխատություններ

(հայերեն)

68. Բայրուրյան Վահան, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, Արևելագիտության ինստիտուտ, «Զանգակ», Երևան, 2005, 784 էջ:
69. Բարխուդարյան Վ.Բ., Ոսկանյան Վ.Կ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 255 էջ:
70. Գալոյան Գ.Ա., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Ուրվագծեր նրանց փոխհարաբերությունների, քաղաքական պատմության, հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը, «Հայաստան» հրատ., Երևան, 1978, 552 էջ:
71. Գրիգորյան Զ.Տ., Դասախոսություններ ՍՍՀՄ պատմության (1801-1861թթ.), «Լույս» հրատ. Երևան, 1975, 375 էջ:
72. Գրիգորյան Զ.Տ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան, 1960, 588 էջ:
73. Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին

երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1989, 355 էջ:

74. Երեմև Դ.Ե., Թուրքերի ծագումը (Ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), «Հայաստան», Երևան, 1975:
75. Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Մաս Ա., Տպարան Մ. Շարաձեի, Թիֆլիս, 1894, 658 էջ:
76. Հախումյան Տ., Ալեքսանդր Սերգենիչ Գրիբոյեդով. կյանքն ու ստեղծագործությունը, «Հայպետհրատ», Երևան, 1945, 115 էջ:
77. Հակոբյան Թ.Խ., Երևանի պատմությունը (1801-1879), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1959, 672 էջ:
78. Մուրադյան Մ.Ա., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1985, 147 էջ:
79. Մուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում(XVIII-XIXդդ.), Համալսարանի հրատ., Երևան, 2005, 561 էջ:
80. Պարսամյան Վ.Ա., Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1947, 280 էջ:
81. Չոբանյան Պ.Ա., Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Խմբագիրներ Վ.Բ. Բարխուդարյան, Պ.Մ. Մուրադյան - Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Սուրբ Էջմիածին - 2006, 560 էջ:
82. Միմոնյան Վահրամ Ռուբենի, Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեությունն Այսրկովկասում, Թեկնածուական ատենախոսություն, Է.0002 - «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ, ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2015, 167 էջ:

(ռուսերեն)

83. Авалов З.Д., Присоединение Грузии к России, “Вече”, Москва, 2011, 288 с..
84. Алавердянц М.Я., Графъ Иванъ Феодоровичъ Паскевичъ-Эриванский и его деятельность на Кавказе въ очеркахъ Армянскаго историка, 1782-1912гг., Художественно-графическое ателье, С.Петербургъ,

- 1912, 27 с..
85. Базиянц А.П., Над архивом Лазаревых (Очерки), Изд-во "Наука", Главная редакция восточной литературы, Москва, 1982, 159 с..
86. Балаян Б.П., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1988, 279 с..
87. Балаян Б.П., Международные отношения Ирана в 1813-1828гг., Изд-во АН Арм. ССР, Ереван, 1967, 296 с..
88. Балаян Б.П. "Кровь на алмазе "Шах". Трагедия А.С. Грибоедова, Изд-во "Айастан", Ереван, 1983, 179 с..
89. Ватейшвили Джуаншер Л., "Русская общественная мысль и печать на Кавказе в первой трети XIX века", "Наука", М., 1973, 460 с..
90. Галахов А.Д., "История русской словесности", Тип-я Морского министерства в Главном адмиралтействе, Санкт Петербург, 1879, 252 с..
91. Гершензон М.О., "Грибоедовская Москва", Изд-во М. и С. Сабашниковых, М., 1914, с. 1-120.
92. Глинка Сергей, Обозрѣніе исторіи армянскаго народа отъ начала бытія его до возрожденія области Армянской въ россійской имперіи, ч. первая, Въ тип-и Лазаревыхъ Ин-ститута Восточныхъ языковъ, Москва, 1832, 362 с.; ч. вторая, 1833, 312 с..
93. Глинка Сергей, Описание переселенія армянъ аддербаджанскихъ въ пределы Россіи, с краткимъ предварительнымъ изложеніемъ историческихъ времѣнь Арменіи, Въ тип-и Лазаревыхъ Института Восточныхъ языковъ, Москва, 1831, 145 с..
94. Данилов А.А., История России с древнейших времѣн до наших дней, "Проспект", М., 2004, 320 с..
95. Дубровин Н., Исторія войны и владычества русских на Кавказе, Тип-я И.Н. Скороходова, С.Петербургъ, 1886, т. III, 550 с.; т. IV, 536 с.; т. V, 495 с.; т. VI, 756 с..
96. Ениколопов И.К., Грибоедов в Грузии и Персии. Историко-биографический очерк, Заккнига, Тифлис, МСМХХІХ (1929), 209 с..
97. Ениколопов И.К., А.С. Грибоедов в Грузии, При участии М. Заверина, Под ред. О. Поповой, Изд-во "Заря Востока", Тбилиси, 1954, 160 с..
98. Ениколопов И.К., Грибоедов и Восток, "Айпетрат", Ереван, 1954, 200 с.; то же, "Айастан", Ереван, 1974, 158 с..
99. Ибрагимбейли Хаджи Мурат, Россия и Азербайджан в первой трети XIX века (Из военно политической истории), Изд-во "Наука", Главная ред-я Восточной литературы, Москва, 1969, 287 с..
100. Игамбердиев М.А., Иран в международных отношениях первой трети XIX века, Изд-во Самаркандского Гос. Университета им. А. Навои, Самарканд, 1961, 297 с..
101. История дипломатии, "Образование коалиции трёх держав против Турции", Отв. ред-ор О.Ю. Клокова, ООО "Издательство АСТ", Москва, 2006, 943 с..
102. История дипломатии, "Англия и новая русско-иранская война, Туркменчайский мир 1828г", Изд-е 2-е, Ред. коллегия, Гос. изд-во политической литературы, Москва, 1959, том I, (с. 609, 613), 896 с..
103. История Ирана, Отв. ред-ор М.С. Иванов, Изд. Московского университета, М., 1977, 488 с..
104. История Ирана, Сост.-ели Шумов С.А., Андреев А.Р., Киев-Москва, Альтернатива Евролинц, 2003, 398 с..
105. История России с древнейших времѣн до наших дней, Под ред. Сидорова А.В., Московский гос. университет им. М. Ломоносова, Изд-во "Проект", Москва, 2007, 453 с..
106. История России, Орлов А.С., Георгиев В.А., Георгиева Г., Сивохина Т.А., Рекомендована научно-методическим советом университетов в РФ, Учебник, Изд-е 3-е, переработанное и дополненное, "Проспект", Москва, 2006, 528 с..
107. История России с древнейших времѣн до начала XXI в, Под ред. член-корр. АН Сахарова А.Н., Инст-т Российской истории РАН, АСТ Астраль Ермак, Москва, 2003, т. I, 944 с..
108. История России, XIX век, В двух частях, ч. 1, Под ред. В.Г. Тюкавкина, Гуманитарный изд-ий центр Владос, М., 2001, 256 с..
109. История России с древнейших времѣн до конца XX в, "Высшее образование", "Дрофа", Москва, 2001, 656 с..
110. История СССР, XIX – нач. XX века, Изд-е второе, переработанное, Под ред. акад. АПН СССР И.А. Федосова, Изд-во "Высшая школа",

- М., 1987, 542 с..
111. Карпачёв Сергей, Тайны масонских орденов. Ритуалы Вольных каменщиков, Яуза-пресс, Москва, 2007, 352 с..
 112. Карпачёв С., "Российское масонство XVIII – XX веков", Ред.-изд.-ий центр "Альфа", М., 2000, 70 с..
 113. Карпачёв Сергей, Масоны. Словарь. Великое искусство каменщиков, Москва, Изд-во АСТ, Олимп, 2008, 634 с..
 114. Киняпина Н.С., Блиев М.М., Дегоев В.В., Кавказ и Средняя Азия во внешней политике России. Вторая половина XVIII–80-е годы XIXв., Изд-во Московского университета, М., 1984 (с. 98-121), 328 с..
 115. Киняпина Н.С., Внешняя политика России первой половины XIX в., Гос. изд-во "Высшая школа", Москва, 1963, 288 с..
 116. Кузнецова Н.А., Иран в первой половине XIX века, Изд-во "Наука", Главная ред-я Восточной литературы, Москва, 1983, 264 с..
 117. Кюркчян А.А., Русско-иранская война 1826-1828 (Новые концепции современной историографии), Изд-во АН Армении, Ереван, 1991, 208 с..
 118. Лебедев А.А., Грибоедов. Факты и гипотезы, "Искусство", Москва, 1980, 304 с..
 119. Меньшиков М.О., Критические очерки, Тип-я М. Меркушева, С.Петербург, 1899, 404 с..
 120. Мещеряков В.П., Грибоедов: литературное окружение и восприятие (XIX - начало XX вв.), "Наука", Л., 1983, 267 с..
 121. Мещеряков В.П., Жизнь и деяния А.С. Грибоедова, "Наука", М.-Л., 1989, 476 с..
 122. Нерсисян М.Г., Декабристы в Армении, Изд-во Ереванского университета, Ереван, 1975, 267 с..
 123. Нерсисян М., Из истории русско-армянских отношений, кн. вторая, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1961, 461 с..
 124. Нечкина М.В., Грибоедов и декабристы, 1-ое изд-е, Гослитиздат, Москва, 1947, 597 с.; 2-ое изд-е, Изд-во Академии наук СССР, Москва, 1951, 537 с.; 3-е изд-е (Нечкина М.), "Художественная литература", Москва, 1977, 735 с..
 125. Нечкина М.В., Следственное дело А.С. Грибоедова, Изд-во "Мысль", Москва, 1982, 104 с..
 126. Орлик О.В., Россия в международных отношениях 1815-1829гг. (От Венского конгресса до Адрианопольского мира). Россия на Среднем Востоке, "Наука", Москва, 1998, 266 с..
 127. Орлик О.В., Государственные люди России первой половины XIX века: Пути и судьбы. Инст-т Российской истории РАН, –Москва: 2000, 270 с..
 128. Орлов Вл., Грибоедов, Изд-во "Просвещение", Ленинградское отд., Ленинград, 1967, 113 с..
 129. Орлов Вл., Грибоедов. Очерк жизни и творчества, Гос. Изд-во "Художественной литературы", Москва, 1954, 275 с..
 130. Персидская война въ царствованиі Императора Николая I (Второе изд-е), Ред-ор П. Зубовъ, Въ типографіи Конрада Вингебера, Санктпетербургъ, 1837, (296 с.).
 131. Петров С.М., "Александр Сергеевич Грибоедов", "Искусство", Москва, 1948, 19 с..
 132. Петров С., А.С. Грибоедов. Критико-биографический очерк, Изд-е второе, переработанное, Гос. изд-во "Художественной литературы", Москва, 1954, 118 с..
 133. Пиксанов Н.К., Грибоедов. Исследования и характеристики, "Изд-во Писателей в Ленинграде", Ленинград, 1934, 335 с..
 134. Пиксанов Н.К., Творческая история "Горя от ума", "Госиздат", М.-Л., 1928, 362 с.; его же, Изд-во "Наука", Москва, 1971, 400 с..
 135. Писарев Д.И., Сочинения в 4-х томах, Гослитиздат, Москва, 1956, т. III, 570 с..
 136. Попова О.И., Грибоедов дипломат, Изд-во "Международные отношения", Москва, 1964, 219 с..
 137. Платонов С.Ф., Полный курс лекций по русской истории, ООО, "Фирма СТД", Москва, 2005, 831 с..
 138. Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX–нач. XXв.), Под ред. А.Н. Гулиева и В.Д. Мочалова, Изд-во Академии наук Азербайджанской ССР, Баку, 1955, 295 с..
 139. Розанов В.В., Литературные очерки, Сборник статей, Изд-е второе,

- Тип-я М. Меркушева, С.Петербург, 1902, с. 191-201.
140. Семевский В.И., Крестьянский вопрос в России в XVIII – первой половины XIX века, В двух томах, Тип-я “Товарищество Общественная польза”, С.Петербург, 1888, т. I, 515 с..
141. Семёнов Л.С., Россия и международные отношения на Среднем Востоке в 20-х годах XIXв., Изд-во Ленинградского университета, Л., 1963, 142 с..
142. Скабичевский А.М., А.С. Грибоедов. Его жизнь и деятельность. Биографический очерк, Тип-я Высочайшее утверждённое “Товарищество Общественная польза”, С.Петербург, 1893, 234 с..
143. Тунян В.Г., А.С. Грибоедов: новое в известном, Чартарагет, Ереван, 2015, 177с..
144. Тунян В.Г., Грибоедов и Армения, Спонсоры издания Инст-т “Открытое общество”, (фонд Джорджа Сороса) Москва и тип-я “Амарас”, МИ РА, Ереван, 1995, 69 с..
145. Тунян В.Г., Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ер. институт истории, 2013, 265 с..
146. Тынянов Ю., “Смерть Вазир-Мухтара”, Госиздат, Изд-е 6-е, Л., 1937, 470 с..
147. Утверждение русскаго владычества на Кавказе, Под ред. генерал-майора Потто, 1801-1901, Къ столетию присоединения Грузии къ России, Тип-я штаба Кавказскаго военного округа, Под рук. нач. штаба Н.Н. Белявскаго, Тип-я Либермана, Тифлисъ, 1901, т. I, 319 с.; 1902, т. II, 544 с..
148. Фомичев С.А., Грибоедов в Петербурге, “Лениздат”, Л., 1982, 206 с..
149. Французова О.А., Ф. 84, История России в вопросах и ответах: учебное пособие, Т.К. Велби, Кно Рус, -М., 2005, 256 с..
150. Хачатрян А.С. (Артемис), Грибоедов А.С. как явление истории и культуры, Составитель и ред-ор Хачатрян А.С., Изд-во “Менеджер”, Москва, 2009, 159 с..
151. Чернышевский Н.Г., Полное собрание сочинений в 15-ти томах, Гослитиздат, Москва, 1949, т. II, 944 с.; 1947, т. III, 884 с..
152. Шадури В., Грибоедов и грузинская культура, Изд-во “Зоря Востока”, Тбилиси, 1946, 77 с..

153. Шнирельман В.А., “Подделки и альтернативная история”, в кн. “Фальсификация исторических источников и конструирование этнократических мифов”, М., 2011.
154. Шостакович С.В., Дипломатическая деятельность А.С. Грибоедова, Изд-во Соц. эконо-мической литературы, Москва, 1960, 296 с..
155. Эйдельман Н.Я., Быть может за хребтом Кавказа, “Наука”, Гл. ред-я восточной литературы, Москва, 1990.

(անգլերէն)

156. Atkin Muriel, Russia and Iran. 1780-1828, The University of Texas of San Antonio, Minneapolis, 1980, 207 p..
157. Bournoutian George, The Khanate of Erevan under Qajar Rule. 1795-1828, Mazda Publishers, California and New York, 1992, 355 p..
158. Clements R. Markham, A General Sketch of the History of Persia, C.B.F.R.S., London, Longmans, Green, And CO. 1874, 562 p..
159. Kaye J., The life and Correspondence of Major-General sir John, G.C.B. Malkolm, Late envoy to Persia, and governor of Bombay from unpublished Letters and Journals, In two volumes, vol. II, London, Smith, Elder, and CO, Cornhill, Bombay: Smith Taylor, and CO. MDCCCLVL (1895), 631 p..

(ֆրանսերէն)

160. Afschar Mahmoud, La politique européenne en Perse: quelques pages de L'histoire diplo-matique, Librairie orientale “Transchahr”, Berlin, 1921, 276 p..

5. Հոդվածներ և ժողովածուներ

(հայերէն)

161. Գրիգորյան Ջ.Տ., «Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման և գոյատևման համար», ՊԲՀ, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 3(82), էջ 12-21:
162. Ե. Սուրեն, «Ռուսահայ բեմի յեվ դրամատուրգիայի արմատները», «Հայարտուն», Ընկ. Ալ. Մարտունի-Մյասնիկյանի անվ. Հայ արվեստագետների տուն, «Կոմունիստ»-ի խմբագրություն, Բագու,

1925, № 1, հունիս, էջ 54-72:

163. Լեո, Երկերի լիակատար ժողովածու, Չորրորդ հատոր, «Հայաստան» հրատ., Երևան, 1984, 591 էջ:
164. Լենին Վ.Ի., Երկերի լիակատար ժողովածու, Թարգմ. ռուսերեն հինգերորդ հրատ.-ից, «Հայաստան» հրատ., Երևան, 1979, հ. 21, 811 էջ:
165. Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, հ. IV(գլ. II), 683 էջ:
166. Ներսիսյան Մ.Գ., «Նոր դարագլուխ հայ ժողովրդի պատմության մեջ», ՊԲՀ ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, 3(82), էջ 3-12:
167. Սիմոնյան Վ., «Թուրքմենչայի պայմանագրի կնքման գործում Ա.Ս. Գրիբոյեդովի մասնակցության հարցը խորհրդային պատմագրության գնահատմամբ», ՀՀ ԳԱԱ ՊԲՀ, Երևան, 2005, 3(170), էջ 103-110:
168. Սիմոնյան Վ., «Ա.Ս. Գրիբոյեդովի հարաբերությունները Ա.Պ. Երմոլովի և Ի.Ֆ. Պասկևիչի հետ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ՝ մինչխորհրդային պատմագրության գնահատմամբ», ԲՈՀ, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2006, 1(26), էջ 209-220:
169. Սիմոնյան Վ., «Ա.Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագները ժամանակակիցների գնահատմամբ և դրանց շրջանցումը խորհրդային պատմագրության կողմից (Հակասական Ա.Ս. Գրիբոյեդովը)», ԲՈՀ, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2006, 4(29), էջ 182-192:
170. Սիմոնյան Վ.Ռ., «1828թ. «Ռուս-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագծի» գնահատման շուրջ», ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2007, 2(619) մայիս-օգոստոս, էջ 112-121:
171. Սիմոնյան Վ.Ռ., «Ա.Ս. Գրիբոյեդովի տնտեսագիտական գործունեության որոշ հարցեր», ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2008, 3(623) սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 35-48:
172. Սիմոնյան Վ., «Մասոնություն-դեկաբրիստներ առնչությունների հարցի շուրջ», ԲՈՀ, «Կանթեղ», Գիտական հոդվածների ժողովածու,

«Ասողիկ» հրատ., Երևան, 2013, 3(56), էջ 132-151:

173. Սիմոնյան Վ.Ռ., «Դրվագներ Ա. Գրիբոյեդովի կովկասյան գրական-մշակութային գործունեությունից», ԵՃՇՊՀ Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 2013, Հատոր II(49), էջ 91-101:
174. Սիմոնյան Վ.Ռ., «Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական առաքելության կործանումը Թեհրանում», ՀՀ ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2(641), «Գիտություն» հրատ., Երևան, 2014, էջ 88-100:
175. Սիմոնյան Վ.Ռ., «Ալեքսանդր Գրիբոյեդովը և պարսկահայերի 1828-1829թթ. ներգաղթը՝ ադրբեջանառուսական պատմագեղարվեստական վարժանքների առարկա», «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2016, Ը(ԺԴ) տարի, թիվ 4(56), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 153-171:
176. Օվիհնիկով Մ., «Գրիբոյեդովը Երևանում», «Գրական թերթ», Երևան, 1945, 20 հունվարի, № 2 (322):

(ռուսերեն)

177. Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения, Сборник историко-литературных статей, Сост. Покровский В., Изд-е 3-е, дополненное, Москва, 1911, 248 с..
178. Александр Сергеевич Грибоедов (1795-1829). "Грибоедовские чтения", Выпуск I, Ереванский государственный лингвистический университет им. В.Я. Брюсова, Лингва, Ереван, 2009, 185 с..
179. Александр Сергеевич Грибоедов - 1795-1829. Очерк жизни и неизданные его бумаги, "Биографический очерк по подлинным его письмам", "Русская старина", Тип-я В.С. Балашова, (Сообщения Т. Сосновский, И. Гарусов, Геннадий), СПб., 1874, т. 10, кн. 5-8, с. 152-170; 275-308; 585-609; 610-617; 715-734.
180. "А.С. Грибоедов. Материалы к биографии", Сборник научных трудов, Отв. ред-ор С.А. Фомичев, "Наука", Ленинград, 1989, 288 с..
181. Андреев В., "Ермоловъ и Паскевичъ", "Русский архивъ", Изд-тый Петромъ Бартене-вымъ, Москва, Въ университетской типографіи, Москва, 1873, № 8, с. 1571-1583; то же, "Кавказский сборникъ", Издаваемый по указанию Его Императорскаго Высочества

- Главкомандующего Кавказскою Армією, Тип-я окружного штаба Кавказскаго военнаго округа, Тифлисъ, 1876, томъ I, с. 197-213.
182. Андреевский С.А., "К столетию Грибоедова", газ. "Новое время", Изд-во А.С. Суворина, СПб, 1895, 7 марта, № 6833.
183. Аринштейн Л.М., "Новые данные об обстоятельствах гибели Грибоедова (по английским источникам)", "Русская литература", ИЛЖ, "Наука", Ленинградское отделение, Ленинград, 1981, № 2, с. 225-233.
184. Аринштейн Л.М., "Персидские письма по поводу гибели Грибоедова", в книге А.С. Грибоедов. Материалы к биографии, Сборник научных трудов, Отв. ред-ор С.А. Фомичев, "Наука", Ленинград, 1989, с. 108-133.
185. Байбурди Ч., "Новое о гибели А.С. Грибоедова (По данным иранской печати)", "Русская литература", ИЛЖ, Изд-во АН СССР, Ленинград, 1959, № 4, с. 171-173.
186. Балаян Б.П., "Из дипломатической истории присоединения Восточной Армении к России", "Известия" общественные науки, Академии наук Арм. ССР, Ереван, 1962, №11, с. 19-32.
187. Балаян Б.П., "Фальсификация истории гибели А.С. Грибоедова в современной иранской историографии", "Вестник общественных наук", АН Арм. ССР, Ереван, 1962, № 2, с. 118-129.
188. Балаян Б.П., "Иранская историография о гибели А.С. Грибоедова", "История СССР", Изд-во "Наука", -Москва, 1964, №6, ноябрь, декабрь, с. 183-189.
189. Безродный А.В., "В.К. Кюхельбекер и А.С. Грибоедов", "Исторический вестник", Тип-я А.С. Суверина, С.Петербург, 1902, V, с. 596-600.
190. Белинский В.Г., Полное собрание сочинений в 13-ти томах, Изд-во АН СССР, Москва, 1953, т. III, 684 с.; 1954, т. V, 863 с.; 1956, т. IX, 840 с..
191. Белокуров С.С., "Материалы для характеристики русских писателей, художников и общественных деятелей. А.С. Грибоедов", "Русское обозрение", Университетская тип-я, Москва, 1895, № 3, с. 382-392.
192. Берг Н.В., "Из рассказов С.А. Соболевскаго", "Русский архивъ", Чертковская библиотека, Тип-я Грачёва и К., Москва, 1871, № 1, с. 187-0195.
193. Берже Ад., "Александръ Сергеевичъ Грибоедовъ. Деятельность его как дипломата, 1827-1829", "Русская старина", Тип-я В.С. Балашова, Санкт-Петербургъ, 1874, томъ XI, с. 517-534; с. 746-765.
194. Берже Ад.П., "Самсонъ ханъ, Макинцевъ и русскіе беглецы въ Персіи, 1806-1853", "Русская старина", Тип-я В.С. Балашова, Санктпетербургъ, 1876, апрель, с. 770-804.
195. Берже Ад.П., "Нина Александровна Грибоедова, 1812-1857", "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб., 1883, Годъ четырнадцатый, іюнь, с. 659-663.
196. Берже Ад.П., "Смерть А.С. Грибоедова", "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб., 1872, № 8, с. 163-207.
197. Берже Ад.П., "Александръ Сергеевичъ Грибоедовъ въ Персіи и на Кавказе (1818-1828)", "Русская старина", Тип-я В.С. Балашова, Санкт Петербургъ, 1874, т. XI, с. 276-302.
198. Берже Ад.П., "Хосров Мирза, 1813-1875", "Русская старина", Тип-я В.С. Балашова, С.Петербургъ, 1879 годъ, с. 333-352.
199. Бирюков Ф., "Некоторые замечания по поводу "Горя от ума"", "Вопросы литературы", Гос. изд-во "Художественной литературы", Москва, 1959, № 2, с. 95.
200. Боцяновский В.Ф., "Александр Сергеевич Грибоедов" (по поводу 100-летия со дня его рождения), "Ежегодник императорских театров", Ред-я А.Е. Молчанова, СПб, сезон 1893/94, кн. III, с. 3-41.
201. Вагрисов В., "Социальный генезис образа Чацкого", в кн. "Родной язык в школе", Научно-педагогические сборники, Под ред. А.М. Лебедева, П.И. Майкура, В.Ф. Переверзева, Изд-во "Работник просвещения", Москва, 1927, кн. IV, с. 25-33.
202. Веселовский А.Н., "Очеркъ первоначальной исторіи "Горя от ума", "Русский архивъ", Тип-я Грачёва и комп., Москва, 1874, № 6, с. 1514-1575.
203. Веселовский В.А., "Грибоедов в московском университете", в книге "Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения", Сборник историко-литературных статей, Сост. Покровский В., Изд-е 3-е, дополненное, Москва, 1911, с. 1-7.

204. Всемирная история. В десяти томах, Под ред. Я.Я. Заутиса, Изд-во Соц. Экономической литературы, Москва, 1958, т. V, 782 с..
205. Герцен А.Н., Полное собрание сочинений в 30-ти томах, Изд-во АН СССР, 1954, т. I, 574 с.; 1959, т. XVIII, 751 с.; 1960, т. XX, 494 с..
206. Гоголь Н.В., Полное собрание сочинений в 6-ти томах, Гослитиздат, Москва, 1953, т. 6, 456 с..
207. Г.И. (Гончаров И.А. – В.С.), “Мильон терзаний! “Горе от ума” Грибоедова, – Бенефис г. Монахова”, ноябрь 1871г., “Вестник Европы”, Тип-я М.М. Стасюлевича, 1872, № 3, с. 438.
208. Грибоедов А.С. в русской критике, Сборник статей, Гос. изд-во “Художественной литературы”, Примечания и вступительная сатья А.М. Гордина, Москва, 1958, 391 с..
209. Грибоедов А., “Загородная поездка” (Отрывки из письма южного жителя), газ. “Северная пчела”, Тип-я Н. Греча, С.Петербург, 1826, 2-ое января, № 76.
210. Грибоедов А.С., Полное собрание сочинений в трёх томах, 1995-2006, Глав. ред-ор С.А. Фомичев, Инст-т Литературы “Пушкинский дом” РАН, Изд-во “Дмитрий Буланин”, Санкт-Петербург, 2006, том III, 688 с..
211. Григорьев А., “По поводу нового издания старой вещи”, “Время”, Изд-й М. Достоевским, СПб, 1862, № VIII, с. 36.
212. Дилоян В.А., “Присоединение Восточной Армении к России и его историческое значение”, Сборник статей, Ереванский гос. университет, Изд-во Ереванского университета, Ереван, 1978, с. 6-30.
213. Добролюбов Н.А., Полное собрание сочинений в 6-ти томах, ГИХЛ, Москва, 1936, т. IV, 453 с..
214. Достоевский Ф.М., Полное собрание сочинений в 30-ти томах, “Наука”, Ленинград, 1974, т. XI, 415 с..
215. Дружинин Н.П., “Профессор М.В. Нечкина, А.С. Грибоедов и декабристы”, “Вопросы истории”, Инст-т Истории АН СССР, Москва, 1947, № 12, с. 103.
216. Дубшан Л.С., “Из московских лет Грибоедова”, в книге “А.С. Грибоедов. Материалы к биографии”, Сборник научных документов, Ответственный ред-ор Фомичев С.А., Изд-во “Наука”, Ленинград, 1989, с. 19-48.
217. Ениколопов И.К., “Из истории русско-иранских отношений и дипломатической деятельности А.С. Грибоедова”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1962, 4(19), с. 143-151.
218. Ениколопов И., “Армянские друзья Грибоедова”, “Литературная Армения”, Литературно-художественный и общественно-политический журнал, Орган правления Союза писателей Арм. ССР, Ереван, 1971, 9 сентября, с. 81-82.
219. Ерёмин М.П., “Грибоедов А.С.. Очерк творчества”, Предисловие к книге “А.С. Грибоедов. Сочинения в двух томах”, Библиотека “Огонёк”, Москва, 1971, т. 1, 383 с..
220. Ерицов А.Д., “О причинах убийства Грибоедова”, “Кавказская старина”, Под ред. А.Д. Ерицова, Тип-я Главного управления наместника Кавказского, Тифлиси, 1872, Годъ I, ноябрь, № 1-й, с. 28.
221. Ефремов П.А., “О смерти А.С. Грибоедова”, “Русский архивъ”, Чертковская библиотека, Тип-я Грачёва и К., Москва, 1872, Годъ десятый, с. 1491-1538.
222. Зорин Андрей, “Прихотливый путь самопознания”, “Литературное обозрение”, Изд-во ЦК КПСС, “Правда”, Москва, 1981, № 8, с. 43-46.
223. Зорин Андрей, “С.А. Фомичев, “Грибоедов в Петербурге””, Лениздат, Л., 1982; “Литературное обозрение”, Изд-во ЦК КПСС, “Правда”, Москва, 1984, № 7, с. 85-86.
224. Иванов Ив., “Годовщина великого автора и великого произведения”, “Мир божий”, Изд-во М. Куперина-Давыдова, СПб, 1894, № XII, с. 11-46.
225. Иоаннисян А.Р., “Борьба Англии и Франции против присоединения Армении к России”, Известия Академии наук Арм. ССР, Общественные науки, Ереван, 1953, № 3, с. 47-62.
226. Исаакян Авик, “А.С. Грибоедов и Армения”, ИФЖ, Национальная Академия наук РА, Ереван, 2005, № 1(168), с. 141-159.
227. Каллаш Вл., “Грибоедов и Чацкий” (к 75-летию смерти Грибоедова), “Русская мысль”, Типо-лит. Товарищи Кушнерев и Ко пимен, Москва, 1904, № 1, с. 65-72; 1904, № 2, с. 178-191.
228. Кальма Н., “Коммерческие замыслы Грибоедова”, “Литературное

- наследство”, Журнально-газетное объединение, Москва, 1935, 19/21, с. 143-176.
229. Карпачёв С., “Масонство и масоны России XVIII – первой половины XIX вв.”, Краткий очерк истории (Межвузовский сборник научных трактатов, отв. ред-ор А.В. Ушаков). МГОПУ, М., 2000, 70 с..
230. Киреевский И.В., “Горе от ума” на московском театре”, “Европеец”, Изд-е И.В. Киреевского, Москва, 1832, № 1, с. 131-141.
231. Кожин В.В., “Легенды и факты (Заметки о Грибоедове, Баратынском, Есенине)”, “Русская литература”, “Наука”, Л., 1975, № 2, с. 145-158.
232. Комиссаров Д.С., “Иранские авторы о гибели А.С. Грибоедова”, “Вопросы истории”, Изд-во “Правда”, Москва, 1975, № 8, с. 188-195.
233. Косова Ю.В. и Кюхельбекер М.В., “Вильгельм Карлович Кюхельбекер”, “Русская старина”, СПб., 1875, № 7, с. 333-382.
234. Краснов П.С., “Ещё раз о дате рождения Грибоедова”, “Русская литература”, “Наука”, Л., 1975, № 4, с. 152-154.
235. Левин В.И., “Грибоедов и Чацкий”, “Известия” АН СССР, Трибуна, Москва, 1970, вып. 1, январь – февраль, т. XXIX, с. 33-54.
236. Лепешинский П., “Молния гнева”. По поводу столетия со дня смерти Грибоедова, газ. “Очерк”, “Огонёк”, Москва, 1929, № 6 (306), 10 февраля.
237. Литературное наследство. Горький и советские писатели, Изд-во АН СССР, Москва, 1963, т. 70, 735 с..
238. Луначарский А.В., “А.С. Грибоедов”, газ. “Красная панорама”, Изд-во “Красная газета”, Ленинград, 1929, № 6.
239. Мадатова С.А., “Князь В.П. Мадатов, генерал-лейтенант, род. 1782†1828 гг””, “Русская старина”, Тип-я В.С. Балашова, СПб., 1873, т. 7, кн. 1-6, с. 85-102.
240. Маркарян С.А., “Гибель русской миссии в Иране и убийство А.С. Грибоедова”, в сб. “Грибоедовские чтения”, вып. I, ЕГЛУ им. В. Брюсова, ЛИНГВА, Ереван, 2009, с. 108-120.
241. Минаева Н., Оскоцкий В., “Преимущество гипотезы”, “Литературное обозрение”, Изд-во ЦК КПСС, Москва, 1981, № 8, с. 46.
242. Мурадян М.А., “Присоединение Восточной Армении к России в оценке дореволюционной русской историографии и общественной мысли”, Сборник статей, Изд-во Ереванского университета, Ереван, 1978, с. 63-84.
243. Мясоедова Н.Е., “Неизвестное письмо Грибоедова”, в кн. “Проблемы творчества Грибоедова”, Ред-ор Фомичев С.А., Изд-во “Траст-ИМАКОМ”, Смоленск, 1994, с. 272-284.
244. Надеждин Н.И., “Горе от ума” комедия в четырёх действиях А.С. Грибоедова”, “Телескоп”, Журнал современного просвещения, Изд-ий Николаем Надеждинымъ, Тип-я Н. Степанова, Москва, 1831, № 20, с. 586-606.
245. Налбандян С.Р., Агабян С.А., “А.С. Грибоедов и его роль в развитии армяно-русских культурных и дипломатических отношений”, в сб. “Грибоедовские чтения”, вып. I, ЕГЛУ им. В. Брюсова, ЛИНГВА, Ереван, 2009, с. 149-159.
246. Нерсисян М.Г., “Ценный первоисточник об Ошаканской битве”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1978, 1(80), с. 241-258.
247. Нерсисян М.Г., “Освобождение Еревана от ханского ига”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1977, 3 (78), с. 65-74.
248. Огарёв Н.П., “Предисловие к сборнику: “Русская потаённая литература XIX столетия””, Вольная русская тип-я, Лондон, 1861, ч. I, с. I – XVI.
249. Орлов В.Л., “Заметка о творчестве Грибоедова”, “Литературная учёба”, Тип-ое изд-во “Крестьянская газета”, Москва, 1939, № 1, с. 13-14.
250. Павлов, Смирнов А., Писканов, “Грибоедов как человек”, в книге “Александр Сергеевич Грибоедов. Его жизнь и сочинения”, Сборник историико-литературных статей, Составил Покровский В., Изд-е 3-е, дополненное, Москва, 1911, с. 240-248, (248 с.).
251. Парсамян В.А., “А.С. Грибоедов и переселение армян”, в книге “Из истории вековой дружбы”, АН Арм. ССР, Инст-т Истории, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1983, с. 136-146 (269 с.).
252. Пашуто В.Т., “Дипломатическая деятельность А.С. Грибоедова”, “Исторические записки”, “Наука”, М., 1947, т. 24, с. 111-159.
253. Петров Г.М., “Новые материалы об убийстве А.С. Грибоедова”, Учёные записки Института Востоковедения, Иранский сборник, Изд-во АН СССР, Москва, 1953, том VIII, с. 146-165 (“Из архива

- Косооговского, 30 июля 1897г, "Сведения об убийстве в Тегеране российского императорского чрезвычайного посланника...").
254. П.Б. (Берже ?), "Александръ Сергеевичъ Грибоедовъ на Кавказе 1818-1829", "Кавказ-ский вестник", Еж. научно-литературный журналъ, Скоропечатня М. Мартиросянца, Тифлисъ, 1900г., Годъ первый, № 6 июнь, с. 53-61; № 7 июль, с. 36-43; № 8 август, с. 27-39; № 9 сентябрь, с. 29-52.
255. Пиксанов Н.К., "Великий русский писатель", "Правда", Гос. изд-во "Правда", ЦК КПСС, Москва, 1945, 11 января.
256. Пиксанов Н., "К характеристике Грибоедова. Поэт и ссыльные декабристы", газ. "Русские ведомости", Тип-я "Русских ведомостей В. Никитинская", Москва, 1911, № 7, 15-ое ноября.
257. Пиксанов Н.К., "А.С. Грибоедов" в книге "История русской литературы. XIX век", Под ред. Д.Н. Овсяннико-Куликовского, Изд-ое тов-во "Мир", Москва, 1908, т. I, с. 195-222.
258. Пиксанов Н.К., "Душевная драма Грибоедова", "Современник", Тип-я "Улей", СПб., 1912, кн. XI, с. 224-24.
259. Пиксанов Н.К., "'Горе от ума" в парадоксах русской критики", газ. "Русские ведомости", Москва, 1913, 8-ое августа.
260. Покровский М.Н., Дипломатия и войны царской России в XIX столетии, Сборник статей, Изд-во "Красная новь", Главполитпросвет, Москва, 1923, с. 179-195.
261. Полевой К.А., "'Горе от ума" комедия в четырёх действиях, в стихах, сочинение А.С. Грибоедова", "Московский телеграф", Тип-я Августа Семёна, Москва, 1833, № XVIII, с. 245-254.
262. Поликовская Л., "Грибоедов против Вазир-Мухтара" (обсуждаем книгу А. Лебедева "Грибоедов", "Искусство", М., 1980), "Литературное обозрение", Изд-во ЦК КПСС, "Правда", Москва, 1981, № 8, с. 41-43.
263. "Присоединение Восточной Армении к России и его историческое значение", Сборник статей, Изд-во Ереванского университета, Ереван, 1978, с. 63-84.
264. Проблемы творчества А.С. Грибоедова (Сборник статей – В.С.), Ред-ор Фомичев С.А., Изд-во "Траст-ИМАКОМ", Смоленск, 1994, 304 с..
265. Пушкин А.С., Полное собрание сочинений в 13-ти томах, Изд-во АН СССР, М., 1937, т. 13, 651 с.; то же, В 10-ти томах, М.-Л., Изд-во АН СССР, 1949, т. 8, 500 с..
266. Пушкин А.С., "Путешествіе въ Арзрум, во время похода 1829 года", "Современник", Литературный журналъ, Изд-ый Александромъ Пушкинымъ, Въ Гуттенберговой типографіи, Санктпетербургъ, 1836, Первый томъ, с. 17-84.
267. Пыпин А.Н., "Поход против Белинского, предпринятый под флагом "Горя от ума", "Вестник Европы", Тип-я М.М. Стасюлевича, СПб, 1886, т. III, № 5, май, с. 432-436; 437; там же, "Исторические заметки о Грибоедове", 1890, т. I, кн. № 1, с. 185-225.
268. Салтыков-Щедрин М.Е., Собрание сочинений в 20-ти томах, "Художественная литература", М., 1971, т. XII, 752 с..
269. Свердлина С.В., "В военные годы", в книге "А.С. Грибоедов. Материалы к биографии", Сборник науч. док., Отв. ред-ор Фомичев С.А., Изд. "Наука", Ленинград, 1989, с. 61-75.
270. Семевский В.И., "Декабристы масоны", "Минувшие годы", Тип-я "Энергия", СПб., 1908, № 2, с. 7-50; № 3, с. 137-148; №№ 5-6, с. 379-383.
271. Семёвский М.И., "Несколько слов о фамилии Грибоедовых", "Москвитянин", Тип-я Л. Степановой, М., 1856, т. 3, XII, с. 309-323.
272. Семёвский Михаил Иванович, 1837-1892[Некролог], "Несколько слов о фамилии Грибоедовых", "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб, 1892, № 4, с. III – XXXVII.
273. Семёнов Л.С., "К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении", ИФЖ, АН Арм. ССР, Ереван, 1959, № 4, с. 105-122.
274. Соковнина Е., "Воспоминание о Д.Н. Бегичеве", "Исторический вестник", Тип-я А.С. Суворина, С.Петербург, 1889, № 3, с. 661-673.
275. Сорокин В., "Новые сведения о студенческих годах Грибоедова А.С.", Московский университет, Изд-во Московского университета, Москва, 1939, 26 июля, № 49, с. 4.
276. Стрельцов А.Ф., "Кавказ в отечественной военной истории", "Безопасность России: в прошлом, настоящем и будущем", Военно-исторический журнал, Изд-е Генерального штаба ВС Российской

- федерации, Москва, 2003, № 3, с. 43-45.
277. Строганов М.В., “Год рождения Грибоедова или Полпути жизни”, в книге “А.С. Грибоедов. Материалы к биографии”, Сборник научных документов, Отв. ред-ор Фомичев С.А., Изд-во “Наука”, Ленинград, 1989, с. 10-19.
278. Тавакалян Н.А., “Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1978, 3(82), с. 26-40.
279. Тархова Н.А., “О проекте Российской Закавказской компании” (По материалам архива И.Ф. Паскевича в РГИА), в кн. “Проблемы творчества А.С. Грибоедова” (Сборник статей), Ред-ор Фомичев С.А., Изд-во “Траст-ИМАКОМ”, Смоленск, 1994, с. 285-295.
280. Тунян В.Г., “Проекты экономического освоения Закавказья (1826-1834)”, “Вестник общественных наук” (“Лрабер асаракакан гитутюннеры”), Изд-во АН Арм. ССР, Ереван, 1989, 12(564), декабрь, с. 15-25.
281. Тунян В., “Материалы правительственного комитета о включении Ереванского ханства в состав Российской империи”, “Вестник общественных наук”, ИФЖ, Изд-во Академии наук Арм. ССР, Ереван, 1985, 2(506), февраль, с. 80-90.
282. Тунян В.Г., “Материалы об организации управления Восточной Армении 1827-1828 гг”, док № 183, 1-ое июня 1827, “Об образовании армянской государственности в составе России”, ИФЖ, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1986, 2(113), с. 209-219.
283. Ушаков В.А., “Московский бал. Третье действие из комедии “Горе от ума””, “Московский телеграф”, 1830, № XI, с. 383-393; № XII, с. 508-516.
284. Фомичев С.А., “Автор “Горя от ума” и читатели комедии” в книге Грибоедов А.С. Творчество. Биография. Традиция, АН СССР, Ленинград, 1977, с. 2.
285. Фомичев С.А., “Личность Грибоедова”, в книге “А.С. Грибоедов в воспоминаниях современников”, Под ред. Вацура В.Э., Изд-во “Художественной литературы”, Москва, 1980, с. 5-20.
286. Фомичев С.А., “Исследования и интерпретации” (Обзор юбилейной грибоедовской литературы 1969-70), “Русская литература”, “Наука”, Лениздат, Л., 1971, № 2, с. 165-172.
287. Цимбал Е.В., “Посмертные документы грибоедовского посольства”, в кн. “Проблемы творчества Грибоедова”, Ред-ор Фомичев С.А., Изд-во “Траст-ИМАКОМ”, Смоленск, 1994, с. 295-303.
288. Чудинов А.В., “Масоны и французская революция XVIIIв.: Дискуссия длиною в два столетия”, “Новая и новейшая история”, Изд-во РАН, Москва, 1999, № 1, с. 45-69.
289. Шварц Е.А., “Иран на перекрестке великих держав XIX века”, в сб. “Грибоедовские чтения”, вып. I, ЕГЛУ им. В. Брюсова, ЛИНГВА, Ереван, 2009, с. 94-107.
290. Энциклопедия для детей (Русская литература). От былин и летописей до классики XIX века, Аванта, Москва, 2004, т. 9, Часть первая, с. 430-441.
291. Якубова М.А., “Грибоедов и его азербайджанское окружение”, в кн. “Проблемы творчества А.С. Грибоедова”, Ред-ор Фомичев С.А., Изд-во “Траст-ИМАКОМ”, Смоленск, 1994, с. 262-272.
292. Якушкин В.Е., “К литературной и общественной истории 1820-1830гг.”, “Русская старина”, СПб, 1889, № 2, с. 319-325.

(վրացերեն)

293. *ლუიზა შენგელიაბ გრიბოედოვის ტრაგიკული მკვლელობა თეირანშიბ ქართული დიპლომატიაბ წელიწდეულიბ 98 ივანე ჯავახიშვილის სახელობის თბილისის სახელმწიფო უნივერსიტეტიბ ქართული სახელმწიფო და სახალხო დიპლომატიის ისტორიის სამეცნივრო კვლევისი ცენტრიბ მთავარი რედაქტორიბ როინ მეტრეველიბ თბილისი 2002ბ 720 გვ.*

6. Համացանց

(ռուսերեն)

294. Алекперли Фарид, “Парадигмы азербайджанского национального сознания”, [http:// www.kavkazoved.info/news/2011/09/23/paradigmy-azerbajdzhanskogo-nacionalnogo-soznania.html](http://www.kavkazoved.info/news/2011/09/23/paradigmy-azerbajdzhanskogo-nacionalnogo-soznania.html).
295. Алекперли Фарид, “Палемика Фариды Алекперли - тюрка с Сулейманом Мурадалиевым - азербайджанцем”, <http://www.atc.az/>

- forum/showpost.php?p=283148&postcount= 1096.
296. Алекперов Айдын, "Этногенез азербайджанцев: уроки Играра Алиева", <http://atropat.narod.ru/istoriya/istoriya2.html>.
297. Атаев Т., "Армянский буфер для империи Романовых", <http://www.islam-news.ru/news-138730.html>.
298. Атаев Т., "До "Геноцида" или документально-реальный взгляд на предысторию Карабахского конфликта", http://www.echo.az/archive/2007_07/1601/.
299. Ахундов Фуад, Завсектором Администрации Президента Азербайджана, "Российские источники раскрывают белые пятна в истории гибели А. Грибоедова", 10.02.2012, в 2-х частях, [zerkalo.az](http://www.erevangala500.com/?direct=news_page&id=16); часть I, http://www.erevangala500.com/?direct=news_page&id=16; часть II, http://www.erevangala500.com/?direct=news_page&id=20.
300. Ахундов Фуад, "В гибели Грибоедова повинна его армянское окружение", 17 февраля 2012, <http://news.day.az/politics/316216.html>.
301. Ахундов Фуад, "Гибель Грибоедова. Кто виноват?", март 02nd 2012, www.azcongress.ru.
302. Ахундов Фуад, "Российская общественность должна знать истинные обстоятельства гибели Грибоедова", 11.02.2014, www.interfax.az; <http://news.day.az/politics/465750>. http://www.erevangala500.com/?direct=news_page&id=215.
303. Бабаян Давид: "Арцахская проблема и идеология пантюркизма (Часть 2)." <http://rus-arm.org/nagornyi-karabakh/razdely-saita/nagornyi-karabakh/Page4.html>, 22.12.2011.
304. Бадалян Акоп, Обозреватель, "Михалков и Алиев отреагировали на письмо Зория Балаяна", <http://www.lragir.am/index/rus/0/country/view/44870>.
305. "Википедия – свободная энциклопедия", http://ru.wikipedia.org/wiki/Михалков_Ники_та_Сергеевич.
306. Гасанова Ш., "В Туркменчае Персия и Россия делили независимые азербайджанские ханства", <http://www.echo.az/article.php?aid=3534>.
307. Гусейнов Ризван, "Большой Азербайджан в российских, европейских и иных источниках" - ч. 7. Информационно-политический сборник, <http://www.rizvanhuseynov.com/2012/10/7.html>.
308. Джавид Ага: Фальшивая историография Азербайджана, <http://janarmenian.ru/news/44222.html>, Перевод: ©Noi
309. Джавид Ага: У нашей истории одна цель - "доказать", что армян не существовало, и найти себе "албанские" корни, <http://www.panorama.am/ru/news/2012/12/12/javid-aga/624053>.
310. Джафаров Юсиф, "Кто мы и откуда? О происхождении азербайджанского народа", <http://yusif-zauf.livejournal.com/7869.html>, Aug 31st 2009.
311. Захаров В., "Искажение истории в Азербайджане на рубеже XX-XXIvv: ответ моим оппонентам (I)". – <http://bs-kavkaz.org/2011/09/>.
312. "Ильхам Алиев выступил на сессии Парламентской Ассамблеи Совета Европы", 24.06.2014, <http://ru.prezident.az/articles/12149/images#U611A2nRrUU.google>.
313. Карапетян Арман, историк, "Баку цинично пытается сделать дивиденды на Грибоедове", www.yerkramas.org.
314. "Михалков в Баку ищет деньги у азербайджанских олигархов на новый фильм о Грибоедове", 07.12.2015, <http://bloknot.ru/kul-tura/mihalkov-v-baku-ishhet-den-gi-u-azerbajdzhanskih-oligarhov-napovy-j-fil-m-o-griboedove-358497>.
315. "Никита Михалков получил азербайджанский орден Дружбы", <http://www.gazeta.ru/culture/news/2015/10/20/n7792343.html>.
316. "Никита Михалков: Хочу надеется, что сумею оправдать своим творчеством столь высокую награду азербайджанского государства", 20 окт. 2015, <http://vesti.az/news/268005>.
317. Сухов И., "Солдат "большой игры". Тайны гибели российского посла в Персии А. Грибоедова", 2009, 26-27 февраля, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1235710980>.
318. Тарасов Станислав: "Вашингтон, Анкара, Ереван и Тбилиси готовят политический сюрприз для Баку", 13.12.2011, <http://rus-arm.org/nagornyi-karabakh/razdely-saita/nagornyi-karabakh/stanislav-tarasov-vashington-ankara-erevan-i-tbilisi-gotoviat-politicheskii-siurpriz-dlia-baku>.
319. Тарасов Станислав: Москва и Тегеран могут пойти на признание независимости Карабаха", <http://rus-arm.livejournal>.

com/2012/07/01/#post-rus_arm-65306, 01.07.2012.

320. Шнирельман В.А., Ну, зачем же приписывать господствующие в Азербайджане взгляды “мировой науке?”, <http://www.regnum.ru/news/1624198.html>.
321. Шнирельман В.А., “Албанский миф”, http://www.vehi.net/istoriya/armenia/albansky_mif.html.

(անգլերեն)

322. Armyanstvo. Deportation of Armenians from the Caucasus. <http://karabakh-doc.azerall.info/>, www.azerigenocide.org/hist/hist07.htm.

7. Պարբերական մամուլ

1. «Գրական թերթ», Երևան, 1945, № 2:
2. «Մշակ», Կովկասում քաղաքացիական մասով գլխավոր կառավարչապետի տպարան (Тип-я Главноначальствующего гражданской частию на Кавказе), Թիֆլիս, 1895, № 2, հունվարի 5; № 3, հունվարի 6:

8. Հանդեսներ և ամսագրեր

(հայերեն)

3. «ԵՃՇՊհ գիտական աշխատությունների ժողովածու», Երևան, 2013, հատոր II(49):
4. «Լրաբեր հասարակական գիտությունների», Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երևան, 1962, № 2, 1985, № 2(506), փետրվար, 1989, № 12(564), դեկտեմբեր, 2007, № 2(619), 2008, № 3(623):
5. «Կանթեղ» ԲՈՂ, Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2006, 1(26), 2006, 4(29), 2013, 3(56):
6. «Հայարտուն», «Ընկ. Ալ. Մարտունի-Մյասնիկյանի անվ. Հայ արվեստագետների տուն», «Կոմունիստ»-ի խմբագրություն, Բագու, 1925, № 1, հունիս:
7. «Պատմա-բանասիրական հանդես», Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երևան, 1959, № 4, 1977, 3(78), 1978, 1(80), 1978, 3(82), 1985, 2(506), 1986, 2(113), ՀՀ ԳԱԱ, Երևան, 2005, 1(168), 2005, 3(170):
8. «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2016, Ը(ԺԴ) տարի, թիվ 4(56),

հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 153-171:

9. «Տեղեկագիր Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի», Հասարակական գիտություններ, Երևան, 1953, № 3, 1962, № 11:
10. «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Հայկ. ՍՍՀ ԳԱ, Երևան, 1962, 11:


(ռուսերեն)

11. “Армянский вестник”, Московское-армянское изд-во, Москва, 1917, № 43-44.
12. “Вестник Европы”, Тип-я М.М. Стасюлевича, Санкт-Петербургъ, 1872, № 3; 1875, десятый годъ - книга 7-я, томъ IV; 1886, т. III, № 5; 1890, т. I, кн. № 1.
13. “Военно-исторический журнал”, Изд-е Генерального штаба ВС РФ, Москва, 2003, №3.
14. “Вопросы истории”, Изд-во “Правда”, Москва, 1947, № 12; 1975, № 8.
15. “Вопросы литературы”, Гос. изд-во “Художественной литературы”, Москва, 1959, №2.
16. “Время”, Изд-й М. Достоевским, СПб, 1862, № VIII.
17. “Трибодовские чтения”, ЕГЛУ им. В. Брюсова, ЛИНГВА, Ереван, 2009, Выпуск I.
18. “Древняя и новая Россия”, Ред-ор и изд-ль В.И. Грацианский, СПб., 1879, № 4.
19. “Европеец”, Изд-е И.В. Киреевского, Москва, 1832, № 1.
20. “Известия АН Арм. ССР”, Ереван, 1963, № 5.
21. “Известия АН СССР”, Изд-во АН СССР, Трибуна, Серия литературы и языка, Москва, 1970, вып. 1, январь - февраль, т. XXIX.
22. “Исторический архив”, Изд-во АН ССР, М.-Л., 1951, т. VI.
23. “Исторический вестник”, Тип-я А.С. Суверина, С.Петербург, 1889, № 3; 1902, V; 1909, № 3.
24. “Исторические записки”, “Наука”, М., 1947, т. 24.
25. “История СССР”, Изд-во “Наука”, Москва, 1964, № 6, ноябрь-декабрь.
26. “Кавказский вестникъ”, Ежемесячный научно-литературный журналъ, Скоропечатня М. Мартиросянца, Тифлисъ, 1900, Годъ первый, № 8, август.
27. “Кавказская старина”, Ежемесячный журналъ исторический,

- археологический, этнографический, библиографический, Под ред. А.Д. Ерицова, Тифлисъ, 1872, Годъ I; 1872, Годъ I, ноябрь.
28. "Литературная Армения", Орган правления Союза писателей Арм. ССР, Ереван, 1970, № 6, июнь; 1971, 9 сентября.
 29. "Литературное наследство", Журнально-газетное объединение, Москва, 1935, 19/21.
 30. "Литературное обозрение", Изд-во ЦК КПСС, "Правда", Москва, 1981, № 8; 1984, № 7.
 31. "Литературная учёба", Тип-ое изд-во "Крестьянская газета", Москва, 1939, № 1.
 32. "Минувшие годы", Тип-я "Энергия", СПб., 1908, № 2; № 3; №№ 5-6.
 33. "Мир божий", Изд-во М. Куперина-Давыдова, СПб, 1894, № XII.
 34. "Москвитянин", Тип-я Л. Степановой, М., 1856, т. 3, XII.
 35. "Московский телеграф", Тип-я Августа Семёна, 1830, № XI; № XII; 1833, № XVIII.
 36. "Неделя", Тип-я А.М. Котомина, СПб, 1879, № 15, №№ 16-17.
 37. "Новое время", Изд-во А.С. Суворина, СПб, 1895, 7 марта, № 6833.
 38. "Новая и новейшая история", Изд-во РАН, Москва, 1999, № 1.
 39. "Огонёк", Общенациональный еженедельный иллюстрированный журнал, Москва, 2002г, № 47 (4775) ноябрь 25.
 40. "Очерк", газ., Москва, 1929, № 6 (306), 10 февраля.
 41. "Правда", Гос. изд-во "Правда", ЦК КПСС, Москва, 1945, 11 января.
 42. "Русский архивъ", Тип-я Грачёва и комп., Москва, 1871, № 1; 1872, годъ десятый; 1873, № 8; 1874, № 6; 1875, № 7; книга третья, 1886; Изд-й Петромъ Бартеневымъ въ университетской тип-ии № 6; книга вторая, Тип-я М.Г. Волчанинова 1888, № 5; 1889, № 2; Въ Университетской типо-фии, Москва, 1891, № 10.
 43. "Русские ведомости", Тип-я "Русских ведомостей Б. Никитинская", Москва, 1911, 15-ое ноября; 1913, 8-ое августа.
 44. "Русский вестникъ", Тип-я "Общественная польза", С.Петербургъ, 1891, Томъ двести шестнадцатый, сентябрь.
 45. "Русская литература", ИЛЖ, Изд-во АН СССР, Ленинград, 1959, № 4; Изд-во "Наука", Лениздат, Л., 1971, № 2; 1981, № 2; 1985, № 1.
 46. "Русская мысль", Типо-лит. Товарищи Кушнерев и Ко пимен, 1904, №

1; № 2.

47. "Русское обозрение", "Университетская типография", Москва, 1895, № 3.
48. "Русская старина", Тип-я В.С. Балашова, СПб., 1872, годъ третий, май; 1872, июль; 1872, август; 1872, № 8; 1873, т. 7, кн. 1-6; 1874, т. 10, кн. 5-6; 1875, т. XI; 1875, № 7; 1876, апрель; 1879; 1883, № 7, август; 1889, № 2; 1891, № 10; 1892, № 4; 1898, март, Годъ ХLI-ий, май; 1904, апрель; 1904, май; Тип-я "Общественная польза", Санкт-Петербургъ, 1910, т. 93.
49. "Северная пчела", Тип-я Н. Греча, С.Петербург, 1826, 2-ое января, № 76.
50. "Современник", Литературный журналъ, Изд-ый Александромъ Пушкинымъ, Въ Гуттенберговой типографіи, Санктпетербургъ, 1836, Первый томъ.
51. "Современник", Тип-я "Улей", СПб., 1912, кн. XI.
52. "Телескоп", Журналь современнаго просвещения, Изд-ий Николаемъ Надеждинымъ, Тип-я Н. Степанова, Москва, 1831, № 20.



Ա. Ս. Գրիբոյեղով



Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Ե Աշտարակեցի

Ռուս գահակալներ



Ռուսաց կայսր Պյոտր I Մեծ



Ռուսաց կայսրուհի Ելիզավետա Պետրովնա



Ռուսաց կայսրուհի Եկատերինա II Մեծ



Ռուսաց կայսր Պավել I



Ռուսաց կայսր Ալեքսանդր I



Ռուսաց կայսր Նիկոլայ I

Ռուս նշանավոր մատններ և դեկաբրիստներ



Ֆ. Լեժնրտ



Բ. Ելագին



Ն. Նովիկով



Բ. Բ. Շուվալով



Ա. Բ. Կուրակին



Բ. Տուրգենև



Ն. Տուրգենև



Բ. Վ. Լոպուխին



Ա. Բալաշով

Ռուս նշանավոր մատններ և դեկաբրիստներ



Կյուս Մուսին-Պուշկին-Բրյուս



Պ. Յա Չառդան



Ս. Ս. Լունին



Ֆ. Պ. Շախտսկոյ



Ա. Շերեբցով



Ս. Յու. Լերմոնտով



Ա. Ս. Պուշկին



Ն. Մուրավյով-Կարսկի



Ա. Ս. Գրիբոյեդով

Ռուս նշանավոր մատններ և դեկաբրիստներ



Ն. Գրեչ



Ն. Օրոնսկի



Կ. Ֆ. Ռիլեն



Ա. Պ. Տրուբեցկոյ



Պ. Պեստել



Ս. Բեստուժն-Ռյումին



Պ. Կախովսկի




Վ. Վ. Կյուխելբեկեր

Տեսարաններ Թբիլիսիից



Տեսարաններ Թբիլիսիից






Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում



Ռուս գեներալ Ա. Ճավճավաճե




Երևանի բերդի հատակագիծը



N 1313-ի բերդի փակարանների քանդակաքանդակ

Երևանի բերդի տեսարանը Չանգվի ափից



Երևանի բերդի գրավումը (1827թ. հոկտեմբեր)



Գյոյ (կապույտ) մզկիթը Երևանում



Տեասարան Գյոյ (կապույտ) մզկիթից



Արաբացու Կրեանու քաղաքու թ խաւս

Երևանի բերդը



Երևանի բերդի գրավումը



Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումը 1828թ. փետրվար



Պարսից Ֆաթի-Ալի շահնշահ



Պարսից զահաժառանգ (վալիահեյ)
Աբբաս-Միրզա



Տեսարան Թեհրանից
19-րդ դար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ԵՐԿՈՒ ԽՈՍՔ | 3 |
| ԱՌԱՋԱԲԱՆ | 5 |
| ԳԼՈՒԽ Ա Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | |
| 1. Ա.Ս. Գրիբոյեդով-դեկաբրիստներ առնչություններին հիմնահարցերը պատմագրության գնահատմամբ | 13 |
| 2. Հասարակական-քաղաքական հոսանքները Ռուսաստանում XIX դարի առաջին քառորդին և դրանց նպատակներն ու գործունեությունը | 72 |
| 3. Ա.Ս. Գրիբոյեդովի աշխարհայացքի ձևավորումն ու դրսևորումները | 108 |
| 4. Ա.Ս. Գրիբոյեդովի առնչությունները դեկաբրիստական շարժմանը..... | 148 |
| 5. Ա.Ս. Գրիբոյեդովի մշակութային գործունեությունն Այսրկովկասում | 187 |
| ԳԼՈՒԽ Բ Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ՌՈՒՍԱԿԱՆ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ»-Ը | |
| 1. Ա.Ս. Գրիբոյեդովի սոցիալական հայացքների ու տնտեսագիտական հետաքրքրությունների խնդիրը պատմագրության գնահատմամբ | 201 |
| 2. Ռուսական կայսրության ազգային գաղութային տնտեսական քաղաքականությունն Այսրկովկասում | 238 |
| 3. «Ռուսական-անդրկովկասյան ընկերության հիմնադրման նախագիծ»-ը | 253 |
| ԳԼՈՒԽ Գ Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | |
| 1. Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության և վախճանի հիմնախնդիրները պատմագրության գնահատմամբ | 285 |

| | |
|---|-----|
| 2. Ռուսական կայսրության արտաքին գաղութային քաղաքականությունն Այսրկովկասում և Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեության վաղ շրջանը | 330 |
| 3. Ա.Ս. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը 1826-1828թթ. և Թուրքմենչայի պայմանագիրը | 354 |
| 4. Ա.Ս. Գրիբոյեդովի առնչություններն իրանահայերի ներգաղթի գործին և ռուսական դիվանագիտական առաքելության տապալումը Թեհրանում | 380 |
| ՎԵՐՋԱԲԱՆ | 417 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ | 425 |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | 478 |

ՎԱՏՐԱՄ ՌՈՒԲԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆ

**Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(պատմագրություն-պատմություն)**

Խմբագիր՝ Հ. Մայիլյան
Էջադրում և համակարգչային ձևավորում՝
Լ. Ասատրյան
Ա. Ղազարյան

Չափսը՝ 70x50¹/₁₆:

30 տպ. մամուլ:

Տպաքանակ՝ 450:

ISBN 978-9939-0-2951-1



9 789939 029511